3284
3285

28 1895
U-15

2018

1002 9

28
Ս-15

ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ

*«Հոգին ճշմարտութեան*
*«առաջնորդեսցէ ձեզ ամե-*
*«նայն ճշմարտութեամբ»:*
Յովհ. ժզ. 13.

*Դ Ա Ս Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն*

**ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅԻ ՍԱՀԱԿԵԱՆՑ**

*Միաբանի Մողնւոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյ.*

ГОС. П. БИБ-КА Арм. С.С.Р.
ОБМЕННЫЙ ФОНД
ИМ. А. МЯСНИКЯН

*Տ Փ Խ Ի Ս*
*Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի*
*Մլքայէլեան փող. տուն* № 81.
**1898**

28061-57Կ.Հ

Дозволено цензурою, Тифлисъ, 23-го Августа 1897 г.

Գոс. Библиотека
10610-57

. Հ

ՄԿՐՏԻՉ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՌՅԽԲ 1893

**ՄԿՐՏԻՉ** ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

*Արժանապատիւ Տ. Սահակ քահանայի Սահակեանց, միաբանի Մողնւոյ ս. Գէորգ եկեղեցւոյ, հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն եւ Հայրապետական օրհնութիւն։*

*Ի վաղ ժամանակաց հետէ գիտեմք զարժանիս Ձեր ի քահանայական կոչման եւ յասպարիզի ուսուցչութեան, որպէս եւ զգրաւոր վաստակս, զորս շարունակէք յօգուտ եւ ի դաստիարակութիւն մանկանց Հայաստան ժողովրդոց, զարդիս եւս զնոյն արժանիս Ձեր դրուատելով կարգեալն ի մէնջ գրաքննիչն կրօնական գրոց Գեր. Տ. Սուքիաս արքեպիսկոպոսն միջնորդ հանդիսացեալ խնդրէ պսակել զաշխատութիւնս Քո, վասնորոյ եւ Մեք արժանի համարիմք սովին Հայրապետական Կոնդակաւ արտօնել Քեզ կրել ի գլուխ քո զթաւշեայ գլխարկ կամի-լաւկս անուանեալ։*

*Ողջ լեր զօրացեալ Տէրամբ՝ ամէն։*

**ՄԿՐՏԻՉ** ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 20 յունիսի. 1897 ամի.
Եւ ըստ տոմարիս ՌՅԽԶ.
ի Հայրապետութեան մերոյ Դ. ամի.
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ։
Թ. 626

*Ըստ բարձու հրամանի սրբազնագոյն Քահանայապետի ազգիս՝ Տեառն Տեառն Մկրտչի Առաջնոյ, ուշի ուշով ընթերցեալ զսուսցումն* ***Քրիստոնէական կրօնի մատեանն***՝ *ոչ միայն չգտի ի սմա զբանս եւ զդարձուածս իմաստից հակառակ վարդապետութեանց Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ, այլ միանգամայն պիտանի վարկայ յաղագս տպագրութեամբ հրատարակութեան յօգուտ կրօնասէր ընթերցողաց։ Ի ստուգութիւն, որոյ իմովս իսկական ստորագրութեամբ եւ դրոշմամբ անուանական կնքոյս վաւերացուցանեմ։ յ30 մայիսի 1897 ամի, ի սուրբ Էջմիածին։*

**ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՁԵԱՆՑ**

# ՑԱՆԿ

*Յառաջաբանութիւն*


1. Կրօնի էութիւնը . . . . . . . . . . . . . . . . . . 9
2. Կրօնի տեսակները . . . . . . . . . . . . . . . . . 13
3. Յայտնութիւն . . . . . . . . . . . . . . . . . . . 21
4. Յայտնութեան վաւերականութիւնը (սուրբ գիրք) . . . . . . 31
5. Կարեւոր գիտելիք սուրբ գրքի մասին . . . . . . . . . . 41
6. Սուրբ գրքի հիմնական գաղափարները (արքայութիւն Աստուծոյ.) 48


*Ա.*

**ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏՈՒԱԾ**

*Արքայութեան (թագաւորութեան) տէրը*

*ԱՍՏՈՒԱԾ*


Ա. Գոյութիւն Աստուծոյ . . . . . . . . . . . . . . . . 51

Բ. Էութիւն Աստուծոյ . . . . . . . . . . . . . . . . . 58

1. Աստուած անվերջ, անսահման հոգի է . . . . . . . . . „
2. Աստուած սէր է . . . . . . . . . . . . . . . . . . 63

Գ. Աստծու յատկութիւնները . . . . . . . . . . . . . . 70

1. Աստուած յաւիտենական է և անփոփոխ . . . . . . . . „
2. Աստուած ամենակարող է . . . . . . . . . . . . . . . 73
3. Աստուած ամենուրեք է . . . . . . . . . . . . . . . 76
4. Աստուած ամենագէտ է . . . . . . . . . . . . . . . 78
5. Աստուած ամենիմաստ է . . . . . . . . . . . . . . . 81
6. Աստուած սուրբ է և արդար . . . . . . . . . . . . . 86
7. Աստուած ճշմարիտ է . . . . . . . . . . . . . . . . 90

Դ. Աստծու ներգործութիւնները . . . . . . . . . . . . . . . . 92
1. Աստուած աշխարհիս ստեղծողն է . . . . . . . . . . „
2. Աստուած պահպանում, խնամում է աշխարհս . . . . . . 97
3. Աստուած աշխարհիս կառավարիչն է . . . . . . . . . 102

## Առանձին խորհրդածութիւն չարիքի մասին

4. Աստուած աշխարհիս սրբազան օրէնսուտն է . . . . . . 121
Տասն պատուիրան . . . . . . . . . . . . . . . . . . 129
1—2. պատուիրան «Մի եղիցին քեզ այլ աստուածք...» . 135
3. „ «Մի առնուցուս զանուն...» . . . . . . 146
4. „ «Յիշեսջիր զօրն շաբաթուց...» . . . . . 157
5. „ «Պատուեա զհայր քո...» . . . . . . . 164
6. „ «Մի սպանաներ» . . . . . . . . . 172
7. „ «Մի շնար» . . . . . . . . . . . . 180
8. „ «Մի գողանար» . . . . . . . . . . 189
9. „ «Մի սուտ վկայեր...» . . . . . . . . 200
10. „ «Մի ցանկանար...» . . . . . . . . . 212
Վերջաբան տասն պատուիրանների . . . . . . . . . . . . 222

## Բ.

## ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏՈՒԱԾ

### Թագաւորութեան քաղաքացին

### ՄԱՐԴԸ

Ա. Մարդուս արժանաւորութիւնը . . . . . . . . . . . . . 226
Բ. Մարդուս բնութիւնը . . . . . . . . . . . . . . . 231
Գ. Մարդուս կոչումն . . . . . . . . . . . . . . . . 238
Դ. Մարդուս անկումն . . . . . . . . . . . . . . . . 245
1. Փորձութիւն . . . . . . . . . . . . . . . . „
2. Յանցանք . . . . . . . . . . . . . . . . . 255
1. Յանցանքի էութիւնը . . . . . . . . . . . 256
2. Յանցանքի աղբիւրները . . . . . . . . . . 260
3. Յանցանքի ընդհանուր լինելը . . . . . . . 261
4. Յանցանքի զանազան տեսակները . . . . . . . 263
ա. Մեղանչել անձի դէմ . . . . . . . . . . „



բ. Մեղանչել օրէնքի դէմ . . . . . . . . . 364
գ. Մեղանչել մարմնոյ գործարանների դէմ . . „
դ. Յանցանքների ծագումն . . . . . . . . . 265
ե. Յանցանքների նպատակը . . . . . . . . 266
զ. Յանցանքի մեծութիւնը . . . . . . . . . „
5. Յանցանքի հետեւանքները . . . . . . . . . . 268
6. Փրկութիւն . . . . . . . . . . . . . . . . 271

## Գ.

## ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏՈՒԱԾ

### Թագաւորութեան հիմնադիրը

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ա. Նախապատրաստութիւն . . . . . . . . . . . . . . . 276
1. Նահապետներ . . . . . . . . . . . . . . . . 277
2. Մովսէս և օրէնք . . . . . . . . . . . . . . 279
3. Թագաւորութեան դարաշրջան . . . . . . . . . . 283
4. Մարգարէներ . . . . . . . . . . . . . . . . 287
5. Հրէութեան վիճակը Յիսուսի ժամանակ . . . . . . 297
Փարիսեցիք . . . . . . . . . . . . . . . 298
Սադուկեցիք . . . . . . . . . . . . . . . 300
Եսսենացիք . . . . . . . . . . . . . . . „
6. Յովհաննէս Մկրտիչ . . . . . . . . . . . . . 302
7. Հեթանոսութեան վիճակը և յոյսերը . . . . . . . 303
8։ «Եւ եղեւ լրումն ժամանակի» . . . . . . . . . 307
Բ. Լրումն . . . . . . . . . . . . . . . . . . . 308
1. Յիսուսի կեանքը . . . . . . . . . . . . . . „

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## 1. ԿՐՕՆԻ ԷՈՒԹԻՒՆԸ

Երկրիս վրայ ամենայն ինչ փոփոխական և անցողական է: Ոչ մի բան հաստատուն չէ. ոչ մի բանի վրայ դրականապէս յոյս դնել չի կարելի—ոչ աշխարհիս (նա անցողական է իւր բոլոր վայելչութիւններով), ոչ նրա հարստութեան, ոչ հաւատարմութեան . . . և ոչ մեզ վրայ անգամ, որովհետև ով այսօր առողջ է, վաղը կարող է հիւանդանալ, ով հարուստ է, կարող է աղքատանալ, ով կենդանի է, կարող է մեռնել . . . :

Որքան մեր տկարութիւնը և մի էակից կախումն ունենալը խոստովանում ենք, այնքան որոշ է լինում մեր մէջ այն զգացումը, թէ մենք մի օգնողի կարօտ ենք և որքան օգնութեան կարօտ լինելը պարզ է մեզ համար, այնքան մխիթարական է գիտենալ, թէ ումնից պիտի գայ այդ օգնութիւնը: Իբրև պատասխան՝ մեզ ես մնում է սաղմոսերգուի հետ ի խորոց սրտէ ասել. «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն. օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս եւ զերկիր»: Սաղմոս ճի. 1.2: Դէպի նա, որ մահկանացու մարդու հետ չէ մեռնում, նայում են մարդիկ անցաւոր աշխարհից. Նրա և մեր գերեզմաններից դէնը գտնուող հանդերձեալի վրայ ենք դնում մեր յոյսը: Կեանքի խնդիրն այնտեղ է լուծւում, այնտեղից պիտի մեզ պատասխան տրուի թէ ինչու համար ենք այստեղ. ինչու համար ենք ապրում երկրիս վրայ կամ ինչ պիտի լինենք մահուանից յետոյ: Այնտեղից պիտի լսենք յաւիտենական կեանքի՝ աստուածային մեղմութեամբ հնչուող խօսքերը —մի՛ լար, մխիթարուի՛ր և այդ ձայնը մեզ պիտի ուրախացնի, կազդուրէ, և մեր երկրաւոր կեանքի ընթացքում ոյժ ներշնչի՝ դիմելու մեր նպատակին:

Ցիսուսի կրօնը՝ լուսոյ, սիրոյ, խաղաղութեան կրօնը ճանաչելու

և մեր սրտերի մէջն ընդունելու դիտաւորութիւնն է մեր ապագայ դասերի նպատակը:

Որպէսզի կրօնի էութիւնը կարողանանք մեզ պարզ կերպով ներկայացնել, իբրև զուգահեռական, նպատակայարմար է յիշել մանկան յարաբերութիւնը ծնողաց հետ:

Յայտնի է, թէ մի բարի մայր ինչ սիրով է գգւում իր որդւոց, ինչպէս առանց հոգնելու աշխատում է նրանց համար՝ առաւօտից մինչև երեկոյ. նա ամենայն ինչ հոգում է փոքրիկների համար. խրատում է առողջներին և աղօթում հիւանդի անկողնի մօտ: Թէ մայրական սիրոյ առաջ ոչինչ դժուար բան չկայ, այդ մենք բոլորս էլ փորձով գիտենք: Մայրական սէրը նախ՝ որդւոց համար է հոգում և ապա՝ իւր: Այսպիսի անձնազոհ սիրոյ համար հասկանալի է, թէ ինչու որդիքը մայրերին ի սրտէ սիրում են. հասկանալի է նոյնպէս թէ ինչու որդին սիրում է մայրական հովանաւորութեան տակ լինել և ընդհակառակն՝ զրկուած է զգում իրան այդ հովանաւորութիւնից դուրս: Հայրը ևս պակաս չէ սիրում իւր որդւոց—որդւոց ուրախութիւնը հօր ուրախութիւնն է, նրանց բաղդաւորութիւնը նրա բաղդաւորութիւնն է: Սրա համար էլ քրտնաթոր աշխատում է առաւօտից մինչև երեկոյ: Խորթ չպիտի թուայ ոմանց, եթէ ասենք թէ որդւոց երջանկութիւնը ծնողների սրտի մօտիկ առարկան է և թէ ինչու որդիք իրանց ամբողջ կեանքի ընթացքում պիտի յարգեն և պատուեն նրանց: Այսպէս ուրեմն ծնողների և որդւոց մէջ սիրոյ մի տեսակ հաղորդակցութիւն կայ:

Մի այդպիսի հաղորդակցութիւն էլ Աստծու և մարդկանց մէջ պիտի լինի: Եւ այդ շատ բնական է: Եթէ հնարաւոր լինէր ենթադրելու, որ մայրական սէրը որդուն կմոռանայ, Աստծու սէրը այնու ամենայնիւ մեզ երբէք մոռահան չի անիլ (Եսայիա խթ. 15. «Միթէ մոռանայցէ կին զմանուկ իւր, կամ թէ ոչ գթասցի ի ծնունդս որովայնի իւրոյ, եւ եթէ մոռանայցէ զայն կին՝ սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ Տէր»:) Եթէ հնար լինէր մտածելու որ հօր սէրը որդւոց կմոռանայ, աստուածայինը դարձեալ նոյնը կմնայ: Աստուած մեր ճշմարիտ հայրն է, մեր երկրաւոր հայրերը մեր հոգատարներն են, որոնց Աստուած մեզ ժամանակաւորապէս յանձնել է: Եթէ երկրաւոր հայրերը մեռնում են, երկնայինը դարձեալ և միշտ կենդանի է. եթէ երկրաւոր հայրերի օգնութիւնը վերջանում է, երկնաւորինը անսպառ է. երբ երկրաւորի սէրը չիջանում է, երկ-



նաւորի շնորհը և ճշմարտութիւնը ճառագայթում է ամենի վրայ մանաւանդ երկիւղածների: Դրա համար էլ իւրաքանչիւր ոք պիտի պահանջ զգայ Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալու: Մարդկանց՝ Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալուն ուրիշ խօսքով ասում ենք կրօն:

Ինչպէս որ կրօնը՝ բարի երեխայի դէպի ծնողներն ունեցած յարաբերութեանն է համապատասխանում, այսպէս էլ նրա (կրօնի) արտայայտութիւնները նոյն յարաբերութեան (ծնողաց և որդւոց) հետ կարելի է համեմատել:

Ա. Բարի զաւակը յարգանաց զգացմունքով, անկեղծ սիրով, աննենգ և անխարդախ հաւատարմութիւնով է մերձենում ծնողներին: Այդպիսի զաւակը գաղտնի ցանկութիւնները ծնողներին է հաղորդում և եթէ մի որևէ կէտ նրա սրտին նեղութիւն է պատճառում, նոյն անձանց առաջն է փղձկում իւր ներքինը: Իսկ միևնոյն հաղորդակցութիւնն է մարդոց և Աստծու վերաբերութեամբ. բարեպաշտ մարդիկ երկիւղած զգացմունքով, հարազատ սիրով, աննենգ և անխարդախ հաւատարմութիւնով են մերձենում երկնաւոր հօրը: Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալու գիտակցութիւնը բարձր է պահում նրանց երկրաւոր վշտերից և նեղութիւններից և վշտալի սիրտը լցնում է այն սուրբ խաղաղութիւնով, որն աշխարհս՝ ոչ տալ և ոչ խլել կարող է: Այսպէս ուրեմն սկզբում կրօնը զգացմունք է—«Զինչ կայ ինձ բնաւ յերկինս, կամ իքէն զինչ ևս խնդրեցից յերկրի». Սաղմոս հբ. 25.: (Եթէ ես քեզ ունենամ, էլ ոչ երկիրը և ոչ երկինքն ինձ պէտք են:)

Բ. Բայց կրօնն զգացման կէտի վրայ չէ մնում կանգնած: Ինչպէս երեխան հետաքրքրւում է իմանալ ծնողների անունը, ծագումն, հայրենիքը, զբաղմունքն ու աշխատանքը և առհասարակ յարաբերութեանց հետևանքների վրայ մի պարզ գաղափար է ուզում կազմել, այսպէս և ամեն բարեպաշտ և մտածող անձն հետաքրքրւում է իմանալու Աստծու գոյութիւնը, յատկութիւնները, գործերը և ճանաչելու նրա նպատակներն ու ճանապարհները: Ուրեմն կրօնը ոչ թէ միայն զգացմունք է, ինչպէս վերը տեսանք. այլև ճանաչողութեան և հմտութեան առարկայ—«Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած»: Յովհ. ժէ. 3.:

Գ. Կրօնը մի երրորդ բան էլ է: Այն բարի զաւակը, որ ծնողներին 'ի սրտէ սիրում է և այն համոզմանն է եկել՝ որ ամենայն

գործողութեան մէջ Նրան նմանի, անշուշտ այդպիսին հնազանդ կլինի ծնողներին և կաշխատի խորշել այն բոլորից, ինչ որ ծնողներին հաճելի չէ և գործել այն, ինչ որ նրանց կամքն է։ Եթէ մի անձի մէջ Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալու զգացմունքը կենդանի է և Նրա մէջ ծագել է այն միտքը, որ Աստուած մեր բարին է կամենում, որ Նրա բոլոր պատուիրանները և հրահանգները առաջնորդեն մեզ դէպի երանութիւն, երջանկութիւն, այն ժամանակ սիրով խոնարհում է Նրա առաջ, կատարում է երկնաւոր հօր կամքը։ Այսպէս կրօնը անպայման կերպով դառնում է գործ, կեանքի որոշ ուղղութիւն և բարոյական կենցաղավարութիւն և այն է գործում, ինչ որ Աստծուն հաճելի է և խորշում է այն ամենից, ինչ որ Նրան անհաճոյ է։ («Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք, եթէ առնիցէք զայս»։ Յովհ. ժգ. 17։ «Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»։ Մատթ. է. 16)։

Այսպէս կրօնը՝ Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալը ոչ թէ միայն զգացմունք է, այլև ճանաչողութիւն և գործ—զգացումով Աստծու մէջ խորասուզուել է, մի ճանաչողութիւն է Աստծու մասին և գործ ըստ կամաց Նորա։ Դրա համար էլ կրօնը հարստացնում և լուսաւորում է ոչ թէ միայն մարդուս միտքը, իմացականութիւնը, այլև հանգստացնում, խաղաղացնում է սիրտը և զօրացնում ու ազնուացնում է կամքը։ Ճշմարիտ կրօնը սրտի կրօն է—Նա սրտից է բղխում, թափանցում է մտքի մէջ, պարզում է ճանաչողութիւնը, սրբում է, նուիրագործում է կամքը և ամենայն բանի մէջ դարձնում է հաւատարիմ և հաստատ—«Տուր ցիս որդեակ զսիրտ քո» (Առակք Սող. իգ. 26)։ Նա կերպարանափոխում է մարդուս կեանքը—ազնուացնում է մանուկի ուրախութիւնը, զօրացնում է երիտասարդի ոգեորութիւնը, ամրապնդում է այր մարդու ոյժերը և մխիթարում է գերեզմանի դուռը հասած ծերին։ Առանց կրօնի կեանքը մի անլուծանելի հանելուկ կլինէր։ Դրա համար էլ «Եւ յիշեա՛ դու զտէր Աստուած քո զամենայն աւուրս կենաց քոց եւ մի՛ մեղանչիցես դու եւ կամ անցանիցես զպատուիրանօք Նորա»։ (Տովբ. դ. 6)։ Ոչ ոք գի զղջացել թէ ինչու բարեպաշտ է եղել, դրա հակառակ՝ բոլոր ամբարիշտները, անաստուածները վերջ ի վերջոյ զղջացել են։ Կարդալ Սաղմ. ա. 1. «Երանեալ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, ի ճանապարհս մեղաւորաց նա ոչ եկաց, եւ յաթոռս ժանտից նա ոչ նստաւ»։



Այս բոլոր խօսուածներից երեւում է, որ կրօնի գլխաւոր առարկան յաւիտենական Աստուածն է։ Երբ անցաւոր աշխարհը փոշի կը դառնայ, նա այնուամենայնիւ կենդանի կլինի և եթէ մենք զրկուած լինենք ամեն բանից—երջանկութիւնից և խաղաղութիւնից, Նրա օգնութիւնը դարձեալ հեռի չէ մեզնից։ Նա ամենայն ինչ ունի, Նա ամեն բան կարող է. ամեն բան գիտէ. Նա գթած է դէպի ամենը։ Ով հաւատում է Աստծուն, հաւատում է յաւիտենական կեանքին։ Երբ մեր վերջին ժամը հնչում է, այն ժամանակ մեր մարմինը միայն մտնում է գերեզման, հոգին շարունակում է իւր կեանքը մի այլ աշխարհում, մահը մեզ չի կարող բաժանել Աստծուց։ Կեանքը նման չէ մոմին, որը վառւում է, այրւում է և վերջապէս չիջանում, այլ՝ նման է վարուցանքի, որի հունձը մենք հանդերձեալում պիտի ստանանք։ Այստեղ կեանքի նախապատրաստութիւնն է, իսկ այնտեղ կատարելագործութիւնը։ Մենք չենք ապրում մեռնելու համար, այլ մեռնում ենք ապրելու համար։ Աշխարհս մի հիւրանոցէ մեր թափառական կեանքի համար, հայրենիքը վերևումն է—«Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք, որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք»։ Թ. ա. Եբր. ժգ. 14)։ Այնտեղ գնալու ճանապարհը մեր Տէր Յիսուս Քրիստոսնէ ցոյց տուել, Նրա առաջնորդութեան հաւատում ենք և հետեւում դէպի երկնային հայրենիքը։

## 2. ԿՐՕՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարդկային սրտի խորքում սկզբանէ կայ այն պահանջը, որ ձգտում է Աստծու հետ հաղորդակցութիւն ունենալու—«Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հզօր եւ կենդանի. Երբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ»։ Սաղմ. խա. 3)։ Աստծու և մարդկանց մէջ մի տեսակ ազգականութեան յարաբերութիւն կայ, ինչպէս որ մարդիկ միմեանց մէջ արենական ազգականութեան յարաբերութիւն ունին—(«Զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք, որպէս ոմանք 'ի ձերոց ճարտարաց ասացին, թէ նորա եւ ազգ իսկ եմք»։ Գործք Առ. ժէ. 28)։ Մարդկանց և Աստծու մէջ ձգողական մի օրէնք կայ այնպէս, ինչպէս երկնքի և երկրի մէջ։ Հակառակ վարուել այդ օրէնքին անկարելի է։ Կարելի է բռնել քարը, որ վայր չընկնի, բայց հենց որ ազատ թողնենք, նա իսկոյն բնութեան օրէնքին կհետեւի. բոյսին, որ իւր տերևները սովոր է իրան կեանք ներշնչող արեւին

դարձնել, կարելի՛ է մի ուրիշ ուղղութիւն տալ, բայց փոքր ժամանակից ետ՝ կձգտի իսկոյն դէպի լոյսը. կարելի է մագնիսի սլաքի ուղղութիւնը փոխել, բայց հէնց որ ազատ ենք թողնում, իսկոյն դողդողալով սլանում է հիւսիսային բեեռը՝ այն կէտը, ուր միայն գտնում է իւր հանգիստը: Այսպէս է և մարդկային սիրտը: Նրան կարելի է սխալ ուղղութիւն տալ, նա կարող է իւր կոչման ճշմարիտ նպատակից հեռանալ, կարող է Աստծու փոխանակ մի այլն ընտրել, զոր. իրան, աշխարհին, մի որևէ արարած . . . , բայց դարձեալ անհանգիստ է, լի հոգսերով և սկսում է նորից որոնել իւր նպատակը, որին հնարաւոր է գտնել միայն Աստուծով, Աստծու մօտ և Աստծու մէջ:[1]

Այս տենչանքը դէպի յաւիտենականը ոչնչով չէ կարելի իսպառ արգելել՝ մեռցնել—ոչ աշխարհիս աղմուկներով և խռովութիւններով և ոչ զգայական ցանկութեանց խորտակմամբ: Խաղաղութեան րոպէներին, տրտմութեան ժամերին նա նորից զարթնում է և մահկանացու մարդուն ստիպում է իւր խաղաղութիւնը Աստծու մէջ որոնելու: Մարդուս այս տենչանքն առ Աստուած կարելի է համեմատել հայրենիքի կարօտի հետ՝ օտարութեան մէջ: Մանուկը, որ առաջին անգամ թողնում է ընտանի յարկը, օտարութեան մէջ կարօտութիւն է զգում ծնողների օգնութեան, փայփայանքին. այն անձը, որ սովոր է մանկութիւնից լեռների վրայ և հովիտների մէջ իւր տարիքը բոլորել, փորձի՛ր նրան բնակեցնել բնութեան բերքերով հարուստ դաշտավայրի վրայ և կտեսնես որ նա կարօտով կյիշի իւր հօրը, լերան գագաթը, ձորն ու հովիտը, աղբիւրն ու վտակը: Իւր կեանքն օտարութեան մէջ մաշող ծերունին վերջին րոպէին հայրենի երկնքի տակ ցանկանում է լինել և նրա սուրբ հողի մէջ թաղուել: Այսպէս և մարդս կարօտութիւն է զգում դէպի երկնային հայրենիքը: Այնտեղ միայն, Աստծու մէջ միայն գտնում է հանգիստ և խաղաղութիւն: Մարդկային սրտին յատուկ մի իրողութիւն է սա: Եթէ աշխարհիս բոլոր հարստութիւնները լցնես սրտի մէջ, նա դարձեալ գոհ չէ: Տո՛ւր նրան չտեսնուած փառք և պատիւ անգամ, նա էլի դժգոհ է: Զգի՛ր նրան երկրիս բաւականութեան և երջանկութեան շտեմարանը, էլի չէ յագենում—նա դժգոհ է և անհանգիստ: Ամենաբարձրեալը միայն, որ ամենի համար ամեն ինչ է, կարող է մարդկային

1 Տես իմ «մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին» էջ 5:



սիրտը լիօք և մշտապէս երջանկացնել: Դրա համար էլ որոնում է մարդս այս երջանկացնող հաղորդակցութիւնն ունենալ Աստծու մէջ և փափագում է նրա խաղաղութեան:

Այս տենչանքն առ Աստուած, այս հաղորդակցութիւնը մարդուս մէջ հետզհետէ աճում, զարգանում է, նման այն սերմին, որ ընկած է գարնան հողի մէջ: Մանկան մէջ այս զգացմունքը շատ աղօտ է—նա գիտակցօրէն չէ ձգտում դէպի Աստուած: Հասակի զարգացման հետ կեանքի հոսանքի մէջ փոքր առ փոքր զտւում, պարզւում են այդ զգացմունքները և հետզհետէ գիտակցական դառնում: Կրօնական զգացման զարգացումը մարդուս մէջ նման է նախ ցողունի, ապա խակ, իսկ վերջը առոք հատիկներով լցուած հասկի—(«Նախ զխոտն, եւ ապա զհասկն եւ ապա ցորեան առոք ի հասկին»: Մրկ. դ. 28.): Յարմար է այստեղ առաքեալի խօսքը—«Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի, այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեան ի բաց խափանեցի»: Թ. ա. Կրնթ. ժգ. 11:

Այս այսպէս է անհատների մէջ, սակայն օրէնքն անփոփոխ է և ընդհանրութեան վերաբերութեամբ: Մարդկութիւնը ևս ունեցել է իւր տղայական և երիտասարդական հասակը: Նա ևս յանկարծակի, միանգամից չէ հասել կրօնի բարձրագոյն ճշմարտութեանը, այլ՝ հետզհետէ, աստիճանաբար: Մեր օրերում էլ դեռ շատ ազգեր գտնւում են կրօնական զարգացման ստոր աստիճանի վրայ և մանկական հասկացողութիւն ունին Աստծու և յաւիտենական կեանքի մասին: Եւ դա զարմանալի չէ: Ինչպէս որ մի հատիկ այս կամ այն հողի մէջ աւելի լաւ է բուսնում, աճում, զարգանում, այսպէս և զանազան երկրներում զանազան ազգերի կրօնական զարգացման սանդուխքը այլ է եղել: Ինչպէս հատիկի աճումը պայմանաւորուած է ջերմութեան աստիճանով, խոնաւութիւնով, լուսով . . . այսպէս և կրօնի բնական ունակութիւնը կախուած է ամբողջ հոգեկան զարգացումից, տեղական պայմաններից, սովորութիւններից, շրջապատող հանգամանքներից, հարեան երկրներից . . . : Հէնց այդ պայմաններից էլ կարելի՛ է որոշել կրօնի զարգացման տարբեր աստիճանները, որ զանազան ազգեր այլևայլ ժամանակներում կատարել են:

Սովորաբար չորս տեսակ կրօն է ընդունուած—հեթանոսութիւն, հրէութիւն, քրիստոնէութիւն և իսլամութիւն

կամ մահմետականութիւն: Վերջինը՝ խիստ մտքով առնելով, առանձին կրօն չէ կազմում, այլ մի տեսակ խառնուրդ է քրիստոնէութեան և հրէութեան, խառն զանազան նախապաշարմունքներով և խակ երևակայութիւնով Աստծու և յաւիտենական կեանքի մասին: Հենց դրա համար էլ իսլամութեան մասին առանձին անելիք չենք ունենայ:

Կրօնական զարգացման ստոր աստիճանի վրայ հեթանոսութիւնն է կանգնած: Նրա զարգացումը նման է երեխայի—հեթանոսութիւնն ունի զարգացման զանազան աստիճաններ: Ամենաստոր աստիճանի վրայ կանգնած են Ֆետիշները: Քաղաքակրթութիւնից զուրկ մարդկանց մէջ կրօնական զարգացումն առաջին անգամ արտայայտւում է որպէս երկիւղ: Մարդս տեսնում է թէ կայծակն ինչպէս ջախջախում է դարաւոր կաղնու գագաթը. լսում է որոտի ձայնը, հողմի մռնչիւնը. տեսնում է թէ ինչպէս երկրաշարժը դղրդեցնում է երկիրը . . . ակամայ կարկառում է ձեռքերը, չոքում է, աղօթում է կայծակին և որոտին, հողմին և երկրաշարժին . . . , որպէս թէ Աստուած լինէին դրանք: Հազիւ թէ կարելի լինէր հաւատալ, թէ ծառը երկրպագութեան արժանի լինէր, բայց և այնպէս այդպէս է: Տգէտ հեթանոսը տեսնում է, թէ ինչպէս ծառը աճում, զօրանում է ինքն իրան՝ առանց մարդկային ձեռքի հոգատարութեան. մարդս ծառի մէջ մի բարձրագոյն զօրութիւն է որոնում, աղօթում է այս զօրութեան, ոյժի առաջ և աստուածային պաշտօն մատուցանում: Երկնաբարձ ժայռերը, մետաղի փայլն անգամ ֆետիշի մէջ նմանատեսակ զգացումներ են ծնեցնում:

Կրօնական փոքր ինչ բարձր աստիճանի վրայ կանգնած են այն ազգերը, որոնք պաշտում են արև, լուսին և աստղեր (բաբելացիք, փիւնիկեցիք, ասորիք, պարսք . . . ): Այստեղ ոչ թէ երկիւղը, այլ՝ երախտագիտութեան զգացումն է ստիպում մարդոց նոյնպիսի պաշտօն մատուցանել լուսաւորներին (Բագուի սրբազան հուրը): Ժամանակի ընթացքում այս երախտագիտութիւնը, կրօնական այս յարգանքը դարձաւ կռապաշտութիւն, որովհետև աստեղաբաշխական հետազօտութիւնները հին ազգերին առաջնորդեցին այնտեղ, որ փոխանակ աստղերի, երկրիս վրայ սկսան պաշտել նրանց տեղ ուրիշ առարկաներ. երկրիս վրայ լուսաւորների փոխանորդներ որոշեցին—ձուկ, կշիռ, ցուլ, կարիճ . . . (կենդանակերպները) և այնպէս մարդիկ այն կէտին հասան, որ պատկերը առարկայի փոխանակ ընդունեցին և կամ նշանը յայտա-



րարի հետ շփոթեցին և վերջ ի վերջոյ լուսաւորների տեղ՝ երկրիս վրայ նրանց փոխանորդ կենդանիք ընդունեցին և սկսան պաշտել: Այս է պատճառը, որ մենք պատահում ենք այնպիսի ազգերի, որոնք և պարզ լուսաւորներ են պաշտում և կոպիտ կենդանիք: Մարդիկ կենդանուն երկինք բարձրացրին, որպէսզի այնտեղից վայր բերեն և նրան պաշտօն մատուցանեն: Այս կենդանապաշտութիւնը Եգիպտոսում զարգացաւ և վերջն առաջնորդեց մարդկանց այնտեղ, որ նրանք սկսան մի կարգ վնասակար, ուստի երկնչելի և մի կարգ օգտակար, ուստի և յարգելի կենդանիների պաշտօն մատուցանել (կոկորդիլոս, օձ, փարաւոնի մուկն, ապիս, կատու . . . ): Պաշտուած կենդանիները չպիտի սպանուէին:

Կրօնական աւելի բարձր զարգացման աստիճանի վրայ կանգնած էին յոյները և հռովմայեցիք՝ քան թէ մինչև այժմ յիշուած ազգերը: Ճշմարիտ է նրանք ևս ընդունում էին նրանց, զոր. արեգական աստուած, լուսնի աստուած, ծովի, գետի, անտառի . . . աստուածներ և պաշտօն էին մատուցանում, սակայն նրանց մէջ ամենաբարձր, ամենավսեմ պաշտելու առարկան մարդս էր իւր հոգեկան յատկութիւններով: Մարդկային հոգու զանազան արտայայտութիւնները առիթ եղան ստեղծելու զանազան աստուածներ, զորօրինակ իմաստութեան, խաղաղութեան, սիրոյ... աստուածներ: Սակայն այստեղ ևս աստուածներին պաշտօն մատուցանելը կռապաշտութեան փոխարկուեց, նրանք ևս շինեցին փայտից, քարից արձաններ և նրանց պաշտում էին, զորօրինակ, համարելով որ ժամանակը հինէ, ծեր մարդու արձան էին շինում և պաշտում: Ժամանակը ամենայն ինչ խլող, տանող է, ուստի և ծերունի մարդու ձեռին գերանդի էին ներկայացնում, որ անխնայ հնձում է ամենայն ինչ: Ժամանակն անցնում է երագօրէն, ուստի և ժամանակի աստուածը թևեր պիտի ունենայ: Նոյնը բաղդի՝ երջանկութեան աստուած էր: Որովհետև երջանկութիւնը մշտական չէ, անկայուն է, բաղդի աստուածուն ներկայացնում էին սահուն գնտակի վրայ կանգնած: Այն անհատները, որոնք որևէ ծառայութիւն էին մատուցել, յետագայ սերունդը չէր մոռանում նրանց, աստուածացնում էր և նրանց համար արձաններ էր շինում և պաշտում, զորօրինակ Էսկուլապ՝ (մինը ամենահին բժիշկներից), Բաքոս (որթի մշակութեան գտնողը)...: Բնութեան ամեն ոյժի, զօրութեան համար մարդս ստեղծում էր մի մի աստուած. ամենայն մի պաշտօն, պարապմունք, մարդկային ոգու

10610-57

ամեն մի յատկութիւն ունէր իւր առանձին աստուածը: Ինչպէս որ անհատն է, այնպէս էլ նրա աստուածն է, սրա համար եւ յաճախ աստուածները ծիծաղի առարկայ էին—օրինակ յոյները և հռովմայեցիք իրանց աստուածներին անբիծ, անարատ չէին համարում, այլ մարդկային զանազան թերութիւններով և առաւելութիւններով օժտուած-աստուածները նախանձում են, պատերազմում են իրար դէմ: Օրինակ երկնքի աստուածը կրակի աստուծուն ձգեց մի ժայռի վրայ, սրա երկու ոտներն էլ կոտրուեցին և կաղ մնաց: Գինու աստուածը հարբեց, աստուածները խաբում են իրար . . . : Թէ այս տեսակ հաւատը դէպի աստուածները և կուռքերին պաշտօն մատուցանելը բարոյական ոյժ և զօրութիւն չէր կարող ներշնչել, դրանում կասկած չկայ: Վնասակար կողմն այն էր, որ մարդիկ վախենում էին աստուածներից և կարծում էին, թէ նրանք իրանց վրէժխնդիր կլինեին: Օրինակ, եթէ մինը բարեկամանում էր ծովի աստուծու հետ, տեղեակ չէր, թէ ժամանակի կամ բաղդի աստուածները կը բարկանան թէ չէ: Դրա համար էլ աթենացիք մի տաճար ունէին կառուցած, որի սեղանի ճակատին գրած էր հետեւեալ վերտառութիւնը—«Անծանօթի աստուծոյ», որին զոհ մատուցանելով, զոհ էին մատուցանում և այն աստուածներին, որոց վրէժն անգիտակցաբար շարժել կարող էին: Հեթանոսների զոհաբերութիւնը երկու նշանակութիւն ունէր—կամ ցանկանում էին աստուածների հաճութեանն արժանանալ և կամ նրանց բարկութիւնը հեռացնել: Ես պատժի արժանի էի, ասում է երբեմն մարդս ինքն իրան: Եթէ ես ինքս ինձ պատժեմ, ասում է հեթանոսը, այն ժամանակ աստուածներն ինձ չեն պատժի, ընդհակառակը նրանք սիրով կվերաբերուին ինձ: Այսպէս մարդս յաճախ իւր դաշտերի ընտիր բերքերը, հօտի անդրանիկ գառները զոհ էր բերում, մինչև անգամ այն ամենը, ինչ որ ամենաթանկագին էր իրանց համար: Օրինակ—որպէսզի Մոլոխ աստուծու հետ հաշտուեն, տարեքի բնակիչները իրանց որդւոցը դնում էին նրա առկայծեալ բազուկների մէջ: Հին գերմանացիները աղջիկներ էին զոհում աստուածներին: Աստուածներից երկիւղ կրելը մարդկանց մինչև անգամ այսպիսի հոգեկան այլանդակ մտածողութեանց է հասցրել: Պէտք է նկատել և այն, որ հեթանոսութիւնը չի կայանում բազմաստուածութեան մէջ: Կարելի է պաշտել մի աստուած, օրինակ արև, բայց այնուամենայնիւ հեթանոս լինել: Հեթանոսութիւն է, երբ մենք անցաւոր իրերը աստուածաց-



նում ենք, արարածը արարչի տեղն ենք ընդունում:

Հնդիկները հաւատում էին երեք աստծու գոյութեան—ստեղծող, խնամող և կործանող (Բրահմա, Վիշնու և Սիվա): Պարսիկները (զրադաշտ) երկու աստուածութիւն ունէին—մինը լուսոյ, իսկ միւսը՝ խաւարի (Որմիզդ և Արհմն): Լուսոյ և խաւարի աստուածները 12,000 տարի շարունակ պատերազմում էին. վերջինը յաղթեց:

Հեթանոսները որոնում էին ճշմարիտ աստծուն, բայց իսրայէլացւոց ազգն առաջինն էր, որ գտաւ նրան: Աբրահամն և Մովսէսը յայտնում են իսրայելացւոց ազգին, թէ մի Աստուած կայ, ստեղծող երկնի և երկրի: Աբրահամն առաջինը եղաւ, որ բաւականութիւն չգտաւ իւր կուռքերին պաշտօն մատուցանելուց և առաջին անգամ իրան կաշկանդող շղթան խորտակեց, շղթայ՝ որ իւր ազգի որդւոց միտքն ու սիրտը կապկպել էր: Աբրահամն առաջինն էր, որ Աստծու ձայնը խորին ուշադրութիւնով լսեց իւր կրծքի մէջ, սրա համար էլ նրան ամենակարող ճանաչեց: Աբրահամով նոր պատմութիւն է սկսւում—պատմութիւն բարոյական անձնաւորութեան: Աբրահամի սկսածը Մովսէսն Աստծու հրամանով շարունակեց աւելի պարզ կերպով և հաստատ կամքով: Հովուական կեանքի միայնակեցական ժամերում երկու մեծ փրկութիւն մտադրուեց վճռել Մովսէս—մինը՝ ազատել իւր ազգի որդիներին Փարաւոնի ծառայութիւնից՝ հանելով նրանց Եգիպտոսից և միւսը՝ կուռքերին պաշտօն մատուցանելու սովորութիւնից: Մովսէսն էր, որ Սինայի կատարից տուաւ իսրայէլացւոց ազգին տասն պատուիրանները և դրանով հիմն դրաւ բարոյական աշխարհայեցողութեան՝ բոլոր ժամանակի համար: Հրէից ազգի կրօնը մինչև այժմ յիշած կրօններից այնքան էլ բարձր չէ: Եթէ համեմատելու լինինք հեթանոսութիւնը, իւր սկզբնական շրջանում, գիշերուայ մութ խաւարի հետ, նրա յետագայ զարգացումը կնմանի սկսուող այգին, իսկ հրէութիւնը՝ ծագող արշալոյսին: Ամբողջ լոյսը վերջինս չէր տալիս դեռ ես: Եհովան հրէից ազգին չէր յայտնւում որպէս սիրոյ հայր, այլ որպէս մի խիստ տէր, լի սպառնալիքով և զայրութով՝ ընդդէմ իւր թշնամիների: Եհովան չէր ներկայանում որպէս հայր ամբողջ մարդկութեան, այլ՝ որպէս իշխան, տէր իւր երկրի, որպէս նոցա ազգային աստուած, որին նրանք իբրև ստրուկներ լսելու և հպատակելու պարտաւորութիւն ունէին: Եհովայի համար միայն հրէաներն էին ընտրեալ ազգ, սեպհական ժողովուրդ և ոչ մարդկութիւնը: Հրէական կրօնի շատ կէտերը դեռ ես

աղօտ էին, մութ էին. աստուածը բնակւում էր միայն վկայութեան խորանի մէջ և կամ Երուսաղէմի տաճարում. Նրան յարգանք էին մատուցանում զանազան կերպով—զոհ մատուցանելով, լուացումով, պահեցողութիւնով ինչ ինչ կերակրեղէնների, շաբաթը սրբելով, որոշեալ տօները կատարելով (պասէք, տաղաւարահարաց, պենտեկոստէի տօներ): Դեռ ևս ազատ չէին կարողանում մտածել, թէ Աստուած բոլոր մարդկութեան հայրն է. Նա իւր սէրը բոլորին է բաժանում, իւր արևը և՛ բարու և՛ չարի վրայ է սփռում: Հրէութիւնը դեռ ևս արշալոյս էր:

Ամբողջ՝ կատարեալ օր այն ժամանակ եղաւ, երբ աշխարհիս լոյսը ծագեց—Տէրն մեր Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ: Հազարաւոր տարիներ առաջ ազգերը խարխափում էին խաւարի և մոլորութեան մէջ—Յիսուս Քրիստոսով փարատուեց խաւարը, վերացաւ աղջամուղջը, չքացաւ մոլորութիւնը՝ ինչպէս մառախուղն արևի առաջ: Քրիստոնէութիւնը յայտնեց—որ Աստուած կատարեալ ոգի է. հայր է սիրոյ և ամբողջ մարդկութեան: Ոչ թէ միայն իսրայէլն է ընտրեալ ազգը, այլ ամբողջ մարդկութիւնը: Աստուածային սիրոյ առաջ չքանում են ամենայն մի տարբերութիւն կոչման և պաշտօնի, հասակի և սերնդի, գոյնի և ծագման, որոնք առաջ բաժանում էին մարդկանց իրարից. քրիստոնէական սէրը նորից միաւորեց ինչ որ հրէութիւնը բաժանել էր. բոլոր մարդկանց բարձրագոյն նպատակը պիտի լինի նմանիլ այդ Աստծուն, որի սէրը ամենայն մի կատարելութեան օրինակ է: Աստծուն չի կարելի յարգանք մատուցանել միմիայն զոհ բերելով, պահելով և ուրիշ այս տեսակ արտաքին ծիսակատարութիւնով, այլ՝ ներքին համոզումով, որովհետև «Աստուած հոգի է, երկրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկրպագանել»: Միայն սուրբ սիրտ ունեցողները կարող են նրան տեսնել: Քրիստոնէութիւնը կատարեալ կրօն է: Նա սիրոյ կրօն է և ոչ միայն սիրոյ, որով մենք Աստծուն սիրում ենք, այլ՝ քրիստոնէութիւնն ամենից առաջ սէր է, որով մեզ Աստուած սիրում է: Այս սէրը ցոյց տուաւ մեզ գործնական կերպով, որպէսզի մենք նրա օրինակին հետևենք, որպէս զի մեզանից իւրաքանչիւրը սիրոյ միջնորդութիւնով Աստծու որդի դառնայ և երկինքը երկրիս վրայ ունենայ: Յիսուսը մեզ համար աւետարան, այսինքն ուրախալի համբաւ բերաւ՝ Աստծու սիրոյ մասին, և սրանով լոյս, մխիթարութիւն և շնորհ տուաւ, այնպէս որ մենք



գիտենք, թէ ինչ պէտք է մեզ՝ մեր երանութեան համար՝ թէ՛ այստեղ և թէ՛ այնտեղ:

Սոքա են չորս գլխաւոր կրօնները, որոց դաւանում են երկրիս վրայի ազգերը: Եթէ ամբողջ մարդկութիւնը 1440. միլլիոն հաշուենք, հեթանոսութեան բաժին է ընկնում 850 միլլիոն, հրէութեան՝ 7 միլ. իսլամութեան՝ 170 միլ., իսկ քրիստոնէութեան՝ 400 միլ՝ աւելի: Այստեղից պարզ երևում է, թէ որքան ընդարձակ է դեռ ևս քրիստոնէութեան համար աշխատող մշակների ասպարէզը՝ քրիստոնէութեան տարածման գործում: Մեզ յայտնի է Փրկչի խօսքն այդ մասին—«Եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ»: Քրիստոնէութիւնը մի խմոր է, որ ամբողջ մարդկութիւնը պիտի խմորէ և նա դադար չի առնիլ՝ մինչև որ ամենքն էլ հոգւով և ճշմարտութիւնով չհաւատան իրան, մինչև որ ամենքն էլ Աստծու սիրով չմկրտուին մի ընտանիք, քոյր և եղբայր դառնալու: Այդ տարբերութիւնները սառցէ պատեր են, որոնք պիտի հալուեն քրիստոնէական սիրոյ առաջ:

## 3. ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Երկրագնդիս վրայ բնակուող զանազան ազգերի մէջ, որքան որ տարբեր են կրօնի արտայայտութիւնները, նոյնքան էլ զանազան են ռամիկ ֆետիշի և կրթուած քրիստոնէի կրօնական զարգացման աստիճանները: Թէև այս այսպէս է, բայց և այնպէս մի գաղտնի գիծ կայ, որ բոլորին էլ յատուկ է և որով ամենքն էլ ձգտում են որոնել Աստծուն և նրա հետ հաղորդակցութիւն ունենալ: Սրա համար ևս կրօնը որպէս մի անեզր ծով ամեն ուրեք տարածուած է: Չինաստանի ծովափունքից սկսած, անցնելով Հնդկաստանի դաշտավայրերը, մինչև արևմուտքի սահմանը, կրօնը նկատւում է զանազան արտայայտութիւնով: Նոյն իսկ Աֆրիկայի խորքերում, ուր ոչ մի եւրոպացի ոտք չէ դրել, կրօնական մտապատկերների հետքեր են գտնուած, որոնք թէև՝ որպէս կրօնական կեանքի սկիզբն, աղօտ են, իրան յատուկ փայլն ու լոյսը դեռ ևս չունին, բայց և այնպէս բոլոր արտայայտութիւնների մէջ երևում է մի տենչանք դէպի յաւիտենականը:

Ներքին աշխարհի այս գաղտնի գիծը, այս տենչանքն ուրիշ խօսքով կոչւում է կրօնական ունակութիւն: Դա մի առաւելութիւն է, որով բանական մարդը որոշւում է անբան կենդանուց:

Բացի մարդուց ոչ մի կենդանի չունի կրօնական ունակութիւն, որա համար եւ կենդանու համար Աստուածն անյայտ էակ է:

Կրօնական այս ունակութիւնը մղում, ստիպում է մարդուն որոնել Աստծուն: Բայց նա Աստծուն այն ժամանակ միայն կարող է գտնել, երբ Աստուած ինքը կյայտնուի: (Յայտնութիւն նշանակում է—ծածուկը, գաղտնին բաց անել և յայտնել մարդուն:) Երբ մանուկը ցանկանում է մօր գրկում լինել, անշուշտ մայրը պիտի բազուկները կարկառի և ընդունի, ապա թէ ոչ անկարելի է մանուկին մօր գրկում հանգչել, այսպէս և Աստուած պիտի մարդկանց ընդառաջէ իւր գոյութիւնը և կամքը յայտնելու: Մենք մեր ծնողների սէրն այն ժամանակն ենք ճանաչում, երբ նրանք յայտնում են մեզ իւրեանց մտադրութիւնները, նախագծերը, ձգտումները, այսպէս էլ մենք Աստծուն այն ժամանակ միայն սովորում ենք ճանաչել, երբ նա իւր գոյութիւնը և կամքը յայտնում է մեզ: Ինչպէս որ մենք չենք կարող ստեղծել ոչ աչք, ոչ ոտք և ոչ մարմնոյ որևէ մասը, այսպէս և առանց Աստծու կրօն չէ կարող ձեռք բերել մարդս: Մարդս չէ ստեղծում կամ գտնում կրօնը, նա դէպքի արդիւնք չէ և ոչ բազմութեան ջանքի պտուղ է: Ինչպէս բոլոր կատարեալ և բարի պարգևները վերևից են գալիս, այսպէս և կրօնը, որպէս գեղեցիկ պարգևներից մինը՝ լուսոյ Հօրից ենք ստանում:

Այս նպատակի համար կրկին պայմաններ են կարևոր—Նախ՝ կրօնական ունակութիւն մարդուս մէջ, որով միայն հնարաւոր է Աստուածային յայտնութիւնը ընդունել և զգալ (այն կարողութիւնը, որով մենք ընդունում ենք յայտնութիւնը, կոչւում է բանականութիւն) և երկրորդ՝ աստուածային յայտնութիւն՝ առանց որին կրօնական ունակութիւնը ոչինչ չի կարող ճանաչել և ընդունիլ: Երկուսն էլ անբաժան, անհրաժեշտ են այնպէս, ինչպէս հարցմունքն ու պատասխանը: Մինն առանց միւսի չի կարող լինել: Եթէ կրօնական ունակութիւնը համեմատելու լինենք աչքի հետ, այն ժամանակ աստուածային յայտնութիւնը կնմանի արևի լուսին: Առանց աչքի արև տեսնել չի կարելի, առանց կրօնական ունակութեան Աստծուն ճանաչել չենք կարող: Եւ ընդհակառակն—մութը գիշերուան մէջ առողջ աչքին ևս հնարաւոր չէ արև տեսնել, առանց աստուածային յայտնութեան բաւական չէ բանականութիւնն Աստծուն գտնելու համար: Արև մենք կարող ենք տեսնել միմիայն իւր սեպ-



հական լուսով, Աստծուն կարող ենք ճանաչել իւր սեպհական գոյութեան յայտնութիւնով: Առանց յայտնութեան լուսին՝ մենք ամենքս էլ խաւարի մէջ պիտի խարխափէինք, ինչպէս մի թափառական՝ մութ գիշերուան մէջ:

Աստուած շատ կանուխ է յայտնուել մարդոց, նա իւր թագուցեալ գոյութիւնը յայտնի է կացուցել իւր գործերով:

Աստուած շատ վաղ և բազմիցս մարգարէների բերանով իւր կամքը յայտնել է մարդկանց. վերջին անգամ իւր Միածին որդու միջնորդութիւնով խօսեց մեզ հետ—«Բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք, ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի, որով եւ զյաւիտենականսն արար» Թ. առ. Եբր. ա. 1.2: Երբ մենք այստեղ խօսում ենք Աստծու խօսքի մասին, ի հարկէ նրա խօսքը մարդկանց խօսքի հետ համեմատելու չէ: Աստուած հոգի է և ամեն ուրեք հոգեպէս յայտնւում է մարդկանց զգացման և հոգու մէջ: Այս զգացմունքները զարթեցնում են մասամբ բնութեան միջնորդութիւնով, մասամբ խղճի ձայնով, մասամբ անհատների, ինչպէս և ազգերի ճակատագրով և մասամբ մեծամեծ մարդկանց ձեռքով, որոնք ի շնորհս իւրանց բարձր ընդունակութեանց, ընդունակ են պարզ կերպով Աստծու գոյութիւնը և կամքը ճանաչել: Արևի ճառագայթներն առաջին անգամ ընկնում են ամենաբարձր գագաթների վրայ:

**Ա.** Աստուած յայտնւում է բնութեան մէջ: Ինչպէս որ մի արձան՝ արուեստի գործ, ցոյց է տալիս որ իւր վարպետն է ունեցել, այսպէս և բնութիւնը մատնանիշ է անում դէպի իւր ստեղծողը: Դրա համար սաղմոսերգուն ասում է. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն: Սղմ. ժը. 2: Գարունը կանաչ մարգագետիններով և գոյնզգոյն ծաղիկներով, ամառը ատոք հասկերով և պտղալից դաշտերով, աշունը պտուղներով ծանրաբեռնուած ծառերով, ինչպէս և ձմեռը ձիւնապատ լեռներով և դաշտերով վկայ են Աստծու ամենակարողութեան, իմաստութեան և սիրուն: Դրանք բոլորն էլ բարձրաձայն փառաբանում են արարչին իւրանց համր լեզուով: Բնութիւնը մի մեծ գիրք է—նրա ամեն մի թերթի, ամեն մի երեսի, ամեն մի տողի մէջ գրած է—մի Աստուած կայ, ո՛վ սիրտ, զգա՛ դու նրան: «Գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա: Զի անե-

ընոյթք նորա ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեւին տալ պատասխանի». Թ. Պօղ. առ Հռմ. ա. 19.20.: Տե՛ս Սաղմ. ճգ. և ժը. 1—7.:

**Բ.** Ո՞վ կարող է աչքէ անցնել և չտեսնել մեզ շրջապատող բնութիւնը. մարդուս մէջ հաստատուած բարոյական օրէնքը՝ խիղճը: Եթէ չար բան կգործես, խիղճդ քեզ կտանջի, կնախատի. իսկ եթէ բարի բան՝ կխրախուսի, կոգևորի քեզ: Ուր էլ գնալու լինես, ուր էլ կանգնես, խիղճը՝ Աստծու ձայնը քո մէջ՝ միշտ և հանապազ կենդանի վկայ է քո մտածողութեան, կամեցողութեան և գործողութեան: Եթէ դու թևեր առնես և թռչես մինչև ծովի միւս ափը, խիղճդ—քո մէջ գտնուած ճշմարտութիւնը—այնտեղ ևս կյայտնի քեզ Աստծու մասին, որը ոչ թէ միայն աստղերից վեր է բնակւում, այլև քո մէջ: Երկրորդ յայտնութիւնը խղճի միջի եղածն է—«Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեցին, նոքա որ զօրէնս ո՛չ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք, որք ցուցանեն զգործս օրինացն գրեալս ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց եւ յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ» Թ. առ Հռմ. բ. 14. 15: «Զի թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն. նա՝ եւ ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ, զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք, որպէս ոմանք ի ձերոց ճարտարաց ասացին, թէ նորա եւ ազգ իսկ եմք». Գործք. առք. ժէ. 27.28:

**Գ.** Էլի մի երրորդ պայման: Մարդկանց ճակատագիրը, ինչպէս և ազգերինը պատահական չեն. դրանք միմեանց յաջորդող ժամանակի հետևանքներ են. աստուածային հրամանով սահմանուած օրէնքներ են—կենդանի վկաներ բարոյական աշխարհահայեցողութեան. մարդկանց սահմանած չեն, ուստի և մարդիկ կործանել չեն կարող: Այս բարոյական աշխարհահայեցողութիւնը մարդկային կեանքի բոլոր յարաբերութեանց մէջ երևում է: Վատնողի վերջը աղքատութիւն է, չուայտողին՝ հիւանդութիւն, խստապարանոցը հանգստութիւն չունի . . . : Այո՛, չարը մի առ ժամանակ կարող է յաջողութիւն ունենալ աշխարհիս մէջ, բայց դա ժամանակաւոր է, մշտական չէ: Դրա հակառակ՝ առաքինութիւնն էլ կարող է առ ժամանակ ճնշուել, հալածանքի ենթարկուել, բայց ժամանակի ընթացքում՝ նա մի օր դարձեալ յաղթանակը կտանի, նա չի մեռնիլ: Ճշմարտութիւնը յաղթող



է, թէկուզ խաչ բարձրացնեն նրան կամ գերեզման իջեցնեն—արդարև նրա լոյսը ամպերը կաղօտացնեն, բայց խաւարեցնել երբէք չեն կարող: Այս ճշմարտութիւնը ոչ ոք և ոչինչ չէ կարող փոխել—ոչ սրամտութիւնը, ոչ ծաղրն ու ծանակը, ոչ աշխարհային կոչուած զօրութիւնը . . . :

Ինչպէս որ անհատների ճակատագիրն է, նոյն է և ազգերինը: Սա հազարաւոր անգամ փորձուած իրողութիւն է—«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք»: (Առակք ժդ. 34): Մեր ասածն ապացուցանելու համար բաւական է օրինակ բերել միայն Հռովմայեցւոց կայսրութիւնը: Քանի որ տէրութեան ուղղութիւնը հիմնուած էր բարոյական հիմունքների և արդար սկզբունքների վրայ, ամենայն ինչ՝ արտաքուստ թէ ներքուստ, լաւ էր: Բայց հէնց որ անբարոյականութիւնը, ամբարտաւանութիւնն ու ինքնահաւանութիւնը չափ համարուեց կեանքի մէջ և տէրութիւնը ջրհեղեղի նման ողողեց, իսկոյն ընկաւ և նրա մասերը, որպէս հոտած մարմնու մասեր, դիւրութիւնով բաժանուեցին իրարից: Եւ կամ նայեցէ՛ք քրիստոնէութեան զարմանալի յառաջադիմութեան, զարգացման ընթացքին—սկզբում որքան չնչին էր, փոքր, շարունակութիւնը ուժեղ, հզօր, իսկ վերջաւորութիւնը՝ փառաւոր: Աշխարհատարած Հռովմի կայսրներն իրանց լէգէոնները ուղարկում էին անզէն քրիստոնեաների դէմ պատերազմելու և քրիստոնէութիւնը ոչնչացնելու, բայց նրանց բոլոր ձեռնարկութիւնները ունայն անցան—ոչ թէ աշխարհը յաղթեց քրիստոնէութեան, այլ քրիստոնէութիւնը յաղթեց աշխարհին: Բոլոր պատերազմներից, թէ արտաքին և թէ ներքին, անյաղթելի դուրս եկաւ և վկայութիւն հաստատեց, որ տիեզերական պատմութիւնը միևնոյն ժամանակ տիեզերական դատաստան է, ուր ոչ թէ կարճատես մարդն է դատաստան կտրողը, այլ՝ Աստուած: Աստծու յայտնութեան երրորդ աստիճանը մենք գտնում ենք, ինչպէս անհատների, նոյնպէս ազգերի ճակատագրերի մէջ: «Յաւուր բարկութեան եւ յայտնութեան արդար դատաւորութեանն Աստուծոյ, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»: (Թուղթ առ Հռովմայեցիս բ. 6.: Կարդալ Առակք Սողոմոնի ժդ. 34. Սաղմոս լբ. 10. ճխդ. 17):

**Դ.** Աստուածային յայտնութիւնը բնութեան մէջ, խղճմտանքում և ազգերի ճակատագրի մէջ ամենայն ոք կարող է տեսնել, ով

զգայուն սիրտ ունի, և դրա համար էլ կոչւում է ընդհանուր յայտնութիւն: Ընդհանուր յայտնութիւնից պէտք զանազանել մասնաւոր յայտնութիւնը, որ բաժին է միքանի արդար, Աստուծուց ընտրուած անձերի: Այս վերջինների ձեռով ընդհանուր յայտնութիւնը և՛ս աւելի պարզ և որոշ յայտնի է լինում:

Այդ մասնաւոր յայտնութեան համար ընտրուած արդար մարդիկը զինուած էին հոգւով և զօրութիւնով, իմաստութիւնով և առաքինութիւնով. բարձր էին կանգնած իրանց ժամանակից, ուստի և ընդունակ՝ ոչ թէ միայն իրանց ժամանակակիցներին, այլև ապագայ սերնդին հոգեպէս, մտաւորապէս բարձրացնելու և առաջնորդելու: Այդ ընտրեալներն իրանց հոգու վեհութեան համար որոչուեցին Աստծու համար որպէս «անօթ ընտրութեան», որպէսզի Աստծու մտքերը և նախադծերը միւս ազգերի մէջ տարածեն: Մասնաւոր հանգամանքների ներքոյ և արտաքոյ կարգի դիպուածներում նախապատրաստուեցին նրանք իրանց կեանքի կոչումը լրացնելու (տ. II. Մովս. բ. 4. Երեմիա ա. 4. 9) և տհասներին կատարելութեան ձրգտել տալու: Նրանք ուսուցիչներ, վարդապետներ էին, իսկ մարդիկ նրանց աշակերտները. նրանք առաջնորդներ, սրանք հետեւող. նրանք պիտի ուսուցանէին, իսկ սրանք՝ լսէին. նրանց հրամայուած էր ղեկավարել, մեզ վրայ պարտք է դրած հետևել:

Ով գիտէ դու հարցնելու լինես, թէ ինչ ձևով է Աստուած յայտնուել նրանց:—Եւ արտաքին կերպարանքով և ներքին կերպով: Պիտի հոգու խոր անկիւնները թափանցել, եթէ ցանկանում ենք այդ դրութիւնն զգալ: Մարդկային կեանքի մէջ րոպէներ կան, երբ մարդըս սրբազան ոգևորութիւնով խօսում է իւր ներքինի հետ. այդ տեսակ րոպէներում մարդս մոռանում է արտաքին աշխարհը. մտաւորապէս առանձնանում է հոգու ծածուկ անկիւններում և բարեպաշտական զգացումով կենդանի Աստծու ներկայութիւնն զգում է: Կան րոպէներ, երբ մարդուս մէջ աստուածային սիրոյ զգացումն գերազանցում է բոլոր զգացումներին. մարդուս սիրտն ու միտքը հոգեպէս դէպի երկինք է վերացնում—երջանիկ րոպէ, վասնզի այդ ժամանակ մարդս ուշադրութիւնով լսում է Աստծու ձայնը իւր խղճի մէջ. այդ ժամանակ Աստծու սուրբ կամքը պարզ կերպով կանգնում է մարդուս հոգու առաջ՝ որպէս մի լոյս և լուսաւորում է ոգևորուած մարդու ներքինը: Ով ցանկանում է այդ րոպէները փորձով տեսնել, թող երկիւղածութիւնով և չարունակ կարդայ այդ



մարդկանց գործերը և կհամոզուի, որ արդարև Աստուած դրանց մէջ անհանդչելի ճշմարտութեան հուր է թողել: (տ. Մտթ. ժ. 20. Յովհ. ժզ. 13.) «Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է» (I. Թ. առ. Կրնթ. ժբ. 4) առաքեալի խօսքը յարմար է վերև յիշած մարդկանց համար, որոց մէջ Աստուած յայտնուել է: Մի արեգակի լոյս է, բայց զանազան ճառագայթներ, որոնք զանազան հոգիների մէջ զանազան ձևով են բեկբեկւում:

Արդէն հեթանոսութեան ժամանակներում եղան այնպիսի մարդիկ, որոնք իրանց ընդունակութիւնով և անկեղծ ոգևորութիւնով՝ իրանց պարզ գաղափարներով և բարոյական կամքերով իրանց ժամանակակիցներից բարձր էին կանգնած—նրանց մէջ աստուածային ոգու ներշնչումը նկատելի էր: Նրանք ոգևորուած էին այն մեծ գաղափարով, թէ ինչպէս իրանց ժամանակի մարդկանց օգնութեան ձեռք մեկնեն և նրանց անկեալ վիճակից հանեն, բարձրացնեն, որպէսզի վերջինները կարողանան Աստծուն ճանաչել և յարգել՝ նրան վայել միջոցներով: (Յիշել Սոլոն, Սոկրատէս, Պղատոն....):

Յայտնութիւնն անհամեմատ բարձր էր հրէութեան շրջանում: Ինչպէս որ յունաց ազգին վիճակուած էր 'ի վերուստ գեղեցկի՝ արուեստի բարձրագոյն աստիճանի ներկայացուցիչը լինել և սրանով լինել ուսուցիչ ապագայ ազգերին. ինչպէս որ Հռովմէական ազգին յատուկ էր կեանքի յարաբերութեանց բոլոր պայմանները իրաւանց սահմանում որոշել, օրէնքները կատարելագործել և ապագայ ազգերին կարգ ու կանոնի մէջ վարժել, այսպէս էլ Աստուած իսրայելացւոց ազգին ընտրեց բոլոր ազգերի միջից, որպէսզի նրանք կրօնը կատարելագործեն, ցոյց տան նրանում գտնուած վսեմը, գեղեցիկը—ամենաբարձրը, որ Աստուած որոշել է մարդոց ընծայելու՝ նրանց երջանկութեան համար: Այնտեղ՝ հրէից մէջ միայն ծագեց մի Աստուած ճանաչելու միտքը. նրանց մէջ են ապրել մարգարէք, որոնք սրբազան ոգևորութիւնով Աստծու ոգին իրանց մէջ էին զգում. այնտեղ՝ այդ դասական կրօնական ազգի մէջ պարզ կերպով երևում է աստուածութեան գաղափարի պարզութիւնը, որիպատճառով և իսրայէլը մի լուսատու ջահ եղաւ բոլոր ազգերի համար: Հրէից ազգն 'ի հարկէ միանգամով չհասաւ աստուածային յայտնութեան գաղափարի պարզութեան, այլ հետզհետէ: Աստուած Ադամին յայտնուեց որպէս արարիչ. (I. Մովս. ա. 27.): «Եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր»: Նոյը Աստծուն որպէս նախա-

խնամող ճանաչեց (I. Մովս. ը. 22. «Այսուհետեւ զամենայն աւուրս երկրի՝ սերմն եւ հունձք, ցուրտ եւ տօթ ամառն եւ գարուն, տիւ եւ գիշեր մի՛ դադարեսցեն»: Աբրահամն Աստծուն ամենակարող ճանաչեց (I. Մովս. ժէ. 1.) «Երեւեցաւ Աստուած Աբրահամու եւ ասէ ցնա. ես եմ Աստուած քո, հաճոյ լեր առաջի իմ»: Մովսէսին յայտնուեց Աստուած որպէս սուրբ (III. Մովս. ժա, 45.) «Զի ես եմ տէր Աստուած, որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց լինել ձեզ Աստուած, եւ եղիջիք սուրբք, զի ես սուրբ եմ»: Դաւթին և մարգարէներին Աստուած երեւում է որպէս համբերող, ողո՛րմած և գթած. («Գթած, ողորմած է տէր, երկայնամիտ եւ բազումողորմ» (Սաղմ. ճբ. 8.): «Բայց Սիովն ասաց. եթող զիս տէր եւ մոռացաւ զիս Աստուած: Մի՞թէ մոռանայցէ կին զմանուկ իւր, կամ թէ ո՞չ գթասցի 'ի ծնունդս որովայնի իւրոյ, եւ եթէ մոռանայցէ զայն կին՝ սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ տէր»: (Եսայի խթ. 14. 15): Մարգարէները մի այնպիսի ժամանակում երեւան եկան, երբ իսրայէլն Աստծու և աշխարհի մէջ ճօճում էր, կաղում էր: Նրանք քարոզում էին Աստծու մասին իւրեանց սրտի խորքից. Նրանք Աստծու թարգմաններն էին, մանաւանդ Նրա յայտնութեան գործերի. Նրանք աստուածային հոգւով լցուած՝ ժողովրդի բարքի, վարքի և հաւատի մաքրութեան քարոզիչներն էին. Նրանք էին յայտնում յանցաւոր ժողովրդին Աստծու որոշած պատիժը և վերջապէս Նրանք մխիթարիչներ էին սգաւոր ժողովրդին: Ինչպէս որ մի անգամ Մովսէս Նաբաւ լերան գագաթից դիտում էր Աւետեաց երկրի օրհնեալ դաշտերը, այսպէս և իսրայէլացիք բարոյական-կրօնական ոգեւորութեան գագաթին կանգնած՝ պարզ հոգւով Նայում էին աղօտ Ներկայի միջից դէպի փառաւոր ապագայի գեղեցիկ երկիրը: Այնտեղ, ասում էին Նրանք, խաղաղութեան իշխանը պիտի տիրի բոլոր ազգերին. Նոր ուխտ, Նոր դաշըն պիտի կապի Աստծու հետ և ամենուրեք օրհնութիւն և փրկութիւն պիտի սփռի: Եւ արդարև, ինչպէս Նրանք տեսան, այնպէս էլ կատարուեց: Հրէութեան ջախջախուած ծառը իւր անկումից առաջ մի պտուղ ես տուաւ, բայց այնպէս գեղեցիկ և կատարեալ, որ Նրա սերմը՝ իբրև Աստծու օրհնութիւն՝ տարածուեց բոլոր ազգերի վրայ: Յիսուս Քրիստոսի մէջ աստուածային կատարելութիւնը մարմնացած էր՝ Նրա հոգու մէջ մի փոքր անկիւն անգամ չկար, որ աստուածային հոգւով լցուած չլինէր: Նախկին դարերի մարդկանց մէջ Աստծու հոգին հիւրի Նման էր, իսկ Յիսուս Քրիստոսի մէջ, որ-



պէս Աստծու որդու՝ մշտական էր (Եսայիա ժա. 2.) «Եւ հանգիցէ 'ի վերայ Նորա հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան եւ հանճարոյ, հոգի խորհրդոյ եւ զօրութեան, հոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան»: Դրա համար եւ Քրիստոսով, որին Աստուած իբրև սէր է յայտնել մեզ, յայտնութիւնը լրացաւ, որովհետև առաջ Աստուած յաճախակի մարգարէների բերանով խօսեց, իսկ վերջը իւր որդու միջնորդութիւնով: Վերջն ենք ասում, որովհետև Յիսուսից յետոյ եղած բոլոր յայտնութիւնները՝ (առաքեալների, սուրբ հարց միջնորդութեամբ) բոլորը լոյս են. Նրա լուսից փոխ առած, Նրա հոգւով խօսած (Յովհ. ժզ. 13. 14)—«Յորժամ եկեսցէ Նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ, զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ՝ զոր լսիցէ խօսեսցի, եւ զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ»: Չկայ մի յայտնութիւն, որ աւելի մեծ լինէր, քան թէ հէնց Յիսուսի իւր յատնութիւնը, վասն զի Քրիստոսն այն յատնեց, ինչ որ Նրանից առաջ ոչ ոք չէր յայտնել. Նա այն յայտնեց, ինչ որ մեր կենաց և մահուան ժամանակ պէտք է, ինչ որ այստեղ և այնտեղ հարկաւոր է: Այն բարեպաշտութիւնը, որ մենք ունինք՝ Նրանն է, Նրանից ենք ստացել, Նրանից է անցել մեր հոգու մէջ, որպէսզի մենք ամենքս էլ Նրան Նմանինք և կարող լինինք ասել. «Կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս»: (Թ. ա. Գաղ. բ. 20.): Քրիստոսը մեզ համար պիտի լինի մի Քրիստոս մեր մէջ—Նա միայն պիտի լինի մեր կեանքի Նպատակը:

Յառաջ քան մեր խօսքը աստուածային սիրոյ յայտնութեան զարգացման ընթացքի մասին կզցենք, պիտի մի կասկած եւս փարատենք, կասկած, որ շատերին է անհանգիստ արել: Ինչո՞ւ համար Աստուած, ասում են շատերը, թոյլ տուաւ մարդուն երկար ժամանակ մոլորութեան՝ խաւարի մէջ խարխափի: Ինչո՞ւ թոյլ տուաւ հեթանոսներին հազարաւոր տարիներ սխալ ճանապարհով ընթանալ՝ առանց ճշմարիտ յայտնութեան: Ինչո՞ւ համար Յիսուսին՝ աշխարհիս լուսին, հէնց սկզբից աշխարհ չուղարկեց: Արդեօ՞ք Նրա համար, որ մարդկանց ցոյց տայ, թէ իրանց սեպհական ոյժով անկարող են իրա մօտ գալու: Որքան սկզբում մեր կասկածը հիմնաւոր թուայ, այնուամենայնիւ ճշմարտութիւնն այս է—մարդկութիւնը եւ, ինչպէս և անհատը, ենթակայ է աստուածային օրինաց զարգացման ընթացքին՝

ինչպէս որ մարդս, որպէս մանուկ, աճում, զօրանում և այրութեան հասակին է մօտենում, այսպէս և մարդկութիւնը: Ինչպէս մի անհատ, մարդկութիւնն էլ ունի իւր մանկական, պատանեկական, երիտասարդական և այրական հասակները: Նորածին մանուկը, եթէ չէ կամենում կուրանալ, չէ կարող սկզբից՝ միանգամով արեգակի ամբողջ լոյսը տեսնել: Ինչպէս որ մայրը սկզբում իւր մանկանը այն կերակուրներն է տալիս, որ մարսել կարող է. ինչպէս որ հայրը մանուկի հետ խօսում է միայն նրան հասկանալի լեզուով և նրան հասկանալի իրերի վրայ, թէև աշխարհումս դրանից դուրս շատ ճշմարտութիւններ կան. միևնոյն հայրը աւելի հասակաւորի և զարգացած անձի հետ ուրիշ լեզուով և աւելի ծանր խնդիրների վրայ կխօսէր. ինչպէս որ խելացի ուսուցիչն ամենայն բան մի անգամից չէ հաղորդում իւր սաներին, այլ փոքր առ փոքր, հետզհետէ՝ նայելով նրանց զարգացման. ինչ որ նա ուսուցանում է, ապագայ դասերի համար մի տեսակ նախապատրաստութիւն է, հիմք է, այսպէս—և Աստծու—յայտնութիւնն—է—նա—ևս հետզհետէ—է—կատարուել:—Աստուած այստեղ նման է մի—իմաստուն—դաստիարակի, որ միայն այն է տալիս մարդոց, ինչ որ պէտք է, ինչ որ կարող են հասկանալ: Դրա համար ևս յայտնութեան զարգացումն նոյն ճանապարհով է յառաջ գնացել, ինչ ճանապարհով որ մարդկութեան զարգացումն է գնացել և գնում է: Դրա համար ևս Աստուած մարդուս մէջ ամենից առաջ հայրական իշխանութեան զօրութիւնն է ցոյց տալիս և իւր դաստիարակութիւնը երկիւղով է սկսում («սկիզբն զգօնութեան, երկիւղ Տեառն»:) Դրա համար ևս նա պահանջում է սկզբում հնազանդութիւն՝ առանց պատճառը յայտնելու, առանց «սրա» և «նրա» համար, այլ՝ պարզ կերպով՝ «պէտք է», «պէտք չէ»: Որքան մարդս Աստծու երկիւղի մէջն է դաստիարակւում. որքան նա սկզբում իրան ազատ չէ համարում, այլ մինի իշխանութիւնից կախումն ունեցող, այնքան նա վերջը լաւ է ճանաչում Աստծուն և իրան Աստծու սիրելի որդի զգում. այնքան նա մօտիկ է զգում իրան և նրա բազուկների մէջ հանգչած:

Աստուած արել է մեզ համար այն՝ ինչ որ հարկաւոր է յօգուտ մեր—նա մեզ իւր սիրոյ կատարելութիւնով է յայտնուել: Այժմ մեզ է մնում անել այն, ինչ որ նրան հաճելի է—ընդունել մեր սրտերի մէջ նրա յայտնութիւնը, հասկանալ նրա սէրը և մեզ փոքր



առ փոքր այդ սիրուն արժանի կացուցանել: Հիւանդը չէ կարող առողջանալ, եթէ միայն յայտնի լինի թէ ինչ դեղ է հարկաւոր, այլ նա պիտի նոյնը և ընդունի: Այսպէս բաւական չէ, որ մենք իմանանք թէ Աստծու յայտնութիւն կայ և սրանով մեզ փրկուած համարենք, այլ հարկաւոր է, որ մեր սրտումն էլ ընդունենք—ամեն բան սրտից է կախուած:

Կարդալ ագարակի առակը (Ղուկ. ը. 4...) Մարթա և Մարիամ (Ղուկ. ժ. 38—42.):

## 4. ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*(Սուրբ գիրք)*

Ինչ որ բարեպաշտ մարդիկը սուրբ են զգացել և խորամուխ են եղել Աստծու մէջ և ինչ որ գտել են, չեն թագցրել իրանց մէջ, այլ հաղորդել են մարդկութեան: Սրա համար էլ ամենայն ժամանակ, երբ մի մարգարէ է յայտնուել, իսկոյն իւր լոյսն էլ սփռել է նրանց վրայ, որոնք խաւարի մէջն են եղել նստած: Մարգարէները՝ առաջ բերանացի էին հաղորդում: Որպէսզի Աստծու յայտնութեան հետ բոլոր ազգերը ճշմարիտ կերպով ծանօթ լինեին, պիտի բերանացի (աւանդութիւն) հաղորդելու ձևին վերջ դրուէր և գրաւորը փոխարինէր նրան: Միայն այս ձևով Աստծու յայտնութիւնը կարող էր տարածուել ի սփիւռս աշխարհի:

Ինչպէս որ յայտնութիւնը աստիճանաբար, հետզհետէ է եղել, այսպէս և յայտնութեան գրքերն էլ հետզհետէ են յառաջ եկել—ամենահին գիրքը սկիզբն է առնում 1,500 տ. ն. ք. զՔրիստոս, իսկ ամենավերջինը երկու դար Քրիստոսից յետոյ: Հին-ուխտի բոլոր գրքերը վերջը հաւաքեցին և (Եզրաս 480 ն. ք. զՔրիստոս) մի ամբողջ գիրք կազմեցին: Այդ բոլոր գրքերը միասին կոչւում են Սուրբ գիրք, Աստուածաշունչ:

Սուրբ գիրք ասելով հասկացւում է մի հաւաքածու, որ 75 գրքից է բաղկացած: Եւ որպէսզի սովորական գրքերից որոշուի, անուանւում է սուրբ գիրք: Սուրբ կոչւում է իւր ծագման, պարունակութեան և նպատակի պատճառով—«Զի 'ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարողն են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն, 'ի ձեռն հաւատոյն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս»: (II. թ. ա. Տմթ. գ 15.):

Ինչպէս որ սուրբ գիրքը զանազան ժամանակներում և հետզհե-

տէ է կազմուել, այսպէս էլ սկզբում զանազան լեզուներով է գրուել: Հին-կտակարանը եբրայեցերէն է. Դանիէլի գրքի մի քանի գլուխները՝ քաղդէացւոց լեզուով, իսկ Նոր-կտակարանը՝ յունարէն (այն ժամանակուայ տիեզերական լեզուն): Սուրբ գրքի զանազան հեղինակները (քահանայ, մարգարէ, աւետարանիչ, առաքեալ) իւրեանց ներքինը աստուածային ազդմամբ արտայայտել են մի այնպիսի ժամանակում, երբ դեռ ես թուղթ ասած չկար. Նրանք գործ էին ածում պապիրուս կոչուած բոյսի տերեւները (II. Յովհ. ժբ. III. Յովհ. 13) «Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ ոչ կամիմ քարտիզիւ եւ դեղով գրել, եւ բերան 'ի բերան խօսել»: Կամ գրում էին մոմի տախտակների վրայ (Ղուկ. ա. 63)—«Եւ խնդրեաց տախտակ եւ գրեաց...»: Կամ մագաղաթի եւ կենդանեաց կաշուի վրայ (II. Թ. Տմթ, դ. 13. «Յորժամ գայցես՝ բերջիր եւ զգիրսն, մանաւանդ զմատեանսն»:) Բացի դրանից սկզբում տպագրութեան արհեստն անյայտ էր դեռ ես (առաջին տպագրուած սուրբ գիրքը լոյս տեսաւ Մայնց քաղաքում 1,440 թուին), ուստի սուրբ գիրքը տարածելու միակ միջոցը արտագրելով էր լինում, որ սկզբում կատարւում էր հրէաների, իսկ վերջերս՝ գլխաւորապէս վանականների ձեռով: Արտագրելը ոչ թէ միայն ձանձրալի էր, այլեւ մեծ երկիւղածութիւնով և խղճի մտօք էր կատարւում (Սինագօգներում գործածուող սուրբ գիրքը կարելի էր գրել միայն սուրբ կենդանիների կաշուի վրայ: Թէ ինչ նիւթով պիտի գրել, դրա համար խիստ հրահանգներ կային: Արտագրողը ոչ մի կէտ իրաւունք չունէր աւելացնել: Բառերի և նախադասութիւնների միջի տարածութիւնը ճիշտ կերպով որոշուած էր: Արտագրելու ժամանակ մաքուր հանդերձներ պիտի հագնէին: Ամենայն անգամ՝ երբ Աստուածանունը պիտի գրուէր, գրիչը հարկաւոր էր նոր թաթախել. բառը թերի չպիտի մնար, այլ ամբողջացնուէր: Երբ աշխատանքը վերջանում էր, վերահսկող մասնաժողովը ծայրէ ի ծայր կարդում էր ամենայն զգուշութիւնով և մտադրութիւնով:) և ինչ զարմանալի է, եթէ հնումն մի հատ սուրբ գիրքն արժէր հարիւրաւոր ռուբլիներ: Ժամանակի ընթացքում սուրբ գիրքը թարգմանուեց և օտար լեզուներով: Առաջ թարգմանուեց Հին-կտակարանը 277 տ. ն. ք. զԲ. Պտղոմէոս Փիլադելփոսի օրով՝ Աղէքսանդրեան—յունական լեզուով: Այս թարգմանութիւնը՝ համաձայն թարգմանողների թուի՝ կոչուեց Եօթանասնից (LXX): Յետոյ ամբողջ սուրբ գիրքը Հերոնիմոսի օրով լատիներէն թարգմանուեց և Տրիէնտինեան ժողովում 1,545 թ.



իբրև սրբազան լեզու որոշուեց: Լատինական այս թարգմանութիւնը կոչւում է Վուլգատա, այսինքն ընդհանուր, որովհետև ամենուրեք ընդունելի էր: Լիւտերը 1,534 թ. գերմաներէնի փոխադրեց և պատճառ դարձաւ սուրբ գրքի ժողովրդի մէջ տարածուելուն: Պատմել, թէ երբ թարգմանուեց և տպագրուեց հայերէն սուրբ գիրքը: Սուրբ գիրքն այժմ թարգմանուած է 308 զանազան լեզուներով և աւելի քան 100 միլլիօն օրինակ տարածուած է մարդկութեան մէջ: Զանազան ընկերութիւններ կան, որոնց նպատակն է ձրի տարածել սուրբ գիրքը—նշանաւորն է Բրիտանական աստուածաշնչական ընկերութիւնը, որը միայն 88 միլիօն օրինակ սուրբ գիրք և սրան վերաբերեալ գրքեր է տարածել: 1879—1880 թ. ունեցել է 1,422,498 ռուբլի արդիւնք:

Մեր խօսակցութիւնը ցարդ պատկանում էր սուրբ գրքի արտաքին մասին. դառնանք այժմ նրա էականին, այն է նրա նպատակին: Այս գրքի մէջ Աստուած տալիս է մարդուն այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է նրա (մարդու) փրկութեան համար. նա տալիս է մարդուն լուսաւորութիւն, դաստիարակութիւն. սրբութիւն (սուրբ առնել), մխիթարութիւն, իսկ այս յիշած կէտերը շնորհում են մարդուն երանութիւն, երջանկութիւն:

*ա. Լուսաւորութիւն*—II. Թ. ա. Պետ. ա. 19: «Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական, որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք, իբրեւ ճրագի, որ տայցէ լոյս 'ի խաւարչտին տեղւոջ, մինչեւ տիւն լուսաւորեսցէ եւ արուսեակն ծագեսցէ 'ի սիրտս ձեր»: Սուրբ գիրքը լոյս ճրագ է կոչւում: Լոյսը լուսաւորում է, խաւարը փարատում է, այնպէս որ մենք իրերն իրանց սեպհական յատկութիւնովն ենք տեսնում: Այս միևնոյն պաշտօնը կատարում է սուրբ գիրքը: Նա մեկնում է, պարզաբանում է մեզ այդ յարաբերութիւնները, որոնք առանց նորան մութ պիտի մնային մեզ համար. օրինակ նա ասում է մեզ 1) թէ Աստուած ինչ է—կարդալ I. Մովս. ժէ. 1. «Եւ եղեւ Աբրահամ ամաց 99 եւ երեւեցաւ Տէր Աստուած Աբրահամու եւ ասէ ցնա, ես եմ Աստուած քո, հաճոյ լեր առաջի իմ»: Յովհ. դ. 24. «Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել»: I. Թ. Յովհ. դ. 16. «Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք զսէրն Աստուծոյ, զոր ունի առ մեզ: Աստուած սէր է, եւ որ կայ 'ի սէրն, բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ»: 2) Թէ ինչ է մարդս I. Մովս. ա. 27. «Եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր, ըստ պատ-

կերի Աստուծոյ արար զնա»: 3) Թէ ինչ յարաբերութեան մէջ է Աստուած մարդկանց հետ: II. Թ. Տիմ. գ. 16, 17. «Ամենայն գիրք Աստուածաշունչք եւ օգտակարք 'ի վարդապետութիւն են եւ 'ի յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ 'ի խրատ արդարութեան, զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ»: Թ. առ. Գաղ. գ. 26- «Զանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատով 'ի Յիսուս Քրիստոս»: 4) Մարդս ինչ պիտի լինի—I. Թ. Յովհ. գ. 12: «Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք մեք, վասն այսորիկ աշխարհս ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա: Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք, եւ չեւ եւս է յայտ, եթէ զինչ լինելոց եմք, գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա, որպէս եւ էն», և ցոյց է տալիս իւրաքանչիւրին—թէ մանուկներին և թէ ծերերին, թէ աղքատին և թէ հարստին...... իւր հոգացողութեան շրջանը, իւր աստուածային կամքը և ամենի առաջ դնում է բարի մարդկանց օրինակը, որպէսզի նրա օրինակից սովորեն ճանաչել և հաւատարիմ լինել Աստծուն: Նա ցոյց է տալիս, թէ մարդիկ ինչ բանի պիտի ձգտեն և ինչից պիտի խորշեն—մարգարէութիւն Միքիէ. զ. 8. «Պատմեցաւ քեզ, ով մարդ, զինչ է բարի կամ զինչ խնդրէ 'ի քէն Տէր. բայց առնել զիրաւունս, եւ սիրել զողորմութիւն, եւ պատրաստ լինել երթալոյ զկնի Տեառն Աստուծոյ քոյ»: 5) Վերջապէս ասում է մեզ սուրբ գիրքը, թէ ուրտեղից ենք գալիս (—Ժողովող ժբ. 7. «Եւ դարձցի հողն յերկիր, որպէս եւ էրն, եւ հոգին դարձցի առ Աստուած, որ ետ զնա». I. Մնացորդաց իթ. 15. «Զանզի պանդուխտ եմք մեք առաջի քո եւ նժդեհք, որպէս ամենայն հարքն մեր իբրեւ ստուերս են աւուրք մեր 'ի վերայ երկրի և ոչ գոն մեր մնացուածք ինչ») և ուր ենք գնում—(Թ. առ. Եբր. ժգ. 14. «Զանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք»:) Հանդերձեալում մարդիկ պիտի հնձեն, ինչ որ ցանել են —Թ. առ. Գաղ. զ· 7. «Զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ»: Այսպէս սուրբ գիրքը մի ջահ է մեր կենաց շաւղի վրայ, մի առաջնորդ, որ տանում է մեզ դէպի յաւիտենական կեանքը:

բ. *Դաստիարակութիւն*—Սուրբ գիրքը դաստիարակչի դեր եւ կատարում է՝ մատնանիշ անելով մեր սխալները—Նա մեզ զգուշացնում է չարից և առաջնորդում է դէպի բարին: II. Թ. Տիմ. գ. 16, 17. «Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն



են յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ 'ի խրատ արդարութեան, զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ»: Այս տողերը նոյնն են վկայում, երբ պատժով («յանդիմանութիւն»=պատիժ) և դաստիարակութիւնով («ուղղութիւն»՝ =ուղղել) դէպի արդարութիւն է առաջնորդւում մարդս: Ինչպէս որ մի հայր իւր որդուն երբեմն մեղմ, երբեմն փոքր ինչ խիստ ձեւով է յանդիմանում, պատժում, այսպէս և սուրբ գրքի յորդորման աստիճանը զանազան է: Ի՜նչ սրտեռանդն յորդոր, երբ սուրբ գիրքը ասում է մեզ. «Մի՛ զանձանց խնդրէք վրէժ, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան Թ. առ. Հռմ. ժբ. 19. և Մատթ. ե. 44. «Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, եւ աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ, որք լլկեն զձեզ եւ հալածեն»: Ի՜նչպէս քաղցր հնչում է մեր ականջին. «Տո՛ւր ցիս որդեակ զսիրտ քո եւ աչք քո ճանապարհաց իմոց պահեսցեն» Առակք Սող. իգ. 26. և Ղուկ. զ. 36. «Եղերո՛ւք գթածք, որպէս եւ հայրն ձեր գթած է», եւ Եսայի ծը. ը. «Բրդեա՛ քաղցելոց զհաց քո, եւ զաղքատս անյարկս տար 'ի տուն քո, եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջի՛ր, եւ յընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես»: Ի՜նչպիսի քնքոյշ յորդոր է Թ. առ. Գաղ. զ. 1. «Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք 'ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանս, դուք որ հոգեւորդ էք, հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան»: Ամենուրեք հնչում է միեւնոյն սիրալիր ձայնը «սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն» (Երեմիա լա. 3): Սուրբ գիրքն, այո՛, մեղմ ձեւով է յորդորում, բայց կարևոր ժամանակ խստութեան զէնքն է ձեռն առնում: Որպէս մի ճշմարիտ, իսկական դաստիարակ, սուրբ գիրքն ամենուրեք ճշմարտութիւն է քարոզում—Նա չարին բարի չէ անուանում, խաւարը՝ լոյս, դառը՝ քաղցր.... Եսայի ե. 20. «Վա՜յ այնոցիկ, որք ասիցեն զչարն բարիս, զբարին չար, ովք դնիցեն զլոյսն խաւար, եւ զխաւարն լոյս, ովք դնիցեն զդառն քաղցր, եւ զքաղցրն դառն»: Բարոյական խստութիւնը յանդիմանում է մանաւանդ այն յանցանքները, որոնք, թէև վարակիչ բնաւորութիւն ունին, բայց արտաքուստ—այնպէս են վարագուրուած, որ իրանց ագեղ դէմքը չեն ցոյց տալիս, այլ հակառակ յատկութիւնով են ներկայացնում մարդկանց: Այսպէս խօսում է սուրբ գիրքը անառակութեան և արբեցութեան մասին—«Իբրեւ 'ի տունջեան զգաստացեալ շրջեսցուք, մի՛ անառակութեամբ եւ պղծութեամբ և մի՛ խառն անկողնովք եւ պղդ-

ծուլթեամբ, եւ մի՛ նախանձու եւ հակառակութեամբ»: Նա իւրաքանչիւրի սխալը երեսին է ասում առանց քաշուելու: Ցնացող Հերովդէսը պիտի զգար. «Չէ արժան քեզ ունել զդա» (Մատթ. ժդ. 5) խօսքերի զօրութիւնը, որ անզէն Յովհաննէսը երեսին ասաւ: Կուսակալ Փելիքսը դողաց, երբ լսեց Պօղոսի հանդերձեալ կեանքի մասին («Եւ 'ի խօսելն նորա վասն արդարութեան եւ ժուժկալութեան եւ հանդերձեալ դատաստանին, զահի հարեալ Փելիքս...». գործք առ. իդ. 25): Մինչև այսօր էս Աստծու խօսքը երկսայրի սրի նման կտրում է, այնպէս որ այպանողը իւր ծիծաղն է մոռանում և աստուածուրացի լեզուն բերանի մէջն է չորանում: Սուրբ գիրքը մինչև այսօր էլ չարերի համար «մանէ, թեկել և փարէս» է, որը Բաղդասար թագաւորի երեսի գոյնը թռցրաւ և այնպէս դարձրաւ՝ ինչպէս գունատ որմը, որի վրայ խօսքերը երևացին: Կարդալ—Թ. ա. Եբր. դ. 12. «Զի կենդանի է բանն Աստուծոյ եւ ազդող եւ հատու քան զամենայն սուր երկսայրի եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից եւ ուղղոյ»: Երեմիա իգ. 29. «Ո՞չ ապաքէն բանք իմ իբրեւ զհուր են, ասէ տէր. եւ իբրեւ զմուրճ, որ հատանէ զվէմ»: Որքան որ խիստ և անհարկու է Աստծու խօսքը դէպի քարացած սրտերը, մեղքի մէջ չաղախուած յանցաւորները, նոյնքան մեղմ և քաղցր է նոյն խօսքը դէպի ապաշխարողները, որոնց նա արդարութեան և ուղղութեան ճանապարհն է հրաւիրում իւր քաղցրութիւնով—սուրբ գրքի նպատակը միշտ և հանապազ նոյն է—ինչպէս ե ր ջ ա ն ի կ դարձնել մարդուն, ինչպէս ե ր ա ն ե լ ի անել նրան:

*գ. Սուրբ անել*—Տասներկու տարեկան Յիսուսի տաճար գընալու պատմութիւնը նրա համար չէ գրուած սուրբ գրքի մէջ, որ միայն ուսանես այլ՝ որ դու ես նրա նման կ ե ա ն ք վարես—առաջ պիտի լսես և ապա ինքդ քեզ հարցնես—քո ծնողներին լսո՞ւմ ես, հնազա՞նդ ես, պիտի աճիս, զարդանաս հասակով, շնորհքով և իմաստութիւնով: Սուրբ գրքի բոլոր պատմութիւնները, որոնք նկարագրում են սուրբը, անարատը, կրթիչը, ազնիւը և գեղեցիկը, մանաւանդ Փրկչի անբիծ կեանքը, քեզ համար իբրև օ ր ի ն ա կ է տուած, որպէսզի դու ես անես այն, ինչ որ բարեպաշտ մարդիկն Աստծու սիրու համար գործել են, և խորշես այն ամենից, ինչ որ նրանք 'ի սէր նրա չեն արել: Այս բանի համար էլ Փրկիչը մի անգամ ամենայն ջերմեռանդութիւնով այսպէս աղօթեց ամենքիս համար. «Սուրբ արա՛ զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է» (Յովհ.



ժէ. 17): Ուրեմն աստուածային խօսքը քեզ առաջնորդ ընտրի՛ր աշխարհիս մէջ. անսուրբ բաներին հակառակ եղի՛ր. քեզ սուրբ հոգւով, այսինքն աստուածային խօսքով զրահաւորի՛ր («Այսուհետեւ զօրացարուք տէրամբ... եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ»—Թ. ա. Եփս. զ. 10—17): Փրկիչը՝ ամեն բանում մեզ օրինակ տուող վարդապետը փորձութեան րոպէում ուրիշ վէնք չընտրեց՝ բացի Աստծու խօսքից—«Գրեալ է» (Ղուկ. դ. 8): Ուր այս խօսքը հնչում է, կեանքի հոգսերը տեղի են տալիս, նուազում է փառամոլութիւնը, անհետանում է փառասիրութիւնը, հրեշտակները մերձենում են և ծառայում են մարդկանց («ապա եթող զնա սատանայ, եւ ահա հրեշտակք մատեան եւ պաշտէին զնա» Մատթ. դ. 11): Ուրեմն—սուրբ անել՝ բարոյապէս կատարեալ լինել («արդ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ հայրն ձեր կատարեալ է»—Մատթ. ե. 48): Ահա այս է սուրբ գրքի այն վըսեմ նպատակներից մինը, դէպի որը ուղղուած են նրա բոլոր յորդորները, նախազգուշացումներն ու խրատները:

*դ. Մխիթարութիւն*—Երբ մարդս կեանքի վշտերով ծանրաբեռնւում է, աշխարհս մխիթարութիւն չունի դրա համար: Այս տեսակ վայրկեաններում մարդս ասում է—սա իմ ճակատագիրն է, փոխել չի կարելի, պիտի համբերել: Բայց ո՛րքան սփոփիչ, ո՛րքան մխիթարիչ է սուրբ գրքի խօսքը նման րոպէներում: Երբ աղքատութիւնը քեզ ճնշում է և ապագայի հոգսը քո մէջ յուսահատութիւն զարթեցնում, այն ժամանակ Աստծու խօսքը մատնանիշ է անում քեզ վայրի շուշանին, երկնքի թռչուններին—«Ո՛չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա» (Մատթ. զ. 26. ժ. 29—31); Երբ յանցանքը հիւանդացնում է քեզ և յուզուած ներքինդ յանդիմանում, կշտամբում է, Աստծու մխիթարիչ խօսքը ձայն է տալիս—«Թողեալ լիցին քեզ մեղք քո» (Մատթ. թ. 2.), այնպէս որ դու ես կարող ես սաղմոսերգուի հետ խոստովանել և ասել. «Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ» (Սաղմ. ղգ. 19):

Երբ թշնամիներդ քեզ հալածում են, երբ բարեկամներդ մոռանում են քեզ, այն ժամանակ դարձեալ սուրբ գիրքն է, որ իւր մխիթարիչ հայեացքով ընդառաջում է քեզ. «Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս, յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է» (Սաղմ. խա. 12): Երբ հիւանդութիւնը քեզ մահուան անկողնի մէջ է ձգում և բժիշկ-

ների գիտութիւնը իւր վերջին միջոցը գործ է դրել, այն ժամանակ՝ Տէր աստուածային խօսքն է քո վերջին մխիթարութիւնը—«Յայտնեա՛ առաջի տեառն զճանապարհս քո եւ յուսա՛ 'ի նա» (Սաղմ. լզ. 5) «'Ի տան հօր իմոյ օթեւանք բազումք են» (Յովհ. ժդ. 2.): Երբ ծնողներն իրանց միակ զաւակի գերեզմանի առջին են կանգնած, ա՛խ, որքան մխիթարական է հնչում նրանց ականջին, «'Ի բաց գնացէք, զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ» (Մատթ. թ. 24.) խօսքերը և երբ զաւակները ծնողների հողակոյտի մօտ կանգնած դառնագին լաց են լինում և չգիտեն իրանց ինչ անելիքը, Աստծու մխիթարիչ խօսքը սփոփեցնում է նրանց. «Հայր իմ եւ մայր իմ թողին զիս, եւ տէր իմ ընկալաւ զիս» (Սաղմ. իզ. 10): Շատ գրքեր կան, որոնք մարդուս տխուր օրերին մխիթարել կարող են նրան, բայց ամենից գեղեցիկը, ամենից սիրունը սուրբ գիրքն է: Նա է այն աղբիւրը, որից Աստծու մխիթարութեան խօսքերը ամենից պարզ և ամենից առատ են բղխում:

ե. *Երանութիւն*—Սա միակն է, ուր ամեն ինչ (խրատ և յորդոր, մխիթարութիւն և նախազգուշութիւն) պարունակուած է: Երբ դիտող աչքով նայում ես, թէ ինչպէս մարդիկ համբերութիւնով, ուրախ և զուարթ կերպով կատարում են այս երկրաւոր կեանքի ընթացքը և հաւատով ու յուսով հեռանում են կեանքից, կեանք՝ որ իւր փրկութիւնը և ապաւէնը Աստծու խօսքի վրայ դրած ունէր, այն ժամանակ միայն կարելի է զգալ, խոստովանել, թէ Աւետարանը աստուածային որպիսի մեծ զօրութիւն է՝ երջանիկ դարձնելու իրան հաւատացողներին (Թ. առ. Հռմ. ա. 16.) «Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զԱւետարանն, քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց»: Այդպիսի վայրկեաններում գտնում ենք այն հարցի պատասխանը, որ ուրիշ ժամանակ ոչ ոք հնար չունէր պատասխանելու. «Զի՞նչ պարտ է ինձ առնել, զի ապրեցայց» (Գործք առ. ժզ. 30): Ո՞ւր պիտի որոնել այն խօսքը, որ ընդունակ լինի տկարներին զօրացնել, վաստակեալներին և բռնաւորներին հանգուցանել, յուսահատներին ոգի ներշնչել, սգաւորներին մխիթարել, կենդանիներին և մահկանացուներին ոգևորել այնպէս, ինչպէս Աստծու խօսքը սուրբ գրքի մէջ: Այս բանը պիտի փորձով տեսնել, տեսական նկարագրութիւնն անզօր է իսկութիւնը մեր առաջ դնելու:

Սա սուրբ գրքի վսեմ նպատակն է: Սա նրա օրհնութիւնն է, որ հարիւրաւոր տարիներից առաջ յայտնի է. նոյն օրհնութիւնն այսօր ես ստանում են Աստծուն սիրողները և նրա խօսքին հաւատացող-



ները: Սրա համար էլ սուրբ գրքի վսեմ նշանակութիւնն ամեն ժամանակ յայտնի է եղել. նա է, որ կուռքերի գարշանքն ու պղծութիւնը ոտնահար արաւ. մարդուն զոհ բերելը ոչնչացրաւ. ստրկութիւնը վերացրաւ. կնոջը մարդկային հասարակութեան մէջ իւր վայել դիրքը տուաւ կրկին և ամենուրեք կրթութիւն և բարոյականութիւն տարածեց: Ուր մարդիկ ժամանակի նախապաշարումների մէջ խորասուզուեցին, մարդկային կոչումը մոռացան, սուրբ գիրքը այդպիսիների համար լուսատու աստղ է դարձել մոլորութեան խաւար ճանապարհի վրայ և դէպի ճշմարտութիւն առաջնորդել: Ուր հաւատը և յաւիտեան ճշմարիտ ու գեղեցիկը մարդկային խօսքի փլատակների տակ կորչելու երկիւղ են կրել, սուրբ գիրքը յանցանքի մոլորութիւնը նորից ոտնակոխ է արել և ճշմարտութեան դրօշակը պարզել: Սրա համար էլ ոչ մի երկրաւոր ոյժ չէ կարողացել աստուածային հովանաւորութեան տակ եղող, Աստծու պաշտպանութիւնը վայելող այս գիրքը ոչնչացնել *). դրա համար էլ ամեն ժամանակի մեծ մարդիկը՝ մեծ յարգանքով են վերաբերուել դէպի սուրբ

*) Սուրբ գրքի համառօտ պատմութիւնն այստեղ անհրաժեշտ է յիշել: Երբ Իսրայէլացիք հպատակ էին Փղշտացիներին, Մովաբացւոց և ուրիշ հեթանոս ազգերին, ամենայն ինչ կորցրին (տ. դատաւորաց ե. 8.) բացի սուրբ գրքից (Չորրորդ Թագ. իբ. 8....): Ժողովուրդը գերի գնաց Ասորեստան, Բաբելաստան. կորցրեց իւր հայրենիքը, իւր ազատութիւնը, բայց ոչ սուրբ գիրքը: Մակաբայեցւոց ժամանակ սուրբ գրքի թշնամիների կատաղութիւնը վերին աստիճանի հասաւ—այրում, պատառում էին, ուր որ գտնում էին. (տ. Մակաբ. ա. 59. 60): Քրիստոնէութեան օրօք, երբ սուրբ գիրքը 300 տարի շարունակ Հռովմի զօրաւոր կայսրների իշխանութեան ներքոյ խիստ հալածանքի էր ենթարկուած (Ներոնի կեանքից օրինակներ) և երբ քրիստոնէութեան թշնամիները քամմելի տանջանքներով մարտիրոսների բերնից անկարող եղան սաղմոսների մրմունջը լսել և սիրոյ աւետարանը արմատախիլ անել երկրագնդիս վրայից, սուրբ գրքի թշնամիների բարկութիւնը մի անգամ էլ բորբոքուեց այս գրքի դէմ, որտեղից մարտիրոսները անվեհերութեան ջուր էին ըմպում 'ի մահ դիմելու: Ոչ մի տանջանք չխնայուեց սուրբ գիրք ունեցողներին պատժելու. ոչինչ աշխատանք չխնայուեց ամենածածուկ անկիւններում ևս որոնել և ոչնչացնել—հազարաւոր, հարիւր հազարաւոր սուրբ գրքեր հրոյ ճարակ դարձան: Չնայելով այսքան ճիգերին, հնար չեղաւ այս Գիրք Գրոցը ոչնչացնել: Երուսաղէմի անկումով Իսրայէլի բոլոր փառքը 'ի չիք դարձաւ, նորա սրբութիւնքն այրուեցին, մոխիր դարձան և Տիտոսի յաղթական կամարի զարդերը դարձան, բայց այս գիրքը, որ երկնքից էր պարգևած, մնաց դարձեալ անձեռնմխելի: Սուրբ գրքի վերաբերութեամբ ևս Գամաղիէլի խօսքը կատարուեցաւ.—«Զի եթէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործդ՝ քակտեսցի, ապա թէ յԱստուծոյ է, ոչ կարէք քակտել զդոսա»: (Գործք առաք. ե. 38, 39.:)

գիրքը (զորօրինակ Գեօթէ, Հումբոլդ, Բունզն, Ռուսօ, Վալտէր-Սկոտ....), ուստի ձեզ ես, այլև ամենին, այս գիրքը օրհնութիւն կը պարգևէ, եթէ սրան գործ ածէք ինչպէս պէտք է։

Ինչպէս որ ամենայն իր, նոյն իսկ ամենաընտիրը, 'ի չարը կարելի է գործածել, այսպէս էլ սուրբ գիրքը։ Օրինակի համար—եթէ բժիշկը հիւանդի համար իսկական դեղ է գրում, բայց հիւանդը չէ գործ դնում, 'ի հարկէ այն դեղը աւելորդ է։ Այսպէս էլ սուրբ գիրքը մի տեսակ դեղ է, որն օգնում է միմիայն նոցա, որոնք իրօք գործ են դնում։ Այս պատճառով էլ խիստ հարկաւոր է, որ մենք սուրբ գիրքը գործ դնելու ուղիղ ճանապարհը որոնենք և գտնենք։

Ա. Նախ՝ անհրաժեշտ է, որ սուրբ գիրքը կարդանք։ Այո՛, սուրբ գիրքը կարդանք, որովհետև քանի քանիսը բնագիրը չեն կարդում, այլ բաւականանում են միայն Նրա մ ա ս ի ն, Նրա վ ր ա յ այս կամ այն անձի կարծիքը կարդալ, ուստի և սեպհական համոզմունք չեն ունենում, այլ ուրիշի կարծիքն են կրկնում։ Բաւական չէ կարդալը, այլ՝ նայելով թէ մենք ինչ ձ և ո վ, ինչ ե ղ ա ն ա կ ո վ ենք կարդում։ Փիլիպպոսի՝ Եթովպացուն ասած խօսքերը ձեզ ես վերաբերում է. «Գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուս» (Գործք առ. ը. 30.)։ Պարզ են քեզ այս խօսքերը. «Պատուեա զհայր քո եւ զմայր». «Քրիստոս եթող մեզ օրինակ». «Զի էք դուք տաճար Հոգւոյն սրբոյ»։ (Որքան մութ կէտեր սուրբ գրքում, այնքան էլ մութ կէտեր քո սրտում։) Ոչ ոք չպիտի վստահանայ սուրբ գիրքը հարևանցի, թեթևամտութիւնով կարդալ։ Յիսուս Քրիստոս ասում է. «Քննեցէք զգիրս» (Յովհ. ե. 39.)։ Այնտեղ որոնեցէք ճշմարտութիւնը, ինչպէս որ հանքագործը լերան մէջն է փնտռում ոսկին և արծաթը։ Այն՝ ինչ որ ձեզ ներքին կերպով թեթևացնում է, ձեր սիրտը ազնուացնում է, ուղղում է, հանգստացնում է և երանելի է առնում—ահա՛ այն է Աստծու խօսքը։ Ով փնտռի, կգտնի։ Սուրբ գիրքը Նրա համար մի՛ կարդաք, որ միայն ի մ ա ս տ ո ւ ն մտքեր (օրինակներ) հաւաքէք, իմաստութեան ժողովածուներ կազմէք, այլև կարդացէ՛ք աննախապաշար սրտով, բ ա ր ե պ ա շ տ զ գ ա ց ո ւ մ ո վ։ Սուրբ գրքի այն խօսքը, թէ «Երանի այնոցիկ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» սուրբ գիրք կարդացողներին էլ է վերաբերում։ Կարդացէ՛ք սուրբ գիրքն այնպէս՝ ինչպէս որ բարի զաւակը հօր կտակը կկարդայ։ Այսպէս ուրեմն ա ռ ա ն ց ձ ա ն ձ ր ա ն ա լ ո ւ կարդացէք այդ գիրքը՝ թէ երիտասարդութեան և թէ ծերութեան հասակում. թէ



երջանկութեան և ապերջանկութեան օրերում, թէ ուրախութեան և թէ վշտի վայրկեաններում։ Կարդացէք ամենքդ, Նա ամենքի համար է։

Բ. Ղուկասի աւետարանի մէջ սուրբ կոյս Մարիամի մասին ասած է. «Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր եւ խելամուտ լինէր 'ի սրտի իւրում» (Ղուկ. բ. 19)։ Համեմատել Սաղմ. ճժը. 11. «'Ի սրտի իմում թագուցի զբանս քո»։ Ինչպէս որ մի որդի թանկագին հօր յիշատակը սրբութիւնով պահպանում է, այնպէս էլ դու Աստծու խօսքը քո սրտի մէջ պահի՛ր։ «Երանի այնոցիկ, որք լսեն զբանն Աստուծոյ եւ առնեն». (Ղուկ. ժա. 28)—կշռի՛ր և երկար մտածի՛ր այս խօսքերի խորը նշանակութեան վրայ։ Այո՛, կշռի՛ր և քո սրտի մէջ պահի՛ր Աստծու խօսքը. դպրոցից կեանքը փոխադրի՛ր. երբ դու մի օր հեռանաս այնտեղից, տա՛ր քո խուցը, քո սենեակը և մինչև անգամ մահուան անկողինը։ Սուրբ գրքի մի գեղեցիկ իմաստ չատերին է զգուշացրել յանցանքի վտանգից, իսկ քանի՛ քանիսին փորձութեան վայրկեաններում յոյս է ներշնչել և փրկել։

Գ. Ոչ միայն սրտումդ պահի՛ր, այլ ըստ այնմ էլ գ ո ր ծ ի՛ ր։ Ահա՛ սա է ամենից գլխաւորը։ Երբ մի անգամ օրինականը՝ սուրբ գրքի «սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ...» խօսքերի մասին Քրիստոսին հարցրաւ, պատասխան ստացաւ. «Ուղիղ ետուր զպատասխանի, զայդ արա՛ եւ կեցցես»։ Այս բանը մեզ ամենիս էլ վերաբերում է։ Հերիք չէ, որ մենք կարդանք կամ լսենք. «Երանի՜ խաղաղարաց»-ը. գլխաւորն այն է, որ Նրա համաձայն էլ կեանք վարենք—ամենայն մի վէճ, խռովութիւն հեռացնենք մեզանից։ Հերիք չէ, որ ասենք. «Որովհետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք»։ Գլխաւոր հարցն այն է, որ մենք ևս տկարների հետ նոյն ձևով վարուենք։ Այսպէս էլ ամենայն ինչ։

## 5. ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

### *ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ*

Սուրբ գիրքը բաղկացած է երկու գլխաւոր մասից—Հին և Նոր կտակարաններից։ Կտակ *) նշանակում է կամքի բացատրութիւն։ Օրի-

*) Կտակ բառը, եթէ ճիշտ գործ ածելու լինինք, յարմար է միայն Նոր-Կտակարանին։ Իսկապէս պիտի ասենք—Հին-Ուխտ և Նոր-Կտակարան։ Ի՞նչու։ Եբրայական լեզուն կտակ բառի համար ոչ մի արտայայտութիւն չունի,

նակներ: Սուրբ գրքի մէջ ո՞վ է իր կամքը որոշում: Ո՞ւմնով է որո-
չում: Ե՞րբ է որոշում: Հին ուխտի գրուածքները խորայէլացւոց ազգի
կրօնական զարգացման պտուղներն են, իսկ Նոր կտակարանի
գրուածները՝ քրիստոնէութեան սկզբնաւորութեան և առաջին
շրջանի պտուղներն են: Բաց արէք ձեր սուրբ գրքերը և կարդացէք
Հին-ուխտի առաջին նախադասութիւնը. կարդացէք Նոր-կտակարա-
նի վերջին նախադասութիւնը. Հին-ուխտի վերջին նախադասութիւնը.
Նոր-կտակարանի առաջին նախադասութիւնը: Աչքով չափեցէք Հին-
ուխտի և Նոր-կտակարանի մեծութիւնը: Նախ ծանօթանանք Հին-
ուխտի գրուածքների հետ:

ՀԻՆ-ՈՒԽՏ

Մովսէսի առաջին մատեանն ինչի մասին է
Ի՞նչ գրուածքով է սկսւում Հ-ը: Ի՞նչ է ժբ, խա.
խօսում: Կարդալ բ. 7.: Զ. գլխին ինչպիսի վերնագիր կարելի է տալ: Ի՞նչ է ժբ, խա.
իը. լէ. գլուխների վերնագիրը. ինչպիսի վերնագիր կտաս Մովսէսի I. վերջին.
գլխին: Քանի՞ գլուխ ունի Մովսէսի I. մատեանը: Ամբողջ մատենի գլխաւոր պա-
րունակութիւնն ինչ է: Աբրահամի, Իսահակի..... պատմութիւնն ո՞ւր կարելի է
որոնել: Այս մատեանը մինչև ո՞ւմ մահն է պատմում: Կարդացէք վերջին գլուխը:
Ի՞նչ պատմութիւնով է սկսւում Մովս. II. մատեանը: Ի՞նչ է պատմւում բ
գլխի մէջ. ո՞ր գլխի մէջն է պատմուած Մովսէսի կոչման մասին. ինչ է գրած ի.
գլխում. այս բանը չմոռանաս, լաւ միտդ պահիր: Մովսէսի II. մա-
տեանը քանի գլուխ ունի: Քանի գլուխ ունի Մովսէսի III. IV. մատեանը: Մով-
սէսի IV. մատենի իը. 28 տ..... բառացի չպիտի հասկանալ: Ո՞րն է այդ:
Մովսէսի V. մատեանը կրկնողութիւն է նախկին 4 մատեաններ՝ այն զանազա-
նութեամբ միայն, որ սա համառօտած է (տ. V. մատ. և. գլ.): Մովս. I.-ը խօսում
է նահապետների մասին. II-ը ուխտի մասին, III-ը քահանայութեան, IV-ը
անապատի կեանքը, V-ը Մովսէսի հրաժարման մասին: Մովսէսի հինգ մատեանը
միասին կոչւում է Հնգամատեան—առաջին մատեանը կոչւում է Ծննդոց,
երկրորդը՝ Ելից, երրորդը՝ Ղևտացւոց, չորրորդը՝ Թւոց, հինգերորդը՝
Երկրորդ օրինաց: Ո՞րտեղ է գրած 10 պատուիրանների մասին: Ի՞նչ է
գրած V. մատենի և. գլխի 6 տ.: Կարդացէք Մովսէսի V. մատենի վերջին գլու-
խը: Կրկնել:

Ո՞վ եղաւ խորայէլի առաջնորդը Մովսէսի մահից ետ: Յեսուի մասին ինչ է
խօսում Յեսուայ գիրքը: Յեսուն նուաճում է երկիրը և բաժանում: Կարդացէք Յե-

Ուխտ (I. Մովս. թ. 11. ժե. 18. Եսայի ծթ. 21.): Ուխտ
նա ունի միայն «ուխտ» բառը (I. Մովս. թ. 11. ժե. 18. Եսայի ծթ. 21.): Ուխտ
նշանակում է մի՝ կամ երկու կողմի համաձայնութեամբ որոշած կամք (մի անձի կամքի վերջին որո-
շումն), որով կտակողը որոշում է, թէ իր մահուանից ետը ինչպէս պիտի պահ-
պանուի, կատարուի, ուստի և կտակը կտակողի մահուանից ետը միայն կարող է
գործադրուել (Թ. առ. Եբր. թ. 16. 17-ում էլ այդպէս է որոշած):



սուայ գրքի վերջին գլուխը: Կարդացէք իդ. գլխի 15 տունը: Յեսուայ գրքի ժ. ժբ. ժգ.
գլուխները բառացի պիտի հասկանալ: Յեսուի վերջին խօսքը ո՞րտեղ է գրած:

Յեսուի մահուանից ետը ո՞վ է առաջնորդում խորայէլացւոց: Հետևեալ գիր-
քը դատաւորների մասին է. ինչպէս է կոչւում այդ գիրքը:—Գիրք դատա-
ւորաց: Ի՞նչ դատաւորներ էք ճանաչում. նրանցից ո՞րը գերբնական ոյժ ունէր.
ո՞րն է խորայէլի վերջին դատաւորը: Դատաւորաց գրքի վերջին գլխում ինչ կայ այդ
մասին:

Դատաւորաց գրքից ետը ինչ է գալիս: Ո՞վ էր Հռութը: Կարդացէք ա. գլ.
16, 17.: Այս խօսքերը նա ո՞ւմն է ասում: Կրկնել—Ի՞նչ գրքեր էք ուսել
ցարդ: Ասացէք կարգով: Ի՞նչ է Մովսէսի II. մատ. բովանդակութիւնը, Յեսուայ
գրքի բովանդակութիւնը: Ո՞րտեղ է գրուած տաճարի օծման մասին. ո՞ր մատենի
ո՞ր գլխումն է 10 պատուիրանը:

Հռութից ետը ինչ գիրք է գալիս: Ո՞ւմ մասին է պատմում: Կարդացէք ժ.
ժը. լա. գլուխները: Առաջին թագաւորութեան մէջ ո՞ւմ մասին է պատ-
մւում: Երկրորդ թագաւորութիւնը պատմում է Դաւթի մասին: Ի՞նչ ասացի ես
այժմ: Ժը. գլուխն ինչ պատմութիւն է: Յիշեցէք ձեր ուսած գրքերը, միայն սկսե-
ցէք Բ. Թագ. գրքից և վերջացրէք Մովսէսի I. մատենով: Առաջին և երկրորդ
թագաւորութեան գրքերը կոչւում են նաև Սամուէլի գրքեր: Սրանց հետևում է
Երրորդ թագաւորութեան գիրքը: Ի՞նչ թագաւորի պատմութիւններ ուսանք:
Գ. և գ. գլուխներին ինչ վերնագիր կարելի է դնել: Ո՞ւմ մասին է խօսում իա.
գլ. ո՞ւմ մասին է վերջին գլուխը: Դ. Թագ. գիրքը խօսում է Յուդայի և Իսրայէլի
թագաւորական տանց բաժանման մասին: Ա. գլ. խօսում է, մի մարգարէի մասին.
այդ ո՞րն է: Նրա մասին ինչ գիտես: Ե. գլ. մի ուրիշ մարգարէի մասին է խօսքը.
նրա անունն ինչ էր: Ժը գլ. Եզեկիա մարգարէի մասին ինչ է պատմւում: Վերջին
գլ. ինչ վերնագիր կարելի է տալ: Բաբելոնեան գերութիւնն սկսւում 588. ն. ք.
Ք., գերութիւնը 70 տարի տևեց, ուրեմն ե՞րբ վերջացաւ: Ասորեստանի գերութիւ-
նը ե՞րբ էր: Յուդայի տանը քանի ցեղ է պատկանում: Քանի՞սը Իսրայէլին: Ո՞վ է
Յուդայի տան առաջին և վերջին թագաւորը: Ո՞րն է Իսրայէլի տան առաջին և
վերջին թագաւորը: Յուդայի տունն ունէր 20. իսկ Իսրայէլինը՝ 19: Առաջին տունը
134 տարի աւելի տևեց (Յուդայի տունը 975—588, իսկ Իսրայէլինը 975—772):

Թագաւորաց գրքերից ետը գալիս է Մնացորդաց գրքերը: Կարդացէք
Ա. Մնացորդաց ժա. գլխի վերնագիրը: Այս պատմութիւնը մենք էլի ո՞րտեղ տե-
սանք: Նոյնպէս գլ. իդ. իթ.: Երկրորդ Մնացորդաց ա. գլ. ինչի մասին է: Ի՞նչի
մասին է գլ. իթ. և լգ.: Մնացորդաց գրքերում ինչ բաներ են կրկնւում: Կրկ-
նողութիւն—կարգով թուեցէք մինչև այժմ ուսած գրքերը. թուեցէք նոյնը
հակառակ դասաւորութիւնով: Հռութի գիրքը ո՞ր գրքից է առաջ: Դատաւորաց գրքի
ետը ինչ է գալիս: Ո՞ր գրքի մէջն է Սաւուղի մահը, Յովսէփի պատմութիւնը, Սո-
ղոմոնի տաճարի շինութիւնը, Եղիայի պատմութիւնը, Կայէնի, Աբէլի, 10 պատուի-
րանները.....:

Բաբելոնեան գերութիւնից ետը շատ հրէաներ վերադարձան Քանան—նախ՝
Զօրաբաբէլի, իսկ ետոյ՝ Եզրասի առաջնորդութիւնով: Եզրասը հաւաքեց սուրբ
գրուածները և Սողոմոնի տաճարն ի նորոյ շինեց: Եզրասի երկու գրքերն էլ այդ
մասին են խօսում: Սրա շարունակութիւնը Նեեմիի գիրքն է: Կարդալ Նեեմիի գըր-

քից գ. 16. 21: Մենք էլ այսօր այդպէս պիտի աշխատենք Աստծու Թագաւորու-
թեան, երկնից արքայութեան շինութեան համար, ինչպէս որ 17. տ. կէսն ասում
է—ես սրանով ձեզ ի՞նչ եմ ուզում ասել:

Ո՞րն է հետևեալ գիրքը: Այս գրքի գլխաւոր անձինքն են՝ Նոէմի, Մուրթքէ,
Արտաշէս, Համան (տաղաւարահարաց տօն): Այս գրքի բովանդակութիւնը հաստա-
տում է այն ասածը, թէ «Գուբն զոր փորեաց, ի նմին անկցի»: Այդ ինչպէս պիտի
հասկանալ:

Սրանից ետ գալիս է Յուդիթի գիրքը: Սա բաղկացած է 16 գլխից: Պարու-
նակութիւնն է—հրէաները Բետիղուացի մի այրի կնոջից (Յուդիթ անուանեալ)
գրդուած պատերազմում են և յաղթում են Յողեփեռնէսին: Այս գրքի նպատակն է
ցոյց տալ—երբ Աստծու ընտրեալ ազգը դառնում և ճանաչում է Աստծուն, ազատ-
ւում է նոյն իսկ ամենածանր թշուառութիւնից, իսկ ամբարտաւանները չարաչար
վախճան են ստանում:

Յուդիթի գրքից ետ գալիս է Տովբիթի գիրքը, որ բաղկացած է 14 գլխից:
Այստեղ նկարագրւում է խրայէլի գերութիւնը Ասորեստանում (722 Ն. ք. Ք.):

Սրանից ետ գալիս է Ա. Մ ա կ ա բ ա յ ե ց ւ ո ց գիրքը, որ նկարագրում է
Մատաթիա քահանայապետի հինգ որդւոց պատերազմը ասորական իշխանութեան
դէմ քառասուն տարուայ ընթացքում (175—135 Ն. ք. Ք.): Դանիէլ մարգարէի գլ.
ժա. կատարուած է—կարդալ բ. գլ. 7—14. տ.: Երկրորդ Մակաբայեցւոց գրքի մէջ
պատմւում է նշանաւոր Եղիազար քահանայապետի և Շամունէի եօթն որդւոց մասին:

Մինչև այժմ մեր ուսած բոլոր գրքերը կոչւում են պ ա տ մ ա կ ա ն գ ր ք ե ր:
Ի՞նչու: Հին-ուխտի I պատմական գիրքը ո՞րն է. ո՞րն է վերջինը: Քանի՞ պատմա-
կան գրքեր էք ուսել: Թուեցէք պատմական գրքերը ետ ու առաջ: Եզրասի գրքի
նախորդ գիրքը ո՞րն է: Ո՞րն է Չորրորդ Թագաւորութեան յաջորդ գիրքը: Սաւուղի
պատմութիւնը ո՞ր երկու գրքի մէջն է: Եզրասի գրքում ի՞նչ է գրուած...:

Պատմական գրքերին հետևող առաջին գիրքը Ս ա ղ մ ո ս ն է: Սաղմոսները
կրօնական երգեր են, փառաբանութիւններ Եհովային, Աստծուն, բնութեան արար-
չին և խրայէլի պահապան Աստծուն: Բացի այդ սաղմոսները նաև գոհաբանական,
ապաշխարութեան, զղջման երգեր են: (Գերութիւնից ետ սաղմոսները սինագոգնե-
րի տաղարաններն էին): Սուրբ գրքի մէջ քանի՞ սաղմոս կայ: Ո՞ր սաղմոսն արդէն
գիտէք: Ի՞նչ իմաստներ էք ուսել նրանից: Ո՞րն է առաջին, ո՞րն է վերջին սաղ-
մոսը: Կարդացէք ծ. և ճլգ. սաղմոսները:

Սաղմոսից ետ ի՞նչ գիրք է գալիս:—Ա ռ ա կ ա ց գիրքը: Սողոմոնի առակնե-
րից ո՞րը գիտես անգիր: Կարդալ—ա. 8—10. գ. 16—19. ժբ. 1. ժե. 1. և 18. ժէ.
1. ժթ. 1. իդ. 1.: Ո՞րո՞նք են հետևեալ չորս գրքերը: Կարդացէք սրանց առաջին և
վերջին գլ. սկիզբները:

Յետոյ ի՞նչ գիրք է գալիս: Կարդա՛ Յովբի գրքի ա. գլ. 1. տ.: Յովբի կեան-
քից ի՞նչ կարող ես պատմել: Ո՞վ կարող է Յովբից մի երկու իմաստ ասել: Յովբի
գիրքը խօսում է համբերութեան մասին—այստեղ արդարը վարձատրւում է, իսկ մեղաւո-
րը՝ պատժւում: Իրական կեանքն ըստ մեծի մասին հակառակ է այս երևոյթին,
ուստի և այս խնդրի լուծումը կայանում է այն մ խ ի թ ա ր ո ւ թ ե ա ն մէջ, թէ
բարեպաշտութիւնը յաղթանակում է՝ յաջողութեամբ անցնելով վշտակրութեան
դպրոցը: Այս գիրքը մեզ այն ես ուսուցանում է, որ կեանքի ճանապարհները ան-



քննելի են տկար մարդածնի համար: Սաղմոսից սկսած մինչև Յովբի գիրքը կոչւում
է խրատական: Ինչո՞ւ է այդպէս կոչւում: Օրինակներ: Սուրբ գրքի առաջին հատ-
ուածն ինչպէս է կոչւում. ինչպէս է կոչւում երկրորդը: Տպաւորել վերևինի պէս:

Յաջորդ գրքերը մարգարէների գրքերն են, որոնք և կոչւում են մարգա-
րէական գրքեր: Մեկնել թէ ինչ ասել է մարգարէ: Ո՞րն է առաջին մարգարէն:
Կարդացէք Եսայի մարգարէի ժա. 1. 2. ծգ. ծե. 8. 9.: Քանի գլխից է բաղկացած
Եսայի մարգարէութիւնը (66): Յետոյ ո՞ր մարգարէն է: Կարդա Երեմիա (Թուղթ
Բարուքա և ողբ Երեմիայի) մարգարէի լգ. 14—17: Քանի գլխից է բաղկացած (52):
Սրանից ետ ո՞ր մարգարէն է: Կարդա՛ Եզեկիէլի լէ. 1—10 (թէ ինչպէս ոգին մեռել-
ներին կենդանացնում է (հոգեպէս): Քանի՞ գլխից է բաղկացած (48): Նոյնպէս
Դանիէլ մարգարէն: Որովհետև այս չորս մարգարէները՝ միւսների համեմատու-
թիւնով մեծ գրքեր են գրել, այս պատճառով էլ ասում ենք մ ե ծ մարգարէներ:
Արդեօ՞ք այս մեծ բառը իրանց անձին, թէ գրքերին է վերաբերում: Որո՞նք են մեծ
մարգարէները, ինչու են կոչւում այդպէս: Թուել ետ և առաջ: Ո՞րոնք են միւս
մարգարէները: 1. Ովսեա (ժդ. գլ.), 2. Ամովս (թ.), 3. Միքիա (է), 4. Յովել (գ.), 5.
Աբդիու (ա.), 6. Յովնան (դ.), 7. Նաւում (գ.), 8. Ամբակում (գ), 9. Սոփոնիա (գ), 10.
Անգէաս (բ.), 11. Զաքարիա (ժդ), 12. Մաղաքիա (գ): Այս 12 մարգարէները կոչ-
ւում են փ ո ք ր մարգարէներ: Ուրեմն բոլոր մարգարէները քանի՞ են: Թուեցէք նախ՝
մեծ և ապա՝ փոքր մարգարէներին՝ ետ և առաջ: Եզեկիէլից ետոյ ո՞ր մարգարէն
է: Կարդա Միքիէ մարգարէի ե. 1. Զաքարիա թ. 9. Դանիէլ բ. 44. Մաղաքիա բ.
10. Եսայեա խ. 31.: Յովնան մարգարէի մի գլխի ո՞ր տունն ես հաւանում: Կրկնել
և տպաւորել—պատմական, խրատական և մարգարէական գրքերը մի խօսքով կոչ-
ւում են կանոնական գրքեր: Այդ ի՞նչ է նշանակում (կանոն նշանակում է չափ (հա-
ւատոյ համար) օրէնք, սահման):

## Ն Ո Ր - Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Նոր-կտակարանի գրքերը ըստ իւրանց պարունակութեան բաժանւում են
նոյնպէս հետևեալ մասների—պատմական, խրատական և մարգարէական:

Պատմական բաժնին պատկանում են բացի Գործք առաքելոցից նաև առա-
ջին չորս գրքերը: Սոքա ինչպիսի ընդհանուր անուն են կրում:—Ա ւ ե տ ա ր ա ն—
բարի համբաւ (Փրկչի երևման մասին): Չորս աւետարանիչները պատմում են Յի-
սուսի կեանքը, վարդապետութիւնը և գործերը. նրանց ընդհանուր նպատակն է
յայտնել, որ Յիսուս աշխարհի փրկիչն է: Յիսուսն ինքը ես աւետարանը բ ե ր ա-
ն ա ց ի էր քարոզում և ոչ թէ գրաւոր: Մի անգամ միայն գրեց և այն էլ աւազի
վրայ (Յովհ. ը. 8·):

Առաջին աւետարանը գրել է Մ ա տ թ է ո ս առաքեալը (Ղևի անուանեալ)
սա առաջ Կափառնայում քաղաքում Հռովմայեցւոց մօտ մաքսաւորի պաշտօն էր
վարում: Իբրև Յիսուսի աշակերտ (Մտթ. թ. 9.) նա գրել է, ինչ որ ինքը ական-
ջով լսել և աչքով տեսել է: Նա գրեց իւր աւետարանը 60 տարի Քրիստոսի ծնուն-
դից ետ. Նա աշխատում է ցոյց տալ, որ Քրիստոս հրէից սպասած Մ ե ս ս ի ա ն
էր: Սրա համար ես յաճախ կարիք է զգում կրկնելու. «Զի լցցի գիրն», ուստի
և իր գիրքն սկսում է ծննդաբանութեամբ, որի մէջ աշխատում է ցոյց տալ, որ

Յիսուս Դաւթի ցեղից էր: Ինչու համար Մտթ. ե. գլ. լերան քարոզ է կոչւում: Կարդալ է 1—12. է. 43—48. զ. 9—13.: Չմոռանաք, որ «Հայր մեր»ն այստեղ է. գրած: Կարդալ է. 28—29. ժա. 28—30. իզ. 14—16. 37—49. իէ. 46—50. իը. 16—20: Սուրբ գրքի մէջ որտեղ է գրուած է տաճարի օծման մասին. տասը պատուիրանները, հայր մերը և լերան քարոզը:

Հետևեալ աւետարանը կոչւում է Մարկոս: Նա Յիսուսի աշակերտ չէ եղել, այլ Պետրոսի (I. Թ. Պետր. ե. 13) և ուղեկից Պօղոսի: Առաջ նրա անունը Յովհաննես էր. Մարկոս անունը վերջն ընդունեց (Գործք առք. ժբ. 12): Ինչպէս երևում է, նա իւր աւետարանը գրել է մանաւորապէս հռովմայեցի ընթերցողների համար և հաւանական է, որ նա չորս աւետարաններից ամենահինն է. մի քանի անգամ հակիրճ է արտայայտւում Մատթէոսի նման, բայց տեղ տեղ էլ խիստ ընդարձակ է: Կարդացէք սրա առաջին գլուխը և համեմատեցէք նիւթը Մատթէոսի գրածի հետ: Ի՞նչի մասին է խօսում Մարկոսը է. 32—37 և ը. 22—26: Յիսուսի յարութիւնը ո՞ր գլխի մէջն է: Ի՞նչի մասին է վերջին գլուխը:

Երրորդ աւետարանիչը Ղուկասն է: Շատ հաւանական է, որ սա ի ծնէ հեթանոս էր: Ըստ Թ. առ. Կղս. դ. 14. բժիշկ էր և Պաւղոսի ուղեկիցը: Նա ներկայացնում է Յիսուսին որպէս փրկիչ բոլոր ազգերի (և ոչ որպէս հրէաների Մեսսիա) և հաղորդում է մի քանի նիւթեր, որոնց մասին մի քանի աւետարանիչներ լռում են, զոր օր. Յովհաննէս Մկրտչի և Յիսուսի ծննդեան աւետումն, Յիսուսի տաճարին ընծայելը. 12 տարեկան տաճար գնալը, Պետրոսի ձկնորսութիւնը, Նայինի պատանին, մեղաւոր կինը Սիմոնի տանը: Բացի այդ Թ. 51-ից մինչև ժը. 14 Զակքէոս, աշակերտների վէճը, թէ ո՞վ է մեծ երկնքի արքայութեան մէջ:

Այս երեք աւետարանիչների գրածները հիմնուած են Յիսուսի մահուանից 34 տարի ետ եղած բերանացի աւանդութեանց վերայ. սրանք մեծ մասով, նոյն իսկ շատ տեղ բառացի, համաձայն են իրար: Որովհետև աւետարանիչները կամ անձամբ են աշակերտել Քրիստոսին կամ առաքեալների մօտ ուսել, ուստի և կարող էին ճշմարտութիւնը գրի անցնել: Այս համաձայնութեան համար էլ երեք աւետարանիչները անուանւում են համատեսներ, որովհետև մի տեսակ են տեսել, նկատել. նրանց պատմածների մէջ ներդաշնակութիւն, համաձայնութիւն կայ:

Յովհաննիսի աւետարանը տարբերւում է միւս երեքից: Չորրորդ աւետարանի գրողը իւր նախորդների նման միայն Յիսուսի կեանքի մասին տեղեկութիւններ հաղորդելով չէ բաւականանում, այլ կամ պակասը լրացնում է և կամ եղածն աւելի ևս պարզում: Ամենից առաջ Յովհաննէսն աշխատում է Փրկչի Աստծու որդի լինելը աւետարանել, ուստի և միւսների նման արտաքինը չէ՝ տալիս, այլ աշխատում է, որքան կարելի է, Յիսուսի կեանքի ներքինը տալ, այս պատճառով էլ նա չէ սկսում Յիսուսի մարդկային, այլ աստուածային ծագումով: Կարդալ Յովհ. ա. 1. (բան=լօգոս, յայտնութիւն), Յովհ. դ. 24 զ. 35. ը. 12. ժա. 25. 26. ժէ: Ուրեմն Յովհաննէսի և միւս աւետարանիչների մէջ էական զանազանութիւններ կան: Ինչպէս որ Սոկրատէս իմաստասէրի երկու աշակերտները (Քսենեֆոն և Պղատոն) իրանց ուսուցչին տարբեր ձևով էին ըմբռնել (մինը իդէալական, իսկ միւսը՝ իրական), այսպէս էլ աւետարանիչները՝ Փրկչին: Այս պատճառով չորս աւետարանիչները միասին առած՝ Փրկչի մասին լրիւ տեղեկութիւն կարող ենք ստանալ:



Չորս աւետարանիչներից ետ գալիս է Գործք առաքելոցը: Ո՞վ է գրել: Ի՞նչ է նրա պարունակութիւնը: (Ասել համառօտակի): Գլ. ա. 1.-ի զուգահեռականը գտիր. այս երկու գրուածքներից ո՞րն է առաջ և ո՞րը ետոյ գրուել: Կարդա Գամաղիէլի խօսքը Գործ. առք. ե. 28—42. յետոյ է. 57—59. ը. 1—3. Թ. 1—20: Սրանով վերջանում է Նոր-կտակարանի պատմական գրքերը: Կրկնել կարգով....:

Պատմական գրքերից ետ գալիս են խրատական գրքերը: Դոքա 22 հատ առաքելական թղթեր են: Գործք առաքելոցից ետ Յակովբու 5 գլխից բաղկացած գիրքն է: Ո՞ւմ համար է գրած այս թուղթը, կարդա ա. 1.: Տպաւորել ա. 12. 17. 20. 22 և 27. գ. 3—16: Հետևեալ երկու թղթերն ո՞ւմն են: Պետրոս առաքեալի մասին ի՞նչ գիտես: Թէ Պետրոսն այս նամակը ո՞ւմն է ուղղել, գրած է I. Թ. Պետր. ա. 1. կարդեալ: Թէ ո՞րտեղից է գրել—կարդալ I. Թ. Պետր. ե. 13: Ի՞նչ յորդոր է կարդում I. Թ. Պտր. բ. 17. դ. 8.: Ի՞նչ առթիւ էք դուք կարդացել II. Թ. Պտր. ա. 19: Սրան հետևում են Յովհաննու երեք թղթերը: Կարդալ I. Թ. Յովհ. բ. 4. 15. գ. 4. 15. ե. 3: Միևնոյն ցանկութիւնը ես ևս ունիմ ձեզ համար, ինչ որ Յովհ. իւր երրորդ թղթի 4 տան մէջ բարեմաղթում է: Սրանից ետոյ Յուդայի թուղթն է: Յակովբոսի, Պետրոսի, Յովհաննու և Յուդայի գրած եօթն թղթերը կոչւում են կաթուղիկեաց թղթեր, այսինքն ընդհանուր թղթեր, որովհետև սրանք որոշ եկեղեցիների կամ որոշ անձանց չէ ուղղած, այլ ընդհանրապէս բոլոր քրիստոնեաներին: Կրկնել: Առաքելոց թղթերի մեծ մասը (14) Պօղոսի գրածներն են. նրանց մասին ի՞նչ կարող ես պատմել: Քանի անգամ առաքելական քարոզութեանց գնաց (երեք): Թուղթ առ Հռովմայեցիս գրել է Հռովմ քաղաքի բնակիչների համար: Այս թղթի բնաբանը գտանւում է ա. 16. ո՞րն է այդ: Կարդալ ը. 14. ժբ. 12. 21: Թէ Պօղոսն այս թուղթը ո՞ւմն է գրել տուած, գտնւում է ժզ. 24., ո՞րն է: Դրանից ետ ի՞նչ երկու թուղթ է գալիս: Կորնթոս քաղաքը գտանւում է համանուն ցամաքի պարանոցի վրայ: Ցո՞յց տուէք: Կարդալ— I. Թ. առ. Կրնթ. ժգ., յետոյ ժա. 23—28: Լաւ դիտեցէք այն տողերը, ուր յիշւում է հաղորդութեան խորհրդի սահմանումն: Ո՞րտեղ է գրած Հայր մերը, տասը պատուիրանները, եկեղեցւոյ օծումն....: II. Թ. առ. Կրնթ. ժգ. 13: Հետևեալ չորս թղթերն ո՞ւմն են ուղղուած: (Յաջորդաբար յիշել հետևեալ ձայնաւորները ա. ե. ի. օ., այսինքն Թ. ա. Գաղատացիս, Եփեսացիս, Փիլիպպեցիս, Կողոսացիս): Կարդալ—Թ. առ. Գաղ. զ. 1—9 առ Եփեսացիս զ, 1—13. առ Փիլիպպեցիս դ. 4—8, առ Կողոսացիս գ. 12—17: Թուեցէք Նոր-կտակարանի խրատական գրքերը, որոնք մինչև այստեղ ուսաք—նախ՝ առաջ և ապա՝ ետ: Յետոյ ի՞նչ երկու թուղթ է գալիս: Կարդալ I. Թ. առ. Թեսաղոնիկեցիս ե. 15—23: Յետոյ գալիս են Պօղոսի այն գրքերը, որոնք մի անձի են ուղղած: Նախ՝ առ Եբրայեցիս: Ո՞վքեր են եբրայեցիք. ինչու են այդպէս անուանւում (նախ եբրայեցի ապա իսրայէլացի, իսկ վերջը հրէա): Ի՞նչ է ասում այս թղթի հեղինակը (անյայտ) ժա. 1.-ում հաւատի մասին. ի՞նչ յորդոր է կարդում ժգ. 17. առ Տիմոթէոս I. (Գործք առք. ժզ. 1): Ըստ I. Տիմոթէոսի ա. 1—3 Պօղոսն ի՞նչ յանձնարարութիւն արաւ: Տիմոթէոսի հաւու անունն ի՞նչ է: Կարդալ II. Տմթ. ա. 5: Տիմոթէոսն էլ Տիտոսի նման Պօղոսի ուղեկիցն էր, Պօղոսը սրան ի՞նչ խորհուրդ է տալիս Տիտոսի բ. 1—8: Պօղոսի վերջին գրուածքն է թուղթ առ Փիլեմոն,

որ Կողոսեայի նշանաւոր մարդկանցից մէկն էր։ Պօղոսն այս թուղթը գրել է Փիլեմոնի արձակած Օնեսիմոս ծառայի (ստրուկ) ձեռով, քրիստոնեայ էր դարձել։ Կարդալ տուն 18., թէ Պօղոսն ինչպիսի անշահասէր անձն է։ Թուեցէք Պօղոսի թղթերը—ա, ժողովին՝ ժողովրդեան=եկեղեցեաց գրած և բ, մասնաւոր անձանց։

Նոր-կտակարանի միակ մարգարէական գիրքը Յովհաննու յայտնութիւնն է։ Այնտեղ աւետարանում է, թէ ինչպէս Քրիստոսի թագաւորութիւնը պիտի տարածուի և թէ ինչպէս քրիստոնէութիւնը պիտի յաղթէ հրէութեան (հին Երուսաղէմ) և հեթանոսութեան (Հռովմ—Ներոն)։

Գերութեան դարձից ետ հրէաներն սկսան Հին-ուխտի սուրբ գրքերը հաւաքել, ժողովել։ Նոր-կտակարանի գրքերի ժողովելն սկսուեց երկրորդ դարից և վերջացաւ չորրորդ դարում։ Գլխների, տների բաժանումները, ինչպէս և կէտադրութիւնը... վերջին ժամանակների գործ է։

Գլխաւոր կրկնողութիւն և տանու աշխատանքներ։ Թուել Հին-ուխտի և Նոր-կտակարանի գրքերը, թղթերը. չորս աւետարանիչների վերջին գլուխներում գտէք Յիսուսի խաչի վրայից ասած խօսքերը։ Յիսուս Ղուկ. ժ. գլ. ասում է Մարթային. «Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է»։ Այդ ո՞ր տունն է։ Սամուէլի, Սաւուղի.... մահուան մասին ո՞րտեղ է գրած։ Ո՞րտեղ է Հայր մերը........։

## 6. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

*(Արքայութիւն Աստուծոյ)*

Մեր վերջին դիտողութիւններն ապացուցեցին, որ սուրբ գիրքը—աստուածային յայտնութեան այս յիշատակարանը, կազմուած է զանազանատեսակ գրուածներից։ Եւ այլապէս չէր էլ կարող լինել քանի որ նա մի հաւաքածու է, զանազան գրքերից կազմուած, զանազան հեղինակների զանազան ժամանակներում, զանազան հանգամանքներում, զանազան լեզուներով և զանազան ոճերով գրուած։ Այս ամենն էլ կրօնի զանազան կողմերն են ցոյց տալիս։ Ուստի և հին-ուխտի գրքերը կրօնական զարգացման տարբեր աստիճաններն են ցոյց տալիս, քան թէ Նոր-կտակարանինը—այդ պատճառով էլ երկուսի մէջ զանազանութիւն կայ՝ թէ լրման, թէ մաքի պարզութեան և թէ յստակութեան վերաբերութեամբ։ Հին-ուխտը կոկոնի է նմանում,- որի մէջ ճշմարտութիւնը թաքուցած է, իսկ Նոր-կտակարանը նման է ծաղկի, որ կոկոնից ծագելով՝ կատարեալ գեղեցկութեան աստիճանին է հասած, զարգացած է։ Ինչքան որ կոկոնը ծաղկին հաւասար կարելի է համարել, նոյնքան էլ հին-ուխտը Նորի վերաբերութեամբ։ Երկիւղի ոգին Աստծու առաջ, ուր «Մովսէս հաւատարիմ է տան նորա՝ իբրեւ զծառայ» (Թ. առ. Եբր. գ. 5.) այլ է, քան թէ որդի Աստծու կոչուած ոգին, որ ստիպում է ներքին



աշխարհին՝ սրտին կոչելու. «Աբբա, հայր» (Թ. առ. Հռմ. ը. 15.)։ Եղիայի խօսքերից այլ ըմբռնողութիւն կարելի է կազմել՝ քան թէ Դաւթի, Աբրահամի և Երեմիայի։ Ինչպէս որ հին-ուխտի մէջ բազմատեսակութիւն կայ, այսպէս էլ Նորի մէջ։ Մատթէոսն այլ հայեցակէտ ունի՝ քան թէ Յովհաննէսը։ Դարձեալ՝ Պօղոսը քրիստոնէութեանն այլ աչքով է նայում՝ քան թէ Յակովբոսը։ Նոյն իսկ Պօղոսի գրուածքներում միշտ հոգւոյ նոյն վեհութիւնը չի սաւառնում։ Որքան մարդոց կերպարանքները զանազան են, նոյնքան էլ նրանց ըմբռնողութեանց ձեն ու եղանակը։ Ինչպէս որ արևի լոյսը զանազան գունանի ապակիների մէջ զանազան ձեւով է բեկբեկւում, այսպէս էլ Աստծու ոգին չնչին մարդոց մէջ չնչին տեսակ է պատկերանում։ Բայց չնայելով այս զանազանակերպութեանը, այնուամենայնիւ սուրբ գրքի մէջ երեւում է մի ներքին կապ, ներդաշնակութիւն։ Շնորհների տեսակները զանազան են, բայց ոգին նոյնն է (I. Թ. առ. Կրնթ. ժբ. 4. ‹Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ՝ Հոգի նոյն է›)։ Միութեան մի մեծ շաղկապ կապում է այս կենդանի բազմատեսակութիւնը։ Ոչ թէ միայն ամենուրեք նոյն գիտակցութիւնն է Աստծու մասին, նոյն բարոյական օրէնքը, նոյն հաւատը դէպի մարդու աստուածային կոչումն, այլև, որպէս լրումն կրօնի, ամբողջ սուրբ գրքի կենդանի միջնակէտը Քրիստոս ինքն է։ Նրան են մատնացոյց անում բոլոր գրուածքները. նրանից է ծագում լոյսը և յետ ճառագայթում, այնպէս որ կարելի է ասել՝ Նոր-կտակարանը հնի մէջ ծածկուած-թաքուցած է, իսկ հինը նորով մեկնուած, պարզուած է։ Աստուած ոգին չափով, կշռով չէ տուել (Յովհ. գ. 34. ‹Զի ոչ եթէ չափով տայ Աստուած զհոգին›), այլ՝ ամբողջապէս, կատարեալ լրմամբ։ Նրա հանդէպ մնացած բաները ոչ թէ լոյս են, այլ լուսից փոխ առած են միայն ցոյց տալիս։

Ինչպէս որ Յիսուս ամբողջ սուրբ գրքի կենդանի միջնակէտն է, այսպէս Նրա կեանքը և վարդապետութիւնը եւս մի և եթ միջնակէտ ունին, ուր ամեն ինչ միացած է, և որ ամենին էլ ճշմարիտ լոյս է բաշխում։ Այս միջնակէտը, ուրիշ խօսքով ասենք, սուրբ Գրքի այս հիմնական գաղափարը՝ Աստծու թագաւորութիւնն է (արքայութիւն Աստուծոյ)։ Ամենայն մի թագաւորութիւն պիտի ունենայ 1, մի վեհապետ (իշխան, թագաւոր, կայսր) ՙր իշխանութեան գլուխն անցած կառավարում է) 2, հպատակ-

ներ (քաղաքացիք), որոնք կատարում են վեհապետի արձակած օրէնքները։ Այս երկու պայմանները ևս պիտի Աստծու Թագաւորութեան մէջ կատարուեն։ Այդ Թագաւորութեան տէրն Աստուած ինքն է։ Նրա Թագաւորութեանը (որ ոչ թէ երկրաւոր և անցողական է, այլ երկնային և յաւիտենական է) չեն պատկանում միայն մի որևէ երկրի քաղաքացիքը, այլ՝ նա ամենի համար է, ամբողջ մարդկութեան համար է—այս Թագաւորութիւնը կառավարւում է Աստծու ոգով և սիրոյ օրէնքներով։ Այս Թագաւորութիւնը ամենուրեք է, ուր մարդիկ Աստծու կամքի համաձայն են ղեկավարւում. այս Թագաւորութիւնն այնտեղ է, ուր մեղք, յանցանք չկայ, ուր Աստուած է մարդոց տէրը և ոչ թէ մեղքը։ Ուր այս վերջին տեսակն է, այնտեղ ոչ թէ միայն մարդիկ Աստծու Թագաւորութեան՝ արքայութեան մէջն են, այլ՝ Աստուած էլ մարդու մէջն է։

Աստծու արքայութեան գաղափարը երևում է դեռ ևս հին Իսրայէլի կրօնի մէջ։ Աստուած պէտք է Նրա Թագաւորը լինի. նրանք պիտի Նրա ժողովուրդը լինին (Երմ. ժա. 4. Եսայի լգ. 22.) Նրա հովանաւորութեան, Նրա իշխանութեան տակ պէտք է ապրեն, պատերազմեն և յաղթեն։ Դեռ ևս Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ ուխտ արաւ Աստուած (I. Մովս. ժե. 18 ժէ. 1—5)։ Մովսէսի ձեռով Նա օրէնք տուաւ (II. Մովս. ժթ. 5. 6. լդ. 10)։ Դաւթի օրօք Աստուած հիմնեց իւր իշխանութիւնը (II. Թագ. իգ. 1—5.) և այս իշխանութեան ամբողջացումն, կատարելութիւնը, լրումն են յայտնում (Եսայի խգ. 10—21. ծթ. 20. 21. Երեմիա ժա. 6. 7. լգ. 14—17.)։ Ինչ որ հրէութեան օրօք նշանակ իմաստութեան, մարգարէութեան էր, նոյնը քրիստոնէութեան միջնորդութեամբ դարձաւ իրականութիւն, ճշմարտութիւն։ Աստծու Թագաւորութիւնը չի սահմանափակւում հրէական ազգով, Երուսաղէմի տաճարով և Դաւթի գահով, այլ սա հոգու և սիրոյ Թագաւորութիւն է, ուր հրաւիրուած են ամբողջ մարդկութիւնը իւր բազմազան լեզուներով։ Սա արտաքին իշխանութիւն չէ՝ հիմնուած օրէնքների, կանոնների և ծիսակատարութեանց վրայ, այլ՝ ներքին է. Աստծու սէրն է, որ տիրապետում է մարդկանց սրտերը։ Այս Թագաւորութիւնը սկիզբն է առնում այստեղ՝ մարդկանց սրտերի մէջ, մաքրւում, սուրբ է դարձնում նրանց, իսկ հանդերձեալում կատարեալ է դառնում և երջանկացնում մարդկանց։

Աստծու արքայութիւնը Յիսուս-Քրիստոսի աւետարանի սաղմն



է։ Սիրոյ այս Թագաւորութեան հիմնարկութիւնը և Աստծու հետ ապրելը Յովհաննէս Մկրտիչն արդէն հետևեալ խօսքերովն է յայտնում. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։ Այս արքայութեան գաղափարը Փրկչի առաջին (Մրկ. ա. 14) և վերջին (Յովհ. ժը. 36.) մտածմունքն էր։ Յիսուսի վարդապետութիւնը, կեանքը և մահը միմիայն մի նպատակ ունէր—երկրիս վրայ հիմնել Աստծու արքայութիւնը։ Դրա համար էլ Աստծու արքայութիւնը մեր կրօնի ուսուցման գլխաւոր գաղափարը կլինի Ըստ այսմ կանցնենք.

1. Թէ ո՞վ է արքայութեան տէրը (Աստուած).
2. Թէ ո՞վ է արքայութեան քաղաքացին (մարդիկ).
3. Թէ ո՞վ է արքայութեան հիմնադիրը (Քրիստոս).
4. Արքայութեան ժամանակաւոր իրականացումն (քրիստոնէական եկեղեցի) և նրա լրումն հանդերձեալում։

# ԱՌԱՋԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏՈՒԱԾ

## ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՏԷՐԸ (ԱՍՏՈՒԱԾ)

Աստծու արքայութեան մէջ իշխում է, ինչպէս որ մենք վերը տեսանք, ոչ թէ մի որևէ մահկանացու վեհապետ (իշխան, Թագաւոր, կայսր), այլ՝ ինքը յաւիտենական Աստուածը։ Նա արքայութեան տէրն է։ Որպիսզի այս Տէր-տէրանց-ին լաւ ճանաչենք, պիտի հաւատանք 1. որ Նա կայ, 2. թէ Նա ինչ է, 3. թէ Նա ինչպէս է, 4. թէ Նա ինչ է անում։ Ուստի և մենք կանցնենք նախ՝ Աստծու գոյութիւնը, յետոյ՝ Նրա էութիւն, յատկութիւնները, իսկ վերջը՝ Նրա գործերը։

### Ա. ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստծու գոյութիւնը Թուաբանական ճշտութիւնով չի կարելի ապացուցանել։ Ով Աստծուն սրտի մէջն ունի, այնպիսին կարիք չունի ապացոյցների, իսկ ում սրտումն Աստուած չկայ, այդպիսիների համար ամենասրամիտ ապացոյցն էլ աւելորդ է։ Երբ, տարաբաղտաբար, մեր ժամանակը իրան համար խնդիր է չինել միամիտներին չփոթելու և հաւատոյ կայծ ունեցող սրտերը կասկածանաց մէջ մաչելու, անհրաժեշտ կարևորութիւն կայ՝ աւետարանի խոստովանող-

ներին հոգեկան զէնքերով սպառազինելու ընդդէմ այդ կասկածանք-
ների: Այս սկզբունքից դրդած՝ աշխատենք Աստծու գոյութեան խըն-
դիրը լուսաբանելու համար մի քանի խօսք ասել:

Աստծու գոյութիւնն ապացուցանող իրողութիւնները պէտք
որոնել Նրա ստեղծածների, մարդկային սրտի, հոգու, պատմութեան
և աշխարհիս բարոյական կազմակերպութեան մէջ: Երբ մի անգամ
անապատի արաբին հարցրել են, թէ ի՞նչ ապացոյց ունի Աստծու
գոյութեան մասին, պատասխանել է—իմանալու համար թէ ուղտի
վրայ գնացողը կենդանի է, թէ մարդ, ես հետախուզում եմ Նրա
հետքերը: Այսպէս էլ մենք կհետախուզենք Աստծու գոյութեան հետ-
քերը, որոց վրայ մատնանիշ են լինում սուրբ գիրքը և բնութիւնը:

Ա. Թ. ա. Եբր. գ. 4. այսպէս է գրուած. «Զի ամենայն տուն
կազմի յումեքէ կազմի» (իւրաքանչիւր տուն մէկի շինուած է): Այս
տողի ճշմարտութիւնը իւրաքանչիւր մանկան էլ պարզ է, որովհետև
չի կարելի երևակայել, որ մի տուն առանց որմնադրի, հիւսնի, պա-
տի... ինքն իրան կամ դիպուածով շինուած լինի: Այսպէս ես անըմ-
բռնելի կլինէր, եթէ մինը փորձէր ապացուցանելու թէ անհուն տիե-
զերքի շինուածը ոչ մի հեղինակ, ոչ մի արարիչ չէ ունեցել, այլ
իրենից կամ դիպուածով է առաջ եկել: Երբ ձմեռ ժամանակ քո
սենեակը տաք է, դու իսկոյն հետևցնում ես, որ հնոցում կրակ պի-
տի լինի—հնոցի կրակը պատճառ (հեղինակ), իսկ ջերմութիւնը՝ հե-
տևանք ես համարում (յիշել քանի մի օրինակներ): Այսպէս էլ ամե-
նուրեք է—ուր հետևանք կայ, կայ և պատճառ: Աշխարհիս գոյու-
թիւնը ես ենթակայ է այս օրէնքին, նա բացառութիւն չէ կարող
կազմել: Նայի՛ր վայրի շուշանին, կանաչ արտերին, ծաղկած ծառե-
րին, հովտի ծաղիկներին.... սոքա բոլորն էլ հետևանքներ են, որոն-
ցից իւրաքանչիւրը մի մի պատճառ ունի: Այս իրերը մարդիկ չեն
շինել. ծաղիկներին մարդս արհեստական գոյն չէ տուել. վարու-
ցանքին՝ արև և անձրև—հատիկի մէջ մարդս չէ դրել նրան յատուկ
կենսական զօրութիւնը: Կան մի տեսակ մարդիկ, որոնք ասում են,
թէ ամենայն ինչ երկիրն է արտադրում, իսկ երկինքը տալիս է արև
և անձրև: Բայց երկիրն ո՞վ է պատրաստել. ո՞վ է նրա մէջ զօրութիւն
դրել. ո՞վ է ստեղծել երկինքն ու արևը: Ինչ աչքով էլ որ հարցին
նայելու լինիս, ինչպէս էլ որ անցնես մի սերնդից դէպի միւսը, վերջ
ի վերջոյ կհասնես այն սահմանին, որից դէնն անցնել այլ ես չես
կարող—դու ստիպուած ես խոստովանելու, որ ո՛չ քո մ է ջ և ո՛չ էլ



քեզնից դ ու ր ս գտնուող աշխարհի մէջն է իրերի վերջնական հի-
մունքը: Ուստի քո մտածողութիւնը բռնադատում է քեզ մի վերջ-
նական պատճառ ընդունելու, որից ծագում, սկիզբն են առնում բո-
լոր ներգործութիւնները՝ հետևանքները—դա Աստուածն է: Իւրա-
քանչիւր գարնան ծաղիկ, իւրաքանչիւր ամրան հասկ, աշնան ամեն
մի պտուղ, ձմրան իւրաքանչիւր ձնահատիկ, արևի իւրաքանչիւր ճա-
ռագայթ... յիշել են տալիս մեզ Աստծուն: Հէնց դրա համար էլ
ասում է սուրբ գիրքը. «Զի ամենայն տուն կազմի յումեքէ կազմի»:
Աստծու գոյութիւնը ապացուցանում է նախ և առաջ աշխարհի գոյ-
ութիւնը, որովհետև առանց պատճառի հետևանք չկայ: Թ. ա. Հռմ.
ա. 20. «Զի աներևոյթք նորա 'ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս
իմացեալ տեսանին....»:

Բ. Աշխարհիս մէջ գտնուող կարգ ու կանոնները ակամայ
յիշեցնում են մեզ Նրա (աշխարհի) գոյութիւնը: Երբ մենք մի տուն
ենք մտնում և տեսնում այնտեղի սարքն ու կարգը, տնտեսութիւնը,
իսկոյն ենթադրում ենք, որ այնտեղ մինը բնակւում է և սիրում է
կարգ ու կանոն ասածդ: Բայց ի՞նչ համեմատութիւն մարդկային տըն-
տեսութեան և բնութեան տնտեսութեան մէջ: Այստեղ իւրաքանչիւր
օր 1,000 միլիոնից աւելի ժողովուրդ կերակուր է ստանում. այս-
տեղ են՝ ստանում իրանց սնունդը 200,000 տեսակ կենդանիներ.
այստեղ են գտնում ձկներն իրանց կերակուրը, թռչուններն իրանց
հատիկն ու որթը—այստեղ ամենի համար ամեն ինչ հոգացուած է:
Զննելով այս լիութեանն ու առատութեանը, այնուամենայնիւ ոչ
մի տեղ ոչինչ չէ կորչում, որովհետև ինչ որ մեծերի համար
աւելորդ է կարծւում, նոյնը փոքրերի համար անհրաժեշտ է. այն՝
ինչ որ մինը դէն է ձգում, միւսը յօժարութեամբ ընդունում է: Եւ
մի՞թէ այսպիսի կարգ ու կանոնը պէտք է ընդունենք առանց մի
բարձրագոյն կառավարչի, որ ամեն ինչ կարգաւորում է:—Անկարե-
լի է: Այս կարգ ու կանոնն ինչպէս մեծագունի, նոյնպէս և փոքրա-
գունի մէջն է: Փոքրագունի՛: Փնտրի՛ր անուշաբոյր մանուշակներ՝
քանի հատ էլ կամենաս, բոլորն էլ հաւասար թիւ փոշամաններ և
համաձև տերևներ ունին: Իւրաքանչիւր ծաղիկ իւրան որոշ գոյնն ու-
նի. ամեն մի բզէզ որոշ տեղում միայն ձու է դնում. ամեն մի թռչուն
որոշեալ բարձրութեան վրայ է շինում իւր բոյնը (տարինոս). ամեն մի
թռչուն որոշ ժամանակում է ձու դնում, գալիս և կրկին չուում: Որոշ
ժամանակում կենդանիները ձմրան քուն են մտնում և մի որոշ աստի-

ճանի է իջնում դրանց արեան տաքութիւնը (չղջիկինը երկու աստիճան պակասում է)։ Որոշ ժամանակամիջոցում կանաչում է վար ու ցանքսը. հասնում է հունձը—ամենուրեք աննման կարգ ու կանոն։ Միթէ հնարաւոր է այսպիսի կարգ ու կանոն երևակայել առանց մի կարգադրողի։ Բայց նայեցէք *մեծերի* մէջ տիրապետող կարգ ու կանոնին։ Երբ դու ուշադրութեամբ զննում ես ժամացոյցի կազմուածքը, յիմարի տեղ կդնես այն անձին, որ կամենար քեզ ապացուցանել, թէ անիւներն իրանք իրանց են գոյացել և իրանք իրանց են այդպէս ճարտար հագնուել միմեանց մէջ և կամ թէ ի յաւիտենից հետէ այդպէս են եղել։ Իսկ որ դու մի ժամացոյց ես տեսնում, իսկոյն ժամագործ ես ենթադրում, ուրեմն գործից գործավար, յօրինուածից յօրինող և կարգ ու կանոնից կարգադրիչ։ Բայց ինչ բան է մարդկային ձեռագործ ժամացոյցը համեմատելով տիեզերքի ժամացոյցի հետ, որի վարպետը յաւիտենական ստեղծագործողն է։ Ճիշտ է բանում ժամացոյցը, բայց աւելի ճիշտ են բանում աստղերն իրանց ճանապարհով։ Ոչ մի վայրկեան՝ ոչ վաղ և ոչ ուշ են գալիս։ Աստղաբաշխները կարող են ամենաճիշտ կերպով հաշուել մեզնից անթիւ դարեր առաջ պատահած լուսնի և արևի խաւարումները։ Մոլորակները, որոնք աներևակայելի արագութեամբ թռչում, պտտում են իրանց ծրով, ոչ մի տեղ չեն հանդիպում իրար, ոչ մի տեղ կանգ չեն առնում։ Ոչ մի անգամ չի պատահում, որ գարուն չգայ, արևը ոչ մի անգամ չի մոռանում իւր ծագելը և մայր մտնելը։ Ոչ մի տեղ աննախադէպ խաօս չէ, այլ ամենուրեք կարգ ու կանոն և ներդաշնակութիւն։ Մտածիր ամեն բանի վրայ, ինչ տեսակ էլ կամիս և հարց առաջարկիր քեզ, թէ հնարաւո՞ր է արդեօք մի այսպիսի կարգաւորութիւն երևակայել առանց կարգադրողի. արդեօ՞ք տեսանելի աշխարհը քեզ չի առաջնորդի դէպի անտեսանելին, դէպի ամենայն կարգաւորութեան կարգադրիչը, որ երկինքն ու երկիրը նախապէս մտածած ծրագրով է ստեղծել։ Գոյութեան ապացոյցներից մինն էլ (երկրորդ) տիեզերքի մէջ եղած կարգ ու կանոնը և ներդաշնակութիւնն է, որովհետև *չկայ կարգաւորութիւն առանց կարգադրչի* (Սաղմոս ժը. 1—7. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն....»։ ՃԴ. 24. «Որպէսզի մեծ են գործք քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք»։)

**Գ.** Մի երրորդ ապացոյց ես։—Խորիմաստ մարդկանցից մինը



հետևեալ ուշադրութեան արժանի խօսքերն է ասել—երբ մթանը խաղաղ գիշերուայ մէջ՝ վճիտ երկնակամարի վրայ աստղերը վեր և վայր են ցոլանում, գոյութիւն ասածդ երկու մասնի բաժանիր և մի մասը՝ երկրայինին յատկացնելով, կատարելապէս գիշերուան խաղաղութեան մէջ յամրացած երևակայիր, իսկ միւս մասը իւր բոլոր վսեմութիւնով, չքեղութեամբ և փառահեղութեամբ բարձրացած՝ քուն մտած երկիրը լուսաւորած ընդունիր։ Երբ մարդս մտածում է այս անթիւ աստղերի բազմութեան վրայ, սոսկում է, թէ ինչպէս կանոնաւոր կերպով այդ անհամար լուսատուները տիեզերքի մէջ լողում է—մարդս ընկճւում է այս կանոնաւորութեան և մեծութեան առաջ։ Սակայն կանոնաւորութիւնը և ներդաշնակութիւնը, որոց մէջ տեղի է ունենում այդ բոլոր շարժողութիւնները, մխիթարական նշան են մի բարձրագոյն զօրութեան, մի հոգեկան իշխանութեան, որ ոչ դադարում և ոչ մոռանում է խնամելու։ Դուք մի վարկեան հանգստանում էք հոգեպէս։ Այս հանգստութիւնը կայանում է նրա մէջ, որ երկնից աստղերը, ինչպէս երկրի կարգ ու կանոնները, որոշ օրէնքի պէտք է հետևեն։ Երկնից կամարը որոշ ծրի մէջ է պտտում բևեռային աստղի շուրջը, որոշ օրէնքով են շրջում մոլորակները արևի շուրջը, նոյնպիսի օրէնքով երկիրն է ընթանում իւր ուղիով։ Նոյն օրէնքը, ինչ որ վերևումն է, այստեղ երկրիս վրայ ես գոյութիւն ունի։ Որոշ օրէնքով է, որ մագնիսի սլաքը միշտ դէպի հիւսիս է հակւում. կայծակը թափ անցնում է օդի միջով. խնձորը գետնի վրայ է ընկնում։ Որոշ օրէնքի են ենթակայ կեանքն ու մահը, այլ և մարդիկ։ Քո սիրտն էլ կրծքիդ մէջ որոշ օրէնքների է հետևում։ Ինչպէս որ այս կանոնաւորութիւնը առանց կանոնի չես կարող ընդունել, այսպէս էլ կանոն օրէնք չես կարող երևակայել առանց օրէնստուի։ Մա՛րդ չէ այս օրէնստուն, նա պէտք է մարդուց շատ և շատ մեծ հեղինակ լինի, որին ամեն ինչ հնազանդում է—դա Աստուածն է։ Աստծու գոյութեանը վկայ են տիեզերքի մէջ եղած օրէնքները։ *Չկայ օրէնք առանց օրէնստուի*։

Հարցը մի ուրիշ կողմն ես ունի։ Այս օրէնքը ոչ թէ քո *վերևումն* է, ոչ թէ քեզնից դուրս, *բնութեան* մէջ, այլև քո մէջ, քո *հոգու* մէջ, քո *ներքինում* ես իշխում է—սա բարոյական օրէնքն է, սա քո *խիղճն* է։ Ինչպէս որ եղնիկը իւր թշնամուն իսկոյն ճանաչում է, թէև վերջինս նրան ոչ մի վնաս չէ պատճառել, այսպէս էլ մարդս ներքին ձայնի զօրութեամբ գիտէ, թէ ինչն է բա-

րի և ինչն է չար: Ամեն երեխայի յայտնի է, որ սուտ չպիտի խօսի, ամեն ոք ևս կարմրում է, երբ երեսովն են տալիս իւր սխալանքը: Այս ներքին ձայնը անաչառութեամբ է դատում քո գործերը: Գործողութիւնից առաջ խիղճը բարեկամ է, որ քեզ յորդորում է դէպի բարին և զգուշացնում է սխալից. գործողութեան միջոցին նա լուռ վկայ է, որ ուրախ կամ տխուր նայում է քո գործին. գործողութիւնից յետոյ՝ դատաւոր է և հատուցանող, որ անկաշառ արդարութեամբ քեզ վարձատրում կամ պատժում է: Երբ բարի բան ես գործում, ներքինդ ուրախ է, երբ վատ՝ չար բան ես գործում և մինչև անգամ ոչ ոք էլ այդ մասին տեղեկութիւն չունենայ, այն ժամանակ քո խիղճը կրծող որդն է, որ երբէք չէ մեռնում. բորբոքուող, այրող հուր է, որ չի շիջանում (Կայէն, Պետրոս, Յուդայ): Այս բարոյական օրէնքը բոլոր դարերում, բոլոր մարդկանց մէջ միևնոյնն է՝ թէ սպիտակամորթի և թէ սևամորթի, իշխանի և թէ գռեհկի, թէ հրէի և թէ հեթանոսի մօտ: Ուր ամենի համար միատեսակ օրէնք է թագաւորում, այնտեղ պէտք մի օրէնստու լինի: Արդեօք այդ օրէնստուն մարդն է: Եթէ օրէնստուն մարդը լինէր, այն ժամանակ այն օրէնքը, որ նա մարդոց սրտերում տնկել է, կարող էր նորից խլել, այն ժամանակ խիղճը մարդուս կարգադրուէր և ոչ թէ ինքը խղճին: Բայց ինչ որ էլ մարդս անելու լինի, ուր որ էլ թաք կենայ, իւր կրծքում բնակուողից զերծ լինել չէ կարող: Զարացած խիղճը հալածում է մարդուս. նա անբաժան է նրանից. հետևում է նրան խորին լռութեան մէջ ևս. խլում է նրանից ուրախութիւնը և վրդովում է նրա խաղաղութիւնը: Աստուածային այս ձայնը թոյլ չի տալիս, որ ծաղրեն իրան. կատակ չի սիրում. նա մի զօրութիւն է, ոյժ է, որի առաջ մարդկային զօրութիւնը տկարութիւն է: Այս ուղին տանում է մեզ դէպի այն մեծ օրէնստուն, որ աշխարհին տուել է իւր օրէնքները. նա մարդուս սրտի մէջ ես գրել է այն օրէնքը, որի համաձայն նա պիտի ապրէ: Ո՛ւրեմն: Առանց Աստուծու ոչ մի օրէնք չկայ՝ ոչ քեզնից դուրս և ոչ քո մէջ: Չկայ օրէնք առանց օրէնստուի (Թ. առ Հռմ. բ. 14. 15. «Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք, որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց»:)



Դ. Մեծ օրէնստուն առանց բարի նպատակի՝ խիղճը մարդոց սրտի մէջ չէր դնի: Օրինականութիւնը, ինչպէս և կանոնաւորութիւնը աշխարհիս մէջ ստիպում են մեզ ընդունելու, որ մի բարի Աստուած մեր վերևում սաւառնում է, և որ նա իւր որդւոց համար միայն բարիք է կամենում: Եւ իրօք—որ կողմն էլ նայենք, ամենուրեք կտեսնենք մի անյայտ բարերարի բարութիւնները. ամենուրեք, այո, տեսնում ենք բարի տուիչի տուրքերը: Գնա՛ գարնան գեղեցիկ օրում դէպի դաշտ՝ բնութեան մէջ և տե՛ս թէ ինչպէս ծածանւում են կանաչ արտերը. լսի՛ր մարգագետիններում երգող թռչունների դայլայլիկը. դուրս արի՛ տանից աշնան մի գեղեցիկ օրում, երբ արևը իւր ոսկէ ճառագայթները մայր է խոնարհում. տե՛ս պտուղներով ծանրաբեռնուած ծառերը և կամ հնձի առատ տուրքը կալերի մէջ դիզած.... քո սիրտը կշարժուի: Ամենուրեք ի նորոյ կհնչէ քո մէջ. «Եւ լցաւ երկիր բարութեամբ քով» (Սաղմ. ժգ. 24): Յետոյ ինքդ քեզ վրայ մտածի՛ր, թէ ինչպէս զոյգ աչքերովդ այդպէս ուրախ ու զուարթ նայում ես կանաչած, փթթած, Աստուծու ստեղծած աշխարհին. թէ ինչպէս քո զոյգ ականջներով լսում ես արտաքին ճըռուողիւնը և հրճւում—ա՛խ; մտածի՛ր, որ այդ բոլորն այլապէս կարող էր սահմանուած լինել: Դու առողջ կազմուածք ունիս՝ ընդունակ աշխատելու. մտածող ոգի ունիս. գիտե՞ս ինչու համար են դոքա—քո Աստուծուն ճանաչելու համար: Դու ունիս մի հատ լեզու պարգև ստացած, որով քո մերձաւորին ներքինդ արտայայտում ես և քո Արարչին փառաբանում—տե՛ս սրանք բոլորն էլ Աստուծու տուած պարգևներն են—դրանք այն մեծ բարերարի բարութիւններն են: Այս ամենը մարդը ինքը չէ տալիս իրան, այլ դրանք բոլորն էլ Աստուծուց են, դրանք բոլորն էլ նրա շնորհներն են: Վերջապէս Աստուծու գոյութիւնն ապացուցանում է այն բարերարութիւնները, որ նա շնորհել է մեզ: Չկայ բարութիւն առանց բարերարի: «Աչք ամենեցուն ի քեզ Տէր յուսան, եւ դու տաս նոցա կերակուրս ի ժամու....»:

Մենք ևս պիտի այսպէս ուսանինք Աստուծու գոյութեան հիմունքները: Թուցէ ոմանք ուրանան Աստուծու գոյութիւնը, իսկ մենք հաստատ մնանք այս մխիթարող հաւատին և երբէք թոյլ չտանք՝ ոչ աշխարհիս ծաղր ու ծանակին և ոչ մեր զգայարանքների կասկածին յափշտակելու մեզնից այդ մխիթարութիւնը: Կան մարդիկ, որոնք ասում են—մինչև մենք չտեսնենք նրան, չենք հաւատայ: Բայց մենք քաջ գիտենք, որ արևն այնուամենայնիւ կծագէ, եթէ կոյրը նրան

չանսնի էլ—Աստուած այնուամենայնիւ կայ և կներգործէ, թէկուզ մարդիկ նրա գոյութեանը չհաւատան էլ: Ձեր կեանքի մէջ, եթէ այդ տեսակ կասկածներ ծնեն ձեր մէջ, այն ժամանակ դիմեցէք ձեր բանականութեանը, որ ձեզ մատնանիշ կանէ դէպի համայն ներգործութեան սկզբնապատճառը, բոլոր օրէնքների օրէնսդրին, կանոնաւորութեան կանոնաւորիչին, ամեն բարեաց տուողին: Եթէ ձեզ պատահեն Աստծու գոյութիւնը ուրացող մարդիկ, այն ժամանակ յիշեցէք սուրբ գրքի խօսքը—Սաղմոս ժդ. 1. «Ասաց անզգամն (այսինքն որոնք իրանց բանականութիւնը չեն գործ դնում կամ հեռեւում են իրանց ստոր կրքերին) ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած»: Այդ աստուածուրացներին խելոյն կարելի է ճանաչել՝ նայելով նրանց կենցաղավարութեան, որովհետև «Ապականեցան եւ պղծեցան, եւ ոչ ոք է, որ առնէ քաղցրութիւն»:

## Բ. ԷՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Մտածող մարդկային ոգին չէ բաւականանում Աստծու գոյութիւնն իմանալով, նա անհանգիստ է, հետաքրքիր է իմանալու, թէ ինչ է Աստուած: Ինչպէս իւրաքանչիւր անհատ, այնպէս և մարդկութիւնը հազարաւոր տարիների ընթացքում հետաքրքրուել է, հետազօտել է իմանալու Աստծու էութիւնը: Սուրբ գիրքն այս խնդրի պատասխանն այսպէս է յայտնում—1, Աստուած հոգի է (Յովհ. դ. 24.) 2, Աստուած սէր է (I. Թ. ա. Յովհ. դ. 16.), ուստի և աշխատենք այս երկու յայտնութիւնների հետ ի մօտոյ ծանօթանալ:

### 1. ԱՍՏՈՒԱԾ ԱՆՎԵՐՋ, ԱՆՍԱՀՄԱՆ ՀՈԳԻ Է

Անուրանալի իրողութիւն է, որ քչերը պարզ գաղափար ունին Աստծու էութեան մասին: Ոմանք երեւակայում են Աստծուն որպէս մի ծեր մարդ, որ բազմած է երկնից բարձրութեան վրայ, իսկ ոմանք էլ որպէս բնութեան ույժ, զօրութիւն: Ինչքան մեծ և վտանգաւոր է այս մոլորութիւնը՝ այնքան ևս անհրաժեշտ է սուրբ գրքի խօսքը, թէ «Աստուած հոգի է»՝ կատարեալ պարզութեան վերածելու: Որպէսզի այդ բանը հասկանալի լինի՝ աստուածային հոգին կհամեմատենք նախ՝ մեր հոգու հետ և ապա կփորձենք տեսնելու, թէ ինչ զանազանութիւն կայ այդ երկուսի մէջ:

Ամենքս էլ գիտենք, որ մարդս երկու մասից է բաղկացած—մարմնից և հոգուց: Մարմինը տեսանելի, իսկ հոգին անտեսա-



նելի մասն է մարդուս էութեան: Ճիշտ է այն հաստատութիւնը, թէ ամենայն հոգեկան ինչ անտեսանելի է, բայց սխալ կլինի, եթէ այս հաստատութիւնը շուռ տանք և ասենք, թէ բոլոր անտեսանելի իրերն էլ հոգեկան են: Այն ժամանակ մեզ շրջապատող օդը և ջերմութիւնը ևս հոգի կլինէին: Ուրեմն հոգին արտաքին աշխարհի իրերից զանազանելու համար՝ անտեսանելի յատկութիւնը բաւական չէ: Այժմ տեսնենք թէ ինչումն է կայանում մարդկային հոգու յատկանիշը և թէ ինչ նմանութիւն կայ նրա և աստուածային հոգու մէջ:

*ա. Նմանութիւն*—Այն առարկաները, որոնք դուք այստեղ տեսնում էք (վառարան, նստարաններ, աթոռ, քարտէզ...), տանը կողպած աչքերով ևս կարող էք այնպէս կենդանի ներկայել ձեր հոգու առաջ՝ ինչպէս և մարմնական աչքով տեսնելիս: Մարդկային հոգին ունի մտապատկերելու կարողութիւն: Նմանապէս կարող ես դու յիշել, թէ ինչ ճանապարհով ես եկել. ինչ առարկաներ ես տեսել այս կամ այն անկիւնում. կարող ես մտաբերել թէ ինչ տեղ ումն ես տեսել և ովքեր էին տեսած մարդիկը: Մարդկային հոգին ունի յիշողութեան կարողութիւն: Երբ դուք ուսումնարան եկաք և ուսուցիչը դասը պատմելուց յետոյ՝ ձեզ հարց առաջարկեց, թէ հասկացա՞ք այս ինչ խնդիրը, դուք էլ կատարեալ համոզմամբ պատասխանեցիք—այո—ուրեմն մարդս իւր հոգւով կարողանում է և ըմբռնել, գաղափարներ կազմել, օգտաւէտը վնասակարից, ճշմարիտը սխալից, տեսանելին անտեսանելուց զանազանել և այս բոլորի հետ մտածել: Մարդս իւր խորհրդածութեամբը, կշռադատութեամբը (մտածել) կարող է հասնել և այն գիտակցութեան, որ որոշէ, թէ չկայ հետեւանք առանց պատճառի, չկայ կարգաւորութիւն առանց կարգադրողի, չկայ օրէնք առանց օրէնսդրի, չկայ բարերարութիւն առանց բարերարի—մի Աստուած կայ, որ սաւառնում է մեզ վրայ և որին պարտ ենք գոհութիւն և փառաբանութիւն մատուցանել: Մտածողութեան այսպիսի բարձրութեան ոչ մի կենդանի չի կարող հասնել: Այս բաների մասին կենդանին ոչինչ չգիտէ, նա չի կարող գիտենալ բոլոր ստեղծուածների պատճառը, ճանաչել բոլոր բարութեանց տուողին: Մարդկային հոգու առաջին յատկանիշը մտածելն է: Մարդս իւր հոգւոյ օգնութեամբ կարող է և զգացմունքներ ունենալ: Եթէ դու հանգամանքների շնորհիւ հեռի ես քո ծնողներից, այն ժամանակ քո հոգին հայրենեաց կարօտ է զգում: Երբ հայրդ քեզ մի գիրք է ընծայում, դու ուրախու-

թեան զգացմունք ես արտայայտում: Երբ քո սիրելիներից մէնը մեռ-
նում է, քո մէջ տրտմութեան զգացմունք է ծնւում: Դու տեսնում
ես կոյրին, կաղին...., որ ճանապարհի վրայ նստած, ողորմութիւն է
խնդրում, կարեկցութեան զգացմունք է յառաջանում քո մէջ:
Կենդանին այդ տեսակ զգացմունքներ չունի: Կենդանին անընդու-
նակ է կարեկցելու: Մարդս իւր հոգու օգնութեամբ կարո-
ղանում է և զգալ: Մարդկային հոգին մի երրորդ բան ևս գի-
տէ: Աշխատասէր երեխան, որի ծնողներն ի հարկէ ուրախ կլինին
որդու այդ յատկութեան վրայ, կարող է իւր մէջ հաստատապէս որո-
չել միշտ աշխատասէր լինելու: Այն անձը, որ ճաշակել է կեանքի
դառնութիւնները, աղքատութեան դէմքը քաջ ճանաչել է և որի վի-
ճակն ի նորոյ բարելաւել է, կարող է նոյնպիսի որոշում անել՝ աղ-
քատներին սառը աչքով չնայել: Ուրեմն մարդկային հոգին
կարող է և կամենալ: Բանական մարդն ինչ որ կամենայ, կա-
րող է ի կատար ածել: Աշխարհային ոչ մի ոյժ չի կարող ստիպել
մարդուն՝ իւր ցանկութեան հակառակ գործել: Եթէ քեզ մի վատ
հասարակութիւն կամենում է գայթակղեցնել, այն ժամանակ դու
կարող ես ասել—հեռու ինձանից: Եթէ քեզ աշխարհիս գանձերն
էլ առաջարկելու լինեն և սրանով քո անմահ հոգին վտանգի
ենթարկեն, դու կարող ես ասել—չեմ թողլ տալ իմ դէմ ոյժ գործ
դնելու—մարդ ասածդ ստիպմամբ չպիտի որ և է բան գործէ: Հէնց
դրա համար էլ ասում ենք, թէ մարդս ազատ կամքի տէր է—մի
պարգև՝ որ միայն մարդուն է շնորհուած ի վերուստ, կենդանինե-
րը հետևում են իրանց բնազդման: Այսպէս մենք գտնում ենք,
որ մարդուս էութիւնը կայանում է մտածելու, զգա-
լու և կամենալու մէջ: Սրան հետևում է մի չորրորդ կէտ ևս:
Քարը չգիտէ իւր ծանր լինելը. ծաղկին անյայտ է, որ նա ծաղկում
է. կենդանին ոչ մի նախազգացումն չունի իւր կեանքի գոյութեան
մասին: Միայն մարդը գիտէ, որ մտածում է ինքը—մտածելը, զգալը
և կամենալը մարդուն միայն յատուկ են. նա միայն ճանաչում է
իւր անմահ հոգու էութիւնը. նա միայն գիտէ իւր երկրաւոր կեան-
քի կոչումը: Այս գիտենալու յատկութիւնն է, ինչ որ սովորաբար
հոգու ինքնագիտակցութիւն է կոչւում, որ մարդուս զանազա-
նում է երկրիս վրայ եղած ամեն բանից՝ ինչ որ զուրկ է հոգուց:
Մարդուս հոգու չորրորդ յատկանիշն է ինքնագի-
տակցութիւնը: Ինչ որ մինչև այժմ գտանք, այդ բոլորի մէջ



Աստծու հոգին ևս նման է մարդու հոգուն, որովհետև Աստուած ևս կարող է մտածել—ի հարկէ նրա մտածողութիւնը միշտ մեր մտածողութեան նման չէ: Աստուած ևս կարող է զգալ. նա միշտ սիրել է, միշտ ուրախանում է մեղաւորի դարձի վրայ: Աստուած ևս կարող է կամենալ, որովհետև «զի նա ասաց եւ եղեն, ինքն հրամայեաց եւ հաստատեցան»: Աստուած ևս ունի ինքնագիտակցութիւն, նա կարող է ասել—ես եմ առաջինը և վերջինը, բացի ինձնից ուրիշ Աստուած չկայ: Այս յատկութիւնների համար Աստծուն անուանում ենք անձնաւոր էութիւն (բնութեան մէջ եղած գիտակցութիւնից զուրկ ույժերից, զօրութիւններից զանազանելու համար):

Որքան որ նմանութիւն գտանք Աստծու և մարդու հոգիների մէջ, դրանից և՛ս աւելի մեծ են այն զանազանութիւնները, որոնք մենք կթուենք:

*ա. Զանազանութիւն*—Մեր հոգին ստեղծուած է, ինքնագոյ չէ—իրանից գոյութիւն չէ ստացել: Իսկ Աստծու մասին ասում է սուրբ գիրքը. «Հայր ունի կեանս յանձին իւրում»: (Յովհ. ե. 26) և թէ «ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք» (Գործք առ. ժէ. 25): Մեր հոգին (թէև նրան չենք կարող չափել ըստ երկայնութեան, լայնութեան և բարձրութեան) միաւորուած է մեր մարմնի հետ և այն ժամանակ միայն անջատւում է, երբ մահկանացու պատեանը ջախջախւում է: Աստծու վերաբերութեամբ հոգին միացած չէ մարմնի հետ—նա անմարմին գոյութիւն է: Աստծու հոգին ամենուրեք է—նա աշխարհիս մէջն է, առանց բովանդակուելու նրա մէջ. նա և՛ աշխարհիս վրայ է՝ առանց բաժանուելու նրանից: Աստուած մարմին չունի, անմարմին է—նա հոգի է միայն: Դրա համար ևս ասում են—մարդս հոգի ունի, իսկ Աստուած հոգի է: Մեր հոգին Աստծու հոգւոյ մի մասն է, որ ստացել ենք նրանից, իսկ Աստծու հոգին ոչնչի մասը չէ, նա ամբողջ է կատարելութեամբ: Մեր հոգին Աստծու հոգւոյ վերաբերութեամբ այնպէս է, ինչպէս կաթիլը ովկիանոսի մէջ՝ մի աղօտ լոյս նրա աստուածային պայծառութեան: Թէև մենք մեր հոգւով կարող ենք մտածել, բայց որքան յաճախ հեղութեամբ պիտի խոստովանենք, որ մեր գիտեցածը շատ փոքր բան է: Դրա հակառակ՝ աստուածային հոգին երբեք չի տատանւում որ և է ըմբռնման մէջ: Թէև մեր հոգին կարող է զգալ, սակայն մեզ քաջ յայտնի է, որ ոչ միշտ մեր զգացմունքները ճշմարիտ

են, դրա հակառակ Աստծու հոգին երբեք չի հեռանում այն բանից՝ ինչ որ սուրբ է, նա ընդմիշտ բարին է սիրում, ուստի և միակ երջանկացնողը: Մեր հոգին կարող է կամենալ, բայց քանի քանի անգամ փորձեցինք, որ մեր կամքը շատ քիչ անգամ բարի աղբյուրից է բղխում, շատ քիչ անգամ ճշմարիտ ուղղութիւն ունի: Աստծու կամքն ընդհակառակն՝ այս վերաբերութեամբ, անհամեմատ բարձր է, նա բացէ ի բաց սուրբ է և տատանուել չգիտէ: Մտածիր՝ ինչ աստիճանի էլ մեծ և բարի մտածել կարող ես, ինչ բարձրութեամբ և վսեմութեամբ առհասարակ մարդկային միտքը ընդունակ է մտածելու, աստուածայինը կա՛ աւելի կատարեալ է—մի մեծութիւն, որ մարդկային միտքը ընդունակ չէ երևակայելու—նա ոչ մի պակասութիւն, ոչ մի սխալ չունի. ոչինչ սահման չկայ նրա համար. ոչ մի թերութիւն չունի: Ուստի և պէտք է ասենք—մի Աստուած կայ և այդ Աստուածը ամենակատարեալ հոգի է:

Հէնց այս է, որոյ մասին յայտնում է մեզ Քրիստոս. «Ոգի է Աստուած եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել» (Յովհ. դ. 24.): Յայտնի է, որ Փրկիչն այս խօսքը մի սամարացի կնոջ ասաց Յակոբի ջրհորի վրայ: Սամարացիք մի խառնուրդ ժողովուրդ էին—կէս հեթանոս և կէս հրէայ: Ուստի և այդ խօսքը շատ տեղն է, յարմար է, որովհետև նրա առաջին կէսը («ոգի է Աստուած») հեթանոսներին, իսկ միւս կէսը («եւ երկրպագուացն նորա...») հրէաներին է վերաբերում: Հեթանոսներին պէտք է ասուէր, որ Աստուած ոգի է, ամենակատարեալ ոգի, որ ոչ մի թերութիւն, ոչ մի թոյլ կողմ չունի (Մատթ. ե. 48. «Եղերուք կատարեալ որպէս հայրն ձեր կատարեալ է»). այս յայտնութիւնը պէտք է տրուէր նրանց, որպէսզի մարդկանց և կենդանիներին, բնութեան և ոգեկան զօրութիւններին աստուածային պաշտօն մատուցանելը դադարեցնէին. (Եսայի խբ. 8., «Ես տէր Աստուած, այս է անուն իմ, զփառս իմ այլում ոչ տաց, եւ ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց»: Այս ձևի պաշտօն մատուցանելուց որքան չարիք էին ծնել աշխարհում: Հրէաներին, որոնք Աստծուն որպէս ոգի էին ճանաչում և պաշտում, պէտք է ասուէր, որ նրանց Աստուած պաշտելու եղանակը Աստծու էութեանը համապատասխան չէ—Աստծուն ոչ թէ զոհով, պահքով և այսպիսի արտաքին արարողութիւններով պիտի պաշտօն մատուցանել, այլ՝ միմիայն ներքին և ոգեկան ձևով պիտի պաշտել և այդպէս էլ պէտք է:



Երկրաւոր մի իշխանի կարելի է արտաքին՝ երկրաւոր ձևով պատուել, իսկ յաւիտենական Աստծու առաջ արտաքին գործերը ոչինչ նշանակութիւն չունին: Դրա համար էլ բաւական չէ, որ մենք Աստծուն պաշտում ենք, այլ հարցը նրանումն է թէ մենք ինչ ձևով ենք պաշտում—արդեօք ըստ երևոյթին, թէ ճշմարտութեամբ: Ոչ թէ եկեղեցի յաճախելն է, որ մարդուս փրկում է, այլ ճշմարիտ սրտով գնալը: Բաւական չէ, որ մենք այստեղ կամ այնտեղ կարճ կամ երկար աղօթենք, այլ՝ Աստծուն պէտք է ճշմարիտ կերպով, երկիւղածութեամբ, մանկական վստահութեամբ և հեզութեամբ աղօթենք: Հարցը նրանում չէ, որ մենք Աստծու առաջ ծունկ ենք չոքում, այլ՝ որ հեզութեամբ խոնարհենք: Գլխաւոր բանն այն չէ, որ մենք մեր ձեռները կարկառենք, գլուխներս բաց անենք, կամ հայեացքներս երկինք ուղղենք, այլ այն, որ սրտներս դէպի Աստուած դարձնենք, նրան միայն ծառայենք և նրան միայն պաշտօն մատուցանենք: Ուր և երբ էլ աղօթելու լինինք, միշտ և հանապազ մեր աղօթքը, մեր պաշտօն մատուցանելը հոգւով (հոգեկան ձևով) և ճշմարտութեամբ (երկիւղածութեամբ, բարեպաշտութեամբ) պիտի լինի: Կոյրը կարող է երկնակամարի վրայ եղած արևն ուրանալ, ով հոգի չունի նա էլ Աստծու ոգին ըմբռնել չէ կարող. Աստծու, որին մենք մարմնաւոր աչքով չենք տեսնում, արտաքին զգայարանքներով չենք զգում նրա գոյութիւնը, այլ՝ մեր սրտերում պէտք է զգանք և ամբողջ սրտով սիրենք:

## 2. ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է

Իտալական մի փոքրիկ քաղաքում, որին Վեզուվ լեառը տասն և ութը դար առաջ մոխրով ծածկեց, այժմս էլ գտնում են հին, քարացած ձեռագրեր, որոնց մեծ աշխատասիրութեամբ՝ տառ առ տառ, բառ առ բառ աշխատում են կարդալ: Երևակայիր քեզ, որ հին Հերքուլանումի ձեռագրերից մինը պարունակելիս լինէր I. թ. Յովհան. և ենթադրենք, որ դա միակը լինէր երկրիս վրայ: Գիտնականները ամեն ջանք գործ դնելով՝ կարդային հասնէին մինչև I. Յովհ. դ. 16. ուր ասած է «Աստուած— —», բայց յաջորդ երկու բառը չկարողանային կարդալ—ինչ աշխատանք գործ կդնէին գաղտնիքը լուծելու: Ինչ որ իմաս-

տունները տքնելով պիտի ձեռք բերէին, այստեղ պատրաստ է արդէն և կարելի է կարդալ: Ի՞նչ աշխատանք, ինչ ջանք պիտի գործ դնէին իմաստունները, մինչև որ կասէին մեզ, թէ ինչ է Աստուած: Թերևս հարցնող լինի, ինչ բան է մեր աչքին ծածուկ Աստուածը, որին դեռ ոչ ոք չէ տեսել, չնայելով որ նա ոչ ոքից հեռի չէ: Ի՞նչ բան է այդ ամենակարող Աստուածը, որ մեզ ամենիս ամեն բոպէ իւր բռնումն ունի և մեր գոյութեան համար ամեն վճիռ կարող է որոշել: Ի՞նչ բան է այդ սուրբ Աստուածը, որի պատուիրանները, մենք չենք վստահանայ զանց առնել: Ի՞նչ բան է նա, ինչ: Կարելի է երևակայել, թէ հնախոյզները ո՛րպիսի լարուած ուշադրութիւնով կսպասէին այն բոպէին, թէ երբ պիտի յայտնուի իրանց՝ գաղտնիքը: Վերջապէս գաղտնիքը գտնւում—ինչպիսի ուրախութեամբ դուրս է թռչում գիւտ անողի շրթունքից—«Աստուած— —սէր է» խօսքը: Ահա պատասխան, որ մեր բոլոր յոյսերը պսակում է: Ահա յայտնութիւն, որ չէինք ակնկալում—«Աստուած սէր է»: Այո, սէր—բայց ինչ կայ այս խօսքի մէջ: Աստծու կատարելութիւններն էլ ըստ որակի նոյնն են, ինչ որ մեր հոգունն է և ամբողջ բնութեանը. զանազանութիւնը նրանումն է, որ նրա ունեցածի քանակը մեծ է, չափ ու սահման չունի—նա մի ովկիանոս է, որից մի կաթիլ միայն ընդունած ենք: Եւ արդարև մենք էլ ունինք մեր մէջ փոքր ինչ կարողութիւն, փոքր ինչ ճանաչողութիւն, փոքր ինչ բարութիւն: Բայց այդ յատկութիւնները Աստծու մէջ կատարեալ են»: Իմաստունի այս խօսքերն ամենից աւելի Աստծու սիրուն է վերաբերում: Սէրը մարդկային առաքինութիւնների թագն ու պսակն է. Նա Աստծու էութեան մէջ էլ ամենավսեմն է, ամենաբարձրն է: Եթէ ամենակարող ոգի Աստուածը, ամենասուր ճանաչողութիւն և ամենազօրեղ կամք... ունենար, բայց նա (Աստուած) սէր չլինէր, ամեն ինչ ունայն կլինէր մեզ համար: Աստծու կատարելութիւնը մեզ թոյլ չի տալիս մտածելու, որ նրա սէրը անկատար և թերի է, կամ բոլորովին զուրկ է նրանից—եթէ նա կատարեալ է, ուրեմն սէր պիտի ունենայ և այդ սէրը ամենակատարեալ պիտի լինի: Դրա համար էլ մեծ մխիթարութիւն է մեզ համար և ծանրակշիռ միտք է սուրբ գրքի (I. Թ. Յովհ. դ. 16.) խօսքը, թէ «Աստուած սէր է, եւ որ կայ ի սէրն, բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ»:

Սիրոյ էութիւնը հազիւ թէ կարելի լինի խօսքով ըմբռնել, ուստի և մենք փոխանակ մեկնութիւնների, ուղղակի նրա արտայայտութեանց հետ ծանօթանանք:



Երբ մէկը քեզ հետ սիրով է վարւում և իւր գեղեցիկ վարմունքներով բարեկամական արտայայտութիւն է անում քեզ՝ իւր նմանին, այն ժամանակ դու ասում ես—այս ինչ սիրալիր մարդ է: Բայց ինչ բան է բոլոր մարդոց սէրը, Աստծու սիրոյ վերաբերմամբ: Ամբողջ բնութիւնը հրապարակաւ վկայում է այդ մասին: Տե՛ս սիրոյ արևն ինչպէս է տարածում իւր ջերմ ճառագայթները և ամեն ինչ կենդանացնում: Նայի՛ր ծաղիկներին, ինչ սքանչելի գոյն ունին հագած—այս ինչ բուրմունք է, կարծես նրանք ասելիս լինին, որ երկնաւոր հօր անունը սիրոյ Աստուած է: Նայեցէք կենդանիներին, Աստուածային սէրը նրանց էլ չէ մոռացել բաղդաւորացնելու: Ի՞նչ սիրուն են դայլայլում թռչունները և իրանց գեղգեղանքով փառաբանում բարձրեալին: Ի՞նչպէս զուարթ թռչկոտում է գառնուկը կանաչ մարգագետնի վրայ: Ի՞նչպէս ուրախ թրթռում է թիթեռնիկը մի ծաղկից դէպի միւսը, մի կոկոնից դէպի միւսը: Նրանց բոլորին էլ սիրոյ հայրը «Բանաս զձեռն քո, եւ լցուցանես զամենայն քաղցրութեամբ կամօք քովք» (Սաղմ. ճխդ. 16.) է որոշել: Բայց աստուածային սէրը քե՛զ որքան անգամ աւելի է օրհնել, ո՛վ մարդ, քեզ՝ որ նրա սիրոյ պատկերը լինելու որոշուած ես: Նայի՛ր ճարտարութեամբ ստեղծուած քո մարմնուն՝ աստուածային սիրոյ այդ կենդանի վկային: Նայի՛ր ձեռքին, տե՛ս ինչ շնորհ ասես, որ չունէ. ոտքին՝ ինչպէս հաստատ քայլում, վազում է. աչքին—աշխարհիս բոլոր գեղեցկութիւնները տեսնել կարող է. ականջին—որ իւր մէջն ունի փակած հնչիւնների աշխարհը..... այս բոլորն էլ մի մի սիրոյ նուէրներ են: Սրանից յետոյ մտածի՛ր քո անմահ հոգու մասին, որով քեզ Աստուած բոլոր երկրաւոր արարածներից բարձր է դասել: Յիշի՛ր այն բոլոր բարերարութիւնները, որոնք Աստուած քեզ է բաժին ընտրել՝ հոգուդ յատկութիւնների միջնորդութեամբ: Քանի՜-քանի՜ առիթներում (տանը, դպրոցում, եկեղեցում.....) միջոց է տալիս քեզ հոգւոյդ յատկութիւնները արտայայտելու, վարժելու: Յիշի՛ր միայն այն, որ նա իւր Միածին որդին աշխարհ ուղարկեց, որպէսզի դու նրանով լաւ ճանաչես Աստծուն, նրա ներող սէրը. որպէսզի լաւ տեսնես քո կեանքի էութիւնը և հաստատ յոյս ունենաս յաւիտենական կեանքի մասին: Ուր որ էլ

նայես, ուր որ՛ էլ ականջ դնես, ա մ ե ն ո ւ ր ե ք կտեսնես Աստծու ս ի ր ո յ վկաները, արձանները։

Ս ի ր ո ւ ց դ ր դ ա ծ ս տ ե ղ ծ ե ց Ա ս տ ո ւ ա ծ ա շ խ ա ր հ ն է լ, ք ե զ է լ։ Մեր գոյութիւնը նրան ենք պարտական։ Սիրուց դրդած հոգում է Աստուած քո պէտքերը և խնամում քեզ։ Քեզ համար է ծաղկում ծառը, ով մարդ. քեզ համար հասնում հատիկը. քեզ համար ծագում արևը։ Քեզ համար է, սիրելիս, երկիրը պտուղ բերում, քեզ համար է ոչխարը բուրդ տալիս։ Քեզ համար է բղխում աղբիւրը, բոլորը քեզ համար, բոլորը քեզ համար, ով Աստծու պատկերի նմանութեամբ ստեղծուած էակ։ Ինչպէս որ Աստուած սիրուց դրդած ստեղծել է քեզ և պահպանում է, այնպէս էլ նոյն սիրուց դրդած պաշտպանում է քեզ ամեն մի վ տ ա ն գ ի ց, օգնութեան է հասնում ամեն մի ն ե ղ ո ւ թ ե ա ն ժամանակ։ Այնտեղ, ուր քեզ այլևս ոչ ոք չէ կարող օգնել, այնտեղ քեզ իւր օգնութեան աջն է կարկառում «Սէր յաւիտենական սիրեցի» Աստուածը։ Սիրուց դրդած՝ ղեկավարում է նա քո բ ա ղ դ ը՝ յօգուտ քո երջանկութեան, ուրախութեան և վերի պարգևով առաջնորդում է քեզ դէպի քո կոչման նպատակը։ Այս սէրը վայելում են երկրիս վրայի բոլոր բնակուողները, որովհետև նրա սէրը զանազանութիւն չի դնում բևեռաբնակի և արևադարձի վրայ բնակուողի մէջ. թէ եւրոպացին և թէ աւստրալիացին նոյնն են նրա համար. նա իւր արևը ծագել է տալիս թէ բարի և թէ չար մարդկանց վրայ և թափում է անձրևը ինչպէս արդարի, նոյնպէս անարդարի վրայ։ Այս սէրը ոչ ոքի չի մ ե ր ժ ո ւ մ, ոչ ոքի չի դ ա տ ա պ ա ր տ ո ւ մ—նա ա մ ե ն ի ն էլ գթում, ողորմում է։ Մարդկային սէրը փոփոխական է, այսօր այսպէս, վաղն այնպէս է, իսկ աստուածային սէրը յաւիտենական է և անփոփոխ։ Մարդկային սէրը ունի իւր չափն ու սահմանը, իսկ աստուածային սէրը երբէք չի դադարում. ընդարձակ է աշխարհը, բարձր է երկինքը, իսկ աստուածային սէրը ամեն բանից ընդարձակ է և բարձր։ Արտը իւր մարգն (սահման) ունի, ծովը իւր եզրը, իսկ աստուածային սէրը՝ անեզր է։

«Ա ս տ ո ւ ա ծ ս է ր է»։ Բնութիւնն էլ իւր չքնաղութեամբ, մարդկային կեանքը իւր երևոյթներով և սուրբ գիրքը իւր վսեմութեամբ նոյնն են ասում։ Լաւ նկատիր—սուրբ գիրքը չի ասում, թէ Աստուած սէր ունի, այլ՝ «Աստուած սէր է»։ Զանազանութիւնն անհուն է։ Եթէ ասուած լինէր՝ Աստուած սէր ունի, այն ժամանակ դա կլի-



նէր նրա էութեան մի յ ա տ կ ո ւ թ ի ւ ն ը, բայց երբ սուրբ գիրքն ասում է «Աստուած սէր է», այն ժամանակ սէրը Աստծու է ո ւ թ ի ւ ն ը ն է, բ ն ո ւ թ ի ւ ն ն է։

Աստուածային սէրը արևի հետ կարելի է համեմատել, որ ամեն ժամանակ լոյս, ջերմութիւն, կեանք և օրհնութիւն է սփռում ամենուրեք։ Արևի ճառագայթներն, ըստ այսմ, աստուածային սիրոյ զանազան արտայայտութիւններն են, և կամ այլ նմանութեամբ ասենք, արևի ճառագայթները սիրոյ բնի ճղներն ու ճղնիկներն են։ Այս հիման վրայ ևս Աստուած զանազան անուններ ունի։

Աստծու սէրը բարիք ևս անուանւում է։ Բարիք խօսքը սովորաբար գործ է դրւում, երբ մեծը՝ սէրը, իշխանաւորը իւր ստորադրեալին՝ առանց վերջինիս պահանջին, ցոյց է տալիս իւր սէրը, չնայելով որ ոչ մի օրէնք չի ստիպում նրան այդ անելու։ Ուրեմն Աստծու բարիքն էլ նրա սէրն է, որ ազատ կամքով, առանց բռնադատութեան տալիս է մեզ՝ չնայելով որ մենք ոչ մի արժանիք չունենք, չնայելով որ մենք ոչ մի ջանք չենք գործ դրել, որպէսզի այդ մի վարձատրութիւն լինէր Բարձրեալի կողմից։ «Տէր, յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչև յամպս» (Սաղմոս լե. 6.) «Քաղցր է Տէր առ ամենեսեան, եւ գթութիւն նորա ի վերայ ամենայն արարածոց իւրոց» (ճխդ. 9.) «Սիրէ զողորմութիւն եւ զիրաւունս Տէր» (լբ. 5.)։

Աստծու սէրը ո ղ ո ր մ ա ծ ո ւ թ ի ւ ն է կոչւում։ Ինչպէս ողորմած Սամարացին կարիքի մէջ եղողին օգնեց անապատի մէջ, այնպէս էլ Աստուած է օգնում ամեն մի հոգեկան և ֆիզիքական կարիք ունեցողին։ (Տ. I. Մովս. լբ. 10. Թ. Յակ. ե. 11. Ղուկ. զ. 36.)։

Աստծու սէրը շ ն ո ր հ ես կոչւում է։ Երբ մէկը մեղադրւում է և վերջինս բարձրագոյն իշխանութեան խնդիր է ներկայացնում զիջող լինելու, այն ժամանակ այդ տեսակ խնդիրը կոչւում է շ ն ո ր հ ա ց խնդիր։ Եւ եթէ իշխանութիւնը ներողամիտ է լինում և պատիժը կամ թեթևացնում է և կամ ներում, ասում ենք թէ նա իշխանութեան առաջ շ ն ո ր հ գտաւ, ներուեց յանցանքը։ Շնորհի արժանանում են ոչ թէ միայն մեղադրուածները, այլ և յանցաւորները և պատժի արժանիները, որոնք իրաւունք չունեին սէր պահանջելու։ Մենք ա մ ե ն ք ս էլ այդ տեսակ յանցաւորներ ենք և պատժի արժանի, բայց Աստուած խղճում է և յանցաւորին, որ արժանի չէ իւր սիրուն և որ ոչ մի յոյս, ոչ մի պահանջ չի կարող ունենալ դէպի

նորա սէրը։ Աստծու սէրը ոչ ոքի չի մոռանում—ով որոնում է նրան, գտնում է։ Սրան ապացոյց կարող է համարուել Յիսուսին աշխարհ ուղարկելը՝ մեր մեղաց թողութեան համար։ «Գթած ողորմած է տէր, երկայնամիտ եւ բազումողորմ.....» (Սաղմոս ճբ. 8—13.) «Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ զուարթացեալք, բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ շնորհացն ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի, իբրեւ զորդիս հնազանդութեան» (I. Թ. Պետ. ա. 13.)։ Արդարանան ձրի նորին շնորհօք ի ձեռն փրկութեանն որ ի Քրիստոս Յիսուս» (Թ. ա. Հռմ. գ. 24.)։

Աստծու սէր կոչւում է նաև երկայնմտութիւնը, համբերութիւնը։ Ինչպէս որ Աստուած ջրհեղեղի ժամանակը՝ ուղղուելու ժամանակ որոշեց, այսպէս և այժմ իսկոյն և եթ չի պատժում, այլ ներողամիտ է դէպի մեր սխալները և ժամանակ է տալիս մեզ ուղղելու համար, որպէսզի նրա բարութիւնը մեզ համար ապաշխարութեան ժամանակ դառնայ. «Եկաց (Յովնան) աղօթս առ տէր Աստուած եւ ասէ. «Ով Տէր, ո՞չ այս այն բանք են մինչ էի անդէն յերկրին իմում, վասն այնորիկ աճապարեցի փախչիլ ի Թարշիշ, զի գիտէի թէ ողորմած ես դու եւ գթած, երկայնամիտ եւ բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ չարեաց» (Յովնան դ. 2.)։ «Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա՝ եւ զներելովն եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցե՞ս զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ» (Թ. ա. Հռմ. բ. 4)։

Ինչքան էլ տարբեր լինին Աստծու սիրոյ արտայայտութիւնները, ինչքան էլ տարբեր անուններ տանք նրանց, չպիտի մոռանանք, որ նրա սիրոյ բոլոր ապացոյցները մի արեգական զանազան ճառագայթներն են, առանց որին դժբաղդ արարածներ կլինէինք։

Ուր այսպիսի անհուն սէր է սաւառնում մեզ վրայ, այնտեղ կարիք չկայ մի որ և է պատուիրանով մեր մէջ պարտաւորութեան զգացումն յարուցանելու, այլ այստեղ բնական ձգտումն է մեր մէջ սիրելու նրան՝ ով մեզ նախ սիրեց։ Մեր յիշած իմաստն էլ մղում է մեզ դէպի այս փոխադարձ սէրը՝ երբ ասում է. «Եւ որ կայ ի սէրն, բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ»։ Որ կայ ի սէրն, այսինքն ով սիրով, հաճութեամբ և ներքին երախտագիտութեամբ յիշում է Աստծու սէրը. ով՝ ինչպէս Քրիստոսն է պահանջում, Աստծուն սիրում է ամբողջ սրտով, ամբողջ հոգւով, և իւր ընկերին իրա նման՝ ում աշխարհիս զուարճութիւն-



ները և սեպհական սէրը չի գայթակղեցնում («Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն, թէ անձկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտք, թէ սո՞ւր, որպէս եւ գրեալ է». Թ. ա. Հռմ. ը. 35.), այնպիսին «կայ ի սէրն Աստուծոյ»։ (Համեմատի՛ր «Կրօնի էութիւնը» գլխի հետ)։ Աղօթքի մէջ այսպիսին Աստծու հետ է խօսում և սիրով, կամայ հետևում է նրա պատուիրաններին («Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք». I. Թ. Յովհ. ե. 3.)։ Այնպիսին երջանիկ է զգում իրան ամենակարողի մօտ և ձայնակցում է բարեպաշտի հետ—երանի՛ ես քեզ ունենայի։ Ուր սուրբ սէրն առ Աստուած՝ մարդուս սիրտը լցնում է, այնտեղ յանցանքն այլ ևս արմատ բռնել չի կարող, վասնզի այդ հանգամանքում մարդս չար երեխայի չի նմանում, որ ծնողաց հացն ուտում է, երախտիքը վայելում, բայց չի մտածում, որ ինքն էլ դրա փոխարէն փոխադարձ սէր և հնազանդութիւն է պարտական. այլ այնպիսին նման է Աստծու որդուն, որ ընդունակ է ամեն մի բարի բանի, ուստի և իւր ամբողջ կեանքի գոյութեան շրջանում իւր բոլոր գործերի մէջ աստուածային վարմունք է ցոյց տալիս։ Ուր մարդոց մէջ սէր է նկատւում, այնտեղ Աստուածային էութիւն կայ, որովհետև Աստուած սէր է։ Ինքնասիրութիւնը և յանցանքը ոչ Աստծու մէջն են և ոչ արտաքոյ Աստուծոյ, այլ՝ ընդդէմ Աստուծոյ։

Եւ երբ մարդս «կայ ի սէրն Աստուծոյ» չի հեռանում, չի բաժանւում նրանից և ոչ մի հանգամանքում (Թ. ա. Հռմ. ը. 35.), անսէր, ուստի և անաստուած չէ դառնում, այլ՝ սիրոյ մէջ հաւատարիմ է մնում, այն ժամանակն էլ «եւ Աստուած ի նմա բնակէ»։ Այնժամանակ Աստծու սէրը մարդուս մէջ հաստատ բնակութիւն է ընդունում. պաշտպանում է մարդուս ամեն մի չարից. մղում է նրան դէպի բարիք գործելու զգացումն և լցնում է հոգին, նոյն իսկ տխուր բոպէներում, սուրբ ուրախութեամբ և երկնային օրհնութեամբ։ Այն ժամանակ մարդս՝ հէնց այստեղ էլ, երկինքը երկրիս վրայ է ունենում, երկինքը սրտի մէջ է ունենում։ Ուստի վարժի՛ր քեզ այս սիրուն և մնա՛ այդ սիրոյ մէջ։ Եկէ՛ք ուրեմն, տղա՛յք, սիրենք Աստծուն ազատ կամքով և ոչ ստիպմամբ։ Աստծու սէրը օրինակ ընդունենք և հետևինք նրան—լինինք նրա պատկերը. սիրոյ ճանապարհովը գնանք Աստծու առաջ, Աստծու հետ և Աստծու մէջ։ Ուր սէր կայ, կայ և խաղաղութիւն, ուր խաղաղութիւն, այնտեղ էլ օրհ-

նութիւն, ուր օրէնութիւն՝ այնտեղ էլ Աստուած, իսկ ուր Աստուած կայ, այնտեղ ոչ մի կարիք չկայ:

## Գ. ԱՍՏԾՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախընթաց երկու հատուածներով պարզ եղաւ մեզ, թէ ինչ է Աստծու գոյութիւնը և էութիւնը: Մենք տեսանք որ Աստուած հոգի է, իսկ նորա էութիւնը՝ սէր է: Բայց մտածող մարդը սորանով չէ բաւականանում: Ինչպէս որ երկրաւոր հպատակները չեն բաւականանում նրանով, թէ իրանք մի վեհապետ ունին և դա թագաւոր.... է, այլ կամենում են իմանալ, թէ այդ թագաւորը ծեր է, թէ երիտասարդ, առողջ է, թէ հիւանդ, խորիմաստ է, թէ սահմանափակ խելքի տէր, մռայլ, թէ ուրախ սրտի տէր է, բարի է, թէ խստասիրտ, արդարադատ է, թէ անարդար: Այսպէս էլ մարդս չէ բաւականանում իմանալով՝ թէ ինչ է Աստուած, այլ կամենում է իմանալ նաև, թէ ինչպիսի Աստուած է: Ըստ այսմ հետևեալ գլուխներում կպարապենք Աստծու յ ա տ կ ու թ ի ւ ն ն ե ր ո վ: Նախ նրա յաւիտենականութեան մասին:

### 1. ԱՍՏՈՒԱԾ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ Է ԵՒ ԱՆՓՈՓՈԽ

Ծաղիկները ծաղկում և թառամում են. քաղաքները շինւում և աւերւում են. մարդիկ ծնւում և մեռնում են.... ամեն ինչ իւր սկիզբն ու վերջն ունի՝ բացի Աստուածանից: Ինչպէս որ պատճառն աւելի վաղ յայտնի պիտի լինի քան թէ ներգործութիւնը, այսպէս էլ Աստուած աշխարհից վաղ եղած պիտի լինի: Նա է բոլոր պատճառների պատճառը, ուստի և մի երկրորդից ստեղծուած լինել չի կարող և ոչ ժամանակի ընթացքում գոյացած լինել: Ինչպէս որ նա սկիզբ չունի, այսպէս էլ վերջ, վախճան չունի: Ո՞վ կարող է ուրեմն այդ յաւիտենական Աստծուն ոչնչացնել: Ոչնչացնող ոյժն աւելի զօրեղ պիտի լինի Աստուածանից—բայց ո՞ւր պիտի գտնենք այդ ոյժը. նա պիտի Աստուածանից առաջ եղած լինէր, բայց ո՞ւր որոնենք այդ: Ո՛չ, անհնարին է երևակայել, թէ Աստուած ժամանակի մէջ անյայտացած լինէր: Նրա համար ոչ այսօր և ոչ երեկ կայ և ոչ ժամանակի չափ՝ ըստ մեր օրուայ և տարուայ: Նրա համար չկայ ոչ ծննդեան և ոչ մահուան օր, ոչ սկիզբն և ոչ վերջ—Աստուած յ ա ւ ի տ ե ն ա կ ա ն է:



Աստծու յաւիտենականութեան գաղափարը ընդգրկել չէ մեր հասկացողութեան, այլ վեր է մեր բանականութիւնից: Մեր միտքը սարսում, բռնադատում է մեզ հաւատալու Աստծու յաւիտենականութեանը՝ մինչդեռ վախճան ունեցող հոգին յաւիտենականութեան անվախճան լինելը չի կարող ըմբռնել: Տես, ասում էր մի հայր իւր որդուն, եթէ հազար տարին մի անգամ մի թռչուն գար և այս մեծ ովկիանոսից մի կաթիլ ջուր խմէր, որքան ժամանակ պիտի տևէր մինչև որ ովկիանոսը բոլորովին դատարկուէր—սակայն յաւիտեան անունը դեռ չի կարելի տալ այդ ժամանակին: Մի կէտ կայ, որով մենք մերձաւոր գաղափար կարող ենք ունենալ Աստծու յաւիտենականութեան մասին—դա աստղերի անվերջ լինելն է, անհունութիւնն է: Դիտողութեան առ մի անգամ անսկիզբն արարչի վերջ ունեցող գործերը: Նայիր ա ր և ի ն՝ մեր երկրին ամենամօտիկ մնայուն աստղին: Եթէ այսօր թնդանօթի գնդակն արձակենք դէպի արևը, մօտաւորապէս 52 տարուց յետոյ հազիւ տեղ հասնի: Բայց ինչ է այս հեռաւորութիւնը՝ վերաբերութեամբ երկրորդ մնայուն աստղի (Ցենտաուէր), որ 223,472 անգամ աւելի հեռու է արևից: Երևակայիր երրորդը (Վեգա), որ $1^{1}/_{2}$ միլ. անգամ հեռի է արևից. յետոյ՝ չորրորդը...., որ աւելի և աւելի հեռի է—ինչ անսահման տարածութիւն: Վեր առ մի լաւ դիտակ և դիշեր ժամանակ նայիր աստեղազարդ երկնքին: Ուր քո հասարակ աչքն այլ ևս չի կարող տեսնել, հէնց այնտեղ էլ՝ ի զարմանս քո, մի նոր աշխարհ է ներկայանում—միլլիոնաւոր աստղեր վեր և վար են թռչում և Ծիրկաթին երևում է քեզ որպէս մի երամ աստղերի՝ 18 միլլիոն արևով և 3,000 խումբ աստղերով հանդերձ: 3,926 երկնային բծերից աստեղագէտի ամենակատարելագործուած դիտակը $^{1}/_{10}$ միայն հազիւ կարողացել է որոշել որպէս աստղ: Դրանք անըմբռնելի հեռաւորութիւն ունին—եթէ ամենահեռաւոր խմբից ճառագայթը ծագէր, մինչև մեզ հասնելը՝ հարկաւոր կլինէր 800 միլլիոն տարի՝ իւրաքանչիւրի համար $1^{1}/_{2}$ միլլիոն տարի հաշուելով: Արդեօ՞ք վերջացաւ, ա՞յս է բոլորը: Սլացիր մտօք մի բոպէ միլլիոնաւոր արևներից վեր, այնտեղ՝ տիեզերքի ծովի մէջ միլլիոնաւոր նոր կայուն աստղեր կյայտնագործես, այն ժամանակ հարցրու—ո՞ւր է տիեզերքի վերջը, ո՞րն է նրա սկիզբը: Բայց և այնպէս այս բոլորը մի սահմանաւոր գործ է աստուածային անսահման ոգու—սա մի տկար պատկեր է նրա յաւիտենական ամենակարողութեան, յաւիտենական իմաստութեան և յաւիտենական սիրոյ:

Այս յաւիտենականը դեռ անփոփոխելի էլ է, որ երբէք երիտասարդ չէ եղել և երբէք չի էլ ծերանայ, որ միշտ և հանապազ նոյնն է իւր կատարելութեան մէջ—ոչ աւելանում, ոչ պակասում է. Նա ոչ ստեղծականութեան և ոչ զարգացման օրէնքին է ենթարկուած: Նա այն է, որին բնութիւնը յաւիտենական է հրատարակում և որի անփոփոխ սիրոյ մասին նաև սուրբ գիրքը մեզ պատմում է: Կարդալ հետևեալ կէտերը—«Մինչչեւ լերինք հաստատեալ էին. մինչչեւ ստեղծեալ զերկիր եւ զամենայն տիեզերս: Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես» (Սաղմ. ձԹ. 2.): «Ազգէ յազգ են ամք քո: Ի սկզբանէ, տէր, զհիմունս երկրի հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են: Նոքա անցանեն եւ դու կաս եւ մնաս: Ամենեքեան որպէս ձորձ մաշեսցին, որպէս վերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին: Բայց դու նոյն իսկ ես, եւ ամք քո ոչ անցանեն» (Սաղմ. ճա. 26—28): Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք՝ ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն եւ կամ շրջելոյ ստուեր» (Թ. Յակ. ա. 17):

«Տեսից զերկինս զգործս մատանց քոց, զլուսին եւ զաստեղս զորս դու հաստատեցեր: Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արարանես դու նմա», ասում է սաղմոսերգուն (Սաղմ. ը. 4....): Ճիշտ է, Աստուած մեծ է, իսկ մարդս՝ փոքր, բայց չնայելով սրան՝ նա դարձեալ յիշում է մեզ և ամեն մինին իւր սիրուն արժանի է անում: Դրա համար էլ մենք ամենայն վստահութեամբ նայում ենք յաւիտենական Աստծուն, որի տարիներին վերջ չկայ և որ ընդ միշտ մեր յոյսն է ու ապաւէնը: Հիւսիսից մինչև հարաւ, Ասիայի արևելեան ափերից մինչև Եւրոպայի արևմտեան ափերը՝ նոքա, որոնք շունչ ունին՝ երկրպագանելով վեր են նայում դէպի յաւիտենականը. հեթանոսը և մահմեդականը, հրեան և քրիստոնեան, ամենախոր մտածողը, ինչպէս և մանուկը՝ բոլորն էլ ակնապիշ նրան են յառում: Նրան է աղօթում ներկան, ինչպէս և անցեալ մարդկութիւնը նրա ոտքի տակ է խոնարհել: Ամենը, ամենը նրան են նայում՝ յաւիտենական ողորմածին, որ իւր մարգարէի բերանով այսպէս է խօսել. «Ոչ սպառնալեօք իմովք շարժել զլերինս եւ փոփոխել զբլուրս, ոչ ողորմութիւն իմ պակասեսցէ իքէն, եւ ոչ ուխտ խաղաղութեան քո անցցէ» (Եսայ. ծդ. 10): Լեռները կարող են շարժուել, բլուրները կարող են փոխուել, բայց իմ ողորմութիւ-



նը չի պակսի քեզնից և ոչ իմ խաղաղութեան ուխտը կանցնէ: Ահա՛, նրա վրայ դու՛ ևս կարող ես յոյսդ դնել: Երբ քեզ ամենքը մոռանան, այնու ամենայնիւ յաւիտենականը դեռ մնում է:

Նրան ապաւինի՛ր վշտակրութեանդ օրերում, նրան ապաւինի՛ր այլ և քո մահուան օրում: Միայն յաւիտենականը կարող է տալ մեզ այն՝ ինչ որ միայն ինքն ունի—յաւիտենական կեանք: Եւ յաւիտենականը, որ սէր է ամբողջովին, տալիս է մեզ լոկ բարութիւնից դրդած: Դրա համար մենք ևս պիտի մխիթարուենք, վասնզի քանի արևը ծագում է երկնքի վրայ, նրա ճառագայթները չեն անհետանայ և քանի որ Աստուած սէր է, մենք չենք մեռնի: Գոյութեան կէսը մեզ հետ է բաժանել նա: Մեր ոգին ոգի է՝ նրա ոգուց ստացուած, ուստի և Աստծու նման անվերջ է: Ով մարդուս անմահ հոգի, մի՛ մոռացիր յաւիտենական Աստծու անվերջ սէրը:

## 2. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ Է

Մարդս շատ բան կարող է: Նա կարող է ձիուն սանձահարել. առիւծին ընտանեցնել. լեռները հարթել և ծովին սահման դնել. Նա կարող է արևով նկարել և կայծակով գրել (լուսանկար և հեռագիր): Երբ երկրիս զօրեղները՝ թագաւորներն ու կայսրները հրամայում են, կարճ միջոցի մէջ հեռագիրը զօրքին մի տեղ է հաւաքում՝ արիւնոտ պատերազմ մղելու ոխերիմ թշնամու դէմ: Թագաւորի, կայսեր մի խօսքը բաւական է ճանաչուած անմեղութիւնը պաշտպանելու և թագուցեալ յանցաւորին կործանելու: Թէ բնագէտի դահլիճում, թէ հասարակ աշխատաւորի խանութում, ինչպէս գիւտեր անելու ընդունակ հանճարներից, նոյնպէս և անշունչ բնութիւնից սովորում ենք ճանաչելու, որ մարդս շատ բան գիտէ:

Բայց նա ամեն բան չգիտէ: Խնդրի՛ր թագաւորին անելու—որ մի հատիկ չոր տերև կանաչացնէ: Ի՞նչ էք կարծում, ի՞նչ պիտի ստիպուի ձեզ խոստովանելու: Ասա՛ բնագէտին—բա՛ց արա երկնից սահանքները և զովացրու թառամած բուսականութիւնը յորդ անձրևով: Ի՞նչ կպատասխանէ քեզ: Եւ կամ խնդրի՛ր բժշկին, որ միլլիոնի չափ կարողութիւն ունեցող հարստի որդուն կեանքի վերջին րոպէից դէպի կեանք վերակոչէ և նա կստանայ հօր հարստութեան կէսը: Բժիշկը ուսերը վեր կքաշէ և կխոստովանի, որ անկարող է: Ուրեմն մարդկային ույժը սահմանափակուած է: Երբ մարդոց աշխա-

տանքը յաջող հետեւանք չի ունենում, երբեմն սովորութիւն է արդարանալու նրանով, թէ կարեւոր գործիքները և նիւթերը չկային. թէ այս ինչը խանգարեց, թէ կեանքը կարճ էր ձեռնարկած գործի համար:

Բոլորովին այլ է Աստծու մօտ: Աստուած ամեն ինչ գիտէ: Նրա զօրութիւնը իւր սրբազան կամքով միայն կարող է սահմանափակուել, որովհետև «զի Նա ասաց եւ եղեն, ինքն հրամայեաց եւ հաստատեցան» (Սաղմ. լբ. 9): «Աստուած մեր յերկինս եւ յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ՝ եւ արար (Սաղմ. ճժդ. 3): «Որ դնէ յամպըս զգնացս իւր, եւ շրջի նա ի վերայ թեւոց հողմոց» (Սաղմ. ճգ. 3): «Որ հայի յերկիր եւ տայ դողալ նմա, մերձի ի լերինս եւ ծխեցին» (Սաղմ. ճգ. 32): «Զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար տէր յերկինս եւ յերկրի, ի ծով եւ յամենայն խորս (Սաղմ. ճլդ. 6): Այո. մարդս մի քանի բան գիտէ, իսկ Աստուած ամեն բան: Մարդս կարող է, իսկ Աստուած ամենակարող: «Համբարձէք ի բարձունս զաչս ձեր, եւ տեսէք, ո՛ հաստատեաց զայս ամենայն, ո՛ հանէ զզարդ նոցա եւ զամենեսեան յանուանէ կոչէ բազում փառօք եւ սաստկութեամբ զօրութեան. եւ մի ինչ ոչ ծածկեցաւ ի քէն» (Եսայի խ. 16):

Աստծու ամենակարողութիւնը ճանաչում և խոստովանում ենք, թէ ամենափոքր և թէ ամենամեծ իրերի մէջ: Նայի՛ր ջրի կաթիլին, որի մէջ միլլիոնաւոր կենդանիք (ինֆուզորներ) են ապրում. նրանք այն աստիճան փոքր են, որ խոշորացոյցով միայն հնարաւոր է տեսնել նրանց: Թէև այդպէս է, բայց և այնպէս զարմանալի ձևով կազմուած են նրանք—մինը թմբուկի ձև ունի, միւսը՝ հողաթափի, երրորդը՝ գնդակի, չորրորդը իւր ձևն ամեն րոպէ փոխում է. ոմանք ոտներ չունեին, ոմանք բազմոտանի են, ոմանք աչք եւ փորոտիք ունեին, իսկ ոմանք ոչ մինը և ոչ միւսն ունեին: Ասացէք խնդրեմ, ջրի կաթիլը մի տեսակ փոքր աշխարհ չէ՞ և կենդանի վկայ Աստծու ամենակարողութեանը: Երկնքի և երկրի արարիչը որքան մեծ թուով է ստեղծել ամեն ինչ: Օրինակ, ո՞վ կարող է թուել օդի մէջ թըռչող անթիւ մժղուկները, թռչունները, ծովի ձկները. ո՞վ կարող է համարել դաշտի հասկերը, որոնք կանաչում են մեր արտերում, մեր գիւղում, մեր երկրում, ամբողջ աշխարհում: Ո՞վ, ո՞վ կարող է համարել: Այո, Աստուած մեծ է, իսկ մարդս փոքր. Արարիչն ամենակարող է, իսկ արարածը՝ թոյլ: Դրա համար ևս իւրաքանչիւր ծաղիկ, իւրաքանչիւր որդն վկայում է. «Մեծ են գործք տեառն» (Սաղմ.



ճժ. 2): Ոչ թէ միայն երկրիս վրայ, այլև երկնքում կարող ենք նկատել արարչի ամենակարողութիւնը: Մի խորանարդ մղոն (այսինքն մի արկղ, որ ունի մի մղոն երկայնութիւն, մի մղոն լայնութիւն և մի մղոն բարձրութիւն) քարով լցնելու համար, ենթադրենք որ ամեն մի քարի մեծութիւնը մի խորանարդ ոտնաչափ մեծութիւն ունի և ընդունենք որ ամեն մի վայրկենում մի այսպիսի քար կարելի էր արկղը նետել, այն ժամանակ հարկաւոր կլինէր մեզ 431,356 տարի, 1 ժամ, 26 րոպէ և 24 վայրկեան վերև յիշած խորանարդ արկղը լցնելու համար: Բայց ի՞նչ բան է մի խորանարդ մղոն արկղի մեծութիւնը երկրագնտիս վերաբերութեամբ, որ 2,650 միլլիոն խորանարդ մղոն է հաշւում: Բայց և այնպէս երկրագունտս փոշու հիւլէ է տիեզերքի հետ համեմատելով: Մենք տեսանք որ արևը $1\frac{1}{2}$ միլլիոն անգամ մեծ է երկրագնդից: Բայց ի՞նչ է արևը Ծիրկաթնի վերաբերութեամբ, որ դու ամեն պարզ գիշեր երկնակամարի վրայ տեսնում ես: Միլլիոնաւոր աստղեր անկշռելի մեծութեամբ, անհուն հեռաւորութեամբ ցրուած են այդ տարածութեան վրայ: Լուսոյ ճառագայթը մի վայրկենի մէջ անցնում է 42,000 մղոն, բայց Ծիրկաթնի մի ծայրից միւսն անցնելու համար հարկաւոր է 6,760 տարի: Բայց և այնպէս էլի ինչ բան է Ծիրկաթին ամբողջ տիեզերքի վերաբերմամբ: Ո՜րպիսի տարածութիւն: Ո՜րպիսի մեծութիւն: Այդ ի՞նչ Աստուած է, որ այս բոլոր աշխարհները իւր սիրոյ ամենակարողութեամբն ստեղծել է և իւր կամքի զօրութեամբ պահպանում է: «Որպէսզի մեծ են գործք քո տէր» Սաղմ. ճգ. 24): Ուրեմն—

**Ա.** Այս ամենակարողի առաջ ծունկ չոգի՛ր երկիւղածութեամբ և հեզութեամբ: Էլ ո՞վ պիտի վստահանայ այս անսահման աստուածային ոգին քննադատել. ո՞վ պիտի վստահանայ տրտնջալու, բարկանալու, երբ ամենից մեծը երբեմն մեր տկար ցանկութեան համաձայն չի կարգադրում ամեն ինչ: Ոչ ոք չի կարող իւր աջը կարկառել և ասել. «Զինչ գործեցեր» (Դան. դ. 32):

**Բ.** Հնազանդ եղի՛ր նրան: Աբրահամն արժանի եղաւ աստուածային յայտնութեան. «Ես եմ Աստուած քո, հաճոյ լեր առաջի իմ եւ լեր անարատ (I. Մովս. ժէ. 1): Այս յայտնութիւնը մեզ էլ է վերաբերում: Ամենակարողի կամաց հակառակ մտածել և գործելը անմտութիւն է. նրան հնազանդելը մեր պարտքն է: Երկրաւոր իշխանի մինի հաճոյքին համաձայն վարուելը մեզ բաւականութիւն

է պատճառում, բայց ինչու նոյնը Աստծու վերաբերմամբ չանել (Յովհ. ժէ. 14.)։

**Գ.** Յիշի՛ր որ ամենակարողը իւրաքանչիւր րոպէում կարող է քեզ պատժել, որպիսին ոչ մի մահկանացու չի կարող անել։ Իւր հուժկու բազկով կարող է հզօրներին խոնարհեցնել, իսկ խոնարհներին բարձրացնել (Փարաւոն, Դաւիթ, Սաւուղ, Նապօլէօն)։ Նա կարող է իւր ամենակարող բազկով անհնազանդներին ընկճել, յամառներին ջախջախել (Փարաւոն)։

**Դ.** Միենոյն բազկով, որով Նա պատժել գիտէ, գիտէ՞ և պաշտպանել, հովանաւորել։ «Միթէ ոչ իցէ կարող ձեռն տեառն փրկել» (Եսայի ժթ. 1.)։ «Ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան» (Ղուկ. ա. 37.), որովհետև «այլ այնմ որ կարողն է առաւել քան զամենայն ինչ առնել յաճախութեամբ՝ քան զոր խնդրեմք եւ իմանամք» (Թ. ա. Եփս. գ. 20)։ Դրա համար էլ վստահի՛ր Նրան։ Կարդալ Սաղմ. խէ. «Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն.... Աստուած Յակովբայ։

## 3. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆՈՒՐԵՔ Է

Ուր որ էլ դարձնելու լինինք մեր հայեացքը, ամենուրեք, գտնում ենք հետքեր աստուածային գործնէութեան։ Վերը՝ երկնից հաստատութեան վրայ՝ աստուածային զօրութեամբ շրջում են աշխարհները և արեները մի մեծ արևի շուրջ, իսկ վարը՝ երկրիս վրայ հաստատուն է ամեն ինչ ամենակարողի գործունէութեամբ։ Բևեռային ծովից էլ բարձր, ուր սառցի լեռները դէպի երկինք են բըրգացած, հասարակածի վրայ, ուր արևի ջեռուցիչ ժառագայթները անապատի աւազն է կրակ դարձնում, ինչպէս և այստեղ բարեխառն գօտիում, ուր ցորենի արտերը ծածանում են և խնձորենին, նշենին ծաղիկներով են պճնուած—դուրսը՝ բնութեան մեծ իշխանութեան մէջ, ինչպէս և ներսը՝ քո սրտի սենեակում—ամենուրեք, ամենուրեք ներգործում է Աստուած։ Ուր մինը ներգործում է, հետևաբար և ներկայ պիտի լինի։ Ըստ այսմ՝ երբ մենք ամեն տեղ Աստծու գործունէութեան և կառավարչութեան վկաներ ենք գտնում, այն ժամանակ այլապէս չենք կարող մտածել և դատել, եթէ ոչ Աստուած ամենուրեք ներկայ է, այսինքն ամենուրեք է։ Մենք մահկանացուներս այդպէս լինել չենք կարող, որովհետև մեր հոգին մարմնի



հետ կապուած է, այդ պատճառով էլ ով Երևանումն է գործում, չի կարող միևնոյն ժամանակ և Նախիջևանում գործել (անձամբ)։ Իսկ Աստծու մօտ այդ բոլորն այլապէս է։ Նրա համար չկայ այստեղ և այնտեղ, բարձր կամ ցածր, մօտիկ կամ հեռի—այո՛, Նրա համար չկայ ո՛չ ժամանակի և ո՛չ տարածութեան սահմանափակումն։ Նա ամենուրեք գործում է, ուստի և ամենուրեք ներկայ է՝ թէ աշխարհիս մէջը և թէ աշխարհիս վերջը։ Հանքագործը մտնում է երկրիս մէջ, բայց Նրա խորքը, Նրա ներքինը դեռ ոչ մի աչք չէ տեսել. Նաւավարը լողում է ծովի երեսով, ծովի անդունդը դեռ ոչ ոքի յայտնի չէ. աստղագէտը նոր աշխարհներ է յայտնագործում, բայց ոտք դնել այդ գտած աշխարհների մէջ անկարող է։ Միմիայն Աստուած—ամենուրեքը, միևնոյն ժամանակամիջոցում ամեն տեղ ներկայ է։ Այդ 'ինչպէս հնարաւոր է, հարցնում ես դու։ Այս բանն ըմբռնելու համար, օրինակ վերցնենք մեզ, թէ մեր հոգին ինչպէս է կառավարում մեր մարմինը, թէ ինչպէս նա մեզ անհասկանալի ձևով, գործում է ամեն մասներում, բոլոր անդամներում (պարզաբանել)։ Բայց այս մեկնութիւնից աւելի պարզ օրինակը սուրբ գիրքն է մեզ տալիս։ Նա ասում է. «Զի ի Նմանէ եւ Նովաւ եւ Նոյն ամենայն» (Թ. ա. Հռմ. ժա. 36), այսինքն Նրա էութիւնից, Նրա սիրոյ միջնորդութեամբ ամեն ինչ ստեղծուած է—և երկնքի փայլուն աստղերը և հովտի թաքուցեալ շուշանը, այդ բոլորի մէջ Նրա ոգու ներկայութիւնը նկատելի է։ Սրան համապատասխան է նաև գործք առաքելոցի ժէ. 28. «Զի Նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք»։ Նա հեռի չէ մեզնից, մեր շուրջն է, մենք Նրա մէջն ենք։ Մէկն ամենի մէջ, ամենը մէկի մէջ։ Ո՜րքան մխիթարական է, երբ մենք իմանում ենք, որ յաւիտենական և ամենակարող Աստուածը ամենուրեք էլ է, որ Նրա մօտ մարդս ամեն տեղ օգնութիւն և պաշտպանութիւն կարող է վայելել։ Կեանքի մէջ քանի քանի վտանգներ սպառնում են մեզ։ Ամեն րոպէ որև է դժբաղդութեան կարող ենք հանդիպել։ Մենք կարիք ունինք պաշտպանութեան—բայց ո՞վ պիտի հովանաւորէ մեզ մեր միայնութեան մէջ. ո՞վ պիտի օգնէ մեզ մութն անտառում, բաց դաշտում, անսահման ծովի վրայ։ Մենք չենք վախենում, որովհետև «Թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ, զի դու տէր ընդ իս ես, ցուպ քո եւ գաւազան Նոքա մխիթարեսցեն զիս» (Սաղմ. ձբ. 4.)։ Այն հաւատը որ մենք ունինք, թէ Աստուած ամենուրեք է՝ համոզում է մեզ մեր

շրջած տեղերը սրբութիւն ընդունել: Քո հօր, քո իշխանաւորի.... ներկայութեամբ դու չես վստահանում չար բան անել, բայց ինչպէս պիտի վստահանաս նոյնը քո կենդանի Աստծու ներկայութեամբ: Յիշի՛ր և այն որ ամենուրեք Աստուածը ամեն ինչ տեսնում է, լսում և պատժում: Նրանից փախչել չես կարող: Յովնան փախաւ ծովի վրայով, բայց այնտեղ էլ Աստուած կար, որ երևեցաւ նրան փոթորկի մէջ: Ոմանք չարագործներ այս կամ այն երկիրն են փախչում, բայց այնտեղ ևս գտնում են ամենուրեքի աչքը: Ոմանք էլ այս աշխարհից են փախչում՝ անձնասպան լինելով: Ո՛վ անմիտ, «ու՞ր երթայց ես յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց: Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, թէ իջանեմ ի դժոխս՝ եւ անդր մօտ ես: Թէ առից զթևս՛իմ ընդ առաւօտս, եւ բնակեցայց յեզերս ծովու, սակայն եւ անդ ձեռք քո առաջնորդեսցէ ինձ, եւ աջ քո ընկալցի զիս» (Սաղմ. ճլը. 7-10.), ասում է սաղմոսերգուն: Դարձեալ—«Աստուած մերձաւոր իմ ես, ասէ տէր, եւ ոչ Աստուած հեռաւոր, եթէ թաքիցէ մարդ ի թաքստեան, եւ ես ոչ տեսից զնա, ասէ տէր. միթէ զերկինս եւ զերկիր ես ո՞չ լնուցում, ասէ տէր (Երեմ. իգ. 23. 24.): Ուստի հանգիստ սրտով անցի՛ր մութն անտառի խորքով, մի՛ վախեցիր—որովհետև քո Աստուածը քեզ մօտ է: Բայց քո գործերի մէջն էլ ցո՛յց տուր, որ հաւատ ունիս դէպի Աստծու ամենուրեք լինելը: Եթէ դու շրթունքով ասում ես, թէ ես հաւատում եմ, որ Աստուած ամենուրեք է, բայց քո մտածողութեամբ և գործով նոյնը չես ապացուցանում. եթէ դու բարին գործում ես միայն աշխարհի առաջ և ոչ ծածուկ տեղումն էլ, ինչպէս պիտի հաւատանք, որ քո հաւատը ճշմարիտ է: Ձեր պտուղներից պիտի ճանաչուիք, ասում է Քրիստոս:

Կարդալ-Սաղմ. ճլը. 1—12 «Տէր փորձեցեր...... զլոյս նորա»: Սաղմ. իբ. «Տէր հովուեսցէ զիս...... ընդ երկայն աւուրս»:

## 4. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԳԷՏ Է

Մինչև հիմա Աստծու երեք յատկութիւնն ենք ուսել—յաւիտենականութիւն, ամենակարողութիւն և ամենուրեքութիւն: Այս երեքին հետևում է չորրորդը—Աստծու ամենագէտ լինելը, վասնզի երբ Աստուած ամենակարող է, ուրեմն նրանից ոչինչ չի կարող ծածուկ մնալ: Ինչպէս որ ժամագործը ժամացոյցի բոլոր մասերը գի-



տէ, այսպէս Աստուած այն ամենը պիտի գիտենայ, ինչ որ նրա ամենակարողութիւնն է գոյացրել, յառաջացրել: Ամենակարողը պէտք է և ամենագէտ լինի. Աստծու ամենագէտ լինելն էլ յառաջանում է նրա յաւիտենականութիւնից: Աստծուն յայտնի է անցեալը. նա գիտէ ներկայի և ապագայի սկզբնապատճառները և զարգացումն: Հազարաւոր տարիներ առաջ պատահածը չի կարող խուսափել նրա յիշողութիւնից, վասնզի մոռանալը պակասութիւն է, հոգւոյ թուլութեան նշան է, որ չի յարմարւում մեր ունեցած այն հաւատի հետ, թէ Աստուած անփոփոխ է և ամենակատարեալ ոգի: Յաւիտենականն ըստ այսմ և ամենագէտ պիտի լինի: Ամենագիտութիւնը վերջապէս հետևանք է ամենուրեքութեան, որովհետև ով ամեն տեղ ներկայ է և ամեն տեղի պատահածները տեսնում և լսում է. ով ի հետեւանս իւր ամենուրեքութեան՝ հէնց ինքը հոգւոյ թագուցեալ գաղտնիքները և իրերի վերջնական հիմքը գիտէ, չի կարող սահմանափակ լինել այս ու այն բանում, անկատար լինել: Սրա համար ես մենք ասում ենք—Աստուած ամենագէտ է, այսինքն նա գիտէ և տեսնում է ամեն ինչ: Նա ճանաչում է աւազի հատիկն էլ, երկնքի աստղերն էլ, փոշու միջի որդը և երկրիս բոլոր ազգերին: Մարդոց մտածմունքը, խօսքերը և գործերը ծածուկ չեն նրանից, բաց են նրա առաջ՝ բաց արած գրքի նման. այն՝ ինչ որ անգիտակցօրէն և լռելեայն կեանք ունի մարդկային հոգւոյ մէջ, նրա ամենագէտ հայեացքից չի թաքցւում: «Մարդ հայի յերեսս եւ Աստուած հայի ի սիրտս») (I. Թագ. ժզ. 7.): «Չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա, այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա, զորմէ մեր բանքս են» (Թ. առ. Եբր. դ. 13.): «Զանդունդս եւ զսիրտս քննեաց, եւ զխորագիտութիւն նորա ի միտ առ: Քանզի ծանեաւ բարձրեալն զամենայն խիղճ մտաց, եւ հայեցաւ ի նշանն յաւիտենից, պատմելով զանցեալն եւ որ յետոյ լինելոց է, եւ յայտնէ զհետս գաղտնեացն: Ոչ զանց ի նմանէ ամենայն մտածողութիւն, եւ ոչ թաքեաւ ի նմանէ եւ ոչ մի բան (Սիրաք խբ. 18—21):

Ո՛րքան փոքր է մարդկային գիտութիւնը՝ վերաբերութեամբ ամենագէտ Աստծու, որն ամեն բան գիտէ, ճանաչում է: Այո՛, մարդս շատ բան գիտէ անցեալից—կամ գրքերի մէջ է կարդացել, կամ ականատեսներն են պատմել, կամ ուրիշ հանգամանքներ՝ որպէս վկայ ծառայում են մեզ—իսկ ամբողջ անցեալը միայն յաւիտենական Աստծուն յայտնի է: Մարդս ներկայից ևս շատ բան գիտէ: Ինչ որ շըր-

ջակայքում խօսւում է, ականջով լսում է. ինչ որ փոքր ինչ հեռւում է կատարւում, նա տեսնում է: Բայց ինչ որ աւելի հեռու տեղում է կատարւում, թէ նրանք ինչ են մտածում, այդ մասին ոչինչ չգիտէ: Բայց ինչ գիտէ մարդս ապագայի մասին:—Ապագան նրա համար կողպած գիրք է, որի պարունակութիւնը միայն Աստուած գիտէ. Աստուած միայն ամենագէտ է, նա միայն գիտէ անցեալը, ներկան և ապառնին: Գիտնական մարդիկ, որպիսիք են Արիստոտէլ, Նիւտոն, Ալ. Հումբոլդ.... մեծ ծառայութիւններ են արել—նրանք թագուցեալը, գաղտնին բաց են արել և աշխարհս հետազօտել են: Բայց նրանք բոլորն էլ միաբերան խոստովանել են, որ մարդս շատ բան պիտի գիտենայ, որպէսզի համոզուի, որ ոչինչ չգիտէ: Մտածող գլուխներից մինը, որ գրել է «Իմաստասիրութիւն վասն աշխարհի», ասում է. «Ամենից շատ իմացող մարդն էլ լաւ կանէր, որ չիմանար այն, ինչ որ գիտէ, ընդհակառակն՝ իմանար այն, ինչ որ չգիտէ:: Մեր ամենալաւ գիտնալն այն կլինի, որ մենք ոչինչ չգիտենանք. «Երանի աղքատաց հոգւով......» (Մտթ. ե. 3.): Աստղագէտների մեծը՝ Նիւտոն հեզ սրտով խոստովանեց. «Ես չգիտեմ, թէ աշխարհն ինչ կասէ իմ աշխատանքի մասին, ինձ թւում է, որ իմ արածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի երեխայի խաղ, որ ծովի ափում խաղում է և երբեմն խիճ է գտնում, որ փոքր ինչ կոշտ է. երբեմն՝ խխնջի պատեան, որ փոքր աւելի է փայլում, իսկ ճշմարտութեան ովկիանոսը առանց քննութեան տարածւում է նրա առաջ»: Այսպէս են մտածում մեծ մտածողները՝ քննասէրները, գիտնականները: Բայց ինչ է նրանց քննածը: Այն՝ ինչ որ Աստուծուն շատ վաղուց յայտնի էր աշխարհի մասին—«Որ առնէ զայս ամենայն, յայտնի է ի յաւիտեանցն» (Գործք առ. ժե. 18.)-նրանք քննում են ճանապարհները, որոնք Աստուած աշխարհի համար շատ վաղ է որոշել. քննում են օրէնքները՝ որ Աստուած ամեն մի մարմնի մէջ դրել է. քննում են կենսական ոյժերը՝ որոնցով Աստուած ամեն ինչ շարժողութեան մէջ է դրել. քննում են արարածներին՝ որոնց Աստուած կեանք և զարմանալի կազմակերպութիւն է շնորհել: Մարդկային ամբողջ գիտութիւնը, Աստծու գիտութեան համեմատութեամբ, մի հիւլէ է: Աշխարհների ամենակարող վարպետը միայն՝ ամենագէտ է:

Իսկ դու, ով մարդ, ամեն տեղ և ամեն ժամանակ մտածիր ամենագէտ Աստծու վրայ: Մի՛ կարծիր, որովհետև դու նրան չես



տեսնում, նա էլ քեզ չի տեսնում: Մի՛ կարծիր, որովհետև դու նրա մասին ոչին չգիտես, թէ նա էլ քո՛ մասին ոչինչ չգիտէ: Մի՛ կարծի՛ր, որովհետև դու նրա մասին չես հոգում, ուրեմն նա էլ քո մասին չի հոգում: Սխալ ես, հաւատա՛, որ քո Աստուածը ճանաչում է քեզ և ամեն ինչ գիտէ. նա քեզ էլ է ճանաչում: Նա գիտէ, թէ դու ինչ ես մտածում, ինչ ես խօսում, ինչ ես գործում. արդէն սաղմոսերգուն ասում է. «Տէ՛ր, փորձեցեր զիս եւ ծանեար զիս, դու ծանեար զնստիլ իմ եւ զյառնելն իմ: Ի միտ առեր զխորհուրդս իմ ի հեռաստանէ, զշաւիղս իմ եւ զվիճակ իմ դու քններ, եւ զամենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն ի լեզուի իմում» (Սաղ. ճլը. 2—4): Լաւ յիշի՛ր, որ Աստուած գիտէ մեր սրտի ծածուկ անկիւնում մտածածն էլ, մեր թագուն գործերն էլ. ոչ կեղծաւորութիւնը, ոչ «տէր, տէր» ասելը նշանակութիւն չունի, որովհետև տէր «ճանաչէ զիւրսն»: Ուր որ դու նրան աղօթում ես—նա քո սիրտն է նայում այնտեղ, որովհետև «զի հայր ձեր գիտէ զինչ պիտոյ է ձեզ» (Մտթ. զ. 8.): Ուր որ դու անմեղ կերպով դատապարտւում ես, նա գիտէ. ուր դու արտասուք ես թափում, նրա առաջն ես արտասւում—նա չի մոռանայ քեզ: Ուր որ դու փորձութեան րոպէում Յովսէփի հետն ես խօսում «զիարդ առնիցեմ զբանդ զայդ չար եւ զմեղանչիցեմ առաջի Աստուծոյ», յայտնի է նրան. նա ամեն ինչ տեսնում է, որովհետև «յերկնից նայեցաւ տէր յամենայն որդիս մարդկան, ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի» (Սաղմ. լբ. 13:) Դու էլ նրան լսի՛ր: Երբ ամենագէտը քեզ՝ որ ոչինչ չգիտես, կասէ, լսի՛ր հեզութեամբ. լսի՛ր նրա ձայնին և ըստ նրա կամաց վարուի՛ր:

## 5. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԻՄԱՍՏ Է

Այն բանին, ինչին որ մարդ իւր խօսքով կամ գործով ձգտում և հասնում է, ասում են նպատակ, դիտաւորութիւն: Օրինակի համար դպրոց յաճախող երեխաները, եկեղեցի գնացող հաւատաւորները, արտ վարող գիւղացին, առագաստ պարզող նաւաստին... բոլորն էլ իրանց որոշ նպատակն ունին (ո՞րպիսի): Որպէսզի նպատակի հասնենք, դրա համար հարկաւոր է միջոցներ գործ դնել: Ինչ միջոց է գործ դնում ձկնորսը ձուկ որսալու համար, գիւղացին՝ բերք ստանալու համար, հիւանդը՝ առողջութիւն ձեռք բերելու համար

կայլն կայլն։ Երբ մենք գործ դրած միջոցներով նպատակին հասնում ենք, այն ժամանակ այդ տեսակ միջոցները նպատակայարմար են կոչւում, իսկ եթէ հակառակն է՝ աննպատակայարմար ենք ասում։ Այն մարդը, որ նպատակին հասնելու համար միշտ յարմար միջոցներ է ընտրում, ասում ենք խելացի, հանճարեղ։ Օրինակի համար՝ Նոյը խելօք վարուեց, որ տապանից դուրս գալուց առաջ՝ իմանալու թէ ջուրը ցամաքել է, թռչուններ արձակեց։ Գեդէօնն էլ խելացի վարուեց, երբ մադիամացւոց դէմ ունեցած պատերազմում՝ իւր զինուորներին հրամայեց, որ սափորները միասին կոտրեն և միասին աղաղակեն։ Խելացի, խորագէտ վարուող այն անձին ասացինք, որ ընտրած միջոցներով նպատակին հասաւ։ Բայց թէ նրա նպատակը որքան բարոյական է կամ անբարոյական, այդ մասին հարց չկար, դրա համար ևս գողին էլ կարող ենք խելացի անուանել, որ շաբաթներով շարունակ նախագծեր է կազմում, թէ ինչպէս կողոպտէ հարևանի տունը։ Դրա համար խելացիութիւնը պիտի զանազանենք իմաստութիւնից։ Իմաստունը նա է, որի նպատակը բարոյական է, բարի է, որին ձեռք բերելու համար բարոյական միջոց է գործ դրում։ Ստախօսը, որ իւր սուտ խօսելով աշխատում է պատժից ազատուել, կարող է խելացի լինել, բայց ոչ իմաստուն, որովհետև նա պէտք է գիտենայ, որ վատ բանը բարի վերջ չի ունենայ, որ մարդս չար գործերից բարի պտուղներ երբէք չի կարող հնձել։ Իմաստութեան ամենաբարձր աստիճանը մենք գտնում ենք Աստծու մօտ, որ բարոյական ամենալաւ նպատակի համար, միշտ՝ բարոյական ամենալաւ միջոցն է ընտրում, ուստի դրա համար էլ նրան ասում ենք ամենիմաստ։

Սուրբ գիրքը մեր ուշադրութիւնն է դարձնում աստուածային իմաստութեան վրայ։

Ա. Երբ աշխարհն ստեղծեց և կարգադրեց—«Եւ ետես Աստուած զամենայն զոր արար, եւ ահա բարի են յոյժ» (I. Մովս. ա. 31.)։ Երևակայի՛ր քեզ, որ կանգնած ես մի նոր կառուցանելիք շինութեան մօտ և նայում ես, թէ հիմքն ինչպէս են փորում. ինչպէս անկեան քարերը մօտ բերում, տաշում են, փայտեղէնն ինչպէս կտրատում, տաշում և իրար վրայ դարսում...... այս բոլորը քո անծանօթ աչքին այնպէս է երևում՝ կարծես խառնակութիւն լինի. դու չես կարողանում ըմբռնել, թէ այն քարն ինչու անպատճառ այսպէս և ոչ այն ձևով են տաշում, այս կամ այն փայտը



ինչ տեղի համար է....։ Դու չես կարող երևակայել քեզ թէ այդ ցիր ու ցան կտորներն ինչպէս մի ամբողջութիւն պիտի կազմեն վերջը։ Վերջապէս սկսւում է շինութիւնը—քարը քարի վրայ են դնում, փայտերն իրանց տեղ դասաւորում և ահա կարճ ժամանակւայ մէջ տունը քո առաջն է կանգնած։ Հիացքանչացած ես դու այդ տան գեղեցկութեան և կանոնաւորութեան վրայ և ինքդ քեզ ասում ես—սրա շինող վարպետն իմաստուն մարդ է։ Եւ իրօք, մարդոց մէջ շատ ընդունակ մարդիկ կան, որոնք ամենայն ճշտութեամբ նախագիծ են կազմում, ոչինչ սխալ չեն գործում։ Այն՝ ինչ որ փոքր առաջ հոգու մէջ թագուցած և թղթի վրայ որպէս նախագիծ գծագրուած էր, այժմ իրականութեան մէջ գոյութիւն ունի մարդոց աչքի առաջ—ամբողջ աշխարհը կխոստովանի, որ այն մարդը մեծ բանականութիւն ունի և իմաստուն խելքի տէր է։ Բայց ինչ բան է մարդու ձեռքով կառուցած մի շինութիւն (լինի դա ամենամեծը, ամենագեղեցիկը)—վերաբերութեամբ աշխարհիս շինութեան, որի վարպետն ամենից մեծն է։ Ի՞նչ բան է մի ընդունակ արհեստաւորի իմաստութիւնը, երբ սրան համեմատում ենք այն իմաստութեան հետ՝ որ անկշռելի տիեզերքին՝ կանխանկար նախագծով կեանք պարգևեց ոչնչից։ Այս անհուն տարածութեան մէջ լողում են միլլիոնաւոր աստղեր, բայց նրանցից և ոչ մինը մի վարկեան անգամ ո՛չ ուշ և ո՛չ վաղ է գալիս. ոչ մինը միւսին չի խանգարում իւր գնացած ճանապարհով և ամեն մինը հաստատ և կանոնաւոր կերպով անցնում են իմաստուն արարչից որոշած ուղին։ Ինչպէս վերը՝ երկնքում, այնպէս էլ վարը՝ երկրիս վրայ ամեն ինչ՝ անգամ ամենափոքրը, նախատեսել է և վայելուչ ձևով կարգադրել։ Ոչինչ մոռացուած չէ, ոչինչ աւելորդ չէ։ Ամենուրեք տեսնում ենք իմաստութիւն, որ ամեն ինչ ճանաչում է և ամենայն ինչ հասկանում։ Եթէ, օրինակի համար, երկրի առանցքը ուղղահայեաց կանգնած լինէր իւր ճանապարհի վրայ, այն ժամանակ մենք զրկուած կլինէինք տարւայ եղանակներից, իսկ եթէ առանցքը դաշտավայրի մէջ կատարէր իւր ընթացքը, երկրագնտիս կէսը յաւիտենական խաւարի դատապարտուած կլինէր։ Եւ կամ—մտածի՛ր թէ ինչ հետևանք կունենար, եթէ Աստուած ջրի համար էլ միևնոյն խտացման օրէնքը սահմանած լինէր՝ ինչ որ միւս իրերի համար։ Յայտնի է որ ջուրը $+4^{0}$-ի ամենամեծ խտութեանն է հասնում, այնպէս որ ինչքան էլ սառեցնելու լինինք, խտութիւնը նոյնն է մնում։ Եթէ այս բացառութիւնը

մուացուած լինէր, այն ժամանակ ձմեռ ժամանակը բոլոր աղբիւրների, գետերի, առուների, լճերի, ծովերի ջրերը մինչև յատակը սառուց կլինէր—մեր գեղեցիկ երկրագունդը սառցի կոյտ կլինէր և հետևաբար բոյսերին և կենդանիներին անհնար կլինէր կեանք վարել: Ինչ որ աստուածային իմաստութիւնը ցոյց է տալիս անօրգանական մարմինների վերաբերութեամբ, նոյնն է օրգանականի համար: Ո՜րքան նպատակայարմար է կենդանիների կազմուածքը—ձկան նաւաձև մարմինը ընդունակ է լողալու. թռչնի՝ օդը կտրելու յարմար կազմը—ամենի համար էլ այսպէս խելացի հոգացուած է (կլիմայի համաձայն էլ կերակուր է հոգացել ծծկերների համար): Ինչպէս իմաստուն կերպով է սահմանել թթուածնի փոխանակութիւնը՝ բոյսերի և կենդանեաց վերաբերութեամբ: Երկրագնտի վրայ շարունակ գնում և գալիս են մարդիկ—3,000-ից աւելի ծնունդ է լինում իւրաքանչիւր ժամում և գրեթէ նոյնքան էլ մահ—բայց սերունդները միշտ նոյն հաւասար համեմատութեամբ են մնում: Ի՞նչ պիտի անէինք մենք՝ ողորմելի մարդիկս, որ երբեմն մեզ շատ իմաստուն ենք երևակայում, եթէ մի բարձրագոյն իմաստութիւն չհոգար մեզ համար. եթէ ամենիմաստ Աստուածը ամեն ինչ այնպէս կարգադրած չլինէր, ինչպէս հարկաւորն է—«Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով» (Առակք. Սող. գ. 19.):

Աստուածային ամենաիմաստութիւնը ճանաչելու համար կարիք չկայ, որ մեր շուրջը, մեր վերևը նայենք, հարկաւոր է՝

Բ. մեր անձը մի լաւ զննութեան ենթարկել—մեր մարմինը և մեր հոգին կենդանի վկաներ են աստուածային իմաստութեան, ուրիշ վկայութիւնների դիմելու կարիք չկայ: Ո՜րքան խելացի կերպով է մարդուս աչքը տեղաւորուած. ինչ չնորհ տեսա, որ չկայ նրա մէջ: Ի՞նչեր չգիտեն ականջը, թոքերը, սիրտը....: Ի՞նչպէս է կազմւում արիւնը, ինչպիսի շրջան է առնում. կաշին ինչպէս պաշտպանում է մեզ. ձայնի կազմութիւնը, մազերի կազմը, նեարդների նշանակութիւնը և և նրանց կազմակերպութիւնը..... այս բոլորն այնքան իմաստուն ձևով է կարգաւորած, որ մենք ուշադրաւ կանգնած ենք մնում աստուածային իմաստութեան առաջ: Սրտի խոռոչի մի փակը՝ կլապանը բաւական է որ խանգարուի, որպէսզի ճանաչենք մարդկային կազմուածքի հրաշքով կազմուած լինելը. որպէսզի զգանք, թէ մի մասը միւսի հետ ինչ ներքին կապ ունի: Եթէ մենք ուշի ուշով մտածենք մեր մարմնի նպատակայարմար կազմուածքի վրայ, ինչպէս



և մեր հոգու հրաշաստեղծ էութեան վրայ, այն ժամանակ իւրաքանչիւր ոք մեզնից տոգորուած կլինի սաղմոսերգուի հետ միատեսակ զգալու. «Խոստովան եղէց քեզ տէր», զի ահեղ եւ սքանչելի ես. սքանչելի են գործք քո, եւ անձն իմ սիրեաց յոյժ»: (Սաղմ. ճլը. 14.): «Զկեանս եւ ողորմութիւն եդեր ի վերայ իմ, այցելութիւն քո պահեաց զոգի իմ (Յովբ. ժ. 12.):

Գ. Ինչպիսի հրաշալի ձևով՝ ինչպէս անհատներին, նոյնպէս և ազգերին, առաջնորդում է ամենիմաստ Աստուածը դէպ իրանց կոչումը: Ո՞վ կարող էր երևակայել, որ Յովսէփը մի երազի պատճառով պիտի անբաղդանայ և դարձեալ մի այլ երազով բաղդի գագաթնակէտին հասնէր: Ամենայն իրաւամբ նա կարող էր եղբայրներին ասել. «Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն եւ Աստուած խորհեցաւ վասն իմ ի բարութիւն» (I. Մովս. ծ. 20): Ո՞վ կարող էր գուշակել, որ Մովսէսը, որին մայրը Նեղոսի ափը նետեց, մի օր իւր ազգի փրկիչը պիտի լինի և թէ՝ նոյն ինքն այս ժողովրդի ոխերիմ թշնամի Փարաւոնը, նոյն փրկչին ինքը պիտի օգնէր, ինքը իւր պալատի մէջ պիտի պատրաստէր: Ո՞վ կմտածէր, որ խաչը, որի վրայ Յիսուս անարգ մահ ստացաւ, փրկութեան նշան և ամենի համար օրհնութիւն պիտի լինի: Այո՛, իրաւունք ունի, երբ նա ասում է. «Ո՜վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեանն Աստուծոյ, ո՛րպէս աւանց քննելոյ են դատաստանք նորա, եւ աւանց զննելոյ են ճանապարհք նորա» (Թ. ա. Հռմ. ժա. 33): Դարձեալ—«Զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ ոչ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր, ասէ տէր: Այլ որքան հեռի են երկինք յերկրէ, այնպէս եւ ճանապարհք իմ ի ճանապարհաց ձերոց, եւ խորհուրդք իմ ի խորհրդոց ձերոց» (Եսայի ծե. 8):

Այսպէս մենք տեսանք, որ արարիչը ամբողջ տիեզերքը կանոնաւոր կերպով, լաւ մտածած նախագծով է կարգաւորել. մենք տեսանք որ իմաստուն Աստուածը, ամենուրեք և ամեն ժամանակ ամենալաւ նպատակներ ունի և այդ նպատակներին ամենալաւ միջոցներով է հասնում—նա մեր ճակատագիրը ղեկավարողն է:

Բայց ինչ է հետևում այստեղից մեզ համար: Եթէ դու մի արուեստաւորի գնահատում ես նրա կատարած գործի համար, նրանից և՛ս աւելի յարգանք, երկիւղածութիւն ցոյց տուր ամենիմաստ արարչին—«Երկիցէ ի տեառնէ ամենայն երկիր, եւ ի նմանէ դողասցեն բնակիչք աշխարհի» (Սաղմ. լբ. 8): Եթէ դու մի նշանաւոր ճարտարա-

պետի, որի կազմած նախագծերը դու չես կարող քննել, պիտի դատես, լաւ կանես դրական ոչինչ չասես, այլ այդքանով միայն բաւականանաս, որ նա քեզնից լաւ է հասկանում, նոյն ուղին ընդունիր և երբէք մի տրտնջա, երբ քեզ անհասկանալի է թւում արարչի ընթացքը («Յայտնեա առաջի տեառն զճանապարհս քո»): Խոստովանիր որ ամենիմաստ Աստուածը՝ բարի Աստուած էլ է, որ նա չար մտածել չգիտէ, որ իւր արարածների համար իմաստնաբար և բարեկամաբար է հոգում: Դրա համար Նրան վստահացիր քո անձը ուրախութեան և տրտմութեան ժամերում, երջանկութեան և ապերջանկութեան օրերում: Եւ վերջապէս Աստծու իմաստութեան հետեւող, նմանող եղիր. բարոյական ամենալաւ նպատակի համար բարոյական ամենալաւ միջոցներ գործ դիր. «Տեսէք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի իբրեւ անիմաստք, այլ իբրեւ իմաստունք» (Թ. ա. Եփս. ե. 15):

## 6. ԱՍՏՈՒԱԾ ՍՈՒՐԲ Է ԵՒ ԱՐԴԱՐ

Եթէ ամենիմաստ Աստուածը բարոյական ամենալաւ նպատակին հասնելու համար գործ է դնում բարոյական ամենալաւ միջոց, այստեղից պարզ հետեւողութիւն է, որ այդ Աստուածը բարոյական բարի պիտի լինի: Աստուածային ամենիմաստութիւնը առանց բարոյական բարու երեւակայելը դժուար է: Արդէն մարդկային յարաբերութեան շրջանում նկատելի է երկուսի ներքին կապը, որովհետև երբ նա, որպէս հայր, իւր որդկերանցից պահանջում է արդարութիւն, գթութիւն, ողորմածութիւն, ազնուութիւն, այս բանը պարզ նշան է, որ նա ինքն էլ սիրող է այդ առաքինութիւնները և եթէ նա իւր որդկերանցից պահանջում է, որ նրանք խորշեն նախանձից, ստախօսութիւնից, չարախնդացութիւնից, անարդարութիւնից, մենք ստիպուած ենք ընդունելու, որ նա այդ մոլութիւններն ատում է: Ոչ ոք չի կարող այն բարոյական բարձրութեանը հասնել, ինչպէս Աստուած: «Մի է բարի» (Մտթ. ժթ. 17) և դա Աստուածն է: Սուրբ գրքի մէջ յիշատակուած երեք անձնաւորութիւնները կարող են հաստատել այս միտքը—դոքա բոլորն էլ բարի կամք են ունեցել բարին գործելու համար՝ չնայելով որ չարը նրանց տիրապետած է եղել: Սկսենք Պօղոսից: Պօղոսի հայեացքով՝ ինքն Աստծուն մեծ ծառայութիւն արած կլինէր, եթէ քրիստոնեաներին



ամենախիստ ձեւով հալածէր—նրա բանականութիւնը սխալացրեց իրան: Երկրորդ անձը Պետրոսն է, որ ոգևորուած ժամանակ իւր վարդապետին (Մտթ. իզ 35) հաստատ ապահովութիւն տուաւ ասելով. «Թէեւ մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց»: Բայց չնայելով այս մեծամեծ խոստման, վտանգի հէնց առաջին րոպէին, մոռացաւ իւր նախաբանը—սրան էլ իւր զգացումը խաբեց: Յիշենք վերջապէս աւետարանի հարուստ երիտասարդին (Մտթ. ժթ. 16...), որ ամենայն հաւատարմութեամբ ցանկանում էր յաւիտենական կեանք ձեռք բերել. սրան շատ ծանր թուաց, երբ փրկիչը պահանջեց նրանից.... «Երթ վաճառեա զինչս քո... եւ եկ զկնի իմ»—նրա կամքը թոյլ էր: Այս տեսակ բաներ Աստծու մօտ տեղի չեն կարող ունենալ: Աստծու բանականութիւնն ամենակատարեալ է և դրա համար էլ երբէք չի խաբւում այս կամ այն վարմանց մէջ: Նրա զգացումն անփոփոխ է, ուստի և ոչ մի ձեւափոխութեան ենթակայ չէ: Նրա կամքը յաւիտեանս յաւիտենից նոյնն է, դրա համար էլ միշտ բարին է սիրում և խորշում է չարից ամենուրեք: Այս պատճառով էլ մենք իրաւունք ունինք Աստծուն բարոյապէս ամենից բարձր ընդունել և այս բարոյական ամենաբարձր աստիճանը սուրբ անունով դրոշմել: Որովհետև Աստուած սուրբ է, դրա համար էլ հաճելի է Նրան այն՝ ինչ որ բարոյապէս բարի է և ընդհակառակն՝ տհաճ է նա դէպի այն ամենը, ինչ որ բարոյապէս չար է: Ուրիշ խօսքով ասենք—նա միշտ և հանապազ սիրում է բարին և խորշում է չարից:

Երբ նկատում ենք բարի մարդու մէջ բարոյական ձգտումն, մեր մէջ բնականապէս յարգանք է ծագում դէպի նրա անձնաւորութիւնը: Որքան աւելի ես հարկադրուած պիտի զգանք մեզ յարգելու սուրբ Աստծուն, որի համար մարգարէն յայտնում է՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց» (Եսայի զ. 3): Այս յարգանքը՝ երկիւղածութիւնը, որ մենք ունինք դէպի Աստուած, որ ոչ անօրէնութիւն և ոչ չարութիւն է սիրում (Սաղմ. ե. 5), զգացման աստիճանի վրայ չպիտի մնայ, այլ նա պիտի դառնայ մեզ համար մի տեսակ խթան՝ Աստծու նման դառնալու—«Այլ ըստ սրբոյն, որ կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք» (I. Թ. Պետ. ա. 15), «Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ տէր Աստուած ձեր» (Մովս. ժթ. 2): Մենք մարդիկս երբէք չենք կարող հասնել բարոյական կատարելութեան ամենաբարձր աստիճանին, որովհետև մեր

առաքինութիւնը կարիք ունի ամեն ժամանակ պատերազմելու յանցանքի հետ և դրա համար էլ թերի կցկտուր է մնում: Չնայելով որ մենք մեր նպատակին չենք հասնում, բայց և այնպէս չպիտի դադարենք միշտ և միշտ դէպի նոյնը ձգտելու: Ի հարկէ Աստծու չափ, նրան հաւասար սուրբ լինել չենք կարող, բայց նրան նմանիլ միշտ կարող ենք: Դրա համար էլ նա խղճմտանքն է դրել մեր կրծքի մէջ, որ մեզ ամեն ժամանակ ասում է, թէ ինչն է բարին և ինչն է չարը: Աստծու այս ձայնը մեր մէջ կենդանի վկայ է Աստծու սրբութեան: Երբ Աստուած քո խաղաղութեան ժամերում քեզ հետ խօսելու լինի՝ խրատելով, թէ յորդորելով, երկիւղ տալով, թէ մխիթարելով, դու Սամուէլին նմանի՛ր, որ այդ տեսակ րոպէներում ասում էր. «Ահաւասիկ եմ, զի՞ կոչեցեր զիս» (I. Թագ. գ. 8.):

Աստծու սրբութեան հետ մի ուրիշ բան ևս ներքին կապ ունի: Դեռ կատարելութեան չհասած՝ բայց դէպի սրբութեան ձգտող մարդը անտարբեր չէ դէպի չարը կամ բարին, այլ ինչքան նրա ոյժերը պատում են, ինչ միջոցներ որ կան նրա ձեռքում, գործ է դնում, որպէսզի բարին յաջողեցնէ, իսկ չարը կործանէ: Մի՞թէ այս միևնոյնը Աստուած ևս չպիտի ունենայ՝ աւելի մեծ ձևով, Աստուած, որ սիրում է բարին և խորշում է չարութիւնից: Մի՞թէ նրա համար միևնոյն պիտի լինէր, թէ մարդոյ որդիքը բարին են սիրում թէ չարը. մի՞թէ ամենակարողը հանդիստ հոգւով պիտի նկատէր, երբ չարութեան աղաղակը երկինք համբառնար և բարոյականութեան յաւիտենական օրէնքը ոտնակոխ անուէր: Ո՛չ, սուրբ Աստուածը՝ է նաև ամենակարող Աստուած, և ոչ միայն ամենակարող, այլև արդար, որ ամեն ժամանակ արդար է դատում—բարուն վարձատրում է, իսկ չարին պատժում—«Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց» (Թ. առ. Հռմ. բ. 6.):

Թէ Աստուած արդարադատ է, այդ կարելի է առօրեայ փորձերից նկատել:—Ով չափաւոր չէ, հիւանդանում է, ով վատնում է, աղքատանում է: Չափաւորն ընդհակառակն՝ առողջ է, իսկ խնայողը՝ յարգանք է վայելում: Այս միևնոյնը կեանքի այլ հանգամանքներում ևս նոյնն է: Ով ուրիշին ատում է, մարդիկ չեն սիրում նրան. ով իւր նմանին բարի է ցանկանում, ամենին էլ սիրելի է: Այստեղից ուրեմն պարզ է, որ Աստուած որոշել է բարութիւնից անբաժան լինի բարի հետևանքը (վարձատրութիւն), ինչպէս և չարու-



թիւնից՝ չար հետևանքը: Ինչպէս որ անհատի անձնաւորութեան, նոյնպէս և ազգերի կեանքի մէջ նկատելի է Աստծու արդարադատութիւնը: Հերիք է յիշենք Բաբելոնի գերութիւնը, Երուսաղէմի կործանումը, Նապօլէոնի արշաւանքը...... մեր ասածը պարզելու համար: Ամենուրեք ևս աշխարհիս պատմութիւնը աշխարհիս դատաստանն է—«արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք» (Առակք ժդ. 34.): Վարձատրութեան և պատժի ձևն ու եղանակն ի հարկէ շատ զանազան են: Յաճախ Աստուած վարձատրում կամ պատժում է արտաքին ձևով, յայտնի կերպով—տեսնել կարելի է: Անառակ որդուն չքաւորութեամբ պատժեց. Յերոբովամին՝ տկարութեամբ. Անանիային և Սափիրային՝ մահուամբ: Յովսէփի հաւատարմութիւնը բարձրացնելով վարձատրեց, իսկ Յովբի համբերութիւնը՝ կորցրած հարստութեան վերստին ընծայմամբ: Երբ Աստուած արտաքին ձևով չի վարձատրում կամ պատժում է մինին, բայց և այնպէս իւրաքանչիւրը ներքին ձևով զգում է, թէ ինչի արժանի էր: Խղճի անդորրութիւնը բարեպաշտ անձի ամենամեծ վարձատրութիւնն է, իսկ Աստծու ձայնի յաւիտենական նախատինքը ամենազարհուրելի տանջանքն է չար մարդոց համար: Աստուած ոչ ամեն ժամանակ տեղն ու տեղն է պատժում, վասն զի նա երկայնամիտ է (ջրհեղեղ), նա իւր բարութեամբ ցանկանում է մեզ դէպի ապաշխարութիւն առաջնորդել—«Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա, եւ զներելոյն եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես. չգիտիցե՞ս զի քաղցրութիւն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ» (Թ. առ. Հռմ. բ. 4.): Շատերին էլ երկրիս վրայ չի պատժում կամ վարձատրում, այլ նրա երկայնամտութիւնը երբեմն մեր երկրաւոր կեանքից դէնն է անցնում (հարստի և աղքատ Ղազարոսի առակը: (Տես «Յանցանքի հետևանքները» հատուածը)«

Ուստի հաստատ հաւատ ունեցի՛ր դէպի Աստծու արդարադատութիւնը և մի՛ գայթակղուիր, երբ տեսնես ոմանց անաստուածների երևութական բաղդաւորութիւնը և ոմանց բարեպաշտների, ըստ երևոյթին ապերջանկութիւնը: Լսի՛ր քո ներքին ձայնին, ամեն ինչ Աստծու դատաստանին թո՛ղ: Երբ ոչ մի աշխարհային իշխանութիւն քեզ չէ կարողանում պատժել, ընդմիշտ պիտի համոզուած լինիս, որ քո արարքը ծածուկ չէ երկնաւոր դատաւորից—նա ամեն ինչ տեսնում, լսում և պատժում է: Փորձութեան րոպէներում թող քեզ համար այս տողերը դաս լինի—«Եւ որդիքն

արքայութեան նշյեն ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճտել ատամանց» (Մատթ. ը. 12.)։ Բայց և այնպէս թող այս էլ անմեղների մ խ ի թ ա ր ո ւ թ ի ւ ն ը լինի—«Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. ե. 12.)։ Արդարադատ Աստուածը միայն կարող է արդար դատաստան անել և ոչ թէ դու՝ ով կարճատես հողածին։ Մեր պարտաւորութիւնն այն է, որ լռութեամբ և աղօթելով յարգենք նրա արդարադատութեան ճանապարհները և նրա ցոյց տուած շաւղովն ընթանանք։ Երանի՜ այն որդիներին, որոնք բարին են գործում առանց վարձատրութեան ակնկալութեան և չարից հեռանում են՝ առանց ի նկատի առնելու վերահաս պատիժը։ Այդպիսիք ղեկավարւում են միայն երկիւղածութեան, սիրոյ և երախտագիտութեան զգացմունքից դրդած։ Լաւ որդին հօր ասածները ոչ թէ նրա համար պիտի կատարէ, որ չպատժուի, այլ՝ պիտի հօր կամքը յարգէ, կատարէ, որովհետև ս ի ր ո ւ մ է նրան։

## 7. ԱՍՏՈՒԱԾ ՃՇՄԱՐԻՏ Է

Աստծու սրբութեան և արդարութեան հետ սերտ կապ ունի մի ուրիշ յատկութիւն, որ ճ շ մ ա ր ի տ բառով կարելի է արտայայտել։ Երբ մենք մի բարոյական անձն ենք երևակայում, իսկոյն դրա հետ էլ՝ անբաժան նրանից, ընդունում ենք, որ նա՝ թէ խօսքով և թէ գործով անկեղծ է, ճշմարիտ է։ Այսպէս էլ աստուածային սրբութիւնն աներևակայելի է՝ եթէ դրան պակասում է մտածողութեան, խօսքի և գործի բարոյական ներդաշնակութիւնը։

Սուրբ գիրքն Աստծու այս յատկութիւնը նրա խ օ ս ք ե ր ի ց և խ ո ս տ ո ւ մ ն ե ր ի ց է առնում, օրօրինակ Սաղմ. լբ. 4 ասում է. «Ուղիղ (ճշմարիտ) են պատգամք Տեառն, եւ ամենայն գործք նորա հաւատարիմ են» և կամ IV. Մովս. իգ. 19. «Ոչ իբրեւ զմարդ է Աստուած ի զարթնուլ, եւ ոչ իբրեւ զորդի մարդոյ ի սպառնալ. դու ասացեր թէ ոչ արասցէ, խօսեսցի եւ ոչ կացուսցէ»։ Աստուած մարդ չէ, որ սուտ խօսէ, ոչ էլ մարդու որդի, որ զղջանայ. միթէ կասէ և չի անի, կամ կխօսէ և խօսքը չի պահի։ Սուրբ գրքի մէջ հանդիպում է երբեմն ճշմարիտ խօսքի փոխարէն հ ա ւ ա տ ա ր ի մ բառը։ Երբ մարդու միտք խօսում է այնպէս՝ ինչպէս որ մտածում է և շարունակ այնպէս է գործում, ինչպէս էլ խօսում է, այդպիսի մարդու խօսքին հաւատալ կարելի է, նա հ ա ւ ա տ ա ր ի մ ոմն է—նրա



խօսքը, գործքը հաւատարմութիւն ունի։ Օրօրինակ սովորական կեանքի մէջ յաճախ խօսք է լինում հաւատարիմ բարեկամութեան, հաւատարիմ սիրոյ մասին։ Երբ մենք Աստծու սէրը հաւատարիմ բառով ենք յիշում, սրանով կամենում ենք ցոյց տալ, որ կարելի է վստահել դէպի նրա տուած խոստումն. որ նա անփոփոխ է, հաստատ է իւր մտածողութեան մէջ։ «Հաւատարիմ է որ կոչեացն զձեզ, որ եւ արասցէ զնոյն» (I. Թ. ա. Թեսղ. ե. 24.)։ Ոչ թէ միայն աստուածային սրբութիւնն ու արդարութիւնը ստիպում են մեզ հաւատալու մի ճշմարիտ Աստուած, որին անծանօթ է սուտը, այլ նրա միւս յատկութիւններն էլ նոյնն են վկայում։ Աստուած ա մ ե ն ա գ է տ է—նա չի սխալւում մահկանացուների նման—«զի նա քննէ զգաղտնիս սրտից մերոց» (Սաղմ. խգ. 22)։ Աստուած ա մ ե ն ա ի մ ա ս տ է. անմտութիւն է մտածելը, թէ Աստուած յախուռն խոստումն է անում (Մղք. գ. 6.)։ Նա ա մ ե ն ա կ ա ր ո ղ է—նա իւր տուած խօսքի տէրն է (Եսայի ծթ. 1.)։ Նա յ ա ւ ի տ ե ն ա կ ա ն է և ա ն փ ո փ ո խ. նրա յիշողութիւնը ո՛չ հասակը և ո՛չ հիւանդութիւնն է թուլացնում—նրա խոստմանը ոչ մի մահ արգելք չի կարող լինել։ (Թ. Յակ. ա. 17.)։

Երբ Աստուած ճշմարիտ է և հաւատարիմ, այն ժամանակ կարող ենք նրան վստահել և նրա խոստմանց հ ա ւ ա տ ա լ։ Անապաշխար յանցաւորների համար այս հաւատը զարհուրելի կարող է թուալ, վասնզի Աստուած սպառնում է այդպիսիներին պատժելու—«Վա՜յ անօրինին չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա» (Եսայի. գ. 11.)։ Բայց այդ միևնոյնը նոյն անապաշխարների համար երջանկացուցիչ յոյս է—«Կենդանի եմ ես, ասէ Ադոնայի տէր, ոչ կամիմ զմահ ամբարշտին, որպէս զդառնալ ամբարշտին ի չար ճանապարհէ իւրմէ եւ զկեալ» (Եզկ. լգ. 11.)։ Մեր ունեցած հաւատը դէպի Աստծու ճշմարտութիւնը յոյս է տալիս մեզ ամենիս, ոգի է ներշնչում, զօրացնում է մեզ, որովհետև այն Աստուածը, որ մեզ խոստացել է իւր օգնութիւնը թշուառութեան մէջ—«Մի՛ երկնչիր զի ընդ քեզ եմ, մի՛ խաբիր, զի ես եմ Աստուած քո, որ զօրացուցի զքեզ եւ օգնեցի քեզ, եւ զգուշացայ քեզ աջով արդարութեան իմոյ» (Եսայի խա. 10.)—Նա ինքն է ճշմարիտ Աստուածը։ Նրա հովանաւորութեան ներքոյ մխիթարուած անցնում ենք կեանքի ծովը—«Բայց գիտեմք, եթէ որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս, որք հրաւիրանաւն կոչեցան» (Թ. ա. Հռմ. ը. 28)։ Եթէ մենք հաւատ ունե-

նանք դէպի Աստուած, երկիւղին, մինչև անգամ մահուան, կարողենք յաղթել—«Որ հաւատայ յիս թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ, եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան» (Յովհ. ժա. 26)։ Այսպէս՝ ամեն ժամանակ յոյսդ ճշմարիտ Աստծու վրան դի՛ր։ Քո հաւատարմութեամբ և անկեղծութեամբ ցոյց տո՛ւր ամենուրեք, որ Աստծու որդի ես. խորշի՛ր ստից և սիրի՛ր ճշմարտութիւն։ —«Վասն որոյ ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարո՛ւք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում»։ Անխարդախութիւնը և հաւատարմութիւնը քրիստոնէի ամենագեղեցիկ զարդերն են։

—∞—

Այսպէս մենք ուսանք Աստծու յատկութիւնները. այժմ յետ նայենք՝ տեսնելու մեր ձեռք բերած ծանօթութիւնները։ Երբ մի հայր գերազանց յատկութեան տէր է, որդիքն ուրախանում են և այս յատկութիւնների պատճառով և՛ս աւելի սէր, յարգանք և երախտագիտական զգացմունք են արտայայտում։ Այսպէս մենք ես՝ էլ աւելի պիտի ուրախանանք, որ այդպիսի բարի հայր և Աստուած ունինք, որոյ հովանաւորութեան ներքոյ պաշտպանուած ենք և նա մեզ չի մոռանայ եթէ մենք նրան չմոռանանք—«Եւ արդ, եթէ խնդրէք զնա, գտցի ձեզ, եւ եթէ թողուք զնա, թողցէ զձեզ»

## Գ. ԱՍՏԾՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մենք այժմ գիտենք, որ Աստուած կայ. գիտենք թէ նա ի ն չ է. գիտենք նաև թէ ի ն չ պ է ս է։ Եթէ մենք հետախուզելու լինինք, թէ Աստուած ինչ է ա ն ո ւ մ, սուրբ գիրքը մեր այս խնդրին քառակի պատասխան կտայ—որ Ա ս տ ո ւ ա ծ՝ 1, ս տ ե ղ ծ ե լ է աշխ ա ր հ ս. 2, պ ա հ պ ա ն ո ւ մ է. 3, կ ա ռ ա վ ա ր ո ւ մ է. 4, աշխարհիս սուրբ օ ր է ն ս ա տ ո ւ ն է։ Ըստ այսմ նախ՝

### 1. ԱՍՏՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻՍ ՍՏԵՂԾՈՂՆ Է

Կար ժամանակ, երբ երկնակամարի վրայ դեռ ոչ արևն էր ճառագայթում, ո՛չ լուսինը փայլում և ո՛չ աստղերն էին պսպղում. երկրիս վրայ ոչ մի ծաղիկ չկար. ոչ մի կենդանի չէր հրճւում և ոչ մի մարդ չէր փառաբանում իւր արարչին։ Այնտեղ, ուր այժմ կապոյտ երկնակամարն է, խաւար էր. այնտեղ, ուր այժմ երկիրը գարնան գեղեցկութեամբ է զարդարւում, դատարկ և ամայի ոչինչ էր։ Մ ի ն ը միայն գոյութիւն ունէր—դա էր Աստուած՝ ոգի, Աստուած՝ սէր։ Նա ասաց և երկիրն ստեղծուեց։



Երկրիս ստեղծագործութեան ծագման մասին զանազան ազգերի մէջ զանազան կարծիքներ են տարածուած։ Մովսէսի գրածը, ստեղծագործութեան մասին ամենահինն է, ամենագեղեցիկը և անվիճելին։ Հնգամատեանը չի պարունակում իւր մէջ բնագիտական յառաջադրութեան և ոչ մի յայտնութիւն հնգամատեանն, այո՛, աստուածային ամենակարողութեան պարզ և անմոռանալի մի պատկեր է ներկայացնում։ Կրօնական տեսակէտից նայելով՝ այս զարգացման պատմութիւնը մի վսեմ, վեհ պատկեր է ներկայանում մեզ։ Այնտեղ պատմւում է, որ Աստուած աշխարհս միանգամից և յանկարծ չէ ստեղծել, այլ Աստծու ստեղծագործութիւնը կենդանի եղելութիւն է, այսինքն մի զարգացում, որ սկսւում է փոքրից և հետզհետէ աճում է—խառնակութիւնից՝ խաօսից դէպի պարզը, անկերպարանից դէպի կերպարանաւորը կեանքի իւրաքանչիւր բարձր աստիճանը ենթադրում է և ստորինը (կարդալ—I. Մովս. ա.)

Ստեղծագործութեան յիշատակարանն սկսւում է այս խօսքերով. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր»։ Թէ այդ սկիզբը երբ է եղել, յայտնի չէ, որովհետև մենք չունինք ժամանակի կէտեր՝ որտեղից սկսենք-ը և դէպի ուր չարունակենք-ը։ Մի բան միայն հաստատ է, որ «սկզբանէ» բացի Աստուծուց, ոչինչ չկար, որ աշխարհս Աստծուց է ստեղծուել։

«Ի սկզբանէ արար Ա ս տ ո ւ ա ծ զերկինս եւ զերկիր»—մի Աստուած և ոչ երկու. ոչ բազում աստուածներ, ինչպէս հեթանոսներն էին հաւատում։ Սրանով սուրբ գիրքը պատերազմում է մեր ժամանակի այն վարդապետութեան դէմ (նիւթապաշտութիւն), որ հաստատում է, թէ երկիրս ի յաւիտենից հետէ ստեղծուած է և կամ դիպուածքով նրա մասները մի ամբողջութիւն են կազմել....։ Սուրբ գիրքը պարզ կերպով ապացուցանում է այն ճշմարտութիւնը, որ ոչ թէ նիւթը և զօրութիւնը, այլ ո գ ի ն է առաջինը եղել և թէ նիւթն ու զօրութիւնը ո գ ո ւ ց ն են յառաջացել, երևելին աներևոյթից է ծնունդ առել, ստեղծուել—«Եւ բանիւ տեառն երկինք հաստատեցան, եւ հոգւոյ բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա» (Սաղմոս լբ. 6.)։ «Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս եւ որ

ինչ յերկրի, որ երևին եւ որ ոչն երևւին....» (Թ. առ Կղս. ա. 16.)։ Ոգին է սկիզբն, հեղինակ բոլոր գոյացութեանց։ «Ով բնութեան մէջ բնութիւն և ոչ ոգի. ով ոգու մէջ՝ ոգի և ոչ Աստուած և կամ՝ ով Աստուծուն բնութիւնից դուրս և առանց բնութեան, ով Աստուծուն առանց և արտաքոյ ոգու է որոնում, այդպիսին ոչ բնութիւնը, ոչ ոգուն եւ ոչ Աստուծուն կգտնէ. ընդհակառակն երեքն էլ կկորցնէ», ասում է խորիմաստ մէկը։ Այսպէս ստեղծագործութեան պատմութիւնը մեզ տանում է դէպի ստեղծողը, որի մասին մենք ասանք, որ նա ոգի է։ Մենք գիտենք նոյնպէս, որ Աստուած սէր էլ է։ Ոչինչ չէր կարող հարկադրել Աստծուն ստեղծելու աշխարհս իւր բոլոր հրաշալիքներով—(գոյն, հնչիւն զօրութիւն և էութիւն)։ Ոչինչ զօրութիւն չէր կարող ստիպել Նրան աշխարհս ոչնչից յայտնագործելու։—Նրա ազատ և ամենակարող սիրուն ենք պարտական աշխարհիս ստեղծագործութիւնը, որի հրաշալիքները մեզ հիացնում են։ Ինչպէս որ մի գեղեցիկ բանաստեղծութիւն հեղինակի հոգուց բղխում է և մեզ է հասնում, որպէսզի մեր մէջ ազնիւ, վսեմ և գեղեցիկ զգացմունքներ յարուցանէ, այսպէս էլ Աստուած ստեղծագործութիւնը իբրև իւր ոգու, իւր սիրոյ նշանակ է դնում մեր առաջ, որպէսզի մենք արարչին որոնենք և գտնենք Նրան ստեղծագործութեանց մէջ։

«Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր»։ Աստծու և մարդու ստեղծածների մէջ մեծ տարբերութիւն կայ—Աստծու արարչութիւնը վսեմ մտքով պիտի հասկանալ։ Երբ մարդուն մի բան են յանձնում շինելու, նա իսկոյն հարցնում է—ինչից պիտի շինեմ, ինչով պիտի շինեմ, որտեղից պիտի ստանամ նիւթը, գործիքները և միջոցները։ Մարդս պատրաստի նիւթին կարող է միայն ձև տալ, իսկ ինչ որ սրանից աւելին է, նրա համար անկարելի է։ Աստծու վերաբերութեամբ բոլորովին այլ է—Աստուած ստեղծում է ոչ թէ միայն ձևը, այլև նիւթը. ոչ թէ միայն ինչպէսը, այլև ինչը։ Եւ այս բանի համար կարևորութիւն չունի՝ ոչ միջոցի, ոչ գործիքի, ոչ նիւթի, ոչ զօրութեան և ոչ մի այլ էութեան։ Ստեղծագործութեան հիմքը իւր մէջ ունի նա։ Նրա խօսքը Նրա կամքն է, իսկ Նրա կամքը՝ Նրա գործն է։ «Զի նա ասաց եւ եղեն, ինքն հրամայեաց և հաստատեցան» (Սաղմ. լբ. 9)։ «Ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա տայ ամենայնի կեանս եւ շունչ եւ զամենայն ինչ» (Գործք առ. ժէ. 25.)։ «Հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս բանիւ Աստուծոյ, յաներեւոյթից զերեւելիս եղեալ» (Թ.



առ. Եբր. ժա. 3.)։ Այսպէս ուրեմն Աստուած ստեղծեց աշխարհը ոչնչից՝ առանց միջոցի և գործիքի, իւր ոգու ազատ կամքով և սիրոյ զօրութեամբ։

«Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր»։ Ստեղծագործութեան պատմութիւնն ասում է մեզ, ինչպէս յիշեցինք, որ վեց օրում եղաւ, այսինքն օր ասելով պիտի հասկանանք ստեղծագործութեան զարգացման զանազան աստիճանները, իսկ թէ ինչքան ժամանակ է տեւում ստեղծագործութեան մի օրը, այդ ոչ ոք չգիտէ։ «Եւ այս եւս մի լիցի ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի մի օր տեառն իբրեւ հազար ամ է, եւ հազար ամ իբրեւ զմի օր» (Բ. Թ. Պետ. գ. 8.)։ Ուշադրութեան արժանի են հետևեալ խօսքերը—«Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ»։ Ինչ որ աներևոյթ է, պէտք է երևելի դառնայ, իսկ ինչ որ անպատրաստ է, թերի է, պիտի լրացուի, պէտք է շինուի։ Սրա համար էլ համաձայն ստեղծագործութեան պատմութեան՝ որոշում ենք երեք բաժանման և երեք շինութեան օրեր։ Առաջ բաժանման, անջատման օրերն են յիշւում. Աստուած վերից վար է բաժանում—լոյսը խաւարից, օրը գիշերից որոշում է։ Սրանից յետոյ օդի կամարը՝ հաստատութիւնն է ստեղծում և բաժանում Նրա վերի և վարի ջրերը, այնպէս որ երկրիս վրայ՝ վերը նուրբ գոլորշի էր շրջում, իսկ վարը՝ աղբիւրները, առուակները, գետերը խոխոջելով ծովն էին վազում, որոյ պատճառով էլ հողը ջրից բաժանուած էր։ Այս նիւթերը բաժանելուց յետոյ, երկրիս վրայ կանաչել է տալիս խոտ, ծառ—մինչև փոքրը և ապա հետզհետէ մեծը։ Ըստ ստեղծագործութեան պատմութեան՝ սրան հետեւում են երեք շինութեան օրեր։ Այստեղ ևս Աստուած երկնքից է սկսում—Նա ստեղծում է արև, լուսին և աստղեր, որպէս կրողներ եղած լուսոյ և որոշող ժամանակի, օրուայ և տարուայ։ Երկնքի լուսոյ միջնորդութեամբ երկրիս վրայ կեանքն սկսում է կերպարանաւորուել։ Աստուած ջրի մէջ ձկներ է ստեղծում, որոնք լռելեայն ձևով ուրախանում էին. ապա օդի մէջ թռչուններ ստեղծեց, որոնք իրանց երգերով արարչին էին փառաբանում։ Վերջապէս ստեղծում է կենդանիներին, սողուններին, գազաններին «ըստ ազգի իւրեանց»։ Երբ Աստուած այսպէս ամեն ինչ պատրաստեց—սեղանը բաց արաւ, հիւրերին սեղանի հրաւիրեց ասելով. «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան»։ Այսպէս մարդս՝ երկրի տէրը և Նրա ստեղծուածների թագը՝ ամենից վերջնէ ստեղծում։

Ինչ որ ստեղծագործութեան հեղինակը հոգւով տեսաւ, այդ միևնոյնն այսօր էլ ամեն մի ամառնային առաւօտ կրկնւում է. ինչպէս որ աշխարհս ոչնչից է գոյացել, այսպէս էլ ցերեկը գիշերուանից է յառաջանում: Երևակայիր քեզ, որ մութ գիշեր ժամանակ միայնակ կանգնած ես դաշտավայրի վրայ: Խաւար է ամենուրեք, այլ և անդունդներում՝ թանձր մառախուղը վեր և վար է ծփում. խոր մթութեան մէջ ծածկուած են սար ու ձոր—ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէ լսւում—դու զգում ես. «Եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»: Յանկարծ լերան կատարին լոյս է փայլում—սա ստեղծագործութեան առաջին օրուայ պատկերն է—սկսւում է մի լուռ ու մունջ, բայց զօրաւոր պատերազմ—սա լուսոյ և խաւարի, օր ու գիշերուայ պատերազմն է: Մառախուղը լեռնանման վեր և վար է ծփում, բայց խաղաղ և հանդիստ ձևով շարունակում է լոյսը իւր յաղթութիւնը: Արևելքն սկսում է շառագունիլ: Մառախուղը, որ փոքր ինչ առաջ լուսոյ ներգործութիւնից տեղի էր տալիս, յաղթւում է, կամաց կամաց իջնում է երկրիս վրայ և կապոյտ երկնքի ծածկոյթը՝ հաստատութիւնը երևում է—սա ստեղծագործութեան երկրորդ օրուայ պատկերն է: Հետզհետէ լուսանում է, պարզ լուսոյ մէջ իրերի ձևը որոշակի ենք նկատում. ճիշտ կերպով որոշում ենք ջուրը ցամաքից, ծառը՝ թփից—սա էլ ստեղծագործութեան երրորդ օրուայ պատկերն է: Վերջապէս ցերեկուայ թագաւորը՝ ոսկէ արևը փառաւոր կերպով բարձրանում է արևելքից: Երկնակամարը կարմրում է. աշխարհս ամբողջովին հրճւում է այս հրաշալի տեսարանով—ահա չորրորդ օրուայ ստեղծագործութեան պատկերը: Կենդանութիւն է և՛ դաշտում և՛ մարգագետնի վրայ—ձկները ջրումն են լողում, թռչուններն անտառումն են ճռւողում—հինգերորդ օրուայ ստեղծագործութեան պատկերը: Չորքոտանի կենդանիները զարթնում են գիշերուայ քնից և վեր են կենում քնած տեղից: Նախիրն արածելու է գնում, նրա ետևից գնում է նախրապանը՝ մարդը՝ աշխարհիս տէրն ու իշխանը—ահա ստեղծագործութեան վեցերորդ օրուայ պատկերը:

Ստեղծագործութիւնը մի հայելի է, որի մէջ արարչի պատկերն ենք տեսնում—ամենակարող արարչի, որ միլլիոնաւոր արեգակներ ոչնչից ստեղծեց. ամենիմաստուն արարչի, որ ոչ մի խորհրդատուի կարիք չունէր, չնայելով սրան, այնուամենայնիւ աշխարհս այնպիսի նպատակայարմարութեամբ ստեղծեց, որպիսին հա-



զիւ թէ երևակայել հնարաւոր լինի—«Որպէսզի մեծ են գործք քո տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր....» (Սաղմ. ճգ. 24). ամենին սիրող արարչի, որ գեղեցիկ աշխարհը ոչ թէ իւր համար կեանքի հրաւիրեց, այլ ուրիշների ուրախութեան համար: Մի դէմք այն ժամանակն է մեզ գեղեցիկ երևում, երբ մենք նրա հոգու հետ էլ ենք ծանօթանում: Այսպէս էլ աշխարհս մեզ համար այն ժամանակ միայն գեղեցիկ է, երբ մենք նրա (աշխարհի) մէջ Աստծու ոգին ենք տեսնում: Երկիւղածութիւն, հեզութիւն և գոհութիւն—ահա սոքա են այն զգացմունքները, որոնք ամեն մի մտածող մարդ պիտի զգանայ իւր մէջ, երբ աշխարհին նայէ: Ուստի պէտք է սիրել նրան, որ նախ սիրեց մեզ: Կարդալ ամբողջապէս ճգ. սաղմոսը:

## 2. ԱՍՏՈՒԱԾ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԽՆԱՄՈՒՄ Է ԱՇԽԱՐՀՍ

Աստուած աշխարհն ստեղծելուց յետոյ չառանձնացաւ և իւր ստեղծածներին բարձի թողի չարաւ, այլ՝ ինչպէս որ հոգ էր տարել նրա գոյացութեան, ծննդեան մասին, այսպէս էլ հոգ է տանում, որ աշխարհս գոյութիւն ունենայ: (Համեմատութիւն—առանց հոգու մեր մարմինը դիակի է նման, իսկ առանց ոգու՝ աշխարհը աւերակների կոյտ է:)

Աստուած պահպանում է, Ա. միլլիոնաւոր աշխարհներն իւրանց զօրութեամբն հանդերձ, որոց միջնորդութեամբ նրանք գոյութիւն ունեին. Նա պահպանում է բոլոր օրէնքները, որոնց համաձայն դոքա գոյութիւն ունեին: Դրա համար էլ այդ անփոփոխելի կարգ ու կանոնը, որոնք յիշեալ օրէնքներով միայն հնարաւոր են, երբէք չէ ընդհատուել և չի ընդհատուի՝ քանի որ Աստծու կամքն է. որքան ժամանակ որ նա կկամենայ, այնքան ժամանակ էլ գոյութիւն կունենան. հազարաւոր տարիներ առաջ ինչ ձևով որ արևը լուսաւորել է երկիրը, նոյնն էլ այսօր է. հազարաւոր տարիներ առաջ ինչ օրէնքով և կանոնով մոլորակները պտտել են արևի շուրջը, նոյնն և այսօր է: Այսօր ևս տարուայ չորս եղանակները ներդաշնակ ձևով են փոփոխւում. այսօր ևս ջրերն իրանց սովորական ընթացքն ունեն. այսօր ևս մարդկային սերունդը գոյութիւն ունի. այսօր ևս աճում և բազմանում են. դեռ այսօր ևս սուրբ գրքի խօսքը նոյն հաստատուն ճշմարտութիւնն ունի. «Այսուհետև զամենայն աւուրս երկրի՝ սերմն

և հունձք, ցուրտ եւ տօթ, ամառն եւ գարուն, տիւ եւ գիշեր մի՛
դադարեսցեն» (I. Մովս ը. 22.)։ Աշխարհներն իրանց գոյութեամբ
դեռ այսօր էս վկայում են, որ Աստուած է մեր պ ա հ ո ղ ը, պ ա հ-
պ ա ն ո ղ ը։

Բ. Աստուած պահպանում, նախախնամում է նաև բոլոր աշ-
խարհների բ ն ա կ ի չ ն ե ր ի ն։ Թէ Աստուած երկնային մարմինների
բնակիչների հետ ինչպէս է վարւում, սեպհական փորձով այդ մենք
չգիտենք, բայց մեզ յայտնի է Քրիստոսի խօսքը. «Ի տան հօր իմոյ
օթեւանք բազումք են» (Յովհ. ժդ. 2.)։ Դրա հակառակ, երբ մենք
երկրագնդիս բնակիչներին ենք նայում, պէտք է խոստովանենք, որ
Աստծու նախախնամական գործունէութիւնը թուել և չափել անհնար
է։ Աստուած չի նմանում արուեստագէտին, որ իր գործը վերջացնե-
լուց յետոյ՝ այլ ևս հոգ չէ տանում նրա մասին և ոչ ճարտարապե-
տի է նմանում, որ անհման շէնքը ամեն գեղեցկութեամբ զարդա-
րելուց յետոյ, չի էլ մտածում, թէ իր կառուցած շէնքը դատարկ
է, թէ բնակիչներ կան մէջը։ Աստուած այդպէս չէ—նա հոգում է,
որ ստեղծած աշխարհը միշտ և հանապազ կենդանի բ ն ա կ ա ր ա ն
լինի՝ լցուած ամեն տեսակի և սեռի արարածներով։ Դրա համար ես
մենք ամենուրեք պատահում ենք շնչաւոր էակների՝ թէ երկրիս խոր-
քում և թէ լեռների բարձրութեանց վրայ, թէ ծովի անդնդում և
թէ երկնից ամպերի վրայ, անտառում և դաշտում, մացառներում և
կանաչներում, ճահիճներում և մամռապատ վայրերում։ Ստեղծագոր-
ծութեան ժամանակ ամենին էլ տուել է կենդանութեան շունչ, որով-
հետև ինչպէս մարդիկ, նոյնպէս և անասունները զգում են աստուա-
ծային օրհնութիւնը—«Աճեցէք եւ բազմացարուք» (I. Մովս. ա. 22.
28.), բոյսերն իրանց սերմն են տանում («որոյ սերմն իւր ի նմին լիցի
ազգի» (I. Մովս. ա. 11.)։ Ամենակարող Աստծու այս օրհնութիւնն է,
որ ամեն մի ծլող ծաղկի, ամեն մի նորածին մարդու համար ինո-
րոյ իւր «եղիցին» է ասում։

Աստուած խնամում, պահպանում է աշխարհները ոչ թէ միայն
իրանց զօրութիւններով, այլ օրէնքներով և կարգ ու կանոններով։
Աստուած պահում, պահպանում է ոչ թէ միայն երկրիս վրայի բնա-
կիչների ս ե ր ո ւ ն դ ն ե ր ը, այլ նա հոգում է նաև, որ ի ւ ր ա ք ա ն-
չ ի ւ ր արարած իւր գոյութիւնը շարունակէ։ Նա հոգում է ամեն
մինի կենսական պիտոյքները և առհասարակ այն ամենը, ինչ որ
պէտք է։ Ինչպէս որ բոյսերին արև և անձրև է տալիս, այնպէս էլ



կենդանիներին, ուր որ էլ բնակուելու լինին՝ երկրիս վ ր ա յ, երկրիս
մ է ջ, թէ երկրի վ ե ր և ո ւ մ, տալիս է դարման և հագնելիք։ Եւ որ-
քան ճիշտ է հոգում նա մեզ՝ մ ա ր դ ո ց ս համար։ Ի՞նչ առատութիւն
է սփռում նա դաշտերում—ինչպիսի լիութեամբ բացնում է հատիկ-
ներ և կանաչեղէններ։ Որպիսի հիւթալի պտուղներ է տալիս մեզ
խնձորենին, տանձենին. ինչպէս ծանրաբեռնուած են նոցա ճղները
կարմրաթշիկ և անուշահամ պտուղներով։ Ջրում լողում են ձկներ,
օդում թռչում են թռչուններ. անտառն և դաշտը լի են կենդանի-
ներով, որոնցով մենք կերակրում ենք—այնպէս որ ամեն րոպէ մեր
ճոխ սեղանը յիշեցնում է մեզ՝ մեր նախախնամողին, որ հոգում է
մեզ համար ոչ թէ միայն կերակուր, այլև հագուստ (բուրդ, փուշ,
բոժոժ, բամբակ, կաշի.....) բնակարան և ամեն տեսակ թէ հոգեկան
և թէ նիւթական անհրաժեշտ իրեր։ Դրա համար էլ սուրբ գիրքն ասում
է. «Աչք ամենեցուն ի քեզ, Տէր, յուսան (այնպէս, ինչպէս որդիքը
ծնողների տուն զալուն են սպասում, որ մի բան բերեն) և դու
տաս կերակուր նոցա (արագլին՝ գորտ, ծիծեռնակին՝ թիթեռ, մե-
ղուին՝ ծաղկի փոշի, աղաւնուն՝ հատիկներ, ձիուն՝ գարի, մարդոց՝
հաց) ի ժամու.... (գարնանը՝ ծաղիկներ, ամռան՝ հատիկներ, աշնա-
նը՝ պտուղներ, ձմռանը՝ միս)։ Բանաս զձեռն քո (ինչպէս մայր, որ
որդւոց հաց է բաժանում) եւ լցուցանես զամենայն քաղցրու-
թեամբ կամօք քովք (և ոչ թէ գժկամակութեամբ, տհաճութեամբ,
այլ՝ սիրով, ուրախութեամբ։ Սաղմ. ճխդ. 16) 17)։

Ի հարկէ Աստծու նախախնամութիւնը մարդկանցինի նման չէ։
Մեր նախախնամելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ա ր տ ա ք ի ն ներգոր-
ծութիւն, այն ինչ Աստուած թէ աշխարհի և թէ նրա մէջ եղած
իրերի մէջ մի ո յ ժ, զ օ ր ո ւ թ ի ւ ն է դրել, որոնցով նրանք պահ-
պանւում և ի խնամւում են։ Օրինակի համար կենդանիներին բնազ-
դումն է տուել, որի միջնորդութիւնով նրանք կերակուր են գտ-
նում, այնպէս որ Աստուած կարիք չունի «ձագուց ագռաւուց» (Սաղ-
մոս ճխզ. 9.) համար կերակուր ուղարկելու։ Մարդուս սպառազինել
է պէս պէս ձիրքերով, որոյ միջնորդութիւնով նա կարողանում է
իրա համար կերակուր և հանդերձ հայթայթել։ Դրա համար էլ
Աստուած կերակուրը պատրաստ չի դնում մարդու առաջ, ինչ-
պէս որ մայրը փոքրերին է անում։ Այդ մասին գեղեցիկ են սաղ-
մոսերգուի խօսքերը. «Արբուցանէ զլերինս եւ շտեմարանաց իւ-
րոց, ի պտղոյ գործոց իւրոց, լցցի երկիր։ Բուսուցեր զխոտ ի լե-

բնու, զգալալի ի ծառայութիւն մարդկան: Հաներ զհաց յերկրէ. գինի ուրախ առնէ. իւղ զուարթ եւ հաց հաստատէ զսիրտ մարդոյ.......» (Սաղմ. ճգ. 13...): Ուստի և՝ ով այն համոզման է, թէ երբ մենք, առանց Աստծու օգնութեան՝ Նրա տուած զօրութիւնով կամ ձիրքով մի բան ձեռք է բերում, իրաւացի չէ ինչպէս և նա, որին բնութիւնը մի բան տուել է և կամ իւր սեպհական կարողութիւնով է ձեռք բերել, կարիք չունի Աստծուն շնորհակալութիւն անելու: Բայց ով է տուել քեզ այդ կարողութիւնը: Այն ով է, որ երկրին պտղաբերութիւն է պարգևել: Այն ով է, որ ամենայն ինչ նախախնամում է: Դու ես: Ճիշտ է, որ Աստուած երկնքի տակի թռչուններին էլ է կերակրում, որոնք ոչ ցանում են և ոչ շտեմարանում ժողովում, ինչպէս և հովտի շուշանը, որ ոչ աշխատում է և ոչ մանում է, բայց և այնպէս աւելի գեղեցիկ է հագնուած՝ քան թէ Սողոմոնը իւր փառքերի մէջ—բայց և այնպէս մենք չպիտի մոռանանք, որ ոչ երկնքի տակի թռչունները, ոչ հովտի շուշանը պարապ, անգործ են: Ոչ, ընդհակառակն՝ երկուսն էլ օգտւում են Աստծու տուած զօրութիւններով—այո, նրանք պարտաւոր են օգտւելու, եթէ չեն կամենում կործանուել: Ուստի ոչ ոք չպիտի ասէ—երբ Աստուած ինձ նախախնամում է, պահպանում է, կարող եմ ձեռքերս ծալել, անգործ նստել և սպասել Նրա օգնութեանը: Ով այսպէս է մտածում, մեղանչում է Աստծու դէմ, որ տուիչն է ամենայն բարութեան: Արդարև գրուած է. «Ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա» (Մատթ. զ. 26.): Ի հարկէ, հէնց դրա համար էլ, որովհետև մենք նրանցից բարձր ենք, աւելի պիտի անենք, պէտք է աղօթենք և աշխատենք, պէտք է ցանենք և հնձենք, աշխատենք և մանենք:

Այսպէս մենք տեսնում ենք, որ Աստուած խնամում է, ինչպէս ամբողջին, այնպէս էլ մասնին—մեծին և փոքրին, թռչնին և շուշանին, կենդանիներին և մարդոց, երկիրը և աշխարհները:

Նա խնամում է այլև այն, ինչ որ թւում է մեզ թէ կործանւում է: Այն՝ ինչ որ մենք մահ ենք անուանում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կերպարանափոխութիւն. այն՝ ինչ որ մեզ ապականութիւն է թւում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի պայման նոր կեանքի համար: Ինչպէս որ թրթուրը պիտի մեռնի, որպէսզի նրանից բազմոտանի թիթեռ յառաջ գայ. ինչպէս հատիկը նեխում է, որպէսզի նրանից առոք հասկեր յառաջ գան, այսպէս և մենք ենք մեռնում,



որպէսզի մի այլ աշխարհում բարձր կարողութիւններով՝ աւելի գեղեցիկ կեանք վարենք: Արտաքին՝ առ երևոյթս անկումով չպիտի կասկածենք Աստծու նախախնամութեան վրայ: Եթէ փոթորիկները, երկրաշարժները և միւս զօրութիւնները կործանում են այս կամ այն բանը, այդ կատարւում է նրա համար, որ հիւանդութիւնները, ապականութիւնները հեռանան և կեանքի համար յաջող, պայմաններ յառաջ բերեն: Երբ մենք կենդանական աշխարհի մէջ նկատում ենք գոյութեան կռիւ, ուր մի արարած մտադրւում է միւսին ոչընչացնելու, եթէ մենք մի փոքր քննող աչքով նայելու լինէինք, կտեսնենք որ այդպիսութիւնով միայն հնարաւոր է սեռերի գոյութիւնը պահպանել և եթէ մենք իրերի ներքին կապը կատարելապէս հետազօտելու կարող լինէինք, սահմանափակ մարդոց այդ բոլոր տրտունջները հիացման, զարմացման և փառաբանութեան կփոխարինուէին. այդպիսիք կտեսնէին, որ ամեն ինչ իմաստուն ձևով է սահմանուած, որ իսկզբանէ անտի հայրական սիրով հոգ է տարւում բոլոր արարածների պահպանութեան համար:

Դրա համար էլ, ով մարդ, ամեն ժամանակ յոյսդ դի՛ր բոլոր աշխարհների ամենիմաստ և ամենաբարի նախախնամողի վրայ և հաւատա՛ նրան ի բոլոր սրտէ: Այն Աստուածը, որ հազարաւոր տարիներ շարունակ խնամել է մարդկային սերունդը և իւրաքանչիւր անհատի համար հայրական սիրով հոգ է տարել, նա քեզ ևս չի մոռանայ—«Բարի է յուսալ ի տէր քան յուսալ յիշխանս» (Սաղմ. ճժէ. 8): Ուստի և ունայն հոգսերով մի՛ զբաղուիր—դու չես կարող արգելել, որ արևը իւր ճառագայթները վայր չտարածէ կամ հացհատիկը իւր բողբոջները վեր չարձակէ: Աւելի լաւ կանես, որ այն մասին մտածես, թէ Աստծու տուած կարողութիւնները, ձիրքերն ինչպէս գործ դնես, որ հետևանքը բարի լինի, գեղեցիկ լինի: Երանի՜ նրան՝ ով իւր կեանքը օգտաւէտ գործունէութեանց է նուիրում, այդպիսին կարող է ասել Քրիստոսի հետ—«Հայր իմ մինչև ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. ե. 17), բայց ամենից առաջ գոհացի՛ր, փառք տո՛ւր նախախնամողին՝ Նրա ամեն օր ցոյց տուած սիրոյ և բարութեան համար. Աշխարհիս նախախնամութեան գործում քեզ ցոյց տուած սիրոյ ապացոյցներն այնքան մեծ են, որ դու ես կարող ես սաղմոսերգուի հետ ասել. «Զի՞նչ տաց տրիտուր տեառն ընդ ամենայնի, զոր եւ ետ ինձ»: (Սաղմ. ճժե. 12):

## 3. ԱՍՏՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻՍ ԿԱՌԱՎԱՐԻՉՆ Է

Նախկին գլուխների մէջ ուսանք, որ Աստուած արարիչ է, նախախնամող է, այժմ պիտի ծանօթանանք նրա մի ուրիշ գործունէութեան հետ—որ նա կ ա ռ ա վ ա ր ո ւ մ է ա շ խ ա ր հ ս: Բայց նախ տեսնենք՝ ինչ ասել է, թէ Աստուած կ ա ռ ա վ ա ր ո ւ մ է աշխարհս և ապա՝ որոնենք թէ մ ի ն չ և ո ւ ր է հասնում այդ աշխարհավարութիւնը:

Սովորութիւն է ասելու, որ նաւավարը նաւն է կ ա ռ ա վ ա ր ո ւ մ, իսկ սայլապանը՝ լծուած գոմէշներին: Այս ասելով՝ մենք հասկանում ենք մի ներգործութիւն, որով մեղանից դուրս եղած իրերը տ ա ն ո ւ մ, հ ա ս ց ն ո ւ մ են մի որոշ նպատակի՝ համաձայն նախապէս որոշուած նախագծի: Կառավարել նշանակում է մի բան որոշ նախագծի համաձայն դէպի որոշեալ նպատակ ղ ե կ ա վ ա ր ե լ: Ինչքան ազնիւ է, գեղեցիկ է ն պ ա տ ա կ ը, ինչքան որ յարմար է նպատակին հասնելու մ ի ջ ո ց ն ե ր ը, ըստ այնմ էլ բարձր ենք գնահատում ղեկավարի կամ կառավարչի գործնէութիւնը: Օրինակի համար ծնողաց ընտանիք կառավարելն աւելի բարձր պիտի դասել՝ քան թէ սայլապանի կենդանիք կառավարելը: Եւս աւելի բարձր պիտի գնահատել մի երկրի կառավարչի գործը: Իսկ անհամեմատ բարձր պիտի ընդունել Աստծու աշխարհ կառավարելը՝ մարդկային որ և է կառավարութիւնից. «Մեծ է տէր մեր եւ մեծ է զօրութիւն նորա, իմաստութեան նորա ոչ գոյ թիւ» (Սաղմ. ճխզ. 5): Աշխարհիս մէջ պատահած բոլոր փ ո փ ո խ ո ւ թ ի ւ ն ն ե ր ի մէջ կարելի է նկատել այդ ղ ե կ ա վ ա ր ո ղ, կ ա ռ ա վ ա ր ո ղ ոգին: Այս տեսակ փոփոխութիւններ ամեն ուրեք և ամեն ժամանակի մէջ կայ: Ն ո յ ն ի ս կ ա ն շ ո ւ ն չ ա ռ ա ր կ ա ն ե ր ի մ է ջ և ս ն կ ա տ ե լ ի է ա յ դ ո գ ի ն: Աստղերն իրանց դիրքը փոփոխում են իրար վերաբերութեամբ, լուսինն՝ իրա լոյսը. ամպերն՝ իրանց գոյնը. օդը՝ իր շարժողութիւնը և բարեխառնութիւնը. երկիրը՝ իր տեսքը՝ նայելով տարուայ եղանակներին. ծովը՝ իւր ալիքները. կղզիները՝ ափերը... ամենուրեք փոփոխութիւն—և՛ երկնքում և՛ երկրի վրայ և՛ երկրի մէջ: (Հելգօլանդ կղզին միշտ խորտակւում է, իսկ դրա հակառակ Շվեդիայի հիւսիսային ափերը բարձրանում են): Նոյն իսկ մ ա ր դ կ ա յ ի ն կ ե ա ն ք ի մ է ջ ամեն ինչ փոփոխութեան ենթակայ է, վասնզի մեզ պատահող այս կամ այն ճակատագիրը ոչ այլ ինչ է,



եթէ ոչ՝ մեր կեանքի ախորժ կամ անախորժ փոփոխութիւններ: Ինչպէս որ եղանակները փոփոխւում են, այդպէս էլ մեր ճակատագիրը՝ լինի դա մեր կամքով, թէ հակառակ մեր կամքի: Ով այսօր առողջ է, կարող է վաղը հիւանդ լինել. ով այսօր հարուստ է, կարող է վաղն աղքատանալ, ով երջանիկ է, կարող է ապերջանիկ լինել: Հաստատուն ոչինչ չկայ, ա մ ե ն ի ն չ փոփոխութեան ենթակայ է: Ինչպէս որ այս օրէնքը մասնաւորի վերաբերմամբ ուղիղ է, ուղիղ է և ընդհանուրի համար: (Պատերազմ և խաղաղութիւն, երջանկութիւն և ապերջանկութիւն ազգերի պատմութեան մէջ): Թէև ամեն ինչ յաւիտենականութեան փոփոխութեան մէջն է շրջան առնում, բայց այս փոփոխութեան մէջ միշտ յայտնւում է մի ոգի: Այս ոգին Աստուած է, որ ղեկավարում է ինչպէս մարդկային ճակատագիրը, այնպէս էլ դէպքերը, և այս բոլորը նա կառավարում է կանխորոշ ծրագրով՝ կատարեալ գիտակցութեամբ՝ յ օ գ ո ւ տ մեր: Այո́, մեր օգտին: Եւ երկրաւոր մեռանող հայրը (իշխան, թագաւոր....), եթէ նա սիրում է իւր հպատակներին, ըստ կարելւոյն միջոցներ է որոնում երջանիկ պայմանների մէջ դնել իւր ժողովրդին և հեռացնել չարիքը նրանից: Այսպէս է վարւում և ընտանեսէր ծնողը: Ո՞րքան ևս աւելի պիտի լինի Ա ս տ ծ ո ւ ն ը, որ և սիրոյ Աստուած է, որ մեր կոչման նպատակը նախագծել է և երջանկութեան կամ ապերջանկութեան, վշտի կամ ուրախութեան ձեռքով՝ գիտակից կամքով ղեկավարում է մեզ դէպի այն նպատակը, որ նրա սէրն է որոշել մեզ համար: Այսպէս է վարդապետում մեզ սուրբ գիրքը—«Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ եւ արար Տէր յերկինս եւ երկրի, ի ծով եւ յամենայն խորս» (սաղմ. ճլդ. 6.): «Տէր աղքատացուցանէ եւ մեծացուցանէ, խոնարհեցուցանէ եւ բարձրացուցանէ.....» (I. Թագ. բ. 7.): «Բարիք եւ չարիք, կեանք եւ մահ, աղքատութիւն եւ մեծութիւն ի տեառնէ են (Սիրաք ժա. 14.):

Ինչ որ մենք դէպք կամ կոյր անհրաժեշտութիւն ենք անուանում (Յոյները և Հռովմայեցիները հաւատում էին որ բաղդը՝ ճակատագիրը մի գաղտնի, անծանօթ զօրութիւն ունի, որոյ յաւիտենական և անփոփոխելի որոշումները ոչ աստուածները և ոչ մարդիկ փոխել կարող են), ոչ այլ ինչ է, եթէ ոչ Աստծու պարզ, որոշ կամքը, որ կառավարում է աշխարհները և ղեկավարում է մարդոց: Իսկապէս սուտ դէպք չկայ: Որքան որ դէպքը աշխարհս է ստեղծել, այնքան էլ նոյն դէպքը կարող է մարդկային ճակատագրի նաւը չա-

ւիղները ղեկավարել: Աստուած է կառավարում աշխարհս. նա է ղեկավարում աշխարհիս բոլոր փոփոխութիւնները ըստ իւր կամաց՝ յօգուտ մեր:

Աստծու աշխարհավարութիւնը անուանում ենք կանխատեսութիւն, որով գալոցը առաջուց է տեսնում և դրա համար էլ նրա իւր ժամանակին երևալն ամեն վնասակար ինչ վերացնում է: Աստծու աշխարհավարութիւնը ոչ թէ միայն կանուխ տեսնել կարելի է անուանել, այլև մեզ համար տեսնել—որովհետև այնտեղ, ուր մենք չենք տեսնում և ոչինչ վտանգ չենք նկատում, ամենաբարին տեսնում է մեզ համար, մեր փոխարէն: Աստծու աշխարհավարութիւնը կանխատեսութիւն անուանենք, թէ մեզ համար տեսնել, ամեն ուրեք նա է՝ կենդանի Աստծու գիտակցական ղեկավարութիւն՝ ամենաազնիւ միջոցներով դէպի ամենաազնիւ նըպատակ գնացողը:

Նոքա, որոնք հաւատում են մի կենդանի Աստծու, տարակուսանք չունին աստուածային աշխարհավարութեան գոյութեան մասին: Ինչ ինչ տարակուսանք եթէ կայ, այդ նրա տարածման, ընդարձակութեան մասին է, թէ նրա աշխարհավարութեան գոյութիւնը մինչև ուր է հասնում:

Ուստի հետևեալ կէտերում կաշխատենք թերահաւատներին զօրացնել իրանց հաւատոյ մէջ և սուրբ գրքի վկայութիւններով ամրապնդել մեր մէջ այն համոզումն, որ Աստուած ամեն ինչ ղեկավարում է—ոչ թէ միայն բնութեան գիտակցութիւնից զուրկ ոյժերը, այլև մարդուս ազատ գործնէութիւնները. ոչ թէ միայն գործողին է վարում, այլև նրա գործը. ոչ թէ միայն մեծերը, այլ և փոքրերը:

1. *Աստուած ղեկավարում է բնութեան գիտակցութիւնից զուրկ ոյժերը.*—Բնութեան մէջ թագաւորում է մի անփոփոխ օրէնք: Հաստատ, որոշ օրէնքով շրջան են առնում երկնային մարմինները. փոխւում են տարուայ եղանակները. հողմեր և փոթորիկներ են բարձրացնում. քարը վայր է ընկնում երկրիս վրայ. կողմնացոյցի սլաքը դէպի հիւսիս է հակւում. ծաղկում և չորանում են ծաղիկները. գալիս և գնում են կենդանիները. ապրում և մեռնում են մարդիկ: Ձուկը պիտի լողայ ջրում, թռչունը իւր երգը պիտի երգէ, խլուրդը հողը պիտի փորէ, շերամի որդը իւր դագաղը պիտի մանէ՝ հիւսէ: Բայց պիտի նկատել, որ ոչ մի իր, ոչ մի զօրութիւն չի կարող դուրս



գալ Աստծու սահմանած շրջանից: Աստծու ձեռին է ժամանակ՝ տեղ ու չափ որոշելը: Ուստի և առանց Աստծու կամքի կայծակ չի ընկնի և քո տունը չի այրիլ. ոչ մի հեղեղ չի կարող քո դաշտերը ոչնչացնել. ոչ մի ժանգ չի կարող քո արտերը փչացնել.....: Այլև առանց Աստծու կամքի ոչ մի ցող, ոչ մի անձրև.... չի կարող ջրով յագեցնել քո դաշտերը. ոչինչ չի կարող կանաչել, աճել և զօրանալ առանց նրան, որովհետև նա է ղեկավարում բնութեան՝ գիտակցութիւնից զուրկ ոյժերը—«Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ եւ արար տէր յերկինս եւ յերկրի, ի ծով եւ յամենայն խորս: Հանէ զամպս ի ծագաց երկրի, զփայլատակունս իւր յանձրեւս արար, եւ հանէ զհողմս ի շտեմարանաց իւրոց» (Սաղմ. ճլզ. 6. 7.): «Մեծ է տէր մեր եւ մեծ է զօրութիւն նորա, իմաստութեան նորա ոչ գոյ թիւ» (Սաղմ. ճխզ. 5):

2. *Աստուած ղեկավարում է նաև մարդոց բարոյական գործերը, ինչպէս գործը, նոյնպէս գործչին:* Ինչպէս որ աստղերը Աստծու որոշած ճանապարհով են գնում, այնպէս էլ մարդը պիտի հետևի Աստծու պատուիրաններին: Հէնց սրա համար էլ Աստուած նրան օրէնքներ է տուել (բարոյական օրէնքներ)—«Պատմեցաւ քեզ, ով մարդ, զի՞նչ է բարի կամ զի՞նչ խնդրէ ի քէն տէր. բայց առնել զիրաւունս եւ սիրել զողորմութիւն, եւ պատրաստ լինել երթալոյ զկնի տեառն Աստուծոյ քո» (Միքիէ գ. 9): Ի հարկէ բնական օրինաց և բարոյական օրինաց մէջ սար ու ձոր կայ: Բնական օրէնքը պահանջում է—այս բանը պիտի կատարել, իսկ բարոյականը՝ կարող ես կատարել: Այնտեղ ոյժ, ստիպմունք, այստեղ բարոյական ազատութիւն: Բարոյական օրէնքներին հետևելու ընդունակութիւնը Աստուած է շնորհել մեզ, իսկ օրէնքը կատարելու կամքը՝ մարդուս գործն է: Դրա համար էլ ասում ենք՝ մարդս ազատ կամք ունի, այսինքն նա իւր ազատ կամքով կարող է ինչպէս լաւը, նոյնպէս և վատն ընտրել: Մարդուս ազատ կամք ունենալը մի մեծ գերազանցութիւն է՝ գիտակցութիւնից զուրկ կենդանիների վերաբերմամբ: Ազատ կամքով միայն հնարաւոր է առաքինութեան հասնել, նրանով միայն կարելի է մեր գործերի հատուցումն ստանալ: (Արդեօ՞ք անդամալոյծն էլ առաքինի է, որ չէ գողանում և կամ համրը, որ սուտ չէ խօսում): Բայց ազատ կամք ունենալն էլ վտանգաւոր բան է—դիւրութեամբ կարելի է հեռանալ արդարութեան ճանապարհից և չարութեան թակարդն ընկնել: Այս հանգամանքում ս. գրքի վարդապետա-

ծը մի անգնահատելի գանձ է, որ մեզ յայտնում է, թէ Աստուած ղեկավարում է ոչ թէ միայն բարին, այլև չարը, ոչ թէ միայն գործչին, այլև գ ո ր ծ ը: Մենք ասում ենք՝ Նա ղ ե կ ա վ ա ր ո ւ մ է չարին. ո՛չ, սխալ է, պիտի ասենք, Նա կ ա մ ե ն ո ւ մ է, Նա այսպէս է գ ո ր ծ ո ւ մ, Նա հ ր ա մ ա յ ո ւ մ է: Նա ոչ ոքի չի փորձում վատ մտքով—«Մի՛ ոք, որ ի փորձութեան իցէ՝ ասիցէ՝ թէ յԱստուծոյ փորձիմ, զի Աստուած անփորձ է չարեաց. փորձէ նա՝ եւ ոչ զոք, իւրաքանչիւր ոք փորձի առ ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ եւ պատրեալ, ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի, եւ մեղքն կատարեալ՝ զմահ ծնանի» (Թ. Յակ. ա. 13—15.)—այլ ազատութիւն է տալիս չարին, որպէսզի մարդուս ազատ կամքի վրայ ճնշում գործած չլինի, և ապա՝ ինչպէս աշխարհիս կառավարիչ, գործում, հրամայում է, որպէսզի այն՝ ինչ որ մարդիկ փչացրել են, նորից ուղղէ և բարելաւէ: Այս կէտը պարզ որոշելու համար, հետևեալ պայմաններն ի նկատի առնելու է:

**Ա.** Ա ս տ ո ւ ա ծ մ ա ր դ ո ց ս ր տ ե ր ը ի ր ա ն ց չ ա ր մ տ ք ի ց դ է պ ի բ ա ր ի ն է փ ո խ ո ւ մ: «Ո՛ ստեղծ առանձին զսիրտ նոցա, ի միտ առնու զամենայն գործս նոցա» (Սաղմ. լբ. 12.):

**Բ.** Երբ մարդկային սիրտը դժուարանում է չարից հեռանալ, յայն դէպս Աստուած չարը ուրիշ ճանապարհով է խափանում—չ ա ր մ տ ա դ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ի գ ո ր ծ ա դ ր ո ւ թ ի ւ ն ն ա ր գ ե լ ո ւ մ է: Դեռ Յովբի գրքի մէջ կարդում ենք. «Կանգնէ զկորուսեալս, եւ փոփոխէ զխորհուրդս խորամանկաց» (Յովբ. ե. 12.): Ինչպէս որ Փարաւոնի չար մտադրութիւնը՝ իսրայէլացիներին ստրուկ պահել, եգիպտացիներին Կարմիր ծովի մէջ ջրահեղձ անելով խափանեց, այսպէս էլ Հերովդէսի չար միտքը՝ մանուկ Յիսուսին սպանման վերաբերութեամբ—Նա հրամայեց Յովսէփին և Մարիամին գիշերով Եգիպտոս փախչել: Մինչև այսօր ևս իրաւացի է «խորհուրդ մարդկան՝ կամք Աստուծոյ» խօսքերը, որովհետև, երբ Աստուած մինին պաշտպանել է կամենում, կտրում է աղեղի թելը հէնց այն րոպէին, երբ նետը պիտի սլանար և մահ գործէր: Երբ Աստուած անցորդին պաշտպանում է թշնամու դարանագործութիւնից այն րոպէին՝ երբ նա հրացանի շնիկը մի թեթև շարժումով պիտի յետ քաշէր և զոհին գետին տապալէր, հէնց այդ րոպէին Աստուած կամ աւազի մի հատիկով կամ փոշի է վերկացնում, կամ մի տեղը քոր է գալիս՝ գնդակը շեղ է անցնում և այսպէս հեռացնում է չարը: Հէնց դրա համար էլ



ասում է Երեմիա մարգարէն. «Գիտեմ, տէր, զի ոչ մարդոյ է ճանապարհ իւր, եւ ոչ այր գնասցէ եւ յաջողեսցէ զճանապարհս իւր» (Ժ. 23.): (Գիտեմ, ով Աստուած, որ մարդու անելիքն իրանից չէ կախուած, ոչ ոք չի կարող ասել, թէ նա ինչ ճանապարհով պիտի ընթանայ:) Դրա համար էլ քրիստոնեան հաւատում է, որ ա մ ե ն ա յ ն ի ն չ Աստծուց է, նոյն իսկ մեր կեանքի թելը մի րոպէ ոչ վաղ և ոչ ուշ կկտրուի՝ քան թէ Աստուած ինքը որոշել, սահմանել է: «Զի ոչ ոք ի մէնջ անձամբ կեայ, եւ ոչ անձամբ մեռանի: Եթէ կեամք՝ տեառն կեամք, եւ եթէ մեռանիմք, տեառն մեռանիմք» (Թ. առ. Հռմ. ժդ. 7. 8.):

**Գ.** Բայց ոչ ամեն ժամանակ է խ ա փ ա ն ո ւ մ Աստուած չար մտադրութիւնները. Ն ա ե ր բ ե մ ն չ ա ր ո ւ թ ե ա ն ե ր և ա ն գ ա լ ը թ ո յ լ է տ ա լ ի ս՝ ո ր պ է ս զ ի ն ր ա ն ի ւ ր բ ա ր ի ն պ ա տ ա կ ն ե ր ի հ ա մ ա ր գ ո ր ծ դ ն է: Երբ Յովսէփի եղբայրներն իրանց եղբօրն ուզում էին սպանել, Աստուած նրանց միտքը փոխել տուաւ: Երբ եղբայրները հեռուից եկող իսմայելացի վաճառականներին տեսան, մտադրուեցին իրանց եղբօրը վաճառել: Աստուած թոյլ տուաւ, որ այդ միտքը յաջողի, բայց չարութեան հետևանքին Աստուած այլ ընթացք տուաւ՝ քան թէ ե ղ բ ա յ ր ն ե ր ն էին կամենում: Երկար տարիներից յետոյ, երբ եղբայրները Եգիպտոս էին գնում ցորեն գնելու, Յովսէփն ասաց նրանց. «Դուք խորհեցարուք զինէն չարութիւն, եւ Աստուած խորհեցաւ վասն իմ ի բարութիւն, որպէս եղեւ իսկ յաւուր յայսմիկ, զի կերակրեսցի ժողովուրդ բազում» (I. Մովս. ծ. 20): Աստուած մարդոց սրտերը ջրի սահանքի նման փոփոխում է—«Որպէս սահանք ջրոց, նոյնպէս եւ սիրտ թագաւորի ի ձեռս Աստուծոյ, ընդ որ կոյս կամի հայեցուցանել՝ դարձուցանէ զնա» (Առակք իա. 1.): «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա, ի միտ առնու զամենայն գործս նոցա» (Սաղմ. լբ. 15): Նա ղեկավարում է ինչպէս գ ո ր ծ չ ի ն, նոյնպէս գործը և կառավարում է գործի հետևանքը ըստ ի ւ ր կամաց, ըստ ի ւ ր իմաստութեան: Քանի՜ քանիսը պարզ աչքով նկատած կը լինին, որ այս կամ այն գործում ինչ նպատակներ էին որոշել, բայց վերջը հասել են մի այնպիսի տեղ, որ սկզբում երբէք չէին երազի: Գիտութեամբ թէ անգիտութեամբ իւրաքանչիւրն էլ Աստծու ճանապարհով է գնում. նոյն իսկ չարը զօրութեան մի մասն է, որ թէև չարութիւն է կամենում, բայց և այնպէս բարի բան է առաջ բերում: Ահա՛ մի մխիթարական կէտ հոգւով թուլացածների և բե-

կեալ սրտերի համար: Երբ իմ կամքը բարի, արդարացի և հաստատ է, այն ժամանակ գործի եմ դիմում և ոչ ոք չի կարող խանգարել: Երբ այս այսպէս է, մենք մարդիկս ինչ կարող ենք անել Աստծու կամեցողութեան առաջ. չէ՞ որ Նրա կամքը պիտի կատարուի, չէ՞ որ նա վերջ ի վերջոյ իւր նպատակին պիտի հասնէ:

3. Մի առարկութեան վրայ ևս ուշադրութիւն պիտի դարձնենք: Կան շատ մարդիկ, որոնք թէև ընդունում են Աստծու աշխարհակալութիւնը, բայց չեն կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ Աստուած ամենայն բանի, նոյն իսկ ամենափոքրի, ամենաչնչինի համար հոգ է տանում: Այդպիսիք ընդունում են, որ Աստուած ղեկավարում է աշխարհները. ազգերին իրանց ճանապարհով է տանում. որ նա է աշխարհիս պատմութեան առաջնորդը, զորօրինակ ցուրտ ձմեռով վերջ դրաւ Նապօլէօն I-ի աշխարհակալական ձգտումներին—քանի քանի անգամ կարճ ժամանակուայ փոթորկով ոչնչացրել է ծովի վրայ անթիւ պատերազմական նաւեր: Բայց այդպիսիք դժուարանում են հաւատալու, թէ Աստուած փոքր, ամենաչնչին իրերի համար էլ է հոգ տանում: Դրա համար դոքա ուրանում են աստուածային յայտնութիւնը—«Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանգի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց հօր ձերոյ: Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է» (Մատթ. Ժ. 29. 30.): Աստծու խօսքին հաւատացող քրիստոնեան գիտէ, որ Աստծու մօտ ոչ մի բան փոքր չէ, որ Աստծու սէրը ամենափոքրիկ համարուածներին էլ մեր օգտին է ծառայեցնում: Վաճառականների կարաւանը մի ժամ առաջ կամ ուշ անցնելու լինի անապատով՝ շատերի համար չնչին բան է: Բայց և այնպէս այս առիթը Յովսէփի պատմութեան մէջ մեծ նշանակութիւն ունի, վասնզի, եթէ իսմայէլացի վաճառականները մի ժամ ուշ էին եկել, Ռուբէնը գուբից կհանէր Յովսէփին և հօրը կտանէր: Այն ժամանակ Յովսէփն այլ ևս մեծ մարդ չէր լինի Եգիպտոսում. նա Եգիպտոսը սովից չէր կարող ազատել և այնքան մարդոց փրկողը չէր լինի: Եւ կամ վերցնենք Մովսէսին: Եթէ Փարաւոնն այն տմարդի հրամանը չէր հրատարակել, որով եբրայեցւոց արու զաւակները Նեղոս պիտի ձգուէին, Մովսէսին ի հարկէ գետի ափը չէին նետի. նրան արքունի պալատ չէին տանի. ժամանակի իմաստունները նրան դաստիարակ չէին լինի և իւր ազգի փրկիչ և օրէնսատու չէր լինի: Կայծակը մի քայլ դէսը, թէ դէնն է խփել՝ չնչին բան է թւում մեզ, բայց այդ չնչին



համարուածը քանի—քանիսի կեանքն է ազատում կամ խլում: Ուրեմն ինչ բանն է փոքրիկ՝ Աստծու մօտ: Արդեօք աւազի հատիկը: Բայց երբ սա մարդու աչքն է ընկնում, այլ ևս փոքր չէ: Իսկ ինչն է մեծ համարւում Աստծու մօտ: Ո՞րն է նրա մօտ մեծը, փոքրը, մասնաւորը, ընդհանուրը: Արդեօք մարդը, մի ազգ, մարդկութիւն, երկրագունդը, արևի համակարգութիւնը: Արդեօք արևի համակարգութեան ստեղծման համար աւելի աշխատանք է գործ դրել՝ քանթէ մի որդի: Ո՞րտեղից է սկսում Աստծու նախախնամութիւնը և ու՞ր է յանգում: Ուրեմն պարզ է, որ Աստուած ոչ մի բան փոքր չէ համարում. նա իւր հայեացքն ուղղած ունի, ինչպէս ամբողջութեան, նոյնպէս և մասի՝ առանց որի ամբողջութիւնը գոյութիւն ունենալ չէր կարող: Երկրաւոր իշխանները, տէրերը մտածում են միայն ամբողջութեան վրայ. նրանք չեն էլ կարող մտածել, թէ իրանց իշխանութեան ներքոյ գտնուած երկրում մարդու մէկը հիւանդ է կամ զուրկ է օրական պարէնից: Աստծու թագաւորութեան մէջ բոլորովին այլ է—այնտեղ ամբողջութիւնը չի կարող գոյութիւն ունենալ, եթէ Աստուած մասնաւորի մասին չհոգայ:

4. Աստուած հոգ է տանում ամեն բանի և ամենի համար—նա քո մասին էլ է հոգ տանում: Քո կեանքը, քո առողջութիւնը, քո կեանքի սկիզբն և վախճանը նրա ձեռին է (Սաղմոս ճլ. 13. 15.): Քո աշխատանքին նա է ոյժ և զօրութիւն տալիս. նա է ընթացք տալիս քո մտադրութիւններին—«Ապօղոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց: Այսուհետև ոչ այն ինչ ոք է՝ որ տընկեաց, եւ ոչ այն՝ որ ջուրն ետ, այլ՝ որ աճեցոյցն Աստուած, որ տնկեացն, եւ որ ջուրն ետ մի են.... (I. Թ. ա. Կրնթ. գ. 6....): Նա է քո կեանքը պաշտպանողը և ըստ իւր իմաստութեան վտանգները քեզնից հեռացնողը: Ինչպէս որ աւազակների ձեռք ընկած վիրաւորուածի համար Սամարացուն իւղով և գինիով ուղարկեց, այնպէս էլ Աստուած իւր օգնութիւնը քեզ չի զլանալ: Ուրախութեան և վշտի, խնդութեան և ցաւոց ձեռքով առաջնորդում է քեզ դէպի քո կոչման նպատակը, որի մասին յիշում է մեզ Մատթէոսը. «Եղերուք դուք կատարեալք, որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մտթ. Է. 48.): Նա միակն է, որին դու կարող ես քո անձը յանձնել, երբ քեզ ամենքը մոռանալու լինին. Նրա հայրական սէրը յաւիտեան ջերմ է քեզ համար, նրա հայրական սէրը յաւիտեանս նոր է, նոյնն է: Ուրեմն կարող ես մխիթարուել: Քեզ ոչինչ չի պատա-

հի բացի նրանից՝ ինչ որ Աստուած որոշել է և ինչ որ յօգուտ քո է։ Երկիւղ մի՛ կրի մարդկանցից, այլ հաւատա՛ և յոյս տածի՛ր—«Յայտնեա՛ առաջի Տեառն զճանապարհս քո եւ յուսա՛ ի նա» (Սաղմ. լզ. 5.)։

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՌԱՆՁԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՉԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

Մենք էլի մի անգամ դառնում ենք աստուածային աշխարհավարութեան խնդրին, որովհետև սուրբ գրքի ուսմունքներից ոչ մինն այնպէս խաղաղացուցիչ, մխիթարիչ և սփոփիչ չէ, ինչպէս այս հարցը. միւս կողմից էլ ոչ մի կէտ այնքան բազմազան կասկածանքների ենթակայ չէ, ինչպէս այս։ Իրողութիւն է, որ աստուածային աշխարհավարութեան անըմբռնողութիւնը հազարաւոր մարդոց համար վտանգաւոր խութ է, որի վրայ իրանց հաւատոյ նաւը խորտակւում է և անհաւատութեան անդունդն է խորասուզւում։ Աշխարհիս մէջ եղած զանազան չ ա ր ի ք ն ե ր ը գլխաւորապէս կեանքի ծանր վ շ տ ե ր ի ց ն են ծագում, որոնք շատերին գայթակղեցնում են—ես սիրով կհաւատայի աստուածային նախախնամութեան, որ ամեն ինչ յօգուտ իմ է ղեկավարում, ասում են ոմանք, եթէ ինձ համոզէին, թէ ոմանց հետ պատահող զարհուրելի վ շ տ ե ր ը վերև յիշած հաւատի հետ յարմարւում են։ Մի տեղ մութը խաւարում չարագործի մէկը կայծ է ձգում դարմանոցը, հրդեհ է գոյացնում և մի քանի ժամուայ մէջ հարիւրաւոր տներ մոխիր է դարձնում և հազարաւոր մարդոց օրական հացի կարօտ թողնում։ Մի այլ տեղ ժանտախտ, հնդախտ է լոյս ընկնում, զրկում է երիտասարդ հօրը կեանքից, խլում է ընտանիքի ուրախութիւնը՝ թողնելով որդւոց և կնոջը արտասուաթոր աչքերով գերեզմանի ափին կանգնած՝ անտէր, անօգնական և լալական հառաչներով։ Երրորդ տեղում կարկուտը ջարդում է ամեն ինչ և ողորմելի գիւղացուն յուսահատ վիճակի մէջ դնում։ Չորրորդ տեղում արիւնահեղ պատերազմը վերցնում է մարդոց հանգստութիւնը, խանգարում է աշխատանքը, մեռնում են ազգի ընտիր որդիքը երիտասարդ հասակում—քանի քանի ջահել այրիներ ողբում են իրանց ամուսնու մահը, որի վերջին խօսքը լսելուց էլ կարօտ մնացին, իսկ դրա հակառակ՝ կենդանի մնացին մահ ցանկացող ծերունի հայրը,



պառաւ տատը, որոց ապրելը մի բեռն է ընտանիքի համար։ Այս տեսակ երևոյթները, իրողութիւններն ինչպէս պիտի հաշտեցնել աստուածային աշխարհավարութեան հաւատոյ հետ։ Ճիշտ է, որ մեր վերևում մի բարի Աստուած բնակւում է, որ բոլոր գործերը ղեկավարում է յօգուտ մեր։ Ո՛վ պիտի լուծէ մեզ կեանքի այս հանելուկը։ Սրանք կասկածներ են՝ որ շատերի սիրտը ի հիմանէ փոթորկում են։ Կասկած, որ մեզ վրայ սուրբ պարտականութիւն է դնում, աստուածային աշխարհավարութեան ուսման մասին էլի մի ժամ ուշադրութիւն նուիրելու։

Ճիշտ է՝ բազմատեսակ չարիքներ զգալի կերպով խանգարում են մարդուս երջանկութիւնը։ Պատերազմ և սով, զրպարտութիւն և աղքատութիւն, հոգս և տագնապ, հիւանդութիւն և մահ՝ երբեմն այն աստիճան ներգործող են, որ բարեպաշտն անգամ ստիպւում է հառաչել—Աստուած, ինչու համար են այս բոլորը։ Եւ եթէ ուղիղ է այն, թէ այսպիսի չարիքները մարդուս պէսպէս վնասներ են պատճառում, գոնէ սխալ է այն՝ թէ աշխարհումս ա ւ ե լ ի թշուառութիւն՝ քան թէ երջանկութիւն, ա ւ ե լ ի վիշտ՝ քան թէ ուրախութիւն կայ։ „Փորձենք այս բանը մի անգամ ևս մեր անձնի վրայ։ Մենք ամենքս էլ մեծ մասամբ առողջ ենք՝ քան թէ հիւանդ, մեծ մասամբ բաղդի յաջողութեան հանդիպած՝ քան թէ անյաջողութեան պատահած։ Բացի դրանից շատ չարիքների պատճառը մարդիկ իրանք են։ Մարդիկ աւելի առողջ կլինէին, եթէ փոխադարձաբար աւելի չափաւոր լինէին։ Երկիրս նրա համար երկինք չէ, որովհետև բնակիչները հրեշտակներ չեն։ Դարձեալ՝ քանի քանի մարդիկ նրա համար են տուժել, որովհետև կամ չարիքը հեռացնելու համար Աստծու միջոցները չեն գործադրել և կամ նոյն միջոցը սխալ եղանակով են գործ դրել։ Օրինակի համար՝ բազմաթիւ մարդիկ փոխանակ մի խելացի բժշկի դիմելու հիւանդութեան միջոցին, դալլաքին են յանձնում իրանց անձը և սրանով կենդանի կենդանի գերեզման մտնում։ Շատ քչերն են գործ դնում առ ձեռն միջոցները բնութեան կործանիչ ոյժերի դէմ մաքառելու համար (շանթարգել, ապահովութիւն հրդեհից, կարկտաքարշ, ծաղկի պատուաստումն, դեղերի գործածութիւն...)։ Եթէ մարդիկ լաւ մտածէին կամ խորհրդակցութեամբ գործ տեսնէին, հարիւր անգամ պակաս չարիքի կհանդիպէին։ Ապացուցած իրողութիւն է, որ մարդիկ իրանց թեթևամտութեամբ աւելի վնաս են պատճառում՝ քան թէ վարակիչ հիւանդութիւնները։

Դարձեալ՝ եթէ Աստուած ջնջելու լինէր բոլոր մեզ վնաս բերող բնութեան ոյժերը, այն ժամանակ մենք կզրկուէինք և նրանց պատճառած օգտից, բարիքներից։ Օրինակի համար՝ կրակը հրդեհում է մեր բնակարանները, բայց նոյն կրակը տաքացնում է մեր բնակարանը, եփում է կերակուրը, նրանով ենք հաց թխում, նրանով ենք հալում մետաղները։ Փոթորիկն արմատախիլ է անում ծառերը, բայց ցրւում է միևնոյն ժամանակ և վնասակար օդերը....։ Վերջապէս՝ շատ չարիքներ թոյլ է տալիս Աստուած մեծամեծ բարիքների համար, որոնք այդ չարիք համարուածներից են յառաջ գալիս։ Մինչև Յովսէփին չծախէին, իւր ազգի ազատիչ չէր լինի. եթէ Փարաւոնը չէր նեղել իսրայէլացիներին, նրանք խոստացեալ երկիրը չէին գնայ։ Դեռ այս տեսակ խորհրդածութիւններն ընդունակ են մեղմելու մեր տրտունջները աշխարհիս չարութեան մասին և աստուածային նախախնամութիւնը մի փոքր այլ ձևով ըմբռնելու։ Կատարեալ ձևով այնժամանակ ենք միայն համոզւում, երբ աշխարհիս չարիքները, կեանքի վշտերը իբրև դաստիարակիչ միջոց ենք ընդունում, որ երկնաւոր հայրը գործ է դընում մեզ դէպի մեր կոչման նպատակն առաջնորդելու—այս բանը Մատթ. ե. 48-ում տեսանք։ Այս նպատակին մենք այն ժամանակ ենք միայն հասնում, երբ Աստուածանից ընդունած կարողութիւնները ճիշտ ձևով ենք գործ դնում։ Ի՜նչպէս շուտ մոռանում են մարդիկ այս կանոնը երջանկութեան օրերում։ Ինչպէս որ մեծ մարդիկն ըստ մեծի մասին նեղ վիճակից են բարձրացել, այնպէս էլ մինչև օրս կարիքը մեծ խթան է ոյժերը լարելու և զօրացնելու։ Գիւտերն ըստ մեծի մասին կարեաց ժամանակ են գտնուել. կարիքը ցնցում, պարթեցնում է թմրած ոյժերը. թագուցեալ ձիրքերը երևան է հանում. տատանուող ուղղութիւններին վճռականութիւն է տալիս և սովորեցնում է աշխատել և աղօթել։ Ինչպէս որ մինչև մութը չընկնի, աստղեր տեսնել չի կարելի, այնպէս Աստծուն ճանաչում ենք մեր նեղութեան խաւար ժամերում։ Մի՞թէ յաւիտենական սէրը օգուտ չպիտի քաղէր կեանքի վշտերից։ Մի՞թէ Աստուած այս տեսակ կրթիչ միջոցները մարդկութեան համար բարձի թողի պիտի անէր։

Ինչպէս մի երկրաւոր հայր իւր որդւոց համար իւր ոյժերը լարում է և գիշեր ցերեկ նրանց համար աշխատում, այնպէս էլ երկնաւոր հայրը։ Ինչպէս որ երկրաւոր հայրերը ներողամիտ են դէպի



մեր թուլութիւններն ու պակասութիւնները, ինչպէս որ թոյլերին հովանաւորում են, իսկ ընկեալներին ձեռքով բարձրացնում, այնպէս էլ երկնաւոր հայրը գործ է դնում յիշեալ դաստիարակչական միջոցները, որից դեռ երկրաւոր հայրերը մեծ օգուտ են քաղում—կարճ՝ նա վարձատրում և պատժում է իւր որդւոց։ Այս պատճառով էլ մենք Աստծու ուղարկած վշտերը երկու կարգի ենք բաժանում—պատժի վշտեր և փորձութեան վշտեր։

Պատժի վշտերը մեր գործած յանցանքների հետևանքներն են։ Վատնողութեան վերջը աղքատութիւնն է, անչափաւորութեանը՝ հիւանդութիւն....։ Պատժի վշտերի մասին շատ յարմար է ս. գրքի խօսքը—«Խրատեսցէ զքեզ ապստամբութիւնդ քո, եւ չարիք քո կշտամբեսցեն զքեզ, եւ ծանիցես եւ տեսցես թէ չար եւ դառն է քեզ թողուլն զիս» (Երեմիա. բ. 19.)։ Այն նպատակը, որ Աստուած ունի, հայրական բարութիւնն է, վասնզի պատժի ձեռքով նա կամենում է իւր անհնազանդ որդւոց յորդորել, խրատել, լաւացնել և չարից հեռացնել, պաշտպանել։ Պատժի վիշտը պարզելու համար մի առակ պատմենք—«Մի տղայ ծովի ափին պառկած էր—նրա քունը տարաւ։ Հայրը փոքր ինչ հեռու աշխատում էր։ Յանկարծ փոթորիկ բարձրացաւ. ծովն սկսեց տակն ու վրայ լինել. ալիքներն ափից դուրս էին գալիս և քայլ առ քայլ յառաջ գնում դէպի քնող տղան։ Հայրը վերևից նկատեց այս բանը և սկսաւ բարձր ձայնով կանչել։ Տղան չէր լսում հօր ձայնը, խորը քնած էր։ Հայրը դէպի որդին շտապեց, շարժեց նրան և աշխատում էր զարթեցնել։ Տղան խորն էր քնած։ Ալիքները կատաղաբար յառաջ էին գալիս—երկիւղը հետզհետէ զգալի էր դառնում։ Վերջապէս՝ երբ ամեն ինչ ունայն անցաւ զարթեցնելու համար, հայրը մի լաւ ապտակ տուաւ տղին։ Ապտակը ցաւ պատճառեց, բայց աննպատակ չէր—տղան զարթեց, աչքերը տրորեց, տեսաւ վտանգի մօտալուտ լինելը և ժամանակին ազատեց իւր գլուխը»։ Սա առակն է, մեկնութիւնն էլ դժուար չէ։ Տղան՝ յանցանքի մէջ եղող մարդս է։ Ծովը՝ ապականութիւնն է, որ սպառնում է կլանել յանցաւորին։ Հայրն՝ Աստուած է, որ որդւոյ սխալանքը տխրութեամբ է տեսնում և յանցաւորին ապաշխարութեան է հրաւիրում։ Եթէ մարդս չի լսում, ենթարկում է նրան զանազան դատերի և սպառնում է պատժելու։ Իսկ եթէ այս էլ անհետևանք է մնում, այն ժամանակ ապտակում է յանցաւորին, այսինքն նրան տեսակ տեսակ վշտեր է պատճառում, այնպէս որ նա

ստիպուած է մեղաց քնից արթնանալու: Եթէ մարդս զարթնում է և ազատւում ապականութիւնից, Աստծու հայրական նպատակը կատարուել է: Ո՞վ արդեօք պիտի մերժէ և տրանջայ Աստծու այս վարմունքի վրայ: Ոչ թէ Աստծու, այլ մեղաց դէմ պիտի տրտնջայ մարդս և իւրաքանչիւր ոք պիտի գոհանայ Աստուածանից, որ նա պատժով իւր որդւոց ուղղում է, որ նա ցաւ է պատճառում բաւականութիւն զգալ տալու համար:

Ի հարկէ կան բազմաթիւ յանցաւորներ, որոց բանը չատ լաւ է գնում և ընդհակառակն՝ քանի քանի բարեպաշտներ ձախորդութեան մէջ են: Դեռ Ասափը գանգատւում է ասելով. «Նախանձեցայ ես ընդ անօրէնս՝ խաղաղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի» (Սաղմ. հբ. 3): Բայց նոյն Ասափն էլ շարունակում է տուն 14. «Մինչեւ մտից ի սրբութիւն Աստուծոյ եւ ի միտ առից զկատարած նոցա»: «Տեսի զամբարիշտն վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրս Լիբանանու: Անցի՝ եւ ահա ոչ էր, խնդրեցի՝ եւ ոչ գտաւ տեղի նորա» (Սղմ. լզ. 33. 34): Մենք պիտի յանցաւորի վերջն ի նկատի առնենք, եթէ Աստծու դատաստանի մասին վճիռ ենք կամենում կայացնել: Ուրեմն այստեղից պարզ է, որ Աստուած պատժում է: Եթէ այսօր չէ պատժում, վաղը կպատժէ, իսկ եթէ վաղը չպատժէ, յետոյ՝ լինի այստեղ, թէ այնտեղ: Միթէ հօր ուշ պատժելը հիմք է որդւոց կողմից՝ նրա արդարադատութեան վրայ կասկածելու: Եւ կամ ո՞ր որդին կարող է առաջուց ասել, թէ հայրը երբ կպատժէ եղբօրը կամ քրոջը: Հայրը երբեմն պատիժն ուշացնում է, ժամանակը չէ որոշում, երկայնամիտ է լինում՝ ըստ իւր հայեցողութեան, որքան էլ կարեւոր է համարում: Նոյն հայրը երբեմն էլ իւր ձեռով է պատժում—կամ ակնյայտնի ամենի առաջ և կամ ծածուկ: Մեծ սխալ է մեր կողմից՝ երբ մենք ամեն ինչ երջանիկ ենք համարում, ինչ որ մեզ երջանիկ է երեւում: Մենք տեսնում ենք միայն արտաքին բարեկեցութիւնը, արտաքին երջանկութիւնը, իսկ ներքինը մեզ անյայտ է, խիղճը՝ կրծող որդը չենք տեսնում մենք:

Այն հաւատը, որ մենք ունենք դէպի հայրական սէրը, կեանքի հանելուկն այսպէս է վերլուծում—մենք կամաց կամաց սովորում ենք ճանաչել Աստծուն, որ չարիքները նրա ձեռին դաստիարակչական միջոցներ են յանցաւորների համար, որպէսզի յանցաւորները դառնան և ապրեն. նոյնը նաև դաստիարակչական միջոց է բարեպաշտների համար, որպէսզի նրանք էլ հաւա-



տոյ մէջ վարժուին, հաստատ լինին հաւատարմութեան և յաւիտենական կեանքի համար դաստիարակուին: Սրանով մենք անցնում ենք վշտի երկրորդ տեսակին՝ փորձութեան վշտին:

Փորձութեան վշտերը շատերին են տեղիք տուել կասկածելու Աստծու իմաստութեան, արդարադատութեան և սիրոյ մասին: Ով ճիսկ քրիստոնեայ է, այնպիսին մխիթարանք է գտնում այն հաւատով, որ փորձութեան վշտերը Աստուածանից է գալիս. իսկ ինչ որ Աստուածանից է գալիս, բարի է: Սա առաջին մխիթարութիւնն է: Երկրորդ մխիթարութիւնն այն է, որ Աստուած վշտերը իւր ժամանակին է ուղարկում՝ ո՛չ վաղ և ո՛չ ուշ՝ ոչ աւելի, ոչ պակաս, այլ ինչքան որ նրա սէրը կարեւոր է համարում: Նա վշտերը վերացնում է այն ժամանակ, երբ մենք հոգեպէս օգտուել ենք՝ երբ մենք վեր ենք առել նրանից մեզ կարեւոր շահը և երբեմն մի այնպիսի ժամանակ, երբ մենք ամենից քիչ յոյս ունէինք:

Այս ոգեկան շահը փոքր չէ, ընդհակառակն վշտի օրհնութիւն այնքան նշանաւոր է, որ մենք իրաւունք ունենք այդ մասին փոքր ինչ մանրամասն խօսելու:

Առողջութեան արժէքը մարդս ընդունակ է հիւանդութեան օրերում միայն գնահատել. խաղաղութեան գինը արիւնահեղ պատերազմի ժամանակն է հասկացւում: Տեւական երջանկութիւնը մարդուս անտարբեր է դարձնում դէպի մեր նմանների դժբաղդութիւնը: Կեանքի մէջ պատահած վշտերն են, որ սովորցնում են մեզ Աստծու տուած պարգեւներն ճիսկ ձեւով գնահատելու (եթէ մենք կեանքը պատկերի նմանեցնենք, այն ժամանակ վիշտը ստուերի է նմանում. ի՞նչի է նման պատկերն առանց ստուերի): Բացի դրանից, մարդս վշտերի մէջ հեզութիւն է ուսանում. անբաղդութեան օրերում ընդունակ է դառնում իւր պարանոցը Աստծու լծի տակ կամովին դնելու. լսելու նրան, այն՝ ինչ որ երջանկութեան օրերում մոռացել էր. երկրային թանկագին կորուստները մեր աչքը բաց են անում և համոզում են մեզ, որ երկրաւոր սեպհականութիւնները ոչինչ են, ունայն են, անհիմն են: Երբ հարուստը կորցնում է իւր ինչքը. երբ մեծատունը զրկւում է իւր որդկերանցից... նոր են նկատում իրանց սխալը, որ աշխարհային իրերի հետ չպիտի կապեն իրանց սրտերը: Վշտերը՝ երկրաւոր իրերի ոչինչ լինելը մեզ նկատել տալուց յետոյ, մեր սրտերը պատրաստում են Աստծուն որոնելու և նրա հետ միանալու: Քանի քանիսն իրանց հայեացքը տեսանելիից դէպի

անտեսանելին, ժամանակաւորից դէպի յաւիտենականը չէին դարձնի, եթէ նրանց առաջնորդը, ճանապարհ ցոյց տուողը թշուառութիւնը չէր եղել: Հարստի մինի միակ որդին մեռաւ և նա սկսաւ կասկածել Աստծու բարութեան մասին: Բարեպաշտի մէկը նկատեց նրան. «Աստուած էլ ձեզ հետ այնպէս է վարւում, ինչպէս դուք ձեր ոչխարների հետ: Երբ հին ոչխարները չեն ուզում գոմ մտնել, ուր դուք նրանց դարման և խոտ էք տալիս, ցրտից պաշտպանում էք, դուք վերցնում էք մի գառը, առջեւից տանում էք, այն ժամանակ հին ոչխարներն էլ հետեւում են նրան և դուք ձեր նպատակին հասնում էք»:

Վշտերի գլխաւոր օգուտը նրանում է կայանում, որ նրանք ամենալաւ դպրոցն են, ուր մենք ուսանում ենք մեր չգիտցածը և վարժւում ենք այն բանում, ինչ որ չէինք կարողանում երջանկութեան օրերում: Վշտերի մէջն է սովորում մարդս ճանաչելու առաքինութիւնները—համբերութիւն (Յովբ), հեզութիւն (Յովսէփ), հաստատակամութիւն, անյողդողդութիւն (առաքեալներ), անձնատուր լինել Աստծու կամաց (Պօղոս), թշնամուն սիրել (Դաւիթ).....: Ո՞ւր կարող է մարդս վարժել իրան այս առաքինութեանց եթէ ոչ վշտի մէջ: Կարո՞ղ ես դու քեզ համբերութեան մէջ վարժել, երբ ամեն ինչ քո ցանկութեան համաձայն կատարուի: Եւ կամ կարո՞ղ ես ներողամիտ լինել, եթէ քեզ ամենքը սիրելու լինին: Ի՞նչպէս ես կամենում ներողութեան վարժուել, եթէ քեզ ոչ ոք չվիրաւորէ: Եւ կամ հեզութեան վարժուիլ, եթէ ամբողջ աշխարհը քեզ ովսաննա աղաղակէ: Մի՞թէ թշնամուն սիրել հնարաւոր է, եթէ թշնամի չունենաս: Այստեղից պարզ երեւում է, որ կեանքի վշտերի մէջ մարդս նստում է, խաղաղում է, հեզ, պատրաստակամ, ներող... է դառնում. վշտերը մարդուս լուացնում, կատարեալ են դարձնում—սա ես մի ապացոյց է Աստծու աշխարհակալութեան համար: Պատժի և փորձութեան միջոցները Աստծու ձեռին դաստիարակչական միջոցներ են: Աստուած հայր է—մենք նրա որդիքը: Ինչպէս որ մի երկրաւոր հայր իւր դաստիարակչական միջոցները որդւոց վրայ գործ դնելիս խտրութիւն է անում—մեծի հետ այնպէս չէ վարւում՝ ինչպէս փոքրի, հասկացողի վրայ մի ակնարկ է ձգում, իսկ չըհասկացողին մարմնական պատիժ էլ է տալիս.... այնպէս էլ Աստուած իւր առանձին նախագիծն ունի և տալիս է ամեն մինին այն՝ ինչ որ բարի է, օգտաւէտ է: Թո՛ղ ինչ էլ ուզում է լինի՝ վիշտ թէ երջանկութիւն, վրդովմունք թէ խաղաղութիւն—չպիտի ո՛չ Աստ-



ծու դէմ տրտնջալ, ո՛չ ուրիշներին դատել և կարծիք յայտնել, թէ ամեն մի զրկողութիւն վատ է, իսկ ամեն մի երջանկութիւն՝ բարի: «Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի ծնէ. եւ հարցին զնա աշակերտքն նորա, եւ ասեն. Ռաբբի ո՞յր վնաս է, սորա՞, թէ հօր եւ մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի: Պատասխանի ետ Յիսուս. Ոչ դորա վնաս է եւ ոչ հօր եւ մօր իւրոյ, այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ ի դմա» (Յովհ. թ. 1—3): Երբ մենք կամ ուրիշը վշտի ենք հանդիպում, պիտի ամենայն հանգստութեամբ հարցնենք—արդեօք երկնաւոր հայրն ինձ որ առաքինութեան մէջ է ուզում վարժել և կամ ինչ սխալանքից կամենում է ինձ ազատել: Մենք նրա դաստիարակութիւնը հանդիստ և խաղաղ սրտով պիտի ընդունենք և այդ հանդիստ և խաղաղ սրտովը պիտի զօրացնենք մեզ լսելու. «Զի այսպէս ասէ Տէր, Տէր սուրբն Իսրայէլի, յորժամ դարձցիս և հեղեց հանիցես, յայնժամ կեցցես եւ գիտասցես թէ ուր իցես: Զի յուսացեալ էիր դու ի սնոտիսն, ուստի եղեւ եւ զօրութիւն ձեր....» (Եսայի լ. 15.): Թո՛ղ, ինչ որ ուզում է լինի—ինչ էլ որ լինի, անողը նա է, որ ամենիս սիրում է—նա այն բոլէին էլ է բարի ցանկանում, երբ ցաւ է պատճառում, ուստի և պարտ ենք յաւիտեանս գոհանալ նրանից և օրհնութեամբ յիշել նրա անունը: Պօղոսի հետ պիտի խոստովանենք. «Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն. համբերութիւն՝ զհանդէս, հանդէս՝ զյոյս, յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» (Թ. առ. Հռմ. ե. 3—5.):

Մեր խօսքին վերջ տալուց առաջ՝ մի կէտի վրայ ես պիտի մատնանիշ լինենք. Երբեմն այնպիսի մեծ և սարսափելի վիշտ է պատահում, որ շատերը յուսահատւում և տրտնջում են ասելով՝ մի՞թէ այս ցաւն Աստուած է ուղարկել: Օրինակի համար՝ անմեղ, փոքրիկ մանուկները շատ անգամ օրերով հիւանդ չարչարւում են, այնպէս որ տեսնողը սոսկում է, եթէ մարդ չզգայ նրանց նեղութիւնը՝ քարերը ձայն կտան: Մի՞թէ այս հանգամանքում էլ Աստուած ամենին սիրում է: Ինչո՞ւ համար է նա այդպիսի միջոցների դիմում: Իբրեւ այս հարցի պատասխան՝ ես ձեզ նախ՝ մի առակ պիտի պատմեմ և ապա՝ մի պատմութիւն անեմ:

Գիտնականի մինը իւր սենեակում նստած խորասուզուած էր քննութեան մէջ—նա հաշւում էր զանազան աստղերի հեռաւորութիւնն իրարից և նոցա ներգործութիւնը մերձակայ գիսաւոր աստղի վրայ: Նրա մօտ խաղում էր իւր երկու տարեկան երեխան: Մի օր

թոթովալով փոքրիկը՝ հարցրեց հօրը. «Ի՞նչու ես դու չարունակ մեծ մեծ գրքեր կարդում, այդ գրքերի մէջ ոչ մի պատկեր չկայ. ինչո՞ւ ես դու ամեն ժամանակ այդ անպէտք գրչով գրում, ինչո՞ւ գունաւոր վրձինով գառը չես նկարում»: Հայրն առ ժամ թողեց իւր զբաղմունքը և ժպտալով նայեց փոքրիկին: Ի՞նչ պիտի պատասխանէր նա մանկանը: Պէ՞տք է բացատրէր նրան, թէ ինչ կարևոր բան է իւր աշխատութիւնը գիտութեան համար և թէ գրանով նա մի նոր հայեցակէտ է մտցնում: Արդեօ՞ք բացատրէր նրան աստղերի հեռաւորութիւնը և մի գաղափար տար նրան աստեղագիտութեան մասին: Դուք չպիտի մեղադրէք հօրը, որ մերժեց այն հրեշտակի խնդիրը և սիրալիր խօսքով ասաց—«Այս բանը դեռ չես հասկանայ, երբ դու կմեծանաս, գուցէ այն ժամանակ կարողանաս հասկանալ իմ աշխատութեան արժէքը»: Ի՞նչ կասէիք, եթէ այս հարցի վրայ փոքրիկը բարկանար, լաց լինէր, ոտները գետին զարկէր և ասէր. «Ո՛չ, ուզում եմ հասկանալ, պատմի՛ր հայրիկ» և ստիպեց հօրը անպատճառ պատմել»: Սա առակն է: Մեկնութիւնը կարծեմ կարողանաք ինքներդ գուշակել: Որքան որ այն փոքրիկ մանուկը կարող էր հասկանալ, թէ իւր հայրը ինչ կամ ինչու այնպէս վարուեց, այնքան էլ մենք՝ մարդոյ որդիքս կարող ենք ըմբռնել Աստծու արածը, թէ նրա իմաստութիւնը ի՞նչն է բարի համարում մեզ համար: Մենք ամենքս էլ, նոյն իսկ ամենագիտունները, մեր հասկացողութեամբ երեխաներ ենք, ուստի անկարելի է մեզ համար Աստծու ճանապարհները որոշակի ճանաչելու: Աստծու իմաստուն նպատակները հասկանալու համար, նրա չափ իմաստութիւն և հասկացողութիւն պիտի ունենալ: Մենք մի բան գիտենք և այդ մի բանը Քրիստոսի միջնորդութեամբ ճիշտ և հաստատ գիտենք՝ Աստուած հայր է, իսկ հայրը չար չի կարող մտածել: Ուստի և քրիստոնեան չպիտի գայթակղուի, եթէ նրան այս կամ այն ձախորդութիւնը պատահէ՝ իրան անյայտ պատճառներով, այլ՝ նա պիտի հաստատ հաւատայ, որ Աստուած սէր է, իսկ սէր ասածդ չարութիւն չգիտէ: Կեանքի հանելուկն այն կեանքում կպարզուի:

Հիմա պատմութիւնն անեմ: Մի ճգնաւոր նստած էր մի օր իւր խրճթի դրանը: «Բաւական է ապրեմ», ասում էր նա, «մի՞թէ աշխարհիս մէջ ամեն ինչ արդար ճանապարհով է ընթանում: Ես տեսնում եմ, որ անմեղութիւնը չի գնահատւում, իսկ չարութիւնը բարձր ի գլուխ է. ես տեսնում եմ, որ արդարութիւնը հալածւում է, իսկ սուտը յաղթանակ է տանում: Թէ Աստծու ճանապարհները միշտ



իմաստուն և բարի են՝ ինձ հանելուկ է»: Այսպիսի մտածմանց մէջ ընկղմած՝ քունը տարաւ: Նա տեսաւ երազում՝ որ Աստծու հրեշտակը մարդու կերպարանքով մօտեցաւ նրան և բարեկամաբար ասաց. «Վե՛ր կաց և արի՛ ինձ հետ, ես ուզում եմ նախախնամութեան ճանապարհները քեզ ցոյց տալ»: Ճգնաւորը վեր կացաւ, վեր առաւ գաւազանը և հրեշտակի հետ միասին գնում էին անտառի միջով: Երկար գնալուց յետոյ՝ հասան մի տուն: Տանտէրը սիրով ընդունեց օտարականներին. հաց ուտացրեց և ամենայն քաղցրութեամբ հիւրասիրեց նրանց, որովհետև նա ասում էր. «Ես այսօր տօնում եմ մի ուրախ տօն, իմ թշնամին հաշտուել է հետս և որպէս նշան մեր բարեկամութեան, ահա այս ոսկէ բաժակն է ընծայել»: Հետևեալ օրը գնալիս կամենում էր վարձ վճարել, բայց հիւրատէրը ոչինչ չընդունեց: Հրաժեշտ առնելիս՝ ճգնաւորը տեսաւ, որ հրեշտակը ծածուկ՝ պահարանի դուռը բաց արաւ և ոսկէ բաժակը գողացաւ: Ճգնաւորը քիչ մնաց որ բարկանայ, իսկ հրեշտակն ասաց. «Սուսսս... Աստծու ճանապարհներն այսպէս են»: Փոքր ժամանակից յետոյ նրանք մի ուրիշ տան հասան: Տանուտէրը ժլատ, վատ մարդ էր. հայհոյեց նրանց և ինչ անպատիւ խօսք ասես, որ չասաց նրանց, երբ վերջիններս մի գիշերուայ պաշտպանութիւն խնդրեցին: «Պէտք է հեռանանք», ասա՛ց ուղեկիցը, «թափ տանք մեր ոտների փոշին»: Բայց գնալուց առաջ՝ հրեշտակը գողացած ոսկէ բաժակը անծանօթ տանտիրոջն ընծայեց: «Ինչ ես անում», ձայն տուաւ ճգնաւորը: Հրեշտակը մատը բերանին դրաւ և ասաց. «Սուսսս... Աստծու ճանապարհներն այսպէս են»: Սրանից յետոյ նրանք եկան երրորդ մարդու մօտ, որ իւր պարէնը երեսի քրտինքով էր աշխատում: Այս մարդը չափազանց բարեսիրտ էր, բայց աղքատ: «Ա՜խ», տրտնջում էր նա, «աղքատութիւնը հալածում է ինձ իւրաքանչիւր քայլափոխում—երբեմն թշնամիներս են ինձ վնասում, երբեմն բարեկամներս խաբում: Այս բոլոր վարմանց հետևանքն այն եղաւ, որ կորցրի ամեն ինչ—և՛ տուն, և՛ ագարակ, և՛ փողերս—ահա այս խրճիթն է իմ անցեալ փառքի լուռ վկան»: «Աստուած կօգնէ», ասաց ուղեկիցը: Այս ասաց և հեռանալիս կրակ ձգեց, այրեց խեղճ ծերուկի խրճիթը: Ճգնաւորի բարկութեան չափ չկար, քիչ էր մնում իւր ընկերի վրայ ընկնի և բռունցքով հարուածէ: Բայց վերջինս էլի մատը բերնին դրաւ և ասաց. «Սուսսս... Աստծու ճանապարհներն այսպէս են»: Սիրտը լի տխրութեամբ՝ ճգնաւորը գնում էր հրեշտակի

հետ: Այսպէս գնալով պատահեցին մի ուրիշ մարդու, որ յօնքերը կիտած, դէմքը խոժոռած նստած էր: Նրա միակ ուրախութիւնը իւր տասնեւութնամեայ որդին էր: Ճգնաւորը շատ հաւանեց այս մարդուն: Երբ հետեւեալ օրը գնում էին, հիւրատէրն ասաց. «Ես ձեզ չեմ կարող ուղեկցել, իմ որդին ցոյց կտայ ձեզ ճանապարհը մինչեւ այն բարձրութիւնը, որի տակով գետն անցնում է: Բայց զգոյշ եղէք, խնդրեմ, որդուս ոչինչ չպատահի»: «Աստուած կպաշտպանէ», ասաց հրեշտակը եւ ձեռք մեկնեց հօրը: Երբ նրանք յիշուած բարձրութեան հասան, որի վրայով անցնում էր նեղ շաւիղը: Բարձրութեան վարը փրփրում էր գետակը վայր թափուող ջրվէժի պատճառով: Հրեշտակն ասաց. «Մի փոքր էլ առաջ գնա»: Եւ երբ հասան նեղ կամրջին, հրեշտակը երկու ձեռներով բռնեց տղային, բարձրացրեց եւ վայր նետեց այն ահագին բարձրութիւնից դէպի գետի անդունդը: Ճգնաւորի համբերութիւնը հատաւ: «Դու հրեշտակ չես», աղաղակեց նա, «դու սատանայ ես: Ես սիրով կմոլորուէի այս ամայի անտառի մէջ եւ վայրի գազանների կերակուր կդառնայի՝ քան թէ քեզ հետ մի քայլ էլ առաջ կգնամ»: Հրեշտակն էլի մատը դրաւ բերնին եւ ասաց. «Սուս... սա է Աստծու ճանապարհը»: «Ի՞նչպէս», ձայն տուաւ ճգնաւորը՝ արիւնն աչքերը լցուած. «սա՞ է Աստծու ճանապարհը: Դու սուտ ես խօսում եւ քո ստախօսութեամբն էլ ուզում ես դժոխք գնալ: Ե՛րթ յետս իմ սատանայ»:

Եւ ահա հրեշտակի կերպարանքը փոխուեց—նա փայլում էր արեւի նման: Ճգնաւորը երեսի վրայ ընկաւ—երկնային լոյսը կուրացրեց նրա աչքերը: «Կարճատես, անհեռատես հողածին», ասաց հրեշտակը, «մեղանչական արարած, դու որ կասկածում էիր, թէ Աստուած սէր է, որ Աստծու արքայութեան մէջ ամեն ինչ ամենալաւ ձեւով է սահմանած, մօտ արի՛, ես պիտի Աստծու ճանապարհները քեզ ցոյց տամ: Նայի՛ր այս բաժակին, որ այն լաւ հիւրատիրոջից վեր առայ, նա թունաւորուած է. այն կոպիտ, խստապարանոց մարդը, որին ընծայեցի բաժակը, պիտի նրանով իւր մահն ըմպէ իբրեւ հատուցումն իւր գործած չարութեանց: Այն աշխատասէր, աղքատ ծերունին, որի խրճիթն այրեցի, տունը փորփրելիս գանձ պիտի գտնէ եւ սրանով անհոգ ապրէ ցմահ: Այն մարդը, որի որդուն գետը նետեցի, վատ անձն է, իւր որդուն այն աստիճան վատ է կրթել, որ վերջինս ընդունակ է միայն աւազակ դառնալու: Ես խլեցի նրանից իւր որդուն, որպէսզի նրա սիրտը դէպի ապաշխարութիւն ուղղեմ.



նրա որդին ահա վերեւումն է՝ նստած նրա մօտ, որ ինձ քեզ ուղարկեց իւր նախախնամութեան իմաստութիւնը ցոյց տալու: Մի՛ մոռանար, որ Աստուած ինչ որ անում է, բարի է: Հրեշտակն անյայտացաւ: Ճգնաւորը հիասթափուեց, դարձաւ իւր խրճիթը եւ այլ ես իւր կեանքի ընթացքում երբէք չկասկածեց աստուածային իմաստուն եւ սիրով լի աշխարհավարութեան վրայ: Այսպէս էլ դու չպիտի կասկածես, այլ՝ հաւատաս: Հաւատա՛ եւ յուսա՛: Ով Աստծուն հաւատում է, նշանակում է նա բարի է գործում:

## 4. ԱՍՏՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻՍ ՍՐԲԱԶԱՆ ՕՐԷՆՍՏՈՒՆ Է

Մինչեւ այժմ ծանօթացանք Աստծու երեք տեսակ գործնէութեան հետ. ուսանք նոյնպէս թէ ինչպէս պիտի գոհանալ՝ նրա անհուն սիրոյ համար: Սիրուց դրդած ստեղծեց նա աշխարհը եւ մեզ: Սիրուց դրդած հոգում է նա ոչ թէ միայն իւր բոլոր ստեղծուածների պէտքերը, այլեւ առատօրէն տալիս է մեզ մեր կեանքի պահպանութեան համար ամենայն ինչ: Սոսկ հայրական եւ աստուածային գթութիւնից դրդած ղեկավարում է նա՝ որպէս կառավարիչ բոլոր աշխարհների: Ոչ թէ միայն երկնքի աստղերը եւ երկրագնտիս վրայ եղած փոփոխութիւնները, այլեւ մեր գալոցը, մեր ճակատագիրը, մեր մտքերը, մեր գործողութեան հետեւանքը՝ կառավարում է նախամտածուած ծրագրով: Նրա օգնութիւնը եւ պաշտպանութիւնը, սէրն ու մխիթարութիւնը հեռի չէ մեզնից: Սոքա են այն երջանկացուցիչ ճշմարտութիւնները, որ մեզ ցարդ յայտնել է սուրբ գիրքը եւ որի ճշմարտութիւնն ու վաւերականութիւնը հաստատում է մեր բանականութիւնն ու մեր փորձը:

Աստուած այսպէս է գործել քեզ համար: Իսկ դու ի՞նչ ես անում նրա համար: Մի՞թէ դու կարող ես անզգայ, անտարբեր լինել դէպի Աստծու անհուն հայրական սէրը: Եւ կամ ցանկանում ես արդեօ՞ք Աստծու այդքան արածի դէմ դու էլ քոնն անել: Եթէ քո բարեկամի սիրալիր վարմունքը քեզ ստիպում է վարմանց նմանապիսի փոխարինութիւն անել, չմերժել նրա սրտի ցանկութիւնը՝ իբրեւ տրիտուր նրա վարմանց, ո՛րքան ես մեծ պիտի լինի նոյն զգացումը Աստծու վերաբերութեամբ, որ տուիչն է ամենայն բարութեան, որից մենք կեանք եւ ամենայն օրհնութիւն վայելել ենք: Մի՞թէ չենք կարող Աստծուն մեր հնազանդութեամբ ուրախութիւն պատճառել: Աստծուն հնազանդ լինել—այո՛, հէնց այդ է, որ մենք

պարտաւոր ենք ցոյց տալու, որպէսզի Նրա անկշռելի սէրը կրկնել տանք, Նրա հաճութիւնն ստանանք և հիմն դնենք մեր երջանկութեան՝ թէ այստեղ և թէ այնտեղ։ «Եւ ահա մատուցեալ ոմն առ նա ասէ. վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունեցիմ զկեանս յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա. Զի՞ հարցանես զիս զբարւոյ, մի է բարի. եթէ կամիս ի կեասն յաւիտենականս մտանել, պահեա՛ զպատուիրանսն» (Մաթ. ժթ. 16. 17.)։

Ուր հնազանդութիւն է պահանջւում, այնտեղ պէտք է օրէնք տալ։ Մեր խօսքն այստեղ բնութեան օրէնքների մասին չէ, որ Աստուած անշունչ առարկաների մէջ դրել է, որպէսզի ամենայն ինչ ըստ իւր կամաց ընթանայ, որպէսզի ամենայն ինչ իրան հպատակէ։ Այդ օրէնքներն անհրաժեշտ լինելիքներ են, որոնց ոչ ոք չի կարող հակառակել։ Մեր խօսքը բարոյական օրէնքի մասին է, որ Աստուած, որպէս սրբազան օրէնսդիր բոլոր աշխարհների, մարդոց խղճի և սուրբ գրքի մէջ է դրել։ Բնական օրէնքին մարդս չի կարող դիմադրել, իսկ բարոյական օրէնքի կատարումը քո ազատ կամքին է թողած—կարող ես և՛ կատարել և՛ չկատարել։ Ահա այստեղ մարդս պիտի ցոյց տայ, թէ իւր հաւատն ու սէրն առ Աստուած իսկական տեսակիցն է։

Աստծուն սրբազան օրէնսդիր ճանաչելուց յետոյ՝ անցնենք մեր պարտաւորութեան շրջանը, որ Նրա սէրն է նախագծել մեզ համար, որպէսզի Նրա օրինակին հետևելով՝ երջանիկ որդիք լինենք երկնաւոր հօր։ Այս օրէնքն իրաւամբ ցանկ, սանձ, հայելի, կանոն է անուանւում։ Ցանկ Նրա համար է կոչւում, որովհետև իրաւունք չունենք Նրա վրայով անցնելու, եթէ չենք կամենում մեզ անբաղդացնել. սանձ Նրա համար՝ որովհետև նա սանձում է մեր կրքերը և չի թոյլ տալիս, որ յանցանքը կամք դառնայ. հայելի Նրա համար՝ որպէսզի մենք միշտ առիթ ունենանք Աստծու օրէնքի մէջ մեր հոգեկան պատկերը նկատելու. կանոն Նրա համար՝ որովհետև Նրա համաձայն պիտի կանոնաւորենք մեր կեանքը, որպէսզի աստուածահաճոյ կեանք վարած լինենք և հասնենք այն երանութեան, որ նա սկզբանէ պատրաստել է։ Եթէ դու մտածելու լինես, որ Աստուած օրէնքը ոչ թէ մեզ չարչարելու համար տուաւ, այլ խաղաղութիւն վայելելու, որպէս միջոց երջանկութեան հասնելու, այնժամանակ դու ես կճանաչես սրբազան օրէնսդրին որպէս հաւատարիմ Աստուած, որ մեզ յաւիտենական սիրով է սիրել։



Պարտաւորութիւնները երեքի են բաժանւում—պարտաւորութիւն առ Աստուած, առ մարդս և առ մեր անձը։ Պարտաւորութիւններն այնքան շատ են, որ իրաւունք ունեին ոմանք ասելու թէ հնարաւոր չէ նրանց քանակը յիշողութեան մէջ պահելու։ Այս առարկութեան ճշմարտութիւնն ուրանալ չի կարելի, որովհետև մենք կարող ենք մտածել, խօսել, գործել՝ ո՛ւր, ե՛րբ, ի՛նչպէս էլ կամենանք. ամենուրեք էլ մեր վարմունքը պարտաւորութեան ենք ենթարկում, որի զանցառութիւնից կորուստ և ապականութիւն ենք սպասում։ Ինչպէս որ արևի ճառագայթը միլլիոնաւոր ճառագայթներով է արտայայտւում, այսպէս էլ Աստծու կամքը պէս-պէս պարտաւորութիւններով։ Բայց այս առարկութիւնն իսկոյն ոչինչ է դառնում, երբ մենք յիշու՛մ ենք, որ Աստուած իւր կամքը ոչ այնքան յիշողութեան, որքան խղճի մէջ է դրել։

Մի ուրիշ հանգամանք ևս կայ, որ Աստծու սէրը մարդկային թուլութեան օժանդակ է ներկայանում, որ Աստուած բոլոր օրէնքները ի մի է գումարել, որի մէջ միւս բոլոր օրէնքները կան։ Ով այս մի օրէնքը կատարել է, նշանակում է միւսներն էլ կատարել է. ով այս մի՛նը ոտնակոխ է արել, նշանակում է չէ կատարել և միւսները։ Այս մի օրէնքը գրած է Մարկոս աւետարանչի գլ. ժբ. տ. 30. 31. այսպէս. «Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, «եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն «զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան։ Եւ երկրորդ նըման սմին սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, եւ մեծ քան զսոսա, այլ պատուիրան ոչ գոյ»։ Համեմատել—Մաթ. իբ. 37—40. V. Մովս. զ. 4—5.։ Ահա այստեղ է Աստծու կամքը, ո՛վ մարդ։ Դու պէտք է սիրես Նրան, որովհետև առանց սիրոյ (սէր՝ սրտում, կոչման մէջ, ընտանեկան շրջանում, հասարակութեան մէջ) մարդս ողորմելի արարածի մէկն է։ Ատելութիւնը դառնացնում է մարդուս կեանքը, իսկ սէրը պայծառացնում է և երջանկացնում։ Բայց ողջ մէկ չէ, թէ դու ինչ կամ ումն ես սիրում։ Դրա համար էլ մեզ առաջուց յայտնւում է, որ մենք ոչ թէ անցաւորը և ստորը, ոչ թէ հասարակը և վատը, այլ յաւիտենականը և ամենաբարձրը, սուրբը և ամենալաւը—Աստծուն—Նրան ամեն բանից բարձր պիտի սիրենք։ Ամենաբարձր էակը, ամենաբարձր բարիքը պիտի լինի քո ամենաբարձր ուրախութիւնը։ «Զինչ կայ իմ ընաւ յերկինս, կամ ի քէն «զինչ խնդրեցից յերկրի։ Նուազեաց սիրտ իմ եւ մարմին իմ. Ա-

«տուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան: Անաւասիկ ոյք «հեռի արարին զանձինս իւրեանց ի քէն՝ կորիցեն, սատակեսցեն զա«մենեսեան որ ապստամբ եղեն ի քէն։ Ինձ մերձենալ առ Աստուած «բարի է եւ դնել առ Աստուած զյոյս իմ: Պատմել զամենայն օրհ«նութիւնս քո ի դրունս դստեր Սիոնի» (Սաղմ. հբ. 25—28):

Արդեօք մեծ չէ պահանջը։ Մենք արդէն սիրում ենք նրանց, որոնցից փոխադարձ սէր ենք վայելել: Ո՞րքան աւելի կարիք պիտի զգանք սիրելու Աստծուն, որ մեզ նախ սիրեց և որի սէրը մշտական, մաքուր և կատարեալ է՝ քան թէ բոլոր մարդոց սէրը միասին առած: «Մեք սիրեսցուք զԱստուած վասն զի նա նախ սիրեաց զմեզ» (I. Թ. Յովհ. դ. 19.): Մի այդպիսի սիրոյ փոխարէնն՝ ի հարկէ մեր սէրը ոչ կէս և ոչ թերի, այլ՝ ամբողջ, լրիւ պիտի լինի: Դրա համար էլ մարդս ոչ մի բան այնքան բարձր չպիտի գնահատէ և սիրէ՝ ինչպէս Աստծուն։ Ուստի ինչ որ ունի մարդս, ինչ որ նա է, պիտի բոլորն էլ այս սուրբ սիրոյ՝ ընդ նմին և Աստծու ծառայութեան տրամադրէ—այն է ամբողջ սիրտը, ամբողջ ոգին, ամբողջ միտքը: Դրա համար էլ Քրիստոս ասում է. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ քումմէ: Այս է առաջին պատուիրան»: Միւսն էլ սրան նման է. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»: Սէր առ Աստուած և սէր առ ընկեր, որ այստեղ պահանջեցինք, յարաբերում են միմեանց ոչ թէ ինչպէս եղբայր առ եղբայր, այլ ինչպէս մայր առ որդիս։ Նախ մայր պիտի լինի, այսինքն ճշմարիտ սէր առ Աստուած, առանց սրան իսկական ընկերական սէր չի կարելի պահանջել: Ինչպէս որ ոչ մի որդի չի կարող գոյութիւն ունենալ առանց մօր, այսպէս էլ սէր առ ընկերս՝ առ մերձաւորս չի լինիլ, եթէ նա իւր արմատը աստուածային ճշմարիտ սիրոյ մէջ չունի: Այս երկուսն էլ սերտ կապ ունին իրար հետ: «Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսեալ՝ զիա՞րդ կարիցէ սիրել, եւ զայս պատուէր ունիմք ս ու ի նմանէ, զի զոր սիրէ զԱստուած՝ սիրէ նաեւ զեղբայր իւր» (I. Թ. Յովհ. դ. 20 21.): Գուցէ դուք հարցնէք, թէ ո՞վ է մեր եղբայրը: Սամարացու ընտիր առակի մէջ Քրիստոս ինքը պատասխան տուաւ մեր հարցին—ով մեր սիրուն կարօտ է, նա էլ մեր եղբայրն է։ Այս սիրուն ամենքն էլ կա-



րօտ են—ոչ թէ նա միայն, որ կարեաց մէջ է, այլև նա, որ կարեաց մէջ ընկնել կարող է. ոչ թէ ծանօթը, այլև օտարը. ոչ թէ բարեկամը, այլև թշնամին. ոչ թէ այս կամ այն համակոչումն եղողները. ոչ թէ միայն հայրենակիցը, հաւատակիցը, այլ բոլոր մարդիկը՝ առանց խտրութեան կոչման, աստիճանի, հայրենիքի և կրօնի: Ճշմարիտ է որ ընկերին սիրելու զանազան աստիճաններ կան, այդ Աստուած է միայն, որ մարդոց հաւասար սիրում է: Երբ մենք մեր հօրն ու մօրը, քրոջը, եղբօրը և ազգականներին աւելի ենք սիրում՝ քան թէ անծանօթներին կամ քան թէ թշնամուն, ի հարկէ մենք սրանով չպիտի մոռանանք ընդհանուր մարդկային սէրը, որի զանց առնելը Աստծու սրբազան օրէնքը ոտնակոխ անել է նշանակում: Ուստի մի՛ նախանձիր, ցանկա՛ և գործով ցոյց տո՛ւր ամենին քո սէրը, որոնք կարօտ են օգնութեան. բարի արա՛, ինչքան էլ դու կարող ես և հեռացրու այն ամենը, ինչ որ քո մերձաւորին կարող է վշտացնել: Լա՛ւ ի միտ առ, որ սէր առ մերձաւորս աստուածային օրէնքը քեզնից աւելի է պահանջում՝ քան թէ գրած է. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո», այսինքն դու ոչինչ զանազանութիւն չպիտի անես քո և քո ընկերի մէջ, այլ՝ ինչպէս որ դու քո առողջութեան վրայ հսկում ես, այնպէս էլ նրա առողջութեանը պիտի հոգ տանես. ինչպէս որ դու քո պատիւը պաշտպանում ես, այդպէս էլ նրանը պիտի պաշտպանես. ինչպէս որ քո մարմնական և հոգեկան բարեկեցութեան մասին մտածում ես, այսպէս էլ նրա հոգեկան և ֆիզիքականը պիտի խնդիր լինի քեզ համար: Դու չպիտի ասես՝ առաջ ինձ, յետոյ՝ ընկերիս: (Ամեն ոք իւր մերձաւորն է): Դրանով միայն քո ինքնասիրութիւնը ցոյց կըտաս, որ իսկապէս սիրոյ հակառակն է: Ինչ որ քո ընկերին վնաս կարող է բերել, դու պիտի աշխատես մի ձևով հեռացնելու, որպէս թէ քե՛զ պատահելիս լինի: Այո՛, նրան էլ քեզ չափ պիտի սիրես: Սէրը իւրաքանչիւր ընկերի մէջ մարդ է տեսնում և իւրաքանչիւր մարդու մէջ՝ ընկեր: Կարդալ Թ. ա. Հռմ. ժբ. 1—21. և I. Թ. Յովհ. դ. 18: «Որդեակք, մի՛ բանիւք եւ լեզուօք սիրեսցուք, այլ՝ արդեամբ եւ ճշմարտութեամբ»:

Երբ ճշմարիտ սէր ունիս առ Աստուած և առ ընկերն, այնպէս որ Աստծուն ամենից բարձր՝ ընկերիդ էլ քեզ չափ սիրում ես, ասել է թէ դու օրէնքը լրիւ կատարում ես: Դրա համար էլ ասում է ս. գիրքը. «Լրումն օրինաց սէր է» (Թ. ա. Հռմ. ժգ.

10.)։ Այս, սէրը օրինաց լրումն է։ Եւ այդ ոչ թէ նրա համար, որ սէրը ոյժ և զօրութիւն է ներշնչում գործելու (Երգ երգոց. «Զի բուռն է իբրեւ զմահ սէր») և ցանկութիւն՝ աստուածային կամքը կատարելու՝ լրացնելու («Բանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք.... I. Թ. Յովհ. ե. 3.). այլ՝ նախ՝ նրա համար, որովհետև բոլոր առաքինութիւններն էլ, ինչ անուն որ կրելու լինեն, որոնք կամենում են արդարութիւն, ողորմածութիւն, բարեկամութիւն, խաղաղութիւն, պատրաստակամութիւն....?. բոլորի արմատն էլ սիրոյ մէջն է՝ առանց որին ոչ մի մեծ, ոչ մի ազնիւ, գեղեցիկ բան չի կարելի մտածել։ Ս. գիրքն այդ պատճառով էլ սէրն անուանում է գլուխ (գումար) պատուիրանների («Բանզի գլուխ պատուիրանին՝ սէր է, ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց» I. Թ. ա. Տմթ. ա. 5), թագաւորական օրէնք («Ապա եթէ զօրէնսն կատարիցէք զարքունական ըստ գրոց... Թ. Յակ. բ. 8), շաղկապ կատարման՝ կատարելութեան («Եւ ի վերայ այսր ամենայնի զսէրն՝ որ է զօդ կատարման .. Թ. ա. Կող. գ. 14)։ Դրա համար Քրիստոս սէր առ Աստուած և սէր առ ընկերս օրէնքի մասին իբրև ծանօթութիւն աւելացնում է. «Այս երկու օրէնքիցն են կախուած ամբողջ օրէնքն ու մարգարէութիւնը»։

Առաջին քայլափոխում՝ թերևս խորթ թուի մեզ, որ Քրիստոս այս օրէնքին նոր անուն է տալիս։ «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս... (Յովհ. ժգ. 34)։ Սա այն մտքով չպիտի հասկանալ, որպէս թէ իրանից առաջ ամենևին գոյութիւն չէ ունեցել (համեմատել III. Մովս. ժթ. 18. 19. «Եւ մի՛ խնդրեսցէ վրէժ... Եւ սիրեսցես զտէր Աստուած քո...) և կամ այն մտքով, թէ Քրիստոս ընդարձակել է և այնպէս է մեզ տուել, թէ ոչ միայն բարեկամին, այլև թշնամուն պիտի սիրել («Եւ սիրիցէք զպանդուխտն... V. Մովս. ժ. 19 «Եթէ կործանեսցի թշնամին քո, մի՛ ուտն արկաներ... Առակք Սող. իդ. 17)։ Այս բոլորը յայտնի էր հնում։ Նոր պատուիրան՝ նոր օրէնք նրա համար է անուանւում, որ նա ոչ մի ժամանակ չի հնանայ, այլ՝ յաւիտեան նոր կմնայ։ Դարձեալ՝ նրա համար ենք նոր ասում, որովհետև նա մի այլ ձևով արտայայտեց, որ իրանից առաջ դեռ անծանօթ էր (նա ոչ թէ օրէնքի մեռած տառով յիշեցրեց, այլ կենդանի օրինակով ցոյց տուաւ)։ Բայց աւելի այն պատճառով է նոր կոչւում, որ Քրիստոս աւելացրեց. «Որպէս սիրեցի ես ձեզ»։ Բայց նա իւր ընկերներին ոչ թէ իւր չափ է սիրել, այլ՝



իրանից էլ աւելի. Նա այս բանը ցոյց տուաւ մեզ Գողգոթայ բարձրանալով և այս սէրը մի այնպիսի եղանակով, գործով ցոյց տուաւ, որ նրանից առաջ դեռ ոչ ոք չէր արել։ Այն սիրով, որով նա իւր անձը ուրիշների փրկութեան զոհեց, նա աշխարհին յաղթեց։ Այս սրբազան սիրովն էլ (սէր առ Աստուած և առ ընկեր) օրէնքը լրացրեց և ոչ թէ միայն օրէնքը, որ մի բուռն ժողովրդի և մի որոշ ժամանակի համար տուած էր (ծիսական և քաղաքացիական օրէնքներ), այլև այն օրէնքը լրացրեց, որ բոլոր ազգերի և ամեն ժամանակի համար ընդունելի է (բարոյական օրէնք)։

Բարոյական օրէնքի հիմունքը մենք գտնում ենք տասն պատուիրանների մէջ։ Ահա այս օրէնքներն են ամբողջ բարոյական աշխարհավարութեան հիմնաքարը, ուստի և նա քաղաքացիական օրէնքների նման փոփոխական չէ։ Դրակոնի, Լիկուրգոսի, Սոլոնի... օրէնքները վաղուց անհետացել են ընդհանուր պատմութեան ասպարիզից, իսկ տասն պատուիրանները, որ Աստուած Մովսէսի ձեռով մարդկութեանը տուաւ, մինչև մեր օրերն էլ կան՝ չնայելով որ 33 դար անցել է. նոյնը կմնայ մեզնից յետոյ էլ, ուստի և նա յաւիտեան ճշմարիտ է և անփոփոխ։

Յիսուս Քրիստոս տասն պատուիրանները, որ Աստուած սկզբում միայն իսրայէլացւոց ազգին տուաւ, ոչ թէ միայն չվերացրեց, այլ՝ բացայայտ կերպով հաստատեց. «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատթ. ե. 17)։ Թէ Քրիստոս ինչպէս է հասկանում օրէնքը «լնուլ»՝ լրացնել ասելով, բազմիցս առիթ ենք ունեցել տեսնելու նրա կեանքի ամեն քայլափոխում։ Նա օրէնքը լրացրեց՝ կատարելագործեց նրանով, որ մեռած տառերով չէր հասկանում, այլ կենդանի գործով։ Օրէնքը տառացի կատարում էին փարիսեցիները, դրա համար էլ շաբաթ օրը հանգստանում էին և ոչինչ չէին գործում։ Նրանց հայեցակէտը օրինականութիւնն էր։ Քրիստոսի տեսակէտը բոլորովին այլ էր։ Տառացի վերցնելով, նա պատուիրանիցն անցնում էր, որովհետև շաբաթ օրը բարի, սիրոյ գործ էր գործում։ Յիսուս օրէնքը կատարում էր նրա ոգուն նայելով. «Բրդեա՛ քաղցելոց զհաց քո, եւ զաղքատս անյարկս տար ի տուն քո, եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջիր, եւ յընտանեաց զաւակի քոյ զակն մի՛ արկանիցես» (Եսայի ծը. 7)։ Յիսուսի հայեցակէտը բարոյականութիւնն էր։ Փարիսեցիների հայեցակէտը Յիսուսի բարոյական տեսակէտից նրա-

նով է ղանազանւում, որ առաջինները բարին գործում էին երկիւղից, պատժից վախենալով, կամ վարձատրութեան յուսով, իսկ Յիսուս առնում էր նոյնը առ Աստուած ունեցած սիրուց դըրդուած և մանկական սրտով։ Ուստի և Յիսուս ասում է փարիսեցիներին, թէ նրանք, չնայելով որ ողորմութիւն են տալիս, աղօթում են, բայց օրէնքի ծանր՝ էական կողմը մոռանում են. «Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, զի տասանորդէք զանանուխ եւ զսամիթ եւ զչաման, եւ թողէք զծանր ծանր օրինացն՝ զդատաստան եւ զողորմութիւն. զայս արժան էր առնել եւ զայն չթողուլ» (Մատթ. իգ. 23)։ Վերջապէս փարիսեցիները բաւականանում էին նրանով, ինչ որ արգելած է, նրանից չանցնեն (մի՛ սպանաներ, մի՛ գողանար), իսկ այն՝ ինչ որ՝ պահանջւում էր, որ մարդս բարին էլ չպիտի մոռանայ, այդ չէին կատարում։ Ուստի և Յիսուս ասում է իւր աշակերտներին. «Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և փարիսեցւոց, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից» (Մատթ. ե. 20)։ Այս բոլորից պարզ երևում է, որ օրէնքի կատարումն բառացի չպիտի հասկանալ, այլ խորը պիտի հետախուզել նրա նշանակութիւնը—Աստծուն հաճելի է ոչ թէ արտաքին գործողութիւնը, այլ՝ սրտի կամքը և արդար մտածողութիւնը, խորհուրդը։ Առ այդ՝ օրէնքը մեկնելու համար Յիսուս լերան քարոզի մէջ մի ներածութիւն է տալիս (Մատթ. ե. 21—48), այլև առաքելոց յորդորը. «Հոգեւորն քննէ զամենայն» (I. Թ. առ. Կրնթ. բ. 14), այսինքն Քրիստոսի նման, նրա ոգւով։

Այս նախապատրաստութիւնից յետոյ՝ սըրբազան օրէնսդրի տասն պատուիրանների հետ մօտիկ ծանօթանանք։

# ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ

## ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑ

*(II. Մովս. ի. 1—22 *)*

Այն օրէնքը, որ Աստուած Մովսէսի ձեռով յայտնեց, դրոշմուած էին երկու քարէ տախտակների վրայ (II. Մովս լա. 18. լդ. 1.), որպէսզի չմոռացուի և («եղիցի անշարժ առաջի աչաց քոց») արձան լինի (V. Մովս. զ. 8.)։ Առաջին տախտակի վրայ դրոշմուած

*) Ուսուցչի հմտութեանն է թողնւում նախապատրաստել աշակերտաց սըրտերը 10 պատուիրանների պատմութիւնը լսելու, նոյնպէս իսրայէլացւոց ազգի վիճակը և՛ այն ժամանակը, երբ Մովսէս օրէնք տուաւ, պարզ կերպով նկարագրելու—երկրի դրութիւնը, ինչպէս և ճնշող բնութեան տպաւորութիւնը պէտք է ցոյց տալ ունկնդիրներին։ Մի ժողովուրդ՝ որ եգիպտական ստրկութեան շղթաների մէջ է մեծացել, մի ժողովուրդ որ աչքով տեսել է դարերի ընթացքում, թէ ինչպէս իրան տիրող ժողովուրդը կենդանիներ է պաշտում, այժմ կրթութեան այն աստիճանի վրայ ենք տեսնում, որ կարողութիւն ունի Աստծուն ոչ տեսանելի՝ աներևոյթ ձևով ներկայելու իրան։ Այո՛, դա մեծ յառաջադիմութիւն է—մի այդպիսի թռիչք զարգացման խնդրում, Մովսէսի նման եռանդ ունեցողը միայն կարող էր յառաջ բերել։ Թէև այս խնդրի լուսաբանութիւնը ուսուցչին թողինք, բայց և այնպէս II. Մովսէսի ժթ. բաւական նիւթ է մատակարարում պատկերի աղօտ կողմերը պարզ գոյներով նկարելու։ Ինչ որ շրջակայ բնութեան նկարագրութեանն է վերաբերւում մի ժողովրդի համար, որ իւր կեանքում լեառ ասածդ առաջին անգամն է տեսնում, յարմար ենք համարում աշխարհագրութեան հայր Ռիտտէրի նկարագրութիւնը մէջ բերելու. «Սինայի ժայռոտ գագաթը 7,000′ է. նրա շրջակայքը երկրագնտիս վրայ հազիւ թէ իւր նմանն ունենայ։ Սա մի վիթխարի, հսկայ ժայռակոյտ է, մի քանի մղոն լայնութեամբ. համարեա՛ թէ ամեն կողմից բարձրանում են գրանիտի ծերպեր ու ժայռեայ անապատներ։ Ո՛չ մի բուսականութիւն, ո՛չ մի ծառ, ո՛չ մի կանաչ չէ զարդարում Սինան։ Ո՛չ մի առուակ չէ խոխոչում նրա մերկ լանջերով։ Սինան մի հարթութիւն է բազմաթիւ գագաթներով զարդարուած—մի տեսարան, որ ընդունակ է տպաւորութիւն թողնելու։ Տարուան շրջանառութիւնը կանաչով կամ երաշտով չէք կարող որոշել—կարծէք ժամանակը ուսել է լուռ արձան լինելու, վկայ կանչելու անցեալը իւր տիեզերահռչակ պատմութիւնով»։ (Աւելին տ. Հ—Ո. Նիւթի մշակութեանս ծանօթութիւնը երես 271։

էին այն պարտաւորութիւնները, որ մենք ունինք դէպի Աստուած, հայր և մայր՝ որպէս Աստծու փոխանորդներ երկրիս վրայ: Իսկ միւսի վրայ՝ այն պարտաւորութիւնները, որ մենք ունինք դէպի մարդիկ: Իւրաքանչիւր տախտակի վրայ այնքան պատուիրաններ կային, որքան մատներ ունինք ամեն մի ձեռքի վրայ: Բոլոր պատուիրանների մէջ Աստծու սուրբ կամքը կարճ և համառօտ կերպով առանց եթէ-ի և բայց-ի հաղորդւում է մեզ: Առաջին տախտակի վրայ հաստատական—հրամայական, իսկ երկրորդի վրայ՝ բացասական—հրամայական ոգին է տիրապետողը: Հաստատական հրամայական ձեւը ազատ՝ ինքնագլուխ չէ կամենում այս կամ այն, իսկ բացասականը՝ ենթադրում է մի հակառակ կամք, որ չարն է կամենում:

Բոլոր պատուիրանների ճակատին գրուած է. ‹Ես եմ Տէր Աստուած քո›, ուստի ‹Տուր ցիս, որդեակ, զսիրտ քո› (առակք իգ. 26): Որովհետև Աստուած ամենի համար ամենայն ինչ է և որովհետև քո սիրտը և քո սէրը նա ամբողջովին, առանց բաժանելու է ցանկանում ունենալ, ուստի և հետևեալ (3. 4.) պատուիրանների մէջ արգելում է նախ՝ կռապաշտութիւնը և որպէս արդար և սուրբ Աստուած, աւելացնում է երկիւղ, սպառնալիք և խոստումն (տ. 4—6.): Հետևեալ պատուիրանների մէջ պահանջում է Աստուած, որ իւր անունը պատուեն և սուրբ առնեն (տ. 7.), որ իւր համար որոշուած օրը (տ. 8—11 և պատուեն ու սուրբ առնեն և վերջապէս պատուեն իւր փոխանորդին՝ ծնողաց, հօրն ու մօրը (տ. 12.): Սրանով վերջացնում է առաջին տախտակը: Երկրորդ տախտակի (տ. 13.) առաջին պատուիրանը պահանջում է խնայել մերձաւորի կեանքը: Եթէ դու մերձաւորի կեանքը չես յարգի, մնացածները ես չես յարգի: Երկրորդ տախտակի (տ. 13.) երկրորդ պատուիրանը պահանջում է-յարգի՛ր քո մերձաւորի ամուսնութիւնը, որի վրայ կայանում է նրա սրբութիւնն ու երջանկութիւնը: Երկրորդ տախտակի (տ. 13.) երրորդ պատուիրանը պահանջում է յարգել, խնայել մերձաւորի սեպհականութիւնը, որովհետև դրանից է կախուած նրա սնունդը, նիւթական գոյութիւնը: Երկրորդ տախտակի (տ. 14) չորրորդ պատուիրանը պահանջում է յարգել մերձաւորի բարի անունը, որովհետև հարստութիւնն ու սեպհականութիւնը ոչինչ արժէք չունեին առանց դրան: Երկրորդ տախտակի (տ. 15.) հինգերորդ պատուիրանը պահանջում է վերջապէս սեպհական սիրտը սուրբ պա-



հել, որովհետև երանի է նրանց, ովքեր սուրբ սիրտ ունին: Եթէ լաւ ուշադրութիւն դարձնենք տասն պատուիրանների ներքին կապակցութեան վրայ, հետևեալ յաջորդութիւնը կգտնենք—Առաջին տախտակի պատուիրանները սկսւում են երկնքում՝ Աստուածանով և վերջանում են երկրիս վրայ՝ ծնողներով: Աստծու առաջին պահանջն այս է. «Տուր ցիս, որդեակ զսիրտ քո»: Սրտից անցնում է խօսքին, (տ. 7), խօսքից էլ՝ գործին (տ. 8.): Իսկ երկրորդ տախտակի վրայի պատուիրանները հակառակ ընթացք ունին, այն է՝ գործից խօսքին (տ. 14.) և խօսքից դէպի սիրտն են անցնում (տ. 14): Վերջին պատուիրանը շրջան է առնում դէպի առաջինը: Ամենայն ինչ սրտից է կախուած *):

---

*) Աստուածաշնչի մէջ ոչ մի ապացոյց չունինք, թէ պատուիրանների առաջին հինգը մի, իսկ երկրորդ հինգը միւս տախտակի վրայ էին գրած: Այս կէտն սկիզբն է առնում հրէից Յովսէփոս պատմագրից, որ Յիսուսի ժամանակներումն էր ապրում: Որպէս ապացուցութիւն, Յովսէփոսն ընդունում է այն հանգամանքը, որ առաջին հինգ պատուիրանների մէջ Աստուած բառը յիշատակւում է, իսկ վերջինի մէջ՝ ոչ, որ հին-ուխտի միւս պատուէրները հինգ կամ տասն պատգամների վերաբերմամբ կապ ունին II. Մովս. ժգ. 9. («Եւ եղիցի քեզ նշան ի վերայ ձեռին քոյ, եւ յիշատակ առաջի աչաց քոց, զի լինիցին օրէնք տեառն ի բերան քում»:) V. Մովս. զ. 8. («Եւ արկցես զնոսա նշան ի ձեռին քում, եւ եղիցի անշարժ առաջի աչաց քոց, եւ գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց եւ ի դրունս քոյ»:) V. Մովս. ժա. 18. («Եւ դիջիք զբանս զայս ի սիրտս ձեր եւ յանձինս ձեր, եւ արկջիք զնոսա նշան ի ձեռս ձեր. եւ եղիցին անշարժ առաջի աչաց քոց»:)-ի հետ: Բացի դրանից 5 : 5 կամ 4 : 6 ուշադրութեան աւելի արժանին այն է, որ տասն պատուիրանները այն ձևով չի աւանդւում քրիստոնէութեան շրջանում, ինչ ձևով որ գրուած է սուրբ գրքի մէջ: Այս խտորումը ծնունդ է առնում Օգոստինոսից (353—430), որ կենում էր Հիպպօյում (Աֆրիկայում): Սա բաց թողեց տասն պատուիրաններից այն բոլորը՝ ինչ որ հրէութեան համար որոշուած էր և աւելացրեց այն, ինչ որ քրիստոնէական տեսակէտին համապատասխանել կարող էր: Ուստի և կուռք պաշտելը (տ. 4.) բաց է թողած, հինգերորդ պատուիրանը վերցրած է Թ. ա. Եփես. զ. 23. «պատուեա զհայր քո եւ զմայր, որ է առաջին, պատուիրան յաւետիսն, զի քեզ բարի եղիցի. եւ երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի»-ից: Որպէսզի մի նոր պատուիրան չստացուի տ. 16. և 17-ը վերջին պատուիրանը երկուսի է բաժանում և տ. 4 և 5. պատուիրանների սպառնալիքն ու խոստումն այսինքն տ. 16. 17. է նշանակում: Այստեղ կդնենք սուրբ գրքի բնագիրը, Օգոստինոսի կազմածը և մեզ մօտ տպագրուած մի քանի ձևեր, որից պարզ կարելի է նկատել տարբերութիւնները և ձևափոխութիւնները:

| Սուրբ գրքի բնագիրը. | Օգոստինոսի փոփոխածը | Մանր *. | Այվազեան արքեպս.* | Աբել արքեպիսկ.* | Ալամդարեանց.* | Գրիգոր քհ. Սուքիասեանց*. |
|---|---|---|---|---|---|---|
| 1. «Ես եմ տէր Աստուած քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառայութեան, մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»: | 1. Ես եմ տէր Աստուած քո, մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն: | 1. Մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն: | 1. Ես եմ տէր Աստուած քո մի եղիցին քեզ աստուածք բաց յինէն: | 1. Ես եմ տէր Աստուած քո մի եղիցին քեզ աստուածք բաց յինէն: | 1. Ես եմ տէր Աստուած քո մի եղիցին քեզ աստուածք բաց յինէն: | 1 Ես եմ տէր Աստուած քո և մի եղիցի քեզ այլ Աստուած բաց յինէն, և մի զիցես զանունն Աստուծոյ քոյ ի վերայ սնոտեաց: |
| 2. «Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վեր է, եւ որ ինչ յերկրի ի խոնարհ, եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի. մի երկրպագանիցես նոցա, եւ մի պաշտեսցես զնոսա. զի ես եմ տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց, յերիս եւ ի չորս ազգս ատելեաց իմոց, եւ առնեմ ողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց, եւ որք պահեն զհրամանս իմ»: | 2. «Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց, զի ոչ սրբեսցէ տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց»: | 2. Մի արասցես կուռս: | 2. Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց: | 2. Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան: | 2 Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր եւ որ ինչ յերկիր ի խոնարհ և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի, մի երկրպագանիցես նոցա և մի պաշտեսցես զնոսա: | 1 Մի արասցես կուռս ըստ ամենայնի նմանութեան յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ: |
| 3. «Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց, զի ոչ սրբեսցէ տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց»: | 3. Ցիշեա՛ սրբել զօր շաբաթու: | 3. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց: | 3. Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա: | 3. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց: | 3. Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց: | 3. Յիշեա՛ զի սրբեսցես զօրն շաբաթու, որ մեզ կիւրակէ: |
| | | * Հրահանգ... | * Դասագիրք քրիստոն. վարդ. ի Վաղարշապատ 1875. | * Դասագիրք քրիստ. Վաղարշ. 1874. | * Հրահանգ քրիստոն. | * Համառօտութիւն քրիստոն. վար. Մոսկով 1838 |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. «Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա, զվեց օր գործեսցես, եւ արասցես զամենայն զգործս քո, յաւուրն եօթներորդի շաբաթ տեառն Աստուծոյ քոյ, մի գործեսցես ի նմա զամենայն գործ քո դու եւ ուստր քո, եւ դուստր քո, ծառայ քո եւ աղախին քո, եզն քո եւ էշ քո եւ ամենայն անասուն քո, եւ եկն քո եւ պանդուխտն որ ի քեզ: Զի զվեց օր արար տէր զերկինս եւ զերկիր, եւ ծով եւ զամենայն որ ի նոսա, եւ հանգեաւ յաւուրն եօթներորդի. վասն այսորիկ օրհնեաց տէր զօրն եօթներորդ եւ սրբեաց զնա»: | 4. Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի քեզ բարի լիցի, զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի: | 4. Ցիշեա՛ սրբել զօր շաբաթուց: | 4. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո: | 4. Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա: | 4. Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա. զվեց օր գործեսցես եւ արասցես զամենայն գործս քո. յաւուրն եօթներորդի շաբաթ տեառն Աստուծոյ քում: | 4. Պատուեա՛ զհայր քո եւ զմայր քո: |
| 5. «Պատուեա՛ զհայր քո եւ զմայր քո, զի քեզ բարի լիցի, եւ զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին բարութեան՝ զոր տէր Աստուած քո տացէ քեզ»: | 5. Մի սպանաներ: | 5. Պատուեա՛ զհայր քո և զմայր: | 5. Մի սպանաներ: | 5. Պատուեա՛ զհայր քո եւ զմայր: | 5. Պատուեա՛ զհայր քո եւ զմայր քո, զի քեզ բարի լինիցի եւ զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի: | 5. Մի սպանաներ: |
| 6. «Մի սպանաներ»: | 6. Մի շնար: | 6. Մի ըսպանաներ: | 6. Մի շնար: | 6. Մի սպանաներ: | 6. Մի սպանաներ: | 6. Մի շնար: |
| 7. «Մի շնար»: | 7. Մի գողանար: | 7. Մի շընար: | 7. Մի գողանար: | 7. Մի շնար: | 7. Մի շնար: | 7. Մի գողանար: |
| 8. «Մի գողանար»: | 8. Մի սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ: | 8. Մի գողանար: | 8. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ: | 8. Մի գողանար: | 8. Մի գողանար: | 8. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. Մի՛ սուտ վկայութիւն վըկայեր ըզնկերէ քումմէ»: | 9. Մի՛ ցանկանար տան ընկերի քո: | 9. Մի՛սուտ վկայեր | 9. Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո: | 9. Մի՛ սուտ վկայեր ըզնկերէ քումմէ: | 9. Մի՛ սուտ վկայութիւն վկայեր ըզնկերէ քումմէ: | 9. Մի՛ երդնուցուս սուտ յանուն անուան Աստուծոյ քո: |
| 10. «Մի՛ ցանկանար տան ընկերի քո եւ մի՛ անդոյ նորա, մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի՛ ծառայի նորա, եւ մի՛ աղախնոյ նորա, եւ մի՛ եզին նորա, եւ մի՛ իշոյ նորա, եւ մի՛ ամենայն անասնոյ նորա, եւ մի՛ ամենայնի ղինչ ընկերի քո իցէ»: | 10 Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, մի՛ ծառայի նորա, մի՛ աղախնոյ, մի՛ անասնոյ եւ մի՛ ամենայնի, ղինչ նորա է: | 10. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, մի՛ անդոյ նորա, մի՛ կնոջ նորա. մի՛ ծառայի նորա մի՛ անասնոյ եւ մի՛ ամենայնի ղինչ ընկերի քո իցէ: | 10. Եւ մի՛ ամենայնի ղինչ ընկերի քո իցէ: | 10. Մի՛ ցանկար տան ընկերի քո, եւ մի՛ անդոյ նորա. մի՛ ցանկար կնոջ ընկերի քո. մի՛ ծառայի նորա, մի՛ անասնոյ նորա և մի՛ ամենայնի ղինչ ընկերի քո իցէ: | 10. Մի՛ ցանկար ընկերի քո եւ մի՛ անդոյ նորա. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի՛ ծառայի նորա եւ մի՛ աղախնոյ նորա եւ մի՛ եզին նորա, եւ մի՛ իշոյ նորա եւ մի՛ ամենայն... | 10. Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո եւ մի՛ տան նորա եւ մի՛ ընչից նորա և մի՛ ամենայն իրաց՝ որք նորա իցեն: |

*Որքան ցանկալի էր, որ սուրբ Էջմիածինը մի վաւերական քրիստոնէական ունենար:*



Այս համառօտ տեղեկութիւնից յետոյ անցնենք պատուիրանների մասնաւոր կիրառութեանը:

## ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*1. «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն:*
*2. Մի՛ արասցես կուռս»:*

Աշխարհային իշխանութեան մէջ, երբ թագաւորի մէկը որևէ օրէնք է կամենում տալ իւր հպատակներին, սկզբում գրած է լինում. «Ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան...»: Այսպէս էլ մեր երկնաւոր տէրն է վարուել—Նա իւր անունը պատուիրանների ճակատին է դրոշմել, որպէսզի իմացուի, թէ ինչ մեծ, բայց միևնոյն ժամանակ բարի թագաւորի խօսք է լսւում: Այսպէս ուրեմն Աստուածային կամքի յայտարարութիւնից առաջ յիշուած է Նրա էութիւնը, որ պարունակւում է հետևեալ խօսքերի մէջ. «Ես եմ տէր Աստուած քո»:

Ես եմ տէր, այսինքն իրաւունք ունիմ հրամայելու, պատուիրելու, հնազանդութիւն պահանջելու: Աշխարհումս շատ տէրեր կան, բայց ամենակարող տէրը մի հատիկ է, որի առաջ խոնարհւում են ամենազօրեղ կամքերը. Նա կարող է հզօր հակառակութիւնները կործանել. լեռները շարժել. Նրա ձեռին է որոտը, կայծակը—կարող է իւր կամքը դաւաճանողներին գտնել, պատժել և իւր կարող բազկով անմեղ դատապարտեալին հովանաւորել թշնամու յարձակման դէմ՝ ուր և ինչպէս էլ կամենայ, վասնզի նա ամենից վեհագոյնն է. Նրան են լսում ամենը. Նրան է հնազանդում ամեն ինչ, ուստի և նա է ամենին հրամայողը—«Ես առաջին՝ եւ ես առ յապայ, բաց յինէն այլ ոչ գոյ Աստուած» (Եսայի խդ. 6): «Զի ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս ամէն» (Թ. առ. Հռմ. ժա. 36.):

«Ես եմ Տէր», ես եմ անվերջը, անբաւելին: Այս բառը որոտի հնչիւն ունի, ուստի երկիւղ ունեցիր, ով մարդ, վասնզի դու իմն ես: Սրան հետևում է անմիջապէս և այն—«ես եմ տէր Աստուած քո», ուստի ուրախացիր, ով մարդ, որովհետև ես քոնն եմ: Ի՞նչ քաղցր, ինչ անուշ է հնչում—Աստուած քո արտայայտութիւնը: «Տէր» խօսքով մինչև գետին խոնարհեցնում է մեզ, իսկ «Աստուած

քո» խօսքով ի նորոյ բարձրացնում է մինչև հայրական ջերմ, սիրով լի սիրտը: Ես քո Աստուածն եմ, այսինքն քեզ համար կամ ես. քո երջանկութիւնը իմ հոգացողութիւնն է. իմ նպատակը քո երանութիւնն է: Սոսկալի է «ես եմ Տէր» խօսքը,—սա լցնում է մեր սիրտը երկիւղով: Սակայն սիրելի և սփոփիչ է չարունակութիւնը—«ես եմ Տէր Աստուած քո». սա էլ լցնում է մեր ներքինը սիրով: Երկիւղը մի կողմից, իսկ սէրը միւս կողմից օրէնքը կատարելու շարժիչներ են:

Աստուած իւր էութիւնը, ամենից վեհ լինելը և իւր սէրը յիշել տալուց յետոյ, նոր է յայտարարում իւր կամքը: Բարի և իմաստուն սերմանահանի նման նախ՝ հողն է պատրաստում և ապա առողջ հատիկները սրտի մէջ ցանում:

Աստծու պահանջած սիրոյ առաջին նշանը յայտարարուած է առաջին պատուիրանի մէջ—«Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»-ով:

«Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք», այսինքն չլինին օտար իշխանութիւններ, որոց առաջ մենք խոնարհինք. չլինին օտար տէրեր, որոնց մենք ստիպուենք լսել. չլինի այլ բարիք, դէպի որը մեր սիրտը հակուի: Ո՛չ մի իշխանութիւն, ո՛չ մի տէր, ո՛չ մի բարիք Աստծուց բարձր չպիտի դասենք, որովհետև նա է ամենաբարձր իշխանութիւնը, ամենամեծ զօրութիւնը. նա է ամենից հարուստ տէրը, ամենաթանկագին բարիքը: Նա է միակ ճշմարիտ, միակ զօրաւոր, միակ կենդանի Աստուածը: Կուռքերը երևոյթներ են և սուտ, նա է միակ ճշմարտութիւնը:

Ոչ թէ միայն ոչինչ չպիտի պաշտենք նրանից բարձր—«որ ինչ յերկինս ի վեր», այլև ոչինչ՝ հաւասար նրան կամ՝ խոնարհ նրանից—«որ ինչ յերկրի ի խոնարհ»: «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն», որովհետև «ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել» Մատթ. զ. 24.): «Ես տէր Աստուած», ասում է նա Եսայի խբ. 8. ում. «այս է անուն իմ, զփառս իմ այլում ոչ տաց եւ ոչ զքաջութիւն իմ դրօշելոց»: Աստուած չի կամենում, որ մի որ և է առարկայի երկրպագութիւն տրուի, նա չի կամենում իւր փառքը կամ «քաջութիւնը» (յարգանքը) մի ուրիշին տրուի, այլ՝ նա կամենում է, որպէս ամենաբարձրեալ, ամենայն ինչ ինքը լինի:

«Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն» խօսքը նախ և առաջ վերաբերում է **հեթանոսներին**: Հեթանոսները պաշտում էին երկաթից, քարից, փայտից շինած արձաններ և նրանց երկնային պաշտօն էին մատուցանում, որ Աստծուն միայն վայել է:



Նրանք չէին պաշտում Արարչին, այլ՝ արարածներին (արև, կենդանիներ....) և այս մոլորութեան մէջ մոռանում էին միակ Աստծուն, որ միայն փրկութիւն և օրհնութիւն տալ կարող է: Համեմատելով սրանց իսրայէլացւոց ժողովրդի հետ, որոնք եգիպտական կենդանապաշտութիւնից կուրացել էին, չպիտի մի երևելի բան համարենք, որ Մովսէսը հեռացրեց նրանց բազմաստուածութիւնից և առաջնորդեց դէպի մի աստուածութեան գաղափարը, որ ամենակարող է, անտեսանելի է, սուրբ է, արդար է: Ուստի և առաջին պատուիրանի էութիւնը գտանւում է այն մեծ ճշմարտութեան մէջ, որ ասում է, թէ մի Աստուած միայն կայ: «Լո՛ւր, իսրայէլ, տէր Աստուած մեր տէր մի է եւ սիրեսցես զտէր Աստուած քո» (V. Մովս. զ. 4. 5.): Երբ մարդ շատ աստուածների է հաւատում, բարի և չար ոգիների, որոնք իրանց խռովիչ գոյութիւնը անտառներում, դաշտերում, գետերում, աւերակներումն.... են պահպանում և մարդկանց ու անասուններին չարչարում և երկիւղ ազդում և երբ մարդս մոլորութեան մէջ՝ երկիւղից ստիպուած՝ այսպիսի երևակայեալ գոյութիւններն աստուածացնում է, այն ժամանակ ևս աւելի զգալի է լինում այս խօսքերի ճշմարտութիւնը, թէ «զի անուն կուռց եւ պաշտօն՝ ամենայն չարի սկիզբն եւ պատճառք եւ կատարած է» (իմաստ. Սող. ժդ. 27.): Դրա հակառակ՝ մարդս պիտի խոստովանի մի Աստուած հաւատալու բարերար ազդեցութիւնը, որ մարդկանց որպէս սէր յայտնուեց: Ով այս մի և ճշմարիտ Աստծուն չէ հաւատում և չէ ընդունում նրան որպէս հայր սիրոյ, այնպիսին կնշանակէ մարդկութիւնը Աստծու ընտանիք չէ համարում, իսկ ով աստուածային սէր չունի, չունի և մերձաւորի սէր: Հեթանոսութիւնն այդ մասին բազմաթիւ նկատելի ապացոյցներ է թողել մեզ համար—փիւնիկեցիներն իրանց որդւոցը կենդանի-կենդանի դնում էին Մոլոխ կռքի շիկացած բազուկների մէջ. քրմերի սրերի շաչիւնը, մանկանց և մայրերի դառն կսկիծն ու աղաղակը մարդուս ականջներն էին խլացնում: Հնդկացիները Աստծուն որոնելու նպատակով Եագրէնատ կռքի փշրող անիւների տակն էին ձգում իրանց և կամ նոյն նպատակով Գանգէսի ալիքների մէջ էին որոնում իրանց մահը. մինչև անգամ շատ ժողովուրդ իւր բարոյականութիւնը, իւր առաքինութիւնը, իւր պատիւը աստուածներին զոհ էր բերում—մի՞թէ դա սոսկալի, քըստմնելի չէ: Մարդս այսպիսի հրէշային արարմանց է ենթարկւում, երբ նա միայն ճշմարիտ Աստծուն չէ նուիրում իւր ներքինը: Կա-

բնորութիւն չկայ անցեալին դիմելու, ներկան ևս բաւական է հեթանոսութեան ագեղ պատկերը խոստովանելու: Հեթանոս սլաւցիներն այսօր ևս իրանց հիւանդներին՝ մեռնելուց առաջ դուրս են ձգում տանից: Բատտացիք, որոնք հեթանոս են և կենում են Սումատրա կղզու վրայ, պատերազմում գերի ընկածներին մորթում, ուտում են անասնի նման: Բօրնէօ կղզու վրայ ոչ մի տեղացի իրաւունք չունի ամուսնանալու՝ մինչև որ ցոյց չտայ մի քանի սպանուած մարդու գլխի կաշի: Խաղաղական ովկիանոսի մի քանի կղզիների վրայ որդիքն սպանում են իրանց ծեր և հիւանդ ծնողներին....: Այս բոլորն անում են այն ժողովուրդները, որոնք մի Աստուած չեն ճանաչում, որ ամենի հայրն է և որի որդիքը մարդիկն են. այս բոլորն անում են այն ազգերը, որոնք չեն ճանաչում այն միակ Աստծուն, որ ասում է. «մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»: Եւ իրօք, սիրոյ մի գործք կայ միայն, երբ Աստուած պահանջում է, որ մարդիկ իրան դիմեն և ոչ թէ ուրիշ աստուածներ ունենան բացի իրանից կամ իրանից դուրս:

Այս պատուիրանը վերաբերում է ոչ թէ միայն հեթանոսներին, այլև **հրէաներին:** Իսրայէլացիները մի Աստուած էին հաւատում, բայց շատ դիւրութեամբ հակւում էին օտար աստուածներին պաշտօն մատուցանելու: Բաւական է յիշել անապատի ոսկէ որթը դատաւորների ժամանակը: Չմոռանանք Սողոմոն թագաւորին, որ իւր ծերութեան օրերում, բացի Եհովայից՝ ուրիշ աստուածներ ևս պաշտում էր: Յիշենք Եղիա մարգարէին (III. Թագ. ժը, 21), որ սպառնալով կոչեց իսրայէլացւոց ժողովրդին. «Մինչև ցե՞րբ կաղայք յերկուս հետս»: Դրա համար ևս տասն պատուիրանների մէջ իսրայէլացիներին արգելուեց արձաններին պաշտօն մատուցանելը, որով կռապաշտութիւնը երևան է գալիս: Եթէ անհրաժեշտ էր իսրայէլացւոց ազգին արգելելու, որ շատ աստուածներ չպաշտեն, պակաս կարևոր չէր նոյն ազգին արգելելու և արձաններին յարգանք ու պատիւ տալը: Եգիպտոսի ծառայութեան շրջանում ժողովուրդը շատ անգամ էր տեսել յաւիտենականին փոխարինող բազմաթիւ խորհրդական պատկերներ, նշանակներ (սիմվոլ), իսկ Քանանում շրջապատուած բազմաթիւ հեթանոս ազգերով՝ քիչ առիթ չունեցաւ անտեսանելի արարչին վայել պաշտօնը տեսանելի արարածներով փոխարինել՝ Աստծու փոխանակ կուռքեր պաշտել: Մի կողմից հարևան էին քաղդէացիները, որոնք աստղ էին պաշտում—ուստի և (տ. 4—6.)·



«Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայնի նմանութեան որ ինչ յերկինս ի վեր», այսինքն արև, լուսին, աստղ, լոյս որպէս Աստուած չպիտի պաշտուին: Միւս կողմում կենում էին եգիպտացիները, որոնք ամեն տեսակ արարածներ, մանաւանդ կենդանիներ աստուածացրել էին և արձաններով ներկայացրել, ուստի և «մի՛ արասցես քեզ կուռս.... եւ որ ինչ յերկրի ի խոնարհ», այսինքն կրակ, ջուր, կենդանի, մարդ որպէս աստուած չպիտի պաշտել: Երրորդ կողմից հարևան էին ասորւոց, որոնք ձկան արձանների առաջ ծունկ էին չոքում, խոնարհում, ուստի և «մի՛ արասցես քեզ կուռս.... եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի», այսինքն կոկորդիլոս և կէս-ձուկ, կէս-կին ներկայացնող Դագոնին չպաշտես (I. Թագ. ե. 2. 3. Դատաւորաց ժզ. 23. I. Մակ. ժ. 83): Սրանցից ոչ մէկին էլ աստուածային պաշտօն չպիտի մատուցանես, ոչ մինին Աստծու տեղ չպիտի ընդունես, որովհետև «Հոգի է Աստուած եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել» (Յովհ. դ. 24), այսինքն Աստուած մարմին ունեցող, տեսանելի մի էակ չէ, որին կարելի լինի չօչափել, այլ ոգի է (ներկայացրէ՛ք ձեզ ձեր հոգին, մտածմունքները, զգացմունքները և կամքը) և այն ամենակատարեալ ոգի, որից բարձր ոչինչ չկայ, որից ոչ ոք բարձր չէ:

Այս պատուիրանը **քրիստոնեաներին** էլ է վերաբերում: Ճիշտ է մենք չունինք քարէ, երկաթէ և փայտէ կուռքեր, բայց և այնպէս մեզ համար ևս «մի՛ եղիցին քեզ այլ աստուածք **բաց** յինէն»-ը աւելորդ չէ: Մեր մէջ ևս մինչև այսօր կայ և տիրում է հեթանոսութիւնը: Քանի-քանիսը անցաւոր կամ մեռեալ իրերը կենդանի Աստուածանից բարձր են գնահատում: Մինի Աստուածը փողն է—փողը նրա ցանկութիւնների նպատակն է. փողը նրա հոգին է. փողը նրա ամենասիրելին է: Մինը ժողովում է փողը որդու, թոռան...... համար, իսկ միւսը աշխարհի ունայնութիւններն է վայելում նրանով: Երկուսն էլ պատրաստ են փողի համար իրանց խիղճը զոհել, վաճառել, ուստի և այդպիսիք չեն ասում—եթէ ես միայն Աստծուն ինձ սեփական ունենայի, այլ՝ եթէ ես միայն փող ունենայի: Սա էլ մի տեսակ կռապաշտութիւն է: Մի ուրիշը՝ փառքը, պատիւն է աստուածացնում. անցաւոր փառք, պատիւ, որ հիմնում է տիտղոսների, զարդարանքների և այլն այսպիսի արտաքին բաների վրայ: Ոմանք էլ իրանց սիրտը բաւականութիւններին են յանձնում

և որոնք միշտ զղջացել են ու աշխարհիս թշուառներից մինը դառել: Բաւական չէ՞ն այս կռապաշտները, մի՞թէ կարիք կայ էլի ուրիշ կռապաշտութիւններ յիշելու: Մտէք մի քանի ընտանիքների մէջ և դուք կտեսնէք, որ սիրոյ ամենասուրբ զգացմունքները կռապաշտութեան են փոխարկուել: Ո՜րքան յաճախ մարդիկ այս կամ այն բանը Աստուածանից աւելի են սիրում, որով և կռապաշտութիւն են անում: Մի քանի ընտանիքներում, երբ մի երեխայ է մեռնում, այնպիսի ողբ ու սուգ են անում, կարծես թէ Աստծու կամքը չլինէր այդ: Ոմանք էլ կոյր ճակատագիրն են իրանց համար Աստուած դարձրել—այդպիսիք խօսում են մի ինչ որ խիստ ճակատագրի մասին և դողում են նրա առաջ. այդպիսիների համար կարծես թէ երկնքումն Աստուած չլինի: Ոմանք էլ յոյսերն երկնքի, բնութեան վրայ ունեն դրած—երկինքը, բնութիւնը կօգնէ մեզ—ասում են այդպիսիք: Մի քանի հիւանդոտներ էլ այսպէս են ասում—բնութիւնը ինքն իրան կօգնէ: Մի՞թէ սա ճշմարիտ է, որ բնութիւնը ինքն իրան կօգնէ, եթէ Աստուած օգնելու չլինի այն օրէնքների միջնորդութեամբ, որոնք նա բնութեան մէջն է դրել: Դրանք բոլորն էլ կռապաշտներ են—դրա՛նք արարածին արարչի հաւասար են ընդունում: Բայց ամենամեծ կուռքը մեր անձն է: Ո՞րն է քո ամենասիրելի մտածողութիւնը:—Այն՝ ինչի մէջ քո ունայնութիւնն է: Ի՞նչի մասին ես մտածում ամենից շատ:—Թէ ինչպէս անես, որ քեզ առաջ տանել կարողանաս աշխարհիս մէջ: Ո՞ւմն ես դու ամեն բանից բարձր ես սիրում:—Ո՛չ թէ Աստծուն, ո՛չ թէ եղբօրդ, այլ՝ քեզ և էլի քեզ: Եսի, իմի, ինձի շուրջը ամբողջ աշխարհը պտըտւում է: Արդարև քրիստոնեաների մէջ ես կուռքերը բազմաթիւ երկրպագուներ ունին: Այդպիսիք ճանաչում են Աստծուն, բայց միայն կարեաց ժամանակ, երբ այլևս օգնող չկայ, յիշում են նրան: Բայց այս Աստծու մօտ քանի—քանի աստուածներ են գտնում մարդիկ և իրանց սիրտը նրանց հետ կապում: Ակամայ մարդս յիշում է թագաւորի մէկին, որ երկու սեղան շինել տուեց իւր տաճարի մէջ՝ մինը Քրիստոսի համար, իսկ միւսը սատանայի, որպէսզի ոչ մինին էլ չբարկացնէ և երկուսի հովանաւորութիւնն էլ վայելէ: Ո՜րքան այդպիսի մարդիկ կան: Բայց այսպէս չպիտի լինի: Ամեն մի կէս բան (թերութիւն) արգելում է Աստուած—չի կարելի և՛ Աստծուն և՛ մամոնային ծառայել: Դու ոչինչ չպիտի ունենաս որ Աստուածանից վեր լինի և որին դու աւելի յարգես, աւելի սիրես, ինչքան Աստծուն: Այսպէս ուրեմն պատուիրանի գումարն է



—Աստուած քո սիրտն է կամենում. բայց ո՛չ կիսատ, ո՛չ թերի, ո՛չ կոտրտած, ո՛չ կտոր արած, այլ՝ ամբողջ: «Տուր ինձ որդեակ զսիրտ քո եւ աչք քո ճանապարհաց իմոց սպասեսցեն»: (Առակք Սող. իգ. 26.):

Եթէ մենք կամենում ենք մեր սիրտն Աստծուն տալ, այն ժամանակ պէտք է այսպէս վարուենք—մենք պէտք է ամեն բանից աւելի Աստուածանից երկիւղ կրենք, սիրենք և վստահութիւն ունենանք դէպի նա: Բայց ինչպէ՞ս: Երկիւղ կրելը չէ՞ նշանակում մի ինչ որ վատ բան (օրինակներ): Գուցէ՞ սա հեթանոսական երկիւղն է, որ հազարաւորների սրտի անդորրութիւնը խլել է:—Ո՛չ, կայ մի տեսակ երկիւղ, որ համապատասխան է յարգանքի—դա երկիւղածութիւն *) կոչուածն է: Այս մտքով էլ պահանջւում է, որ մենք ամեն բանից աւելի Աստուածանից երկիւղ կրենք: Լաւ ի միտ առ, որ Աստուած ամեն բանից բարձր է—մարդկանցից էլ, կարիքից էլ, մահուանից էլ. նա ամենազօրաւորն է, ամենասուրբն է. նա միայն կարող է պատժել. նա միայն կարող է փրկել, երբ այլ ես ոչ ոք չի լինի պատժող և փրկող: Երկիւղը, այսինքն երկիւղածութիւնը աստուածային վեհութեան առաջ չպիտի նմանի ստրկի երկիւղին, որ կանգնած է իւր տիրոջ առաջ—դա կլինէր ստրկական երկիւղ, այլ երկիւղն այն ձևով պիտի լինի, ինչպէս որ բարի մանուկը ծնողաց առաջն է կանգնում—երկիւղը մանկական, տղայական պիտի լինի: «Ով ստրկական երկիւղ ունի դէպի Աստուած», ասում է Օգոստինոսը, «այնպիսին երկիւղ է կրում, որ նա կգայ, իսկ ով մանկական երկիւղ ունի առ Աստուած, այնպիսին երկիւղ չէ կրում որ նա գնում է» (համեմատել թ. ա. Հռմ. ը. 15. «Զի ոչ առէք զհոգին ծառայութեան միւս անգամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան, որով աղա-

*) Մարդիկ երկիւղ են կրում այն բանից՝ ինչ որ հզօր են համարում իրանցից և որից միևնոյն ժամանակ բարի բան չեն սպասում, զորօրինակ ոճրագործը դատաւորի առաջ, անհնազանդ որդին՝ ծնողաց առաջ: Մարդս երկիւղած է նոյնպէս իրանից հզօրի առաջ, բայց չարիք չէ սպասում նրանից, զորօրինակ երիտասարդը ծերի առաջ, աշակերտը՝ ուսուցչի...: Երկիւղածութեան գաղափարը հիմնուած է անբաւութեան գաղափարի վրայ: Աստուած ոչ ոք չունի իրանից բարձր, ամենքն էլ իրանից ստոր են. ամենաբարձրեալին, որ միևնոյն ժամանակ և ամենալաւն է, վայել է ամենաբարձր աստիճանի երկիւղածութիւն: Ըստ այսմ երկիւղածութիւնն է Աստծու անվերջ անբաւութեան զգացմունքը:

ղակեմք՝ աբբա, հայր»)։ Լաւ տղան, բարի մանուկը, եթէ պատիժ էլ չստանայ ծնողներից, այնուամենայնիւ քաշւում է հօր պատուէրներից անցնել. նա երկիւղ է կրում՝ մի՛ գուցէ իւր անհնազանդութեամբ տրտմեցնէ ծնողաց։ Այսպէս էլ ճշմարիտ երկիւղածը գիտէ գնահատել Աստծու սէրը. նա խորշում է այն ամենից, ինչ որ կարող է Աստծուն հաճելի չլինել։ Սրա համար ես ճշմարիտ երկիւղածութիւնը ամենալաւ, ամենազօրաւոր զէնքն է չարի դէմ (Յովբ. իը. 28. «Ահա աստուածպաշտութիւն (երկիւղածութիւն) է իմաստութիւն, եւ մեկնել ի չարեաց է հանճար»։) Երբ մարդս Աստուածանից այսպէս է երկիւղ կրում, կարիք չունի մարդկանցից վախենալու, որովհետև աստուածային երկիւղը մարդուս ույժ, զօրութիւն, հաստատութիւն և յարատեւութիւն է տալիս։ Գուցէ ուրիշները վհատուեն, բայց Աստուածանից երկիւղ ունեցողը չէ վհատւում. ուրիշները կարող են անհաւատարիմ լինել, Աստուածանից երկիւղ ունեցողը միշտ հարազատ է. ուրիշները կարող են աշխարհիս հետ համակերպուել, բայց Աստուածանից երկիւղ ունեցողը ուշ չէ դարձնում աշխարհի սպառնալիքների վրայ—նա հաստատ է, անվրդով է, նա չարունակ կըրկնում է իւր մէջ՝ Աստուածանից աւելի պիտի վախենալ՝ քան թէ մարդկանցից։

Ուստի «զաստուծոյ երկիր, եւ զպատուիրանս նորա պահեա՛, զի այս է մարդն ամենեւին»։ (Ժող. Սող. ժբ. 13.) և կամ «Երանի ամենեցուն ոյք երկնչին ի տեառնէ, եւ գնան ի ճանապարհս նորա։ Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, եւ բարի եղիցի» (Սաղմոս ճիէ. 1. 2.)։

Բայց բաւակա՞ն է Աստծուց երկիւղ կրելը՝ առաջին պատուիրանը կատարելու համար։ Սա առաջինն է, սկիզբն է (համեմատիր Սաղմոս ճժ. 10)։ Մի երկրորդ պայման ես անհրաժեշտ է, այն է՝ սէրը։ Աստուածային երկիւղ ունեցողն աշխատում է այնպիսի բան չանել, որ Աստծուն տհաճ լինի (սա բացասական կողմն է). Նա հեռացնում է չարը և պաշտպանւում է մեղաց դէմ։ Իսկ սէրը անում է այն՝ ինչ որ Աստծուն հաճելի է (սա դրական կողմն է). Նա մղում է մարդուս դէպի բարին, գործում է իրաւացին։ Ուստի երկնչել և սիրել

Մենք պէտք է Աստծուն ամեն բանից աւելի ***սիրենք:*** Ուրեմն այստեղ ես «ամեն բանից աւելի», այսինքն Աստծուն աւելի պիտի սիրենք՝ քան թէ փող, հարստութիւն. աւելի քան թէ



երջանիկ օրերը և լաւ բարեկամները. աւելի քան թէ աշխարհիս փառքն ու պատիւը. աւելի քան թէ հայր և մայր, կին և որդի. աւելի քան թէ մեր կեանքը։ Ոչինչ չպիտի լինի նրանից բարձր, ոչինչ չըպիտի դու քո տէր Աստծուց աւելի սիրես։ Մօր համար որդուց աւելի ինչ սիրելի բան կայ, բայց Աստծուն հաճոյ լինելը և՛ս աւելի պիտի լինի։ Ոմանց համար փառքը, պատիւը սիրելի է, բայց Աստծու սէրն ամեն բանից բարձր պիտի լինի։ Աստծու համար ոչ մի զոհ դժուար չպիտի երեւայ մեզ. ոչ մի պատարագ բարձր չպիտի թուի մեզ. ոչ մի գոյք թանկագին չպիտի համարուի։ Նրան, որ մեզ «նախ» սիրեց (I. Թ. Յովհ. դ. 19) պէտք է ի Նորոյ սիրենք ամբողջ սրտով։ Ճշմարիտ սիրոյն յատուկ է անձկութիւնը՝ սիրած առարկայի սեպհականութիւն լինելը. Նա (սէրը) չի բաւականանում, որ գիտեն թէ մի Աստուած կայ, այլ ցանկանում է Նրան ունենալ։

«Զի՞նչ կայ իմ ընաւ յերկինս, կամ ի քէն զինչ եւս խնդրեցից յերկրի» (Սաղմ. հբ. 25)։ (Ո՞վ ունիմ ես երկնքումը, քեզանից զատ ոչինչ չեմ ուզում երկրի վրայ)։ Ում սրտի մէջ այսպիսի սէր կայ առ Աստուած, կնշանակէ Նա ունի այն՝ ինչ որ ամենաբարձր է, ամենասուրբ է, ամենալաւն է, ինչ որ մարդս կարող է ունենալ—Նա ամեն ինչ ունի։ «Ցնծացաւ հոգի իմ յԱստուած» (Ղուկ. ա. 47.) «Ինձ մերձենալ առ Աստուած բարի է» (ուրախալի) (Սաղմ. հբ. 38.)։ Այդպիսին յարատև անձկութիւն ունի առ Աստուած։ Լաւ տղի համար հայրական օջաղը միշտ սիրելի տեղ է երկրիս վրայ. այն մարդը, որ հայրական տունը ամբողջ սրտով, ամբողջ հոգւով, ամբողջ անձնով և ամբողջ զօրութիւնով է սիրում, հայրենիքը այդպիսի մարդու անձկութեան նպատակն է։ Ով սէր ունի առ Աստուած, այնպիսին ույժ և զօրութիւն է ստանում կատարելու Նրա պատուիրանները։ Արդէն կեանքի մէջ սովորական խօսակցութիւն է, թէ ինչ որ մարդս սիրով է կատարում, դժուար չէ թըւում նրան։ Այսպէս ես այն անձը՝ որ Աստծուն ի բոլոր սրտէ է սիրում, դժուարութիւն չի ունենայ աստուածային պատուիրանները կատարելու։ «Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք եւ պատուիրանք (սէր) նորա չեն ինչ ծանունք» (I. Թ. Յովհ. ե. 3.)։ Սէրը՝ ամենածանր բանն անգամ սիրով է կատարում, դրա համար ես «լրումն օրինաց սէր է»։

Ով քո աչքում մեծ է, նրան էլ դու յարգում ես և երկիւղածութիւն ունիս դէպի նա. ով այսպիսի յարաբերութեամբ քո

սիրտը գրաւել է, նրան էլ սիրում ես և հաւատում։ Հէնց դրա համար էլ ասում ենք—երկիւղածութիւն, սէր և հաւատարմութիւն։

Մենք պէտք է ամեն բանից աւելի Աստծու վրայ *վստահութիւն* ունենանք։ Մարդիկ շատ անգամ կամենում են օգնել, բայց չեն կարողանում. մարդիկ շատ անգամ կարող են օգնել, բայց չեն կամենում. մարդիկ շատ անգամ կամենում են օգնել, բայց ձևը չգիտեն։ Աստծու մօտ բոլորովին ուրիշ տեսակ է—վասնզի նա ամենակարողն է, նա ամենագէտ, ամենախնամատուն է, որ գիտէ օգնել և դա սիրոյ Աստուած է, որ օգնել է կամենում։ Նա իւր կառավարութեան մէջ դեռ ես ոչ մի ՛բան աչքից չէ թողել և ինչ որ անում է կամ թոյլ է տալիս, որ կատարուի, բոլորն էլ բարի վախճան են ստանում։ Հէնց դրա համար ես ասում է սուրբ գիրքը. «Բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ մարդիկ» (Սաղմ. ճժէ. 8)։ Մարդիկ թոյլ են։ Փարաւոնն ինչ արաւ իւր զօրութեամբ։ Նաբուգոդոնոսորը շատ որոտաց, բայց ինչ շահեց։ Նապոլէոնը իւր 500,000 զինուորներով, որով նա տէրութիւնները կարծես, որպէս շահմատի քարեր, տեղափոխում էր, ինչ կարողացաւ անել։ Ո՛չ, ո՛չ, «Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա» (Սաղմ. ճխէ. 3)։ Մարդիկ մահկանացու են—ում վրայ որ դու այսօր վստահութիւն ունիս, գուցէ վաղը մեռածների մէջ կարելի լինի որոնել նրան։ Մարդիկ փոփոխամիտ են—այսօր «ովսաննա» են աղաղակում, իսկ փոքր ինչ յետոյ «ի խաչ հան զդա»։ Ուրեմն մարդոց վրայ մի՛ վստահիր, յոյսդ նրանց վրայ մի՛ դնիր։ Քո հարստութեանն էլ մի՛ վստահիր։ Արդեօ՞ք քո հարստութիւնը կարող է քեզ ազատել հիւանդութիւնից, կարո՞ղ է քեզ թշնամութեան, կարիքի, մահուան առաջ պաշտպանել։ Առակք Սող. ժա. 28. «Որ յուսայ ի մեծութիւն՝ կործանեսցի»։ Քո բանականութեան, քո խելքի վրայ էլ շատ յոյս մի՛ դնիր։ Ճիշտ է, նա քեզ հարկաւոր է, բայց նրան ամբողջովին մի՛ վստահիլ. դու մի՛ կարծիր, թէ քո գլխով ամեն ինչ կարող ես անել, յաջողեցնել։ Ոչ ոք այնքան իմաստուն չէ, որ մի փոքր՝ յիմարութիւն աւելորդ չունենար», ասում է առածը։ Սուրբ գիրքը Երեմիայի մարգարէութեան թ. 23. 24. մէջ այսպէս է խօսում. «Մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, եւ մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր եւ մի՛ պարծեսցի մեծն ի մեծութիւն իւր, այլ այն պարծեսցի՝ որ պարծիցին իմանալ եւ ճանաչել զիս, թէ ես եմ տէր Աստուած, որ



առնեմ զիրաւունս եւ զողորմութիւն եւ զարդարութիւն ի վերայ երկրի»։ Ուրեմն ուրիշի վրայ յոյս մի՛ դիր՝ այլև քեզ վրայ, այլ թէ ոչ կորած ես—յոյսդ դի՛ր միմիայն Աստծու զօրութեան, Աստծու օգնութեան, Աստծու մխիթարութեան վրայ։

Ով իւր անելիքը պատուաւոր կերպով է կատարում, ով իւր պարտաւորութիւնները արդար կերպով է լրացնում և յոյսն Աստծու վրայ է դնում, նա չի սխալուի, եթէ Աստծու ճանապարհները նրա ճանապարհների նման չեն. եթէ նրա մտածողութիւնները իւր մտածողութիւնների նման չեն—նա իւր տխուր ժամերի մէջ և վշտալի րոպէներում ես հանգիստ և խաղաղ է սրտով։ Այդպիսի փորձութիւնների մէջ մարդս անյողդողդ է մնում (I. Թ. ա. Կորնթ. ժ. 13.)։ Այդպիսին բաղդաւորութեան մէջ համեստ է մնում, իսկ թշուառութեան մէջ՝ մխիթարուած («թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու.» Սաղմ. իբ.)։ Դրա համար ես այդպիսին, երբ վերջին պատառ հացը վերջացրել է, վերջին կոպէկը ծախսել է, բայց և այնպէս էլի չէ յուսահատւում։ Ով իւր սրտի մէջ հարազատ, մանկական վստահութիւն ունի առ Աստուած, այնպիսին չի մոռանայ յիշելու Եսայի լ. 15. «Յորժամ դարձցիս եւ յոգւոց հանիցես (հանգիստ լինել) յայնժամ կեցցես (օգնութիւն ստանալ), եւ գիտասցես թէ ուր իցես»։ Այո՛, հանգիստ, խաղաղ լինել, ներքին կերպով չյուզուել, չբարկանալ, չտրտնջալ և չգանգատուել, եթէ Աստուած քո կամեցածի նման չէ անում, մինչև անգամ հանգիստ՝ խաղաղ լինել և այն ժամանակ, երբ Աստուած՝ ճշմարիտ բժիշկը թշուառութեան սուր դանակով մեր հոգւոյ աւերնները կտրատում է. երբ նա դառն դեղ է տալիս. մեզ ցաւ է պատճառում՝ ուրախացնելու համար։ Այս ձևի հանգիստ, խաղաղ մնալով՝ կարող ենք և զօրաւոր լինել, որովհետև «որ սպասեն տեառն՝ նորոգեսցին զօրութեամբ, նորափետուր զարդարեսցին իբրեւ զարծուիս, ընթասցին եւ վաստակեսցեն, գնասցեն եւ մի քաղցիցեն» (Եսայի խ. 31.)։

Եթէ դու ա՛յսպէս ամեն բանից աւելի Աստծու վրայ յոյս կդնես. եթէ դու նրան ա՛յսպէս կսիրես. եթէ դու նրանից ա՛յսպէս երկիւղ կկրես, այն ժամանակ կարող ես ասել, որ ես պատուիրանը կատարել եմ, ես կուռք չեմ պաշտել։

## ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Մի՛ առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց, զի ոչ «սրբեսցէ տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց»:*

Առաջին և երկրորդ պատուիրանը պահանջում է, որ ամեն բանից աւելի Աստծուն սուրբ ընդունենք: Պատուիրանի մէջ պահանջւում էր սուրբ սիրտ. սա առաջինն էր: Այժմ գալիս է երկրորդը—Աստծուն պէտք է քո շրթունքներով էլ սուրբ պահես: Այսպէս ուրեմն պատուիրանը կամենում է ոչ թէ միայն մեր խորհուրդը, մտածողութիւնը, այլև մեր խօսքը սուրբ առնել: Եւ իրօք—երկուսը չպիտի բաժանել իրարից, սա մի ամբողջութիւն է, որովհետև սիրտը աղբիւրն է, իսկ լեզուն՝ խողովակը, որի միջով հոսում է: Եթէ սիրտը մաքուր չէ, խօսքն էլ մաքուր չէ. ում սիրտը լիքն է, սկսում է բերանից թափուել: Երրորդ պատուիրանը ճառում է լեզուի ուղիղ գործադրութեան մասին—նա պահանջում է մեզնից Աստծու անունը սուրբ առնել, այսինքն զգուշանանք, մեր բերանով Աստծու անունը չպղծենք և չանպատուենք նրան մեր խօսքով: Աստծու անունը իրան համանիշ է՝ հաւասար է: Դու չես կարող քո հարևանին ասել, թէ գող ես և յետոյ նրանով արդարանաս, թէ ես քեզ չէի ասում, այլ՝ քո անուան: Հարևանդ այդ բանը չի ընդունիլ, նա անշուշտ քեզ կասէ—անունը անձնի փոխանորդն է, ով իմ անունն արատաւորում է, ինձ է արատաւորում: Միևնոյնն էլ Աստծու անուանն է վերաբերում: Աստծու անունը Աստծու էութիւնն է ցոյց տալիս և կամ նրա յատկութիւնն է: Աստուած յայտնուել է նախ՝ որպէս Աստուած—«ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր», յետոյ՝ որպէս տէր Աստուած, իսկ վերջը՝ որպէս ամենակարող (I Մովս. ժէ. 1.), որպէս Աստուած զօրութեանց (Եղովէ) (I. Թագ. ա. 1.), որպէս որ էն (II. Մովս. գ. 13. 14.), այսինքն «ես եմ որ եմ ինքնագոյ, անփոփոխ, միշտ նոյնը. ես եմ որ եմ միշտ անսկիզբն, անվախճան. ես եմ որ եմ էացուցիչ ամենայն էից» (Մեծր. քրիստ. եր. 10), այսինքն ես յաւիտենական եմ: Երբ հրէաները Բաբելոնի գերութիւնից վերադարձան և իրանց թշուառութեան մէջ զգացին, թէ Աստուած ինչ է եղել իրանց համար և թէ իրանք ինչ-



պէս են վարուել նրա հետ, այլ ես չէին վստահանում Եղովէ (Եհովա՝ ազգային Աստուած) բառով Աստծու անունը յիշելու, այլ ասում էին Ադոնայի, այսինքն տէր: Մի չնչին նախատինք՝ Աստուածային անուան՝ սրբապղծութիւն էր համարւում՝ այնպէս որ Աստծու անունը անպատուողին մահու պատիժ էին տալիս (III. Մովս. իդ. 16. «Այր ոք այր՝ որ անիծանիցէ զԱստուած, մեղս ընկալցի, զի անուանեաց զանուն տեառն. մահու մեռցի. քար ընկէցութեամբ քարքոծ արասցեն զնա ամենայն ժողովուրդն, եթէ պանդուխտ իցէ. եւ եթէ բնակ, յանուանել նորա զանուն տեառն, սատակեսցի»): Եսայի խգ. 11.: Աստուած փրկիչ ես կոչւում է, իսկ Քրիստոս՝ Հայր է անուանում: Ինչ ձևով էլ, որ սուրբ գիրքը Աստծու անունը տալու լինի, միշտ և հանապազ չպիտի մոռանալ. «Մի՛ առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց»-ը: Ամենից առաջ մտածի՛ր քո խօսքի թեթևամիտ գործածութեան վրայ: Քա՛նի քմնիսները գործ են ածում «Աստուած մեծ» անունը՝ առանց նրա մեծութեան վրայ մտածելու: Ոչ ոք իւր մաքուր չորերը անվայել ձևով չէ պահում. մարգարիտը աղբի մէջ չեն ձգում. բայց ամենաբարձրեալ, ամենասուրբ Աստծու անունը շատերը չեն յարգում: Ահա՛ այս է թեթևամիտ կամ անօգուտ գործածութիւնը: Աւելի ծանր է յանցանքը, երբ Աստծու անունը գիտակցութեամբ ի չարն ենք գործ դնում, զեղծում: Բայց որքան խիստ էր հսկում իսրայէլը Աստծու անունը սուրբ պահելու—III Մովս. իդ. 16. որոշ ասում է. «Զի անուանեաց զանուն տեառն. մահու մեռցի, քարընկէցութեամբ քարկոծ արասցեն զնա ամենայն ժողովուրդն»:

Խօսենք նախ՝ Աստծու անուան զեղծման և ապա նրա ուղիղ գործածութեան մասին:

Երբ մենք *հայհոյում՝ ենք*, ասել է թէ Աստծու անունը զեղծում ենք: Ով հայհոյում է, ասել է թէ ցանկանում է, որ իւր մերձաւորին կամ իրան, Աստուած մի չարիք հասցնէ: Այդպիսի անձը հեռացնում է իրանից սուրբ ասած բանը. ընկնում է կրքի ազդեցութեան տակ և Աստծուն էլ խառնում է իւր տգեղ վարմունքի, իւր անսուրբ, սիրուց զուրկ մտածողութեան մէջ: Հայհոյիչներ կարելի է գտնել ամեն հասակի մէջ՝ թէ հասակաւորների և թէ երիտասարդների, թէ մարդկանց և թէ կանանց, թէ տղերանց և թէ աղջկերանց. բոլոր դասակարգերի մէջ—թէ տիրողների և թէ հպատակների, թէ հարուստի և թէ աղքատի, թէ ազատի և թէ

գուսհկի, թէ զինուորականի *) և թէ գիւղացու մէջ: Ո՛վքեր են հայհոյողները—ծնողները հայհոյում են իրանց որդւոց, իսկ որդիքը՝ ծնողներին. հայհոյում են թշնամուն և բարեկամին. հայհոյում են, զորօրինակ անձրևին, երբ, մարդկանց կարծիքով, իւր ժամանակին երկնքից չի թափւում. անբան կենդանուն, որ մարդոց դրած ծանր բեռը չի կարողանում տանել. հայհոյում են կոտրած ձեռին, ոտին, պատռւած չորերին. հայհոյում են վաճառելիս, գնելիս. դանակին են հայհոյում, որ չի կտրում, սեղանին՝ որ ուղիղ չէ կանգնած.....: Հայհոյիչը երկնքից սկսէ թէ դժոխքից, ոսկուն հայհոյէ, թէ աղքատութեանը, բոլորն էլ միևնոյն է: Նա իւր վրէժը առնում է պատահած առարկայից: Հայհոյողը կատաղում է, վրդովւում է, այլայլւում է, մոռանում է իրան, կրքի աստիճան է բարձրանում: Հայհոյիչը հարուածում է կենդանուն, կոտրատում է ամանները—և իրօք սարսափելի երևոյթ է տեսնել հայհոյիչին: Ե՞րբ են հայհոյում մարդիկ:—Երբ սիրտը դառնութեամբ լիքն է. երբ թշուառութեան մէջ է. երջանկութեան մէջ եղած ժամանակն էլ նոյն տգեղ սովորութիւնը չի մոռացւում: Երբ պատահում ես հոգւով հանգիստ մի մարդու և հարցնում ես, թէ ինչ համբաւ կայ: «Ողջութիւն, գոհութիւն Աստուծոյ», պատասխանում է դիմացինը և քեզ ուրախ տեղեկութիւններ է հաղորդում, իսկ դրա հակառակ՝ երբ պատահում ես հայհոյիչին՝ նա ոչ մի խօսքով չէ արտայայտւում՝ բացի «սատանէն ոչ գիտէ» զզուելի ձևով: Մարդիկ հայհոյում են և՛ աշխատելիս և՛ խաղալիս, թէ՛ լուրջ և թէ՛ արբած ժամանակ: Եթէ Աստուած մի րոպէ անգամ լսէր հայհոյիչների խնդիրը, որոնք զարհուրելի կերպարանքով—կրճտած ատամներով, լարած բռունցքով և քստմնելի հայեացքով երկինք են

*) Զինուորի մէկը՝ մի հասարակութեան մէջ կամենում էր հաստատել, որ քաջ զինուորականը անպատճառ պէտք է հայհոյէ, ապա թէ ոչ՝ զուրկ կլինի իրան վայել յատկութիւնից: Ներկայ եղողներից մինն ասաց. «Իմ կարծիքով դա ուղիղ չէ, ինձ ծանօթ է մի հարիւրապետ, որ չէր հայհոյում, այլ կարճ և հեզ կերպով էր կառավարում և պիտի ասեմ, որ նա հնազանդ ստորադրեալներ ունէր»: «Շատ կցանկայի գիտենալ, թէ այդ ո՛վ է», ասաց զինուորականը. «խնդրեմ ասէք նրա անունը»: «Դա Կափառնայումի հարիւրապետն է», սառը կերպով կրկնեց հանդիսականը: «Նա ասում էր մինին գնա և գնում էր և միւսին եկ, գալիս էր, երրորդին արա այս բանը և անում էր: Ես կարծեմ, ինչ որ այն ժամանակ հռովմայեցիներն իրանց հեթանոս զինուորների մէջ կատարում էին, նոյնը այժմս էլ կարելի է անել»:



նայում և կատարէր նրանց խնդիրը, այն ժամանակ իրանք հայհոյիչներն անգամ կսարսափէին: Եթէ Աստուած լսէր հայհոյող ծնողների խնդիրը և նոցա որդւոց իրանց ցանկացած տեղը տանէր. եթէ Աստուած լսէր գիւղացուն և նրա ձին, գոմէշը, եզը.... այնպէս կարգադրէր լինելու, ինչպէս հայհոյիչն է ցանկանում, ինչ կլինէր այդպիսիների վիճակը: Եթէ Աստուած հայհոյիչների ցանկութեան համաձայն ամեն անգամ պատժէր նրանց, այն ժամանակ մի բծի չափ տեղ էլ չէր լինի հարուածելու համար: Ո՛վ մարդ, զգո՛յշ եղիր, Աստուծու անունը հայհոյելու համար չէ, նա սուրբ բանի համար է: Աստուծուն չպիտի կուռքերի աստիճանի ստորացնել—մարդս այստեղ օգնութիւն է խնդրում, որ իւր չար դիտաւորութիւններն ի կատար ածուին, որ նրա երկիւղածութիւնն ու սէրը ի չիք դառնան: Որքան մեծ է յանցանքը, որքան անգամ հայհոյիչն անցնում է արդարութեան սահմանից, այնքան էլ արդարացի կլինէր, որ Աստուած իւր անունը զեղծողին անպատիժ չթողնէր: Մի՛ մոռանաք, որ «Աստուած հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր»: Անէծք, հայհոյանք սերմանողը, անէծք, հայհոյանք էլ կհնձէ: Շատ օրինակներ կարելի է բերել՝ համոզելու հայհոյիչներին, որ իրանց ցանածն էլ հնձում են: Խաղաղորդի մինը կաշիներ լուանալիս՝ սաստիկ անձրևի հանդիպելով՝ բարկացաւ, ձեռքը բարկացած երկինք բարձրացրեց՝ ասելով—«Հէնց այնժամանակ պիտի անձրև թափես, երբ կարևորութիւն չկայ»: Դեռ նոր էր վերջացրել խօսքը, որ երկնքից կայծակ ընկաւ և հարուածեց հայհոյիչի երկինք բարձրացրած աջը: Ուրեմն մի՛ հայհոյիր: Թ. ա. Հռմ. ժբ. 14. արգելում է՝ ասելով. «Օրհնեցէ՛ք զհալածիչս ձեր, օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծանէ՛ք»: Օրհնութիւնը դեռ ոչ ոքի չէ վնասել, իսկ անէծքը միշտ թշուառութիւն է բերել մարդու համար: Կարդա՛լ I. Թ. Պետր. գ. 9. «Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց, այլ զչարին հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւնն ժառանգիցէք»: Մատ. ե. 44. «Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, բարի արարէ՛ք ատելեաց ձերոց, եւ աղօթս արարէ՛ք ի վերայ այնոցիկ, որք լլկեն զձեզ եւ հալածեն»:

Դարձեալ—Աստծու անունը ի չարն ենք գործածում, զեղծում ենք, երբ *երդւում ենք:* Երդումն, ուրիշ խօսքով, մի տեսակ հաստատութիւն է, որով մարդ Աստծուն որպէս վկայ է կանչում յօգուտ ճշմարտութեան և ի վրէժ ստութեան: Սուտ երդմանը թիւ ու համար չկայ մեր ժամանակի մէջ. ուր որ էլ մտնէք, այս տգեղ վար-

մունքը ձեզ կհանդիպէ, նոյն իսկ այն անձինքը, որոնք ի պաշտօնէ կոչուած են քարոզ լինելու այդ թերութեան դէմ, ոչ թէ զերծ չեն այս յանցանքից, այլ վարակուած են նոյն ախտով: Սա ցաւալի երեւոյթ է, այսպէս չպիտի լինէր: Ամենայն ոք պիտի աշխատէ խորշել այս սովորութիւնից, որովհետեւ ով մի անգամ փորձեց ճաշակելու այս յանցանքը, հեշտութեամբ չի ազատւում նրա ճիրաններից: Մենք առաջ տեսանք, ով երդւում է, նշանակում է Աստուծուն վկայ է կանչում յօգուտ ճշմարտութեան և ի վրէժ ստութեան: Սուտ երդւողը խոստանում է ամենակարող Աստծու ներկայութեամբ ճշմարտութիւն խօսելու և այսպէս ասած, ամենաբարձրեալի հետ մի տեսակ խաղ է խաղում: Նա պղծում է ոչ թէ միայն իւր շրթունքներն ու սիրտը, այլև անպատւում է Աստծուն՝ ամենաճըշմարտին, ամենասրբին և ամենաարդարին: Միթէ Աստուած այսպիսիներին անպատիժ պիտի թողնէ: Երբ իշխանութիւնը քեզնից երդումն է պահանջում, դու կարող ես արդար խղճով երդուել: Ճըշմարիտ երդում ուտելը աստուածային պաշտօն *) կատարել է: Այսպէս էլ քահանայացուն հրապարակաւ եկեղեցու մէջ երդւում է հաւատարիմ լինել եկեղեցուն: Այսպէս կաթուղիկոսը երդւում է եկեղեցուն, ազգին և իշխանութեան հաւատարիմ լինել: Այսպէս ամեն մի պաշտօն ընդունող երդւում է ուտում (պաշտօնական երդումն): Այսպէս ամեն այր և կին սուրբ սեղանի առաջ պսակուելիս երդւում են ցմահ հաւատարիմ լինել իրար (ամուսնական երդումն): Այսպէս զինուորը երդւում է իւր արիւնը չխնայել հայրենիքին (դրօշակի երդում): Այսպէս երդւում է վկան դատարանի առաջ այս կամ այն հարցի մասին ճշմարիտը խօսելու: Այս բոլոր դէպքերումն էլ հարցը նրանումն է, որ երդւողը լաւ պիտի յիշէ Զաքարիա ը. 17. «իւրաքանչիւր չար ընկերի իւրում մի՛ խորհիք ի սիրտս ձեր, եւ զերդումն սուտ մի՛ սիրէք, զի զայն ամենայն ատեցէ, ասէ տէր ամենակալ»: Մի՛ հաւատար այն բանին որ ասում է, թէ պէտք է ի նկատի առնել, որ բարեկամ կայ, թշնամի կայ, պատիւ և անպատւութիւն կայ, քո սեպհական օգուտը կարող է լինել—այստեղ ոչնչի մասին չպիտի մտածես, այստեղ մի բան կայ

*) Մեր նախնիքը հին ժամանակներումն այդպէս էլ հասկանում էին—երդմնեցչութիւնը եկեղեցական հանդիսով էր լինում: Դրա համար էլ դատարաններում կտեսնէք խաչ, աւետարան, փորուրար:



միայն—արդեօք քո վկայածը ճշմարտութիւն է, թէ ոչ. արդեօք քո վկայածի մասին խղճիդ և Աստծու առաջ պատասխանատու լինել կարող ես, այս բաները լաւ պիտի մտածես, մատդ բարձրացնելուց, շրթունքդ շարժելուց առաջ: Եթէ հանգամանքն այնպէս լինի, որ սուտ երդումով մեծ շահ ունենաս և կամ վտանգից ազատուելու լինիս, այնուամենայնիւ աւելի լաւ է ամեն ինչ կորցնել՝ քան թէ սուտ խօսել: Սուտ երդումն երկար ժամանակ ծածուկ չի մնայ, նա մի օր կյայտնուի և իշխանութիւնը անպատիժ չի թողնի այդպիսիներին: Բայց այդ չէ բոլորը—լսենք Աստծուն, լաւ ի միտ առնենք նրա խօսքերը, որ ասում է. «Զի ոչ սրբեսցէ տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց»: Ի՞նչ անուն տալ սուտ երդման արարմունքին—մինին ազատում է իւր սուտ խօսքով, իսկ միւսին՝ իրան նոյն խօսքով դատապարտում է: Ի՞նչ օգուտ աններելի ճանապարհով երկրային բարիք շահելը, երբ դա հակառակ է Աստծուն, որին մեր ամեն մի գործողութիւնը հաճելի պիտի լինէր. չէ՞ որ նա սրանով հեռանում է Աստծուց, երջանկութիւնից և դատապարտութեան ենթարկում իրան: Այդպիսին կորցնում է իւր ներքին խաղաղութիւնը, տանից վերացնում է օրհնութիւնը, իսկ սրտից՝ հանգստութիւնը: Այդպիսին Կայէնի նման «երերեալ եւ տատանեալ» է երկրիս վրայ: Ամենազուարթ հասարակութիւնն էլ ստրամելի է նրա համար: Արդարադատ Աստուածը հետեւում է նրան: Եւ երբ մահուան րոպէն վրայ է հասնում, սուտ երդում ուտողն այլ ևս չի կարող ապրել: Բայց մեռնել ևս չի կարողանում և վերջապէս՝ երբ նա յաւիտենական դատաւորի առաջ կկանգնի....: Տղա՛յք, ո՛վ ձեզանից կցանկայ ինքը լինել այն անձը: Ուրեմն զգուշացէ՛ք սուտ երդում ուտելուց:

Դատաստանի առաջ ճշմարիտ երդումը թոյլատրած է, իսկ սովորական կեանքի մէջ երդման բոլոր տեսակներն էլ արգելուած է՝ լինի նա ուղիղ թէ սխալ: Սովորական կեանքի մէջ պատահած երդմանը կարելի է աւելորդ, անշահ երդում անուանել: Այս այն երդումն է որ Յիսուս Մատթ. ե. 33—37. արգելում է ասելով. «Դարձեալ լուարո՛ւք, զի ասացաւ առաջնոցն մի՛ երդնուցուս սուտ..... այլ եղիցի ձեր բան, այոն այո. եւ ոչն՝ ոչ»: Ուրեմն կանոն չինի՛ր քեզ ո՛չ սուտ և ո՛չ աւելորդ երդում ուտել: Քեզ արդարացնել չես կարող նրանով, թէ ես Աստծու անունով չեմ երդւում, այլ երկնքով, գլխովս, արևովս.....: Ով շատ է երդւում, հաստատում է, որ ամենից շատ է սուտ խօսում. որ աշխարհն այլ

ես չի հաւատում իրան, ուստի և նա ապաստան է որոնում երդման մէջ: Ճշմարտութիւնը կարճ որոշումն է անում, իսկ ստախօսութիւնը ճոռոմաբան է: Ամենից լաւն այն է, որ մենք յարգենք մեր նախնեաց գեղեցիկ սովորութիւնը, թէ «խօսքը՝ խօսք է» *): Իսկ ամենից սիրունը և ամենից գեղեցիկը Քրիստոսն է ասել—«այլ եղիցի ձեր բան՝ այոն այո, եւ ոչն՝ ոչ, աւելին քան զայն ի չարէն է», այսինքն միշտ և յարաժամ խօսիր կարճ և ճշմարիտ—այսպէս է կամ այսպէս չէ: Ամենաբարձրը, որ քեզ իրաւունք է տուած, այդ այն է, որ քո այո-ն՝ այո և ոչ-ը՝ ոչ լինի, իսկ սրանից աւելին չարին է՝ յատուկ: Եթէ դու չես լսի և Աստծու անունը երդումով կամ հայհոյելով ի չարը գործ կդնես, այն ժամանակ քեզ ես վերաբերում է սպառնալիքը «զի ոչ սրբեսցէ տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց»: Թերևս հարցնէք, հապա ինչպէս է գնացել այն մարդկանց գործը, որոնք սուտ են երդուել: Շատ օրինակներ կարելի է բերել՝ հաստատելու, թէ ինչպէս Աստուած պատժել է այդպիսիներին: Ընդհանուր պատմութեան մէջ մի գեղեցիկ օրինակ կայ այդ մասին.— 1080 թ. հոկտ. 15. գերմնացւոց Ռուդոլֆ Շվաբացին ապստամբուեց կայսր Հենրիկոս IV.-ի դէմ և պատերազմում իւր աջ ձեռից զրկուեց: Շրջապատողները ցաւակցութիւն էին յայտնում այս անբաղդութեան առթիւ, բայց Ռուդոլֆը լուռ ու մունջ նայում էր արեան կայլակներին. վերջապէս յոգւոց հանելով՝ ասաց. «Այս այն ձեռն է, որով երդուեցի կայսեր հաւատարիմ լինել»:

Երրորդ—Աստծու անունով հմայութիւնը չպիտի անել: Հմայել նշանակում է Աստծու անունով մարդկային կարողութիւնից բարձր բան անել և որ և է արարողութեան միջնորդութեամբ նոյն նպատակին հասնել, զորօրինակ ոմանք ջրով լի աման են դնում և ինչ որ խօսում են—սրանով որպէս թէ հեռացնում են չարը: Շատերը կկարծէին, որ մեր օրերում հմայութիւնը անհետացած պիտի լինէր, որովհետև ամենքն էլ գիտեն, որ դրանով չարիքը չի հեռացուի, որ դա թերահաւատութիւն է, սուտ է, խաբեբայութիւն է: Բայց տարաբաղդաբար իրողութիւն է—ուր հաւատը նուազում է,

*) Եթէ մարդիկ այն լինէին, ինչ որ պէտք է լինէին, քրիստոնէին երդման կարևորութիւն չէր լինի, նոյն իսկ դատաստանի առաջ: Հէնց դրա համար մի քանի կրօնական կուսակցութիւններ, զորօրինակ Քուէկրները, բացէ ի բաց մերժում են երդումը: Դրանք ընդունում են, որ երդումը ստախօսութիւնից է սկիզբն առնում և մարդուս պարզ խօսակցութեան մի տեսակ զեղծումն է:



այնտեղ զօրանում է սնոտիապաշտութիւնը, այնպէս որ 3,000 տարի անցնելուց յետոյ՝ մենք ես Մովսէսի հետ կարող ենք ասել. «Եւ եթէ մտանիցես յերկիրն զոր տէր Աստուած տացէ քեզ, մի ուսանիցես առնել ըստ պղծութեանց ազգացն այնոցիկ: Մի գտանիցի քեզ՝ որ ածիցէ զուստր իւր կամ զդուստր իւր ընդ հուր, եւ դիւթիցէ դիւթութիւն, եւ հմայիցէ, եւ հաւահարց լինիցի. եւ կախարդիցէ կախարդանօք, եւ վհուկ եւ նշանագէտ լինիցի առ ի զմեռեալս հարցանելոյ» (V. Մովս. ժը. 9. 12.): Այս պատուէրն այսօր ես ի լուր բազմաց պիտի կրկնել, որովհետև շատերի հաւատը դէպի կենդանի Աստծու օգնութիւնը մեռած է. այդպիսիք իրանց օգնութիւնը ոչ թէ Աստծու մօտ են փնտռում, այլ թուղթ բաց անելով. ոչ թէ սուրբ գրքով, այլ՝ երազահաններով *:

**Ա.** «Մի գտանիցէ քեզ՝ որ ածիցէ զուստր իւր կամ զդուստր իւր ընդ հուր»—այսպէս էին անում ժամանակով Ասորիքի բնակիչները և ամմոնացիք, որոնք Մոլոխ կուքին երկրպագում էին և որի համար պղնձէ արձան ունէին կանգնած—մայրերն իրանց մանուկներին նրա բազուկների մէջ էին դնում և այրում արձանի մէջ վառած կրակով Դեռ մեկնից հարիւր տարի առաջ վհուկներին կրակի մէջ էին ձգում: Այժմ թէև այդ սովորոյթ, վհկահանդէսներն այլ ես չեն կատարւում, բայց վհուկների հաւատը մնում է:

**Բ.** Նոյնպէս չպիտի հաւատալ հմայողներին, թուղթ բաց անողներին: Սրանք թղթի մի կտորի վրայ գրում են որ և է հատուած սուրբ գրքից և սրանով հազար ու մի գուշակութիւններ են անում—որպէս թէ կորած իրեր են գտնում՝ որոշում են գտնուելու ժամանակը, տեղը: Եւ կան բազմաթիւ մարդիկ, որոնք հաւատում են այդ ստախօսների գուշակութեանը—սրանք այնպէս են հաւատում այդ ստախօսների ասածներին, ինչպէս մի հաւատացեալ աւետարանի խօսքին:

**Գ.** Այսօր ես հաւատացողներ կան, թէ որոշեալ օրերում միայն

* Ցաւալի է մանաւանդ, որ ոմանք Աստծու պաշտօնեայք ես, որ ի պաշտօնէ կոչուած են մենամարտող լինել այդպիսի սնոտիապաշտութիւնների դէմ, ընդհակառակն են գործում—ժողովրդի մէջ երազահաններ են տարածում, օրացոյցների վերջը՝ որպէս սուրբ պարտականութիւն, երազահան էլ են աւելցնում և գիտէք ինչու:—Որ ժողովրդի սխալ համոզմանը հակառակած չլինին և մի քանի հատ աւելի ծախուի:

կարելի է ցանել, անկել, ճանապարհ դնել, բժշկուել…: Կարծես թէ բոլոր օրերն էլ Աստծու ստեղծած չլինէին: Այս կարգին են պատկանում այն նախապաշարմունքները, երբ քահանային տեսնում են, քարը ջուր են տալիս կամ ետ դառնում, որ անյաջողութեան չհանդիպեն: Նոր լուսին տեսնելիս—ում երեսին էլ նայելու լինին, այն ամսուայ յաջողութիւնը կամ անյաջողութիւնը վերջինի բաղդից է կախուած:

Դ. Հաւատ չպիտի ընծայել թռչունների ձայնին որ իբրթէ՝ երբ հաւը աքաղաղի նման կանչէ, մարդ կմեռնէ: Բուի ձայնը անյաջողութեան նշան է: Մարդիկ նշանակութիւն են տալիս ականջի ձայն տալուն, երակի խաղալուն.....:

Ե. Ոմանք էլ մեռելներին են հարցնում, խօսում են նրանց հետ և որպէս թէ պատասխան ստանում: Ամօթ և նախատինք է մեր ժամանակին՝ հաւատալու այդ բաներին, ինչ որ Մովսէսը՝ դեռ 3,000 տարի առաջ արգելեց իսրայէլին որպէս վնասակար բան: Ովսիա մարգարէն գանգատւում է դ. 12. ասելով. «Ի քուէս հարցանէին» այսինքն քուէ(զառ)ներին էին հարցնում իրանց բաղդը: Հեթանոսական այս խաւար հնաքերը երբէք չեն յարմարում մեր լուսաւոր ժամանակին: Բայց ամենից ցաւալին այն է, որ այդ խաբեբաները ոչ թէ միայն բարեպաշտի կերպարանքով են պտտում մեր մէջ ու մեր գրպանը դատարկում, այլ՝ ցաւալին այն է, որ այդ բոլորն էլ Աստծու անունով է կատարւում— Աստծու անունը իչարն են գործ դնում: Վա՜յ նրանց, ովքեր իրանց յիմարութիւնով անգէտ են տալիս այսպիսի բաների: Երկուսին էլ վերաբերում է պատուիրանի սպառնալիքը. «զի ոչ սրբեսցէ տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց»: Եթէ դու նեղութեան մէջ ես, մի՛ դիմիր գրբացներին կամ հմայողներին, այլ՝ Աստծուն, որովհետև նա ասում է. «Կարդասցես առ իս յաւուր նեղութեան քո եւ ես փրկեցից զքեզ եւ դու փառաւոր արասցես զանուն իմ» (Սաղմ. խթ. 15.): Դարձեալ՝ «Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր» (I. Թ. Պետր. ե. 7): Ինձ օգնողը գրբացը, հմայողը, կախարդողը, գուշակողը չէ, այլ՝ Աստուած:

Վերջապէս չորրորդ՝ Աստծու անունը չպիտի պատրուակ ընդունել և սրանով ամեն տեսակ *ստախօսութիւն եւ խարդախութիւն անել:* Ստախօսներն ու խարդախները սովորաբար ճշմարտութեան վրայ էլ մի բան աւելի են դնում և կամ պակա-



սացնում: Ուր հարցը Աստծու անուան գործածութեան մասին է, այնտեղ ոչ աւելացնել է պէտք և ոչ պակասացնել. այնտեղ ամեն ինչ այնպէս պիտի մնայ և լինի, ինչպէս և իրօք է—ինչ որ ճշմարտութիւնն է: Կան մարդիկ, որոնց բերնից Աստծու անուն յիշելը չի կտրւում, բայց միևնոյն ժամանակ նոյն բերանով զրպարտում են ուրիշին եւ—այդպիսեաց խօսքը բարեպաշտ գոյն ունի, բայց գործը՝ վատ—ահա՛ դոքա են Աստծու անուան պատրուակով սուտ խօսող ու խարդախողները: Դուք մի՛ պատկանէք նրանց, որոնց մասին գիրն ասում է. «Ժողովուրդս այս շրթամբ պատուէ զիս եւ սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն» (Մաթ. ժէ. 8): Այս դասակարգին են պատկանում և այն մարդիկ, որոնք ամեն մի խօսակցութեան ժամանակ չարունակ սուրբ գրքից օրինակներ են բերում՝ բայց աւելի սրախօսութեան, ծաղրածութեան համար: Վերջապէս այս կարգին են և այն անհատները, որոնք Աստծու անունով են վարագուրում իրանց չարութիւնները և իրանց ագահութիւնը, որկրամոլութիւնը, սիրուց զուրկ լինելը.... սուրբ գրքի վկայութիւններով են արդարացնում: «Զգոյշ լերուք ի սուտ մարգարէից, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց (այսինքն նրանց արտաքին բարեպաշտութիւնից շատ հեշտ կարելի է խաբուել) եւ ի ներքոյ են գայլք յափշտակողք» (Մաթ. է. 15): Հարցն այստեղ արտաքին այն կեղծ վարմունքների մասին է, որոնք ընդունակ են ներքին տգեղութիւնները վարագուրելու: Սուտ խօսելը, խարդախելն ինքն ըստ ինքեան տգեղ բան է, բայց աւելի տգեղ է, երբ Աստծու անունը դիմակ են ընդունում իրանց տգեղութեան համար և կրօնը՝ մարդկային սրտի ամենասուրբ զգացումն, այդպէս անարգում են: Արհամարհուած մաքսաւորին գթաց Յիսուս, իսկ կեղծաւոր, մեծամիտ փարիսեցիներին «վա՜յ» ասաց (Մաթ. իգ.): «Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ տէր, տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Աստուծոյ որ յերկինս է» (Մաթ. է. 21): «Երանի՜ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք» (Մաթ. ե. 4): Նրանց պտղիցը պիտի ճանաչել իրանց:

Յարդ խօսեցինք այն հանգամանքների մասին, թէ երբ Աստծու անունը չպիտի գործ ածենք: Անցնենք պատուիրանի միւս երեսը և համառօտակի տեսնենք, թէ ո՛ւր պէտք է ճշմարիտ կերպով յիշենք նրա անունը: Պատուիրանի այս կողմը անհրաժեշտ է դիտենալ ոչ թէ նրանց, որոնք Աստծու անունը աւելորդ տեղը յիշում են և ի չարը գործ դնում, այլև նրանց համար, որոնք նրան չեն ճանաչում,

և մտքերովը չի էլ անցնում Աստծու վրայ մտածել և սուրբ առնել Նրա անունը:

Մեր հարցի պատասխանը երրակի է—Աստծու անունը գործ դի՛ր նախ՝ մխիթարութեան համար, երկրորդ՝ աղօթելիս և երրորդ՝ գոհանալիս:

Մենք ամենից առաջ Աստծու անունը մխիթարութեան համար պիտի գործ դնենք և դրանով էլ վաստակեալ և բեռնաւոր սրտերը բժշկենք: Եթէ մահը խլելու լինի մեզնից մեր ծնողներին. եթէ կեանքի փոթորիկները ընտանիքի խաղաղութիւնը խռովեն և կամ երբ մարդս հալածանքի ենթարկուի մարդկային կրքի ձեռից և յուսահատութեան մէջ ինչ անելը չգիտենայ... այն ժամանակ Աստծու անունը, որպէս առաջնորդ, որպէս դեսպան Նրա շնորհաց, կընդառաջէ. «Յայտնեա՛ առաջի տեառն զճանապարհս քո եւ յուսա ի նա» (Սաղմ. լզ. դ.): Եթէ յանցանքը երկլեղ է ազդում ընկերիդ, եթէ յանցանքների գիտակցութիւնը Նրան մինչև գետին խոնարհեցրել է, այն ժամանակ ցոյց տուր Նրան երկնային մխիթարութիւնը և մատնանիշ եղիր աստուածային անվերջ գթասրտութեան վրայ, որ ոչ ոքի կորուստը չէ ցանկանում, այլ ամենին էլ յաւիտենական կեանք—«Որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն»: Ուր որ մխիթարութեան կարօտ սիրտ տեսնես, այնտեղ աստուածային խօսքի մխիթարութիւնը մի՛ մոռացիր, միայն զգուշացի՛ր, որ խօսքերը կեղծ չլինին, կեղծաւորութեան դիմակով վարագուրուած չլինին: Աշխատի՛ր Աստծու անունը իրաւացի կերպով գործ դնելու՝ իբրև ճշմարտութիւն՝ բեռնաւորին և վաստակեալին մխիթարելու:

Աստծու անունը ճիշտ գործածած կլինիս, երբ դու քո միայնութեան ժամերին, քո սուրբ րոպէներում, քո երկնաւոր Հօրը աղօթքով մերձենաս: Ինչ որ շունչը մարմնի համար է, նոյնն է աղօթքը հոգւոյ համար: Ինչպէս մարմինը մեռնում է, երբ կեանքը հեռանում է նրանից, այսպէս և կրօնը իւր վախճանին է մերձենում, երբ հոգին աղօթքով առ Աստուած չէ դիմում: Ուրեմն աղօթի՛ր ո՛չ թէ կարեւոր ժամերում, երբ վտանգն ու հիւանդութիւնը, յուսահատութիւնն ու կեանքի հարուածները հոգին ճնշում և մահ են սպառնում, աղօթի՛ր այլև ուրախութեան ժամերում և խնդրի՛ր Աստծուն, որ Նա քեզ դէպի ուղիղ ճանապարհն առաջնորդէ, ըստ իւր կամաց ղեկավարէ: Աղօթի՛ր Նրան խաղաղ հիւղիդ մէջ միայնակ և ժողովրդի հետ եկեղեցում. աղօթի՛ր Նրան կուզես լուռ, կուզես լսելի ձայնով, խօս-



քով կամ արտասուքով—Նա քո խորհուրդները հեռուից էլ կհասկանայ: Եթէ կամենում ես, որ քո աղօթքը ճշմարիտ լինի, աղօթի՛ր կարճ, բայց ի սրտէ: Աւելի լաւ է քիչ խօսք, շատ սիրտ՝ քան թէ շատ խօսք և քիչ սիրտ:

Վերջապէս երրորդ՝ Աստծու անունը ուղիղ գործածած կլինիս, եթէ անկեղծ սրտով շնորհակալութիւն անես այն բոլորի համար, ինչ որ քեզ տուել է, եթէ փառաբանես Նրա անունը՝ Նրա տուած բարիքների համար: Երբ մարդս Աստծու օրհնութիւնով և բարութիւնով լցուած է, բնական է Աստծուն շնորհակալութիւն մատուցանելը: Եւ երբ Նրա գթառատ սէրը կարիքից ազատել է քեզ, այն ժամանակ քո շրթունքները պատրաստ են փառաբանելու Նրան: Ծանր կթուայ մեզ գոհանալ Աստուածանից, երբ Նա հանդիպում է մեզ ոչ թէ ‹հեզ›, այլ «վա՜յ» կոչուած գաւազանով: Եթէ դու քո որդւոյ գերեզմանի ափին կանգնես, Յովբի հետ հանգիստ սրտով պիտի կոչես. ‹տէր ետ եւ տէր էառ, եղիցի անուն տեառն օրհնեալ› (Յովբ. ա. 21): Եթէ կեանքի փոթորիկները յափշտակեն քեզնից սրտիդ սիրածը, այն ժամանակ լի վստահութեամբ Յիսուսի նման պիտի կոչես. «Բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին»: Կգայ ժամանակ, երբ դու կհամոզուես, որ Աստուած այն ժամանակն էլ լաւութիւն է անում քեզ, երբ դու կարծում էիր թէ Նա ցաւ է պատճառում:

Ահա այսպէս գործ դի՛ր Աստծու անունը: Աստծուն յարգի՛ր ոչ թէ միայն քո սրտով, այլև քո շրթունքներով: Յարգի՛ր Նրան ոչ թէ միայն բարեպաշտ մտածողութիւնով, այլև սուրբ խօսքով և աստուածահաճոյ արտայայտութեամբ:

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա»:*

Առաջին և երկրորդ պատուիրանների մէջ Աստուած մաքուր սիրտ էր պահանջում, իսկ երրորդում՝ մաքուր բերան: Առաջիկայ պատուիրանում Աստուած պահանջում է, որ գործով ցոյց տանք մեր պարտաւորութիւնը՝ սրբելով այն օրը, որ Նա մարդոյ փրկութեան համար է սահմանել:

Շաբաթ օրը սուրբ պահելը նորութիւն չէր Իսրայէլացւոց հա-

մար, այդ օրը սրբելու օրէնքը՝ ըստ սուրբ գրքի, սկիզբն է առնում հէնց ստեղծագործութեան օրից (I. Մովս. բ. 2. 3)։

Այս պատուիրանը եւս տասն պատուիրանների նման առաջին անգամ իսրայէլացւոց ազգին է տրուել։ Ինչպէս միւս պատուիրանները, այսպէս և սա՝ քրիստոնէութեան միջնորդութեամբ համայն մարդկութեան սեփականութիւն դարձաւ—Քրիստոս այդ պատուիրաններին ներշնչեց այն ազատ ոգին, որ անյայտ էր հրէութեանը։

Հրէից շաբաթը կայանում էր նրա մէջ, որ մարդիկ չպիտի աշխատէին։ Աշխատանքի արգելքն այն աստիճանի չափազանցութեան էր հասնում, որ ոչ մի հրէայ չէր վստահանում կրակ վառել և կերակուր պատրաստել (II. Մովս. ժզ. 23 և 29, Մաթ. ժբ. 2 և 10)։ Մինչև անգամ որոշած էր թէ այդ օրը քանի քայլ կարելի է անել—իրաւունք չկար 2,000 քայլից (ճանապարհ շաբաթու=Գործք. առք. ա. 12) աւելի գնալ։ Պատուիրանազանցը ենթարկւում էր ամենախիստ պատժի—այդպիսին քարկոծւում էր (II. Մովս. լա. 14. 15. IV. Մովս ժէ. 32...)։ Հրէից մէջ շաբաթը հանգստեան օր էր և՛ բանւոր և՛ անբան էակների համար, ուստի և «Մի՛ գործիցես ի նմա զամենայն գործս քո դու եւ ուստր քո, եւ դուստր քո, ծառայ քո եւ աղախին քո, եզն քո եւ էշ քո եւ ամենայն անասուն քո»։ Շաբաթուան հանգիստը վայելում էին ոչ թէ բանւոր և անբան էակները, այլև անշունչ առարկաները—դաշտերը, մարգերը, այգիք... եւ բաժին ունէին շաբաթուայ հանգստեան օրհնութիւնից, ուստի և եօթը տարին մի անգամ տօնում էին, այսինքն եօթներորդ տարին ո՛չ ցանում և ո՛չ հնձում էին։ Ինչ որ առանց մշակութեան բուսնէր, պատկանում էր աղքատներին և կենդանեաց. ոչ մի արօրի խոփ չպիտի շօշափէր երկիրը (III. Մովս. իե. 1—7)։ Այսպէս՝ հանգիստը տարածւում էր ամբողջ բնութեան վրայ։

Շաբաթ օրը հանգիստ առնելու պատուիրանը այն աստիճանի բծախնդրութեան էր հասցրած, որ նոյն օրը բարի գործ կատարելու իրաւունք չկար, դրա համար եւ Յիսուս մի այսպիսի անմիտ ըմբռնողութեան դէմ զինուեց և այն մեծ գաղափարը յայտնեց, թէ «շաբաթ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ եթէ մարդ վասն շաբաթու» (Մրկ. բ. 27)։

Շաբաթը թէև փոխուած է կիւրակէի, բայց քրիստոնէական կիւրակէն այլ նշանակութիւն ունի՝ քան թէ հրէական շաբաթը և «յիշեսջի՛ր զօրն շաբաթուցն պահել է «յիշեա՛ սրբել զօր շաբաթուց»։



Այս կերպարանափոխութիւնը կայանում է ոչ թէ նրա մէջ, որ մենք փոխանակ շաբաթուայ վերջին օրը, առաջին օրը՝ կիւրակէն ենք տօնում (կիւրակէ, որովհետև Քրիստոս այդ օրը յարութիւն առաւ և Հոգին սուրբ նոյն օրը իւր շնորհը առաքեալների վրայ թափեց)։ Այս փոփոխութեան հիմունքը դուցէ նրա մէջ է կայանում, որ մենք տօնի նպատակը անգործ մնալու մէջ չենք որոնում, այլ հոգեկան կազդուրման՝ այնպէս որ կիւրակէն ուրիշ խօսքով կարող ենք մեր հոգեկան ուժերի կազդուրման (յարութեան) օր անուանել։

Տօն խօսքը կրկին նշանակութիւն ունի—նախ՝ տօն նշանակում է հանգստեան օր, և երկրորդ՝ նոյն օրը միւս օրերից որոշում ենք։ Այսպէս ուրեմն քրիստոնէական կիւրակէն նախ՝ հանգստեան և ապա՝ տօն, ուրախութեան օր է։

1. *Կիւրակէն **հանգստեան** օր է*—Հանգստեան կարիք ունին բոլոր արարածները. երկիրն անգամ ձմեռ ժամանակ պիտի հանգստանայ, որպէսզի կազդուրուելով՝ նոր ուժեր հաւաքէ գալոց գարնան համար։ Հանգստեան կարիք ունի նաև մարդս։ Արդեօ՞ք մարդուս կոչումը միայն «քրտամբ երեսաց քոց կերիցես զհացդ»-ի մէջ չէ կայանում։—Ո՛չ, ո՛չ. շաբաթին վերաբերեալ պատուիրանի մէջ Աստուած ասելը չմոռանանք—նա աշխատանաց և քրտնքի օրուան մօտ շաբաթ է դրել, որպէսզի մարդս այդ օրը հանգիստ առնէ վեց օր աշխատելուց յետոյ։ Այն աջը, որ վեց օր արօրի մաճն է բռնել կամ կոշտացնի կոթը և կամ թեթև գրիչը, պիտի հանգստանայ։ Հանգստեան կարիք ունին հաւասարապէս և՛ շինականը, և՛ քաղաքացին, և՛ արհեստաւորը, և՛ գիտնականը։ Շաբաթ օրը հանգիստ պիտի առնէ և դադրած ձեռը և՛ յոգնած գլուխը, ինչպէս վաստակեալ ոտը, նոյնպէս և վաստակեալ միտքը։ Պէտք է հանգստանան թէ՛ ուսուցիչը և թէ՛ աշակերտը, թէ՛ տէրը և թէ՛ ծառան ու աղախինը, նոյն իսկ կենդանին, որ աքնել է վեց օր շարունակ։ Առանց շաբաթի կեանքը տարկի աշխատանք կլինէր և մարդս ինքը իւր դահիճը, բռնաւորը։ Ինչպէս մարդս կարիք ունի քնի և կերակրի՝ այսպէս և շաբաթի։ Շաբաթը տօնելը՝ բնութիւնից հաստատուած մի տեսակ օրէնք է։ Դրա համար եւ բոլոր օրէնսդիրները (նոյն իսկ նոքա, որոնք միաստուածութեան հակառակ էին, օրինակ Ֆրանսիացիք՝ յեղափոխութեան ժամանակ Աստուած չընդունեցին) մի օր են նշանակել հանգստանալու, կազդուրուելու համար։ Եթէ կիւրակէն հանգըստեան օր լինելուց դատ ուրիշ արժէք չունենար, այնուամենայնիւ

այդքանը ևս բաւական է բարձր գնահատելու նրա բարերար ազդեցութիւնը։ Ո՞րքան քաղցրութիւն է զգում մշակը, երբ վեց օր քրտնաթոր աշխատելուց յետոյ՝ եօթներորդ օրը հանգիստ է առնում։ Ի՞նչ գեղեցիկ է, երբ հայրը վեց օր օտարի աշխատանքին նուիրուելուց յետոյ՝ մի օր էլ իւր որդւոցն է նուիրում իրան և ընտանեկան յարկի ներքոյ իւրայինների հետ ուրախանում։ Ի՞նչ սիրուն է, երբ վեց օրուայ փոշոտ և կեղտոտ շորերը փոխում ես ու տօնին վայել մաքուր շոր ես հագնում։ Մի՞թէ գեղեցիկ չէ, երբ ընտանիքի բոլոր անդամները շաբաթուայ մէջ մի օր միասին են ուտում, խօսում և զբօսնում, վայելում բնութեան գեղեցկութիւնը, ծանօթներին այցելութեան գնում....։ Ո՞րպիսի մեծ անարդարութիւն կլինէր, եթէ մամոնայի ծարաւ հարուստները ժողովրդից խլէին հանգստութեան այդ միակ օրը և ստիպմամբ աշխատեցնել տային։ Ի՞նչ կլինէր մարդս առանց կիւրակէի, որ մի մարգարիտ է օրերի մէջ։

Ո՛չ թէ միայն մարմինը պիտի հանգիստ առնէ, այլև հոգին ի տէր պիտի հանգիստ առնեն՝ հեռի ամեն տեսակ հոգսերից և զբաղմունքներից։ Այս ձևով ուրեմն կիւրակէն միայն հանգստեան օր չէ։ Ամեն մի ծաղիկ պիտի ջրել, եթէ չենք կամենում մեզ ուժասպառ անել և մահու դատապարտել։ Կիւրակէ օրը նոր շորեր հագնել և մաքուր շապիկ ունենալը լաւ սովորութիւն է, բայց աւելի գեղեցիկ կլինէր, եթէ մեր միտքն էլ նորոգէինք նո՛ր խղճով, նո՛ր սիրով, նո՛ր հաւատարմութեամբ և նո՛ր սրտով սկսէինք միւս շաբաթուայ գործը։ Այս ձևի կիւրակէն հանգստեան օր դառնալուց զատ՝ օրհնութեան օր էլ է դառնում մեր փրկութեան համար—ըստ այսմ՝ ով կիւրակէն սրբում է, սուրբ է առնում, սրբում է իրան։ Այսպէս ուրեմն անցնենք կիւրակէի միւս նշանակութեանը։

2. *Կիւրակէն տօն օր է*։—Այդ այն օրն է, երբ մարդս առ ժամ մոռանալով աշխարհայինը, մտօք վերանում է առ Աստուած։ Կիւրակէն պէտք է սուրբ առնել, այսինքն նրան որոշել միւս սովորական օրերից և մի բարձր նպատակի համար յատկացնել։ Այս պահանջը ի կատար ածելու համար՝ երեք պայման է հարկաւոր—սուրբ սիրտ, սուրբ խօսք և սուրբ գործ։ Բացի դրանից մարդիկ աշխարհային հոգսերն ու աշխատանքը պէտք է դէն ձգեն այդ ժամում և մտօք ու սրտով առ Աստուած վերանան, որ ոգի է և խաղաղութիւն։ Այս բանն ամենուրեք կարելի է կատարել՝ ինչպէս դուրսը՝ բնութեան մէջ, այնպէս էլ ներսը՝ ընտանեկան խրճիթում. բայց ոչ մի տեղ



այնպէս սրտեռանդ չէ, ինչպէս եկեղեցում, ուր բազմութիւնը գեղեցիկ շարականների, մեղեդու և դպիրների երգեցողութեան տպաւորութեան ներքոյ և՛ս աւելի ջերմեռանդ է աղօթում, աւելի մօտենում Աստծուն, որպէսզի նա էլ մեզ մօտենայ («Մերձեցարուք առ Աստուած, եւ մերձեսցի առ ձեզ» Թ. Յակ. դ. 8)։ Երանի նրան, ով սաղմոսերգուի հետ կարող է ասել. «Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց» (Սաղմ. իե. 8), «Զմի խնդրեցի ի Տեառնէ եւ զնոյն աղաչեմ, բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։ Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն, եւ հրաման տալ ի տաճարի նորա (Սաղմ. իզ. 4)։ Արդեօ՞ք լսեցի՞ք սաղմոսերգուի խնդիրը։—Մի բան։ Ի՞նչ է այդ մի բանը, ի՞նչ է նրա խնդիրը։ Արդեօ՞ք հարստութիւն։—Ո՛չ։ Փա՞ռք և պատիւ։—Ո՛չ։ Առողջութի՞ւն, երկա՞ր կեանք։—Ո՛չ։ Նրա խնդիրը մի բան է։ Ո՞հ, երանի բարեպաշտ սաղմոսերգուի խնդիրը մուտք գործէր և պարզ ձևով հնչէր մեր ժամանակում ևս, որ անթիւ ցանկութիւններ և անհամար ձգտումներ ունի, որ ոչ հանգիստ և ոչ դադար ունի։ Երանի՜ նա պարզ և բարձր հնչէր այլև մեր սեպհական սրտերում, ո՛ր բազմաթիւ ցանկութիւնների մէջ այս միակը մոռանում է և երբեմն այս, երբեմն այն կողմն է կաղում—մերթ չափից անց յոյս, մերթ երկիւղ ունի։ Երանի՜ նա պարզ և մէկին հնչէր մեր ընտանիքում ևս, ուր մարդիկ սովորութիւն են արել ներելու իրանց, որ եկեղեցի չեն կարողանում յաճախել։ Մինն ասում է, ժամանակ չունիմ, պիտի աշխատեմ. միւսը նրանով է արդարանում, որ վատ եղանակ էր՝ այն ինչ ուրիշ բաւականութեան համար նոյն եղանակը մինչև անգամ շատ լաւ էր։ Երրորդն ասում է, որ լաւ շորեր չունիմ, կարծես Աստուած շորերին է նայում, նա մոռանում է, որ Աստուած սիրտն է պահանջում։ Չորրորդը նրանով է արդարացնում իրան, որ եկեղեցում լսածը տանն էլ կարող է լսել։ Այո՛, կարող է, բայց արդեօ՞ք անում են։ Հինգերորդն ասում է, որ բնութեան մէջ աւելի գեղեցիկ է—բայց այդ ճիշտ է արդեօ՞ք. արդեօ՞ք բնութիւնը մատնանիշ է անում մեզ՝ մեր սխալանքը. արդեօ՞ք նա ասում է մեզ՝ թէ կայ փրկութիւն, կայ շնորհ։ Վեցերորդը վերջապէս ասում է—ոչ ամեն եկեղեցի յաճախող բարի քրիստոնեայ է։ Բայց մի՞թէ այս էլ ճշմարիտ չէ, որ ամենայն մի բարի քրիստոնեայ եկեղեցի է գնում։—Ո՛չ, ո՛չ, և դարձեալ ո՛չ, ով այսպիսի ձևերով է արդարացնում իրան, ապացուցանում է, որ իւր հոգին ոչինչ կարիք չունի, որ նա Սաղմոսեր-

գուփ հետ չի կարող տանել զմի խնդրեցի ի տեառնէ....: Հնուց ասուած խօսք է, թէ եկեղեցու և դպրոցի մօտով ամենակարճ ճանապարհը բանտն է գնում: Ուրեմն Աստծու խօսքը մի՛ մոռանար և եկեղեցի յաճախի՛ր: Թէև դու դեռ փոքր ես, թէև ասած էլ է, թէ ջահէլութիւնը առաքինութիւն չունի, բայց մի՛ մոռանար միւս կողմից յիշելու 12 ամեայ Յիսուսին և սովորի՛ր Նրանից, որ ջահէլներն էլ կ ա ր ո ղ ե ն առաքինի լինել և պ է տ ք է լինին: Յիսուս տաճարում իրան այնպէս էր զգում, ինչպէս և հայրենի տանը (Ղուկ. բ. 4): Ուրեմն գնա՛ և դու էլ Նրա նման վարուի՛ր:

Կիւրակէն ոչ թէ միայն հանգստեան և տօն օր պիտի լինի, այլև

3. *Կիւրակէն ուրախութեան օր է:*—Սա այն օրն է, երբ Յիսուս յարութիւն առաւ: Կիւրակէն մեզ համար հոգևպէս յարութիւն առնելու օր պիտի լինի. Նա պէտք է մեր փրկութեան գործին ծառայէ. այդ օրը մենք ևս պիտի յարութիւն առնենք մեր աշխարհային հոգսերից և վշտերից ու փոքր ինչ Աստծուն հաճելի կեանք վարենք: Կիւրակուայ պատճառած ուրախութեան և արբեցութեան տուած զուարճութեանց մէջ մեծ տարբերութիւն կայ: Պ ա ր զ, մաքուր զուարճութիւնքը, որպիսիք են բնութեան գեղեցկութեամբ հրճուել, ընտանիքի և իւրայինների հետ ուրախանալ, բարոյական անձանց հետ հաղորդակցել... ահա՛ սոքա են այն ուրախութիւնները, որոնցով մենք կիւրակէն պիտի սուրբ առնենք և մօտ դէպի ուրախութեան Աստուածը վերանանք: Ամբողջ կիւրակէն այսպիսի ուրախութեանց պիտի նուիրենք և ոչ թէ միայն եկեղեցում եղած ժամանակը: Ով առաւօտեան վաղ եկեղեցի է գնում Աստծու խօսքը լ ս ո ւ մ, իսկ ճաշից յետոյ այն է անում, ինչ որ Աստծու խօսքն ա ր գ ե լ ո ւ մ է. ով կիւրակէ օրերը եկեղեցում գեղեցիկ երգերին, ժամասացութեան ձայնակցում է, իսկ երեկոյեան դէմ փողոցներում և անվայել տեղերում տգեղ պարունակութեամբ երգեր է երգում. ով կիւրակէ առաւօտեան հրեշտակի կերպարանք առած աղօթող ժողովրդի մէջն է կանգնում, իսկ երեկոյեան հարբած՝ անարգ մարդոց հասարակութեան հետ է ընկերանում. ով առաւօտեան իւր մաքուր շորերն է հագնում, իսկ երեկոյեան նոյն հանդերձը մեղաց մէջ է չաղախում. ով առաւօտեան պատուաւոր ձևով հեռանում է տանից և եկեղեցի գնում, իսկ երեկոյեան տուներն աջ ու ձախ չափելով՝ երեխաների ծաղր դարձած՝ տուն է դառնում. ով եկեղեցում աղօթում է, իսկ եկեղեցուց դուրս հայհոյում է, այդպիսիք չեն ‹յիշում› շաբաթը՝ չեն «սրբում» նրան,



այդպիսիների համար կիւրակէն ուրախութեան օր չէ, Աստծու օր չէ, այլ մեղաց օր, յանցանաց օր, արբեցութեան օր, թափառելու օր, պարի օր....: Կիւրակէն սուրբ առնելու համար պէտք են սուրբ բաներ, Աստծուն հաճելի գործեր, սուրբ խօսք, սուրբ սիրտ: Ով այսպէս է անում, նշանակում է նա ճ ի շ տ, ա ր դ ա ր ա ց ի է ‹յիշել› շաբաթ օրը, այդպիսին ուղիղ ձևով էլ կընդունէ տօնը և կվայելէ Նրա պատճառած ուրախութիւնը: Այդպիսին կնշանակէ հետևում է առաքեալի տուած պատուէրին, որ ասում է. ‹Եւ գոհացողք լինիջիք, զի բանն Քրիստոսի բնակեսցէ ի ձեզ առատապէս, ամենայն իմաստութեամբ ուսուցանել եւ խրատել զմիմեանս, սաղմոսիւք եւ օրհնութեամբք, եւ երգօք հոգևորօք՝ եւ շնորհօք օրհնել ի սիրտս ձեր զԱստուած› (Թ. առ. Կղս. գ. 16): Այդպիսի անձն ոչ թէ միայն կիւրակէ օրը եկեղեցի կյաճախէ Աստծու խօսքը լսելու, այլ տ ա ն ը ևս նոյն սիրով կլսէ գեղեցիկ պատմութիւններ, իմաստալից գրուածների ընթերցուածներ՝ մանաւանդ սուրբ գրքի հատուածները: Մեր նախնիքն այսպէս են վարուել և դեռ ցօրս Հայաստանի շատ տեղերում, ուր նահապետական կեանքը գերիշխող է, նոյնն է: Հնումն՝ երբ մի քրիստոնեայ գիւղով անցնէիր, կլսէիր շատ տներից սաղմոսի երգեցողութիւն և սուրբ գրոց ընթերցուածք: Երեց որդին կարդում էր մի գլուխ Աստուածաշնչից, իսկ տան նահապետը քահանայական պաշտօն էր վարում: Այս վարմունքը օգտից աւելի ոչինչ չէ բերել: Այսպէս ևս դուք պիտի կատարէք ձեր կիւրակէն: Ամենևին կարիք չկայ, որ դու ձևական բարեպաշտութիւն ընդունես, աչքերդ ոլորես և կեղծաւորաբար հայեացքդ վեր ուղղես: Քրիստոնէութիւնն այդպիսի ձևականութիւններ չի սիրում, այդպիսի վարմունք չեն համապատասխանում Նրա ոգուն: Դրա համար ևս կարիք չկայ ա մ բ ո ղ ջ օրն աղօթել և ընթերցանութեամբ անցկացնել և կամ տխուր կերպարանք ընդունելով՝ խրճթի մի անկիւնում առանձնանալ: Դրանք հարկաւոր չեն, մի բան միայն կարևոր է—ուր էլ լինիս, ուր էլ քո կիւրակէն կատարես, ամեն ուրեք ամբողջ օրը թող քո ներքինը սուրբ մտածողութիւնով պարապած լինի և այսպէս դու շաբաթը սրբած կլինիս ի փրկութիւն քո և ի փառս Աստծու: ‹Լինիջիք առնելիք բանին, եւ մի՛ լսելիք միայն համարիջիք զանձինս› (Թ. Յակ. ա. 22): Կիւրակէ օրը սիրոյ գործեր կատարի՛ր, մխիթարի՛ր սգաւորներին, այցելի՛ր հիւանդներին, ինչպէս Քրիստոս էր անում (Մատթ. ժբ. 1—15) և կամ ինչպէս թ. առաքեալն. Յակոբու. ա.

28-ում պահանջում է—«Կրօնաւորութիւն (աղօթել) սուրբ եւ անարատ առ ի յԱստուծոյ եւ ի հօրէ այս է. այցելու լինել որբոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ»: Ահա սրանք են մաքուր և սուրբ կոչուած ուրախութիւնները, որոնք մեզ ոչ կձանձրացնեն և ոչ էլ կզղջանք դրանց վրայ, այլ ընդհակառակն միշտ և միշտ նոր սիրով կլցուինք:

Ով կիւրակէն այսպիսի սուրբ խօսքով, սուրբ գործով, սուրբ սրտով է կատարել՝ նրանից հեռու չէ կիւրակէի օրհնութիւնը:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Պատուեա՛ զհայր քո եւ*
*«զմայր քո զի քեզ բարի լիցի,եւ*
*«զի երկայնակեաց լինիցիս ի*
*«վերայ երկրին բարութեան»:*

Հինգերորդ պատուիրանը յենւում է նախկինների վրայ,- որովհետև յիշեցնել է տալիս մեզ մեր պարտաւորութիւնները դէպի այն անձինքը, որոնք Աստծու փոխանորդներն են երկրիս վրայ: Ծնողաց վրայ Աստուած ո՛չ միայն պարտաւորութիւն է դրել որդւոց կերակրելու, հոգալու նոցա կարիքները և դաստիարակելու, այլև իրաւունք է տուել որդւոց պատժել թէ խօսքով և թէ գործով, որպէսզի որդւոցը՝ որդիք Աստուծոյ դարձնեն: Ինչպէս որ առաջին պատուիրանը ամենից դժուարը և ամենից մեծն է, այսպէս և հինգերորդը ամենից բնականն է և մի որոշ մտքով ամենից գեղեցիկը: Միթէ բնական չէ սիրել նրանց, որոնք մեզ նախ են սիրել, որոնք մեզ իրանց բազուկների վրայ են տարել և յաճախ իրանց անձը վտանգի ենթարկելով՝ հսկել և պահպանել են մեզ:

Հինգերորդ պատուիրանն ասում է. «Պատուեա զհայր քո եւ զմայր»—ուրեմն ոչ թէ միայն հօրը, ոչ թէ միայն մօրը, այլ՝ երկուսին միասին: Աստուած այս պատուիրանը տալիս է մի այնպիսի ժամանակում՝ երբ, ըստ սովորութեան կամ օրինաց, յարգում էին միայն հօրը, իսկ մօրը՝ արհամարհում: Աստուած հօրն ու մօրը միասին յիշելով՝ կամենում է, որ նրանք երկուսն էլ որդւոց կողմից հաւասար յարգանքի արժանանան: Հէնց դրա համար էլ ասում է Սողոմոնը իւր առակների (ա. 8) մէջ. «Լո՛ւր, որդեակ, խրատու հօր քոյ, եւ մի՛ մերժեր զօրէնս մօր քո»: Սիրաք է. 29. «Յամենայն սըր-



տէ քումմէ փառաւորեա՛ զհայր քո, եւ զմօր երկունս մի՛ մոռանար:»

Ինչո՞ւ համար որդիք պիտի յարգեն իրանց ծնողներին:—Որովհետև Աստծուց յետոյ ծնողներն են որդւոց կեանք շնորհել. նրանք են հոգում վերջինների կերակուրը, դաստիարակութիւնը. որդւոց վիշտն ու ուրախութիւնը նրանց էլ է. հիւանդ որդւոց անկողնի մօտ ծնողներն են նստում. նրանք են հսկում, հոգում որդւոց ուրախութիւնները…: Որդւոց երջանկութիւնը ծնողների ուրախութիւնն է, որդւոց վիշտը ծնողաց համար դառնութիւն է: Քանի՛-քանի անքուն գիշերներ մայրը անց է կացրել որդու օրօրոցի վրայ. ո՛րքան քրտինք է թափել և որքան դառնութիւն է ճաշակել հայրը որդու պատճառով: Դրա համար ես Աստուած ծնողներին իւր պաշտպանութեան ներքոյ է առնում և պատուիրում է որդւոց ասելով. «Պատուեա՛ զհայր քո եւ զմայր»: Բայց սա դեռ եւս ուղղակի պատասխան չէ մեր հարցին, որովհետև եթէ մենք ծնողներին նրա համար պարտաւոր ենք յարգել, որ մեզ առողջ մարմին են պարգեւել, այն ժամանակ հիւանդոտ, արատաւոր որդւոց իրաւունք կտրուէր արհամարհելու ծնողաց: Եթէ մենք մեր ծնողացն այն պատճառով պարտաւոր ենք յարգել, որովհետեւ մեզ կերակրել եւ հագցրել են, այն ժամանակ իրաւունք կլինէր հացի պատառ չունեցող և իրանց մերկութիւնը ցնցոտիներով ծածկած որդւոց արհամարհել ծնողներին: Ծնողաց վարմունքը և բարեպաշտութիւնն էլ հիմք չէ, որ որդիք յարգեն առաջիններին, վասն զի այդ յատկութիւններից զուրկ ծնողներ էլ կան և մինչև անգամ թեթևամիտ, անբարոյական ծնողներ, որոնք որդւոց վերջին դահեկանն էլ վատնում են: Աստուած չի ասում, թէ պատուի՛ր քո հարուստ ծնողներին, յարգի՛ր քո իմաստուն հօրը կամ բարեպաշտ մօրը, այլ՝ կարճ ձեւով ասած է. «Պատուեա՛ զհայր քո եւ զմայր»: Որդին երբէք չպիտի վստահանայ ասելու՝ իմ ծնողներն արժանի չեն այս կամ այն . . . , ամենուրեք պիտի ասել—այս մարդը և այս կինը աստուածային կարգադրութեամբ ինձ համար են որոշուած—սրանք իմ հայրն ու մայրն են, պէտք է յարգեմ նրանց: Աստծու պատուիրանի համար պիտի յարգես նրանց—Աստուած նրանց իւր փոխանորդ է նշանակել: Աստուած ծնողներին երկնային պաշտօն է հաւատացել և նրանց բնական սէրը աստուածային մի բարձր հրամանով լուսաւորում, յայտնում է: Շատ յարմար է այստեղ այն գեղեցիկ դարձուածը թէ, հայրն Աստծուն ամեն օր պիտի աղօթէ՝ տէ՛ր, սովորեցրու ինձ մանկան հետ վարուե-

լու ուղիղ եղանակը։ Այս են ուղիղ է, որ մենք ծնողաց այս աստուածային կոչման համար, այս անձեռնմխելի արժանապատուութեան պատճառով յարգենք և սիրենք և հէնց դրա համար էլ Աստուածանից երկիւղ ունենալը հաւասար է ծնողներին յարգելուն։ Առաջինը արմատն է, իսկ երկրորդը՝ պտուղը։ Ուստի և ճշմարիտ է ասածը թէ. «Չի փառք մարդոյ ի պատուէ հօր իւրոյ լինին, եւ նախատինք որդւոց՝ մօրն անարգութիւն է» (Սիրաք գ. 13)։—(Հօրը պատուելը քո սեպհական յարգանքն է, իսկ մօրն արհամարհելը քո սեպհական նախատինքն է)։ Եւ հէնց դրա համար էլ Աստուած խիստ պատիժ նշանակեց ծնողաց արհամարհող որդւոց—«Ակն որ արհամարհէ զհայր, եւ անարգէ զծերութիւն մօր, խլեսցեն զնա ագռաւք ձորոց» (Առակք Սող. լ. 17)։ Այս խստութեան հետ միւս կողմից Աստուած իւր խոստումն է անում «զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին բարութեան»։ Թէև այս խօսքերը իսրայէլացւոց է վերաբերում, բայց նրա կատարումն այսօր ամենուրեք է տեղի ունենում։ Ուր ծնողները յարգւում են, ընտանեկան երջանկութիւնը և օրհնութիւնն անպակաս է, իսկ ուր ծնողներին արհամարհում են, այնտեղից էլ վերանում է օրհնութիւնը, խաղաղութիւնը և դրան փոխարինում է երկպառակութիւնը, կորուստը և ոչ միայն ընտանիքն է խորտակւում, այլև տէրութիւնը։ Այս խօստման ճշմարտութիւնն արտայայտւում է իւրաքանչիւր ընտանեաց մէջ որպէս աշխարհի բարոյական օրէնք։ Այն որդին, որ ծաղրում է իւր հօրը, նոյն վիճակին ինքն էլ է արժանանում մի օր. ով վրդովմունք է սերմանում, փոթորիկ է հնձում։ Վատ որդին բարի հայր երբէք չի դառնայ և ամենուրեք հաստատւում է, որ ծնողները նոյն վարմունքին են արժանանում, ինչպէս որ իրանք են վարուել իրանց ծնողաց հետ։ Ով իւր հօրը պատւում է, ինքն էլ իւր որդկերանցից կը յարգուի. «Որ փառաւորէ զհայր, երկայնակեաց լիցի» (Սիրաք գ. 6.) և դրա համար էլ հօր օրհնութիւնը հաստատում է որդւոյ տունը—«Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոց» (Սիրաք գ. 11)։ Ուրեմն պատուի՛ր քո հօրն ու մօրը։

Պատուի՛ր նրանց։ Ինչ հանգամանքի մէջ էլ որ լինի, պիտի մըտածես, որ նրանք սուրբ պաշտօն ունին—Աստուած իւր պաշտօնի մի մասը նրանց է հաւատացել։ Ուրեմն ամեն կերպ զգուշացի՛ր, որ նրանց չվիրաւորես։ Մի՛ արհամարհիր, այլ լսի՛ր նրանց. մի՛ կարծիր երբէք, թէ դու այնքան խելօք ես, որ նրանց խորհուրդը, յորդորն աւելորդ է։ Մի՛ ծաղրիր նրանց խօսքերը, նրանց սխալը ծաղրի առարկայ մի՛ դարձրու, նրանց թերութիւնը մի՛ հրապարակիր օտարի առաջ։ Զգուշացի՛ր ամենաչնչին արհամարհանքից անգամ. ոչ մի վարմունքով՝ լինի դա խօսքով, թէ գործով, մի՛ վշտացրու նրանց։ Ով իւր ծնողացն արհամարհում է, նա մարդկանցից ամենաապերախտն է երկրիս վրայ։ Մի՛ բարկանար նրանց վրայ։ Երբէք տեղիք մի՛ տուր նրանց, որ արդար բարկութեամբ սրտմտին քո դէմ։ Մի՛ գրգռիր նրանց։ Ինչ որ նրանք բարկացած բողէին գործեն, քո մեղն է։ Երբ նրանք խօսին, լռի՛ր. արգելեն, մի՛ հակառակիր. յորդորեն, հետևի՛ր։ Այն որդիքը, որոնք ծնողներին հակառակում են, ցաւ են նրանց համար. դրա հակառակ, իմաստուն որդիքը՝ ուրախութիւն են—«Որդի իմաստուն՝ ուրախ առնէ զհայր. որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր» (Առակք Սող. ժ. 1)։ Մի՛ թշնամանիր, մի՛ վատահամբաւիր նրանց։ Այդպէս մի՛ վարուիր ոչ երիտասարդ և ոչ ծեր հասակումդ։ Երբ մարդս ծերանում է, նեղսրտում է, կամակոր է դառնում, բայց դու պիտի աշխատես թէթև դէմք ցոյց տալ նրանց. կերպարանքդ մի՛ ծռիր ծերունի հօրդ դէմ և մի՛ այպանիր տկար, հիւանդ մօրդ։ Ինչ մարմնական և հոգեկան պակասութիւններ էլ ունենան, էլի յարգի՛ր նրանց. երբ նրանց հոգու լոյսն աղօտանում է և տկար մարմնուն վիճակ է ընկնում գերեզմանի ափին կանգնելու, այն ժամանակ պատկերացրու քեզ նրանց անցեալը. յիշի՛ր նրանց սէրը և մտածի՛ր այն բանի մասին, որ մենք էլ ծեր պիտի դառնանք։ Ոչ մի ժամանակ ձեռք չբարձրացնես հօրդ ու մօրդ դէմ։ Օրինակներ շատ կան, որ որդիքը ծնողաց ոչ թէ հարուածել են, այլև սպանել։ Աթենացիք կտրում էին այն ձեռը, որ վստահացել էր ծնողաց հարուածելու. Մովսէս մահու պատիժ է նշանակում ծնողասպան որդւոց. «Որ հարկանէ զհայր իւր կամ զմայր իւր, մահու մեռցի։ Որ բամբասեսցէ զհայր կամ զմայր իւր, մահու մեռցի» (II. Մովս. իա. 15. 17.)*։ Ծառայի՛ր նրանց—քո վարմունքով քաղցրացրու նրանց դառն օրերը, անուշ խօսքով մոռացնել



* Թէ իսրայէլն ինչ սաստկանի խստութեամբ էր հսկում հինգերորդ պատուիրանի կատարման վրայ, բաւական է յիշել V. Մովս. իա. 18—21. «Եւ եթէ «լիցէ ուրուք որդի խեռ եւ անզգամ, եւ ոչ լսիցէ ձայնի հօր եւ մօր իւրոյ, խրա«տիցեն զնա՝ եւ ոչ անսայցէ նոցա, կալցին զնա հայր և մայր նորա, եւ տարցին «զնա առ ծերակոյտ քաղաքին իւրեանց եւ ի դուռն տեղւոյն իւրեանց, եւ ասաս-

տուր նրանց վիշտը. լաւ խնամիր նրանց հիւանդութեան օրերում: Նրանց լաւութիւնը քո ուրախութիւնը պիտի լինի. նրանց ցաւը՝ քո ցաւը: Յիշի՛ր Հռութին, թէ ինչ սիրով սիրում էր իւր սկեսրոջը (Հռութ. ա. 16....): Յիշի՛ր Յովսէփին: Երբ սա իւր եղբայրներին յայտնուեց, նրա առաջին հարցն էր—արդեօ՞ք հայրս կենդանի է: Եւ ինչ խնամքով նայում էր այնուհետև ծերունի հօրը (I. Մովս. խե. 9....): Եթէ ծնողներդ քեզնից մի բան են խնդրում, մի՛ մերժիր նրանց. սիրով կատարի՛ր, տեղիք մի՛ տուր, որ նոյնը կրկնուի: Դու մանուկ հասակից անգամ կարող ես նրանց ծառայել: Իսկ երբ կմեծանաս, նրանց անքուն գիշերների կրած նեղութիւնը վարձատրի՛ր՝ ինչով էլ որ կարող ես: Եթէ ցանկանաս լաւ որդու օրինակ փնտռել, յիշի՛ր խաչի վրայ բարձրացող Յիսուսին: Անտանելի ցաւերի ներքոյ նրա մտածողութեան առարկաներից մինն էլ իւր մայրն էր: Սիրոյ խօսքով նա դիմեց Յովհաննէսին խաչի վրայից՝ ասելով. «Ահա մայր քո» (Յովհ. ժթ. 27): Այո՛, ծառայեցէ՛ք ձեր ծնողներին մինչև որ նրանք իրանց աչքերը կփակեն: Լսեցէ՛ք նրանց և հնազանդ եղէ՛ք: Հնազանդ որդին կատարում է ծնողների բոլոր պատուէրները՝ ոչ թէ տրտնջալով, դժգոհութեամբ, այլ՝ սիրով: Հնազանդ որդին նոյն ոգեկան տրամադրութիւնն ունի, եթէ մինչև անգամ ծանր առաջարկութիւն է լինում. Մի այդպիսի որդի ամեն բան տանում է. նա յիշում է, որ իւր ծնողները իւր լաւն են ցանկանում. նա գիտէ, որ ծնողներին Աստուած է նշանակել: Չմոռանանք Պօղոս առաքեալի խօսքը, որ գրում է առ Եփս. զ. 1. ‹Որդի՛ք հնազանդ լերո՛ւք ծնողաց ձերոց ի տէր›: Այս հնազանդութիւնը չէ որոշուած դպրոցական տարիների կամ միւս շրջանների համար: Ճիշտ է, կգայ մի օր, երբ որդիքն այլ ևս ամեն քայլափոխում կարիք չեն ունենայ ծնողաց խորհրդին դիմելու, բայց ոչ մի որդի ոչինչ նշանաւոր բան չպիտի անէ՝ առանց ծնողներին՝ գէթ կողմնակի յայտնելու կամ նրանց օրհնութիւնն ստանալու գործի յաջողութեան համար: Ծնողաց օրհնութիւնը դեռ ոչ ոքի չի վնասել: Գեղեցիկ գովասանք չէ՞, երբ ծնողները պարծենում են իրանց որդւոց հնազանդութեամբ: ‹Եւ էր նոցա հնազանդ, եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ, եւ շնորհօք

«ցեն ցարս քաղաքին իւրեանց. Որդիս մեր այս՝ խեռ է եւ անզգամ, եւ ոչ լսէ «ձայնի մերում, հակառակող է եւ արբշիռ: Եւ քարկոծեսցեն զնա արք քաղաքին «նորա քարամբք եւ մեռցի, եւ բարձջի՛ք զչարն ի միջոյ ձերմէ, եւ լուեալ այլոցն՝ «զահի հարկանիցին»:



յԱստուծոյ եւ ի մարդկանէ›, գրուած է Ղուկ. բ. 50. 51. մէջ Յիսուս մանկան համար: Սիրեցէ՛ք ձեր ծնողներին:—Եւ սա բնական էլ է, որ որդին ծնողներին սրտանց պիտի սիրէ: Այս սէրը մի՛ խնայիր, եթէ նրանք քո դէմ խիստ վարուեն (հէնց իրաւացի խստութեան մէջ էլ սէրն է բնակւում—Սիրաք լ. 7—12.): Նոյն սէրը ցոյց տուր նրանց, երբ դու նրանցից աւելի հասկանալու լինես. երբ երկրաւոր պաշտօնով շատ ու շատ բարձր ես քո ծնողներից: Տխուր երևոյթ կլինի, երբ բարձր պաշտօնի տէր անձը դժուարանում է յիշել իւր անցեալը կամ մի պատուաւոր հասարակութեան մէջ այլ ձևով է դիմում նրանց: Ես գիտեմ մի յիմար որդի, որ ստիպում էր հօրը՝ իրան պարոն որդի կոչելու: Այդ որդին պատկանում էր այն տեսակներին, որոնք պահանջում են, թէ հայրը որդուն պիտի յարգէ: Այս առթիւ շատ սիրուն օրինակ է հին եպիսկոպոսներից մինի վարմունքը, որ ստորին գիւղական ծագումից էր այդ աստիճանին հասել: Մի անգամ, երբ սրա աղքատ, գիւղացի պառաւ մայրը իւր որդուն տեսնել էր ցանկանում, պալատականները հանեցին նրա հին, գիւղական շորերը և քաղաքի՝ նոր շորեր հագցրին: Եպիսկոպոսը մերժեց տեսակցութիւնն ասելով՝ որ սա իւր մայրը չի կարող լինել, վասնզի նա գիւղական շորեր կունենար: Ստիպուած էին դուրս տանել նրան և փոխել շորերը: Երբ մայրը իւր շորերով ներկայացաւ, գրկեց նրան և մինչև իւր կեանքի վերջը իւր մօտն էր պահում: Այսպէս սիրեց նա իւր մօրը և փառք ու պատուի մէջ էր պահում:

Ուրեմն մի անգամ էլ յիշենք. ‹Պատուեա՛ զհայր քո եւ զմայր քո›: Ծնողներին ոչ թէ միայն պիտի պատուել, քանի որ նրանք մեզ օգնում են, պէտք են, այլև այն ժամանակ՝ երբ նրանք այլևս պէտք չեն մեզ. երբ նրանք ծեր են և օգնութեան կարօտ: Ժամանակը հետըզհետէ վատանում է. դժբաղդաբար ներկայումս ստիպուած է մարդ հայրերին յիշեցնելու այն իմաստուն խօսքը, թէ մի հայր աւելի շուտ տասը որդի կպահէ՝ քան թէ տասը որդին մի հայր: Եւ որովհետև այդպէս է, ուրեմն և՛ս աւելի կարիք կայ ներշնչելու պատուեա՛ զհայր քո եւ զմայրը: Ինչպէս որ նրանք քո ջահէլ հասակումն են քեզ խնամել, նոյն էլ դու պիտի անես նրանց ծերութեան օրում: Սիրով ընդունի՛ր նրանց, քո սեղանի պատուական հիւրը նրանց համարի՛ր. սեղանիդ պատուաւոր տեղը նրանցն է պատկանում: Ծերունի Սիրաքը շատ սիրուն է ասում. ‹Որդեա՛կ, զօրավիգն լեր ծերութեան հօր քում. եւ մի՛ տրտմեցուցաներ զնա ի կեանս նորա: Եւ եթէ պակասեսցէ յի-

մանուկդ նորա զբանս, ներեա նմա, եւ մի՛ անպատուեր զնա յամենայն զօրութենէ քումմէ»: (Սիրաք գ. 14. 15.): Շատ յանցանքներ և վտանգներ կհեռանան տանից՝ քանի որ աղօթող ձեռքերը դէպի երկինք են կարկառում և օրհնութիւն խնդրում որդւոց, թոռների . . . համար, որովհետև «զի եկեսցէ ի վերայ քո օրհնութիւն ի նմանէ» (Սիրաք գ. 9—11.): Երբ կհնչէ նրանց կեանքի վերջին ժամը, մի՛ հեռացիր նրանցից. քո քաղցր ժպիտով նրանց վերջին բոպէն քաղցրացրու և երբ նրանք կ մ ե ռ ն ե ն, թող նրանց յիշատակը քո քաղցր յիշողութիւններից մինը լինի: Պատուաւոր կերպով թաղիր. գերեզմանի վրայ դրած քարը թող քո վերջին երախտագիտութիւնը լինի այն անթիւ օրհնութեան համար, որ ստացել ես նրանցից: Նրանց յիշատակը անջինջ պահիր քո մէջ, որպէսզի քո որդիքը, որդւոց որդիքն իմանան, որ դու հինգերորդ պատուիրանը կատարել ես:

Ոչ թէ միայն քո ծնողներին պիտի պատուես, այլ՝ բոլոր ծեր մարդկանցն առ հասարակ: Հինաւուրց կաղնին, որի գլխով շատ փոթորիկներ են անցել, քո յարգանացն արժանի պիտի լինի: Բայց միթէ սպիտակահեր գլուխն աւելի ես չպիտի արժանի լինի յարգանաց: Բարձր լեռներն ու ծերունիներն աւելի մօտ են երկնքին, ասում է առածը: «Առաջի ալեաց յառնիցես, եւ պատուեսցես զերեսս ծերոյն» (III. Մովս. ժթ. 31.): Այս պատուիրանի կատարման վրայ մեծ ուշադրութիւն պիտի դարձնել մեր ժամանակում, որովհետև ներկայիս ջահէլները կարծես մոռացած լինին, որ իրանք ևս մի օր պիտի ծերանան, որ սպիտակ հերը պատուի արժանի է: Դրանք սիրով չեն նայում ծերունիներին. երեսները խոժոռում են. դէմքները չուռ տալիս. միայն իրանց կարծիքն է ուղիղ. դրանց կարծիքով ինչ որ հին է, ծեր է, վատ է, և ընդհակառակն՝ ամեն նոր բան լաւ է — այդպիսիք չեն յարգում ծերունիների կարծիքը: Նրանց փորձառութիւնը ոչինչ չարժէ. այդպիսիք, այո՛, անպատկառ ձեռվ խեղճ ծերերի ձայնը փորն են ձգում, հէնց որ նրանք վստահանում են խօսել: Բայց այսպէս չպիտի լինի: Թագաւորի մինը ծերունի հրամանատարին իւր անկողնի մէջ բնայրեց: Այս բանը ծիծաղ շարժեց ջահէլ զինուորների մէջ: Թագաւորը սիրով նկատեց նրանց, ասելով—կամաց խօսեցէ՛ք, որպէսզի ծերունու քունը չխանգարենք, նա արդէն երկար տարիներ հսկել է մեզ: Թագաւորը այսպէս յարգեց ծերութիւնը և ինչ կարծիք, որ սրանով էլ ի ր ա ն յարգեց: Մի ուրիշ իրողութիւն: Ոլիմպիական խաղերին բոլոր յոյները ներկայ էին լինում: Մի անգամ,



երբ բոլոր տեղերը բռնած էին, եկաւ մի ծերունի: Սա երկար ժամանակ ջահէլների ու ծերունիների միջով դէս ու դէն ընկաւ, բայց ոչ ոք չմտածեց նրան տեղ տալու մասին: Երբ նա հասաւ այնտեղ, ուր սպարտական ջահէլներն էին բազմած, բոլորն էլ տեղերից վեր կացան և նրանցից ամեն մէկը յարգանքով խնդրեց իւր տեղն ընդունելու: Դրա համար ևս ընդհանուր առած էր յունաց մէջ, թէ աթենացիք գ ի տ ե ն որն է բարին, իսկ սպարտացիք կ ա տ ա ր ո ւ մ ե ն նոյնը: Այսպէս՝ գնա՛ դու էլ նոյնն արա՛:

Եկեղեցին մի դպրոց է մեծերի համար, իսկ դպրոցը եկեղեցի է փոքրերի համար: Ուսուցիչների վերաբերութեամբ՝ թէ չափահասների և թէ անչափահասների համար, ասում է սուրբ գիրքը Թ. առ Եբր. ժգ. 17 ում. «Ունկնդիր լերո՛ւք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն, եւ մի՛ յոգւոց հանելով, զի այն ոչ օգուտ ձեր է»: Այո՛, ունկնդիր եղէք նրանց, վասնզի նրանք ևս ծնողական պարտաւորութիւն են կատարում դէպի ձեզ. վասնզի նրանք պիտի կրթեն, դ ա ս տ ի ա ր ա կ ե ն ձեզ. նրանք պիտի Աստծու թագաւորութիւն հիմնեն ձեր մէջ, ուսուցանեն և յորդորեն, զգուշացնեն և պատժեն՝ առանց երկիւղ կրելու մարդկանցից. նրանք պիտի հսկեն ձեր հոգեկան կողմի վրայ—վասնզի պարտաւոր են հաշիւ և համար տալու Աստծու առաջ: Նրանց աշխատանքը հ ո գ ե կ ա ն է, սա այն աշխատանքներից չէ, որ օրական պարէն հայթայթելու համար կատարւում է, այստեղ սիրտ և եռանդ է կարևոր. սէր և ոգևորութիւն է պահանջւում այս տեսակ մշակներից: Առ հասարակ ցաւալի է՝ թէ հոգևորականի և թէ ուսուցչի համար՝ երբ ասողին լսող չկայ. երբ հրաւիրում ես, եկող չկայ. երբ սպառնում ես, երկնչող չկայ. երբ խոստանում ես, ցանկացող չկայ: Հաւատացէ՛ք, որ սա լաւ չէ ձեզ համար: Ուսուցչի համար ևս ծանր բեռն է պաշտօնը, երբ սիրով չի յաճախում դպրոց. երբ ուրախ և զուարթ չի հանդիպում աշակերտներին. երբ իւր պաշտօնը չի ոգևորում իրան: Նոյնպէս լաւ չէ, երբ աշակերտներն իրանց վարմունքով դառնացնում են ուսուցչի կեանքը. երբ ծուլանում են. երբ անուշադիր. . . են—մի խօսքով այն տեղն են հասցնում, որ ուսուցիչը ոչ թէ սիրով, այլ ձանձրանալով է վարում իւր պաշտօնը: Եթէ սիրում էք ձեր ուսուցիչներին՝ նրանց սուրբ պաշտօնի պատճառով, աշխա-

տասխրութեամբ և հնազանդութեամբ ցոյց տուէք ձեր ծառայութիւնը—«Եւ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա (Ա. Թ. ա. Թսղ. Ե. 13.)։

## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Մի՛ սպանաներ»։*

Առաջին և երկրորդ պատուիրանի պահանջն էր Աստծուն ամեն բանից բարձր դասել. երկրորդի մէջ՝ Աստծու անունը մեր շրթունքների վրայ ևս սուրբ լինի. երրորդում՝ Աստծու անունը սուրբ առնել աստուածպաշտութեան ժամանակ։ Այս չորս պատուիրանների գումարն է. «Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ, յամենայն մտաց քոց»։ Հինգերորդ պատուիրանը մատնանիշ է անում մեզ, թէ ինչ պարտաւորութիւն ունենք դէպի մեր մերձաւորները—«Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»։ Այդ պատուիրանը պահանջում է—Աստծու փոխանորդին երկրիս վրայ պատուել, սուրբ առնել։ Այժմ անցնում ենք վեցերորդ պատուիրանին, որի պահանջն է՝ սրբութեամբ պահպանել մերձաւորի կեանքը։

«Մի սպանաներ»ը բաղկացած է թէև մի բառից, բայց ամեն լսողի վրայ սոսկում է ազդում, մանաւանդ բանտերումն եղողների։ Ամօթ չէ՞, որ Աստուած կարիք է զգում մեզ համար «մի՛ սպանաներ» օրէնքը դնելու, Մի՞թէ սա ինքն ըստ ինքեան հասկանալի չէ։ Ո՞վ կը ցանկար մեզնից՝ առնել կացինը, սուր դանակը... մերձաւորին մահացնելու համար։ Ո՞վ կհամաձայնէր մեզնից տեսնել սպանուողի սոսկալի դէմքը և ասել—առ քո վարձը։ Զարհուրելի՜ է տեսնել մեռնողի չարչարանքը, և՛ս աւելի զարհուրելի է մարդասպանի խիղճ ունենալը։ Ո՞վ գիտէ դուք ամենքդ էլ ուրախ էք, որ ազատ էք այդպիսի տեսարանին ներկայ լինելուց, որ վեցերորդ պատուիրանը չէք մոռացել։ Ճիշտ է, ուրիշ պատուիրանները ճշտիւ չենք կատարել, կ՚որօրինակ մեր ամբողջ սիրտը Աստուծուն չենք նուիրել, այլ բաժանել ենք՝ Նրա և աշխարհի վրայ. Նրա անունը երբեմն ի չարն ենք գործ դրել՝ սուտ երդմամբ, Նրա օրը չենք սիրել մեր կենցաղավարութեամբ։ Ծնողներիս հնազանդ չենք եղել. ուսուցիչներիս չատ անգամ ենք վրդովել, բայց «մի՛ սպանաներ» օրէնքի հակառա-



կը երբէք չենք գործել։ Այս պատուիրանից չենք անցել և չենք անցնելու, որպէսզի Կայենի նման «երերեալ եւ տատանեալ» չլինենք ու մեր եղբօր արիւնը չբողոքէ Աստծու աթոռի առաջ—մենք լսել չենք կարող, թէ մինը միւսին սպանել է, ուր մնաց ինքներս գործէինք։ Երբ լրագրութեան մէջ* կարդում ենք, թէ այս ինչ կամ այն ինչ սպանութիւնն է եղել, սոսկում ենք։

Բայց և այնպէս քանի քանի մարդիկ կան, որոնք թէև ձեզ նման են խօսում, պատուաւոր մարդիկ են համարւում արտաքուստ, բայց Աստծու առաջ ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ եղբայրասպաններ, հայրասպաններ և մայրասպաններ։ Ի՞նչպէս կարելի է այդ, կհարցնէք դուք։—Այդ նրանից է յառաջանում, որ մարդիկ սովորաբար թերի են ըմբռնում պատուիրանի իմաստը—կարծում են թէ միայն ձեռով կարելի է սպանանել։ Ով իւր մերձաւորին սրով, դանակով, մահակով, բռունցքով... չէ սպանել, սովորաբար մարդասպան չէ համարում իրան։ Բայց մի՞թէ նա ևս մարդասպան չէ, որ իւր ընկերին վատ բան է սովորցնում—լինի դա չռայլութիւն, արբեցութիւն, թէ թղթախաղ... միևնոյն է։ Մի՞թէ այդպիսին գայթակղեցուցիչ չէ. մի՞թէ այդպիսի անձը ժամանակից վաղ գերեզման չէ տանում թէ իրան և թէ որին ուսուցանում է։ Մարդասպան է և նա, ով գիտմամբ մինին ծանր աշխատանքի է ենթարկում, որպէսզի նա իւր առողջութիւնը կորցնէ։ Մարդասպան է նա, ով հիւանդին կարեւոր եղած կերակուրը, հոգսը զլանում է, անուշադիր է լինում։

Կարելի է ձեռք չբարձրացնել, բայց և այնպէս մարդասպանութիւն գործել—կարելի է խօսքով ևս մարդ սպանել։ Սուր հեգնութիւնները, ծաղրը, չարանենգ արտայայտութիւնները երկսայրի սրից պակաս չեն կտրում։ Այդպիսի խօսքերը երբեմն զգայուն, յարմար տեղին են դիպչում և վէրք պատճառում, որ աննկատելի կերպով օր ու գիշեր արիւնաքամ է անում և վերջապէս մահուան պատճառ դառնում։ Դեռ այսօր ևս կենդանի մեռեալներ չատ կգտնուին, ո-

---

*Կան լրագիրներ, որոնք առանձին բաւականութիւն են զգում կարծէք, նկարագրելով այս կամ այն եղեռնագործութեան մանրամասնութիւնները։ Թէ այս վարմունքը ընթերցողների ոգեկան կողմը վնասում է՝ կասկած չկայ։ Ի՞նչ կարելի է սպասել այն երիտասարդից, որ զբաղուած է աւազակների գործերը կարդալով։ Նա որ սիրահարուած է աւազակների գործողութեամբ, վտանգ կայ նրա ապագայի մասին։ Ի՞նչու չնկարագրել սրտաշարժ տեսարաններ բարու և գեղեցկի վերաբերեալ։

րոնք անարգար, անարժան մարդոց զոհերն են, որոնք չեն կարողացել տանել այդպիսեաց վարմունքը (խօսքը) և արիւն են փսխել: Դագաղում պառկող քանի քանի դէմքերի վրայ պարզ կերպով կարելի է կարդալ—սա չար լեզուի զոհ է—բամբասանքը, նախանձը, հոգսը . . . գերեզման իջեցրին սրան: Այսպէս շատ որդիք իրանց հայրերին մահ են պատճառել. քանի-քանի աղջիկներ այս միևնոյն վարմունքով մայրերի մահուան պատճառ են դարձել: Ո՜հ, քանի աշակերտներ իրանց պախարակելի վարմունքով ուսուցչի կրծքից առատ արիւն են հոսեցրել:

Ատելի կրքի, նախանձի, ատելութեան, բամբասանքի թունաւոր խօսքերը բարեկամական կերպարանք առած՝ օձի նման սողում են միամիտների սրտերը և չատերին վաղաժամ՝ սառը գերեզման տանում: Ի՞նչ գեղեցիկ, ինչ արդարացի նկատում է Յակովբոսը իւր թղթի գլ. գ. 5. 6. ում. «Լեզու փոքր ինչ անդամ է, եւ մեծամեծս բարբառի. ահա եւ սակաւ ինչ հուր զորպիսի անտառս հրդեհէ. եւ լեզու հուր՝ զարդ անիրաւութեան . . . որ զամենայն մարմին ապականէ, եւ վառի հրով զանիւ ծննդեան»: Շատ անգամ խօսքն էլ աւելորդ է. այդ նպատակի համար չար սիրտն էլ բաւական է՝ լի նախանձով, ատելութեամբ և բարկութեամբ: Երբ երկու հին բարեկամներ անցնում են միմեանց մօտով առանց ողջունի. երբ միմեանց ջերմ սիրով երկու սրտեր՝ հանդամանքների բերմամբ սառել են, այդպիսիների ամեն մի հայեացքը փոխադարձաբար լի է նախանձով և ատելութեամբ—այդպիսի վարմունքը, ո՛հ, ցաւ է պատճառում սրտին: Քանի-քանի թշնամի հարևաններ միմեանց օգնութեան ձեռը չեն մեկնել: Մի քանիսներն էլ, թէ և ոչ մի կծու խօսք չեն ասել իրանց ծնողաց, բայց օտարների աչքից շատ դառն կաթիլներ են խլել: Քանի-քանի որդիք մեռնող հօր գերեզմանի վրայ կանգնած դառն արցունքներ են թափել և ներողութիւն խնդրել, որ իրանց այս կամ այն վարմունքով պատճառ են դարձել վաղահաս մահուան—նրանք զգացել են իրանց յանցանքը և ներողութիւն խնդրել: Բայց մի բան էլ: Արդեօք հոգին էլ կարելի է սպանել: Չէ՞ կարելի հոգին նախանձի թոյնով մահացնել կամ դայթակղեցնել և այսպէս ի կորուստ մատնել. բեռնաւորել նրան ամօթով և նախատինքով և խլել մարմնի ոյժը, զօրութիւնը, որով և մարդուն հեռահետ գերեզման գլորել (Մաթ. ժ. 28.):

Եթէ դու կամենում ես մարդասպանութիւնից զգուշանալ,



այն ժամանակ պիտի զգուշանաս այն մտածողութիւններից, որոնցից ծագում է սպանութիւնը: Այս տեսակ մտածողութեանց կարգին են պատկանում—բարկութիւնը, ատելութիւնը, նախանձը, ագահութիւնը, չարախնդացութիւնը, վրէժխնդրութիւնը . . . : Զգուշացի՛ր բարկութիւնից, որովհետև «զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ» (Յակ. ա. 20.): Բարկութիւնը գազանի է նմանում—հէնց որ նա շղթան կտրեց, հետևանքն անշուշտ վնաս պիտի լինի: Եւ հէնց դրա համար էլ ասում է սուրբ գիրքը. «Բարկանայք եւ մի՛ մեղանչէք*, արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ» (Թ. առ. Եփս. գ. 26.): Ով սուրբ գրքի այս պատուիրանին չի հետևում և բարկութիւնը թաքուցանում է սրտի մէջ, այդպիսի թագուցեալ բարկութիւնն իսկոյն ատելութեան է փոխարկւում: Ուրեմն զգուշացի՛ր նախանձից: Հէնց որ սիրտը լի է բարկութեամբ, իսկոյն փղձկում է՝ լինի դա խոժոռ հայեացքով, խօսքով, որ երկաթի նման սառը և սուր է, թէ գործով, որ սառնասիրտ ձևով սուրը մերձաւորի սիրտն է խրում: Դրա համար էլ սուրբ գիրքն ասում է. «Ամենայն որ ատեայ զեղբայր իւր, մարդասպան է. եւ գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի զկեանս յաւիտենականս յանձին հաստատեալ» (I. Թուղթ. Յովհան. գ. 15): Դարձեալ՝ զգուշացի՛ր նախանձից: Նախանձը ատելութեան ամենօրեայ կերակուր կարելի է անուանել: Ո՜հ, քանի-քանի թշուառութեան պատճառ է դառել նախանձը. քանի-քանիսին գերեզման է առաջնորդել: Կայէնի, Աբէլի և Յովսէփի եղբայրների պատմութիւնը բաւական է ճանաչելու, թէ ինչ է նախանձը: Նախանձը սրանով չէ բաւականանում—նա ձեռք է տալիս հարուստներին և ընդունակներին, որովհետև չի կարող համբերել, որ մինը իրանից հարուստ, ընդունակ և բաղդաւոր լինի. նախանձը ձեռ է տալիս ոչ թէ միայն իրանից բարձրին, այլ և օտարներին—որովհետև նա չի կարող տեսնել մի աղքատ, մի ոմն հասարակ ծագումից (սակայն յառաջադիմող) բաղդաւոր, երջանիկ և յարգուած լինի միւսներից—Նախանձը ոչինչ չի խնայում այդպիսեաց գլորելու համար: Ճշմարիտ է, նախանձոտը լալիս է լացողների հետ,

* Այս կտորն այսպէս պիտի մեկնել—բարկացէ՛ք, բայց բարկութեան ժամանակ սխալ (յանցանք) մի՛ գործէք: Երկու բարկութիւն կայ—սուրբ, արդար, բարկութիւն և այսպէս ասած՝ յանցաւոր բարկութիւն: Առաջին տեսակի արմատները սիրոյ մէջն են հաստատուած: Այս արդար բարկութիւնը, որ սիրուց է բղխում, Քրիստոսի մէջ ամեն ոք կարող է տեսնել:

բայց խնդալ, ուրախանալ չգիտէ խնդացողների, ուրախացողների հետ. նա գթոտ չէ, մարդկային զգացումն չունի: Նախանձոտը գիտէ, որ ինքը չի կարող հասնել յիշեալ աստիճանին..., բայց որովհետև ինքը կարծեցեալ յարգանքը.... չի կարող ստանալ, ուստի թող միւս էլ նոյնը չստանայ: Նախանձը նշան է, համարեա միշտ, թոյլ հասկացողութեան կամ վատ սրտի, ուստի և միշտ երկիւղ կայ, որ Կայէնի անցքը կկրկնուի: Դարձեալ՝ զգուշացի՛ր վրէժխնդրութիւնից: Վրէժխնդրութեան մի՛ վարժիր քեզ, մի՛ մտածիր անգամ այդ մասին—վրէժ խնդրող մարդերին ապաստանարան մի՛ տուր: Հերովդէսի կինն այս բանը Յովհաննէս Մկրտչի վրայ գործով ապացուցեց, թէ վրէժխնդրութիւնը որքան հեշտ կերպով մարդասպանութեան է անցնում: Ուրեմն այստեղ ևս լսի՛ր սուրբ գրքի յորդորին. «Մի՛ զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. քանզի գրեալ է. իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հատուցից, ասէ տէր». (Թ. ա. Հռմ. ժբ. 19.): Վերջապէս զգուշացի՛ր ագահութիւնից: Ագահութիւնն էր, որ Աքաաբ թագաւորին ստիպեց Նաբովթին սպանելու. այդ միևնոյն ագահութիւնն էր, որ Յուդային այն աստիճան ստորացրեց, որ համաձայնեց իւր տիրոջը և վարդապետին 30 արծաթով վաճառելու: «Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտութիւն է՝ բաւականութեամբ հանդերձ, զի...» (I. Թ. ա. Տմթ. զ. 6—8.):

Զգուշացի՛ր առ հասարակ այն բոլոր դառն արմատներից, որտեղից քաղցր պտուղ տուող ճիւղեր չեն բսնի: Հէնց որ այդպիսի արմատներ սրտումդ ունեցար, իսկոյն կտրի՛ր և դէն ձգի՛ր, բայց իսկոյն, հէնց նոյն օրն և եթ: Որովհետև ինչքան երկար թագցնես այդ որոմը սրտիդ մէջ, նոյնքան դժուար կլինի արմատախիլ անելը. Նոյնքան կխեղդէ քո մէջ բոլոր բարի ձգտումները և ողորմելու մինը կդարձնէ—նա քեզ մարդասպան կանէ: Հէնց որ այս պատուիրանը ոտնակոխ արի՛ր. հէնց որ գործողութիւնը կատարուեց, այնուհետև էլ ոչինչ չի օգնի, զղջումն ուշ կլինի: Իշխանութիւնը, որ իբրև Աստուծոյ սպասաւոր և վրէժխնդիր չարի, ի զուր տեղը սուր չէ կրում (Թ. ա. Հռմ. ժգ. 1—4.), իւր իրաւունքը գործ կդնէ և դու նոր կիմանաս, թէ ինչ է նշանակում. «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա» (I. Մովս. Թ. 6.): Կարող է պատահել, որ յանցաւորը խոյս տայ և փախչի իշխանութեան ձեռից, բայց խղճի խայթից խուսափելն անհնար է: Այդպիսի անձն, ըստ Կայ-



էնի, երերեալ, տատանեալ է, հանգիստ չունի, երկրի տակից էլ հալածողներ կան նրան: Մարդասպանութիւնը չի ծածկւում—սպանուածի մի կաթիլ արեան նշանը, ոտքի հետքը, քնի մէջ խօսած մի բառն անգամ և կամ արբեցողութեան ժամանակ արած որևէ արտայայտութիւն... շատ անգամ առիթ են եղել յանցաւորին գտնելու: Մարդասպանի մէկին տանում էին կախաղան հանելու—խոստովանահայր քահանան աշխատում էր մխիթարել նրան, բայց մարդասպանը կարճ կտրեց. «Ես իմ արժանի պատիժն ստացել եմ, թող այսուհետև Աստծու շնորհն ինձ մխիթարէ: Այս մի խնդիրս կարող էք կատարել—ասացէ՛ք ձեր հօտի բոլոր հայրերին, որ թոյլ չտան իրանց որդւոց կենդանիներին չարչարելու: Ես սկսեցի թիթեռների թևերը կտրատել, ճանճերի ոտները հանել—ես բաւականութիւն էի զգում այդ բաներն անելով: Իմ ծնողները չէին արգելում այդ բաները, այնպէս որ այսօր ես ստիպուած եմ կեանքս դահճի բազկի հարուածին յանձնել: Իմ թշուառութիւնն սկսուեց կենդանիներ չարչարելով և վերջացաւ մարդասպանութեամբ»: Արդեօք ձեր մէջ այդ տեսակ տղայք կան, որոնք բաւականութիւն են զգում կենդանիներ չարչարելով, թռչնի բներ քանդելով... ևայլն: Այս այն ուղիղ ճանապարհն է, որ մարդուս տանում է դէպի մարդասպանութիւն—զգուշացէ՛ք, տղա՛յք: Ուրեմն մի անգամ էլ կրկնենք —«մի՛ սպանաներ», այսինքն ոչ թէ միայն քո մերձաւորին, այլև քեզ:

Եւ ոչ քեզ: Ով իրանից իւր կեանքը խլում է, նա ինքնասպան է (Սաւուղ, Յուդա): Ոչ ոք իրաւունք չունի ձեռք բարձրացնել իւր կեանքի դէմ: Կեանքի մէջ ինչ դառնութիւններ էլ որ պատահելու լինին, ինչ կարիք էլ որ ունենաս, իրաւունք չունիս քեզ կեանքից զրկելու: Ոչ ոք չպիտի ասէ, թէ ես ձանձրացել եմ կեանքից, մահը քաղցր է ինձ համար—ամենից լաւն Աստծու որոշածն է: Նրան չպէտք է մոռանալ: Արդարանալու ոչ մի կէտ չկայ՝ ինչ հանգամանքից էլ որ ստիպուած լինի մինը այդպիսի յանցանք գործելու, ի բաց առեալ ոգեկան հիւանդութիւնները: Մինը անձնասպան է լինում, որովհետև կորցրել է իւր հարստութիւնը և կտոր հացը երեսի քրտինքով պիտի ձեռք բերէ: Մի երկրորդին նեղացնում է հիւանդութիւնը, կեանքի հոգսերը ճնշում են նրան, աղքատութիւնը քայլ առ քայլ հալածում է: Երրորդը ճաշակել է կեանքի վայելքները մինչև վերջին մրուրը, կեանքն այդպիսիների համար ձանձրութիւն է: Չորրորդին խիղճը հանգիստ չէ տալիս, հալածում է, կարծում է թէ մարմինը

սպանելով, հալածող խիղճն էլ կսպանէ: Ինչ էլ կուզէ լինի, ինքնասպանի համար թողութիւն չկայ: Արդեօք յուսահատութիւնը նրան այնտեղ մղեց, բայց ինչու չէր ապաւինում Աստծու շնորհաց: Արդեօք խաչը և վիշտն էին պատճառ. բայց ինչու նա յոյսը չդրեց խաչը մեզ ժառանգութիւն թողնողի վրայ, որ կարող էր մեղմել նրա վշտերը: Եթէ յանցանքը նրան ստիպեց այդտեղ գալ, ինչու նա չընտրեց ապաշխարութեան ուղին՝ հաստատուն նախաքանով, թէ կամենում եմ դառնալ և ուղղել ինձ: Այսքանը յայտնի է, որ ամեն մի մարդասպան սկզբում երկչոտ է, որովհետև այդպիսին այնքան քաջութիւն չունի չարիքը Աստծու օգնութեամբ տանելու և կամ հեռացնելու իրանից: Այն զինուորը, որ պատերազմի սկզբում թողնում, փախչում է, երկչոտ է և անազնիւ: Աւելի երկչոտ և անազնիւ է, երբ մինը չէ կարողանում տանել կեանքի պատերազմը, փոքրոգի է դառնում և ձեռք բարձրացնում իւր վրայ. կեանքի կռիւը մինչև վերջը չէ կարողանում մղել—ինքնասպանը կոյր էլ է: Նա կարծում է, որ մահը հանգիստ կտայ իրան, վերջ կդնէ իւր ցաւերին: Մահ: Այո, եթէ այս կեանքից յետոյ հանդերձեալ չլինէր: Մի՞թէ մահուամբ հնարաւոր է խոյս տալ տիեզերքի դատաւորից:

Վերջապէս մարդասպանութիւնը միայն սրով, թոկով, հրացանով, թոյնով չէ լինում: Ով ուտելու և խմելու մէջ, աշխատանքի և բաւականութեան մէջ չափ ու սահման չգիտէ, նա ևս ինքնասպան է: Ինքնասպան է և ագահը, ժլատը, որ ընկած է երկնաւոր բարիքների ետևից միայն և օր ու գիշեր հանգիստ չունի: Ինքնասպան է այլև այն հիւանդը, որ փոխանակ հմուտ բժշկի դեղերն ընդունելու, զանազան տանու բժիշկների միջոցներ է գործ դնում կամ ամենևին դեղ չի գործածում: Այսպէս էլ կրքոտն է, դարտանողն է, որոնք ժամանակից առաջ մահանում են: Որքան մարդ արագ է վառւում, այնքան էլ արագ վերջ է լինում այրուելուն: Այսպէս էլ կեանքն է: Ա՜խ, քանի-քանիսն իրանց առողջութեան հետ խաղում են և սրանով էլ ինքնասպան դառնում:

Ահա սա է «մի՛ սպանանիր» պատուիրանի մեկնութիւնը: Չսպանել՝ ո՛չ քո մերձաւորին և ոչ քեզ: Այն՝ ինչ որ դասի սկիզբին անհաւատալի էր, այժմ պարզ է—շատ մարդասպաններ կան: Արդեօք կայ ձեր մէջ մինը, որ ազատ է համարում իրան, թէ ինքը ոչնչով պատճառ չէ դառել ուրիշի կեանքի կարճացնելուն: Այս հարցի պատասխանը ես չեմ պահանջում: Բայց յիշելն անհրաժեշտ եմ համա-



րում, որովհետև բաւական չէ գիտնալ, թէ երբ կամ ինչպէս է մարդս վեցերորդ պատուիրանը ոտնակոխ անում, այլ ամեն ոք պարտաւոր է զգոյշ լինել օրէնքը կատարելու համար: Եթէ ցանկանում էք այս առթիւ արդարութիւն ունենալ, նայեցէք Քրիստոսին, որ ողորմած սամարացու առակի մէջ իւր սեպհական պատկերը ցոյց տուաւ և նա մեզնից պահանջում է, որ մենք ոյժ, զօրութիւն ունենանք ողորմած, գթոտ լինելու, սէր ունենանք դէպի մեր նմանները: Այս սիրովն էլ նա յաղթեց աշխարհիս բոլոր չարիքներին, այս սիրոյ զօրութիւնով հեռացրեց յանցանքները՝ իւր կեանքը զոհելով, որպէսզի մենք յաւիտենական կեանք ունենանք: Այս սիրոյ զօրութիւնով կամենում է նա մեզ իւր աշակերտ ճանաչել, սովածներին կերակրել, ծարաւներին խմացնել, մերկերին հագցնել, հիւանդներին այցելել, անկեալներին ոտի կանգնացնել, ջուրն ընկածներին ազատել, անտէրներին խնամել, պաշտպանել (Մատթ. իե. 35—40.)—ահա սոքա են հարազատ սիրոյ պտուղները, որ Փրկիչը իւր աշակերտներից պահանջում է և մենք այն ժամանակ միայն կարող ենք կատարել, եթէ մենք էլ նոյն սէրը մեր մէջ ունենանք, որից խօսք և գործ կբսնեն, ինչպէս արմատից՝ ծաղիկ: Ում մէջ Քրիստոսի այս սէրը կայ, այնպիսին ոչ ոքի մարմնին վնաս չէ հասցնում—մարդասպանութեան, եղբայրասպանութեան մտքերը անհետանում են նրա միջից. այնտեղ խանգարուած խաղաղութիւնը վերականգնում է. վէճը հանդարտում է. բորբոքուած բարկութիւնը շիջանում. ամեն ինչ դէպի լաւն է գնում. իւրաքանչիւր ոք պահանջում է ամենին էլ օգնել:

Վեցերորդ պատուիրանին պատկանում է ոչ թէ միայն վատ գործը, այլև լաւ՝ բարի միտքը և սա պահանջում է մարդկային անձնաւորութիւնը սուրբ պահել, որովհետև մարդս Աստծու պատկերն է և իւրաքանչիւր անհատ պատկանում է Աստծուն և նրան պատասխանատու է իւր կեանքի և մահուան համար:

Բարձր գնահատի՛ր կեանքդ, որովհետև դա աստուածային պարգև է: Բայց զգուշացի՛ր միևնոյն ժամանակ, որ չափից դուրս էլ բարձր չյարգես, վասն զի կան դէպքեր, երբ ամենաբարձր յարգանքն էլ յանցանք կարող է լինել: Դիցուք մինը վարակիչ հիւանդութիւն ունի, մի՞թէ իրաւացի կլինի որ բժիշկը խոյս տայ իւր կեանքն ազատելու համար: Եւ կամ հոգևորականը գլանայ հիւանդին աստուածային վերջին շնորհը՝ սուրբ հաղորդը՝ նրա կեանքի վերջին րոպէում, երբ վտանգ է սպառնում, դիցուք հէնց իւր սեպհական կեանքին:

Այսպէս և այն բոլոր հանգամանքներում, ուր խնդիրը մարդուս կեանքի փրկութեանն է վերաբերում՝ լինի դա կրակից, ջրից . . . ։ Եւ վերջապէս ո՛վ պիտի խնայէ իւր անձը, երբ խնդիրը վերաբերում է, օրինակի համար, վկայելու մի բարձր ճշմարտութեան և կամ հայրենեաց ազատութեան համար (առաքեալք, մարտիրոսք)։ Ուր Աստուած մեր կեանքը պահանջում է, չպիտի մերժենք։ Յիսուս գեղեցիկ օրինակ ցոյց տուաւ մեզ։ Նա հարթեց այն ճանապարհը և մեզ պատուիրեց հետևելու իւր շաւղին։ Նա առաջնորդում է մեզ դէպի մի վսեմ և երջանիկ կեանք։ «Որ կորոյս զանձն (ժամանակաւոր) վասն իմ, գտցէ զնա (այսինքն յաւիտենական ճշմարիտ կեանքը) (Մտթ. ժ. 39. ժզ. 25.)։

Կարդալ տալ Մտթ. ե. 20—25. I. Թ. ա. Կրթ. ժգ. 4—7. I. Թ. Յովհ. դ. 20. Սիրաք. լէ. 30—կենդանիների կեանքն էլ մեր հոգատարութեան առարկայ պիտի լինի (Առակք Սող. ժբ. 10. V. Մովս. իբ. 6.)։

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Մի՛ շնար»:*

Ինչպէս որ Աստուած մերձաւորի կեանքը իւր պաշտպանութեան ներքոյ առաւ, այսպէս և մերձաւորի պատիւն է հովանաւորում։ Ամուսնութիւնն է այր և կին մարդու ազատ կապակցութիւնը միմեանց հետ ցմահ միասին ապրելու։ Ամուսնացողները Աստծու ներկայութեամբ խոստացել են իրար սիրել և միմեանց չմոռանալ։ Նրանք Աստծու սուրբ սեղանի առաջ խօսք են տուել իրար և երդուել են մինչև իրանց մահը՝ թէ երջանկութեան և թէ թշուառութեան օրերում միմեանց սիրել և ի վկայութիւն այս խոստման, միմեանց են մեկնել իրանց աջ ձեռները։ Երբ ամուսինները դրժում են իրանց տուած այս խոստումն, երդումը, ասել է թէ դրանով էլ բեկանում են ամուսնութիւնը։ Ամուսնութիւնը չպիտի բեկանել, լուծել, այլ սուրբ պահպանել։ Աստուած ևս այսպէս է ցանկանում. Նա ամուսնութիւնը հաստատեց և որոշեց որ այր և կին ցմահ միասին ապրեն (Մտթ. ժթ. 6.)—Նա սրանով մի օրինակ տուաւ մեզ։ Քրիստոս ինքն էլ այդպէս անբաժան է միացած իրան հաւատացողների հետ։



Մարդը կնոջ գլուխն է (Թ. առ. Եփս. ե. 23.), իսկ կինը մարդու օգնականն է (I. Մովս. իէ. և II. 18.*։

Իւրաքանչիւր ամուսնութիւն, համաձայն Աստծու պահանջներին, պիտի ունենայ բարի սկզբնաւորութիւն, բարի շարունակութիւն և բարի վերջաւորութիւն։ Այսպէս ուրեմն—

1. *Բարի սկզբնաւորութիւն*։ Աստուածանով սկսած գործը միշտ բարի հետևանք պիտի ունենայ։ Հնուց ասած է—Աստուծով սկսիր և Աստուծով էլ վերջացրու, այս է կեանքի ամենագեղեցիկ ընթացքը։ Եթէ ամուսնութիւնը Աստծու պահանջների վրայ չէ հիմնւում, այլ գեղեցիկ դէմքի, հարստութեան, բարեկամութեան կամ անբարոյական կրից վրայ . . . ասել է թէ ամուսնութեան սկզբնաւորութիւնը վատ է և ինչ կարծիք, որ բարի շարունակութեան վրայ յոյս դնել չենք կարող։ Երբ գեղեցիկ դէմքը ժամանակի ընթացքում և կամ որ և է հիւանդութիւնից՝ անցնում է—«Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է» (Յովհ. գ. 6). երբ փողը՝ հարստութիւնը խաղաղութիւն չի բերում. այլ ընդհակառակն բազմիցս դէպի գայթակղութիւն է առաջնորդում, երբ բարեկամութիւնը խաղկ ու խայտառակութեան մէջ է լուծւում. երբ կիրքը անհետանում է և սէրը ի չիք դառնում—այն ժամանակ յառաջ է գալիս այն անբաւականութիւնը, որի հետևանքն է կռիւ և վիճաբանութիւն—այս ճանապարհը տանում է մարդուն դէպի յանցանք, որ Աստուած խիստ կերպով արգելում է այս պատուիրանի մէջ—Նա տանում, հասցնում է ամուսնական անհաւատարմութեան՝ շնութեան։ Ով ամուսնութիւնն Աստուածանով չի սկսում, այդպիսեաց մէջ իսկական սէր չի կարող լինել, ուրեմն և երջանիկ հետևանքի սպասելն աւելորդ է։ Ուր սէր կայ, այնտեղ էլ երջանկութիւն. ուր երջանկութիւն՝ այնտեղ էլ խաղաղութիւն. ուր խաղաղութիւն՝ այնտեղ էլ օրհնութիւն. իսկ ուր

---

* Եթէ սուրբ գրքի մէջ (I. Մովս. բ. 21—24.) պատմւում է, թէ կինը մարդու կողից ստեղծուեց, այդ նշանակում է, թէ նրա սրտից ստեղծուեց։ Աստուած կնոջը մարդու սրտի մօտից ստեղծեց, այնտեղից, ուր կեանքի՝ մարմնու ազնիւ մասերն են։ Նրա սրտի մօտից վերցրեց և նրա մօտ բերաւ։ Դրա համար մարդ ու կինը մի են, միատեսակ կեանք պիտի վարեն—մի սիրտ, մի հոգի և միաշունչ պիտի լինին։ Աստուած կինը մարդուս գլխից չստեղծեց, որովհետև տէր, իշխող չպիտի լինէր (կինը) և ոչ նրա ոտներից, որ ստրուկ լինէր, այլ՝ սրտի մօտից, որպէսզի նրա օգնականը լինի, սրտի սիրով օգնէ մարդուն՝ կեանքի կոչմանը ծառայելու համար։

օրհնութիւն՝ այնտեղ էլ Աստուած—ուստի և ամուսնացողները մեծ զգուշութեամբ պիտի ընտրութիւն անեն, թէ արդեօ՞ք սիրտը սրտին յարմարւում է, ըստ որում սխալանքը չուտով է նկատւում, իսկ զղջմանը վերջ չկայ: Եւ երբ սկզբնաւորութիւնը լաւ է, ինչ կարծիք որ՝

2. *Շարունակութիւնն* էլ վատ չի լինիլ: Լաւ ամուսինները կեանքի մէջ կանոն պիտի անեն Հռութի խօսքերը. «Ուր դու երթայցես՝ երթայց...., ժողովուրդ քո՝ ժողովուրդ իմ. եւ Աստուած քո Աստուած իմ, եւ ուր մեռանիցես մեռայց. բայց թէ մահ մեկնեսցէ ընդ իս եւ ընդ քեզ»: Լաւ ամուսինների մէջ իմ և քո աստծը չպիտի լինի, այլ՝ ամեն ինչ ընդհանուր: Ոչ ոք չպիտի ասէ, թէ սա իմ ուրախութիւնն է, դու մասը չունիս և կամ՝ սա քո հոգալուն է, ինձ չէ վերաբերում: Ամուսնացող մարդոց առածն այս պիտի լինի—երկու հոգի՝ մի մտածմունք, երկու սիրտ՝ մի բաղխումն, և կամ քո վիշտը՝ իմ վիշտն է, իմ ուրախութիւնը քո ուրախութիւնն է. քո կարիքը իմ կարիքն է...: Երեք գեղեցիկ բան կայ, որ Աստծուն և մարդուն դուրեկան են—եղբայրների միաբանութիւնը, սէր առ մերձաւորս և այր ու կնոջ միմեանց գալը՝ յարմարուիլը: Այն սէրը, որ իւր արմատը ճշմարիտ յարգանաց մէջն ունի, կարող է ամուսնացող զոյգերի համար հաստատ գրաւական լինել, որ նրանք սէր և երկիւղ կունենան դէպի Աստուած: Երբ այսպէս է, այն ժամանակ մինը օգնում է միւսին կեանքի բոլոր կարեաց մէջ. կինը վշտակիր է դառնում մարդուն նրա բոլոր ձախորդութեան ժամանակ. կինը նրա կարեկիցն է և օգնականը բոլոր վշտերի ժամանակ: Կինը մարդու խորհրդականն է—բաժանած ուրախութիւնը կրկնակի ուրախութիւն է, բաժանած ցաւը՝ կէս ցաւ է: Այն ժամանակը մարդը կնոջից ոչինչ անարգար բան չէ պահանջում, այլ սիրով է ընդունում նրա հետ և տալիս է նրան, որպէս իւր թոյլ մասնի, իւր յարգանքը, պատիւը. այն ժամանակ մարդը կնոջն աղախնի տեղ չէ ընդունում և բարկացած ժամանակ նրա հետ անբաւականութիւն չէ ունենում: Այն ժամանակ կինը տիրապետում է մարդուն իւր հնազանդութեամբ, հեզութեամբ և իւր համբերութեամբ խորտակում է այր մարդու բարկութիւնը: Այն ժամանակ մինը միւսի վիշտն է կրում—մինը միւսին տեղի է տալիս՝ ներում է և եթէ մինը միւսին նեղացրել է, ներողութիւն է խնդրում յանցաւոր կողմը և երկուսն էլ աշխատում են սիրով, կարեկից, համբերող ու խաղաղասէր լինել: Այն ժամանակ ամուսնական հաւատարմութիւնը զօրանում է. այն



ժամանակ մարդը կնոջ բերած օժիտը չի վատնում և իւրայիններին հացի կարօտ դարձնում. կինը եկուոր, օտար ոմն չէ, այլ՝ տանտիկին: Համենայն, ողջախոհ կինը տիրում, իշխում է ընտանիքի մէջ, իմաստուն կերպով կառավարում է ընտանիքը. խրատում, կրթում և դաստիարակում է որդւոց: Այո՛, ընտանիքը կնոջ աշխարհն է—նա խնայող է. տան մէջ կարգ ու կանոն է պահում, այնպէս որ մարդն իրան երջանիկ է զգում ընտանեկան շրջանի մէջ: Այս պայմաններում մարդը չոր հացով էլ ուրախ սեղան է նստում, որովհետև ուր սէր կայ սեղանի վրայ, այնտեղ Աստուած եւս սեղանակից է, այն ինչ կռուասէր ամուսինները ամեն ինչ դժոխք են դարձնում: Այդ տեսակ շրջանում տիրում է ջանասիրութիւն և աշխատելու ձգտում—մարդը իւր հանգստութիւնը դուրսը՝ հիւրանոցներում չէ փնտռում... և կինը փողոցները չէ չափչփում և խնջոյքներում որոնում իւր բաւականութիւնը: Այդ տեսակ կանանց կոչուած ձեռներին բ ո ղ ո չ կ ն ե ր ն (մաղոլ) աւելի են սազում՝ քան թէ ոսկէ մատանիները: Կանանց զարդը ըստ I. Թուղթ. Պետրոսի. գ. 2—4. պիտի լինի—«Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք եւ ոսկեհուռ ծամակալօք կամ պաճուճեալ զգեստուք զարդ, այլ ծածուկ սրտին մարդն անեղծութեամբ հեզութեան և հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ»: Երբ ամուսնական կեանքը այս տեսակ յատկութիւններով է զարդարուած, այն ժամանակ ամուսինները աղքատութեան մէջ եւս հարուստ են, տան անկիւններում եւս հրեշտակներ են փսփըսում. մինը միւսին իւր ցաւն է յայտնում. ցաւը վիշտը բաժանում են իրար մէջ, ինչպէս և ուրախութիւնը. ամուսիններն անհաւատարմութեամբ չեն մրցում իրար դէմ. առիթներ չեն որոնում միմեանցից հեռանալու, այլ երկուսն էլ սիրոյ և խաղաղութեան մէջ են: Այն ժամանակ ընտանեկան նեղութիւնը, ցաւը, վիշտը—խաչը, որ Աստուածանից սահմանուած է, հեզութեամբ և համբերութեամբ տանում են, որովհետև առանց վշտի քաղցրութիւն չկայ: Երբ ամուսնութիւնը ա յ ս ձ և ո վ  ս ո ւ ր բ  կ պ ա հ պ ա ն ո ւ ի, ի հարկէ շ ա ր ո ւ ն ա կ ո ւ թ ի ւ ն ն  է լ  և

3. *Վերջաւորութիւնն* էլ լաւ կլինի: Բարի վերջաւորութիւն կլինի, երբ Աստուած ինքը կբաժանէ ամուսնացողներին: Լաւ ի միտ առ, Աստուած պիտի բաժանէ՝ լուծէ ամուսնութիւնը և ոչ թէ ամուսինները: «Զոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեսցէ» (Մտթ. ժթ. 6.): Երբ ամուսնացողներն ի ր ա ն ք են բաժանւում իրարից. երբ ամու-

սինները հայհոյում և խայտառակում են իրար՝ սիրոյ և յարգանքի փոխարէն. երբ զոյգերը անվերջ վիճաբանութեան մէջ են՝ մոռանալով որ Աստծու ներկայութեամբ ցմահ սիրով ապրելու խոստում են արել—ի հարկէ այնտեղ բարի վերջաւորութիւն չպիտի որոնել: Վիճող զոյգերի մէջ կարելի է տեսնել ամուսնական անհաւատարմութիւն, երդմնազանցութիւն, խարդախութիւն . . . : Ուր ամուսնական անհաւատարմութիւն կայ, այնտեղ մեղքը՝ յանցանքը ներկայ է. ուզում է յանցաւորութիւնը մի կողմից, կամ միւս կողմից, ուզում է երկու կողմից էլ լինի, ողջ մէկ է: Ամուսնական անհաւատարմութեան յանցանքն այն աստիճան մեծ է Աստծու առաջ, որ սուրբ գիրքն այդպիսիներին գողերի, աւազակների և մարդասպանների դասն է կարգում: (Երեմիա է. 9.). այդպիսիների համար ասած է. «Պոռնիկք ոչ ժառանգեն զարքայութիւնն Աստուծոյ» (I. Թ. առ. Կրթ. գ. 9. 10.): «Զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած» (Թ. առ. Եբր. ժգ. 4.): Երբ ամուսնութիւնը (սրտում) լուծուել է և մարդը կնոջից (սրտում) բաժանուել է, այն ժամանակ Աստծու դրած կանոնը եղծուել է և որոշ հանգամանքների ներքոյ՝ զոյգերի խստասրտութեան աւելի իշխանութիւնը հեռացնում է միմեանցից ամուսիններին, բայց ոչ լուծում ամուսնութիւնը՝ պսակը: Ամուսինները, որ ներքուստ բաժանուած էին, արտաքուստ էլ բաժանւում են: Եթէ մարդս մտածելու լինի, թէ որպիսի չարիքներ են յառաջանում ամուսինների բաժանուելուց, հերիք է յիշել Սողոմոնին (Իմաստութիւն գ. 16.), որ ասում է, թէ «որդիք չնացելոց թերակատարք եղիցին». այն ժամանակ ամուսնացողներին կմնար լաւ, շատ լաւ մտածելու և հոգալու, թէ ինչպէս անեն, որ ամուսնութիւնը բարի սկզբնաւորութիւն, բարի շարունակութիւն և բարի վերջաւորութիւն ունենայ: Այդպիսիների ականջին միշտ և հանապազ պիտի հնչէ—Աստուծով սկսիր, Աստուծով էլ վերջացրու, սա է ամենալաւ կենցաղավարութեան եղանակը:

Ամուսինների բաժանման գլխաւոր պատճառներից մինն էլ բողջախոհութիւնը և անժուժկալութիւնն է: Այս երկու յանցանքը արմատ է դառնում շատ ուրիշ յանցանքների: Մի նշանաւոր քարոզիչ ասել է—անժուժկալութիւնն ու բողջախոհութիւնը չորս անկարգ որդիք ունին—նրանց անուններն են՝ անգործութիւն, արբեցութիւն,



հեշտասիրութիւն, վէպ: Այս անժուժկալութիւն և բողջախոհութիւն կոչուած յանցանքներից պիտի զգուշանան ոչ թէ ամուսնացողները միայն, այլև երիտասարդներն ու կոյսերը, պատանիք և աղջկերք: Այն՝ ինչ որ ամուսնացողներին է վերաբերում, մէկդի թողնենք և զբաղուենք այն հարցով, թէ պատանիներն ու աղջիկները ինչ պիտի անեն:

1. Պատանիներն ու աղջիկները ժուժկալ և ողջախոհ պիտի լինին: (Ողջախոհ նշանակում է համեստ, պարկեշտ): Թէ դուք ժուժկալ և ողջախոհ էք, կարող էք իմ առաջարկելիք հետեւեալ հարցերից իմանալ, որոց համար ոչինչ պատասխան չեմ պահանջում ես*: Արդեօք դու կարդացել ես այնպիսի գրքեր, որոց պարունակութիւնը դու սիրում ես ծածուկ պահել և երբ քո ծնողները կամ մի որ և է կարգին մարդ հարցնելու լինի, դու իսկոյն կարմրում ես: Այնպէս չէ՞, որ դու սիրով ես լսում անվայել խօսակցութիւններ: Առանձին եղած ժամանակդ ուրիշներից լսած անկարգ երգեր ես երգում և այնպիսի կատակներ ես անում, որի համար լաւ տղան, աղջիկը «փուչ» կասէր ու կանցնէր: Սիրով չե՞ս կանգնում այնպիսի մարդ-

* Ուսուցչի համար ծանր խնդիր է այս հարցի մասին խօսել սաների հետ: Կան դաստիարակներ, որոնք յարմար են համարում թողնել այս գլուխը, ոչինչ չխօսել այդ մասին: Արդեօք իրաւացի է այդ: Սաները, որ նոր են ոտք դրել չար ճանապարհի վրայ, արդեօք մեր խորհրդներով չէինք կարող նրանց յետ կանգնեցնել մոլորութիւնից: Մեր ժամանակի սաները՝ նայած իրանց հասակին, այս նիւթի վերաբերմամբ աւելի գիտեն՝ քան թէ պիտի գիտենային: Այս բանը նկատելի է շատ սաների մէջ—աւելի քաղաքներում՝ քան գիւղերում, աւելի տղաների՝ քան աղջիկների մէջ: Պէտք է հարցնել շիտակութեամբ, հանգիստ կերպով՝ խաղաղ հոգւով՝ միայն շարունակ նայելով նրանց դէմքերին, աչքերին: Շատ երեխայք անմեղութեամբ են նայում, սովորական ձևով, ամենևին չեն գուշակում այն՝ ինչ որ կամենում ես ասել—դրանք անմեղ են, դեռ ես չեն փչացել: Ես կարծում եմ, յոյս ունիմ, որ իմ այս խօսքերը ձեզ համար մի օր պահապան հրեշտակ կլինին, երբ գայթակղութեան մէջ կընկնէք: Ոմանք հազիւ թէ նայում են ուսուցչին, աչքերը վար են ձգում. այդպիսիները կարմրում են, մի տեսակ անախորժ դրութեան մէջ են, հազիւ թէ կարողանում են իրանց ներքին անհանգստութիւնը ծածկել, անդադար շուռ ու մուռ են գալիս—դրանք յանցանքից վարակուածներն են: Երրորդ տեսակը սառը, խիստ, դաժան ձևով է նայում, կարծես ուզում է ասել—ինչ որ ես զգում եմ, չես կարող իմանալ. դա ամենավատ նշանն է: Խիստ պիտի հսկել, սիրով խօսել այդպիսիների հետ, ծնողաց հետ խորհրդակցել . . . : Ամօթխածութիւնը նման է քնքոյշ բոյսի, որին կոշտ ձեռներով չպիտի բռնել: Ուսուցչի մասնաւոր հոգացողութեան առարկան է, թէ ինչ ձևով պիտի վարուի այդպիսիների հետ:

կանց մօտ, որոնք անկարգ բաների մասին են խօսում և ժամերով լսում նրանց. չի՞ պատահել քեզ, որ նրանց արտասանած շատ խօսքերից կարմրել ես: Սիրով չե՞ս նայում այնպիսի պատկերների, որոնք քո մէջ չար մտքեր են ծնեցնում: Արդեօք քո մէջ բաւականութիւն չես զգացել անկարգ բաների վրայ մտածելով: Երեկոյեան՝ երբ մթնում է, սիրով չե՞ս դնում փողոց և հարևանի տղաների կամ աղջիկների հետ անվայել բաների մասին խօսում: Երբ անկողին ես մտնում, այնպիսի երազներ չե՞ս տեսնում, որ կամաչէիր ուրիշին պատմել: Այս հարցերի ոչ մինի պատասխանը չեմ պահանջում ձեզանից. ես կամենում եմ, որ դուք լաւ մտածէք այս մասին, որ ձեր սիրտը մաքուր լինի. անկարգ, անվայել բաների մասին չմտածէք. ձեր բերանը իստակ, մաքուր պահէք. վատ-վատ խօսքեր չլսուին ձեր բերնից. կցանկայի, որ ձեր ձեռքը ևս ազատ լինէր անկարգ գործերից: Քանի որ դեռ ևս դէմքի վրայ նկատւում է կարմրութիւն, ամօթխածութիւն, այնքան ևս յոյս կայ, որ օգնել, ուղղել կարելի է այդպիսիներին: Երբ պակասում է ամօթխածութեան կարմրութիւնը, ինչքան էլ սուրբ ներկայանայ մի աղջիկ կամ տղայ, այդ նշանակում է, որ անմեղութիւնը կորել է, սիրտն այլ ևս մաքուր չէ և Աստուած չէ բնակւում այնտեղ: Հաւատացէք, մանուկներ, որ Աստուծուն հաճելի է միայն ժուժկալ և ողջախոհ սիրտը: Ոչ մի գեղեցիկ գովասանք չկայ՝ քան թէ որ ասում ենք—ինչ աստուածավախ տղայ է, կոյս է, ինչ պատուաւոր, ողջախոհ երիտասարդ է: Ոչինչ մեծ բան չկայ՝ քան խորշելը վատ խօսակցութիւնից և արտասանել ազնիւ խօսքեր. ատել այն ամենը՝ ինչ որ անկարգ է և սիրել բարին ու գեղեցիկը: Այսպիսի ողջախոհներին է պատկանում Աստծու օրհնութիւնը—«Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք» (Մտթ. ե. 8.): Դրա համար ևս Աստծու խօսքը յորդորում, խրատում է մեզ և ինչ սրտագին ձևով—«Այսուհետև, եղբա՛րք, որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն խորհեսջիք. (Թ. ա. Փիլ. դ. 8.): Դրա համար լաւ տղան պիտի խնդրէ և ասէ. «Տէր, Հայր եւ Աստուած կենաց իմոց, զբօսանս աչաց մի՛ տար ինձ, եւ զցանկութիւն սրտի դարձո՛ յինէն: Ցանկութիւն որովայնի եւ զիջութիւն մի՛ հասցեն ինձ. եւ անձին լրբենոյ մի՛ մատներ զիս» (Սիրաք իգ. 4—6): Աստուած սիրով է լսում և կատարում այսպիսի աղօթքներ: Նա իր անելիքը



կանէ, եթէ մենք էլ մերն անենք: Բայց ինչ է այն բանը, որ դուք պիտի անէք:

Մի՛ խաբէք—«ապականեն զբարս քաղցունս բանք չարք» (I. Թ. Կորնթ. ժե. 33.): «Որդեա՛կ, մի՛ խաբեսցեն զքեզ արք ամբարիշտք, եւ մի՛ ախորժեսցես, եթէ կոչեսցեն զքեզ» (Առակաց ա. 10.): Մտիկ արէք, տղա՛յք, աւելի լաւ է միայնակ լինել՝ քան թէ վատ հասարակութեան մէջ: Երեկոները աւելի լաւ է տանը միայնակ լինել՝ քան թէ փողոցային մարդոց մօտ: Ուր որ սկսում են անկարգ խօսել, այնտեղից վեր կա՛ց և հեռացի՛ր: Հեռի փախի՛ր յանցանքից՝ ինչպէս օձից՝ ապա թէ ոչ քեզ կկծէ: Հեռի փախի՛ր անամօթ տղերքից, որոնք իրանց անվայել խօսքերով անմեղներին այնպիսի պատմութիւններ են անում, որ վերջինները մինչև ականջները կարմրում են: Հեռի փախի՛ր այլև այնպիսի տեղերից, ուր մի լաւ տղայ իր անմեղութիւնը գայթակղութեան պիտի ենթարկէ: Որտեղ քո փողը գողանում, խլում են քեզնից, դու այլևս այնտեղ չես գնում, բայց անմեղութիւնն աւելի բարձր է՝ քան փողը: Շատ բան կայ, որ արտաքուստ լաւ է երևում. շատերն են հաւանում, բայց և այնպէս ծածուկ կերպով թունաւորում են անմեղութիւնը: Կան այնպիսի աշակերտուհիներ և աշակերտներ, որոնք ծածուկ կերպով անհամապատասխան գրքեր են կարդում և կարծում են թէ օգտաւէտ բան է: Մի քանի տղաներ էլ կամ ծածուկ, կամ ծնողաց գիտութեամբ պարահանդէսներ են յաճախում, ուր և պարում են—արդարև բաւականութիւն են գտնում, բայց հետևանքն իրանց ամբողջ կեանքի ընթացքում տուժում են: Լաւ տղան հեռի կմնայ այն ամեն տեղերից, որոնք կարող են նրան վաղաժամ գայթակղեցնել: Եթէ դու կամենում ես հեռի մնալ անկարգ մտածողութիւններից, այն ժամանակ պիտի խուսափես

2. Ծուլութիւնից: Ով ցերեկը ջանասիրութեամբ է աշխատել, այնպիսին գիշերը խաղաղ մտքով է քնում: Դրա հակառակ՝ պարապութիւնն ամեն չարեաց մայրն է, այլև սկիզբն է անպարկեշտութեան, բողջախոհութեան:

3. Հեռի անժուժկալութիւնից, գեղխութիւնից: Անկարգ կեր ու խումը շատերին է անբարոյականացրել, որովհետև ուր գինու, օղու, գարեջրի.... պղտոր ոգին մարդոց մէջն է մտնում, մաքուր, սուրբ հոգին պիտի հեռանայ այնտեղից: Երկու զանազան տեսակ ոգիներ միևնոյն սրտի մէջ չեն կարող ապրել: Ժուժկալ և չափաւոր կեանք վարողը գիտէ, թէ ինչ անէ այդպիսի հանգաման-

քում—նա պատերազմի մէջ է, նա Աստծու պատուիրանն աչքի առաջ ունի: Սրա համար եղի՛ր ժուժկալ, չափաւոր և հսկի՛ր քո անձին: Այո՛,

4, Հսկի՛ր: Անմեղութեան գայթակղիչներն ամեն ուրեք պտըտում են: Եթէ գայթակղիչը արտաքոյ քո չէ, այն ժամանակ քո մէջ կարող է լինել—«Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք.... գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք» (Մատթ. ժէ. 19): Չար ցանկութիւնը դարանի է մտած—վա՜յ այն մարդուն, որ չի հսկում իրան և իւր անձը նրան է մատնում—«Երբ մարդիկ քնեցին, չարը եկաւ և որոմը ցանեց ցորենի մէջ»: Գայթակղութեան անունը քաղցր է հնչում, բայց դառն և զարհուրելի են բողջախոհութեան հետևանքները: Սիրտն ալէկոծող ծովի է նման: Մարմինը թառամում է հիւանդ բոյսի նման: Քա՛նի-քա՛նի տղաներ և աղջիկներ վաղահաս գերեզման են մտել բողջախոհ կեանք վարելու պատճառով: Քա՛նի-քա՛նի երիտասարդների ուժն ու զօրութիւնը խլել, յափշտակել է այս մոլութիւնը: Ծնողաց օգնող երիտասարդներն իրանք կարօտ են ծնողաց օգնութեան. ծնողը որ պիտի խնամէր, պահպանէր իւր զաւակին, այժմ գերեզման պիտի տանէ: Ուստի «բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ, արթո՛ւն կացէք»—հսկեցէք: Այո՛, «արթուն կացէ՛ք եւ աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն» (Մատթ. իզ. 41):

Աղօթի՛ր: Թռչունը, որ քո գլխի վրայով անցնում է, նրան ոչինչ անել չես կարող, բայց երբ նոյն թռչունը քո գլխում բներ է շինում, այդ դէպքում դու ամեն ինչ կարող ես: Այսպէս էլ չար մտքերն են՝ հակառակ մարդու ցանկութեան, առանց սպասելու՝ լոյս են ընկնում չար մտքերը: Մարդոց պարտքն է, մարդկային յատկութիւն է արհամարհել, հեռացնել չարը: Ինչպէս ձուից ճուտեր են դուրս գալիս, այսպէս էլ մտածողութիւնից գործ է ծնում: Այս տեսակ հանգամանքում ոչ մի պաշտպանողական զէնք չկայ այդ թշնամու դէմ, բացի աղօթելուց: Երբ ես անկողին եմ մտնում, քո մասին եմ մտածում, ասում էր Դաւիթը: Երբ չարը գալիս լինի, յիշի՛ր ամենագէտ, ամենին մօտիկ Աստծուն, յիշի՛ր սաղմոսերգուի խօսքը—«տէր, կարդացի առ քեզ եւ լո՛ւր ինձ, նայեա՛ ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ: Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո տէր, համբարձումն ձեռաց իմոց, պատարագ երեկոյի: Դի՛ր տէր, պահապան բերանոյ իմոյ եւ դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛



խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան: Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որ գործեն զանօրէնութիւն, ոչ եղեց կցորդ ընտրելոյ նոցա» (Սաղմ. ճխ. 1—4): Մի՛ լսիր, ասա Յովսէփի հետ—«Զիարդ առնիցեմ զբանդ զայդ չա՞րս զմեծ եւ մեղանչիցեմ առաջի Աստուծոյ» (I. Մովս. լթ. 9): Յիշեցէք մեր Յիսուս Քրիստոսին, որ փորձութեան մէջ ընկաւ, բայց թոյլ չտուաւ, որ գայթակղիչը գայ և իրան գայթակղեցնէ: Այս տեսակ հանգամանքում աղօթքի միջնորդութեամբ պիտի հաւաքել բոլոր ուժերը և անվեհեր կերպով պատերազմ յայտնել չարին: Եթէ դու այս տեսակ րոպէներում բարի նախարաններով կլաւականանաս, կնմանես այն թիթեռին, որ երեկոները պտըտում է լապտերի շուրջը: Նա թէև չի ուզում լապտերի մէջ մտնել, բայց և այնպէս անկարելի է որ մի անգամ չատ չմօտենայ լուսին և թշուառ ձևով վերջ չդնէ իւր կեանքին՝ այրուելով լուսոյ ջերմութեան մէջ: Երբ դու քո ապաստանը Աստծու մօտն ես որոնում և այնտեղ մնում, երբ դու քո բոլոր ուժը չարի՝ բողջախոհութեան և անժուժկալութեան դէմ ես դարձնում, այն ժամանակ միայն դու ապահովուած ես քո թշնամիների դէմ: Լաւ է միտ առ, «որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի, գուցէ անկանիցի (I. Թ. առ Կրնթ. ժ. 12):

## ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Մի՛ գողանար»:*

Քո մերձաւորի սեփականութեանը ձեռնամուխ մի՛ լինիր—ահա ութերորդ պատուիրանի իմաստը: Մարդս զանազան ձևով կարող է սեփականութիւն ձեռք բերել: Նախ՝ արդար, կանոնաւոր եղանակով (աշխատանքով, մշակութեամբ, վաճառականութեամբ, ժառանգութեամբ....) և ապա՝ անարդար, անկանոն ճանապարհով (գողութեամբ, յափշտակութեամբ): Վերջին ձևի մասին է ութերորդ պատուիրանի խօսքը, ուր որոշ կերպով արգելում է ամեն տեսակ անկանոն սեփականութեան ձեռք բերելը—բացէ ի բաց մերժում է յափշտակութիւնը:

Յափշտակութեան վերաբերութեամբ, եթէ լսելու լինինք մարդոց դատողութիւնը, պիտի ասենք, որ աւելորդ է ութերորդ պատուիրանը, աշխարհումս ամեն ինչ ազնիւ ճանապարհով պիտի ընթանայ: Մարդիկ թոյլ են տալիս իրանց ստախօս, անաստուած, չա-

բաժը կտրող, կիրակէն չպահող անուանել, բայց ոչ յափշտակող, գող: Այս խօսքից ամենքն էլ սարսափում են: Արդեօք եկել, հասել է այն երջանիկ ժամանակը, որ այլ ևս բանտերի կարիք չունենանք: Եկէք մի անգամ փոքր ինչ խստութեամբ, ըստ Աստուածային բանի, քննենք, թէ այս պատուիրանն իրականութեան մէջ ինչպիսի յարաբերութիւն ունի յանցանքի հետ և թէ առհասարակ մարդիկ ինչ են հասկանում յափշտակութիւն ասելով:

Եթէ մի՛ «գողանար» ասելով մարդս մտածէ միայն գ ո ղ ե ր ի ու ա ւ ա զ ա կ ն ե ր ի վրայ, որոնք ճանապարհի անկիւններում դարանակալ են լինում և անցորդների ունեցածը ո յ ժ ո վ խլում են (օրինակ ողորմած սամարացու առակը) և կամ եթէ գող ենք անուանում նոցա, որոնք հարևանի տունն են կտրում կամ թաք են կենում և յափշտակում նրա փողը, հանդերձը, կեանքը .... անարդար՝ ճանապարհով, այն ժամանակ ի հարկէ պատուաւոր մարդկանց թիւը շատանում է, իսկ գողերինը՝ փոքրանում: Կան մարդիկ, որոնք ոչ թէ աստուածային պատուիրանը պահելու մտօք են կատարում «մի գողանար»ը, այլ բ ա ն տ նստելու երկիւղն է, որ ստիպում է նրանց զսպելու իրանց ցանկութիւնը: Արդեօ՞ք բացի վերոյիշեալներից, ուրիշ տեսակ գողեր չկա՞ն. մի՞թէ հէնց այս երկու տեսակ մարդիկն են արժանի այս եղերելի անուան: Գող չէ՞ նա, որ իւր հարևանի ագարակի սահմանը փոխում է և ծածկաբար մի քայլ հեռու՝ դէնն է տընկում իւր սահմանաքարը: Գող չէ՞ նա, որ հարևանի պարտիզի պտուղները քաղում է և կամ գողունի անցնում է դրացու արտը և տանում է նրա խուրձերը և այսպէս հնձում է՝ ինչ որ չէ ցանել: Գող չէ՞ նա, որ իրան հաւատացած աւանդը (օր. դերձակը՝ կտորը, ջրաղացպանը՝ ցորենը ....) կամ գողացած իրը թագցնում է և գտածը յետ չի վերադարձնում: Գող չէ՞ նա, որ ընկերից մի բան ուզում է և վերջը կամ ուրանում է և կամ փչացրած վերադարձնում: Գող չէ՞ նա, որ մշակի քրտանց վարձը կամ կտրում է կամ մասամբ է տալիս և կամ զանազան խոստումներով ձրի աշխատեցնում է: Գող է այլև այն բանուորը, որ վարձ է պահանջում, բայց կանոնաւոր ձևով աշխատելու փոխարէն, իւր ժամանակը խօսակցութեամբ է անցկացնում և այսպէս Աստծու աշխատանաց ժամը գողանում է: Գող է այն վաճառականը, որ վատ ապրանքը լաւի տեղ է ծախում կամ կեղծ չափ ու կշիռ է գործածում: Եւ Մովսէսը իւր երկրորդ օրինաց գրքի իե. 13-15. ասում է. «մի՛ լինիցի յամանի քում կշիռ եւ կշիռ մեծ եւ



փոքր. եւ մի՛ լինիցի ի տան քում չափ եւ չափ, մեծ կամ փոքր, կշիռ ստոյգ եւ արդար եղիցի քեզ, եւ չափ ստոյգ եւ արդար եղիցի քեզ, զի բազմօրեայ եղիցին ի վերայ երկրի, զոր տէր Աստուած քո տացէ քեզ ի ժառանգութիւն»: «Մի՛ առնիցէք անիրաւութիւն ի դատաստանի, ի չափս եւ ի կշիռս եւ ի գոյգս: Զոյգք արդարք եւ կշիռք արդարք, եւ չափք արդարք եւ կապիճ արդար լինիցի ձեր» (III. Մովս. ժթ. 35-36): Գող է այն վարպետը, որ տեսնելով իւր մուշտարու անփորձութիւնը, բարձր գին է պահանջում. գող է և այն մուշտարին, որ արդար վաստակի գինը կամ պակաս գնով է վճարում կամ կեղծ դրամով և կամ ծախողին այս կամ այն միջոցով ստիպում է վնասով վաճառելու: Երբ գնողը և վաճառողը փոխադարձ սակարկութեան մէջ են մտնում, ասել է թէ միմեանց չեն հաւատում և ամեն մինը դիմացինին անհաւատարիմ ումն է ընդունում: Գող է այն պարտապանը, որ փոխ է առնում, նախապէս համոզուած լինելով, որ անկարող է վճարելու և կամ չի կամենում վճարել: Գող է նա, որ իւր քաղցր լեզուով, բայց նենգ մտքերով, սողոսկում է ընկերի գրպանը և դուրս կորզում նրա դրամը: Գող է այն վաշխառուն, որ մերձաւորի կարիքը նկատելով, մեծամեծ տոկոսներ է պահանջում և կամ իւր ունեցածը մեծ գնով վաճառում: «Եւ եթէ արծաթ փոխ տայցես եղբօր քում, որ աղքատ իցէ առ քեզ, մի՛ ճեպեսցես զնա, եւ մի՛ արկանիցես նմա տոկոսս: Եւ եթէ գրաւեսցես զբաճկոն ընկերի քոյ, նախ քան զմտանել արեւու՝ դարձուսցես անդրէն, զի այն է վերարկու նորա, եւ այն է հանդերձ առականաց նորա, որով ննջիցէ, եւ եթէ բողոքիցէ առ իս, լուայց նմա, քանզի ողորմած եմ» (II. Մովս. իբ. 25. 26. 27.): Մի՛ առնիցես ի նմանէ (յեղբօրէ) վաշխ եւ տոկոսիս, եւ երկնչիցիս ի տեառնէ Աստուծոյ քումմէ, զի ես եմ տէր. եւ կեցցէ եղբայր քո ընդ քեզ, զարծաթ քո մի՛ տացես նմա ընդ տոկոսեօք, եւ զկերակուր քո մի՛ տացես նմա շահութիւ. III. Մովս. իե. 26. 37.): Գող է այն մուրացկանը, որ թէև ոյժ ունի և հանգամանքը ներում է նրան իւր պատառ հացը քրտնքով վաստակելու, բայց աշխատել չի կամենում, այդպիսիք ցերեկով մուրացկան, իսկ երեկոները գող են և ինչ կարծիք, որ այդպիսիք ոչ թէ ի ր ա ն ց աշխատած հացն են ուտում, այլ՝ օ տ ա ր ի: Գեղեցիկ է ասում Սիրաքը. «Որդեակ, զկեանս մուրողութեան մի՛ կեար, լաւ է մեռանել քան զմուրանալ» (Սիրաք խ. 29.): Գող է այն խնամակալը, որ իրան խնամքին յանձնուած որբերի և այրիների գոյքը իւր օգտին է գործ դնում: Այսպէս՝

ամենուրեք լի են գողերով, նրանց տեսակը բազմազան է: Գողեր կարելի է գտնել և՛ քաղաքներում, և՛ գիւղերում, և՛ դաշտերում, և՛ անտառներում: Գողեր կան, որոնք մաքուր հագնուած են, ման գալիս էլ գլուխները բարձր են բռնում: Գողերն ունին իրանց մեծը՝ առաջնորդը. Նրանք աշակերտներ էլ ունին, որոց սովորցնում են, թէ ինչպէս պիտի գողանան: Գողեր կան և՛ հարուստ, և՛ աղքատ, և՛ բարձր, և՛ ստորին դասակարգերի մէջ: Գող է այն զաւակը, որ ծնողաց սեպհականութիւնը ծածուկ, առանց նրանց գիտութեան վերցնում և ծախում է, որ ծնողների պահարանից այս կամ այն իրը առնում է և դրանով խաբում իւր ընկերներին՝ ասելով որ պարգև է ստացել—նրանք չգիտեն, որ խաբելու և գողութեան մէջ մօտիկ ազգականութիւն կայ: Գող է այն ծնողը, երբ մարդը կնոջ սեպհականութիւնը տանում է տալիս թղթախաղում կամ արբեցութեամբ և կամ կինը մարդու կարողութիւնը աննպատակ զուարճութեանց վրայ է գործ դնում, պճնւում է և այլ այսպիսի աւելորդութեանց զոհում ամուսնու և որդւոց պատիւն ու կեանքը: Գողանում է պաշտօնեան, քահանան, ուսուցիչը, երբ իւր ռոճիկը, հասոյթն ստանում է, բայց իւր պարտաւորութիւնը չի կատարում: Գող է այն հպատակը որ ծածկում է իւր կարողութիւնը, որպէսզի տէրութեան հասանելի հարկը լիովին չվճարէ:

Այսպէս ուրեմն՝ մենք տեսանք, որ ամեն ոք թոյլ է տալիս իրա մասին շատ բան ասել, բայց ոչ երբէք գող: Սրա համար էլ ոչ մի պատուիրան այնքան արդարանալու միջոցների չի դիմում, որքան «մի՛ գողանար»-ը: Մինն ասում է—դու խիստ ես դատում, պէտք է փոքր ինչ այլ ձևով վարուել: Բայց ո՞րն է այլ ձևով վարուելը, ո՞րն է այն չափը, աստիճանը, որով կարելի լինէր որոշել «այլ ձևով»: Եւ կամ՝ կարո՞ղ ես ինձ ապացուցանել, որ Աստուած ամեն մի մեծ թէ փոքր յանցաւորի համար՝ լինի նա իշխանութիւնից պատժուած թէ ոչ, այո կամ ոչ վճիռը կասէ: Միւսն ասում—պէտք է ներողամիտ լինել, միթէ մի քանի կոպէկի, մի բուռն ցորենի կամ մի քանի հատ պտղի համար արժէ....: Բայց ո՞րտեղ է գրած թէ մեծ բաները չի կարելի գողանալ, իսկ դրա հակառակ՝ թոյլատրած է փոքր իրերը գողանալ: Աւազի հատիկը շատ փոքր բան է, երբ մինը վարժւում է այդ տեսակ բաներում, նա յետոյ լեռներն էլ է սեպհականում—ձուի գողը ձի էլ է գողանում: Շատ օրինակներ կան, որ փոքրիկ կոչուածը մեծամեծ հետևանքներ է ունեցել. վասնզի ինչ որ



մարդոց աչքում փոքր է թւում, Աստծու աչքում փոքր չէ: Սովորական իրողութիւն է, որ մարդս փոքրով սկսում է, իսկ մեծով վերջացնում: Քանի-քանի աղայք մի քանի հատ խնձոր, տանձ.... գողանալով սկսել են իրանց յանցանքը և վերջացրել են նրանով, որ աւազակներ են դառել—մարդիկ կողոպտել, տուն մտել կամ կախաղանի վրայ վախճան դրել իրանց կեանքին: Մի՛ մոռանաք աւետարանի խօսքը. «Որ ի փոքուն հաւատարիմ է, եւ ի բազմին հաւատարիմ է, եւ որ ի փոքուն անիրաւ է եւ ի բազմին անիրաւ է» (Ղուկ. ժզ. 10): Մի երրորդն աւելացնում է, թէ կարիքը պատուիրան չէ ճանաչում, «հարկք լուծանեն զօրէնս»: Բայց աւելի ճիշտ կլինի ասել—պատուիրանը կարիք չէ ճանաչում, այսինքն ինչ որ Աստուած հրամայել է, պէտք է կատարել, որքան էլ մեծ լինի կարիքը: Թէև ասած է, «հարկք լուծանեն զօրէնս», սակայն այս պատճառաբանութիւնը ոչինչ հիմք չունի: Բայց և այնպէս՝ ով ասես որ այս ձևով չի արդարանում: Այս հիմունքով է արդարանում վաշխառուն, երբ սովի տարին իրան դիմող աղքատին հեռացնում է, այն ինչ նրա յատակի վրայ թափուած փշրանքով կարող էր նրա արտասուքը չորացնել—այդպիսիք պինդ կողպում են շտեմարանները և սպասում, որ և՛ս աւելի բարձրանայ ցորենի գինը: Այս սկզբունքով է արդարանում ալիւր ծախողը, երբ նկատում են իրան, որ նա խոնաւ տեղ է դարսել վաճառելիքը: Սրանով է արդարանում այն վաճառականը, երբ չնչին իրին բարձր գին է նշանակում: Վերջապէս սրանով է արդարանում և ամեն մի խաբեբայ, ամեն մի խարդախ, գող....: Աստուած այդ պատճառաբանութիւններից և ոչ մինը չի ընդունում, ոչ զըրկողի լուութիւնը, ոչ գողացողի չքաւորութիւնը և ոչ գողացուած փոքրիկ գումարը Աստծու առաջ արդարանալու հիմունքներ չեն: Աստուած ասել է. «Մի՛ գողանար», ուրեմն գողը՝ գող է և գողացածը՝ գողացած:

Հարցը նրանում չէ, որ անպատճառ գողութիւնը յայտնուի, բաց լինի կամ ծածուկ մնայ: Ամենևին ուշք մի՛ դարձնէք այնպիսիների խօսքերին, որոնք ասում են, թէ փոքր գողերին կախում են, իսկ մեծերին բաց թողնում: Այդ բաց թողնելը երկար չի տեւում: Կուժն այնքան ժամանակ է աղբիւրը ջրի գնում, մինչև որ կոտրւում է: Բացի սրանից չարութիւնը երբէք բարի վախճան չի ունենում: Ազնւութիւնն է, որ ամենից երկար գոյութիւն ունի: Շատ տեսակ գողութիւն կարող է անյայտ մնալ, շատերը կարող են մահու պա-

տիժ չստանալ, ինչպէս Անանիան կամ Աքարը. ամեն ոք իւր փրկութիւնը կախուելու՝ խեղդամահ լինելու մէջ չէ որոնում, ինչպէս Յուդայ իսկարիովտացին արաւ: Աստծու պատժից ո չ մ ի ն ն էլ չի կարող ազատուել: Անկանոն, անարդար գործը չարերի սիրտն ու հոգին վրդովում, ալէկոծում է. քանի-քանիսը, որոնց աշխարհը երջանիկ է համարում, զրկուած են ներքին հանգստութիւնից. քանի-քանիսը երերեալ և տատանեալ շրջում են, քուն ու հանգիստ չունին փափուկ անկողնում: Այստեղից պիտի այն միտքը հետեցնել, որ արդարադատ Աստուածը գողացած իրի վրայ ապականութեան դրօշմըն է դրել: Մեր պապերը շատ սիրուն են ասել—«ինչպէս կաշխատես, այնպէս էլ կծախես»: Հարամ ապրանքը չի ուտուի՝ հարամ ապրանքը որդուց թոռանը չի անցնում: Այս առածները փորձից են դուրս բերուել: Անյաջողութիւնն ու փորձանքը իբրև ստուեր հետեւում են գողերին, նրանցից անբաժան են: Այս միջոցով հաւաքած հարստութիւնը ինչ ձևով էլ որ գործ դնես, որքան էլ խնայող լինես, որքան էլ ժլատութեամբ վարուես, այնուամենայնիւ ինչպէս եկել է, այնպէս էլ կգնայ—վերջ չունի: Գողերն իրանց հետ աշխարհ ոչինչ չեն բերել և ոչինչ էլ չեն տանի աշխարհից—այդպիսեաց միակ ունեցածը իրանց ծանրաբեռնուած խիղճն է: Եթէ գողութիւնով հայրը հարստացել է, անշուշտ որդին կամ թոռը աղքատ կլինի: Ինչպէս և շատ որդիք աշխատում են, բայց հաց չունին. շինում են, բայց անտուն են մնում. աշխատում են վաճառականութեան մէջ, բայց չի մնում. որդիք են կրթում, բայց ծերութեան օրերում մնում են անօգնական, անտէր: Ծնողաց յանցանքը որդիքը պիտի տուժեն: Ահա այս է անէծքը:

Թո՛ղ ձեզանից իւրաքանչիւրը լ ա ւ քննէ, թէ ինչ միջոցով է նա իւր փողն ու հարստութիւնը ձեռք բերել. արդեօ՞ք իւր սեպհականութեան մէջ հարամ մաս չկայ. արդեօ՞ք ոչ ոքի անէծք չկայ իւր վրայ և եթէ իւր քննութեան արդիւնքն ասէ իրան, որ անարդար, անկանոն եղանակով ձեռք բերած մասը կայ իւր կարողութեան մէջ, այդպիսին պիտի մտածէ, որ Աստծու օրհնութիւնը պակասում է իւր տան մէջ, այն ժամանակ նա եւ Զաքէոսի նման պիտի վարուի—«եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին» (Ղուկ. ժթ. 8): Յիշեցէ՛ք Սամուէլի ազնիւ վարմունքը:

Ինչպէս ամեն պատուիրան, նոյնպէս և ութերորդը՝ պատուիրում է ոչ թէ միայն այն՝ ինչ որ պիտի չ ա ն ե ն ք, թ ո յ լ չ տ ա ն ք,



այլ և այն՝ թէ ինչ պիտի ա ն ե ն ք—ամեն մի պատուիրանի (հրամանի) մօտ արգելումն էլ է դրած: Եթէ ուզում ես իմանալ, թէ ինչ պիտի անես, որպէսզի ազատ լինիս գողութիւնից, այն ժամանակ պիտի զգուշանաս

1. Դ ա տ ա ր կ ա պ ո ր տ ո ւ թ ի ւ ն ի ց, պարապորտութիւնից, անգործութիւնից: Պարապ մնալուց ամեն չարութիւն ծնում է, ա մ ե ն չարութեան սկիզբն է պարապութիւնը—գողութիւնը սկիզբն է առնում պարապութիւնից: Ով չի կամենում աշխատել, ով իւր առողջ անդամները չի ցանկանում գործ դնել, այնպիսուն վերջ ի վերջոյ ի՞նչ է մնում, եթէ ոչ՝ գողանալ: Կան մարդիկ, որոնք կարծում են, եթէ աշխատանք չկայ կամ քիչ է, իրաւունք է ուրիշի արիւնը ծծել, նրա սեպհականը իրան սեպհականել, բայց աւելի լաւ է պատուաւոր ձևով քիչ աշխատել՝ քան թէ անպատիւ կերպով շատ: Ուղիղ, արդար ճանապարհով ձեռք բերած կոպէկի մէջն աւելի օրհնութիւն կայ՝ քան թէ գողացած հարիւր ռուբլու մէջ: Ով կամենում է ունենալ, պիտի աշխատէ. աշխատանքի արմատները դառն են, իսկ պտուղը՝ քաղցր: Գեղեցիկ է ասում սաղմոսերգուն. «Մանուկ էի եւ ծերացայ, եւ ոչ տեսի զարդարն արհամարհեալ, եւ ոչ զզաւակ նորա՝ թէ մուրանայ հաց» (լզ. 23):

2. Զգուշացի՛ր շ ռ ա յ լ ո ւ թ ի ւ ն ի ց, ա ն ս ա ռ ա կ կ ե ա ն ք վ ա ր ե լ ո ւ ց—երբ մինը այդ տեսակ կեանքի սովոր է, ոսկէ լեռներ էլ որ լինին, բաւական չէ—«Գործք (հարստութիւն) արդարոց կեանս առնեն, և պտուղք ամբարշտաց մեղս» Առակք ժ. 16.): Արդարը իւր հարստութիւնը գործ է դնում ապրելու, իսկ ամբարիշտը՝ յանցանք գործելու համար, ուստի խ ն ա յ ո ղ եղի՛ր: Ով կոպէկի արժէքը չգիտէ, չգիտէ և ռուբլունը: Դարձեալ՝ եթէ մինը սովորութիւն է արել վաճառելու այն՝ ինչ որ հարկաւոր չէ, այնպիսին շուտով կստիպուի ծախելու և այն՝ ինչ անհրաժեշտ է իրան: Ամեն ոք պիտի աշխատէ իւր ստացածի մի մասը սև օրուան համար պահել: Սխալ կարծիք է, որ ասում են, թէ խնայողութիւնը ագահութիւն է: Որքան կարող ես, խնայող եղի՛ր, բայց

3. Զգուշացի՛ր ա գ ա հ ո ւ թ ի ւ ն ի ց—«Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է» (I. թ. ա. Տմթ. զ. 10.): Ագահ մարդը ծառայ, ստրուկ է. նա ունի մի խիստ պարոն. այդ պարոնի անունը փող է: Ագահի մինը նաւ է նստում. նրա հետն է լինում իւր սիրելի փողը. բարձրանում է փոթորիկ. ագահն ասում է—«Ուր որ դու

կլինիս, այնտեղ էլ ես։ Ագահ մարդու վերաբերութեամբ չի կարելի ասել, նա փող ունի, այլ՝ փողն ունի նրան։ Երբ արծաթի ձայն է լսում, ագահը կորցնում է իւր հանգստութիւնը։ Ագահն անկուշտ է, որքան էլ ունենայ, այնքան էլ կցանկայ ունենալ—նրա գանգատը չի դադարում։ Մի՛ մոռանաք երբէք, որ ամենամեծ ծարաւը փողի մասին է։ Աւելի ճիշտ է գտնել այնպիսի մարդիկ, որոնք թէև հարստութիւն չունին, բայց սիրում են, քան թէ այնպիսիք, որոնք հարստութիւն ունենան, բայց չսիրեն։ Սուրբ գիրքն ասում է. «Լաւ է սակաւիկ ինչ առնուլ երկիւղիւ Տեառն, քան զգանձս մեծամեծս ամբարշտութեամբ» (Առակք Սող. ժէ. 8.)։ Արդեօք կցանկայիր հարուստ լինել, բայց գլխդ անէծք ընդունել ոմանց հարուստների նման։ Զգուշացի՛ր ագահութիւնից, բայց

4. Զգուշացի՛ր նաև նախանձից։ Չէ՞ք լսել, թէ ինչպէս մինը միւսին անուանարկում է, բամբասում և դրանով կամենում է իւր նշանակութիւնը բարձրացնել։ Միթէ՞ այդպիսիք չեն մեղանչում ութերորդ պատուիրանի դէմ, որոց համար ասած է. «մի՛ գողանար»։ Մի՛ կարծէք, թէ ով շատ փող ունի, երջանիկը նա է։ Քանի—քանիսը իրանց անհուն փողի հետ հանգստութիւն չունին—«ինչ անեմ էն ոսկէ լագանը, որի մէջ արիւն պիտի թքեմ», ասում է առածը։ Հարստութիւնը դրամարկղի մէջ չի կայանում, այլ՝ սրտի։ «Ես այնքան ունիմ, որքան մի թագաւոր», ասաց մի անգամ չինականի մէկը, «որովհետև ես այնքան ունիմ, որքան ինձ պէտք է»։ «Են որ մեծացուցանեն զանձինս՝ եւ ոչինչ ունին. եւ են որ խոնարհեցուցանեն զանձինս՝ եւ լի են մեծութեամբ բազմաւ», ասում է Սողոմոնը իւր ժգ. 7. առակի մէջ։ Մի՛ նախանձիր հարստին, մի՛ նախանձիր նրա կարծեցեալ երջանկութեան. ընդհակառակն, եթէ քո մերձաւորին վնասից կարող ես ազատել, արա՛։ Եթէ քո խորհուրդը նրան կարևոր է, օգտաւէտ է, մի՛ խնայիր՝ լինի դա խօսքով թէ գործքով։ Եթէ մինը հարուստ է, այդ չէ պատճառը որ դու աղքատ ես։ Դու գոհ եղի՛ր քո ունեցածով։ Առաքեալն ասում է իւր առ I. Թ. Տմթ. գ. 6-9. «Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտութիւն է՝ բաւականութեամբ հանդերձ, զի ոչ բերաք ինչ յաշխարհ, եւ ոչ տանել ինչ կարասցուք, այլ ունիմք կերակուր եւ հանդերձ եւ այնու շատասցուք։ Իսկ որք կամին մեծանալ՝ անկանին ի փորձութիւն եւ յորոգայթ եւ ի բազում ցանկութիւնս անմիտս եւ վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ ի սատակումն եւ ի կորուստ»։ Այո՛, ամենամեծ հարստութիւնն այն



է, երբ մարդս գոհ է իւր ունեցածով։ Ես գոհ եմ Աստծու տուածով, ինչ որ ինձ պարգևել է, դա բարձր է քան թէ տասն թագաւորութիւն։ Սակաւապետն ասում է Սողոմոնի հետ. «Մեծութիւն եւ տնանկութիւն մի՛ տար ինձ, այլ կշռեա՛ ինձ զարժանն բաւականութեամբ։ Զի մի՛ մեծացայց եւ ստեցից, եւ ասիցեմ, թէ ո՛վ տեսանիցէ զիս, կամ աղքատացայց եւ գողացայց եւ երդուայց յանուն Աստուծոյ իմոյ». (Առակք լ. 8. 9)։ Սակաւապետը Քրիստոսին պիտի նմանի, որ չգիտէր, թէ ուր դնէ իւր գլուխը, բայց և այնպէս փորձչին, որ խոստանում էր ամենայն ինչ, ասաց. «Յետս կա՛ց, սատանայ»։ Տայ Աստուած որ այսպիսի սակաւապետութեան զգացում ձեր բոլորի սրտերում մշտապէս լինի։

Վերջապէս պիտի մտածենք և այն մասին, որ երկրիս բոլոր բարիքներն էլ Աստծու սեպհականութիւնն են։ Մենք տէր չենք, այլ «իբրև զբարւոք հազարապետս (տնտես) պէս պէս շնորհացն Աստուծոյ». (I. Թ. Պետր. դ. 11.)։ Մենք չպիտի նրանով բաւականանանք, որ Աստծու տուած բարիքները ազնիւ ճանապարհով ձեռք ենք բերել, մենք չպիտի գոհ լինինք նրանով, ինչ որ Աստուած մեզ տալիս է, այլ պիտի աշխատենք որ Աստծու շնորհած բարիքներով ուրիշին էլ լաւութիւն անենք. որ Աստծու տուած բարիքները ի փառս Աստծու և աշխարհի օրհնութեան համար գործ դնենք։ Նիւթիս վերջում լսեցէք մի քանի հատուածներ ես սուրբ գրքից, որոնք բացատրում են, թէ մեր հարստութիւնը ինչպէս պիտի գործադրենք։

Բարեպաշտի մէկը իւր շինած որբանոցի դրամարկղի վրայ գրել էր տուել. «Որ ունիցի զկեանս ինչ յաշխարհիս եւ տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք, եւ փակիցէ զգութս իւր առ ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ». (I. Թ. Յովհ. գ. 17.)։ Շատերն իրանց համար սկզբունք են դարձրել—Ես իմ մասին էլ բաւական հոգալիք ունիմ, ուրիշների մասին մտածել չեմ կարող. ես ուրիշներից ոչինչ չեմ պահանջում. թո՛ղ ուրիշներն էլ ինձնից ոչինչ չպահանջեն։ Գիւղացու մինը, որ պաշտպան էր այս սկզբունքին, դժբաղդութիւն ունեցաւ—նրա տունն այրուեց։ Նրա վիճակը ծանր էր, ուստի դիմեց հարստի մինին և խնդրեց, որ իրան օգնէ։ Հարուստը պատասխանեց նրան. «Ես ուրիշներից ոչինչ չեմ պահանջում, թող ուրիշներն էլ ինձնից ոչինչ չպահանջեն»։ Աղքատ գիւղացին յետ դարձաւ մինչև ականջները կարմրած։ Ես չեմ ցանկայ, որ

այսպիսի սկզբունքներ ձեր մէջ ևս գոյութիւն ունենան: Սիրտը երբէք չպիտի կողպենք, նրան ամեն ժամանակ, միշտ և հանապազ բաց պիտի ունենանք. եթէ կոյրը, այրին, որբը, հրդեհուածը, խեղդուողը, չքաւորը, օտարականը . . . . մեզ դիմեն: Աղքատներին չպիտի մոռանալ, չքաւորների խրճիթը պիտի մտնել թ շ ու ա ռ ու թ իւ ն ը տեսնել կարողանալու համար: Մի րոպէ պիտի այսպէս մտածենք —ինչ կլինէր մեր վիճակը, եթէ ձմեռուայ ցրտին մերկ ցնցոտիներով պաշտպանուած լինէինք, եթէ մենք հիւանդ լինէինք և բժշկի կարիք ունենայինք, եթէ սովը մեր ամենօրեայ հիւրը լինէր . . . : Դարձեալ՝ ով իւր սիրտը եղբօր առաջ կկողպէ, նա չպիտի տրտնջայ, եթէ Աստուած էլ նրա առաջ փակէ իւր սիրտը և աշխարհիս դատաւորն ասէ. «Երթա՛յք ինէն, ոչ գիտեմ զձեզ»: Դուք երբէք չպիտի աշխարհիս մարդոց հետ ասէք—առնելը տալուց լաւ է, այլ Աստծու խօսքին պիտի հետևել, որ ասում է. «Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն» (Գործք առ. ի. 35.): Ապա ուրեմն. «Որում խնդրէ իքէն տո՛ւր, եւ որ կամի փոխ առնուլ իքէն, մի՛ դարձուցանէր զերեսս» (Մտթ. ե. 42.): Սրանով ասած չէ ի հարկէ, որ քեզ դիմող արբեցողին քսակդ բանալու չպիտի դժգոհիս և թեթևամտին, ծոյլին.... քո օգնութիւնով վարժեցնես՝ իւր օրը առանց աշխատանքի մթնացնելու. սրանով ասած չէ, թէ ընտանիքի տէր հայրը իւր ունեցած չունեցածը կարօտեալներին տայ և իւր որդւոց հացի կարօտ թողնէ: Եթէ ազնիւ անհատի մինը այս կամ այն ներելի պատճառով ձախորդութիւն է ունենում իւր ձեռնարկութեան մէջ, ահա՛ թէ ում պիտի օգնութեան ձեռը կարկառել: Երբ տեսնես այրու միակ պաշտպան որդին մեռել է և նրան հողին յանձնելու ոչինչ միջոց չկայ, տո՛ւր համեստ նուէրդ այդ նպատակի համար: Առ հասարակ աղքատներին պիտի հովանաւորել, վասնզի «փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի տնանկին, ըստ տրոց նորա հատուսցէ նմա». (Առակք ժթ. 17.): Ապա ուրեմն. «Բրդեա՛ քաղցելոց զհաց քո եւ զաղքատս անյարկս տար ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջի՛ր, եւ յընտանեաց զաւակի քոյ զակն մի՛ արկանիցես«. (Եսայի ծը. 7.): «Որչափ եւ իցէ քո՝ ըստ նմին բազմութեան արասցես ողորմութիւնս, եթէ սակաւ իցէ քո՝ ըստ սակաւուն եւ մի՛ յապաղեսցես առնել զողորմութիւնն». (Տովբիթ. դ. 8. 9.): «Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին. տեսանէր զիարդ ժողովուրդ արկանէր պղինձ . . . .» (Մրկ. ժբ. 41. 44): Աստծուն աւելի հաճելի է ոչ թէ տուրքի քանակը, այլ ո ր ա կ ը—ահա այն



է, որ ընդունելի և ոչ ընդունելի է յաչս Աստուծոյ: Ասած չէ որ օգնութիւնը միայն փ ո ղ ո վ կարելի է: Մարդս սրանով աւելի վնասւում է քան թէ օգտւում, որովհետև այսպիսով մարդս պաշտպանում է ծուլութիւնը, դատարկապորտութիւնը, ագահութիւնը, արբեցութիւնը և այլն այսպիսի մոլութիւններ: Բարի խորհուրդը, խելացի յորդորը, սրտագին նկատողութիւնը, հրաւէր դէպի աշխատանք . . . . յաճախակի աւելի մեծ արժէք ունին՝ քան թէ փողը: Բայց ուր փողի օգնութիւն է հարկաւոր, փողով էլ արա՛, եթէ կարող ես: Երբ հարցը բաւականութիւն պատճառող ծախսերի մասին է, այն ժամանակ փող կայ: Իսկ եթէ հանգամանքն այնպէս պատահէր որ միևնոյն անձը իւր ազնիւ, աղքատ, սովից ու ցրտից տանջուող հարևանին օգնութեան ձեռը կարկառելու ստիպուած լինէր, դուք պիտի տեսնէիք թէ ինչ թթու դէմք ցոյց կտար: Չմոռանանք երբէք—եթէ մարդս իրան համար ա ն պ է տ ք, ա ւ ե լ ո ր դ եղածի տասներորդ մասը աղքատներին տար, աշխարհումս չատ վշտեր և նեղութիւններ անհետացած կլինէին, քանի-քանի աչքերից արտասուքը կարելի էր կտրել: Բայց ինչ որ տալիս ես, ս ր տ ա ն ց տ ո՛ ւ ր—«Քանզի զտուրս առատս սիրէ Աստուած»: Տուած բանիդ վերաբերութեամբ թթու դէմք մի՛ ցոյց տուր—աւելի լաւ է սիրով մերժել՝ քան դժկամակութեամբ տալ: Այն ողորմութիւնը, որ սրտանց է, տուողին էլ, ստացողին էլ բաւականութիւն է պատճառում: Այսպէս ուրեմն, սիրելի աշակերտներ, «զբարերարութիւն և զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այդպիսի պատարագս հաճի Աստուած» (Թ. ա. Եբր. ժգ. 16): Յիսուս Քրիստոս ասաց. «Ամէն ասեմ ձեզ, որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարէք» (Մտթ. իե. 40): «Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո»: Ողորմի՛ր ի մ ա ս տ ո ւ ն ձ և ո վ:—«Ո՞ իցէ ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա: Արդ եթէ դուք.... այսպէս եւ դուք արարէք» (Մտթ. է. 9—12): Մի՛ ձ ա ն ձ ր ա ց ի ր ողորմութիւն տալուց—«Այսուհետեւ մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիս հաւատոյ» (Թ. ա. Գաղ. զ. 10):

# ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

*«Մի՛ սուտ վկայեր*
*«զընկերէ քումմէ»:*

Նախկին պատուիրանի պահանջն էր ունենալ հաւատարիմ ձեռք, իսկ ներկայ պատուիրանը պահանջում հաւատարիմ բերան: Այնտեղ ասուած է—չպիտի գողանաս մերձաւորիդ փողը և այլ ունեցուածքը, իսկ այստեղ ասում է—չպիտի գողանաս քո մերձաւորի բարի անունը, բարի համբաւը: Այնտեղ խօսքը փող գողացողի, իսկ այստեղ՝ անուն, պատիւ գողացողի մասին է:

Ամեն ինչ լեզուից է դուրս գալիս: Յայտնի առակախօս Եզովպոսը ծառային փողոց ուղարկեց և պատուիրեց որ ամենալաւ բանն առնէ: Ծառան գնեց մի հատ լեզու: Մի այլ անգամ, երբ նա ամենավատը պիտի գնէր, դարձեալ լեզու գնեց: Եւ իրօք լեզուն մարդուս, ինչպէս ամենաազնիւ, նոյնպէս և ամենավատ անդամներից մինն է: Իբրև ճաշակելեաց գործարան, ուտելու և խմելու բաւականութիւն օրոշողը նա է, բայց միևնոյն ժամանակ գայթակղեցնում է՝ առաջնորդելով մեզ դէպի որկրամոլութիւն, շռայլութիւն, վատնումն, աղքատութիւն....: Իբրև խօսակցութեան գործարան նրանով մեր մտածմունքները լսելի ձևով ենք արտայայտում, նրանով ենք յայտնում մեր զգացմունքներն ու զգայութիւնները, մեր ցանկութիւններն ու խնդիրները (ինչ թշուառ է համրը): Միևնոյն գործարանովն է, որ մարդս սուտ է խօսում, չողոքորթում է, ծաղրում է, անիծում է, դաւաճանում է և ամբաստանում է: Աստուածային սիրոյ գեղեցիկ օրինակներից մինն էլ սա է, որ նա մարդուն լեզու է պարգևել՝ խստիւ արգելելով նրա թիւր գործածութիւնը: Ահա՛ լեզուի այս թիւր, սխալ գործածութեան մասին է իններորդ պատուիրանի խօսքը—նա կամենում է մեր մերձաւորի բարի անունը սուրբ պահել:

«Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում, եւ քան զարծաթ եւ զոսկի՝ շնորհք բարիք», ասում է Սողոմոն թագաւորը (Առակք. իբ. 1.): Ցիրաւի, ինչո՞ւ են պէտք թագաւորին երկիրն ու ժողովուրդը, եթէ նա բարի անուն չունի, եթէ նրա սիրտը իւր հպատակների բարեկեցութեան համար չէ բաբախում: Ինչպէս թագաւորի համար, նոյնպէս և ամեն հպատակի համար բարի անունը թան-



կագին զարդ է: Քարոզչի խօսքը և՛ս աւելի է ազդում ունկնդիրների վրայ, եթէ նրանք համոզուած են, որ նա անկեղծ Նաթանայէլ է, որի մէջ նենգութիւն չկայ, որի խօսքը և գործքը չեն տարբերւում իրարից, որ ըստ Քրիստոսի նախ՝ առնէ և ապա ուսուցանէ: Որքան ուսուցչի անունը՝ (հեղինակութիւնը) բարձր է, նոյնքան և ներգործող է նրա խօսքը: Երբ հասարակութեան մէջ վատ մարդիկ սխալ վկայութիւն են տալիս մի ազնիւ քահանայի կամ ուսուցչի մասին և դրանով նրանց բարի անունը և գործունէութիւնն անուանարկում, իրաւունք պիտի տալ ամբաստանեալներին վշտանալու այդ մարդկանց խօսքից: Նոյն իսկ ամեն մի գործակատար, ամեն մի վաճառական ....վրդովւում է, երբ սուտ վկայութիւն է տրւում իրանց դէմ: Արհեստաւորը կորցնում է իւր յաճախորդներին. վաճառականը՝ իւր վարկը. աշխատաւորը՝ իւր հաւատարմութիւնը. ազնիւ մարդիկն՝ իրանց յարգանքը, երբ սուտ են խօսում, սուտ վկայութիւն են տալիս: Աղջկայ ամենալաւ օժիտը նրա ազնիւ անունն է. որդւոց համար մեծ ժառանգութիւն է ծնողաց բարի համբաւը: Բոլոր յարաբերութիւնները փոխադարձ հաւատարմութեան վրայ են հիմնուած, որ յենած է բարի համբաւի վրայ: Որքան բարձր է բարի համբաւի արժանաւորութիւնը, նոյնքան էլ խիստ ձևով է արգելում Աստուած մերձաւորի՝ ընկերի դէմ սուտ վկայութիւն տալը և յանցանք գործողին նոյն խստութեամբ պատժում է: «Վկայ սուտ՝ առանց պատժի ոչ լինի, եւ որ մեղ դնէ տարապարտուց՝ ոչ ապրեսցի». (Առակք. ժթ. 5.). ասած է և «Վա՜յ այնոցիկ ոյք ասիցեն զչարն բարի, եւ զբարին չար, ոյք դնիցեն զդառն քաղցր, եւ զքաղցրն՝ դառն». (Եսայի ե. 20.):

Անշուշտ Աստուած էլ իւր հիմունքն ունի, որ այսպիսի խիստ պատիժ է նշանակում սուտ վկայութիւն տուողների համար, որովհետև մարդկանց մեծ մասը խիստ դժուարանում է ընկերի վերաբերութեամբ ճշմարիտ վկայութիւն տալու: Մինին շահախնդրութիւնն է ստիպում (Աքաաբ և Իզաբէլ) այդպէս վարուելու, միւսին՝ մարդկային երկիւղը (իսրայէլի ծերերը), երրորդին՝ մեծամտութիւնը (տաճարի փարիսեցիները), չորրորդին՝ նախանձը (Աբիսողոմ), հինգերորդին՝ ատելութիւնը. (Մտթ. ժբ. 24.):

Վկայութիւնը ճշմարիտ պիտի լինի: Մարդիկ երդում ուտելու կարիք են ունենում դատաստանի առաջ: Այնտեղ ոմանք խորամանկ ստախօսութիւն են անում, որպէսզի իշխանութեան պատժից կարողանան ազատուել: Եթէ դու յանցաւոր ես, խոստովա-

նե՛ր յանցանքդ, իսկ եթէ անմեղ ես, ապացուցի՛ր անմեղութիւնդ և երբէք մի՛ ստիպուիր սպառնալեաց ներքոյ այլապէս խօսել՝ քան թէ համոզուած ես: Գանգատուողի՝ պատախաղի վկայութիւնը եւս արդար պիտի լինի: Դատախազը կեղծ ամբաստանութիւն չպիտի անէ, սուտ վկաներ չպիտի բռնէ, որոնք այլապէս խօսին, քան թէ ճշմարտութիւնն է: Ով դատաստանի առաջ իր մտածողութեան հակառակն է խօսում՝ այնպիսին սխալ վկայութիւն է տալիս և դրանով յանցանք է գործում Աստծու և ընկերի դէմ: Դատաստանի առաջ սխալ վկայութիւն տալու հարցում ոչ թէ միայն ամբաստանեալը և ամբաստանողն են յանցաւոր, այլև այն փաստաբանները, որոնք թէև համոզուած են, որ դատն անարդար է, բայց և այնպէս նիւթական ակնկալութեան կամ ինչ ինչ պատճառով, իրանց համոզման հակառակ են գործում—արդարին յանցաւոր են դուրս բերում կամ յանցաւորին՝ արդար: Սուտ վկայութիւն է տալիս և այն իշխանութիւնը, երբ դատը վճռելիս ի նկատի է առնում անձնաւորութիւնը կամ երկիւղ է կրում մէկից, միւսից: Այսպիսով աչառու դատաւորը արդարութիւնը ոտնակոխ է անում և սխալ, կեղծ վկայութեան միջնորդութեամբ խլում է անհատի բարի անունը, համբաւը:

Սուտ վկայութիւն տալը միայն դատաստանի առաջ չի արգելւում, ուրիշ շատ հանգամանքներ ես կան: Տէրերը ծառաներ ունին, վարպետներն՝ աշակերտներ, մեծաւորները՝ ստորադրեալներ..., որոնց յարաբերութեան մէջ նոյնպէս գործ է դրւում այս պատուիրանը: Այստեղ ես վկայութիւնը ճշմարիտ պիտի լինի: Մեծաւորը իւր լաւ ստորադրեալին կարող է չգովել, մոռացութեան տալ, դա ես յանցանք է: Եթէ հարկ կայ, որ պարոնը իւր ծառայի հաւատարիմ վարմունքը գովաբանէ՝ չպիտի լռէ: Ո՛չ մի կեղծ դատողութիւն, ո՛չ մի անարդար իրողութիւն, ո՛չ մի կասկածանք, ո՛չ մի պատրուակումն, չպիտի լինին այս տեսակ վկայութեանց մէջ, այլ ամեն ինչ այնպէս պէտք է ներկայացնել, ինչպէս որ իրականութեան մէջն է, ինչ որ իրողութիւն է: Թէև այս այսպէս է, բայց և այնպէս քանի-քանի վկայութիւններ կեղծ են: Դիցուք մարդու մինը մի անկարգ աղախին ունի, արձակում է նրան: Մի ուրիշը կամենում է վարձել նրան, բայց լսած լինելով, որ ձեզ մօտ է եղել, տեղեկութիւն է հարցնում նրա մասին: Ի՞նչ էք կարծում, ի՞նչ վկայութիւն է տալիս—գովում է, երկինք է բարձրացնում և այսպէս խաբում է ուրիշներին, որոնք շատ զրկանք կրելուց յետոյ պիտի զգուշանան: Ուրիշ օրինակ—դի-



ցուք մինն ունի մի ազնիւ, հաւատարիմ, օրինակելի ծառայ, փոխանակ գովելու՝ անուանարկում է նրան, վկայականի վրայ նկատողութիւններ է անում, երբ վերջինս հեռացել է իրանից և մի ուրիշի մօտ աւելի ռոճկով է ծառայում: Այսպէս չպիտի անել: Չպիտի գովել, ուր պախարակելու է. չպիտի պախարակել, ուր գովելու է. չըլռել, ուր պիտի խօսել, և խօսել, ուր չպիտի լռել:

Մեր պատուիրանն արգելում է ոչ թէ միայն գրաւոր սուտ վկայութիւնը, այլև ամեն մի վկայութիւն՝ լինի դա գրաւոր, թէ բերանացի, դատաստանի առաջ, թէ սովորական կեանքում: Կուզէք իմանալ, թէ որոնք են ընկերի մասին տուած սուտ վկայութիւնները: Լսեցէք, ես ասեմ ձեզ—մի քանի ընտանիքներում ինչպիսի անսանձ լեզու են գործ դնում սրա կամ նրա դէմ. այս ինչ ժողովարանում ինչպէս են ցեխոտում սրան կամ նրան. փողոցում, դաշտում, տանը ինչպէս են յարձակւում մինի, միւսի վրայ և առանց արդարութեան չափն ի նկատի առնելու, այս կամ այն պատճառից դրդած՝ բամբասանքով է լուծում իւր վրէժը՝ փոխանակ ազնիւ մարդուն յատուկ մեծահոգութեամբ կամ ներելու կամ երեսին ասելու: Ընկերի դէմ վատ վկայութիւն տալու համար միշտ կարեւոր չէ խօսքը: Զորօրինակ դու հարցնում ես մինին—ճանաչո՞ւմ ես այս ինչին, ազնի՞ւ մարդ է նա: Լռողը թշնամի է այն անձին, որի մասին է խօսքը և այս գործողութեան նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ չարախօսել, վրէժ լուծել: Այս տեսակ ողորմելի արարածները ուղղակի չարախօսել չեն կարողանում, ապա թէ ոչ իրանց խորամանկութիւնը կյայտնուէր: Այսպիսի մարդիկ այլ ձևով են արտայայտում իրանց սրտինը, զորօրինակ ուսերը վեր են քաշում, արհամարհական ժպիտ են ցոյց տալիս, դիրք են բռնում կամ խորհրդաւոր լռութիւն պահպանում....: Այս տեսակ դիրք բռնելով՝ գրգռում են դիմացինի նախանձը և յաճախ ոգեկան վրդովմանց ենթարկում, իսկ այս բոլորից յետոյ անամօթաբար նստում, խօսում են, թէ ես ինչ վատ բան եմ արել նրան, որ նեղանում է: Մի՞թէ այս վարմունքը ընկերի մասին սուտ վկայութիւն չէ. արդեօք այս դասակարգի մարդիկն աւելի վտանգաւոր չեն, քան թէ երեսին ամեն ինչ յայտնի ասողները: Եւ նա որ թոյլ է տալիս իւր առաջ բամբասելու ազնիւ, բարի մարդուն, որ լուռ է մնում և գլխի ու դէմքի շարժուածքով հաստատում է ստախօսի ասածները, նոյնպէս մեղանչում է այս պատուիրանի դէմ: Աւելի հեռուն կարելի է գնալ—կարելի է ճշմարտու-

թիւնն այն ձևով արտայայտել, որ գովասանքը և պարսաւանքը միմեանցից կարելի չլինի զանազանել—փոխանակ պարզ և որոշ խօսելու—սա ևս սուտ վկայութիւն է։ Ամեն բան սրտից է կախուած։ Կեղծ խօսքը կեղծ սրտից բղխած, ինչպէս և ճշմարիտ խօսքը կեղծ սրտից—երկուսն էլ հաւասարապէս կեղծ վկայութիւն են։

1. Կեղծ վկայութիւն *ստախօսներն* են տալիս։ Ստախօսներ (սուտը ուրիշ խօսքով կոչւում է դիտաւորեալ անճշտութիւն), ինչպէս և գողեր ամեն հասակում և ամեն դասակարգի մէջ կարելի է գտնել։ Սուտ են խօսում և՛ տղայք և՛ չափահասները։ Սուտ է խօսում և մուրացկանը, երբ իւր կարիքը մեծացնում է օտարի կարեկցութիւնը շարժելու համար։ Սուտ է խօսում հարուստը, երբ իրան դիմող աղքատին ծառայի բերանով ասել է տալիս. «Պարոնը տանը չէ»։ Սուտ են խօսում ինչպէս գռեհիկ շինականը, նոյնպէս և կրթուած քաղաքացին, ոչ մէկը և ոչ միւսը խօսքը ազնիւ ձևով չեն գործ դնում։ Մեր նախնիքն այդպէս չեն վարուել—նրանց մօտ «խօսքը՝ խօսք է եղել»։

Ինչ է պատճառը որ այդքան սուտ են խօսում։—Ոմանք պատժի երկիւղից (ծոյլ աշակերտները ուսուցչի, գողերը դատաստանի առաջ), ոմանք շահախնդրութիւնից դրդած (Յակոբ)։ Քանիքանի վաճառականներ իրանց փտած ապրանքին բարձր գին են նշանակում, որ գնողը չկասկածէ։ Քանի-քանիսը վատաբանում է հարևանի ապրանքը։ Կան մարդիկ, որոնք մեծամտութիւնից ըստիպուած սուտ են խօսում։ Այդպիսիք ճառում են միայն և եթ իրանց կատարած գործերի մասին, իրանց տիտղոսի և իրանց հարըստութեան մասին—դրանք իրանց մեծացնում են, իսկ միւսներին փոքրացնում։ Կան մի տեսակ մարդիկ էլ, որոնք նախանձից դրդած են սուտ խօսում։ Այդ մարդիկը հանգիստ չեն կարող լինել, երբ մի ուրիշը երջանիկ է. սառն աչքով չեն կարող տեսնել օտարի բաղդաւորութիւնը։ Այն՝ ինչ որ ընկերին փայլ կարող է տալ, սեւցնում են, որովհետև աշխարհիս մարդիկը սիրում են սեւցնել փայլունը և վատաբանել գովանին։ Ոմանք էլ ձանձրութիւնից ստիպուած սուտ են խօսում։ Այդպիսիք բան ու գործ չունեին..... ուզում են մի կերպ ժամանակ անցկացնել և ահա՛ սկսում են ուրիշների սխալները կամ առաքինութիւնները խօսակցութեան նիւթ դարձնել—բամբասել։ Այստեղ փոքրը մեծացնում են, իսկ մեծը փոքրացնում, և երբ իրանց այդ աւելորդաբանութիւնները լոյս աշխարհ են գալիս, անմիտ բա-



ցաւորութեամբ են արդարանում—դէհ մի բանով պիտի զբաղուէինք էլի, պարապ ինչ անէինք։ Այլք սուտ են խօսում չարութիւնից, ատելութիւնից դրդած։ Ոմանց համար մեծ բաւականութիւն է ուրիշին սխալեցնելը. Թիւր ճանապարհ ցոյց տալը պարծանք են համարում, «ուրիշի տակից», սովորական խօսքով ասենք, «խալիչէն հանելը»։ Կան ստախօսներ էլ, որոնք սուտ են խօսում արհամարհական ծիծաղով։ Այսպիսիք սիրում են մի բան հնարել և սրան նրան խաբելով՝ բաւականութիւն զգալ։ Կան ստախօսներ, որոնք քաղաքավարութիւնից ստիպուած սուտ են խօսում։ Այդպիսիք կամենում են ամենին էլ մի հաճելի բան ասել, ուստի և սկսում են շողոքորթել և այսպէս քաղաքավարութեամբ սուտ են խօսում։ Կան ստախօսներ, որոնք կեղծ քաղաքավարութիւն ունին և երբէք չեն վստահանայ իրանց ազնիւ համոզումը յայտնելու մի ուրիշի կարծեաց դէմ։ Այս կեղծ քաղաքավարները համաձայնում են այն ամենին, ինչ որ ծաղրողը, հեգնողը արախօսում է։ Այդպիսիք գովաբանում են անարժաններին և երկու հակառակող կողմերին էլ արդար են դուրս բերում—մինի մօտ մի բան աւելացնում, իսկ միւսի մօտ՝ պակասացնում են։ Այդպիսիք ոչ ոքի չեն հակառակում իրանց ներկայութեամբ, ամենի հետ էլ համաձայնում են, ոչ ոքի չեն վիրաւորում։ Ստրկական երկչոտութեան և ուրիշին դուր գալու անազնիւ կեղտոտ զգացումն—ահա այդպիսեաց չարժառիթը, նպատակը։ Սովորական կեանքի մէջ այդպիսիք զուարճախօս անունն են կրում և խիստ ընդունուած են մեծամասնութիւնից։ Բայց իրականութեան մէջ դրանք շատ վտանգաւոր մարդիկ են։ Այն վնասը, որ այդ երկերեսանի, երկլեզուանի մարդիկը հասցնում են, շատ մեծ է։ Այդպիսիք աշխարհս տակն ու վրայ են անում, որտեղ ասես մտնում են. ինչ ասես խօսում են, բայց և այնպէս քեզ այնպէս են ներկայանում՝ որպէս թէ ոչինչ չգիտեն։ Դրանք քաղցր ժպտով են մօտենում մարդոց, պատմում են այնպիսի նորութիւններ, որոնցով իրանց գիտաւորութիւնն են յայտնում ու վերջն էլ աւելացնում—«ես այդ չէի ուզում ասել» կամ «դուք ինձ սխալ հասկացաք»։ Աստուած հեռու պահէ ձեզ այս տեսակ մարդկանցից, այդպիսիք մարդկութեան ցեցերն են։

Ի՜նչ գեղեցիկ կլինէր, եթէ բոլոր մարդիկն էլ չիտակ լինէին. ամեն ոք իւր տուած խօսքն ազնուութեամբ պահէր, ուղիղ խոստովանէր իւր արածը, իւր զգացածը չկեղծէր, արդարութեամբ գովէր

դովկին և պարսաւէր պարսաւելին—առանց քաշուելու՝ ընկերաբար, բարեկամաբար ճշմարտութիւնը երեսին ասէր: Այն ժամանակ քանի քանի վէճեր, անբաւականութիւններ կվերանային երկրիս վրայից և ինչպէս շուտով կուղղէին իրար մարդիկ (Դաւիթ և Նաթան): Դրա համար էլ աստուածային խօսքը երբէք չէ դադարում ստախօսներին զգուշացնելու: «Ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարո՛ւք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք միմեանց անդամք» ասում է առաքեալը Թ. ա. Եփես. դ. 25 ում: «Չար բիծ ի մարդ ստութիւն». (Սիրաք ի. 26.): «Սոել զամենայն ստութիւն մի՛ ախորժեր, զի յաճախութիւն նորա ոչ է բարի» (Սիրաք է. 14.): Այո՛, սուտ խօսելը, բարի բան չէ, որովհետև ստութիւնը, որպէս յանցանք, մի ստիճանից միւսն է անցնում և վերջապէս նրան կորստեան է մատնում (ստի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց): Շատ հեշտութեամբ կարող է պատահել, որ ստախօսը գ ո ղ էլ դառնայ, որովհետև ով խօսքով կխաբէ, այնպիսին հեռի չէ և գ ո ր ծ ո վ խաբելուց, ուստի դրա համար էլ ասում են, որ ստախօսն ու գողը երկուորեակներ են: Ուրեմն զգոյշ եղի՛ր ստախօսութիւնից: Մանաւանդ զգոյշ եղի՛ր առաջին անգամ սուտ խօսելուց, որովհետև մի յանցանքը միւսի մայրն է: Երբէք մի՛ արդարացիր նրանով, որ կարիք ունէիր, նրա համար սուտ խօսեցիր: Եթէ կարիքը թոյլ է տալիս սուտ խօսել, նոյն կարիքը իրաւունք կտայ և՛ գողանալ, և՛ սպանել, և՛ անիծել, և՛ երդուել, և՛ կախարդել: Եթէ այնպիսի հանգամանքի մէջ ես, որ ճշմարտութիւն չես կարող խոստովանել, այն ժամանակ լ ռ ի՛ ր, կամ պարզ ձևով ասա՛—ես այդ մասին չեմ վստահանում խօսել: Ինչ որ քո բերանից դուրս է գալիս, պիտի բոլորն էլ ճշմարիտ լինի: Բայց սրանով ասած չէ, թէ այն ամենը՝ ինչ որ ճշմարիտ է, պէտք է ասես, օրօրինակ բժիշկն ամեն հանգամանք հիւանդին չէ յայտնում: Իմաստուն խօսելը դժուար է, բայց իմաստուն լռութիւնը ևս աւելի: Երբէք քո ապաստարանը ստախօսութեան մէջ չորոնես: Համբերի՛ր ա մ ե ն ա խ ի ս տ պ ա տ ժ ի ն: Բայց երբէք ազատութիւնդ ստախօսութեամբ ձեռք չբերես—աւելի լաւ է մ ե ռ ա ն ե լ, քան ս ո ւ տ խ օ ս ե լ: Փոքրութիւնից վարժի՛ր քեզ ճշմարտասիրութեան և յստակամտութեան: Մեր պապերն իրանց պ ա ր ծ ա ն ք ը յստակամտութեան մէջ էին որոնում:

2. Ս ո ւ տ վ կ ա յ ո ւ թ ի ւ ն ե ն տ ա լ ի ս *մատնիչները*: Հարցն այստեղ գաղտնիքների վերաբերմամբ լռութիւն պահպանելու մա-



սին է: Ի հարկէ ամեն մի գաղտնիք բաց անողը մատնիչ չէ, որովհետև գաղտնիքի մատնութիւնը կարող է և՛ ս խ ա լ և՛ ո ւ ղ ի ղ վկայութեամբ յայտնուել. կարող է թոյլատրած և կարող է արգելուած լինել: Այդ տեսակ հանգամանքներում երբեմն լ ռ ո ւ թ ի ւ ն ը յանցանք է, իսկ երբեմն էլ՝ խօսելը: Սուտ, սխալ վկայութիւն տալ է, երբ օրօրինակ տեսնում ես գիշերով հարևանիդ տունը մտնող գողին և լռում ես, փոխանակ իշխանութեան յայտնելու, մանաւանդ, երբ այդ պահանջում է քո պաշտօնը, պարտաւորութիւնը: Չարութիւնը լոյս աշխարհ հանելը մատնութիւն չէ, վասն զի՝ ով ուրիշի չար արարմունքները ծածկում է և նրանով է արդարանում, թէ այլոց անբաղդութեան պատճառ չեմ դառնայ. ինչո՞ւ թշնամիներիս թիւն աւելացնեմ.... այդպիսին մեղանչում է իւր ընկերի դէմ. այդպիսին երկչոտ, անազնիւ, անխիղճ մարդ է, նա կատարեալ արհամարհանքի արժանի է: Բայց ուրիշ տեսակ գաղտնիքներ ևս կան: Օրինակի համար—ազնիւ մարդու մինը կարիք ունի, նեղութեան մէջ է, քեզ մօտ է գալիս և խնդրում է, բարի խորհրդով է, թէ դրամական օժանդակութեամբ, օգնել իրան—այս գաղտնիքը մի ուրիշին յայտնելը յանցանք է: Սա խոստովանութիւն է, սուրբ պիտի պահել: Սուրբ գիրքն ասում է. «Այր երկխօս՝ յայտնէ զխորհուրդս յատենի, իսկ հաւատարիմն ոգւով՝ ծածկէ գիրս». (Առակք Սող. ժա. 19.): Ով հետամուտ է ընտանեկան գաղտնիքներին, որպէսզի չարախնդացութեամբ անուանարկէ ընկերի ընտանեկան պատիւը. ով մարդկային թուլութեան յանցանքները, որոց Աստուած ևս ներողամիտ է, հրապարակում է. ով բարեկամական դիմակով ընկերի հաւատարմութեան է արժանանում և նրա գաղտնիքները թշնամուն յայտնում.... այնպիսին մատնիչ է և մեղանչող աստուածային այս պատուիրանի դէմ: Այսպիսի մատնիչներ էին Դովեկը (I. Թագ. իբ. 9. 10.), Զիփացիք. (I. Թագ. իգ. 19.... և իզ. 1.), Յուդան, որովհետև սրանք մատնեցին այն՝ ինչ որ գաղտնիք էր, նրանք հաւատարիմ սիրտ չունեցան: Նրանց նպատակը վ ն ա ս ե լ ն էր, նրանք թշնամի հանդիսացան, նրանց սիրտը կեղծ էր, իսկ բերանը՝ լի ստախօսութեամբ: Դաւիթն ու Յովնաթանը ամենևին նմանութիւն չունէին սրանց: Յովնաթանը Դաւթին խօսք տուաւ—թո՛ղ Աստուած յաւիտեան վկայ լինի իմ և քո խօսակցութեան և Յովնաթանը իւր խօսքը ազնուութեամբ պահեց՝ նոյն իսկ այն րոպէին, երբ Սաւուղը նրան խարդախ անուանեց և գեղարդը ետեւից շպրտեց: Այսպէս էլ դու

պէտք է քո տուած խօսքը պահես բարեկամի վերաբերութեամբ և երբէք մատնիչ չդառնաս: Երբ բարեկամը քեզ մի գաղտնիք հաւատում է—քո սիրտը պիտի գերեզման լինի: Աւելի լաւ է ոտդ կոտրել՝ քան տուածդ խօսքը: Շատ սիրուն բան է հաւատարիմ ընկեր ունենալը, ընկեր, որին կարող լինես քո սիրտը բաց անել, քո ներքինը փղձկալ և այսպէս թեթևանալ: «Յամենայն ժամանակի բարեկամք եղիցին քո, բայց եղբարք՝ ի վիշտս եղիցին քեզ պիտոյ». (Առակք Սող. ժէ. 17«): «Բարեկամ հաւատարիմ, ծածկոյթ հզօր, իսկ որ գտանէ զնա, եգիտ գանձ: Հաւատարիմ բարեկամի ոչ գոյ փոխանակ, եւ ոչ կշիռ լաւութեան նորա: Բարեկամ հաւատարիմ դեղ կենաց, եւ երկիւղածք Տեառն գտցեն զնա». (Սիրաք զ. 14. 16.): Մանաւանդ զզուելի է այն գաղտնիքների հրապարակելը, որոնք ոչինչ շահ չունեին ոչ ասողի և ոչ ընդհանրութեան համար, այլ վնասուողը լոկ նա է, որի վրայ խօսուել է: Մատնութիւն շատերն են սիրում, իսկ մատնիչներին ոչ ոք չի յարգում: Բացէ ի բաց հեռու եղի՛ր այն մարդկանցից, որոնք սովորութիւն ունին ասելու—թէև ես խոստացել եմ այդ մասին լռել, բայց քեզ կասեմ: Ով քեզ ասում է գաղտնիք կոչուածը, անշուշտ մի ուրիշին էլ կասէ: Դրա համար քեզ մի բարի խորհուրդ—ա, հետամուտ մի՛ եղիր ոչ ոքից գաղտնիք իմանալու, նոյնպէս ոչ ոքից հաւատարմութիւն մի՛ խնդրիր: Որովհետև ինչ բանի մասին, որ մենք ոչինչ չգիտենք, այնքան էլ հանգիստ կլինենք: Դեռ ոչ ոք ուրիշի գաղտնիքներն իմանալով երջանիկ չէ դարձել: բ, Եթէ պատահի որ մինը քեզ մօտ գայ և առաջարկէ մի գաղտնիք լսելու, դու պիտի յայտնես, որ նրա գաղտնիքը գաղտնիք կմնայ, եթէ վատ, չար բան չէ: Կարողութիւնիցդ վեր խոստում մի՛ արա: Յիշի՛ր Հերովդէսի տուած խոստումը Յովհաննէսի մասին: գ, Իսկ եթէ գաղտնիքը անվնաս բան է, հանգիստ սրտով կարելի է լսել. այնուհետև սրբազան պարտքդ պիտի լինի գաղտնիքը սրբութեամբ պահելու քո մէջ: Սեպհական լեզուն սանձելը մեծ արժանաւորութիւն է: Ինչպէս խօսելն արուեստ է, նոյնպէս լռելը: Խօսելն արծաթ է, իսկ լռելը՝ ոսկի: Յիշի՛ր, լա՛ւ ի միտ առ, որ դու երկու ականջ ունիս, իսկ մի բերան. միթէ՞ գժգոհ ես այդ մասին, որ շատ բան պիտի լսես, իսկ քիչ խօսիս: Երկու աչք ունիս, բայց մի բերան. շատ բան պիտի տեսնես, բայց շատ բան էլ չտեսնելու պիտի տաս:

3. Սուտ վկայութիւն են տալիս *քսուները*, *բանսարկուները*: Սիրաքն ասում է. «Մի՛ կոչեսցիս բանսարկու՝ եւ լեզուաւ



քով մի՛ վարանիր: Զի ի վերայ գողոյն կայ ամօթ, եւ պարսաւանք չար ի վերայ երկխօսին» (Սիրաք ե. 16. 17): Սա կատարեալ ճշմարտութիւն է, որովհետև գողի առաջ դուռը կարելի է կողպել, իսկ բանսարկուի առաջ՝ ոչ: Առաջինը վեր է առնում այն, ինչ որ նորից կարելի է փոխարինել, իսկ վերջինը՝ մարդուս մաքուր, անբիծ անունըն է յափշտակում, որի փոխարինումը շատ դժուար է և երբեմն անհնար: Մարդուս պատիւը նմանում է խնձորի կճեպին, որ թէև շատ քնքոյշ է, բայց և այնպէս պահպանում է պտուղը փտելուց: Հէնց որ կեղևը վնասւում է, իսկոյն աւերւում է և խնձորը: Եթէ նկատելու լինինք, կտեսնենք որ քանի-քանի անգամ քսու մարդիկ ընտանեկան խաղաղութիւնը վրդովել են իրանց անարդար բամբասանքներով: Քանիցս չողոքորթները թշնամութեան սերմն են ցանել իշխանութեան և հաւատարիմ հպատակների մէջ, տիրոջ և ծառայի, կնոջ և մարդու, ծնողաց և որդւոց.... մէջ: Իսկապէս մարդիկ կատարեալ զզուանք պիտի զգան դէպի քսուները և արհամարհեն չողոքորթներին: Բայց այդպէս չէ: Որքան անարգուած բան է քսու, բանսարկու լինելը, չողոքորթութիւնը, նոյնքան էլ տարածուած է: Չողոքորթների առևտուրը մեծ յաջողութեան մէջ է, ունկնդիրների թիւն էլ պակաս չէ: Երանի իմանայիք, թէ մարդիկ ըստ մեծի մասին ինչ խօսակցութիւններ ունին ընկերական շրջաններում (թատրոն, ժողովարան . . . . . . .): Միշտ զբաղուած են ուրիշի թերութիւնները նկատելով՝ օտարի սխալներն են աչքի ընկնում. բարու, ազնուի, գեղեցկի մասին լռութիւն է տիրում, որովհետև մարդիկ բամբասանքով մեծ լինել՝ բարձրանալ չեն կարող: Ուրիշի սխալ կողմերը յիշելով կամենում են վայր ձգել ընկերին, իսկ միւս կողմից ծածկում են իրանց սխալները և այսպէս գերագասում իրանց: Օտարի անմեղ խօսքը, անմեղ գործքը, ուր ոչ մի չար դիտաւորութիւն չէ ունեցել ասողը՝ բանսարկուի, չողոքորթողի բերանում մեծանում է և չարի կնիք դրւում վրան: Եւ ահա կարճ ժամանակուայ մէջ հրդեհի նման անցնում է մի ընտանիքից միւսը, մի տեղից միւս տեղը: Աշխարհիցս չարիքը շատով հեռացած կլինէր, եթէ մարդիկ իրանց սխալներն էլ այնպէս խիստ դատէին, ինչպէս ուրիշինը. եթէ իրանց թերութիւններն էլ նոյնպիսի գոյներով նկարագրէին՝ ինչպէս իրանց բացակայ ընկերինը—երանի այդպիսիք ուրիշի առաքինութիւնները ես լոյս աշխարհ հանէին պակասու-

թիւնների նման*: Հեռի կաց բանսարկուներից, զգուշացի՛ր նրանցից: Լաւ իմացի՛ր, որ քեզ մօտ ուրիշի վրայ խօսողը, ուրիշին ծաղրողը, մի ուրիշի մօտ էլ քեզ կանէ և գիտէք որքան վշտացուցիչ կորուստ է շողոքորթ, քսու մարդու ձեռքով բարի անուն կորցնելը: Սրա համար էլ հռովմայեցի կայսր Աղեքսանդր Սեվերուսը հրամայեց իւր պալատի բոլոր սեղանների վրայ գրել հետևեալ տողերը: «Զամենայն զոր մի անգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա» (Մատթ. է. 12): Եկեղեցական հայրերից մինը՝ Օգոստինոսը երբեք չէր թոյլ տալիս, որ իւր տան մէջ վատ խօսեն մի մարդու վրայ, որ բացակայ է, ուստի և իւր սեղանի վրայ գրել տուաւ այս խօսքերը. «Ով բացակայ եղող անձի անունը յափշտակել է կամենում, այնպիսին իրաւունք չունի այս սեղանի վրայ նստել»**:

Երբեք մի՛ լսիր բանսարկուին: Եթէ բոլորն էլ այս խրատին հետևեն, այն ժամանակ բանսարկուների բաժինը լռութիւնը կլինէր: Մի կրօնաւոր ասում է—բանսարկուն՝ սատանան լեզուի վրայ ունի, իսկ ունկնդիրը՝ ականջում: Բանսարկուն գող է, իսկ ունկնդիրը՝ գողօնքը պահող: Գողացողը և թագցնողը մի հաշւում են: Երբ բանսարկուն ընկերի մասին վատ է խօսում, դու նրա հակառակը խօսիր: Եթէ բամբասում են ծնողացդ, ուսուցչիդ, ընկերիդ...., այն ժամանակ հարցրու դրանց, արդեօք որ և է բարի կողմն էլ նկատել են այն անձի մէջ, որին չեն հաւանում և այսպէս նրա բարի կողմերը երևան հանելով՝ ամաչեցրու քսուներին: «Լեզու լաւախօս յաճախէ զբարեկամութիւնս» (Սիրաք զ. 5): «Բաց զբերան քո բանիւ Աստուծոյ, եւ դատեա՛ զամենեսեան ողջմտութեամբ» (Առակք Սող. լա. 8): Երբ բանսարկուն կեղծ, ս՛խալ վկայութիւն է տալիս ընկերի մասին, դու ուղիղը վկայի՛ր: Թուցէ դու ես այդ պատճառաւ արհամարհանքի արժանանաս, բայց աւելի լաւ է անարդարու-

* Այստեղ յարմար է կեղծանուն, անստորագիր նամակների մասին խօսել, որով մեր ժամանակը հարուստ է:

** Օգոստինոսի մօր՝ բարեպաշտ Մոնիկայի օրինակը աւելորդ չէր լինի պատմել աշակերտներին: Երբ սա լսում էր, որ երկու կին իրար հետ կռուել են, խռով են, գնում էր մինի մօտ և դիտմամբ խօսք էր ձգում նրա թշնամու մասին: Նա սկսում էր հազար ու մի գովասանքներ շռայլել՝ այն աստիճան, որ դժգոհն ինքը ևս մի քանի լաւ կողմեր էր յիշում: Սրանից յետոյ միւսի մօտն էր գնում՝ և պատմում, որ այս ինչը քո մասին այսպէս գեղեցիկ բաներ էր պատմում: Այս ձևով յաճախ յաջողում էր նրան երկու կողմին հաշտեցնել:



թիւն կրել՝ քան թէ գործել: «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի է ձեզ յորժամ նախատիցեն եւ հալածեսցեն, եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ, ցնծացէք եւ ուրախ լերո՛ւք, զի վարձք ձեր բազում են յերկինս, զի այսպէս հալածեցին զմարգարէսն, որ յառաջ քան զձեզ էին» (Մատթ. ե. 10—12): Երբ Քրիստոսին բարձրագոյն ատենի առաջ պիտի դատէին, Նիկոդէմոսն ասաց. «Միթէ օրէնքն մեր դատէ՞ն զմարդ, եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, կամ գիտեն զի՞նչ գործէ» (Յովհ. է. 51.): Թէև ներկայ եղողները «գալիլիացի» ասելով հայհոյեցին Նիկոդիմոսին, բայց նա խաղաղ և հանգիստ ձևով պաշտպանեց ճշմարտութիւնը: Երբեք մի՛ գրգռուիր: Մի՛ ուրախանար, երբ երկու բարեկամներ իրար հետ ընկնում են, երբ չարութեան սերմը երկու նախկին մտերիմների մէջ սերմանւում է: Աշխատի՛ր խաղաղութիւն սերմանելու. քարոզի՛ր ներողամտութիւն և հաշտութիւն—մի՛ մոռանար այս խօսքը. «Զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց»: Այս գեղեցիկ խօսքը գրուած է I. թ. Պետր. դ. 8. և իրաւացի է կրկին մտքով: Կարելի է ասել—սէրը շատ յանցանքներ ծածկում է, այսինքն նա բաւականութիւն չի զգում, երբ ընկերի թոյլ կողմերը՝ յանցանքները հրապարակւում են, մարդոց գրգռում են, այլ ընդհակառակն՝ նա ուրախանում է, երբ վէճը հեռացւում է, բարկութիւնը մեղմւում է, խաղաղութիւնը վերականգնում է և մեղքերը, սխալները ծածկւում են, չեն տեսնւում: Բայց կարելի է և այսպէս հասկանալ—սէրը բաց է անում, պարզում է մեղքը: Մարկ. աւետարանի է. 31.... Խուլ ու համրի բժշկութեան ժամանակ ասում է. «Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի» այսինքն հիւանդին մենակ վեր առաւ:-Նա Յիսուսի հետն էր: Յիսուս երկինք նայեց, յոգւոց հանեց և ասաց. «Եփփաթա» (այսինքն «բացուի՛ր») և այսպէս բժշկեց նրան իւր ցաւից: Այժմ դուք հասկանալիս կլինիք, թէ ի՞նչ է նշանակում իմ ասած խօսքը. «Զի սէր ծածկէ (բաց անէ) զբազմութիւն մեղաց»: Եթէ քո բարեկամներից մինը չար ճանապարհի վրայ է, դու գնա՛ նրա մօտ, պարզի՛ր իւր աչքի առաջ (չորս աչքի առաջ) նրա սխալները և այսպէս նրա յանցանքը ծածկի՛ր (բաց արա՛, բժշկի՛ր): Եթէ դու մի ազնիւ, անկեղծ մարդու չարից ազատել կարող ես, ազատի՛ր—«նրա մեղաց բազմութիւնը սիրով ծածկի՛ր»: Սէր չէ երևում այնտեղ, ուր ընկերին կոյր գկուրայն փորձութեան մէջ են ձգում և յետոյ էլ արդարանում են՝ ասելով—ուր ես չկամ, ի՞նչ

ուզում է լինի։ Բայց լաւ յիշի՛ր—ա, երրորդ անձի մասին երբէք խօսք մի՛ արա, երբ դու պատասխանատու պիտի լինիս, երբ դու մի օր նրա երեսին պիտի ասես այս կամ այն—բ, սէրը միշտ ինքն է սկըսում—«Եղբա՛րք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանս.... հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան, զգոյշ լինիջիք անձանց, զի մի եւ դուք փորձիցիք» (Թ. ա. Գաղ. զ. 1) ասում է առաքեալը։ Այս վերջին յորդորն անհրաժեշտ է։ Քանի-քանիսը դուրսը հազարաւոր աչք ունին, իսկ տանը և ոչ մինը։ Դրա համար էլ միշտ քո դռնից դարձի՛ր և օգնի՛ր հարևանիդ։ Որքան որ դու ուղղուիս, այնքան էլ ճշմարիտ կլինիս դէպի քեզ, ուրեմն այնքան էլ ճշմարիտ կլինի քո վկայութիւնը ուրիշի վերաբերութեամբ, վասնզի ինչքան սիրտը մաքուր լինի, նոյնքան էլ բերանը կլինի։ Սիրտը աղբիւրն է, իսկ բերանը նաւը՝ խողովակը։ Մի՛ արհամարհի՛ր, մի՛ չողոքորթի՛ր, մի՛ սուտ խօսի՛ր, բանը ո՛չ փոքրացրու՝ և ոչ էլ մեծացրու, այլ թող ամեն ինչ այնպէս լինի, ինչպէս որ կայ իրականութեան մէջ։ Այն ժամանակ անկեղծութեան մէջ այնքան յառաջ գնացած կլինիս, որ քո մահուանից յետոյ անգամ մարդիկ կվկայեն, ինչպէս երբեմն Յիսուս Նաթանայէլին ասաց—«Ահա՛ արդարեւ իսրայէլացի, յորում նենգութիւն ոչ գոյ» (Յովհ. ա. 47)։ Սա ամենալաւ վկայութիւնը կլինի, որ դու անկեղծութեամբ ես կատարել «մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ» պատուիրանը։

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

> *«Մի՛ ցանկանար տան ընկերի քո,*
> *«եւ մի՛ անդոյ նորա, մի՛ ցանկանար*
> *«կնոջ ընկերի քոյ, եւ մի՛ ծառայի նո-*
> *«րա, եւ մի՛ աղախնոյ նորա, եւ մի՛ ե-*
> *«զին նորա, եւ մի՛ իշոյ նորա, եւ մի՛*
> *«ամենայն անասնոյ նորա, եւ մի՛ ամե-*
> *«նայնի զինչ ընկերի քոյ իցէ»։*

Այս պատուիրանը փոքր ինչ հեռուն է գնում—իրերի խորն է թափանցում։ «Մի գողանար» խօսքով Աստուած մաքուր ձեռք էր պահանջում, իսկ «մի սուտ վկայեր»-ով՝ մաքուր բերան։ Յիշատակեալ երկու պատգամներն ես պահանջում են մաքուր սիրտ։ Վերջին պատուիրանը միանում է առաջինի հետ, այսինքն Աստուած սկսում է սրտով և վերջացնում է սրտով։



Այս պատուիրանի մէջ ասած է—«մի՛ ցանկանար»․ (II. Մովս. ի. 17.), չար ցանկութիւնը բացէ ի բաց մերժւում է։ Եւ շատ իրաւացի է, որովհետև ցանկութիւնից յառաջանում է ձգտումն, իսկ սրանից գործնական մեղք, որից և ծնում է հոգեկան մահ։ Եթէ այս պատուիրանի մէջ չթոյլատրած ձգտումն արգելւում է, սրանով ինքն ըստ ինքեան արգելուած է և չար ցանկութիւնը*։

Այսպէս ուրեմն հեռի պահի՛ր քեզնից չար ցանկութիւնը։ Ով այս ցանկութիւնը սրտումն ունի, ով նրան խնամում և փայփայում է, այնպիսին անցնում է Աստծու պատուիրանից։ Կան մարդիկ, որոնք շատ խիստ են համարում այս պատուիրանը. այդպիսիք ասում են—արգելել չար գործողութիւնը, դա հասկանալի է, բայց թէ ես ինչ կմտածեմ՝ չար, թէ բարի, ո՞ւմն ինչ։ Չէ՞ որ ես իմ մտածողութիւնով ոչ ոքի չեմ վնասում, ես ազատ եմ կամեցածս մտածելու։ Սխալ է, թէ ընկերս վնաս չունի իմ չար մտածմունքից։ Ողջ մէկ չէ Աստծու համար—բարի եմ մտածում թէ չար, տարբերութիւնը մեծ է. քննող աչքով նայի՛ր այն մարդու սիրտը, ուր հազար ու մի մտածմունքներ կան—մինը գանգատւում է, միւսը նեղութիւն է խնդրում։ Այս տեսակ սիրտը մարդասպանութեան որջ է, այնտեղ է բնակւում նախանձը, որ չի կարող սառն աչքով տեսնել ընկերի երջանկութիւնը—նա դառն տխնարկութեամբ ասում է—«ինչո՞ւ ես այսպէս աղքատ եմ, ինչո՞ւ նա այնպէս հարուստ է։ Ինչո՞ւ պիտի նա հանգստութիւն վայելէ, իսկ ես այսքան դառնութիւններ ճաշակեմ։ Ինչո՞ւ ես էլ սրա կամ նրա նման երջանիկ չպիտի՛ լինիմ»։ Անսուրբ սրտի մէջ բնակւում է այլև վրէժխնդրութիւնը։ Սրտի մթին անկիւններում նախադծեր է կազմում, թէ մերձաւորին ինչ ձևով վիրաւորանք հասցնէ—վրէժխնդրութիւնը թուխս է նստած և րոպէ առ րոպէ կրկնապատկում է ատելութիւնը։ Այնտեղ է բնակւում չարախնդացութիւնը, որ չգիտէ, թէ ինչպէս ուրախանայ ընկերի անբաղդութեան վրայ։ Այնտեղ են բնակութիւն հաստատել ցուցամոլութիւնը, մանաւանդ սնափառութիւնը, որ

---

* Լուտերականները ցանկութեան առարկան երկուսի են բաժանում—շնչաւոր (կին, ծառայ, աղախին և այլն) և անշունչ (տուն, անդ), բայց որն էլ լինի, հաւասարապէս արգելւում է պատուիրանը։ Մի կամ երկուսի բաժանելը ոչինչ նշանակութիւն չունի, ողջ մէկ է, մեզ վրայ ոչ մի ձևն էլ բարոյական ազդեցութիւն չի կարող անել։ Հարցը նրանում չէ, թէ պատուիրաններն ինչպէս ենք բաժանում, այլ նրանում, թէ ինչպէս ենք պահում։

ձգտում է ամենից բարձր լինել—նա հանգիստ չունի, երբ տեսնում է, որ իւր կողքին իրանից մեծը կայ։ Այնտեղ են բնակւում մարմնական ցանկութիւնները, որոնք անբարոյական պատկերներ են նկարագրում և անառակութեան մէջ որոնում իրանց երջանկութիւնը։ Այնտեղ է բնակւում անհաւատութիւնը, թերահաւատութիւնը, որ գիտէ ճշմարտութիւնը անսուրբ գոյներով ներկել և սրբութիւնը արատաւորել։ Ասմ խնդրեմ, այստեսակ սիրտը մարդասպանութեան որջ չէ՞։ Սրտից չե՞ն դուրս գալիս «խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք» (Մտթ, ժե. 49.)։ Այս չար խորհուրդները մի՞թէ յանցանք չեն. մի՞թէ այս մտքերը ոչ ոքի համար վնասակար չպիտի լինեն։ Մտածի՛ր փոքր ինչ այդ մասին, կտեսնես որ չար խորհուրդները վնասում են ոչ թէ միայն նրան, ով սրանց կերակրում և խնամում է, այլև նրանց, դէպի որոց ուղղած է։ (Նեւան փորձով ճաշակեց, թէ չար խորհուրդն ինչպիսի դառն հետևանք ունեցաւ։ Կայէնը չկարողացաւ տեսնել, որ օրհնութիւնը միայն Աբէլն ստանայ։ Աստուած նկատեց, թէ որպիսի չար հետևանքներ պիտի ծնին, ուստի և ասաց. «Եթէ բարի լինիս, Աստուծուն հաճելի է, իսկ եթէ բարի չլինիս, յանցանք կգործես։ Բայց նրան իւր կամաց մի՛ թող, այլ իշխիր նրա վրայ»։ Չար խորհուրդն էր, որ Աբէլին կեանքից զրկեց, իսկ Կայէնից՝ խլեց հոգւոյ հանգստութիւնը։ Աքաաբն ու Իզաբէլը երբէք Նաբոթին չէին սպանի, եթէ չար ցանկութիւնը նրանց մէջ բոյն դրած չլինէր։ Ուստի «ամենայն պահպանութեամբ պահեա զսիրտ քո, զի ի սոցանէ են ելք կենաց». (Առակք դ. 23)։ Ձուից ճուտ է դուրս գալիս, կայծից՝ հրդեհ. այսպէս էլ չար խորհրդից չար գործն է յառաջ գալիս։ Ուրեմն ճանաչի՛ր Աստծու սէրը, որի նպատակն է քեզ չարից պահպանել, ուստի և ասում է. «մի՛ ցանկանար»։

Չար ցանկութիւնը բնակւում է քո մէջ։ Եգիպտոսի անապատում ապրող քրիստոնեայ միաբաններից մինը չէր կամենում հաւատալ, որ իւր մէջ չար ցանկութիւն է բնակւում։ Նա ապացուցանում էր, որ իւր միաբաններն են յանցաւոր այդ բանում—իրան մէջ բնակւող բարկութեան պատճառը իւր միաբաններն են։ «Ես կհեռանամ ձեզնից և ինձ համար մի տաղաւար կշինեմ», ասաց նա միանգամ, «այն ժամանակ ես ազատուած կլինիմ բարկութիւնից»։ Ասելն ու կատարելը մէկ եղաւ։ Մի անգամ, երբ նա մենակ սափորով ջուր էր առնում աղբիւրից, սափորն ընկաւ և ջուրը թափուեց։ Բայց երբ



երկրորդ և երրորդ անգամ նոյնը կրկնուեց, նրա ճակատի վրայ եղած բարկութեան երակն ուռաւ, կատաղած վեր առաւ սափորը և փշուր փշուր արաւ։ Երբ սափորի բեկորներին նայեց՝ իւր առաջը անշարժ ընկած, իսկոյն զգաց, որ յանցանքը իւր միաբաններինը չէ, այլ բարկութեան ոգին հէնց իւր մէջն է։ Նա միաբանների մօտ դարձաւ և աղաչում էր նրանց՝ իրան հետ աղօթելու, որ փորձութեան մէջ չընկնի։ Այստեղից այն խրատը քեզ՝ որ «իւրաքանչիւր ոք փորձի առ ի յիւրոցն ցանկութեաց ձգեալ եւ պատրեալ» (Թ. Յակ. ա. 14)։ Որովհետև մարդուս գայթակղեցնողը ցանկութիւնն է, դրա համար էլ յանցանքն ուրիշի վրայ չպիտի ձգել—ոչ իւրեան շրջապատող գայթակղիչների և ոչ էլ չար ոգու, որին մարդիկ սովորութիւն են արել սատանայ անուանելու։ Չար ցանկութիւնը քո մէջն է ծնում. քո սեպհական սիրտն է չար գործերի ծննդավայրը, դրա համար էլ ամենայն ոք մենակ ինքն է պատասխանատու իւր յանցանքների համար։ Հէնց որ չար ցանկութիւնը մեր մէջ սկիզբն առաւ, իսկոյն, ըստ մեր բացատրութեան, ծնում է յանցանքը։) Այսպէս ուրեմն չար ցանկութիւնն է՝ մայր, իսկ յանցանքը՝ նրա որդին։ Երբ յանցանքը կատարեալ է դառնում (այսինքն սիրտը ամբողջովին գրաւում է), այն ժամանակ մահ է ծնում—նա սպանում է հոգին, թլացնում է կամքի ոյժը, զօրութիւնը և թունաւորում է կեանքը՝ այնպէս որ մարդուս մէջ աստուածայինը հետզհետէ մեռնում է և վերջ ի վերջոյ ապականութեան բաժին է դառնում։ Մեղքի բոլոր հետևանքները՝ թէ այստեղ և թէ այնտեղ, սուրբ գիրքը մահ բառի մէջ է ամփոփում—այս բառով հասկանում է մեղքից յառաջացած բոլոր դառնութիւնները։ Մահուան երեք տեսակը պիտի որոշել իրարից—1, մարմնական մահ—երբ հոգին մարմնուց բաժանւում է, 2. հոգեկան մահ—երբ հոգին Աստուածանից է բաժանւում. 3, յաւիտենական մահ—երբ Աստուած բաժանւում է մարդուց։ Պարզ է, որ մեր խօսքը մահուան երկրորդ տեսակի մասին է։ Թէ ամենայն մի յանցաւոր չար խորհուրդների միջնորդութեամբ վերջ ի վերջոյ հոգեկան մահուան է դատապարտւում, այդ մասին կեանքը հազար և մէկ ապացոյցներ ունի։ Նայի՛ր խստապարանոցին—նրա զգացմունքը խուլ է դէպի իրանից ողորմութիւն խնդրող աղքատը։ Նայի՛ր արբեցողին—նա չի տեսնում իւր առաջ բացուած անդունդը, իւր ընտանիքի թշուառութիւնը։ Նայի՛ր նախանձոտին—չի զգում իւր թշնամու անբաղդութիւնը, չի ուրախանում բարեկամի երջանկութեան վրայ։ Ով

չի տեսնում, չի լսում, չի զգում, նա մեռած է, հոգեպէս մահացած է—եթէ նա երկրիս վրայ ծիծղուն երեսով էլ շրջելիս, արտայայտուելիս լինի: Ուստի մի անգամ ևս կրկնենք Աստծու խօսքը—«մի՛ ցանկանար»: Չար ցանկութիւնը՝ մայր է, յանցանքը՝ նրա որդին, իսկ սրա վերջը՝ մահ (բարոյական)։

Որպէսզի ճիշտ իմանանք, թէ ինչ բան չպիտի ցանկալ, հարկաւոր է լսել, թէ ի՞նչ է ասում օրէնքը։ ա, «Մի՛ ցանկար տան ընկերի քոյ»: Սրանով Աստուած արգելում է ցանկութիւն յայտնելու ընկերի, այսպէս ասած, մեռած սեփականութեան, նրա անշարժ կայքի վերաբերմամբ: Շատ մարդիկ կան, որոնք երկար տարիներ շարունակ աչք են դրել ընկերի, հարևանի տանը, որովհետև վերջինս մեծ տարածութիւն, յարմարութիւն, գեղեցիկ դիրք ունի: Ոմանք էլ քուն ու դադար չունին ընկերի արտը կամ արօտատեղին ձեռք բերելու....: Մինին այս է դուր գալիս, միւսին՝ այն: Եթէ դու հաւանում ես հարևանիդ սեփականութիւնը, գնա՛ նրա մօտ և առաջարկի՛ր ծախել՝ խոստանալով վճարել արժէքը—այդ ցանկութիւնը յանցանք չէ: Սակայն մեծամասնութիւնն ուրիշ ձևով է վարւում: Ոմանք բարեկամական դիմակով մերձենում են ընկերին, փաղաքշում են նրա կալուածքը...... այս բոլորի նպատակն այն է, որ պղտորեն կալուածատիրոջ սիրտը, որպէսզի նա ծախելու կողմը հակուի: Եւ երբ յաջողում է նրա սիրտը փոխել և վերջինս ցանկութիւն է յայտնում վաճառելու, այն ժամանակ դիմակաւորեալ բարեկամը ցաւակցութիւն է յայտնում ասելով—ո՜վ պիտի առնի, տեսնենք, գուցէ կարողանամ մի գնող գտնել և այլ այսպիսի կեղծ կարեկցութիւններ: Այս գործողութիւնից յետոյ գտնում է խաբեբայի մինին. վերջինս հաճում է մի գին վճարելու և կալուածքը վերջ ի վերջոյ չնչին գումարով առնում է մեր դիմակաւորը: Քա՛նի-քա՛նիսը զոհ են գնացել այսպիսի ստոր խորամանկութեանց, որոնք իրանց արմատը չար ցանկութեան մէջ ունին, կորցրել են իրանց սեփականութիւնը և հացի կարօտ դարձել: Այդ խաբեբաները դեռ ծաղրում են էլ, որովհետև իշխանութիւնից պատիժ չպիտի ստանան. Նոքա գիտեն, որ ամեն ինչ իրանց պատրուակի ներքոյ է կատարուել և ոչ մի ձևական հիմք չկայ բողոքելու: Արդարև երկրաւոր դատաւորն այդպիսիներին չի պատժում, բայց կայ երկնաւոր դատաւոր, որ հատուցանում է ամենին իրանց գործքի համաձայն: Աստուած, որ որմն



արմատից է կամենում հանել, հէնց դրա համար էլ ասում է «մի՛ ցանկանար տան ընկերի քո»:

Չար ցանկութեան առարկան ոչ թէ միայն անշունչ առարկաներն են, այլև շնչաւոր, բանաւոր: Աստուած արգելում է ցանկանալու ուրիշի կենդանի սեփականութիւնը, ուստի և ասում է բ, «մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի՛ ծառայի նորա, եւ մի՛ աղախնոյ նորա, եւ մի՛ իշոյ նորա, եւ մի՛ ամենայն անասնոյ նորա, եւ մի՛ ամենայնի զինչ ընկերի քոյ իցէ»: Ուրեմն ոչ մարդ և ոչ անասուն՝ չար ցանկութեան առարկայ չպիտի լինին: Նախ՝ ընկերի կինը ցանկութեան առարկայ չպիտի լինի: Իսրայէլի կանանց համար այս պատուիրանն անհրաժեշտ էր, որովհետև ամուսնական կապն այն ժամանակ ոչ անլուծանելի էր և ոչ օրէնքի առաջ պաշտպանուած—մարդը իրաւունք ունէր կնոջը արձակման թուղթ տալու—անյայտ գայթակղիչի մինը կարող էր կնոջ սէրը յափշտակել և այսպէս իրաւունք տալ օրինաւոր ամուսնուն արձակմանը գրելու: Բայց այս պատուիրանը մեր քրիստոնեայ ժամանակի համար էլ ևս անհրաժեշտ է—կան մարդիկ, որոնք սառն աչքով չեն կարող տեսնել, թէ ինչպէս իր ընկերը կնոջ հետ սիրով է ապրում և կամ միտք ունի մի երջանիկ ամուսնական դաշը կռելու: Այդպիսիք աշխատում են ներելի և աններելի միջոցներով խանգարել ամուսնութիւնը, վրդովել ընտանեկան խաղաղութիւնը, իրարից բաժանել: Շատ կանայք մարդկանցից բաժանուելուց յետոյ՝ ամուսնանում են իրանց գայթակղեցնողի հետ, բայց երկուսն էլ վերջը հնձում են իրանց ցանածը (շատ սակաւ դէպքերում միայն հաւատարիմ են մնացել իրար)—նոքա, որոնք անհաւատարմութիւն են ցանել, անհաւատարմութիւն էլ կհնձեն: Որքան սակաւ լինի չարախնդացների թիւը, այնքան էլ սակաւաթիւ կլինին անյաջող ամուսնութիւնները: Այն ժամանակ կվերանային թէ մէկի և թէ միւսի անհամար բողոքներն իրար դէմ: Մի կին գանգատւում էր ուրիշին իր մարդուց և ասում. «Ի՞նչ էք կարծում, պարոն, ի՞նչ պիտի անեմ ես»: Դիմացինը սառը կերպով պատասխանեց. «Իմ կարծիքով դուք պիտի տուն դառնաք և ձեր ամուսնու համար աշխատէք լաւ կին լինել, այն ժամանակ նա էլ լաւ մարդ կլինի ձեր վերաբերութեամբ»:

Տասներորդ պատուիրանի մէջ ասած է. «Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո..... եւ ամենայնի զինչ ընկերի քո իցէ»: Այս տողերը պատկանում են և երեխաներին: Հին ժամանակ սովորութիւն

է եղել, որ հրէաները երեխաներ են յափշտակել։ Նոյնը կատարում են և այսօր մահմետականները և տանում կրօնափոխ դարձնում։ Թէև հրէից այդ տգեղ սովորութիւնը մեր օրերում վերացած է, բայց քանի-քանի զզուելի սովորութիւններ դեռ ևս գոյութիւն ունին մեր մէջ—օրօրինակ նոյն իսկ բարի անուն և հռչակ վայելողները իրանց վարմունքով շատ որդւոց սառեցնում են իրանց ծնողներից։ Քանի որ որդիքը փոքր են և կարօտ խնամքի, ոչ ոք օգնութեան ձեռը չի կարկառում, իսկ երբ նրանք մեծանում են և ձեռն աշխատանք է բռնում, չեն ամաչում որդւոց իրանց ծնողաց դէմ յարուցանելու և բարերարի դիմակ ընդունելով՝ հեռացնել նրանց ընտանեկան օճախից՝ հազար ու մէկ հրապուրանքներով։ Ամենից վատ խորթ մայրերն են վատահամբաւուած։ Աշխարհիս մէջ ոչ ոք այնպէս վատահամբաւուած չէ, ինչպէս խորթ մայրերը։ Սոքա հարազատ մայրեր չեն, ուստի և հարազատ սէր չեն կարող ունենալ, ուրեմն և չեն արժանանում ճշմարիտ վստահութեան (հարցը բացառութեանց մասին չէ)։ Որքան էլ խորթ մայրը կամ խորթ հայրը բարի լինին դէպի խորթ որդիքը, այնուամենայնիւ վերջինները սակաւ անգամ են ճանաչում նրանց երախտիքը, բարի դիտաւորութիւնքը՝ հէնց այն պատճառով, որ նրանց գլխում մտցրել են, թէ խորթ ծնողներ են և դրա համար էլ այդ տեսակ որդիքը ծնողաց կեանքը դառնացնում են։ Անշուշտ խորթ որդիներին ճանապարհից հանողները չեն յիշում—մի ցանկանար որդւոց ընկերի քոյ-ն։

Բայց աստուածային պատուիրանը չէ բաւականանում սրանով, նա հեռու է գնում—«Մի ցանկանար ծառայի, աղախնոյ ընկերոջ քոյ»։ Աշխատասէր ծառան, ջանասէր աղախինը, հաւատարիմ մշակը ոսկու չափ արժէք ունին։ Ով լաւ ծառաներ, աղախիններ ունի, երջանիկ կարող է համարուել։ Բայց կան ստոր մարդիկ, որոնք նախանձում են, թէ ինչու այս ինչ մարդը լաւ սպասաւորներ ունի, և ահա օձի լեզու են սկսում բանացնել. մեծ ռոճիկ, սակաւ աշխատանք են խոստանում, որպէսզի հեռացնեն նրա տանից և իրանք վարձեն։ Այս վարմունքը վնասում է ոչ թէ միայն պարոններին, այլև ծառաներին, որովհետև նրանք վարժւում են մի տեղից միւսը գնալուն, նրանց համար սովորութիւն է դառնում մինի մօտից միւսին անցնելը։ Այդպիսիք ծառայում են միայն փողին, կորցնում են իրանց հաւատարմութիւնը՝ այդ անգին յատկութիւնը։ Երբ մի ծառայ կամ աղախին երկար ժամանակ մնում է մինի մօտ, սկսում է յարգել պարոններին



և փոխադարձաբար յարգանք վայելել նրանցից։ Բայց մի քանի մարդոց չար ցանկութիւնը չի կարող տանել դրան—փոխանակ յորդորելու նրանց, որ իրանց տեղում մնան և ծառայեն հաւատարմութեամբ, սկսում են գայթակղեցնել։ Նախանձը բարեկամի դիմակով է մօտենում և ձգտում է խլել այն՝ ինչ որ ուրիշինն է և կամ եթէ այդ նրան չյաջողեց, գոնէ օտարի ուրախութիւնը խափանել։ Այդպիսիք գուցէ ուրիշին աղքատացնեն, բայց իրանք էլ չեն հարստանում, այդպիսիների յաջողութիւնը նրանումն է կայանում, որ իրանց չար ցանկութիւնը բաւարարութիւն ստանայ։

Վերջապէս արգելում է Աստուած. «Մի ցանկանար եզին, իշոյ եւ անասնոյ ընկերի քոյ, եւ մի ամենայնի զինչ ընկերի քոյ իցէ»։ Կրթուած անուանեալ մարդիկը քնթները վեր են քաշում՝ ասելով որ վայելուչ չէ յիշել էշ, եզն։ Բայց և այնպէս այդպէս ասողները սառն աչքով չեն կարող տեսնել հարևանի կառքի ահիպարանոց ձիերը, ընկերի արագավազ նժոյգները, սրա մեծաթիւ անդէն, միւսի հարուստ գիւղատնտեսութիւնը.... և նախանձի զգացումն չունենալ իրանց սրտում—«Ա՜խ, ինչու ես էլ այդպէս չպիտի լինէի։ Քանի-քանիսը ոչ թէ հարևանի էշն ու եզը, այլև չունն ու կատուն պատառ հացով գրաւել են և սեպհականել՝ լոկ այն հիմամբ, որ չեն կարող տեսնել, թէ իրանց մերձաւորն ինչպէս ուրախանում է նրանցով։

Այս բոլորը չար ցանկութիւններ են. դրանց բնակութեան տեղը սիրտն է, որին բերանը, աչքը, ձեռքը շարժում է բաւականութիւն տալու համար։ Սա չար ցանկութիւն է, որ այնպիսի անմեղ, անկեղծ կերպարանքով մերձենում է քեզ և հանդիստ ու դադար չէ ունենում՝ մինչև որ քեզ իւր ծառան, ստրուկը չէ դարձնում։ Քո երջանկութեան այս թշնամուն ամեն իրաւամբ կարող ես մերժել և գոցել այն դռները, որոնցով նա քո սիրտն է սողոսկում։ Պատերազմի ժամանակ, երբ մի քաղաք կամենում են առնել, նախ և առաջ կողպում են քաղաքի դռները, կտրում են ջուրը։ Այսպէս էլ դու պիտի անես—պիտի կտրես չար ցանկութեան բոլոր առիթները, որոնք կարող են քեզ գրգռել և խլել քեզնից քո խաղաղութիւնը։ Սուրբ գիրքը յորդորելով՝ ասում է քեզ—«մի թոյլ տար չար ցանկութեան քեզ մօտ գալ և քեզ տիրել, ինքդ եղիր նրան տիրողը»։

Գիտէք ինչ պիտի անէք, երբ չար մտածողութիւնները գալիս են։—Երբ չար ցանկութիւնը անակնկալ կերպով քեզ հիւր է գալիս,

արհամարհիր և երեսդ դարձրու նրանից: Յանկութեան առարկայից չուռ տուր հայեացքդ. գայթակղեցնող էակների համար՝ թող խուլ լինի քո լսելիքը. գերի մի՛ դարձիր նրանց այն ցանկութիւններին, որոնք դիմակով են երեւան գալիս: Հաւաքի՛ր ուժերդ, աշխատանքի մէջ որոնի՛ր քո պաշտպանութիւնը. բարի մարդոց շրջանում փնտռի՛ր քո օգնութիւնը. աղօթի՛ր, մի՛ հանգստացի՛ր՝ մինչև որ ի նորոյ ինքնիշխան դառնաս: Ի՞նչ ասես որ չի կարող մարդը՝ միայն թէ կամենայ: Հսկի՛ր և աղօթի՛ր: Երբ առաջին անգամ անառակ որդին կատարեալ կամքով ասաց. «Երթայց առ հայր», հէնց նոյն րոպէից էլ նրա ոգին ազատութիւն ստացաւ: Ուրեմն մի անգամ էլ կրկնենք, մի՛ թոյլ տուր, որ կամքը քեզ տիրէ, այլ ինքդ նրա տէրը եղի՛ր: Մարդս ստեղծուած է տիրելու համար. (I. Մովս. ը.), բայց ամենից առաջ ինքն իրան պիտի տիրէ, մեղացը պիտի իշխէ և ոչ նրա ստրուկը լինի—մարդս տէր և ոչ թէ ստրուկ պիտի լինի:— «Ամենայն որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց». (Յովհ. ը. 34.): Երբ դու քեզ տկար զգաս, դու էլ վարուի՛ր այն մուրացկան տղայի նման, որ իջեւանել էր մինի տանը, ուր ժամացոյցի ճնկճնկոցը նրա մէջ չար մտքեր էին ծնեցում—յափշտակել ժամացոյցը, ծախել և նրանով ծածկել իր մերկութիւնը: Երբ նրա մէջ չար ցանկութիւնն այնքան զօրացաւ, որ տկար էր զգում դիմադրել իրան, տեղից վեր կացաւ. առաւ իւր պարկը. գիշերով փախաւ տանից և այնքան ժամանակ պտըտում էր դուրսը՝ մինչև որ գայթակղիչ մտքերը կորցրին իրանց ույժն ու զօրութիւնը: Գնա՛ և դու էլ նոյնն արա՛. բայց վաղ՝ քանի որ ջահել ես: Ինչպէս որ փոքր հասակումդ կսովորես, նոյնպէս էլ կշարունակես: Ծառի ճիւղը կարելի է ճկել՝ քանի որ դալար է: Ով երկնչում է պատերազմից, երբէք յաղթող չի լինի: Ուստի «մարտի՛ր զբարւոք մարտն հաւատոյ, եւ բուռն հար զկենացն յաւիտենականաց յոր կոչեցարն». (I. Թ. Տմթ. զ. 12.): Մեծ է այն թշնամին, որի հետ պիտի պատերազմիս. այդ թշնամին քո սեպհական կրծքումն է, դա անձնասիրութիւնն է, դա յանցանքն է, որին մենք ճանաչում ենք: Այս թշնամին երբեմն այնպիսի չողոքորթող կերպարանքով է մօտենում մեզ, որ մենք մոռանում ենք զինուորուել նրա դէմ—նա պաշտպանուած է: Այս թշնամին շատ յամառ է՝ չնայելով որ նա քանիցս յաղթւում է, բայց և այնպէս նորից միշտ և միշտ փորձեր է անում ոտի կանգնելու: Ով դանակը չար ցանկութեան վզին չէ դնում, նա միշտ կոր-



ծանուում է: Բարի նախաբաններ ընդունելով շատ բան չի կարելի անել (դժոխքի ճանապարհն էլ բարի նախաբաններով է սալայատակած), անհրաժեշտ է զինուել նրա դէմ ճշմարտութեամբ, արդարութեամբ, ոգեկան զէնքերով—«Այսուհետեւ զօրացարու՛ք Տէրամբ եւ կարողութեամբ նորա . . . . եւ զսուսեր Հոգւոյն, որ է բանն Աստուծոյ». (Թ. առ. Եփս. զ. 10—17.): Այստեղ զիջում, դաշնադրութիւն, համակերպութիւն չկայ, այստեղ հարցը պարզ է—բացէ ի բաց հեռի: Մեր տէր Աստուածն այսպէս է պահանջում. Նա մաքուր սիրտ է պահանջում, ուստի և ասում է. «Մի՛ ցանկանար»: Մեր տէր Աստուածն ուզում է որ անձնասիրութիւնը՝ բոլոր յանցանքների աղբիւրը ընկճենք և պահենք նրա խօսքը. «Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ զընկեր քո նման սմին»:

Աստուածային տասն պատգամները վերջացրինք, այժմ մի հայեացք ձգենք մեր անցած ճանապարհի վրայ:

Այս ամենից պարզ և որոշ կերպով երեւում է, որ Աստուած պահանջում է մեզնից («Պատմեցաւ քեզ, ո՜վ մարդ, զի՞նչ է բարի, կամ զի՞նչ խնդրէ ի քէն տէր, բայց առնել զիրաւունս, եւ սիրել զողորմութիւն, եւ պատրաստ լինել երթալոյ զկնի Տեառն Աստուծոյ քոյ» Միքիէ զ. 8.) մաքուր ձեռք, խատակ բերան և սուրբ սիրտ: Մենք տեսանք, որ տասն պատուիրանները պարունակում են իրանց մէջ այն ամենը, ինչ պարտաւորութիւն որ մարդս ունի դէպի Աստուած, դէպի ընկերը և դէպի իւր անձը: Ուր այս պատուիրանները զանց են առնուած, այնտեղ յանցանք է գործուել, իսկ յանցանքին յաղթել հնարաւոր է եղել սուրբ սիրոյ զօրութեամբ: Ուր սէրն առ Աստուած («սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ») և առ ընկեր («եւ զընկեր քո իբրեւ զանձն քո») տիրապետել են մեր մտքին և ղեկավարել մեր գործերը, այնտեղ ամեն ինչ կանոնաւոր է եղել և՛ ընտանիքի, և՛ դպրոցի, և՛ եկեղեցւոյ, և՛ տէրութեան, և՛ ժողովրդի, և՛ իւրաքանչիւր անհատի համար: Ուր չքանում է այս սէրը, ուր մարդս ապրում է առանց սիրոյ՝ հետեւաբար և առանց Աստուծու, այնտեղ կանոնաւորութիւնը վտանգւում է, խաղաղութիւնը վերանում է, էլ երջանկութեան մասին խօսք չի կարող լինել:

Որպէսզի Աստուած մեզ առաջնորդէ դէպի պատուիրանների կատարումն, տասն պատուիրանների վերջը մի անգամ ես յայտնուեց

և սպառնալիքի հետ իւր խոստումն էլ տալու մեզ, որպէսզի ճանաչենք և իմանանք, որ նա միմիայն մեր բարին և ընդ ամին մեր երջանկութիւնն է կամենում։ Ուստի և մի փոքր խօսող ծանօթանանք այս սպառնալիքի և խոստման հետ։

## ՎԵՐՋԱԲԱՆ ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻ

**Ա.** Սպառնալիքն այս է «Ես եմ տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց, յերիս եւ ի չորս ազգս ատելեաց իմոց»։ Աստուած անուանում է իրան նախանձոտ՝ յանցանքն արդարութեամբ պատժող Աստուած։ Նա հատուցանում է նախահայրերին ըստ գործոց նոցա և պատժում է անարդարութիւնը։ Անարդար վարմունքը հաճելի չէ նրան. նա թոյլ չէ տալիս, որ անարգեն իրան։ Ճիշտ է, նա ողորմած է, գթած է, համբերող է և վերին աստիճանի բարի, բայց նրա բարութիւնը թուլութիւն չպիտի համարել, նրա ողորմածութիւնը չարերին անպատիժ թողնելու գրաւական չպիտի լինի։ «Արդար է տէր. զարդարութիւն սիրէ» (Սաղմ. Ժ. 8)։ Աստուած ամենին էլ իրանց գործի համաձայն է հատուցանում։ Թո՛ղ ոչ ոք չկարծէ, թէ ինչ կամենայ՝ այն կանէ։ Ով վստահանում է արդարադատ օրէնսդրի պատուիրաններից անցնել, այնպիսին փորձով գիտէ, որ մարդս իւր վարմունքով Աստծու օրէնքը չի կարող փոխել, ընդհակառակն՝ յանցաւորը զանցառութիւն անելով՝ իրան (մարդուն) ոչնչացնում, ի կորուստ է մատնում։ Ով չի կամենայ աստուածային պատուիրանների առաջ խոնարհել, կստիպուի նրա տակ խորտակուել։

Ոչ թէ միայն յանցանք գործողն է տուժում իւր արարմունքի համար, այլև նորա յաջորդները վայելում են ծնողների արարմանց հետևանքները—որովհետև «Աստուած հատուցանէ զմեղս հարանց որդւոց»։ Այս խնդիրը շատերին է զարհուրանք պատճառել—որդիքն ինչու պիտի պատասխանատու լինին հայրերի յանցանքին։ Բայց ումը յայտնի չէ այս իմաստը—«Պապն ազոխ է կերել, թոռան ատամներն են առել»։ «Հարք կերին զագոխ եւ որդւոցն առան ատամունք»։ Չարութեան նզովքն էլ հէնց նրանումն է, որ չարունակաբար չար բան պիտի ծնի նրանից։ Ահա սա է յանցանքի զարհուրելի ողմը. նա մի տեղում չի մնում, այլ ամեն ինչ ապականելով՝ մի



ծնրնդից միւսն է անցնում—«Նուազեցուցանեն զազգս մեզ»։ Մի բոպէ աչքդ դարձրու և տես թէ կեանքի մէջ ինչպէս է կատարւում սպառնալիքի հետևանքները։ Մի՞թէ արբեցողների, թուղթ խաղացողների... որդիքը չե՞ն վայելում հայրերի վարմանց պտուղները. ոչքա էլ նրանց նման գունատ այտեր և թալկացած մարմին չունե՞ն։ Վատնողի որդիքը միթէ աղքատ և մուրացկան չե՞ն լինում։ Աւազակի որդին, որի հօր անունը բանտի ցուցակում և ժողովրդի բերանում դրոշմուած է, մի՞թէ չէ վայելում հօր տգեղ անուան պտուղները։ Բոռ, վատահամբաւ հայրերի որդիքը ո՞րտեղ են ընդունուած, և ո՞րտեղից ասես, որ չեն հեռացնւում։ Այսպէս ամենուրեք չարը՝ չար հետևանքից անբաժան է։ Ուրեմն ամենայն մի հայր պիտի լաւ մտածէ, որ իւր սխալանքի պտուղները իւր որդիքը պիտի վայելեն։ Չարութեան նզովքը անընդհատ շարունակւում է սերնդէ սերունդ և ամեն ինչ ձգում, քաշում է իւր յանցանքի մէջ։ Պէտք է դողան, սոսկան, զարհուրեն ծնողները, երբ իմանան, որ ծնողների յանցանքը որդիքը պիտի քաւեն։ Հայրերի յանցանքը ոչ թէ միայն որդիքն են քաւում, այլև թոռները, ծոռները....։ Չափահասներից անչափահասներն են սովորում սիրել յանցանքը և ատել աստուածային պատգամները։ Երկրորդներն առաջիններից սովորում են սուտ խօսել, գողութիւն, քսութիւն, բողջախոհութիւն և անաստուածութիւն։ Պտուղը ծառի բնից հեռի չէ ընկնում։ Ապա ուրեմն աշխարհիս կարգն է, որ հայրերի յանցանքը որդիքը պիտի քաւեն։

Բայց չմոռանանք սպառնալիքի մէջ. «Ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց որդւոց՝ յերիս եւ ի չորս ազգս ատելեաց իմոց»ը։ Այս տողերը իրանց մխիթարական կողմը ևս ունին—որովհետև եթէ որդիքը բարեպաշտ են, Աստծու ճանապարհովն են ընթանում.... այդպիսեաց համար Եզեկիէլ մարգարէի խօսքը մխիթարական է. «Անձն որ մեղիցէ, նոյն եւ մեռցի. եւ որդի զհօր մեղս մի՛ առցէ, եւ մի՛ հայր առցէ զանիրաւութիւնս որդւոյ իւրոյ». (գլուխ ժը. 20.)։ Որովհետև եթէ որդիքը հայրերի յանցաւոր օրինակին չեն հետևում, ուրեմն եւ պատժի էլ չպիտի արժանանան։ Թէև այս այսպէս է, բայց և այնպէս կան յանցանքներ, որոց հետևանքը՝ բնութեան օրէնքին համաձայն, պէտք է որդիքը կրեն, զորօրինակ վատնող, չուայլ հօր զաւակը ստիպուած է աղքատ լինել։ Այն ժամանակ Աստծու դատաստանը այդպիսի բարի զաւակների համար պատիժ չէ, այլ փրկարար խաչ, որոյ (խաչի)

միջնորդութեամբ Աստուած հեռի է պահպանում որդւոց՝ ծնողաց անցանքից և առաջնորդում է դէպի յաւիտենական կեանք—այն կրակի մէջ, ուր յարդն անհետ այրւում է, ոսկին փառաւորապէս փայլում է: Քանի-Քանիսը հիւանդութեան, կարիքի ժամանակ ճանաչել են Աստծուն, որ «սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այսորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն» (Երեմիա լա. 3.): Միայն անաստուածներին է ուղարկում Աստուած պատիժը, իսկ իրան սիրողներին հայրական սիրով է սիրում:

Այսպէս ուրեմն Աստուած թշնամիների համար և՛ ահարկու է և՛ սիրող է. Նա ոչ թէ միայն նախանձոտ է պատժելում, այլև՝ բարի անում: Այս կէտը տանում է մեզ մասնաւորապէս դէպի

**Բ.** *Խնամում*, ուր ասած է՝ «Եւ առնեմ զողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց, եւ ոյք պահեն զհրամանս իմ»: Սպառնալիքի մէջ Աստուած երևում է որպէս «տէր», որից ամբողջ աշխարհը պիտի սոսկայ, իսկ խոստման մէջ ներկայանում է որպէս «Աստուած քո», որին մարդիկ անձնատուր պիտի լինին՝ գրաւած նրա անհուն սիրուց: Եթէ կամենում ես Աստծուն ճանաչել, սպառնալիքն ու խոստումը մէկ մէկու կողքին դիր—պատիժը մինչև երրորդ, չորրորդ սերունդը, իսկ շնորհը՝ «ի հազար ազգս»: Երբ այսպէս վարուես, կտեսնես, որ քո Աստուածը մեծ է պատժի ժամանակ, բայց աւելի մեծ է օրհնութեան ժամանակ—Նա չի սիրում անաստուածներին, այլ ցանկանում է «դառնալ ամբարշտին ի չար ճանապարհէն իւրմէ եւ կեալ» (Եզեկ. լգ. 11):

Մեր օրերումը ևս թէ սպառնալիքը և թէ խոստումն ապացուցած է գործով: Այսօր ևս բարի գործը բարի հետևանք ունի: Այսօր ևս վկայած է «զի օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոց» Սիրաք գ. 11): Բարեպաշտ որդիքը, որոնց համար բարի ծնողները ձեռները կարկառած աղօթել են, վարձատրուել են աստուածային շնորհով: Բարեպաշտի ընտանիքում աստուածային շնորհը փռած է—որ տալիս է նրանց հարստութիւն, ոյժ, զօրութիւն՝ աշխատելու....: Ինչպէս որ Աստուած Աբրահամի սերունդն օրհնեց՝ նրա բարեպաշտ ծնողների պատճառով, այսպէս էլ ցօրս Աստուած օրհնում է շատ մանուկների՝ իրանց հօր և մօր պատճառով: Աստծու ողորմածութիւնն անցնում է որդւոց՝ թոռներին—այսինքն ամենի վրայ: Աստծու ողորմածութիւնն ի հարկէ միշտ նրանում չի կայանում, որ իրան սիրողներին արտաքուստ վարձատրէ—հարստութիւն



կամ առատ չտեմարաններ պարգևէ, վասնզի հարստութիւնը միշտ երջանկացուցիչ չէ: Աստուած պարգևում է նաև հոգեկան խաղաղութիւն, հանգիստ խիղճ, որ մարդուս դարձնում է հարուստ՝ աղքատութեան ժամանակ, մխիթարում է տրտմութեան մէջ և վշտերի հանդէպ ուրախ է անում: Շատերի կեանքը թւում է մեզ վշտալից, զուրկ ուրախութիւնից, բայց հարցրէք բարեպաշտին, թէ Նա իւր աղքատ կարծեցեալ կեանքը կփոխէ արդեօք այն անաստուած հարստի հետ, որ լողում է առատութեան մէջ, որ ոչինչ կարիք չունի.... և դուք ամենուրեք կտեսնէք, որ յանցանքի հետ անէծքը, իսկ աստուածպաշտութեան հետ օրհնութիւն է կապուած: «Ոչ գոյ ուրախութիւն ամբարշտաց». (Եսայի խը. 22.), ասում է սուրբ գիրքը, իսկ «աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի՝ զարդիս եւ զհանդերձելոցն»: (I.Թ. Տմ. Թ. դ. 8):

Ահա սա է քո Աստուածը, արարիչ, ամենակարող և կառավարիչ երկրի՝ սրբազան օրէնստու համայն մարդկութեան—Նա և՛ քո, և՛ բոլորի Աստուածն է. Նա ամենուրեք ներգործող ոգին է. ամենին օրհնող սէրը, որ իւր ամենակարողութեամբ և իմաստութեամբ աշխարհն ու մարդկութիւնը կառավարում է. Նա քո քայլերն էլ է առաջնորդում, քո ապագայ երջանկութեան մասին ևս հոգում է: Ահա քո Աստուածը, որ իւր սուրբ սիրով ամենին իւր սուրբ կամքը յայտնեց, որպէսզի Նրա պատուիրանների կատարմամբ երկինքը երկրիս վրայ ունենանք, յուսոյ և սիրոյ մէջ երջանիկ լինինք:

Ահա սա է քո Աստուածը: Բայց դու ինչ ես: Դու արդէն գիտես քո Աստծու էութիւնը, բայց գիտես արդեօք և քո բնութիւնն ու զօրութիւնը. գիտես արդեօք թէ Աստուած իւր սէրն ինչու համար է ստեղծել և թէ ինչ պիտի անես՝ կամ ինչ կարող ես անել՝ որպէսզի ընդ միշտ այդ սիրուն արժանի լինես: Գիտես արդեօք թէ ինչ պիտի լինէիր և ինչ ես: Յայտնի է քեզ արդեօք այն բարձր կոչումը, որ աստուածային սէրը քեզ համար ծրագրել է. յայտնի է քեզ արդեօք այն խոր անդունդը, որի մէջ դու կարող ես գլորուել:

«Ծանիր զքեզ»—այս էր հեթանոսութեան ժամանակ մարդկային ձգտման նպատակը: Որքան առաւել մենք պիտի նոյնը մեր կեանքի նպատակ դարձնենք, որպէսզի մեր էութիւնը և կոչումը աւելի մօտիկ ճանաչենք, մենք, որ ի Քրիստոս մկրտուած ենք և նրան մեր

կեանքի առաջնորդ ենք ընտրած։ Որովհետև մենք մեզ նպատակ ենք դնում մարդոց էութիւնը ճանաչելու, սրանով ուրեմն մուտք ենք գործում մեր կրօնի ուսուցման երկրորդ գլխաւոր հատուածը։ Առաջին՝ գլխաւոր հատուածը ճառում էր այն մասին, թէ ով է արքայութեան տէրը, իսկ երկրորդը պիտի խօսէ, թէ ովքեր են արքայութեան քաղաքացիքը։

# ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏՈՒԱԾ

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ (ՄԱՐԴԸ)

Կրօնն է հաղորդակցութիւն՝ միաբանութիւն մարդոյ ընդ Աստուծոյ։ Ուրեմն կրօնին պատկանում են երկուսն էլ—Աստուած և մարդ։ Մինչև այժմ ծանօթացանք Աստուծու էութեան..... հետ, այժմ անհրաժեշտ է մարդու էութիւնը՝ ինչ լինելը քննելու։ Այսպէս ուրեմն նախ՝ պիտի ծանօթանանք, թէ մարդս ի՛նչպէս պիտի լինէր և ապա՝ թէ նա իսկապէս ինչ է*։ Ուրեմն քննենք նախ՝ մարդուս արժանաւորութիւնը, յետոյ՝ բնաւորութիւնը, ապա՝ կոչումն, իսկ ամենից վերջը՝ անկումն։

### Ա. ՄԱՐԴՈՒՍ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(*Կարդալ Սաղմոս Է.*)

«Տէր, տէր մեր, զի՜ սքանչելի է անուն քո»—այսպէս է սաղմոսում Աստծու գաղափարով ոգեւորուող երգիչը՝ կապոյտ երկնակամարը տեսնելիս, որով նա ծանօթանում է անչափելի, անկշռելի տիեզերքի՝ սրանով էլ Աստծու և մարդուս արժանաւորութեան հետ։

* Երևելի գիտնական Պասկալն այդ մասին ասում է. «Վտանգաւոր է ցոյց տալ, թէ մարդս կենդանիներին որքան նմանութիւն ունի՝ առանց ցոյց տալու նաև նրա մեծութիւնը։ Աւելի վտանգաւոր է ցոյց տալու մարդու մեծութիւնը առանց մատնանիշ անելու նրա ստորնութիւնը։ Իսկ ամենից վտանգաւորն է, երբ մարդուն երկուսն էլ չենք ցոյց տալիս։ Վերջապէս ամենից լաւն այն է, որ նրան ճանաչել տանք իւր մեծութիւնը և ստորնութիւնը»։



«Համբարձաւ մեծ վայելչութիւն քո ի վերոյ քան զերկինս» (Սաղմ. Ը. 2)։ Պարզ գիշերներին պատահե՞լ է քեզ երկինք նայել և նայելիս խելի մտածել ես—թէ քանի ժամանակ է, որ երկինքն այդպէս հաստատուն է՝ այդպէս բարձր, այդքան սքանչելի, որ ոչ ոք չի կարող ըմբռնել։ Արդեօք նկատել ես երկնքի վրայի ամպերը, որոնք ջրերի ծովեր են պարունակում իրանց մէջ, բայց և այնպէս արագ թռչում են մի տեղից միւսը, կարծես մաքուր լինին։ Խաղաղ գիշերը պատահե՞լ է քեզ նայել կապոյտ, անամպ երկինքին և տեսնել, թէ ինչպէս Աստծու ստեղծած լուսինն ու աստղերը զարդարում են երկնակամարը։ Յայտնի է քեզ արդեօք, թէ որ ժամանակից սկսած այն պէծին տուող աստղերը լուսաւորում են երկիրը. գիտես թէ նրանք ինչե՛ր կարող են քեզ պատմել երկրիս փոփոխութեան և ազգերի ճակատագրի մասին։ Արդեօ՞ք համարել, կշռել ես նրանց ծանրութիւնը. չափել ես նոցա հեռաւորութիւնը։ Յայտնի՞ է քեզ այն ոյժը և զօրութիւնը, որ բռնում է նրանց դատարկ տարածութեան մէջ և թոյլ չի տալիս վայր ընկնելու անյատակ անդնդի մէջ։ Յայտնի են քեզ այն փայլուն աստղերը, որոնք իրանց համար որոշուած ծրով ընթանում են, դրանք մի մի երկիրներ են, որոնք իրանց արևի չուրջն են պտտում և վերջիններս էլ աւելի մեծ արևի չուրջն են շրջան առնում։ Դրանք զատ-զատ աշխարհներ են անըմբռնելի մեծութեամբ, որոնք անսահման տիեզերքի մէջ լողում են—հազարաւոր տարիներ են պէտք մինչև նրանց ճառագայթի լոյսը մեր աչքին կհասնի։ Մի րոպէ մտքով սլացի՛ր դէպի վեր և ոտդ դի՛ր լուսնի վրայ, որտեղից երկիրը քեզ մի մեծ գնտի չափ կերևայ, սլացի՛ր դէպի արևը, որ երկրից մօտ 1½ միլլիոն անգամ մեծ է և որի վրայից մեր երկիրը մի փոքրիկ կէտ կերևայ տիեզերքի մէջ. սլացի՛ր այնտեղից էլի վեր և փորձի՛ր Ծիր կաթին աստղերը համարել, որոնց մէջ մեր արեգակը անպատի աւազի հատիկի մեծութեանն է հաւասարւում. էլի սլացի՛ր դէպի աստղերի այն խումբը, որոց ամենարնտիր հեռադիտակով զինուած աչքը հազիւ մառախուղի կէտեր է նկատում, ահա այնտեղից միլլիոնաւոր նոր աշխարհներ կտեսնես անհուն մեծութեամբ, անպատմելի հեռաւորութեան մէջ—այն ո՛վ պիտի լինի, որ ի խորոց սրտէ չբացագանչէ—մեծ է տիեզերքը, իսկ մարդս փոքր է։ Հպարտ, բայց և այնպէս հեզ, խոնարհ ձայնով խոստովանում ենք սաղմոսերգուի հետ. «Ո՞վ է մարդ, զի յիշես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արասցես դու նմա» (Սաղմ. Ը. 5.)

«Տեսից զերկինս զգործս մատանց քոց»։ Այո՛, քո ձեռաց գործերը, վասն զի դու, ո՛վ Աստուած, միլիոնաւոր աշխարհներ ես ստեղծել, որոնք հլու, հնազանդ ձևով քո որոշած ծրիով ընթանում են. կանուխ մտածած նախագծով նրանց համար ճանապարհ ես որոշել, այնպէս որ մինը միւսին չի կարող խանգարել։ Դու նրանց ոյժ և զօրութիւն ես տուել և օրէնքի ենթարկել, որոնք ամենուրեք կարգ և ներդաշնակութիւն են ստեղծում, մինչև անգամ այնտեղ ես, ուր կարճատես մարդը խառնաշփոթութիւն է միայն տեսնում։ Այս բոլորը դու ես արել, ո՛վ ամենակարող. քո հրամանովն է աշխարհս ստեղծուել, ինչպէս մի աւազի հատիկ։ Դու, ո՛վ յաւիտենական, որ միլիոնաւոր տարիներ առաջ կայիր և որից առաջ հազար տարին մի օր է։ Ո՛վ ամենուրեք, դու՝ որ Ծիր-կաթին վրայի բնակիչներին նոյնպէս մօտիկ ես, ինչպէս և մի բուռն հողի մէջ ապրող ճիճուին։ Դու ամենագէտ, որից առաջ ծածուկ ոչինչ չկայ։ Դու ամենիմաստ, որ ամեն ինչ զարմանալի կերպով ես կարգաւորել։ Ո՜հ, քո մեծութեան առաջն ինչ բան է մարդս, ինչ բան է մեր կարճ կեանքի օրերը քո յաւիտենականութեան հետ համեմատած։ Ի՞նչ է մեր տկարութիւնը քո ամենակարողութեան հանդէպ. մեր ստացուածքը քո հարստութեան հետ համեմատած. մեր կամքը քո զօրութեան առաջ ինչ բան է, ինչ։ Այո՛, ինչ բան է մարդս, եթէ ոչ մի բուռը հող, որին դու յիշում ես—«ո՛վ է մարդ՝ զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արասցես դու նմա»։

Բայց և այնպէս, ո՛վ Աստուած, դու յիշում ես նրանց՝ սիրում ես նրանց յաւիտենական սիրով և առաջնորդում ըստ քո իմաստութեան։ Չնայելով մարդու ստորութեան, խոնարհութեան՝ այնուամենայնիւ դու նրան այնքան բարձրացրիր. չնայելով նրա թուլութեան՝ զօրութեամբ պսակեցիր. չնայելով նրա կարօտութեան՝ գեղեցիկ յատկութիւններով զարդարեցիր, այնպէս որ նա երկրիս բոլոր արարածներից բարձր է։ Այո՛, դու նրան վեհութիւն և արժանաւորութիւն պարգևեցիր, այնպէս որ նա իրաւամբ կարող է անուանուել թագ և պսակ բոլոր արարածների։ Հէնց դրա համար էլ սաղմոսերգուն ասում է. «Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո, փառօք եւ պատուով պսակեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց». (Սաղմ. ը. 6.)։ Դու նրան տէր ստեղծեցիր բոլոր արարածների վրայ, բոլոր արարածներին տէր և իշխան լինելու համար՝



վեհութիւն և արժանիք ընծայեցիր մարդուն և այդ յատկութիւններով տէր և իշխան է նա բոլոր արարածների վրայ։

**Ա.** *Մարդս տէր պիտի լինի բոլոր արարածներին* (տ. 7.)։ Մարդս իւր հոգու ինքնագիտակից կարողութեան շնորհիւ՝ կարողանում է ընկճել ձիուն, եզանը, փղին, առիւծին և առհասարակ այն ամենին՝ ինչ որ իրանից շատ և շատ զօրեղ է։ Մարդս օդի բարձրութիւնից թռչնին վայր է բերում, իսկ ծովի խորքից ձկանը վեր քաշում։ Սուրբ գրոց առաջի թերթի վրայ արդէն մարդու համար այդ բանը գուշակած է (Ծննդոց ե. 18.) և հէնց այնտեղ պատմում է մեզ (տ. 29.), որ Աստուած նրան արտօնութիւն է տուել ամենայն կենդանու իւրեան յատուկ անունը տալու, այսինքն նրա դիրքին և նշանակութեանը համաձայն տեղ որոշել աշխարհիս մէջ։

**Բ.** *Մարդս տէր պիտի լինի ամբողջ երկրին*։ Թէ մարդս ընդունակ է այդ բանին, նրա իւրաքանչիւր քայլափոխը բնութեան մէջ ապացոյց է դրան։ Ճահիճները և թունաւոր մնացորդները նրա ձեռքի մէջ ծաղկոցներ և արգաւանդ երկիրներ են դառնում։ Տաք, ջերմ և աւազոտ-անապատների մէջ, ուր ոչ մի բուսականութիւն չկայ, մարդու հանճարը երկրի խորքից աղբիւրներ է բղխեցնում։ Ուր ջրերը սպառնում են երկրներ, տէրութիւններ հեղեղելու, այնտեղ մարդըս նրա ընթացքը փոխում է։ Երկնաբերձ լեռները ծակում է և խորը անդունդները հարթում, հաւասարում է։ Ծովերի ափերը պարիսպներով է սանձում, իսկ երկրի խորքից հանում է իրան կարեւոր պիտոյքները։ Արևին նկարիչ է դարձնում (ֆօտօգրաֆ), կայծակին իւր գրագիրը (տելեգրաֆ), շոգուն՝ իրան առաջնորդը, ղեկավարը (լոկոմոտիւ), օդին՝ նաւավար (օդապարիկ)։ Ծանր, կարծր երկաթին վազեցնում է և լող տալ է տալիս (զրահակիր նաւեր), իսկ չիկացած օձերքների մէջ սառոյց է պատրաստում։ Այսպէս մարդս բնութեան ոյժերն իրան հպատակեցնում է և իշխում է այն ամենին, ինչ որ Աստուած նրա ոտքի տակն է դրել։

**Գ.** *Մարդս տէր պիտի լինի երկրային բոլոր բարիքներին*։ Որպէս ազատածին տէր, մարդս պիտի շրջէ երկրի վրայ և երբէք չպիտի թոյլ տայ, որ երկրիս բարիքներն ու վայելքները, հարստութիւնն ու փառքը ստրկացնեն իրան։ Նա պիտի վայելէ նրանց՝ առանց իւր սիրտը նրանց նուիրելու։ Նա պէտք է փող ունենայ և ոչ թէ փողը նրան։ Ազնիւ հպարտութեամբ պիտի արհամարհէ երկրիս անցաւոր իրերը և երբէք չպիտի ցոյց տայ, թէ նա զրկուեց այս

կամ այն երկրաւոր իրից: Անցէք, գնացէք—պէտք է ասէ մարդս—երբ ես ձեզ կորցնում եմ, դրանով ասած չէ, թէ իմ խաղաղութիւնն ու իմ Աստծուն էլ եմ կորցնում: Ձեր կորստից չէ կախուած իմ երջանկութիւնը: Հեռէ՛, ես առանց ձեզ ես կարող եմ կառավարուել. դո՛ւք իմ սպասաւորն էք միայն, իսկ ես եմ և կմնամ ձեր տէրը. ձեր առաջ ես չեմ խոնարհի, այլ՝ ամենի տիրոջ, որ երկրիս վրայ միմիայն ինձ է ստեղծել ըստ իւր պատկերի:

Դ. *Մարդս ամենից առաջ ինքը իւր տէրը պիտի լինի:* Եթէ մինը գահի վրայ նստէ, միլիօնաւոր մարդոց իշխէ, բայց իրան չկարողանայ տիրել, այնպիսին Աստուածային մտքով ասած, տէ՞ր չէ: Եւ եթէ նա բնութեան բոլոր ոյժերը և ամբողջ երկիրն իրան հպատակ դարձնէր, բայց իւր կրքերին տիրել չկարողանար, այլ ընդհակառակն՝ գերի լինէր իւր ցանկութիւններին, այդպիսին Աստծու առաջ ոչինչ է: Մարդուս արժանաւորութիւնը կայանում է նրա մէջ, որ նա կարողանայ հրամայել իրան. «Մի՛ թագաւորեսցէ մեղք ի մահկանացու մարմինս ձեր, հնազանդել ցանկութեանց նորա», (Թ. առ. Հռմ. զ. 12.): Ինքնագիտակից ոգեկան կարողութեամբ, բարոյական ազատ կամքով, իրան սուրբ սիրով տիրելն ու իշխելն է այն նշանները, որոնք մարդուս մեծութիւն են պարգեւում. ահա սոքա են նրա ճշմարիտ վեհութիւնն ու արժանիքը, որով նա միւս բոլոր երկրաւոր արարածներից որոշւում է:

Ուստի երախտագիտական զգացմամբ նայում ենք դէպի յաւիտենականը, որ մեզ այսպիսի վսեմ յատկութիւններով է զարդարել: Այո՛, զարմանալի է երկիրը, և՛ս զարմանալի տիեզերքն է, իսկ ամենազարմանալին մարդն է—նա և՛ կախումն ունի, և՛ ազատ է, և՛ խոնարհ և՛ վեհ, և՛ մահկանացու և՛ անմահ: Դրա համար ես մանկան առաջին թոթովանքը առաջին նշանն է, որ նա գիտակցաբար է տիրում իրան, այդ թոթովանքը մի տեսակ փառաբանութիւն է առ բարձրեալին: Դրա համար ես ոչ թէ միայն երկնքի աստղերն են պատմում Աստծու փառքը և լռելեայն, համր լեզուով յայտնում նրա ձեռաց գործը, այլև մարդս և նա ամեն բանից առաջ փառաբանում է Արարչին, որ իրան այդպիսի հրաշալի յատկութիւններով է զարդարել, որից զուրկ են երկրաւոր միւս արարածները: «Տէր, Տէ՛ր, զի՛ սքանչելի է անուն քո յամենայն երկրի». (Սղմ. ը. 2.): Այո՛, բոլոր երկրներում—և՛ հիւսիսային բեւեռում, ուր սառցի լեռներն իրար վրայ են կուտակուած, և՛ հարաւի անապատում, ուր կանաչ ովազիսը



ճանապարհորդին զովութիւն է պարգեւում, և այնտեղ, ուր Մասիսը իւր սանդարամետային ձայներով չիկացեալ լաւան դէպի երկինք է շպրտել, և՛ այնտեղ, ուր Արաքսը Հայաստանի մարմանդներն է ոռոգում—ամենուրեք բնակւում են մարդիկ, որոց դու ես ստեղծել և փառք ու պատուով զարդարել: Մարդիկ քեզանով ամեն ինչ են, իսկ առանց քեզ ոչինչ են: Դրա համար ես ամենքը խոստովանում են, չնայելով որ տարբեր գոյն և հաւատ, սովորութիւն և լեզու ունին, միաբերան և միախորհուրդ կոչում և ասում են. «Տէր, Տէր, զի՛ սքանչելի է անուն քո»:

## Բ. ՄԱՐԴՈՒՍ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Մարդուս մեծութիւնը և արժանաւորութիւնը կայանում է նրա մէջ, որ տիրում է բոլոր արարածներին: Բայց ճշմարիտ տէր լինելու համար աւելի բան է հարկաւոր՝ քան թէ շատերը կարծում են, որովհետև իսկական տիրապետը ոչ թէ միայն իմաստութեամբ և ճարպիկութեամբ պիտի զինուած լինի, այլև սրբութեամբ, արդարութեամբ և պիտի ունենայ այն սէրն՝ առանց որին ամենայն մի տիրապետ բռնակալ է, ամեն մի տիրապետութիւն՝ բռնակալութիւն է: Այս ոգո՛վ տէր լինելու ընդունակութիւնն էլ Աստուած մարդուն է շնորհել և այս նպատակի համար նրան վեհ բնաւորութիւն պարգեւել, որով և զանազանւում է բոլոր երկրաւորներից: Այս վեհ բնաւորութեան մասին ս. գիրքն այսպէս է պատմում. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի. եւ եղև մարդն հոգի կենդանի» (I. Մովս. բ. 7): Ըստ այսմ մարդս կրկնակի էակ է—նա իբրև հողից ստեղծուած՝ մարդ է, իբրև ոգի ունեցող, հրեշտակաց դասին է պատկանում: Աներևոյթ արարածների համեմատութեամբ մարդս ամենաստորին աստիճանի վրայ է կանգնած, իսկ երևելիների հետ համեմատած՝ ամենաբարձրն է: Դրա համար էլ իրաւամբ են ասել, թէ մարդս սերւում է, սկիզբն է առնում և՛ վերից և՛ վարից—մարդս մի անձնաւորութեան մէջ և՛ բնական է, և՛ աստուածական, և՛ երկնաւոր, և՛ երկրաւոր, և՛ մարմնական, և՛ ոգեկան, և՛ երևելի, և՛ աներևոյթ, և՛ մահկանացու, և՛ անմահ: Ուշադրութեան արժանի է մարդուս մարմնի ստեղծագործութիւնը—մարդս ստեղծուեց հողից և կրկին ի հող է դառնում: Բայց անհամեմատ ուշադրութեան արժանի է նրա հոգու

յառաջ դալը (և ոչ ստեղծուելը), որովհետև համաձայն սուրբ գրքի պատմութեան, Աստուած երկրային նիւթերից չվերցրեց, այլ՝ փչեց նրա մէջ իւր ոգին, այնպէս որ մարդուս ոգին Աստծու ոգու մի կտորն է: Թէ մարդս անմահ է, այդ մասին ապացոյցներ շատ կան: Ինչքան որ Աստծու ոգին կարող է անցանել, անհետանալ, նոյնքան էլ մարդու ոգին:

Ոգին Աստուածանից է և դրանով էլ մարդս բոլոր կենդանիներից գերազանց է: Քննենք մի առ մի այն գերազանցութիւնները, որոնք մարդուս զանազանում են կենդանիներից:

Կենդանին իւր գլուխը դէպի գետին ունի խոնարհեցրած և երկրի մասին միայն հասկացողութիւն ունի, իսկ մարդս բարձր է նայում, նրա գլուխը դէպի երկինք է ուղղած: Աստուած մարդուն ուղիղ հասակ տուեց, որոշեց նրա ծագումն ու վերջը: Երկրիս վրայ և ոչ թէ երկրի համար պիտի ապրէ նա: Դրա համար էլ մարդս երկիրը իւր ոտքի տակն ունի, իսկ երկինքը՝ իւր վերը և իւր առաջ: Այնտեղ են ուղղւում մարդու հայեացքները, որոնք երբեմն արտասուք կարող են շարժել, բայց երբեմն էլ այնպէս խիստ և այնքան զօրաւոր, որ նոյն իսկ կենդանական աշխարհի թագաւորը խոնարհւում է նրա առաջ: Բայց Աստուած ինչ է դրել մարդուս հենց աչք կոչուած մասնի մէջ: Նրա նման ոչ մի ծաղիկ չէ ծաղկում, ոչ մի աստղ այնպէս պարզ չէ փայլում. նրա նման ոչ մի ծով այնպէս խորը չէ: Եւ որպիսի զօրութիւն է ծածկուած թաքուցած այդ աչքերի արտասուքի մէջ: Արտասուքի մէջն է մարդուս ամենախորը վիշտը և ամենամեծ ուրախութիւնը: Միայն մարդը կարող է արտասուել և ծիծաղել: Կենդանին զգացողութեան այս ներքին արտայայտութիւնից զուրկ է: Ո՜րպիսի մեծ տարբերութիւն անբան կենդանու սառը կերպարանքի և զգացմունքով լի ազնիւ մարդու դէմքի մէջ: Պարզ ամրան գիշերուան մէջ գեղեցիկ է աստղալից երկինքը, բայց ամեն բանից գեր ի վեր է ազնիւ անձի կերպարանքը, որից ուրախութիւն, սէր կամ գութ... է թափւում: Մի այլ զանազանութիւն՝ որ կայ մարդու և կենդանեաց մէջ, այդ մարդուս մարմնի տոկունութիւնն է: Իւրաքանչիւր կենդանի իւր հայրենիքն ունի, իսկ մարդս կարող է, ինչպէս հիւսիսային բևեռի, նոյնպէս և հասարակածի մօտ ապրել: Որովհետև ոչ թէ երկիրը, այլ երկինքն է նրա հայրենիքը, դրա համար էլ միևնոյն է նրա համար, թէ երկրիս որ մասումն է ապրել: Դրա վրայ պիտի աւելացնել մի այլ գերազանցութիւն, այն է՝ ձգտել կատարելագործուելու, որ մարդուն միայն յատուկ է: Սոխակը դեռ ևս այն երգն է երգում, ինչ որ դրախտում երգում էր. ծիծեռնակն այսօր իւր բոյնն այնպէս է շինում, ինչպէս հազարաւոր տարիներ առաջ. սարդը ցօրս իւր ոստայնն այնպէս է հիւսում, ինչպէս և հարիւր տարի սրանից յետոյ կհիւսէ: Մարդս միակն է, որ կատարելութեան մի աստիճանից միւսին է անցնում—կառուցանում, մանում, հիւսում է միշտ և միշտ կատարելագործելով: Մարդուս ձեռքը ինչ հրաշալիք ասես, որ չի գործում: Ո՜րպիսի ընդունակութիւններ են ցոյց տալիս առ հասարակ մարդուս անդամները: Եւ որպիսի անգնահատելի առաւելութիւն է մարդուս լեզուն: Ո՜րպիսի քնքշութիւն և զօրութիւն, սէր և մտերմութիւն կարող է նա արտայայտել լեզուի այս կամ այն շեշտով, որոնք, ինչպէս մի աղբիւրից, բղխում են նրա ոգու խորքերից: Ո՜չ մի երաժշտութիւն այնքան քաղցրահնչիւն չէ. ոչ մի արարած այնքան յուզող և շարժող չէ. ոչ մի սոխակ այնպէս դայլայլել չի կարող, որքան կենդանի լեզուն: Լեզուն բանականութեան խօսուն, կենդանի վկան է, սա Բարձրեալի ամենաազնիւ, ամենավսեմ բարիքն է, ընծան է, շնորհն է: Մտքով նա կարող է Աստծուն ճանաչել, իսկ բանականութեամբ՝ ընդունել նրան: Խիղճը՝ Աստծուն ճանաչելու ամենաիսկական միջոցը, որ իւր օրէնքները մարդուս սրտի մէջ գրել է, ևս մի փաստ է, որով մարդս տարբերւում է կենդանիներից: Եւ վերջապէս մարդուս ազատ կամքը, որով նա բնազդման շղթաները, կապանքները սանձահարում է և բոլոր զօրութիւնները, որոնք նրան ստիպում, բռնադատում են Աստծուց բաժանուելու, կարող է դիմադրել այդ բոլորին: Կենդանին զուրկ է այդ յատկութիւններից: Աշխարհի զօրաւորները կարող են նրան սպանել, մահացնել, բայց ստիպել՝ երբէք: Եւ ինչպէս որ մարդը (որովհետև ինքն իրան զսպել գիտէ) իրան կարող է ազատ պահել մի ուրիշի ազդեցութիւնից, այսպէս էլ գիտէ ինքն իրան սանձել, հեռի մնալ մոլորութիւններից և թերահաւատութիւններից, նախավճիռներից, նախանձից, չարախնդութիւնից, ստախօսութիւնից և յանցանքից—մի խօսքով նա կարող է իրան ազատ պահել այն ամենից, ինչ որ իրան ճնշում է, ինչ որ երկրիս վրայ խլում է իւր ազատութիւնը: Այս բանը կարող է նա, այս բանը պիտի անէ նա, որովհետև Աստծու պատկերի նման է ստեղծուած:

Մարդու մասին ոչինչ այնպէս գեղեցիկ և վսեմ չէ ասուած, ինչպէս I. Մովս. ա. 26. 27-ում (երեք անգամ նրա համար է կրկնւում, որպէսզի լաւ ի միտ առնուի) «Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան, եւ իշխեսցէ ձկանց ծովու եւ թռչնոց երկնից եւ անասնոց եւ ամենայն երկրի եւ ամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի: Եւ արար Աստուած զմարդըն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա»:

Մարդս Աստծու պատկեր պիտի լինի—այդ նրա բնութիւնն է: Բայց ի՞նչ է նշանակում պատկեր Աստուծոյ: Հէնց «պատկեր» բառը մեզ յիշել է տալիս, որ խնդիրն այստեղ ոչ թէ հաւասարութեան, այլ նմանութեան մասին է: Մարդս չի կարող Աստծուն հաւասար լինել, որովհետև մարդու ոգին անսահման, անեղ չէ Աստծու ոգու նման, նա կապուած է որոշեալ մարմնի, որոշեալ տարածութեան, որոշեալ ճանաչողութեան և կամեցողութեան հետ. մարդս ի սկզբանէ գոյութիւն չէ ունեցել յաւիտենական Աստծու նման. Նորա նման անփոփոխ չէ, այլ ենթարկուած է որոշ աստիճանների զարգացման: Ինչպէս մարդուս պատկերը (լուսանկարը) մարդս ինքը չէ, այսպէս էլ մարդս Աստուած չէ: Եթէ «ի պատկերի Աստուծոյ» խօսքը մեզ յիշեցնում է Աստծու նմանութիւնը, այժմ հարց է ծագում, թէ ի՞նչումն է կայանում այդ նմանութիւնը: Նախ՝ այդ նմանութիւնը մարմնոյ վերաբերութեամբ չէ, վասնզի Աստուած մարմին չունի—«Հոգի է Աստուած» (Յովհ. դ. 24): Այդ նմանութիւնը հոգեկան աշխարհում պիտի փնտռել: Աստծու պատկերը նախ՝ նրանումն է կայանում, որ մենք ոգեկան խառնուածք ունինք: Պէտք է նկատել, որ Աստծու պատկերը մեր մէջ մեռած չէ (ինչպէս և ամեն մի մարդու լուսանկար), այլ կենդանի է և գիտակ, և մարդս այդ նմանութեան մասին գիտէ: Այս հոգեկան բնութեան վրայ են հիմնուած բոլոր բարձր գերազանցութիւնները, որոնք ցարդ նկատեցինք, այն ամեն վսեմն ու ազնիւը, որով մարդս երկրիս միւս ստեղծուածներից զանազանւում է: Եթէ մարդըս ոգի չունենար, նրան կպակասէր ամեն մի արժանաւորութիւն: Հոգի ունենալը բաւական չէ Աստծու նման լինելու համար, մարդուս անհրաժեշտ է և բարոյական յատկութիւն, որով մենք իսկական տէր ենք դառնում Աստծու ստեղծածներին: Այս կէ-



տում ես պիտի յիշենք նմանութեան մասին, միայն այն տարբերութեամբ, որ Աստուած բարոյականութեան կատարելութիւն է, իսկ մարդս իւր երկրաւոր կեանքի ընթացքում մաքառելով հազար ու մի արգելքների դէմ, հազիւ կարողանում է բարոյականութեան այս կամ այն աստիճանին հասնել: Աստուած ծովի է նմանում, մենք մի կաթիլ ենք, որի մէջ արևը իւր ոգին թափանցում է (այդ կաթիլը այնուամենայնիւ կմնայ որպէս ծովի ջուր, որպէս մի կաթիլ ծովի ջրից): Աստուածային այդ յատկութիւնները, որոնք մարդու մէջ ես կան՝ հետևեալներն են: Աստուած ամենիմաստ է, նա ամեն ինչ ամենալաւ ձևով է մտածել և կարգաւորել. նա բարոյական ամենալաւ նպատակի համար՝ բարոյական ամենալաւ միջոցն է ընտրում: 1, Ի՞նչ բանում կարող ես դու նրան նման լինել, երբ նա քեզ իւր նմանութեամբ է ստեղծել (համեմատել Թ. ա. Կողս. գ. 10):—Աստուած սուրբ է և արդար, Աստուած ամենամեծ բարոյական բարութիւնն է: Ըստ այսմ 2, ի՞նչի մէջն է կայանում Աստծուն նմանիլը (համեմատել I. Թ. Պետ. ա. 16. Թ. ա. Եփս. դ. 23. 24:): Աստուած սէր է-և ամենին էլ բարութիւն է անում: 3, Ի՞նչ բանում դու կարող ես ցոյց տալ, որ Աստծուն նման ես (Թ. ա. Եփս. ե. 1. 2. Ղուկ. զ. 36): Իմաստութիւն Սողոմոնի բ. 23. գրած է. «Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան, եւ ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա...» Արտաքոյ մեր եղած իրերը յաւիտենական կեանք չունին—կաղնին դարեր ապրում է, լեռները հարիւրաւոր տարիներ գոյութիւն ունենալոց յետոյ՝ վախճան էլ են ունենում: Այսպէս Աստուած է, իսկ մա՞րդս: Ի՞նչումն է կայանում մարդուս աստուածանմանութիւնը: Դարձեալ՝ Աստուած երանելի է (I. Թ. ա. Տմթ. զ. 15) և մեզ ես ի սկզբանէ անտի երանութեան համար է որոշել (II. Թ. ա. Թսղ. բ. 13. համեմատել I. Թ. ա. Թսղ. ե. 9): Ընդհանրապէս մարդոց մէջ ո՞րն է Աստծու պատկերը:

Այսպէս—մենք գտանք, որ Աստծու պատկերը ոչ թէ միայն ա, մարդուս հոգեկան բնութեան մէջն է, ոչ թէ բ, նրա երկրիս վրայ ամեն ինչ տիրապետելումն է, այլև գ, իմաստութեան, սիրոյ, սրբութեան, արդարութեան, անմահութեան, երանութեան և մտաւոր ունակութեան մէջն է: Աստուած մարդուն այսպիսի մեծութեան համար է ստեղծել. այս նպատակի համար ես նրան ընդունակութիւն է տուել լինելու այն, ինչ որ պիտի լինի: Աստծու պատկերը՝ այդ ամենաբարձր բարութիւնը, ամենա-

թանկագին ընծան առաւելապէս արտափայլում է մարդուս բանականութեան և խղճի մէջ, այսինքն այն ընդունակութեանց մէջ, որով նա Աստծուն ճանաչում է և սիրում է կամ ինչպէս սովորութիւն է ասելու—մարդուս ազատ կամքի մէջ: Մարդս իւր բանականութեամբ, խղճով և ազատ կամքով անհամեմատ բարձր է անբան արարածներից: Մարդս իւր բարձր հոգևոր բնութեամբ (աստուածանմանութեամբ) երկրիս վրայ եղածներից ամենին էլ գերազանցում է:

Ում շատ է տուած՝ նրանից էլ շատ է պահանջւում: Նախ՝ մի՛ մոռանար, որ քո ճշմարիտ բնութիւնը պահանջում է քեզնից պատկեր Աստուծոյ լինելու, քո հոգու մէջ Աստծու շունչ պիտի փնտռել: Մի՛ թոյլ տուր, որ յանցանքը խլէ քեզնից այդ վսեմ բարոյական բնութիւնը և ձգէ քեզ փոշու մէջ: Երբ գայթակղիչները քեզ մերձենան և կամենան հեռացնել առաքինութեան ճանապարհից՝ այն ժամանակ արհամարհանքով ցո՛յց տուր քո թիկունքը և ապացուցի՛ր, որ դու ծնած չես յանցանքին ստրուկ լինելու: Մի՛ մոռանար, որ աշխարհիս մէջ աւելի ունայնութիւն՝ քան թէ պատիւ, փառք է գտնւում: Ճշմարիտ փառքը նրա մէջն է կայանում, որ դու Աստծու պատկերը քո մէջ միշտ և հանապազ անարատ և անբիծ պահես. Աստծու և մարդկանց առաջ անպատիժ շրջես և իրաւանց շաւղից երբէք չհեռանաս: Դու մի՛ մոռանար երբէք, որ Աստծուց ես սերւում: Յարգի՛ր Աստծու պատկերը քո մէջ:

Պատուի՛ր, յարգի՛ր Աստծու պատկերն այլև քո մերձաւորի մէջ: Ի շնորհս բարձրագոյն բնութեան՝ մենք ամենքս է աստուածային սերնդից ենք (Գործք առ. ժէ. 28.): Այնտեղ զանազանութիւն չկայ իշխանի և մուրացկանի, քրիստոնէի և հեթանոսի, մանկան և ծերի մէջ: Ինչ տխմար և մինչև անգամ անբարոյական վարմունք է ոմանց կողմից արհամարհել աղքատներին և չինականի հետ յարաբերութիւն ունենալը ամօթ համարել: Մի՞թէ Աստուած ամենին էլ իւր պատկերի նման չէ ստեղծել: Մի՞թէ աղքատը թերի մարդ է: Ի՜նչպիսի մեծ յանցանք են գործում Աֆրիկայում, երբ մարդոցը ստրուկ են դարձնում, իբրև իր վաճառում են և այսպէս մարդկային արժանաւորութիւնը մինչև անասնի աստիճան ստորացնում: Նոքա, որոնք իրանց ծառաներին, աղախիններին ծանրաբեռնում են անտանելի աշխատանքներով՝ մեղանչում են մարդկային արժանաւորութեան դէմ: Ո՜րպիսի մեծ սխալանք են գործում այն իշխանները,



տէրութիւնները Աստծու պատկերի դէմ, երբ իրանց բարի օրինակով իրանց ստորադրեալ ժողովրդին բարի օրինակ չեն դառնում. իրանց հպատակների հոգւոյ, մտաւոր աչքը չեն բաց անում դպրոցներ հիմնելով, որպէսզի հեռացնեն այն խաւարը, որ սաւառնում է Աստծու պատկերի վրայ և սպառնում վնասել նրան: Ո՜րպիսի մահացու յանցանք են գործում ընկերվարականները (սոցեալ—դէմոկրատ), որոնք քարոզում են թէ մարդկային գոյութիւնը զգայական բաւականութեան մէջ պիտի որոնել և սրանով էլ ընտանիքի, տէրութեան, եկեղեցւոյ բարոյական հիմքն են կործանում, մարդկային արժանիքը անասնականացնում: Այդպիսիք՝ չունեւորներին գրգռում են ունեւորների դէմ. տգէտ, մանուկ ամբոխին զինում են ամեն մի կարգ ու կանոնի, նոյն իսկ գիտութեան, կրօնի դէմ՝ և այդպէս ստահակ են դարձնում դատելու կարողութիւնից զուրկ ամբոխին և թըշուառականի որդի դարձնում: Դոքա բոլորն էլ Քրիստոսին իրանց օրինակ են վերցնում: Քրիստոս ոչ մի տեղ այդպիսի սրբազան բարկութեամբ չէ դատել այդպիսիներին, ինչպէս Մատթ. ժը. 6, «Որ ոք գայթակղեցուցանէ զմի ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատալոց . . .»: Նոյն իսկ սամարացու առակը կենդանի օրինակ է մեզ համար—այնտեղ, ուր մինը մեր օգնութեան կարօտ է, չպիտի հարցընենք, բարեկամ՝ թէ թշնամի, հեթանոս՝ թէ հրէայ, աղքատ՝ թէ հարուստ, բարի՝ թէ չար է: Աւետարանում ասած է. «Այր մի»: Եւ որովհետև անօգնական, փոշու մէջ արիւնաշաղախ ընկած օտարականը մի մարդ էր, ուստի և Աստուծոյ պատկեր էր կրում իւր դէմքի վրայ, հէնց այս պատճառով էլ սամարացին գթաց նրան: Այս առակով Քրիստոս մեզ մատնանիշ է անում և ասում. «Գնա՛, դու էլ նոյնպէս արա՛»: Նրանի՛ ամենքն էլ Քրիստոսին օրինակ վերցնեն և առանց հարցնելու անօգնականի ով լինելն՝ այնպէս օգնութեան աջը կարկառեն: Քրիստոսի օրինակը ձեր սրտերում կենդանի պահեցէք, որովհետև նա Աստծու ամենակատարեալ պատկերն է: Նա մարդ էր, արդար և կատարեալ. փորձութեան մատնուեց, բայց առանց յանցանք գործելու փորձութիւնից դուրս եկաւ: Նա ճշմարիտ մարդ էր և ճշմարիտ Աստուած: Նա թողել է մեզ համար մի օրինակ, որին մենք պիտի հետևենք:

## Գ. ՄԱՐԴՈՒՍ ԿՈՉՈՒՄՆ

Եթէ ճանապարհորդի մէկը մոլորուէր ուղևորութեան ժամանակ և չգիտենար թէ ինչու է շրջում և կամ ինչ է նրա շրջելու նպատակը, անշուշտ մենք վատ կարծիք կկազմէինք նրա հասկացողութեան մասին: Եւ կամ՝ եթէ աշակերտը երկար տարիներ դպրոց յաճախելիս լինէր, բայց երբէք իրան հարց տուած չլինէր—ինչու համար եմ ես այստեղ. ինչ պիտի լինեմ ես վերջը»—անշուշտ այս վարմունքը թեթևամտութեան նշան կհամարուէր: Տխուր իրողութիւն կլինէր ամենիս համար, եթէ հաստատութեամբ հարցրած չլինէինք—ինչու համար ենք ապրում երկրիս վրայ. Աստուած ինչու համար է մեզ բարձրագոյն բնութիւն տուել. որն է մեր նպատակը. որն է մեր կ ե ա ն ք ի կ ո չ ո ւ մ ն:

Վերը տեսանք՝ Աստուած մարդուն տէր նշանակեց երկրաւոր բոլոր ստեղծուածների վրայ: Այս տէր լինելը նրա ա ր ժ ա ն ի ք ն է: Մենք տեսանք՝ մարդուս արժանիքը ոչ թէ միայն նրա կեանքի արտաքին երևոյթների մէջն է, այլ և նրա ի պատկեր Աստուծոյ ստեղծուած լինելու՝ հոգու մէջն է տպաւորած: Այս էլ նրա բ ն ո ւ թ ի ւ ն ն է: Բնական վարմունք է, երբ, իրի բնութեանը նայելով՝ եզրակացութիւն ենք անում նրա նպատակի կամ կ ո չ մ ա ն մասին, այսինքն թէ նա ինչ բանի համար պիտանացու կարող է լինել: (Օրինակ—դանակի սրութիւնից եզրակացնում ենք՝ կտրելու համար է. հացի բնութեանը նայելով՝ ասում ենք, նա ուտելու համար է. սիզաւէտ դաշտերին նայելով՝ ասում ենք՝ այստեղը յարմար է խաշնարածութեան....:) Այսպէս էլ մարդուս բ ն ո ւ թ ե ա ն ը նայելով պիտի կարողանանք ասել, թէ ինչ է նրա նպատակը, ինչ է նրա կեանքի կոչումն: Մի իրի կոչումը նկատւում է ոչ թէ միայն նրա բնութիւնից, այլ և այն զ օ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ի ց, որ Աստուած դրել է այդ բնութեան մէջ: Օրինակ—արևի կոչումն է մոլորակներին լուսաւորել և ջերմութիւն տալ, դրա համար էլ Աստուած նրան զօրութիւն է տուել այս կոչման հասնելու: Մեր երկրի կոչումն է իւր վրայի բնակիչներին կերակուր, հանդերձ և բնակարան ընձեռելու: (Հարևանցի հայեացք ձգելով՝ կտեսնենք՝ որ երկիրը հարուստ է այնպիսի զօրութիւններով, որոնք ընդունակ են իւր վրայի բնակիչների կարիքները հոգալու: Կարճ ասած—Աստծու ս տ ե ղ ծ ա ծ ի ր ե ր ի կ ո չ ո ւ մ ը կ ա ր ե լ ի է ճ ա ն ա չ ե լ ա յ ն զ օ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ի ց, ո ր դ ր ո ւ ա ծ է ն ր ա ն ց մ է ջ: Այս միևնոյն օրէնքը և մարդոց համար է: Նա



էլ ունի որոշեալ թիւ զօրութեանց, որոնցով ընդունակ է իւր կոչման հասնելու: Լաւ նկատիր—այդ ամենը Աստուած տ ո ւ ե լ է մարդուն—ինչպէս որ մարդս անկարող է իւր հասակի վրայ մի կանգուն աւելացնել, այսպէս էլ չի կարող ի ն ք ն իրան ոյժ և ունակութիւն պարգևել: Ամեն ոք պէտք է Պետրոսի հետ կրկնէ. «Ինչ որ եմ, այդ բոլորն էլ Աստծու շնորհիւն է»: Աստուած մարդոց չար բան չէ տալիս, ինչ որ մեզ տալիս է, բոլորն էլ բ ա ր ի է: Այն զօրութիւնները, որ նա մեզ շնորհել է, բոլորն էլ յ օ գ ո ւ տ մեր են ծառայում—դրանց ճիշտ և կանոնաւոր գործադրութեան մէջն է կայանում մարդուս կոչումն: Ը ս տ ա յ ս մ—մ ե ր ն պ ա տ ա կ ը կ ա մ մ ե ր կ ե ա ն ք ի կ ո չ ո ւ մ ն ա յ լ խ օ ս ք ո վ ո չ ա յ լ ի ն չ՞ է, ե թ է ո չ մ ե ր բ ն ո ւ թ ե ա ն մ է ջ դ ր ա ծ Ա ս տ ծ ո ւ զ օ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ը կ ա ն ո ն ա ւ ո ր՝ ն ե ր դ ա շ ն ա կ ձ և ո վ գ ո ր ծ դ ն ե լ: Նրանց գործադրութիւնից է կախուած մեր ինչ լինելը—նայելով թէ այդ զօրութիւնները ինչ կերպով ենք գործ դնում, ըստ այնմ էլ պատկեր աստուածութեան ենք կամ ոչ: Այդ զօրութիւնների գործ չդնելը կամ սխալ գործադրութիւնը հեռացնում է մեզ մեր կոչումից: Ըստ այսմ ուշադրութեան առնենք 1, Աստծու տուած ո ւ ն ա կ ո ւ թ ի ւ ն ն ե ր ի և զ օ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ի գործադրութիւնը և 2, այն մ ի ջ ո ց ն ե ր ը և ա ռ ի թ ն ե՛ ր ը, որոնք մեզ պարգևած են Աստուածանից:

1. Մ ա ր դ կ ա յ ի ն ո յ ժ ե ր ի, զ օ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ի զ ա ր գ ա ց ո ւ մ ն: *ա.* Կրթիր, զարգացրու մարմնի ոյժերը՝ կարողութիւնները, (որովհետև նա է կայան և գործի աներևոյթ հոգու: Հոգին ոչ թէ միայն մարմնի մէջն է երևան գալիս այս կեանքում, այլ և ներգործութեանց և վայելչութեանց երկրաւոր ասպարիզում՝ մարմնի միջնորդութեամբ է աշխարհս վայելում և նրա վրայ ներգործում:) Առանց առողջ մարմնի՝ չկայ առողջ հոգի, մարմնի տկարութիւնները ազդում են հոգու վրայ և յառաջացնում են հիւանդոտ զգայութիւններ, սխալ մտապատկերներ, կեղծ հայեացքներ և մինչև անգամ անազնիւ նախապաշարներ: Երբ մարմինը տկար է, հոգուն պակասում է ազատ վստահութիւն, տոկուն ոյժ և կարևոր համբերութիւն: Հէնց այս հիման վրայ անհրաժեշտ է մարմնի առողջութեան վրայ մ ե ծ ուշադրութիւն դարձնել: (Իմաստութիւն Սիրաքայ ը. 15. 16. «Առողջութիւն եւ առոգութիւն լաւ է քան զամենայն ոսկի, եւ մարմին կարող՝ քան զմեծութիւն անչափ: Ո՛չ գոյ մեծութիւն լաւ քան զառողջութիւն մարմնոյ, եւ ո՛չ գոյ ուրախութիւն քան զխնդութիւն մարմ-

նոյ։) Ուստի այն ամենն, ինչ որ խանգարում է մարմնի առողջութիւնը, պիտի հեռացնել։ Օրինակի համար՝ ծուլութիւն, անգործութիւն, անժուժկալութիւն, անչափաւորութիւն ուտել խմելում, աշխատելում և վայելչութեանց մէջ։ Զգրգռել մարմինը յանկարծական երկիւղով կամ բարկանալով չվատնել ազնիւ կարողութիւնները, անզգոյշ չլինել թռչելիս, լողալիս....։ Ինչ վնաս մի անզգոյշ րոպէում գործւում է, նոյնը կեանքի ընթացքում դժուար է լինում ուղղել (Առակք Սող. իդ. 9)։ Սխալանքից զգոյշ լինելը բաւական չէ, այլև պէտք է այն գործել՝ ինչ որ արդար և իրաւացի է։ Երբ մարմինը կարևոր չափով խնամւում է, կանոնաւոր և ներդաշնակ ձևով է կազմակերպւում—այդ տեսակ սնուած մարմինը հոգու համար հնազանդ գործիք է դառնում, այն ժամանակ մարմնի՝ զարգացման ընդունակ անդամները (աչք, ականջ, ձեռ, ոտք, կուրծք, ձայն) մեծամեծ օգուտներ կարող են տալ՝ թէ յօգուտ մարդկութեան և թէ ի փառս Աստուծոյ։ Կատարելագործութիւնը հնարաւոր է գործնէութեամբ և վարժութեամբ միայն։ Ուրեմն ոչ մի անգամ ծուլութիւն մի՛ արա, այլ ամեն ժամանակ աշխատասէր եղի՛ր. անձնատուր մի՛ եղիր անգործութեան, այլ աշխատի՛ր, գործի՛ր, քանի որ լոյս է....։ Ինչպէս որ մագնիսը գործ դնելով աւելի զօրանում է, այնպէս էլ մարմինը վարժութեամբ ամրապնդւում է։ Ուրեմն վարժի՛ր քո մարմնի անդամները. վարժի՛ր նրանց անընդհատ, սակայն հետզհետէ։ Չափազանց պահանջ մի՛ դիր նրա վրայ. աշխատանքից յետոյ հանգստացի՛ր։ Ամեն բանի մէջ չափաւոր եղի՛ր։ Զպիտի չատ քնքոյշ պահել մարմինը, այլ փոքր ինչ խիստ կեանքի վարժել, որպէսզի ի պահանջել հարկին, վնասակար ազդեցութեանց կարողանայ դիմադրել։ Մարմնի քնքշութիւնից վնասակար հետևանքներ են ծնում, իսկ խստութիւնը բարերար ազդեցութիւն է ունենում։ Ոչինչ այնպէս ցաւալի չէ՝ քան այն հանգամանքը, երբ հոգին բարին, գեղեցիկն է պահանջում, իսկ քնքշացած մարմինը անկարող է լինում բարի ճանաչածն ի կատար ածելու։ Յիշի՛ր որ քո մարմինը մի տեսակ տաճար պիտի լինի սուրբ Հոգու համար (I. Թ. ա. Կրնթ. «Եթէ ոչ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն որ ի ձէնջ»)։ Մարմինը արհամարհել, անուշադիր թողնել, միևնոյն է թէ հոգին արհամարհել, անուշադրութեան մատնել։ Երբ բնակարանը մաքուր չէ, տանտէրն իրան լաւ չէ զգում և երբ մարմնի հոգատարութիւնը (լուանալ, սանդրել, մաքուր հագնուել) զանցառութեան է տրւում, հոգին ևս



չէ ունենում կարևոր աշխուժութիւնը։ Ուրեմն աշխատի՛ր մաքուր լինել, խնայել քեզ, չքնքշացնել մարմինը, վարժել և զարգացնել։ Եթէ դու ուշադրութեամբ հետևես, մեծ հետևանքի կհասնես (զօրօրինակ Դեմոսթէնէս)։ Նայի՛ր գունատ դէմքերին, դեղնած երեսներին, թառամած այտերին, դրանք բոլորն էլ անհոգ են գտնուել մարմնի հոգատարութեան խնդրում—դրանք կենդանի, խօսուն վկաներ են, որոնք կրկնում են, թէ չափաւոր, հոգատար պէտք է լինել։ Քո մարմնի վրայ ուշադրութիւն դարձրու, բայց չափազանցութեան չըհասցնես։ Յիշի՛ր, որ մարմինը հոգու համար գոյութիւն ունի և հոգին, որպէս տանուտէր, աւելի հոգատարութեան պէտք ունի՝ քան թէ անցաւոր բնակարանը, որ առանց հոգուն դիակ է, մի բուռը հող է։ Այս կէտը առաջնորդում է մեզ դէպի

բ. Պէտք է զարգացնել հոգեկան կարողութիւնները։ Աստուած քեզ մտածող հոգի է տուել։ Նրա զարգացման շնորհիւ դու պիտի կարողանաս ճանաչել քեզ, աշխարհն և Աստծուն։ Ինչպէս ամեն զօրութիւն, այնպէս էլ մտածողութեան զօրութիւնը վարժութեան միջոցով զօրանում է։ Ուրեմն ամեն օր նոր նոր մտապատկերներ ժողովի՛ր, երբէք մի՛ ծուլանար մտածելու, այլ միշտ և միշտ ազնիւ զէնքերով սխալանքի դէմ պատերազմի՛ր։ Ուրեմն մտածելը քո կոչման առաջին նպատակը պիտի լինի։ Ինչ որ քո մտածող ոգին հասուն ըմբռնողութեամբ ընդունել է, աշխատի՛ր նոյնը և գործադրել։ Խելացի և բարոյական գործը ամենագեղեցիկ զարդարանքն է իւրաքանչիւր անհատի համար։ Բարին կամենալ, ազնիւը կատարել—դոքա կեանքի համար գեղեցիկ նպատակ են։ Սովորութիւն արա՛ քեզ համար խղճմտանք և պարտք ճանաչելու զգացումով գործել. հետզհետէ աշխատի՛ր հոգեկան յատկութիւններդ բարելաւել և երբէք չյոգնել բարին և գեղեցիկը գործելու—դոքա էլ ազնիւ մարդու յատկութիւններն են։ Այսպէս՝ օր ըստ օրէ կատարելագործուի՛ր, որպէսզի կոչմանդ հասնես։ Սա երկրորդ պահանջն է։ Ճշմարիտը մտածելու, ազնիւը կամենալու համար մի երրորդ կէտ ևս անհրաժեշտ է։ Աստուած մարդուն պարգևել է ուրախ, զուարթ, գեղեցիկն ըմբռնելու և ընդունելու ոգի, որ նրան երջանիկ կարող է դարձնել, եթէ նա յօժար և բարի կամք ունենայ կատարելու։ Ինչո՛ւ համար է պարզ հասկացողութիւնը և զօրեղ կամքը, երբ դրանց հետ սիրտը չպիտի միանայ։ Ուստի քո կեանքը մի՛ դառնացրու տրտունջներով և տխրութեամբ, նախանձով և ատելութեամբ, բար-

կութեամբ և վրէժխնդրութեամբ, ընդհակառակն կեանքի կարճ օրերի ընթացքում աշխատիր վարժելու քեզ սիրոյ և բարեգործութեան մէջ: Ուր սէր է բնակւում, այնտեղ է կարեկցութիւնը, երախտագիտութիւնը. . . ., որովհետև սէրն արմատ է բոլոր ազնիւ զգացմանց և պատուանդան ամեն տեսակ երջանկութեան: Երեք բան կայ, որոնց կատարումը մեզ երջանիկ է դարձնում—պէտք է ըմբռնել, աշխատել ուրիշից լաւ լինել. եթէ այս երկուսը արինք—հետևանքը երջանկութիւն է: Այս երեքն անբաժան են իրարից—բաւական չէ իմաստուն լինելը՝ իմաստութեամբն էլ բարի՝ առաքինի պէտք լինենք—իմաստութեամբ և առաքինութեամբ անշուշտ երջանիկ կլինենք: Մի չորրորդ կէտ այս երեքի թագն ու պսակն է. Մեր գիտենալիքի ամենաբարձրը Աստծու մասին պիտի լինի: Մեր ամենալաւ կամեցողութիւնը նրա պատուիրանների կատարելն է. մեր զգացմունքների ամենաազնիւը դէպի նա սէր ունենալն է: Ըստ այսմ երջանիկ է այն անհատը, որ մանկական վստահութեամբ յանձնում է իրան Աստծու հայրական սիրուն՝ այդպիսի անհատը մանկական զգացմամբ կարող է ասել—դու իմն ես, ես քոնն եմ, ուրիշ ոչ ոքի չեմ կամենում պատկանել: Մեր կոչման ամենաբարձր նպատակը այն պիտի լինի, որ ունենանք կրօնական զգացման խաղաղութիւնը:

Մարդկային զարգացման փայլն այսպէս է ճառագայթում մեր մէջ: Սակայն բաւական չէ, որ մենք իմաստուն, առաքինի և սրանով էլ երջանիկ լինինք. մեզ վրայ պարտք կայ նաև մեր մերձաւորին աստուածային կոչման նպատակին փոքր առ փոքր մօտեցնելու: «Որ (Աստուած) զամենայն մարդիկ կամի զի կեցցեն». (I. Թ. ա. Տմթ .բ. 4.): Աղքատներին կերակրելը, մերկերին հագցնելը, հիւանդների վրայ հոգ տանելը գեղեցիկ բան է: Բայց աւելի գեղեցիկ է մոլորեալներին խրատելը, յանցաւորներին ուղղելը. իսկ ամենից գեղեցիկը՝ սրտերն ազնուացնել, մարդոց բաղդաւորացնել և ոգիներ երջանկացնելն է: Այսպիսի գործերով ոչ թէ միայն մեզ, այլև ուրիշներին ես միջոց տուած կլինինք մարդկային կոչման հասնելու: Այս տեսակ գործ կատարելու համար Աստուած մեզ մարմնական և ոգեկան զօրութիւն է տուել: Երանի նրանց՝ ովքեր այս ոյժը, զօրութիւնը զարգացնում և յօգուտ բարու են գործ դնում:

Եթէ մենք ցանկանում ենք այդ զօրութիւնն ու ունակութիւնները, որոց գործադրութեամբ մենք մեր կոչման նպատակին ենք հասնում՝ զարգացնել, չպիտի մոռանանք—



2. Օգուտ քաղելու այն հանգամանքներից և միջոցներից, որ շնորհել է մեզ Աստուած մեր կոչման հասնելու: Որպէսզի մարմնի զօրութիւնները զարգացնենք, մեզ տուած է ուտելիք և ըմպելիք, լոյս և օդ, ջերմութիւն և սառնութիւն, հանգիստ և բնակարան, ուրախութիւն և սէր՝ առ հասարակ այն ամենը, ինչի որ մենք կարիք ունինք: Բայց որպիսի առիթներ է ներկայացնում մեզ Աստուած մեր հոգեկան զօրութիւնները փոքր առ փոքր իւր նպատակին մօտեցնելու համար: Նախ մեզ շրջապատող բնութիւնը գրգռում է մեր զգայարանքները և ոգին դէպի գործ, շարժում. նա տալիս է մտապատկերներ, ծանօթութիւններ, որոնց մշակմամբ ոգու զօրութիւնը հետզհետէ զարգանում է: Բնութեան պարգևած բարիքները ու վայելչութիւնները, ինչպէս և նրա չարիքն ու թշուառութիւնները մեզ համար մի տեսակ փրկարար միջոցներ են, որոնք ստիպում են մեզ մտածելու, հարկադրում են երբեմն գիւտեր անելու և սրանով մեր ներքինը լցնում են երջանիկ զգացումներով—նոքա մղիչ զօրութիւն ունին մեր յառաջադիմութեան գործում: Մեր ունեցած սեպհական հաճելի և անհաճոյ ծանօթութիւնները, ինչպէս և մեր ճակատագիրը մեր զարգացման գործում մեծ դեր են խաղում: Դրանք են մեր հոգւոյ զօրութիւնները՝ խոր և կենդանի կերպով շարժողը, մեր ուշադրութիւնը լարողը. դրանք վարժում են մեզ՝ մեր սեպհական անձը սանձելու. ուղղում են մեր հայեացքը դէպի Բարձրեալը. մեր ներքինը լցնում են մաքուր կրօնական զգացմամբ և այսպէս զանազան ճանապարհներով առաջնորդում են դէպի մեր կոչման նպատակը: Մեր հոգեկան կողմերի զարգացնող մի երրորդ միջոցն էլ մարդկանց ընկերական, միաբանական կենցաղավարութիւնն է: Եթէ այսպէս չլինէր, այն ինչ որ մարդս բնութեան կամ ճակատագրի (գլխից անցածի) ձեռքով ուսել էր, իւր հետ էլ գերեզման կտանէր. այն ժամանակ ամենայն ոք ի նորոյ պիտի սկսէր ուսանել, գիտել . . .—ամենքն էլ նախնական ստոր զարգացման աստիճանի վրայ կանգնած կմնային: Մարդիկ ընկերական կեանք վարելով՝ մինը միւսից ուսանում է նրա գիտցածը—օրինակ որդին՝ հօրից, աշակերտն՝ ուսուցչից, ապագայ դարը՝ նախորդ դարերից, ներկայ շրջանը՝ անցեալից. այսպէս մի սերունդ միւս սերունդի ուսերի վրայով է դիմում դէպի մարդկութեան կոչման նպատակը: Ինչ որ մինը չգիտէ, միւսը կարող է. ինչ որ սէրը, խաղաղութիւնը չի վճռում, պատերազմն է որոշում. ուր անհատի զօրութիւնը տկարա-

նում է, ընկերութիւնները, հասարակութիւններն են գործ դնում իրանց օժանդակութիւնը և այսպէս մարդկութիւնը աստուածային ղեկավարութեամբ շարունակ ձգտում է դէպի իւր կոչումը։ Այն առիթներից և միջոցներից մինն էլ, որոնցով իւրաքանչիւր անհատ և մարդկային ընկերութիւն կամաց կամաց իւր կոչման նպատակին է մերձենում, այն մեծ և արտաքոյ կարգի ընդունակութիւններով օժտուած անձինքն են, որոնք Աստծու համար իբրև ընտրեալ անօթ են ծառայում և իւր նախագծերը և դիտաւորութիւնները յօգուտ մարդկութեան գործադրում։ Աստուածաշունչ սուրբ գիրքը, ինչպէս և մասամբ ընդհանուր պատմութիւնը յիշում են մեզ այդ տեսակ մեծ և ընդունակութիւններով զարդարուած անձնաւորութիւններ, որոնք իրանց գեղուն և խոր զգացմամբ, հաստատ կամքով, հոգեկան հարստութեամբ ժամանակակիցներին գերազանցել են. ժամանակից բարձր են կանգնած եղել և շատ դարերի համար առաջնորդ հանդիսացել։ Այս մեծ ուսուցիչներից պիտի ուսանենք, թէ ինչ բանի պիտի ձեռն արկանենք և ինչից խորշենք, որովհետև նրանք մարդկային կոչման առաջ կենդանի են. Նրանք մեզ համար օրինակ են. Նրանք՝ առաջնորդ, մենք՝ հետևողներ, Նրանք՝ ղեկավարներ, մենք՝ աշակերտներ այն գծի վրայ, որ մեզ դէպի նպատակ է տանում։ Իսկ անհամեմատ ամենից բարձրը, ամենից գերազանցը Տէրն մեր Յիսուս Քրիստոսն է, որ իւր քարոզութեամբ և վարդապետութեամբ, իւր կրած վշտերով և մահով մեր կոչման ամենահաստատ ճանապարհը ցոյց տուաւ—այն, ինչ որ մենք ամենքս պիտի լինինք—պատկեր Աստուծոյ։ Ինչ որ նա յայտնել և քարոզել է, նոյնը դպրոցում և եկեղեցում սաներին և չափահասներին քարոզւում է, որպէսզի նրանք Աստծու նման իմաստուն և սուրբ լինին, նրա նման սէր և հաւատարմութիւն ունենան։

Այսպէս մենք տեսնում ենք, որ Աստուած մեզ ոչ թէ միայն ոյժ և զօրութիւն, այլև հարուստ առիթ և միջոցներ է տուել մեր կոչման նպատակին հասնելու։ Նա իրանն արել է։ Այժմ մեզ է մնում, որ մենք էլ մերը՝ պնդութեամբ կատարենք—մեր սեպհական ոյժերն անկախ գործ դնենք. ուրիշների ասածներից և խրատներից օգտուենք, թէ անցեալի և թէ ներկայի զարգացուցիչ հանգամանքները փրկարար ձևով գործ դնենք մեզ համար և այսպէս օրէցօր դէպի մեր կոչման նպատակը՝ դէպի մեր հոգու և մարմնի ներդաշնակ և բնական զարգացումն ընդառաջ դիմենք։



Այսպէս գիշեր ցերեկ անխոնջ կերպով աշխատի՛ր միշտ և միշտ կատարելագործելու քեզ։ Երբէք անգործ մի՛ մնար, որովհետև անգործութիւնը յետադիմութեան նշան է։ Երբէք չհաւատաս, որ դու քո նպատակին հասել ես։ Դու մի՛ յուսահատուիր, եթէ մահն առ երևոյթս ընդհատէ քո զարգացման ընթացքը։ Մի այլ աշխարհում կշարունակուի նոյնը, ինչ որ մենք այստեղ սկսեցինք։ Այստեղի կատարածը նախապատրաստութիւն է, իսկ կատարելութիւնն այնտեղ պիտի լրանայ։ Մարդուս ծննդեան հետ սկսւում է նրա զարգացումն։ Բայց նրա շարունակութիւնը հասնում է մինչև յաւիտենականութիւն, ուր մարդս երջանիկ հոգիների հետ փոքր առ փոքր առաջնորդւում է դէպի իւր կոչման բարձրութիւնը, որ Աստծուն միայն յայտնի է։

## Դ. ՄՐԴՈՒ ԱՆԿՈՒՄԸ

### 1. ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Եթէ մի հայեացք ձգենք դէպի անցեալը՝ կտեսնենք որ Աստուած մեզ այնպիսի արժանաւորութիւն է պարգևել, որից զուրկ են միւս բոլոր արարածները—նա տուել է մեզ բնութիւն՝ հոգւով իրան նման լինելու. շնորհել է մեզ կոչումն՝ երկրաւոր բոլոր արարածներից բարձր լինելու։ Որքան խորն ենք թափանցում աստուածային սիրոյ մէջ՝ նոյնքան փոքր ենք զգում մեզ, նոյնքան գալիս ենք այն համոզման, որ արժանի չենք նրանից վայելած սիրուն։ Այն պատուիրանները, որ Աստուած մեզ տուել է, յաճախ մոռացել ենք. այն արժանաւորութիւնը, որ նրա սէրն է տուել մեզ, ոչ միշտ յարգել ենք. այն կոչումը՝ որ նրա իմաստութիւնը՝ մեր փրկութեան համար որոշել է, չենք կատարել։ Մենք չենք եղել այն՝ ինչ որ պիտի լինէինք։ Մեր հոգին տէր պիտի լինէր, մեղաց ծառայ է դարձել։ Սրբութիւնը պիտի սիրէինք, մեղաց գիրկն ընկանք։ Այսպէս անհանգստութիւնն ու վրդովմունքը, ցաւն ու վիշտը, կարիքն ու մահը մեզ բաժին եղաւ, այնպէս որ մենք ես իմաստնի հետ կարող ենք գանգատուել. «Զբաղումն մեծ հաստատեալ է ամենայն մարդոյ, եւ լուծ ծանր ի վերայ որդւոց Ադամայ» (Սիրաք խ. 1.)։

Թէ սրանք ճշմարտութիւններ են, միաձայն վկայ կարող են լինել սուրբ գիրքը, աշխարհիս պատմութիւնը և մեր սեպհական ծանօթութիւնները։ Աստուածային պատկերը ոչ ոք սուրբ և անարատ չպահպանեց իւր մէջ, այլ ամեն ոք արատաւորեց և խեղաթիւ-

րեց նրան։ Այդ զօրութիւնը, ինչպէս սուրբ գիրքը վկայում է, մարդոց տարաւ դէպի կործանումը, ստորացրեց և մինչև անգամ փոշու մէջ գլորեց և այսպէս յանցանքը տէր դարձաւ և ապականութիւն սերմանեց մեր շ ու ր ջ ը, մեր մ է ջ։ Այժմ իրաւամբ հարցնում ենք— այդ ինչպէս պատահեց։ Արդ՝ որտեղից ծագեց այդ հակադրութիւնը առաքինութեան ու մահուան, ազատութեան և ստրկութեան, երջանկութեան և ապերջանկութեան մէջ։ Սուրբ գիրքը Մովս. I. բ. 8. 9. և 16. 17. մանաւանդ գլուխ գ. այդ մասին լիակատար պատասխան է տալիս։ (Կարդալ)։

Նախ՝ ի նկատի առնենք այս պատմութեան պ ա ր ու ն ա կ ու թ ի ւ ն ը և ապա դրա խորին ն շ ա ն ա կ ու թ ի ւ ն ը։

Ըստ բ. գլխի առաջին մարդիկը երջանիկ կեանք էին վարում։ Մարդկութիւնը իր մանկական գեղեցիկ օրերը դրախտի մէջ անցկացրեց, որին սուրբ գիրքը Ե դ ե մ (այսինքն ուրախութիւն) է անուանում։ Առաջին մարդոց համար երկիրը պարտիզի էր նմանում։ Պարտիզի մշակումն նրանց սրտին սիրելի պարապմունք էր (տ. 15)։ Ծառերը ծաղկում էին, թռչունները դայլայլում էին ճղների վրայ և առուակների եզերքին։ Աստծու հետ ապրելը նրանց ամենամեծ երջանկութիւնն էր։ Աստծու ձայնը նրանց ականջին էր հասնում, իսկ սէրը՝ սրտին։ Հոգսն ու կարիքը, ցաւն ու հիւանդութիւնը օտար էին նրանց. ապրում էին որպէս անմեղ մանուկներ, որոնց անծանօթ էր դեռ ես աշխարհիս վիշտն ու ցաւը—կեանքի դառնութիւններից տեղեկութիւն չունէին։ Դրա համար էլ ամօթը—յանցանքի այս զգացումն, նրանց մաքուր հոգուն դեռ ես անծանօթ է։ Թէ որն է բարին և որն է չարը, այդ նրանք չգիտէին—ա ն մ ե ղ վիճակի մէջ էին։

Բայց անմեղութիւնը դեռ ես ս ր բ ու թ ի ւ ն չէ։ Անմեղութիւնը սրբութեան կենդանի սկիզբն է։ Երբ մարդս պատերազմում է յանցանքի դէմ և նրան յաղթելով՝ առանց յանցանքի յառաջ է գընում, այն ժամանակ միայն անմեղ վիճակից սրբութեան է անցնում, որ անմեղութիւնից նրանով է զանազանւում, որ մարդս թէև գ ի տ է, թէ որն է չարը և որն է բարին, բայց չ ն ա յ ե լ ո վ դայթակղեցուցիչ չարժառիթներին և հանգամանքներին, այնուամենայնիւ գիտակցաբար խ ո ր շ ու մ է չարից։ Անմեղ վիճակը աստուածային պարգև է, իսկ սրբութիւնը մարդուս ջանքով ձեռք բերուած ազատ գործերից մինն է։

Որպէսզի մարդս դէպի այս սրբութիւնն ընթանայ, Աստուած



երեք միջոցներ է որոշել—1. մարդուն տուաւ ա զ ա տ  կ ա մ ք, այսինքն ընդունակութիւն՝ ազատ ընտրութիւն անելու բարու և չարի մէջ. 2. մարդուն տուաւ օ ր է ն ք, որպէսզի իւր սահմանները ճանաչէ և աստուածային սիրոյ զօրութեան ներքոյ ընկճուիլ ուսանէ, և 3. մարդու համար փորձութիւն է ուղարկում, որպէսզի անմեղութիւնը քննութեան առնուի, հաւատարմութիւնը փորձուի, իսկ սրբութիւնը վճարուի, կատարուի։ Ազատ կամքի մէջ—մենք այս բանը առաջուց մի անգամ տեսանք—գտանւում է մարդուս ամենաբարձր առաւելութիւնը, իսկ նրա սխալ գործածութիւնը՝ մեծ վտանգ է ըսպառնում։ Վերջին հանգամանքը ոմանց առիթ տուաւ կարծելու, թէ աւելի լաւ կլինէր, եթէ Աստուած մարդուն ազատ կամք տուած չլինէր, իսկ դրա փոխարէն ս տ ի պ է ր նրան բարիք գործելու։ Պէտք է կարծել, որ այն ժամանակ թէև թշուառութիւնն ու չարութիւնը կըվերանային, բայց միւս կողմից պիտի խոստովանել, որ մարդս զրկուելով բարոյական ազատութիւնից, այլևս մարդ չէր լինի, տէր չէր լինի արարածների վրայ, այլ բնութեան ստրուկ, այնպէս՝ ինչպէս ծառը կանաչում է, ծաղիկը ծաղկում, թռչունները բուն են շինում, ամենն էլ ըստ իրանց տեսակի և այս բոլորը կատարւում է հազարաւոր տարիներ շարունակ նոյն ձեւով՝ առանց սխալի, բայց առանց մի օգտի, անշահ։ Ի՞նչպէս պէտք է մարդս՝ առանց ազատ ընտրութիւն անելու, իբրև մի բարոյական էութիւն մտածուի։ Առանց ազատութեան պատասխանատուութիւն չկայ. առանց պատասխանատուութեան առաքինութիւն չկայ. առանց առաքինութեան՝ սրբութիւն. առանց սրբութեան կատարելագործութիւն չկայ (Մտթ. ե. 48. «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»). առանց կատարելագործութեան արժանիք չկայ, ուրախութիւն չկայ։ Դրա համար ևս Յեսուայ որդի Սիրաքն իրաւամբ բարոյական ազատութիւնը հիմնաքար է համարում մարդկութեան կրօնական կեանքի («Ինքն ի սկզբանէ արար զմարդ, եւ եթող զնա ի ձեռս կամաց իւրոց։ Եթէ կամիս, պահեսցես զպատուիրանս եւ հաւատս առնել հաճութիւն։ Եդ առաջի քո հուր եւ ջուր, ուր եւ կամիս ձգեա զձեռն քո։ Առաջի մարդոյ կեանք եւ մահ, եւ զինչ հաճոյ թուեսցի իւր, տացի նմա»)։ Ի՞նչպէս կդատէիք այն մարդու առաքինութիւնը, որ գողութեան համար դատապարտուած է հինգ տարի բանտ նստելու. չորս տարի նստելուց յետոյ, հինգերորդում պատիժը թեթևացնելու խնդիր է ներկայացնում այն պատճառաբանութեամբ,

որ նա ահա չորս տարի է չէ գողանում: Մի՞թէ սա ապացոյց է նրա ազնւութեան: Այստեղից պարզ նկատելի է, որ առաքինութիւնը ազատութեան մէջ միայն երևակայել հարկաւոր է, և թէ այն մարդը միայն Աստծուն հաճելի կարող է լինել, որ գործում է բարին՝ չնայելով որ չարը ևս կարող էր կատարել: Անհնազանդութեան հնարաւորութիւնը ներկայ պէտք է լինի մարդու համար: Այսպէս և փորձութիւնն անհրաժեշտ է, նա չպիտի պակսի: Փորձութեան մէջ մարդուս ուժերը զօրանում են, հաւատարմութիւնը ամրապնդւում է: Այն մանուկը, որ ցանկանում է քայլել, պիտի ենթադրենք որ կարող է և մինչև անգամ պէտք է ընկնի. բայց վայր ընկնելու երկիւղը մի՞թէ պիտի ստիպէ հօրը չցանկալ, որ մանուկը փորձէ ման գալ իւր սեպհական ոտներով: Եւ կամ—որովհետև մինը գողութիւն է արել, իշխանութիւնը հրաման արձակէ բոլոր մարդոց կողպել տանը, որպէսզի գերծ պահէ գողութիւնից և փորձութիւնից: Ո՛չ, ազատութիւն և փորձութիւն պէտք են:

Մենք պէտք է պատերազմենք, եթէ ցանկանում ենք յաղթել. պիտի յաղթենք, եթէ ցանկանում ենք պսակ ընդունել: Վատարի է այն զինուորը, որ յաղթութեան յոյս չէ տածում: Ե՞րանի նրան՝ ով փորձութեանն այնպէս է դիմադրել, ինչպէս Քրիստոսը դիմադրեց. (Մատթ. դ. 1....):

Մինչև այժմ ասածներից պարզ երևում է, որ մեղանչելը, անհրաժեշտութիւն չէ, ուստի և նախամարդոց փորձութեան պատմութիւնը կարող ենք իսկական պատկերով տեսնել: Այդ բանը երեք մասի կարելի է բաժանել: Առաջին մասը (I. Մովս. գ. 1—6.) նկարագրում է առաջին մարդոց փորձութիւնը՝ անկումն —մեղանչումն: Երկրորդ մասը՝ (տ. 7—13.) սրա հետևանքը, իսկ երրորդը՝ (տ. 14—24.) Աստծու նշանակած պատիժը:

Ա. Տուն 1—6: Նախ պատմում է որ մի օձ եկաւ և փորձ արաւ Եւային՝ թոյլ կողմին Աստծու պատուիրանները պահելու վերաբերութեամբ մոլորեցնել, խաբել: Փորձիչն ույժ գործ դնելու կարեւորութիւն չէ տեսնում, այլ խորամանկութիւն, և մտածած խորամանկութիւնը կրկին ձևով է գործ դնում: Նախ՝ փորձում է կասկած յարուցանել Եւայի մէջ Աստծու խօսքի վերաբերութեամբ («զի՞ է զի ասաց Աստուած»): Սրանով նա թուլացնում է Աստծու տուած պատուիրանի զօրութիւնը—պատուիրանին՝ երրորդական, իսկ արգելանքին առաջնակարգ նշանակութիւն է տալիս: Երբ լսում



ենք, Աստուած ասաց. «Թէ յամենայն ծառոց որ իցեն ի ներքս ի դրախտի այդր՝ մի՛ ուտիցէք», այնպէս թւում է մեզ՝ որպէս թէ Աստուած ամեն ինչ արգելել է, էլ ոչինչ չէ թոյլատրել: Երբ Եւան փորձ արաւ Աստծու խօսքը պաշտպանելու, փորձիչը երկրորդ յարձակումն է անում: Օձը փորձ է անում ուրանալու, որ յանցանքն առանց պատժի է մնում. («ոչ եթէ մահու մեռանիցիք») և Աստծուն որպէս ստախօս է ներկայացնում: Օձը շատ վարպետ է, խնդրին այն ձեն է տալիս, որպէս թէ Աստուած նախանձոտ է, չի կամենում, որ մարդիկ երջանիկ լինին («զի գիտէր Աստուած թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր եւ լինիցիք իբրեւ զԱստուածս ...»): Օձն այս միտքը ևս յայտնում է, թէ Աստծու արգելքը նրա համար է, որ նա չի ցանկանում մարդիկ իւր նման լինին: Այսպէս ծնում է մարդուս մէջ մեծամտութիւն՝ լինել Աստծուն հաւասար: Այս մեծամտութեամբ Եւան, որ առաջ Աստծու խօսքը պաշտպանում էր, սկսաւ այժմ խորամանկ փորձչի խօսքերին լսել—արգելեալ ծառի պտղին սիրով նայեց և գտաւ, որ «զի բարի էր ծառն ի կերակուր եւ հաճոյ աչաց հայելոյ»: Այսպէս յառաջացաւ չար ցանկութիւն, իսկ չար ցանկութիւնն անմիջապէս մղեց նրան դէպի չար գործ: Եւան անցաւ Աստծու պատուիրանից, առաւ պտուղն ու կերաւ և մարդուն էլ տուաւ նրանից: Յանցանքը գործուել էր, գործողութիւնը կատարուել:

Բ. Տուն 7—13: Կատարուած գործողութիւնն անհետևանք չմնաց: Երկու յանցաւորների մէջ յառաջ է գալիս ամօթ՝ յանցանքի զգացումն: Աստծու ձայնը նրանց խղճի մէջ հանգիստ չէ տալիս նրանց: Ամօթին միանում է երկիւղը (Ադամը կնոջ հետ թաք է կենում). երկիւղին՝ մտաւոր կուրութիւնը (երկուսն էլ թաք են կենում՝ այն էլ ամենագէտ Աստծուց). կուրութեանը՝ ստախօսութիւնը («լուայ զձայն քո ի դրախտի աստ եւ թաքեայ, քանզի մերկ էի»), իսկ ստախօսութեանը՝ անգթութիւնը: Եւան յանցանքը օձի վրայ ձգեց: Ադամը՝ մասամբ կնոջ, իսկ մասամբ Աստծու վրայ («կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառոյ անտի եւ կերայ»):

Գ. Տուն 14—24: Յանցանքին հետևում է մասնաւոր պատիժները, որ արդարադատ Աստուածը մեղաւորներին տալիս է: Ամենից առաջ Աստուած պատժում է օձին: Ինչպէս մի հայր, որ որդուն մահացու հարուածներ տուող մարդասպանի ձեռից խլում է դանակը և դէն ձգում, այսպէս էլ Աստուած օձին անիծեց: Նա, որ ցարդ

մարդոց բարեկամ էր ձեւանում, այսուհետեւ որպէս մարդու թշնամի յայտնի պիտի լինի—«եդից թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ»: Աստուած կնոջն էլ է պատժում: Նրան չի անիծում, որովհետեւ նրա որդին է, թէեւ գայթակղեալ. նա ցաւ եւ վիշտ պիտի ունենայ եւ սրանով էլ յուղղութիւն յառաջնորդուի: Աստուած մարդուն ես պատժեց—ճակատի քրտինքով պիտի իւր պատառ հացը ճարէ: Ծանր աշխատանքը պիտի նրա մեծամտութիւնը, ամբարտաւանութիւնն ուղղէ եւ զգալ տայ նրան, որ Աստծուն կարօտ է: Աստուած նախկին երկու մարդուն կեանքի նեղութեան եւ հոգսերի դէմ պատերազմելու զինաւորելուց յետոյ (տ. 21), Եդեմից դուրս արաւ: Քերովբէին կրակէ սրով պահապան նշանակեց դրախտի դռանը, որ չկարողանան ներս գալ եւ կենաց ծառի ճանապարհը պահեն: Սուրբ գրքի միջից, այժմեանից սկսած, դրախտի անունը ջնջւում է: Հազար տարիներից յետոյ այս խօսքն առաջին անգամ կրկնուեց նրա բերանով, որ առանց յանցանքի փորձութեան մատնուեց եւ խաչի վրայ ապաշխարող յանցաւորին մխիթարելով ասաց. «Ամէն ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս լիցես ի դրախտին». (Ղուկ. իգ. 43.):

Սուրբ գրքի փորձական պատմութեան համառօտ պարունակութիւնն այս է: Անցնենք նրա նշանակութեանը:

Ա. Սուրբ գրքի փորձութեան պատմութիւնը ամեն մի անհատի համար փորձութեան պատմութիւն է, այլեւ քո փորձութեան պատմութիւնն է: Ամեն ոք իւր երջանիկ օրերում իւր դրախտն է ունեցել եւ յետոյ կորցրել է նրան: Ամեն մարդու կեանքի մէջ տնկուած է գիտութեան բարւոյ եւ չարի ծառը. ամեն մարդու էլ մօտենում է յանցանաց օձը, որպէսզի հեռացնէ նրան Աստծուց: Երբ յանցանքը վիշտ եւ տրտմութիւն է պատճառում, այն ժամանակ ամենքն էլ գանգատւում են, որ կորցրել են անմեղութիւնը, որ նա իւր երիտասարդութեան դրախտում վայելում էր եւ նրանց նման յիշում է անցեալն ասելով—եկ ի նորոյ, ո՜վ գեղեցիկ երիտասարդութիւն: Արտասուքները հոսում են, բայց անմեղութեան բաղդը եւ երիտասարդութեան զուարթութիւնն այլեւս չեն դառնում. կեանքի ճանապարհի բաժանման տեղում Քերովբէն կրակէ սուրը ձեռին կանգնած է եւ իւրաքանչիւրին էլ ասում է—դու պէտք է յառաջ գնաս, որովհետեւ յետ գնալ այլեւս չես կարող:

Որպէսզի իրողութիւնը նկատողական, շօշափելի լինի մեզ համար, ընդունենք մի որոշ հանդամանք: Գարնան մի գեղեցիկ օր է:



Բնութիւնը խորասուզուած է ծաղիկների մէջ եւ արեւի պարզ ճառագայթն ընկնում է չինականի երդիկից, ուր հայրը իւր բարեկիրթ որդու հետ նստած են: Մանկան դէմքից անգամ նկատւում է, որ նա հօր հետ զուարճանալը սիրով կփոխէր գրաւիչ բնութեան հետ եւ դրա համար էլ դիմում է հօրը եւ թոյլտւութիւն խնդրում՝ իրաւունք տալու իրան փոքր ինչ փողոցում շրջել: Սակայն դուրսը հիւսիսային քամի է փչում. հայրը երկիւղ ունի, որ կարող է մրսել: Ուստի հայրը մերժում է որդու խնդիրը եւ մանուկն այն հաւատով, թէ հայրն իրան վատ բան չի ցանկայ, գնում է միւս սենեակը: Մի քանի ժամանակից յետոյ գալիս է մանկան ընկերներից մինը եւ առաջարկում նրան փողոց գնալ խաղալու: Ի՞նչպէս կվարուի մանուկը: Նա յայտնում է, որ հայրն այսօր արգելել է նրան դուրս գնալու: Այդ քո՞ հայրն է ասել, հարցնում է զարմացած նրա ընկերը եւ կարեկցաբար նայում է մանկան երեսին: Փորձիչ ընկերը ձեռք չէ վերցնում: Նա դրախտի օձի նման, խնդիրն այսպէս է դնում, որպէս թէ դուրս չգնալը եւ փողոցում չխաղալը նրան ամեն բանից կզրկէ: Այսօր հրաշալի եղանակ է, ես զարմանում եմ, որ քո հայրը թոյլ չէ տալիս քեզ այսպիսի սքանչելի եղանակից օգտուել. արի՛ գնանք, հիւսիսային քամին քեզ վնաս չի տայ եւ հայրդ ո՞րտեղից կարող է գիտենալ, թէ դու տանից դուրս ես եկել: Եթէ նա իմանալու էլ լինի, անկասկած եմ, որ քեզ ոչինչ չի ասի, չի պատժի: Սկզբում մանուկը զարմացմամբ լսեց փորձչի առաջարկութիւնը: Բայց միւս կողմից նրա խօսքերն այնքան գրաւիչ էին, խոստումներն այնքան հրապուրիչ, որ նա հօրից ծածուկ՝ ընկերի հետ հեռացաւ տանից այն քամոտ եղանակին եւ այն ցրտի մէջ սկսաւ խաղալ փողոցում: Լաւ տես, սա փորձութեան պատմութեան առաջին մասն է: Երկրորդ մասն էլ կատարուեց շուտով, որովհետեւ կարճ ժամանակից յետոյ հայրը նկատում է որդու բացակայութիւնը եւ հայրական սիրով կանչում է իւր որդուն: Սակայն ի զուր—նրա խօսքերը արձագանք են տալիս սենեակների մէջ: Հայրը գուշակելով թէ մի՛ գուցէ իւր պատուէրը մոռացել է կատարելու եւ դուրս է գնացել, շտապում է փողոց՝ այնտեղ որոնելու իւր սիրելի որդուն («Ադամ, ո՞ւր ես դու»): Կարճ ժամանակից յետոյ գտնում է նրան շրջապատուած իւր սիրելի, սակայն թեթեւամիտ ընկերներով: Մանուկը ես նկատեց հօրը եւ ամեն ինչ մոռանալով՝ սկսեց փախչել: Այժմ ի՞նչպիսի զգացումներ ծագած կլինին մանկան սրտի մէջ: Այդ դուք ես կարող էք երեւակայել

— առակի ամօթ, պատժի երկիւղից սկսում է լալ: Այսպէս ժամեր են անցնում: Տխուր և տրտում, երեկոյեան դէմ՝ արևի մայր մտնելուց յետոյ գաղտագողի տուն է դառնում: Հայրն ընդունում է նրան մեծ յանդիմանութիւնից յետոյ: «Որդեակ», ասում է նրան հայրը քաղցր ձայնով, «ինչու դու անհնազանդ գտնուեցար և իմ բարի նպատակը մոռացար»: Եւ ինչ է պատասխանում որդին: Այդ ես կարող էք դուք ասել: Նա փորձ է անում զանազան միջոցներով՝ սուտ խօսելով, յանցանքը մինի, միւսի վրայ ձգել և պատել իրան. երբեմն եղանակին, երբեմն ընկերներին մեղադրելով և այն է անում, ինչ որ նախկին մարդիկն արին փորձութեան պատմութեան մէջ: Ինչպէս որ երկնաւոր հայրը ոչինչ պատճառանք և ներողութիւն չըթոյլատրեց, այսպէս էլ մեր մանկան հայրը կվարուէր: Նա կպատժէր իւր որդուն և պատժի պատճառած ցաւով զգալ կտար նրան իւր սխալանքը—որովհետև բարի հօր պատուէրից անցել էր: Այսպէս սուրբ գրքի փորձութեան պատմութիւնն այստեղ բառացի կրկնւում է և ճշմարտութիւնը բանաստեղծութեան կերպարանք ստանում, որ ձեզնից իւրաքանչիւրը սեպհական անձի վրայ քանի քանի անգամ փորձած կլինի:

Ինչպէս մեր պատմութեան մանուկը, այսպէս էլ ամենայն ոք յանցանաց օձից փորձուած կլինի: Այդ պատճառով էլ սուրբ գրքի փորձութեան պատմութիւնը ամբողջ մարդկութեան փորձութեան պատմութիւնն է: Ուշադրութեամբ նկատեցէք այս գիծը մարդոց կեանքի մէջ և դուք կտեսնէք, որ սուրբ գրքի ասածները ճշմարիտ են: Ամենուրեք հաստատուած կգտնէք Պօղոսի խօսքերը (Թ. առ Հռմ. է. 8. 9.) «Զի առանց օրինացն մեղքն մեռեալ էին (գործածութեան մէջ չէր), «իբրև եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդանացան» (այսինքն սկսաւ ներգործել և մարդուն դէպի անհընազանդութիւն մղել): Մարդս պատուիրանազանց չէր լինի, եթէ Աստծուն բարի հօր տեղ ընդունէր և նրա պատուիրանն էլ փրկաբար ճանաչէր: Քրիստոսն այսպէս էր ընդունում—նրա ամենօրեայ կարիքը՝ կերակուրն այն էր, որ կատարէ երկնաւոր հօր կամքը: Հաւատ ունենալ դէպի Աստծու բարի կամեցողութիւնը՝ ասել է թէ պատնէշներ կառուցանել, որ յանցանքը մեր սիրտը չմտնի և ի չարը գործ չդնէ մարդկային ազատութիւնը: Սուրբ գրքի փորձութեան պատմութիւնը ցոյց է տալիս մեզ, որ մարդիկ այս պատնէշը խորտակեցին և Աստծու պատուիրանը, որ այդպիսեաց ազատ կամքի համար ծանր



էր, ապարդիւն հնացրին: Մարդուս ճարտարամիտ բանականութիւնը (խորամանկ օձի պատկերով ներկայացրած) մանրազննին խուզարկութեամբ աստուածային պատուիրանին հակառակ է կանգնում և առ երես կեղծ ցանկութեամբ հարցնում է—ինչու համար պէտք է ես այս բանն անեմ: «Ինչու» խօսքից շուտով յառաջանում է հետևեալ հարցը. «ինչու պիտի անպատճառ հէնց այս ցանկանամ (և ոչ հակառակը): «Ես իմ ազատ տէրը չեմ. չեմ կարող այն անել՝ ինչ որ ինձ դուրեկան է. մի՞թէ նախատինք չէ զրկուիլ ազատութիւնից»: Այս ձևով մարդուն որպէս ազատարար ներկայանալով, ճարտարամիտ բանականութիւնը հրաւիրում է մարդուս զգայական բաղձանքներին և սա որպէս նրա դաշնակից, կազմ և պատրաստ է խորտակելու այն պատնէշը, որ արգելում էր մինչև այժմ մեղաց ընթացքը: Զգայական ցանկութիւնը, որ ինքն ըստ ինքեան բարի կամ չար չէ ճանաչում, ձգտում է հրապուրել և պահպանել երկրաւոր կեանքը, ճարտարամիտ բանականութեան միջնորդութեամբ սխալ ուղղութիւն է ստանում: Ինքն ըստ ինքեան ոչ բարի և ոչ չար զգայականութիւնն անցնում է օրինական սահմանից և այսպիսով դառնում է չար ցանկութիւն: Սակայն չար ցանկութեան հետ զարգանում է և մարդուս խիղճը, որ իսկոյն պատերազմի դաշտն է դուրս գալիս և պաշտպանում է աստուածային պատուիրանը: Մարդկային ոգին արդէն զգում է, որ արգելանքից (պատուիրանք) ճնշուած է. բանականութիւնն իրանն է անում, որպէսզի հոգեկան այս ճնշումն բազմապատկէ, կամ օրէնքի կատարումը դժուար է համարում, կամ սկսում է համոզել (ինչպէս մեր պատմութեան մէջ), որ պատուիրանը բարի հօր տուածը չէ, այլ սկիզբն է առնում նախանձոտ բնաւորութիւնից, որ մարդուս ստրկացնում է քան թէ ազատ բարեկեցութիւն շնորհում: Այս ձգտումն դէպի կեղծ ազատութիւնը զարգացնում է ցանկութիւնը: Ինչպէս որ հեղեղը դուրս է գալիս իւր ափերից և նրա կատաղի ալիքներն ամեն ինչ ողողում են, այսպէս էլ ցանկութիւնը դուրս է հոսում ներսից և խորտակում է այն պատնէշը, որ ընկճում է իրան հակառակող կամքին: Ուրախ դէմքն արտայայտում է նրա երևան գալը: Նա ստիպում է բոլոր զգացմունքներին լսել: Եթէ հաստատուն կամքը չի արգելում նրա երևան գալը, յառաջ է յարձակւում և դադար չի առնում մինչև որ չխորտակէ այդ պատնէշը, մինչև չանցնէ աստուածային պատուիրանից և բնականութիւն չտայ յանցաւոր գործին: Օձը սրտում հասաւ իւր նպատա-

կին։ Մարդն Աստուած դարձաւ, այսինքն նա անսահման ասպարէզ տուաւ իւր կամքին—այժմ գիտէ որն է բարին և որն է չարը։ Բայց յանցաւոր գործի հետ յանցանքի մէջ էլ է ընկել։ Մարդս այժմ իւր նախկին վեհութեան վրայ կանգնած չէ այլ եւս։ Նա կատարել է իւր կամեցողութիւնն առանց Աստծու, հակառակ Աստծու—այժըմ խղճմտանքը վկայում է, որ նա ոչինչ է։ Խիղճը գործից առաջ յորդորող բարեկամ էր, գործողութեան ժամանակ լուռ վկայ, գործողութիւնից յետոյ՝ անողոք դատաւոր է, իսկ դատաւորական աթոռի վրայ խիղճը պահանջող է որպէս տէր, որին իւր ծառան խաբել է։ Այժմ յանցանքի հետևանքները երևում են, որ ցոյց տուաւ մեզ սուրբ գրքի մէջ փորձութեան պատմութիւնը։ Մարդըս ընկնում է մտատանջութեան մէջ, ամօթ—սա յանցանքը խոստովանելու առաջին նշանն է, իսկ երրորդը՝ անհանգստութիւնն ու երկիւղն է։ Մեղադրել ուրիշին, իրան արդարացնելու համար, ահա այն կրկնուող խօսակցութիւնը, որից զուրկ չէր փորձութեան պատմութիւնը։ Նախանձոտը իւր նախանձը արդարադատութեան զգացումն է անուանում. (ես չեմ կարող անարդարութիւն տեսնել), ագահը իւր փողասիրութիւնը սակաւապետութիւն է համարում, մեծամիտը իւր յանցանքը պատիւ է անուանում (ես ինձ դէն չեմ ձգիլ, պէտք է պաշտպանել պատիւը). որովայնապարարը իւր մեղկութիւնը կեանքի վայելք է կոչում (պէտք է վայելել կեանքը, մի անգամ ենք աշխարհ գալիս) եայլն եայլն։ Այսպէս ամեն ոք խաբում է իրան և սխալանքի մի աստիճանից միւսն է անցնում։ Աստծու վրայ ես ձգում են յանցանքը։ «Ի՞նչ անեմ՝ քանի որ տաք արիւն եմ», ասում է բարկացկոտը, «ինչու՞ է Աստուած ինձ այսպէս ստեղծել»։ Այսպէս՝ ինչ որ սկզբում տագնապ և ամօթ, սրտնեղութիւն և երկիւղ էր, կամաց-կամաց չարութիւն է դառնում։ Մի յանցանքը միւսի մայրն է և մարդու մէջ պատրաստում է այն մեծ և տխուր փոփոխութիւնը, որ երկնաւոր Հօր մեղմ վարմունքը, որպէս ծանր լուծ, թօթափում է և բարի Աստծուն, որ մեզ յաւիտենական սիրով է սիրել, էլ չէ կամենում ծառայել։ Անվայել արտայայտութիւններով չարունակ պատերազմում է խղճի հետ՝ լռեցնել տալու նրան, և վերջապէս այնտեղն է հասնում մեղաւոր մարդս, որ ուրանում է Աստծու գոյութիւնն ու հոգւոյ անմահութիւնը։ Անհաւատութեան մէջ դեռ ես այն միակ յոյսն ունի, որ կազատուէ այս ճնշող դրութիւնից, որ նորան ամեն քայլափոխում չար ոգու նման հալածում է։ Այսպէս Աստը-



ծուց հեռանալը տանում է դէպի անաստուածութիւն։ Բայց ինչ էլ որ յանցաւորն անէ, ինչ միջոցներ էլ գործ դնէ իրան փրկելու համար, վերջ ի վերջոյ այն գիտակցութեան կգայ, որ մարդկային սիրտըն առանց Աստծու խաղաղութիւն չի կարող գտնել։ Այն միջոցները, որ նա գործ է դնում Աստծուց ազատուելու, նրան դէպի անաստուածութիւն են տանում և աւելի ես խորասուզում յանցանքի մէջ։ Ինչ որ մարդս պիտի լինէր—տէր բոլոր արարածների, իշխող յանցանքի վրայ—այլ ես չէ։ Ոչ թէ նա է տիրում յանցանքին, այլ յանցանքը՝ նրան։ Աստծու պատկերը նրա մէջ այլափոխուել է։ Ոչ մի արդարութեան, սրբութեան, իմաստութեան և սիրոյ հետք չես գտնի նրա մէջ։ Յանցաւոր մարդու համար մարդկային կեանքի կոչումը կորած է երևում։ Փոխանակ իմաստնանալու, օրէցօր տխմարանում է, փոխանակ բարի դառնալու, հետզհետէ վատանում է. փոխանակ երջանիկ լինելու՝ տակաւ—տակաւ թշուառանում է։ Ընկած մարդու թշուառութիւնը նման է գահից զրկուած թագաւորի։ Ո՞րքան սկզբում նա բարձր էր կանգնած, այնքան նա այժմ խորն է ընկած և նոյնքան էլ ողբալու է նրա վիճակը։ Մոլորութիւն՝ փոխանակ ճշմարտութեան, խաւար՝ փոխանակ լուսոյ, յանցանք՝ փոխանակ առաքինութեան, արատ՝ փոխանակ սրբութեան, ստըրկութիւն՝ փոխանակ ազատութեան —որպիսի կերպարանափոխութիւն։

Այս է սուրբ գրքի պատմած փորձութեան պատմութիւնը և կեանքի փորձը նոյնը հազարապատիկ աւելի հաստատում է։ Մենք բաժանւում ենք այս պատմութիւնից այն գիտակցութեամբ, որ նրանից շատ բան ուսանք, վասնզի նա մի հայելի է, որի մէջ իւրաքանչիւր ոք իւր պատկերն է տեսնում։ Երանի՜ նրան, ում բանականութիւնը դեռ ես չէ կուրացած, որ նա այս պատմութեան ճշմարտութիւնը խոստովանում է։ Երանի՜ նրան՝ ով մաքսաւորի նման խփում է իւր կրծքին և ասում. «Ա՛ստուած, քաւեա զիս զմեղաւորս»։

## 2. ՅԱՆՑԱՆՔ

Փորձութեան պատմութիւնը ցոյց տուաւ մեզ, թէ յանցանքն ինչպէս է յառաջանում մարդուս մէջ։ Այստեղ չպիտի կանգ առնենք, այլ խնդիրը հիմնովին պէտք է քննենք։ Ի հարկէ խնդրի նիւթն էլ այնքան հաճելի նիւթ չէ։ Երբ ուսուցիչը կամ քահանան խօսում են ազնիւ, բարի, վսեմ գործերի մասին, ունկնդիրներս սիրով ենք լսում, իսկ երբ խնդիրը յանցանքի կամ պարտաւորութեան մասին է

լինում, այն ժամանակ մարդոց մեծ մասը նմանում է հիւանդի, որ թոյլ չէ տալիս բժշկին տկար տեղը շօշափիլ՝ առանց որին անհնար է ճիշտ տեղեկութիւն ստանալ և ըստ այնմ բժշկել: Ունայնութեան հայելու մէջ ամենքն էլ սիրով են նայում իրանց պատկերին, իսկ ճշմարտութեան հայելու մէջ ոչ ոք չի կամենում իւր տգեղ կերպարանքը տեսնել: Թէև այդ այդպէս է, բայց և այնպէս յանցանքի հետ ճիշտ պիտի տեղեկանանք, ուրեմն ուշադրութեամբ լսեցէք այն բանի մասին, որ ձեր կեանքի ընթացքում ուտում է ձեզ և երբեմն դէպի մահ կարող է առաջնորդել, եթէ իւր ժամանակին հիմնաւոր միջոց գործ չդրուի: Ըստ այսմ նկատենք 1, յանցանքի էութիւնը. 2, յանցանքի աղբիւրը. 3, յանցանքի ընդհանրականութիւնը. 4, յանցանքի զանազան ձևերը. 5, յանցանքի հետևանքները և վերջապէս յիշենք 6, թէ ով է նրա փրկիչը և ինչն է նրա փըրկութիւնը:

## 1. ՅԱՆՑԱՆՔԻ ԷՈՒԹԻՒՆԸ

Հարևանցի ծանօթութիւնն անգամ հերիք է հաստատելու, որ մարդոց մեծ մասը յանցանքի էութեան մասին սխալ գաղափար ունին: Այդպիսինները, այո, գիտեն որ գողերն ու աւազակները սարսափելի յանցաւորներ են, բայց չգիտեն, որ աշխարհիս մէջ շատ պատուաւոր համարուած անձանց ևս չէինք սխալուի այդ կարգին դասելու: Այս բանը շատերին անհասկանալի և անիրաւացի է թւում: Յանցանքի գաղափարն այն չէ, ինչպէս որ սովորաբար աշխարհն է հասկանում: Խնդրի հետ մանրամասն ծանօթանանք:

Վերը տեսանք, որ յանցանք չի կարող լինել առանց օրէնքի գոյութեան (Թ. առ. Հռմ. է. 7.) և առանց մարդուս ազատ կամքի (Սիրաք ժէ. 14...): Եթէ օրէնք չկայ, ինչը պիտի զանց առնենք և եթէ չլինէր օրէնքը՝ զանց առնելու հնարաւորութիւնը, մեղք էլ չէր գործուի կամ աւելի ճիշտ ասած՝ մեղք գործելու գաղափարն աչքի չէր ընկնի՝ չնայելով որ իրականութեան մէջ յանցանքը կգործուէր: Երեք տեսակ օրէնք կայ—բնական, քաղաքացիական և բարոյական (օրինակներ): Քննելով բնական օրէնքները, կտեսնենք, որ նրանք մեզանից անկախ են: Արևն առանց մեզ ծագում է և մայր է մըտնում. երկրի ձգողական զօրութիւնն անհրաժեշտ բան է, որի դէմ ի զուր կպատերազմէինք: Այսպէս էլ ամենայն ինչ: Բոլորովին այլ են քաղաքացիական օրէնքները, որոնք տէրութիւններից են



տրւում, որպէսզի հպատակների խաղաղութիւնն ապահովուի: Այս օրէնքներից կարող է մարդս անցնել: Լաւ ի միտ առ—մարդս կարող է օրէնքիցն անցնել, բայց չպիտի անցնէ, որովհետև իշխանութիւնը նրան պատասխանատուութեան կենթարկէ և կպատժէ: Բարոյական օրէնքը նախկին երկուսիցն էլ տարբեր է, որ Աստուած մեր խղճի մէջ է դրել, նոյնը սուրբ գրքի մէջ ևս գրել է տուել մեզ համար: Քաղաքացիական օրէնքների օրինատուն Աստուած չէ, այլ մարդիկ, որոնք ուշք են դարձնում օրէնքի արտաքնի և նրանից յառաջացած հետևանքի վրայ, իսկ բարոյական օրէնքը ուշք է դարձնում ներքինի վրայ—թէ մենք ինչ ենք մտածում, ինչպէս ենք մտածում—հարցն այստեղ մտածողութեան ձևի վրայ է. այդ մտածողութիւնն է, որ մեզ ստիպում է գործին անցնելու: Իշխանութիւնը գոհ է, եթէ իւր հպատակները չեն գողանում..: Իշխանութեան համար միևնոյն է, թէ իւր հպատակը պատժի երկիւղից, ամօթից, թէ բարոյական օրէնքը յարգելուց գողութիւն չի անում: Ուստի և քաղաքացիականապէս բարի, լաւ է, երբ օրէնքը որոշուած ձևով կատարում է, և ընդհակառակն՝ ով սահմանուած ձևիցն անցնում է (ինչ հիմունքով էլ որ լինի), պատժւում է: Բոլորովին այլ է Աստծու մօտ, որ նայում է ոչ թէ միայն գործին, այլև սրտին—նա ուշք է դարձնում ոչ թէ միայն հետևանքին, այլև գործողութեան շարժառիթների վրայ: Եւ զարմանալու չէ, որ մի քանի մարդիկ Աստծու մօտ խիստ յանցաւորներ են՝ չնայելով որ մարդիկ նրա վրայ մեծ համարմունք ունին, արդար են համարում: Մարդիկ մինին երկինք են բարձրացնում, որովհետև, օրինակի համար, հրդեհի ժամանակ մի ընտանիք ազատեց: Աստուած այս վարմունքին այնքան մեծ նշանակութիւն չէ տալիս, եթէ նրա օգնութիւնը յառաջացել է անձնասիրութիւնից, երկիւղից և կամ շահասիրութիւնից: Մի ուրիշ օրինակ: Մի աղքատ չորս հարուստից ողորմութիւն է խնդրում և ամեն մինից մի դահեկան դրամ է ընդունում: Իւրաքանչիւրն էլ արդարացի է վարուել: Բայց առաջինը նրա համար է ողորմութիւն տուել, որպէսզի իւր անունը հռչակուի (փառասիրութիւն), երկրորդը նրա համար՝ որպէսզի մարդիկ ագահ չանուանեն իրան (երկիւղ մարդկանցից). երրորդը նրա համար՝ որպէսզի ողորմութիւն ընդունողը շնորհակալութիւն անէ իրան, երախտագէտ լինի (անձնասիրութիւն), միայն չորրորդն առանց յետին միտք ունենալու, մաքուր սիրուց դրդած՝ տալիս է իւր տուրքը: Սրանցից որը քաղաքացիականապէս ազնիւ և

ո՛րը բարոյապէս բարի է վարուել: Ուրեմն դուք տեսնում էք, թէ ինչ մեծ զանազանութիւն կայ անցնել քաղաքացիական օրէնքից և Աստծու պատուիրանից: Քաղաքացիական օրէնքից անցնելը՝ նայելով հանգամանքին, կոչւում է զանցառութիւն, եղեռնագործութիւն, իսկ Աստծու պատուիրանից անցնելը՝ կոչւում է մեղք, յանցանք: Ուրեմն յանցանքը, մեղքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ աստուածային պատուիրանից անցնել (լինի դա արտաքուստ տուած, թէ խղճի մէջ գրած): Համեմատել Թ. ա. Հռմ. բ. 14. 15:

Այս նախապատրաստութիւնն առաջնորդում է մեզ դէպի ինքնագիտակցութեան ուղին, որովհետև այժմ դժուար չի լինի մեզ խոստովանել մեր յանցանքները: Եկէք մի անգամ ալնուաբար քննութեան ենթարկենք մեզ: Գրած է—«Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ զընկեր քո իբրեւ զանձն քո»: Սիրոյ այս ձևի մտածողութիւնը դու ես ունիս արդեօ՞ք: Աստուած այն միակ էակն է, որ մեզ ոչինչ պարտ չէ և որին մենք ամեն ինչ պարտ ենք. դրա համար էլ մեզ իրաւացի և արդար է թւում՝ առանց ակնկալութեան՝ Աստծուն ամեն բանից աւելի սիրել: Արդեօ՞ք այս բանը իրականութեան մէջ տեղի ունենում է: Արդեօ՞ք մեր մերձաւորին էլ մեզ նման սիրում ենք. դու զանազանութիւն չե՞ս դնում քո և նրա բարեկեցութեան մէջ. քո և նրա պատուի մէջ, քո և նրա բաղդաւորութեան մէջ: Դու հարուստ մարդ ես, մտածում ես արդեօ՞ք աղքատ մարդոց մասին: Քո գործը յաջող է գնում, իսկ միտդ ընկնո՞ւմ է քո ընկերի ցաւն ու վիշտը: Եւ երբ դու այդ մասին մտածում ես, արդեօ՞ք պատրաստականութիւն ես ցոյց տալիս անձնազոհ լինելու և գործնականապէս օգնութեան աջը մեկնելու կարօտին: Դարձեալ գրած է—«Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա». (Մատթ. է. 12.): Այս օրէնքն ինչպէս էք կատարել: Արդեօ՞ք դու էլ այնպէս քաղաքավարի, գթասիրտ, պատրաստակամ, անձնուրաց ես դէպի քո ընկերը, որպիսին ցանկանում ես, մինչև անգամ պահանջում ես, որ նա դէպի քեզ լինէր: Թո՛ղ ամեն ոք ինքն իրան փորձէ: Թո՛ղ ոչ ոք ձեզանից չպարծենայ իւր մանկական անմեղութեամբ: Նայեցէք ձեր սիրտը Աստծու պատուիրանի հայելիով և փորձեցէք ձեզ, թէ կարո՞ղ էք դուք ձեր Փրկչի հարցին պատասխանել. «Ո՞վ կարող է ստախօսութեան յանցանքի մէջ ամբաստանել»: Թո՛ղնենք միւսները և մի քանի օրինակ բերենք տասն պատուիրանից—դուք գիտէք որ առա-



ջին պատուիրանը պահանջում է. «մի՛ լիցին քեզ այլ աստուածք, բաց յինէն». դուցէ ոմանք ասեն. «փառք լինի Աստծուն, որ ես աստուածանարգ, ամբարիշտ չեմ». բայց արդեօ՞ք դուք ամեն ժամանակ սէր, հաւատարմութիւն և երկիւղածութիւն ունեցել էք դէպի Աստուած: Կատարելապէս յարգե՞լ էք Նրա սուրբ անունը. խորին ձևով ուշադի՞ր էք եղել դէպի Նրա խօսքը: Մտածեցէք փոքր ինչ, արդեօ՞ք իմ ասածները կարող էք հաստատել: Եւ կամ յիշեցէք հինգերորդ պատուիրանը: Անշուշտ շատերը կասեն—«ես իմ ծնողների հետ վատ չեմ վարուել»: Բայց կարո՞ղ էք բաւարար պատասխան տալ, եթէ հարցնելու լինիմ. «Արդեօ՞ք ձեր ծնողաց երբեւիցէ վիշտ չէ՞ք պատճառել. չէ՞ք ցաւեցրել. նրանց կամքին չէ՞ք հակառակել. կարո՞ղ ես ձեռդ խղճիդ վրայ դնել և ասել, որ ես նրանց դառն րոպէները միշտ քաղցրացրել եմ, երբ հնարաւոր է եղել: Եւ կամ վերցնենք վեցերորդ պատուիրանը: Ով կասէ, թէ ես ոչ ոքի չեմ սպանել, դրանով ցոյց կտայ, որ նա օրէնքը ամբողջութեամբ չէ ըմբռնել: Միթէ չի կարելի վիրաւորել խօսքով, նախանձելով, վրէժխնդրութիւնով: Եւ կամ յիշեցէք վերջին պատուիրանը: Խաղաղ ժամերում, միայնութեան րոպէներում արդեօ՞ք որևէ չար ցանկութիւն—նախանձ, չարախնդացութիւն և կամ այսպիսի հակումներ չի՞ սպրդել ձեր սրտերը: Արդեօ՞ք ոչինչ չար բան չէք մտածել: Արդեօ՞ք ոչինչ զանց չէք արել. արդեօ՞ք ամեն ինչ կատարել էք և այն՝ սիրով: Եթէ սրտի գործած յանցանքները ցուցակագրուէին, բոլոր զանցառութիւններն ու անհոգութիւնները գրուէր տարուայ վերջին օրում և կեանքի վերջը ի մի գումարուէր, այն ժամանակ կարիք չկար Կայէն լինելու, բայց Նրա հետ կարող էր ասել. «Մեծ է պատիժ իմ քան զթողուլդ զիս» (I. Մովս. դ. 13.): Եթէ լաւ քննենք մեր կեանքը, կը գտնենք որ սուրբ գրքի խօսքն արդարացի է, թէ «զի միտք մարդկան հաստատեալ են ի խնամս չարի ի մանկութենէ իւրմէ. (I. Մովս. ը. 21.) և Պօղոսի հետ ամենքս էլ իրաւունք կունենանք գանգատուելու. «Զի ոչ եթէ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն՝ զայն գործեմ». (Թ. ա. Հռմ. է. 19.):

Եւ կամ ո՞րտեղ է այն անհատը, որ մարմնոյ ցանկութեանը հակառակէ հոգւոյ համար («Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ և հոգի հակառակ մարմնոյ, եւ դի սոքա միմեանց հակառակ են, մի՛ զոր կամիցիքն զայն առնիցէք»—(Թ ա. Գաղ. ե. 17.): Անառակ որդու նման մենք ամենքս էլ մեր ազատութիւնը հայրենի տանից դուրս ենք փնտռել, ուրեմն և ամօթով պիտի խոստովանենք, որ մեզ

ամենիս էլ վիճակուած է, բաժին է ընկել աշխարհիս ստրկութիւնը: Գումարենք մեր ասածները—մենք այն չենք եղել, ինչ որ պիտի լինէինք—որդիք չենք, այլ յանցաւորներ: Աստուածային պատկերը մեր մէջ այլափոխուել է: Դաւթի հետ խոստովանում ենք և ասում. «Զմեղս իմ ցուցից քեզ, եւ զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն» (Սղմ. լա. 5.): Մեր սխալները, մեր յանցանքները խոստովանելով քեզ ենք դիմում աղերսելով, ով Աստուած. «Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ, եւ ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ» (Սղմ. ճբ. 10.):

## 2. ՅԱՆՑԱՆՔԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Սողոմոնի առակաց գրքի ը. 7. գրած է. «Գանձէ ուղղոց զփրկութիւն» (Աստուած ուղիղ՝ արդար մարդոց գործը յաջողեցնում է օգնում է նրանց): Այս Ուղղութիւնը տարաբաղդաբար քիչ մարդոց մօտ կարելի է գտնել, որովհետև յանցանքի իսկական էութեանը պատկանում է այլև այն, որ մարդիկ մեղքի աղբիւրը ոչ թէ իրանց մէջ, այլ՝ իրանցից դուրս են սիրում որոնել, ուրիշի վրայ են ձգում, իսկ այդ ուրիշն էլ մի այլ անհատի է մեղադրում: Յանցանքը մերթ ուրիշների վրայ են ձգում, մերթ զգայականութեանն են վերագրում, մերթ Աստուած, մերթ չարը, մերթ Ադամն.... է պատճառ համարւում: Մեծ խելք չի հարկաւոր նկատելու համար, որ այդ ձևի արդարացուցումներն ուղիղ չեն, վասնզի զգայականութիւնը չի կարող մեղաց աղբիւր լինել, որովհետև նա ինքն ըստ ինքեան ոչ բարի և ոչ չար է և որովհետև նա Աստուածանից է սկիզբն առնում, որի մասին սուրբ գիրքն ասում է. «Զի Աստուած անփորձ է չարեաց» (Թ. Յակ. ա. 13) (Աստուած մարդուն չի փորձում չարութեան մէջ ձգելու): Նոյն իսկ չարը (սատանան), որին ժողովրդի գիտակցութիւնը չարի պատճառ է ճանաչում, անմեղ է այս խնդրում. դրա համար էլ սուրբ գիրքը ժխտում է նրա ներգործութիւնը մարդու վրայ ասելով. «Կացէք հակառակ չարախօսին, եւ լինի փախըստական առ ի մէնջ» (Թ. Յակ. դ. 7): «Վասն այսորիկ յայտնեցաւ որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի» (I. Թ. Յովհ. գ. 8): Իսկ եթէ ընդունենք այն հիմունքը, թէ որովհետև Ադամը մեղանչեց, ուրեմն մենք էլ պիտի մեղանչենք, այն ժամանակ օժանդակած կլինէինք այն անգիր վարդապետութեան, որ մեր հոգւոյ փրկութեան համար կործանաբեր հետևանքներ ունի: Թէև սկզբնական մեղ-



քով մենք ամենքս էլ շաղախուած ենք, բայց դա ժամանակաւոր բան է—մկրտութեան շնորհիւ ազատւում ենք այդ վիճակից: Ինչ ձևով էլ որ խնդրին նայելու լինինք, այնուամենայնիւ պէտք է այնտեղ հասնինք, որ յանցանքը մեր մէջն է և ոչ մեզնից դուրս—ոչ ոք յանցաւոր չէ՝ բացի մեզնից: Յանցանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր ազատ կամքի գեղծումն—յանցանքը հիմք չէ, այլ հետևանք: Դրա համար ևս Յակոբոս առաքեալն ասում է (ա. 14, 15.). «Իւրաքանչիւր ոք փորձի առ ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ, ապա այնուհետև ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի, եւ մեղքն կատարեալ՝ զմահ ծնանի»: Յանցանքի աղբիւրը մեր մէջ եղած չար ցանկութիւնն է: Մենք չպիտի թոյլ տանք, որ մեզ տիրէ, իշխէ յանցանքը, այլ մենք տէր և իշխան պիտի լինինք, նրան հրամայողը մենք պիտի լինինք (I. Մովս. դ. 7.): Եթէ այդպէս չվարուենք, այն ժամանակ աղբիւրը գետ կդառնայ և մենք պատասխանատու կմնանք մեր գործին, ուրեմն և հետևանքը մեզ բաժին կմնայ—այդ ամենը յառաջանում է մեր թուլութիւնից: Որքան գիտակ ենք լինում, թէ յանցանքը մեր մէջն է և դա մեր ազատ կամքի մի գեղծումն է, այնքան էլ զգոյշ կվարուենք նրա հետ, այնքան էլ ջանք գործ կդնենք ընկճելու նրան: (Մանրամասնութիւնները տես նաև տասներորդ պատուիրանի մէջ):

## 3. ՅԱՆՑԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻՆԵԼԸ

Յանցանքի էութեանը պատկանում է և այն առանձնայատկութիւնը, որ նա մի տեղ չի մնում: Նա նման է ձնահիւսի, որի սկիզբն աննկատելի է, իսկ հետզհետէ արագ աճում է և վերջապէս իրան հակառակող ամեն ինչ ոչնչացնում: Եթէ կամենայինք յանցանքի յառաջադիմութիւնը մի այլ պատկերով նկատողական անել, նրան կարելի է համեմատել սերմի հետ, որ աճելով ծառ է դառնում և մեծամեծ ճիւղեր արձակում: Մեր կեանքի ամենօրեայ փորձերից կարող ենք նկատել, որ մի յանցանքը միւսի մայրն է, որ մարդս հակումն ունի աւելի դէպի չարը՝ քան թէ դէպի բարին: Ինչպէս որ ջրհեղեղը ամենաբարձր լեռների գագաթներն էլ ծածկեց, այնպէս էլ ամենաբարի մարդիկն ևս մեղաց հոսանքին են ենթարկուել: Ամենայն անհատ նմանում է ագարակի, որի մէջ որոմն աւելի յաջող պայմանների մէջ է աճում, քան թէ բարի սերմը: Արգելուածը մարդիկ աւելի են սիրում գործել, քան թէ պատուիրածը

կատարել: Ուստի և ամենքս էլ սովորած ենք ընդունելու—ոչ թէ միայն մեր խօսքի, գործի և մտածողութեան մէջ մեղքի նշոյլներ կան, այլև մեր ամբողջ կեանքը, մեր բնաւորութիւնը մեղաց վտանգին ենթակայ է:

Ինչպէս անհատը, այնպէս էլ ընդհանրութիւնը ենթարկուած է յանցանքի: Ընդհանուր յանցաւորութիւնը իրողութիւն է և այդ նկատելի է ոչ թէ միայն մեր և մեր նմանների, այլև ամբողջ մարդկութեան մէջ: Մենք մեր անձի վրայ կարող ենք փորձել: Մեզանից ամեն մինը Պօղոս առաքեալի հետ զգացած կլինի. «Զի կամքն առաջի կան ինձ, եւ առնել զբարին ոչ» (Թ. առ Հռմ. է. 18): «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար» (Մտթ. իզ. 41): «Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ» (I. Թ. Յովհ. ա. 8): Ընդհանուր յանցաւորութեան գոյութիւնը ուրիշների փորձերով ևս կարող ենք հաստատել: Նախկին մարդոց յանցանքն ինչպէս չուտ տարածուեց: Յիշեցէք Կայէնին: Մըտաբերեցէք ջրհեղեղը և կամ սուրբ գրքի բարեպաշտ անձինքը: Աւելորդ չէ այստեղ աչքի առաջ ունենալու Դաւթին և նրա խոստովանութիւնը. «Քեզ միայն մեղայ տէր» (Սաղմ. ծ. 6). Պօղոսին, որ իրան յանցաւորների գլուխն էր համարում. «Զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ» (I. Թ. առ Տմթ. ա. 15). Պետրոսին, որ փրկչին խնդրում է ասելով. «Ի բաց գնա՛ յինէն, տէր, զի այր մեղաւոր եմ ես» (Ղուկ. ե. 8). միւս առաքեալներին, որոնք ապերախտ ձևով ուրացան Յիսուսին և փախան, երբ Գեթսեմանում պիտի կալանաւորէին Նրան: Ոչ թէ անհատներն են մեղաց ենթակայ եղել և թոյլ են տուել, որ մարմինը որոշէ խնդիրը, այլ յանցաւորութեան կենդանի վկան ամբողջ մարդկութիւնն է: Քննութեան ենթարկեցէք մարդկութիւնը՝ ո՛ր դարում էլ կամենաք, և կտեսնէք որ յանցաւորութիւնը գերակշռում է—բարի և ազնիւ անձնաւորութիւնները բացառութիւն են եղել: Այս իրողութիւնը չի կարող զարմանք պատճառել, որովհետև՝ ինչպէս յանցաւոր հօր դաստիարակած որդին յանցաւոր է դուրս գալիս, այնպէս էլ հասարակական կեանքի մէջ ընկերական յարաբերութիւնները, ազատ հաղորդակցութիւնները ընդհանրութեան բարք ու վարքի . . . . միջնորդներ են՝ յանցանքը մի սերնդից միւսին հաղորդելու: Այստեղից յառաջանում է այն, որ մեղաց ընդհանրացումը ոյժ, զօրութիւն է դառել և ամենքն էլ, երբեմն առանց նկատելու, լսում են Նրան



և Նրա ցոյց տուած ճանապարհով են են գնում: Ինչպէս որ չի կարելի ուրանալ ընտանիք կոչուածի առանձնայատկութիւնները, դասակարգի ոգին, այս կամ այն ազգի բնաւորութիւնը, այնպէս էլ անկասկած է, որ յանցանքը յանցաւորին՝ թէ այժմ և թէ հազարաւոր տարիներ սրանից առաջ, մղում է դէպի արինուուշտ պատերազմ՝ նախանձի, ատելութեան, ինքնասիրութեան . . . . կերպարանքով և վերջ ի վերջոյ ձգում է որոգայթի մէջ: Հէնց դրա համար էլ սուրբ գիրքն ասում է. «Ոչինչ է խտիր, քանզի ամենեքին մեղան, եւ նուազեալ են ի փառացն Աստուծոյ» (Թ. առ Հռմ. գ. 23): «Իսկ արդ ո՛վ իցէ սուրբ յաղտոյ, այլ եւ ոչ ոք, թէպէտ եւ միոյ աւուր իցեն կեանք նորա ի վերայ երկրի» (Յովբ ժդ. 4):

Յանցանքի ընդհանուր լինելը իրողութիւն է: Վա՜յ նրանց, ովքեր այս իրողութիւնը հոգեկան ծուլութեան համար փափուկ բարձ են ընդունում և նրանով են արդարանում, որ ուրիշներն իրանից լաւ չեն: Միթէ դու ուրիշների հետ համեմատուելով՝ պիտի մխիթարուէիր, երբ քեզ մարդասպանութեան համար բանտ տանէին:—Ո՛չ: Ոչ թէ մխիթարուելով, այլ կարմրելով պիտի խոստովանենք, որ թէ անհատը և թէ բազմութիւնը խոնարհեցրել են իրեանց պարանոցը մեղաց իշխանութեան լծի տակ: Սրբազան սոսկում պիտի տիրէ մեզ, երբ լսենք թէ յանցանքը կարողացել է մարդկային սերունդը մերկացնել իւր արժանաւորութիւններից: Զարհուրանքով պիտի լսենք, որ ոչ ոք չկարողացաւ մեղաց ճիրաններից ազատուել, այլ հողմավար նաւի նման՝ ղեկը կորցրած, ալիքների ձեռին խաղալիք է դարձած, ուր կամեցել է, այն կողմն է տարել:

Ընդհանուր յանցաւորութեան մեծութիւնը պարզ ըմբռնելու համար՝ պէտք է ծանօթանանք—

## 4. ՄԵՂՔԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Մեղաց բազմութեան հետ ծանօթանալու համար յանցանքները պիտի բաժանենք—Ա. մեղանչել անձի դէմ. Բ. օրէնքի դէմ. Գ. մարմնոյ գործարանների դէմ. Դ. յանցանքների ծագումն. Ե. յանցանքների նպատակը. Զ. յանցանքների մեծութիւնը,

### Ա. ՄԵՂԱՆՉԵԼ ԱՆՁԻ ԴԷՄ

Այն յանցանքները, որոնցով մենք անձի դէմ ենք մեղանչում, դարձեալ բաժանւում են ա, մեղանչել Աստծու դէմ (սրբապղծու-

թիւն, ապիրախտութիւն, անհնազանդութիւն, տրտունջ աստուածային նախախնամութեան դէմ....). բ, մեղանչել մեր ընկերի դէմ (նախանձ, անարդարութիւն, անգթութիւն, անողորմութիւն...). գ, մեղանչել մեր անձի դէմ (անչափաւորութիւն, դժգոհութիւն, վատնումն, անհոգութիւն, ինքնասպանութիւն....): Եթէ խիստ մտքով ընդունելու լինինք, ամեն մի յանցանք Աստծու դէմ է, դրա համար էլ սուրբ գիրքը որոշակի արգելում է որև է յանցանք գործելու:

### Բ. ՄԵՂԱՆՉԵԼ ՕՐԷՆՔԻ ԴԷՄ

Օրէնքի կատարումն կրկին ձևով պէտք հասկանալ—որպէս պատուէր և որպէս արգելանք: Կարելի է օրէնքի պատուիրածը և՛ կատարել և՛ չկատարել: Երկու տեսակ յանցանքներն էլ հաւասար պատժի արժանի են—«Ամենայն որ զմեղս գործէ, նա՛ եւ զանօրէնութիւն առնէ» (I. Թ. Յովհ. գ. 4): «Որ ոք գիտիցէ զբարին՝ (թեթևամիտներին խրատել, մոլորեալներին ուղիղ ճանապարհ ցոյց տալ, չարագործներին յանդիմանել և նեղեալներին օգնութեան աջը կարկառել) եւ ոչ առնիցէ, մեղք են նմա» (Թ. Յակ. դ. 17): Սովորաբար մարդիկ, երբ չարութիւն չեն գործել, կարծում են թէ դրանով բարութիւն են արել: Ո՜րպիսի ողորմելի մխիթարութիւն: Մի՞թէ հարիւր գրօշ մի միաւորի հաւար է: Յիշեցէ՛ք աւետարանի քահանային և Ղևտացուն, որոնք կիսամեռին թողին ճանապարհի վրայ ընկած և կամ այն սրտից զուրկ անձանց, որոնք չեն հանգցնում բռնկած կրակը և թոյլ են տալիս հարևանի եղած չեղածը հրոյ ճարակ դառնալու: Ամենից առաջ յիշենք Փրկչի խօսքը. «Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս» (Յովհ. ժգ. 35.): Եթէ լաւ մտածելու լինինք, կտեսնենք բարւոյ կատարման զանցառութիւնից աւելի մեծ չարիքներ են յառաջացել, քան թէ չարութիւն գործելուց: Վերջին դատաստանի ժամանակը մոռացութեան տրուած յանցանքներն ամենից խիստ պատժի են արժանանում (համեմատել —Մատ. իե. 42):

### Գ. ՄԵՂԱՆՉԵԼ ՄԱՐՄՆՈՑ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴԷՄ

Նայելով մեր մարմնոյ գործարաններին, որոնցով մենք մեղանչում ենք, յանցանքը բաժանւում է երկուսի—արտաքին և ներքին: Արտաքնի համար գործ ենք դնում մարմնի անդամները, զորօրինակ դէմքի խոժոռումն (Կայէնի բարկութիւնը), լեզուն (անէծք,



ստախօսութիւն, անսուրբ խօսակցութիւն...). ձեռները (խաբերայութիւն, գողութիւն, սպանութիւն...): Ներքին յանցանքները միշտ չեն երևում արտաքինի վրայ, բայց հոգին միշտ ապականում են: Յիշեցէք չար մտածողութիւնները—«ընդէ՞ր խորհիք չարիս ի սիրտս ձեր» (Մատ. թ. 4.): «Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք...» (Մատ. ժէ. 19.), անազնիւ զգացումներ (չարախնդացութիւն, ոխակալութիւն), անբարոյական ցանկութիւններ (մախանք, նախանձ, ատելութիւն և ընչասիրութիւն): Աստծու համար միևնոյն է, թէ դու մարմնի որևէ արտայայտութիւնով, խօսքով, թէ գործով ես մեղանչել, որովհետև Աստուած հայի ի սիրտ» (I. Թգ. ժզ. 7.):

### Դ. ՅԱՆՑԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ

Յանցանքը յառաջանում է 1, զգայականութիւնից, 2, ինքնասիրութիւնից: Զգայական յանցանքները ամենից կոպիտ են և մարդուս մինչև անասնական աստիճանի են հասցնում. դրա արտաքին պատիժն էլ յաճախ այն է լինում, որ մարդս կորցնում է իւր առողջութիւնը, կարողութիւնը և բարի անունը: Այս տեսակ յանցանքներին պատկանում են—հեշտասիրութեան բոլոր տեսակները, ցուցամոլութիւն, փառասիրութիւն, որկրամոլութիւն, շուայտութիւն, ցեղխութիւն, բողջախոհութիւն, անպարկեշտութիւն, ագահութիւն, ընչաքաղցութիւն, խաբէութիւն և անազնիւ վարմանց բոլոր տեսակները: Ինքնասիրութեան յանցանքներն այնպէս շուտ չի կարելի նկատել, նրանք քնքոյշ են—թաքուցեալ յանցանքներ են, որոնք երբեմն բարեպաշտութեան կամ առաքինութեան պատրուակով են վարագուրուած, ուստի մարդոց կողմից այնպիսի խիստ նկատողութեան չեն արժանանում ինչպէս զգայական յանցանքները: Սրան պատկանում են—հպարտութիւն, մեծամտութիւն, իշխանասիրութիւն, կեղծաւորութիւն, կեղծ բարեպաշտութիւն, որոնք ամենքն էլ վերին աստիճանի տգեղ յատկութիւն ունին և ընդունակ են մինչև սատանայական չարութեան հասնելու: Զգայական յանցանքները տաք արիւնութեան հետևանքներ են, իսկ ինքնասիրութեան յանցանքները՝ սառն բանականութեան: Առաջինները աւելի շուտով կարժանանան փրկչի ներողութեան և այնպիսի խիստ դատաստանի չեն ենթարկուի, որովհետև զգայական յանցանքի հետ յաճախ կապուած է զղջումն և դարձ դէպի ուղղութիւն: Իսկ ինքնասիրութեան յանցանքները շատ էլ բարեկամ չեն զղջման հետ: Համեմատել հետևեալ առակները—փարի-

սեցի և մաքսաւոր (Ղուկ. ժը. 10—14) Անառակ որդի (Ղուկ. ժե. 11—32. յանցաւոր (Ղուկ. է. 37—48.) և չնացող կինը (Յովհ. ը 3—11)։

### Ե. ՅԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նպատակի վերաբերութեամբ յանցանքները լինում են—պատահական և դիտաւորեալ։ Պատահականները բաժանւում են ի նորոյ—տգիտութեան-անգիտութեան յանցանքներ, որոնք յառաջանում են օրէնքը չգիտենալուց (չգիտենալ զորօինակ այս ինչ իրը մահացու է՝ թունաւոր է). թեթևամտութեան յանցանքներ, երբ մարդս կարծում է, թէ իւր գործած յանցանքը ոչինչ է (առանց հետևանքի վրայ մտածելու խիստ խմել....). թուլութեան յանցանքներ, եթէ պակասում է մարդուս կամքի հաստատութիւնը (Պետրոսի ուրացութիւնը)։ Վերջին յիշած բոլոր տեսակ յանցանքների մէջ ոչ չար կամեցողութիւն կայ և ոչ չար նախաբան։ Բոլորովին այլ են այն յանցանքները, որոնք որոշ նախաբան ունեն—այստեղ գործողը պարզ կերպով գիտէ թէ ինչ է անում (Յուդայի մատնութիւնը)։ Նախաբան ունեցող յանցանքները վերին աստիճանի զզուելի են (Փարաւօն, փարիսեցիք)։ Գործողութեան արտաքին հետևանքը չէ միայն, որով յանցանքի չափը որոշում ենք (օրինակի համար թեթևամիտ անձի մէկը վառում է լուցկին և հրդեհում ամբողջ քաղաքը, դրա հակառակ՝ ծառայի մէկը որոշ նախագծով այրում է մի հատիկ տուն միայն) և ոչ բազմութեան դատավճիռը (օրինակ մի որդի անզգուշաբար հրացանի գնդակով սպանում է հօրը, հասարակաց կարծիքը նրան խիստ է դատապարտում, իսկ մի այլ որդի աստիճանաբար իւր վարմունքով ծնողաց գերեզման է գնում) և ոչ քաղաքացիական իշխանութեան պատիժը (սա արտաքին հետևանքով գործի մեծութեամբ է միայն դատում և ոչ թէ նպատակով և շարժառիթներով)—յանցանքը դատելու միակ չափը սրտի չարութիւնն է. (Ղուկ. ժբ. 47. «Եւ ծառայ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ եւ ոչ պատրաստիցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում»)։ Մարդուս կամքն է միայն, որ նրան փոքր կամ մեծ է դարձնում։

### Զ. ՅԱՆՑԱՆՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Մինչև այժմ խօսածներից այն հետևանքը կարելի է դուրս բերել, որ ոչ մի յանցանք փոքր չի կարելի անուանել, վասնզի ամեն



մի յանցանք մի տեսակ զանցառութիւն է Աստծու պատուիրանի վերաբերմամբ, ամեն մի յանցանք ստորացնում է մարդուս և սկիզբն է տալիս մեծամեծ յանցանքների։ Այս բանը մենք պիտի լաւ ի միտ առնենք, երբ մեր թուլութիւնը պատճառ բռնելով՝ կամենում ենք արդարացնել մեզ։ Ամենին ևս պիտի ասել—թոյլ, թեթևամիտ մի՛ լինիր, մի՛ չարապիր։ Ամենայն ոք պիտի մտածէ, որ աննախաբան յանցանքները նախաբանաւորների կփոխարկուին և սովորութիւնը գիտէ իւր համար կամուրջ շինել, որի վրայով յանցաւորը հեշտ կերպով միամիտ վարմունքից կանցնի դէպի չարութիւն։ Փոքրից մեծն է կազմւում, աղբիւրից՝ գետեր։ Վերջապէս պիտի չմոռանանք, որ անգիտութիւնը, թեթևամտութիւնը մարդոց համար տասն անգամ աւելի թշուառութիւն են բերել, քան թէ նոյն իսկ չար կամքը և հէնց այդ է պատճառը, որ Աստուած ամենաթեթև յանցանքի համար ամենածանր պատիժն է տալիս (օրինակներ)։ Թէև սուրբ գիրքը ոչ մի յանցանք փոքր չէ անուանում, բայց և այնպէս Ղուկասու ժբ. 47. 48. («Եւ ծառայ որ գիտիցէ զկամս....։ Եւ որ ոչն գիտիցէ եւ արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամենայնի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ, եւ որում բազում աւանդեցաւ՝ առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ») տները զանազանութիւն է անում չար և նպատակաւոր կամքերի մէջ և չարութեան յանցանքն ամենից մեծն է համարում (չարութեան յանցանքները սոքա են—եղեռնագործութիւն, պղծութիւն, սպանութիւն։) Չարութեան յանցանքները երկնքից վրէժ են խնդրում, եթէ մարդիկ լռելու էլ լինին։ Սուրբ գիրքը այդպիսի յանցանք համարում է—անմեղ արիւն թափելը (I. Մովս. գ. 10.), բարուց ապականութիւն (I. Մովս. ժը. 20.), անմեղներին ճնշել (II. Մովս. գ. 7. եւ 9.), մշակի վարձը կտրել (Թ. Յակ. ե. 4.)։ Չարութեան յանցանքները կարող են այն աստիճան մեծանալ, որ նոքա սուրբ Հոգւոյ դէմ լինին (Մտթ. ժբ. 31. 32)։ Այդ րոպէներում մարդս ոչ թէ միայն ճնշում ու լռել է տալիս իւր բարոյական ոյժերը, այլ գայթակղում է ամբողջ ներքին կեանքը, իւր բարի խիղճը և ամեն մի սրբութիւն պղծում է—սատանայական է դառնում այն ամենը՝ ինչ որ աստուածային էր։ Փարիսեցիներն իրանց վարմունքով սուրբ Հոգւոյ դէմ մեղանչեցին, երբ Յիսուսին մեղադրում էին, թէ նա հրաշքները ոչ թէ Աստծու անունով է գործում, այլ՝ սատանայի իշխանութեամբ։

## 5. ՅԱՆՑԱՆՔԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Անմիջապէս յանցանքին է միւսորում սուրբ գիրքը, որպէսզի սրանով յանցաւորներին զգալ տայ «ամենիքեան, որ թողին զքեզ, ամաչեսցեն» (Երեմիա ժէ. 13.). «Զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ» (Թ. ա. Գաղ. զ. 7.) մոռացութեան չի տրւում: Պատիժը հետեւում է յանցանքին, ինչպէս և ստուերն առարկային: Ամենամեծ յանցանքն այն է, երբ յանցաւորն զգում է իրան բարձի թողի եղած Աստծու կողմից: «Վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր ի ձէնջ» (Եսայի ծթ. 2.): Երբ Աստուած երեսը մեզնից դարձնում է, այն ժամանակ զրկւում ենք Նրա ամենամեծ բարիքից, զրկւում ենք այն ամենից, ինչ որ Նրանից է գալիս—և՛ երջանկութիւնից, և՛ օրհնութիւնից, և՛ ուրախութիւնից, և՛ խաղաղութիւնից, և՛ կեանքից, և՛ երանութիւնից: Ով Աստծուն կորցրել է, կորցրել է ամեն ինչ. յանցանքը ոչ թէ միայն մարդուս աղքատացնում է, այլև՝ բառիս բուն նշանակութեամբ, գժգոհ, անբաւական է դարձնում ամեն բանից: Կարիք չկայ մի առ մի թուելու դժգոհութեանց այն անհուն երեւոյթները, որոնք մարդուս ծնունդից սկսած մինչև մահը տեղի են ունեցել յանցանքի պատճառով, բաւական է այսքանն էլ յիշել, որ մարդս իւր ոչ մի թշնամուց այնքան չի սարսափում և վնասներ կրում՝ ինչքան յանցանքից:

Յանցանքը ոչնչացնում է մարդուս առողջութիւնը, տկարացնում և սպառում է ֆիզիքական ույժերը: Անչափաւորութիւնը հիմն ի վեր է տապալում ամենաառողջ կազմուածքը և մաշում, երեխայ է դարձնում հսկայ անձին: Բողջախոհութիւնը գեղեցիկ դէմքը այնպէս է կերպարանափոխում, որ զզուանքով միայն կարելի է նայել այդպիսեաց այլանդակուած կերպարանքին: Կարիք չկայ յանցանքի սոսկալի տեսակները յիշելու, որպէսզի ծանօթանանք, թէ ինչ աւերիչ ներգործութիւն ունի մարդկային կազմուածքի վրայ—ամենաքնքոյշ յանցանքն էլ նոյն ազդեցութիւնն ունի: Ո՞վ չի տեսել և նկատել, որ բարկութիւնը, նախանձը, ագահութիւնը մարդուս դէմքի գծագրութիւնը փոխում են՝ այլանդակում են. ույժերի սպառումն առիթ է լինում, որ երիտասարդ գլուխները սպիտակ մազերով են ծածկւում: յանցանքի հունձքը ամենից առաջ հիւանդանոցներում կարելի է տեսնել—քանի-քանիսը ժամանակից առաջ գերեզման են գնում իրանց: («Ամք ամբարշտաց նուազեսցին» Առակք Սող. ժ.



27.): Քանի քանի երիտասարդներ կարող էին դեռ երկար ապրել և մարդկութեան յառաջադիմութեան օգտակար լինել, եթէ յանցանքը չխլէր նրանցից աշխոյժը և ծաղկի նման չթառամեցնէր: Քրիստոս իւր կեանքում երբէք չէ հիւանդացել, աւետարանիչներն այդ մասին ո՛չ մի ակնարկ անգամ չեն անում:

Յանցանքը խլում է մարդկանցից ոչ թէ միայն ֆիզիքական այլև արտաքին՝ նիւթական բարիքները ևս: Շռայլ անձը կորցնում է իւր կարողութիւնը. ստախօսը ամօթի և աղքատութեան է դատապարտւում. դաւաճանը ամենի սրտից կտրում է յարգանքը: Յանցանքը խորտակում է ոչ թէ միայն անհատի բարեկեցութիւնը, այլև ընտանիքի երջանկութիւնը և տէրութեան գոյութիւնը (Հռովմի անկումն, Երուսաղէմի կործանումն): Ի՜նչքան երջանիկ կլինէր մարդկութիւնը, եթէ յանցանքի գիրկն ընկած չլինէր—«Նուազեցուցանեն զազգս մեղք» (Առակք Սող. ժդ. 34.):

Յանցանքի պատճառած արտաքին թշուառութիւնը մեծ է, բայց աւելի մեծ է նրա ներքին՝ հոգեկան ապականութիւնները: Ուր որ նա ոտք է դնում—ա. մարդուս բանականութիւնը կուրացնում է և նրանից խլում ըմբռնողութեան պարզ ձիր: Յանցանքի նզովքներից մինն էլ այն է, որ յանցաւոր մարդու ամենաբարձր բարիքն Աստուած չէ, այլ՝ անցաւոր իրերը, աշխարհիս հարստութիւնը, շատերի համար փողը կուռք է դառնում—նրա բարձր իդէալն է—նա փոխարինում է յաւիտենականը անցաւորի հետ: Այդ պատճառով էլ յանցաւորը զրկւում է իւր երջանկութիւնից—նա այլևս չէ զղջում, չէ ապաշխարում, դէպի փրկութիւն չի դիմում. Ներքին ձայնը՝ խիղճը աւելի և աւելի է լռում. գեղեցկի և տգեղի, ազնուի և անազնուի զանազանութիւնը հետզհետէ չքանում է այդպիսեաց համար: Խելագարի նման ծիծաղում է ինքը իւր վրայ, այն ինչ այլք ողբում են նրա գլուխը: Զարմանք չպիտի թուայ մեզ, եթէ այդպիսի անհատը անդունդ գլորուի և խորտակուի (խաղացող, արբեցող, ինքնասպան....): Սուրբ գրքի խօսքը կատարւում է մեր աչքի առաջ—«տեսանեն եւ ոչ տեսանեն. լսեն և ոչ լսեն». (Մատթ. ժգ. 13.): Մեզ համար այլևս մեկնութեան կարօտ չէ Քրիստոսի խօսքերը. «Հա՛յր, թո՛ղ դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն»: Յանցանքը ոչ թէ միայն բթացնում, կուրացնում է մարդուս հոգին (V. Մովս. իը. 28. 29.), այլև բ. նսեմացնում, աղօտացնում է մարդուս զգացմունքները—զուարթութիւնը փոխարկւում է մեռելութեան, սէ-

րը՝ ինքնասիրութեան, համակրութիւնը՝ հակակրութեան, ուրախութիւնը՝ տրտմութեան և օրհնութիւնն՝ անէծքի: Կայէնի նման երերեալ, տատանեալ է, խիղճը հալածում է նրան, հանգիստ դադար չունի, մի տեղից միւսն է թափառում:

Յիշեցէք Յովսէփի եղբայրներին, երբ նրանք իրանց եղբօր ճանաչեցին: «Նրանք այլևս չգիտէին թէ ինչ պատասխանեն, այնպէս վախեցան» (I. Մովս. խե. 3.). յիշեցէք Յուդային և նրա վախճանը:

գ. Յանցանքը խլում է մարդուց նրա ազատ կամքը: Ո՜րքան յաճախ մարդս անհոգ է լինում բարին, գեղեցիկը կատարելու, այնքան էլ նրա սէրը նուազում է դէպի բարին: Ընդհակառակն՝ քանի որ չարութիւն է գործում, այնքան էլ գրաււում է նրանից և վերջ ի վերջոյ հասնում է այնտեղ, որ նրա կամքը պէտք չէ բարիք գործելու համար—նա դառնում է գերի, ստրուկ իւր կրքերի. «Որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց» (Յովհ. ը. 34. համեմատել Թ. առ. Հռմ. է. 14. և Մտթ. իգ. 37.): Յանցանքը հրամայում է, յանցաւորը պարտաւոր է լսել նրան. (արբեցող, թղթախաղ, բողջախոհ....): Ուրեմն զգո՛յշ եղէք, որ ոչ միանգամ սուտ չխօսէք, չգողանաք.... որովհետև ով միանգամ սուտ խօսեց....երկրորդ անգամ էլ կխօսէ, շատ անգամ էլ կխօսէ, ամեն անգամ էլ կխօսէ: Մի յանցանքը միւսի մայրն է: Յանցանքը նման է մի գնտակի, որ գտանւում է զառիվայրի վրայ:

Սոքա այն յանցանքներն են, որոնք երկրիս վրայ են պատահում: Լեզուի մէջ պատահած արտայայտութիւնները ես վկայ են սրան—«ոչ ոքի չի մնայ իր արածը», «ինչ կցանես, այն կհնձես», «ստի ոտները կարճ է», «կուժը ջրի ճանապարհին կկոտրուի», «ով յանցանքի հետ կխաղայ, շուտով յանցանքն էլ նրա հետ կխաղայ»: Մենք չպիտի գայթակղուինք, եթէ տեսնենք մի քանի յանցաւորներ անպատիժ շրջում են երկրիս վրայ և առանց խղճի խայթ կրելու՝ իրանց յանցանքը մինչև վերջը շարունակում են:

Յանցանքի պատիժը երկրաւոր կեանքով չէ վերջանում: Սրան վկայ է հարստի և աղքատ Ղազարոսի առակը (Ղուկ. ժզ.): Յանցանքը չէ բաւականանում նրանով, որ մարդկանց երկրաւոր երջանկութիւնը թունաւորում է, այլ նա ձեռնամուխ է լինում ապագայ կեանքին ևս՝ և դառնացնում է հանդերձեալ երջանկութիւնը (Մտթ. իե. 46): Եթէ անառակ որդին այնտեղ մօրը նորից գտնէ, ո՞րպիսի յանդիմանութիւն: Եթէ մարդս ստիպուելու է այնտեղ տեսնել և լսել իւր շրջակայքում վշտի, հառաչանքի ձայներ—ո՞րպիսի վիճակ: Մարդս իւր խղճի խայթից փախչելու ոչ մի տեղ չէ գտնում—այս այն որդն է, որ չի մեռանում, այս այն հուրն է, որ չի շիջանում—ո՞րպիսի դժոխք:



Ահա՛ սոքա են յանցանքի մարմնական և հոգեկան ժամանակաւոր և յաւիտենական աղէտները, որոնց սուրբ գիրքը «մահ» խօսքով է արտայայտում (Թ. առ. Հռմ. զ. 23): Մեր ասածների գումարն է— յանցանքի գիտակցութիւնը սարսափելի է:

Պատկերի տխուր կողմը դիտելուց ետոյ՝ նայենք միւս երեսը ևս, որտեղ յուսահատեալ ոգին նորից փառաւորութեան և արիութեան զգացմունքով է ներշնչւում—ուստի թոյլ տուէք ինձ, որ ձեզ ցոյց տամ ասածս—

## 6. ՓՐԿՈՒԹԻՒՆ ՈՒ ՓՐԿՉԻՆ

Ճշմարիտ է, այն պատիժը, որ Աստուած երկրիս վրայ սահմանել է մեղաւորների համար, մեծ է. բայց աւելի մեծ է այն օրէնքը, որով Աստուած աշխարհս կառավարում է—Աստուած երբէք ոչ ոքի չի պատժում՝ առանց մի օգտաւէտ հետևանքի—նա ցաւեցնում է՝ ուրախութիւն պատճառելու համար: Եթէ Աստուած յանցանքի հետ պատիժը միացրած չլինէր, այն ժամանակ ոչ մի դատապարտեալ չէր դառնայ և չէր զղջայ, այլ անդարձ կկորչէր: Յանցանքի այս ծանր հետևանքն է, որ մարդուս համոզում է, թէ նրա թշնամական դիրքն առ Աստուած դէպի ո՞րպիսի կործանումն է տանում նրան: Դարձեալ՝ մարդս հանգստութիւն չի կարող գտնել՝ մինչև որ նրա (Աստծու) մէջ չորոնէ իւր հանգիստը:

Այն՝ ինչ որ մարդկային սահմանափակ մտքի առաջ խիստ արդարութիւն է երևում, ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ Աստծու սէրը, որ պատժի փրկարար միջոցովը յանցաւորին ոչ թէ միայն դէպի ինքնաճանաչութիւն է տանում, այլ ստիպում է նրան յետ դառնալու: Եւ այսպիսի դարձերը հնարաւոր են: Մարդս որքան էլ խորըն ընկղմած լինի յանցանքի մէջ՝ այնուամենայնիւ դարձեալ հնարաւորութիւն կայ նրան օգնութեան աջը կարկառելու: Մարդուս ստոր կողմերը յանցանքի միջնորդութեամբ կարող է նրա վսեմ յատկութիւնները ճնչել և սրանով էլ աստուածային պատկերը այլանդակել, բայց ոչ մի յանցանք աշխարհիս մէջ ընդունակ չէ բացէ

ի բաց ոչնչացնելու մեր մէջ աստուածային պատկերը: Մարդս յանցանքի մէջ էլ մարդ է մնում: Յանցանքը, որ մարդու խակական էութիւնից չէ, այլ մի չարիք է մարդուս էութեան համար: Արդարև կարող է Աստծու պատկերը աղօտացնել, բայց ոչ ջնջել. մարդուս բնաւորութիւնը կարող է ապականել, բայց ոչ խապառ, ամբողջովին անհետ առնել: Ամենալաւ մարդու մէջն էլ մի կըտոր չարութիւն կայ թագցրած և ընդհակառակն՝ ամենավատ մարդու մէջն էլ բարութեան նշոյլ կարելի է նկատել: Դրա համար էլ ամենայն մարդու կրծքի մէջ հնչում է դեռ ևս մի լար կորուսեալ դրախտի երգից, դրա համար էլ ժամանակ առ ժամանակ ամեն մարդու մէջ զարթնում է լաւագոյն եսը և հայելին բռնում է նրա հոգու առաջ, ցոյց է տալիս նրա աստուածային կոչումը—դրա համար էլ՝ նոյն իսկ ամենաընկած ժամանակամիջոցում, չի լռում լարը յաւիտենական ճշմարտութեան մասին մեղմիկ հնչելու: Որպէս օտարութեան մէջ ապրող հայրենասէր յանցաւորը հեռի Աստծուց՝ ցաւերի և վշտերի մէջ զգում է իւր միայնութիւնը, մենակ լինելը: Բայց միևնոյն ժամանակ, որպէս գահավէժ արքայ, հեռաւորութեան մէջ յոյս ունի ձեռք բերելու իւր նախկին մեծութիւնը: Այսպէս էլ յանցաւորը անձկում է գտնել նախկին ճըշմարտութիւնը, արդարութիւնը—երջանկութիւնը: Ինչպէս մի անառակ որդի, ամեն մարդու մէջ յոյս կայ, որ մի օր պիտի փրկուի, որ պիտի հաշտուի և որոշէ հայրենիք դառնալու—«յարուցեալ գնացից առ հայր իմ»: Ապա ուրեմն այլ ևս կասկած չի մնում, որ մարդս ոչ թէ միայն փրկութեան կարօտ է, այլև փրկութեան ընդունակ:

Այո, յանցաւորին օգնել կարելի է: Նա չի նմանում դիակի, որի մէջ կեանքի վերջին կայծը մարել է, այլ ծանր հիւանդի, որի կեանքի թելը դեռ չէ կտրուած: Հիւանդ ոգին կարող է ի նորոյ առողջանալ. յանցանքի կեղտը կարելի է լուանալ և չարութեան մեծութիւնը ոչնչացնել: Չկայ այնպիսի փոքր յանցանք, որ պատիժ չկրէ, այլև չկայ այնպիսի մեծ, ծանր յանցանք, որ ներել կարելի չլինի: Չկայ մի մարդ, որ փրկութեան կարօտ չլինի. չկայ այնպիսի վատ մարդ, որ չկարողանայ փրկել իրան: Մարդս կարող է փրկուել, նա փրկութեան ընդունակ է:

Աստծու յաւիտենական սէրն էլ չի կամենում, որ մինը կորչի, այլ՝ ամենքն էլ յաւիտենական կեանք վայելեն (Յովհ. գ. 16.)—Նա



գթած, ողորմած է դէպի ամենը: Բարի Աստուածը մեզ համար մի հատ հոգեկան բժիշկ է ուղարկել, որ մարդկութիւնը բժշկում է յանցանքի ծանր հիւանդութիւններից, մեղաց իշխանութիւնը ոչնչացընում է, կատարուած չարութիւնը ջնջում է և ոյժ է տալիս կեանքի նոր ճանապարհովը հաստատ քայլեր անելու: Ոգիների այս մեծ բժիշկը՝ այս Փրկիչը, որ վիրաւորուած խղճերը, բեկեալ սրտերը բժշկում է (Մատթ. թ. 12.), աշխարհիս այս ազատարարը մեր տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ է: Նա եկել է կորածներին որոնելու և երջանիկ դարձնելու նրանց: Մարդկութեան պատմութիւնը նրանով մի նոր դարաշրջան է սկսում: Փրկչական սիրոյ ամենակարողութեամբը նա ոչ թէ միայն աշխարհին յաղթեց, այլ մարդկային բնաւորութիւնը կերպարանափոխեց և աստուածային պատկերը իւր պարզութեամբ նորից վերականգնեց: Նրան ենք պարտական, որ այսօր մենք ևս չենք ստիպւում հռովմայեցի բանաստեղծ Օվիդի հետ ասելու. «Բարին ի նկատի ունիմ, բայց դէպի չարն եմ ձգտում», այլ Պաւղոսի հետ կարող ենք խոստովանել. «նա՝ որ ինձ զօրաւոր է առնում, նրանով ես ամենայն ինչ կարող եմ անել»: Ով Յիսուսին է անձնատուր լինում և նրա ոգին իրան է սեպհականում, չէ նմանում այլևս վայրենի, թթու պտուղ-բերող ծառին, այլ՝ ազնուացրած, պատուաստած ծառի, որ իւր հին բնի վրայ կրում է գեղեցիկ ճիւղեր, պատուական ծաղիկներ և համով պտուղներ: Հեթանոսի մէկը սխալ չէ ասել. «Յիմարութիւն է ասել, թէ քրիստոնէութիւնը յանցաւորներին դարձնում է»: Միթէ չգիտեն—նոցա, որոնց բնական ազդեցութիւնը և սովորութիւնը յանցանքի մէջ հաստատել է, բուժել անկարելի է. եթէ երկիւղը և պատիժը ընդունակ չեն այդպիսիներին ի դարձ կոչել, ինչ պիտի օգնէ բարի և ողորմած վարմունքը»: Հէնց այն ժամանակամիջոցում, երբ հեթանոսութիւնն ուրանում էր, թէ քրիստոնէութեան մէջ փրկութեան ոյժ կայ, քրիստոնէութիւնը գործ դրեց այդ ոյժը (բարի և ողորմած վարմունք) և դարձրեց հեթանոսութեան, որովհետև Քրիստոսով սկսուեց սրտերի աշխարհակալութիւնը, տիրապետութիւնը ամբողջ երկրիս վրայ. մարդկային գործերի այն հսկայ կերպարանափոխութիւնը, որին հին աշխարհը իւր թշուառութեան մէջ անձկալով անձկում էր: Ամենակարող սիրոյ անպատմելի զօրութեամբը զինուած՝ Խաչեցեալի հետևող աշակերտները աւետարանի փրկարար սէրը ի սփիւռս աշխարհի տարածեցին և ամենքն էլ հընարաւորութիւն տուին մեղքից ազատուելու և ի Տէր կեանք վարելու:

ինչպէս որ ձիւնը արևի ճառագայթների տակ հալչում է, բարձր լեռան կատարից վայր է հոսում հիւսի նման, այսպէս էլ քրիստոնէութեան տարածումն եղաւ՝ չնայելով այն արգելքներին, որոնք նրա առաջ գլորում էին իւրաքանչիւր քայլափոխում: Այս աշխարհի տէրութեանց մէջ քրիստոնէութիւնը դարձաւ բուժարան, որ վաստակեալներին հանգիստ և վրդովուածներին խաղաղութիւն էր պարգևում: Այդ բուժարանը մի նոր տէրութիւն էր, որ իւր մէջն էր ամփոփում այն ամենին, որոնք արդարութեան համար ծարաւի և սոված էին—տէրութիւն, որի Թագաւորը Քրիստոս է. այնտեղ յանցանքը ոչնչացրած է և սահմանած է մի նոր կեանք՝ ի Տէր: Այս տէրութիւնը, այս Թագաւորութիւնը, որ ըստ երևոյթին թոյլ և անկայուն է երևում, անսասան է, ամենահաստատուն է. նա նման է մի սալի, որի վրայ բոլոր մուրճերը փշրուել են: Այս Թագաւորութեան մէջ ամեն ոք կարող է հանգիստ գտնել, ամենայն ոք կարող է երջանիկ լինել:

Յիսուս Քրիստոսի սէրը հրաւիրում է մեզ ամենքս դէպի այս Թագաւորութիւնը (Մատթ. ժա. 28. 29).—«եկայք առ իս ամենայն (արհեստաւորներ, գիտնականներ, Թագաւորներ, մուրացկաններ, ծեր և մանուկ, այր և կին, ուսուցիչ և աշակերտ) վաստակեալք եւ բեռնաւորք (մեղաց, յանցանաց բեռով) եւ ես հանգուցից զձեզ (մխիթարեմ, փրկեմ և կազդուրեմ): Առէք զլուծ իմ (աւետարանական սիրոյ հեզ լուծը) եւ ուսարուք յինէն (յանցանքը հեռացնել, սիրով ապրել) զի հեզ եմ (ես Մովսէսի նման որոտով և կայծակով չեմ երկիւղ տալիս—տ. II. Մովս. ժթ. 6. V. Մովս. իէ. 26. Թ. ա. Համ. գ. 15.) եւ խոնարհ սրտիւ (ես գալիս եմ ձեզ մօտ սիրելով, որպէսզի ձեզ՝ անկեալներիդ բարձրացնեմ մինչև հայրական սիրտը) եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց» (հանգիստ՝ յանցանքի դէմ մղած պատերազմից յետոյ, հանգիստ՝ Աստծու հետ և Աստծու մէջ խաղաղ ապրելու): Ցանկանո՞ւմ էք այս բարեկամական հրաւէրին հետևել և մտնել այդ խաղաղութեան Թագաւորութիւնը, որ Քրիստոս է հիմնել ազատ և երջանիկ լինելու համար: Արդեօք կամենում էք այն լինել, ինչ որ ձեզանից ամեն մինը պիտի լինի և պարտաւոր է լինելու—որդիք Աստուծոյ, քաղաքացիք երկնից արքայութեան: Այսպէս ուրեմն մօտ եկէք, ովքեր ձեր հոգւոյ համար խաղաղութիւն և հանգիստ էք որոնում: Նախ՝ ուսէք ճանաչել նրան, ով այս Թագաւորութիւնը հիմնել է և ապա սիրել նրան, որ մեզ հաւաստիացրել է—



«Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ զնա». Յովհ. ժդ. 23.): Սրանով մենք անցնում ենք ուսումն կրօնի երրորդ մեծ հատուածին:

# ԵՐՐՈՐԴ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏՈՒԱԾ

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ (ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ)

Աստիճանաբար զարգացման օրէնքը՝ բնական օրէնք է տիեզերքի մէջ: Բնութեան Թագաւորութեան մէջ ամենուրեք մեծը փոքրից է յառաջանում. կոկոնը, բողբոջը՝ սաղմից, պտուղը՝ ծաղկից: Ամենուրեք ապագան ծանր, բայց հաստատ քայլերով է յառաջ գնում—ապագայի հիմքը անցեալի զարգացման աստիճանների մէջ պիտի փնտռել: Օրինակի համար՝ ոչ թէ գարնանն է նոր կոկոններ պատրաստւում, այլ՝ աշնանը: Նոր կոկոնները ոչ թէ միայն հին տարուան տերևներին հեռացնում են, այլ՝ նրանց մէջ աստիճանաբար պատրաստւում են ապագայի տերևներն ու ծաղիկները, որոնք գարնան ջեռուցիչ արևի ներքոյ երփներանգն գոյներով բացւում են, ծաղկում են և աշնան համար համով պտուղներ պատրաստում: Այս միևնոյն երևոյթները կատարւում են և հոգեկան աշխարհում: Այստեղ ևս ոչինչ չի յառաջանում առանց նախապատրաստութեան և յանկարծակի—ամեն ինչ անցեալի կոկոնների մէջ է պատրաստւում և ծաղիկ ու պտուղ դառնում. ամենուրեք ներկան անցեալի զաւակն է և ապագայի մայրը. ամենուրեք որպէս մարդկութեան մեծ դաստիարակ է ներկայանում Աստուած, որ աստիճանաբար մեծացնում է որդւոցը իւր էութիւնն ու կամքը ճանաչելու:

Եթէ ամենայն ինչ տիեզերքի մէջ այս ընդհանուր օրէնքին ենթակայ է, հապա ուրեմն Աստծու Թագաւորութեան հաստատութիւնը մի իրողութիւն է, նա ևս այս կանոնին է ստորադրւում: Աստծու արքայութեան հաստատութիւնը, որպէս հոգեկան աշխարհի մի գործ, նոյնպէս յանկարծակի և առանց նախապատրաստութեան չէ եղել, այլ սրա արմատները՝ սկիզբն ևս անցեալի մէջն է: Աստծու արքայութեան հաստատութիւնը նախապատրաստուած է հին ժամանակի լուսաւոր, իմաստուն և օրէնսէր մարդկանց ձեռքով: Նա նա-

խապատրաստուած է ամենից առաջ, հէնց այն ժամանակ՝ երբ վկայութեան խորանը հիմնուեց—այն նախապատրաստուած է հրէից ազգի պատմութիւնով, նահապետների՝ Մովսիսի, Դաւթի, մարգարէների, մինչև անգամ Յիսուսի յառաջընթաց Յովհաննէս Մկրտչի ձեռով: Այս ամենն էլ մատնանիշ են եղել դէպի Փրկչի գալուստը, որ Աստուած ի յաւիտենից տնտի նախասահմանել է—սա հին ուխտի մարգարէութիւններով յայտարարած է—երբ ժամանակը լրացաւ, ուղարկուեց Միածինը, զինաւորուած սուրբ Հոգւոյ շնորհներով: Միածինն այս ամենը իւր երկրաւոր կեանքի գործունէութեան փառաւոր հետևանքովը ժամանակի ընթացքում հաստատեց, արդարացրեց: Բայց յառաջ քան համեղ պտղի երևալը տիեզերական պատմութեան մէջ, պէտք էր, ինչպէս վերը նկատուեց, հազար տեսակ նախապատրաստութիւններ տեղի ունենային, որպէսզի մարդկութիւնը հասնէր հոգեկան զարգացման այն բարձր աստիճանին, որ ընդունակ լինէր մատակարարուելիք փրկութիւնն ըմբռնելու և հասուն լինելու տիեզերական պատմութեան այս մեծ գործը իւրացնելու—ամենից առաջ մարդկութիւնը պէտք է գիտակից լինէր իւր յանցանքին, որպէսզի նրա մէջ ջերմ ցանկութիւն ծագէր փրկութեան կարօտութիւնն զգալու և այն կարող էր գալ Նա, որի մասին սուրբ գիրքն ասում է. «Այլ իբրև եկն լրումն ժամանակի, առաքեաց Աստուած զորդին իւր». (Թ. ա. Գաղ. դ. 3. 5.): Ուստի և մի հայեացք ձգենք այս նախապարաստական ժամանակամիջոցի վրայ:

## Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Աստուած, որպէս դաստիարակ, երկար՝ շատ երկար ժամանակ մարդկութիւնը նախապատրաստում էր, որպէսզի նա կարող լինի երկնից արքայութիւն մտնել: Այս նախապատրաստութեան սկիզբը հէնց դրախտից է սկսւում, ուր առաջին երկու մարդիկն էին ապրում: Այն խօսքը թէ. «Եւ եդից թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ....Նա սպասեսցէ քում գլխոյ եւ դու սպասեսցես նորա գարշապարի»(1. Մովս. գ. 15.) համարւում է երկնից արքայութեան առաջին մարգարէութիւնը: Այն անձը, որ օձի գլուխը պիտի ջախջախէր, Տէրն մեր Յիսուս Քրիստոսն է: Աստծու արքայութեան նախապատրաստութիւնը իրականապէս սկիզբն է առնում այն անձից, որին Աստծու յաւիտենական սէրը ընտրել էր նախահայր լինելու այն ազ-



գին, որից 2,000 տարի յետոյ ծնաւ մեղաց օձի գլուխը ջախջախողը: Այս պատճառով էլ ի մօտոյ կծանօթանանք նահապետ Աբրահամի և նրա յաջորդների հետ:

### 1. ՆԱՀԱՊԵՏՆԵՐ

Աբրահամի անձնաւորութիւնը մեր դարու հայեացքով չպիտի չափենք: Մենք մտքով պիտի տեղափոխուենք հեթանոսութեան այն խաւար անապատը, որի մէջ Աբրահամը դաստիարակուեց: Նրան շրջապատողները բոլորն էլ կուռքերին էին պաշտօն մատուցանում. ուսումը և դպրոցը չէին, որ Աբրահամին այդ մտքի բերին, այլ՝ ինքն իրմով, իւր սեպհական ոյժերով բարձրացաւ և այլ ձևով հաւատաց՝ քան թէ իւր նախնիքն էին հաւատում: Երկար, հերոսներին յատուկ, պատերազմ մղելուց ետոյ՝ հասաւ աստուածաճանաչութեան գաղափարին: Իւր խղճի ձայնին լսելով՝ անհաւատութեան ուղիից դէպի հաւատոյ ճանապարհն անցաւ, հայրենի երկրից օտար աշխարհ տեղափոխուեց: Պէտք է երևակայել, թէ ո՜րպիսի ներքին պատերազմներ մղած կլինէր մինչև որ հայրենի աւանդութեան մտածելու եղանակից դէնը կանցնէր՝ խորտակելով կռապաշտութեան շղթան և մի Աստուած կճանաչէր, որի ձայնը իւր ներքինում յայտնուել էր՝ և որի խօսքին նա ուշադրութեամբ լսում էր: Թէև երկնքի և երկրի Սադդայի Աստծուց, այսինքն ամենակարողի, որին Աբրահամը ճանաչում էր, մինչև սիրոյ Աստուածը բաւական հեռաւորութիւն կար, բայց Աբրահամը մի քայլ առաջ գնաց և այդ քայլը՝ իսկական մտքով առած, կատարեալ յառաջադիմութիւն էր—նա մի կենդանի սկիզբն էր, հիմն և անկեան քար, որի վրայ ապագայ հաւատոյ շէնքը կայուն և հաստատ ձևով կառուցուեց:

Աբրահամը իւր սեպհական գիտակցութեամբ ճանաչեց Աստծու ամենակարողութիւնը և այս հաւատին համաձայն՝ երկիւղած, հնազանդ և աստուածահաճոյ կեանք էր վարում (տես I. Մովս ժէ. «Եւ երևեցաւ Աստուած Աբրահամու եւ ասէ ցնա. Ես եմ Աստուած քո, հաճոյ լեր առաջի իմ: Եւ հաւատաց Աբրահամ Աստուծոյ»): Պակաս նշանաւոր չէ և այս հանգամանքը—Աբրահամ առաջինն էր, որ այս ճանաչողութեան եկաւ—ոչ թէ մեռեալ գործը, այլ՝ կենդանի հաւատն է, այսինքն ներքին կերպով Աստծուն անձնատուր լինելն է, որ միայն հաճելի է Աստծուն (I. Մովս. ժե. 6): Այս ճանաչողութեամբ, այս գաղափարով, այս ձևի ըմբռնումով Աբրահամը ոչ թէ միայն

ինքը հաւատացող դարձաւ, այլև հայր հաւատոյ և նրա ազգը այժմեանից սկսած՝ վերաբերութեամբ անթիւ անհաւատների՝ բարձր կոչումն ստացաւ հաւատացեալ ժողովուրդ լինելու։ Այս միննոյնը սուրբ գրքի մէջ Աստուծոյ խոստումն անունով յայտնի է, որի էական մասը հետևեալ խօսքերով է արտայայտւում «Եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի» (I. Մովս. ժբ. 3.)։

Երրայեցւոց ազգի հետևեալ երկու նահապետներն են Իսահակը և Յակովբը։ Իսահակի կեանքն ամբողջապէս վիշտ և նեղութիւն է, իսկ Յակովբինը՝ եռանդուն գործունէութիւն։ Յակովբի կեանքն սկզբում, ցաւօք սրտի՝ որոշ ուղղութիւն չունեցաւ, դրա համար էլ Աստծու դաստիարակութեան նշաններն այստեղ սուր կենպարանքով են երևան գալիս՝ քան թէ Իսահակի մօտ։ Յակովբի սկզբնական տարիները փայլուն չեն—նա խաբում է հօրը, եղբօրը, չահասէր է, դրա համար Աստուած նրան վշտակրութեան դպրոցն է տալիս (փախչում է հայրենի տանից, ճանապարհին կրած նեղութիւնները, Լաբանը խաբում է նրան, երկիւղ Եսաւից....)։ Շատ ուշ կարողացաւ Յակովբը իւր հայրերի նման անձնատուր հաւատ ունենալ։ Երբ Յակովբը վշտակրութեան դպրոցում ուսաւ իւր չգիտցածը և վարժուեց այն բանին, ինչում որ անփորձ էր, յետոյ ոտք դրաւ հայրերի հաւատոյ շաւիղը—մաքրեց իւր սիրտը կռապաշտական սովորութիւններից, աստուածպաշտութիւն սահմանեց և այն էր անում, ինչ որ Աստծուն հաճելի էր։ Եւ երբ նրա վերջին ժամը խփեց և իւր հայրերի մօտ գնաց, նրա միտքը պայծառացաւ և մարգարէական ոգւով նայեց ու տեսաւ ապագայ ժամանակի փրկութիւնը և մահուան անկողնի մէջ ասաց—«առիւծից՝ Յուդայի ցեղից կդուրս գայ մինը և իւր գաւազանով կկառավարէ բոլոր ազգերին» (I. Մովս. խթ. 9. 10)։ Յակովբի որդի Յովսէփի կեանքը մեզ համար կենդանի ապացոյց է, որ Աստուած չար կամքերը, նենգ խորհուրդները իւր իմաստութեամբ գիտէ ծառայեցնել փրկութեան գործին (I. Մովս. ծ. 20)։ Յովսէփի ձեռքով իսրայէլացիք Եգիպտոս եկան և արգաւանդ Գեսեմ երկիրն ստացան ի տրիտուր նրա բազմամեայ արդիւնաւէտ ծառայութեան։ Այստեղ 400 տարուայ ընթացքում ժողովուրդ կազմելու չափ պիտի բազմանային։ Հայրերի խոստումը պիտի պահպանէին և Աստծու սիրոյ փրկութեան գործիք լինէին։ Բայց ի ցաւ սրտի, գռեհիկ ամբոխը կռապաշտութեան և մեղքի մէջ ընկաւ և մոռացաւ իւր խաղաղութիւնը—այն ժողովուրդը,



որ սուրբ ժողովուրդ պիտի դառնար, անսուրբ Եգիպտոսից պիտի դուրս գար։ Սրանով սկսւում է աստուածային փրկութեան նախապատրաստութեան երկրորդ շրջանը։

## 2. ՄՈՎՍԷՍ ԵՒ ՕՐԷՆՔ

Երբ Աստուած իւր թագաւորութեան մէջ նշանաւոր գործ է կամենում կատարել, մեծ մարդիկ է ստեղծում, ոգիական ընտիր յատկութիւններով զարդարուած. նրան ուղարկում է կեանքի և վշտակրութեան դպրոցը, որպէսզի ուսանին, թէ ինչ է պէտք իրանց և իւր ընտրեալ անօթը դառնան։ Մի այսպիսի անձն Աստծու ծառայ Մովսէսն էր, որին Աստուած ընտրեց՝ իրենից հեռացած սերնդի սիրտն ի նորոյ դէպի Եհովայի խոստումը դարձնելու և կռապաշտութեան մէջ վայրենացած իսրայէլացի հովիւներին ու արքունի շինութեանց մշակներին Եգիպտոսից դուրս բերելու, խոստացեալ երկիրը տանելու, ուր մարդկութեան փրկութիւնը պիտի երևար։ Շատ դժուար գործ էր Ռամզէս Մենեֆտա (երկրորդ Ռամզէսի որդին) Փարաւոնի կամքին հակառակելը, բայց սրանից ևս աւելի դժուար էր եգիպտական ծառայութեան մէջ վատացած իսրայէլացիներին բարոյապէս բարձրացնելը։ Զարմանալին այստեղ այն է, որ իսրայէլի ոխերիմ թշնամին՝ Փարաւոնն ինքը միջոցներ պիտի ընձեռէր այս հսկայագործ դիտաւորութիւնն ի կատար հանելու։ Եթէ Փարաւոնը Նեղոսի ափում գտնուած Մովսէսին իւր պալատը չէր տարել և Եգիպտոսի բոլոր գիտութիւնները չէր ուսուցել և եթէ Մովսէսը շարունակ առիթ չէր ունեցել իւր ուսածը հայրենի բարեպաշտ հաւատոյ հետ համեմատելու, նրա մէջ հազիւ թէ միտք ծագէր իւր ժողովրդի Փրկիչը լինելու։ Սրա վրայ պիտի աւելացնենք և այն՝ որ Փարաւոնի խստութիւնները շարժեցին Մովսէսի բարկութիւնը և նրան ևս աւելի յառաջ մղեցին թեթևացնելու ընկճեալ հայրենակիցների վիճակը։ Մովսէսի դիրքը պալատում բաւական համապատասխան էր այս նախագծի իրագործման։ Մովսէս, որի մասին սուրբ գիրքը պատմում է, թէ նա Եգիպտոսում մեծ անձնաւորութիւն էր, իւր որոշած նախագծի իրագործման մէջ այն աստիճան առաջ գնաց, որ մի եգիպտացի սպանեց, որի պատճառով էլ ստիպուեց փախուստ տալ Եգիպտոսից։ Հովուական խաղաղ, անվրդով կենցաղավարութեան մէջ ոչ թէ միայն նրա ատելութիւնը զօրացաւ դէպի Փարաւոնը, այլև այն համակրութիւնը, այն կարեկցութիւնը, որ ունէր դէպի իւր հայրենակիցները—վճռեց

կրկին ազատիչ լինել Իսրայէլի ժողովրդին՝ նախ փրկել նրանց՝ Եգիպտոսի ծառայութիւնից և երկրորդ՝ նրանց կաշկանդուած միտքը՝ օտարին ծառայելուց։ Մովսէսին յաջողեց չուել տալ ժողովրդին։ (Ըստ սուրբ գրքի և հնագիտաց 1,312 ա. Ն. ք. Ք.)։ Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը չմոռացաւ նրանց։ Երբ ժողովուրդը Կարմիր ծովի ափին հասաւ՝ առաջևից ծովը, իսկ ետևից ոխերիմ թշնամին բանակած, ոչ կամուրջ, ոչ նաւ կար միւս ափն անցնելու, ահա այստեղ Եհովան գոռոզ թագաւորի ամբարտաւանութեանը չափ դրաւ և իւր ժողովրդին փրկիչ հանդիսացաւ։ Մովսէսը Կարմիր ծովի յատակովն անցկացրաւ ժողովրդին։ Ժողովուրդը ծովի միւս ափին երախտագէտ սրտով երգեց. «Օրհնեսցուք զՏէր;... օգնական ընդունելի իմ Տէր՝ եւ եղեւ ինձ ի փրկութիւն». (II. Մովս. 15.)։ Այնուհետև Աստծու օգնութեամբ տարաւ, հասցրեց նրանց մինչև Սինայի անապատը և այնտեղ ևս ոչ թէ միայն Եհովայի պաշտպանութիւնը վայելեցին և երանաւէտ խոստումն ստացան, թէ («Եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց, զի իմ է ամենայն երկիր եւ դուք եղիջիք ինձ ի թագաւորութիւն եւ ի քահանայութիւն եւ յազգ սուրբ» (II Մովս. ժթ. 5. 6.), այլև ստացաւ այս փառաւոր նպատակին հասնելու միջոցը, այն է *օրէնքը*։

Օրէնքը փրկութեան ժամանակի լրման համար մի տեսակ նախապատրաստական աստիճան է։ Եթէ մարդկութեան մէջ փրկչի ակնկալութիւն պիտի զարթեցնէր, այն ժամանակ Աստծու օրէնքը մարդու համար հայելի պիտի համարել, որի մէջ իւր հոգւոյ էութիւնը պիտի տեսնէ և սրանով էլ իւր յանցանքները ճանաչէ։ «Զմեղս ոչ գիտէի», ասում է Պօղոսը առ Հռովմայեցիս գրած թղթի է. 7. 8. 9.-ում, «եթէ ոչ օրինօք, եւ զցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ, մի՛ ցանկանայցես։ Առանց օրինացն մեղքըն մեռեալ էին, այլ իբրեւ եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդանացան»։ Օրէնքը սրբութիւն է պահանջում, բայց մինչև այդ սրբութեան հասնելը, մարդս պիտի ճանաչէ յանցանքը։ Օրէնքի առաջին նպատակն է, Պօղոսի լեզուով խօսենք, «օրինօքն է գիտութիւն մեղաց» (թ. առ. Հռմ. գ. 20.)—որ մենք մեր մեղքը, սխալը ճանաչենք։ Սրան հետևում է օրէնքի երկրորդ նշանակութիւնը։ Մովսէսն օրէնք տուաւ, որպէսզի Իսրայէլին սուրբ ժողովուրդ դարձնէ։ Եթէ Մովսէսը օրէնքի հետ տուած լինէր և այն զօրութիւնը, որ մը-



ղում է մարդուս օրէնքը լրացնելու, այն ժամանակ իւր նպատակին հասած կլինէր։ Բայց Մովսէսը իւր ժողովրդին միայն երկիւղը տուեց («Անիծեալ ամենայն մարդ, որ ոչ կացցէ յամենայն բանս օրինացն այսոցիկ՝ առնել զնոսա» V. Մովսէս իէ. 26.)։ Սակայն լրումն օրինացը ոչ թէ երկիւղն է, այլ՝ սէրը։ Որքան ժողովուրդը աշխատում էր օրէնքը լրացնելու, ամբողջապէս կատարելու, այնքան նրան՝ օրէնքի լրման հակառակ կողմը պարզ էր լինում, որ Պօղոսը հետևեալ խօսքերով է արտայայտում. «զի կամքն առաջի կան ինձ, եւ առնել զբարին ոչ» (թուղթ առ Հռովմայեցիս է. 18.)։ Այսպէս ժողովուրդը ոչ թէ միայն այն գիտակցութեանն եկաւ, որ օրէնքը լրացնելու՝ լրիւ կատարելու կարողութիւնը չունի, այլև նրան ցոյց տուին, թէ ով է այս կարողութիւնը տալիս—ուստի և թ. առ. Գաղ. գ. 24. «Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի հաւատոցն արդարասցուք»։ Դաստիարակ ոճը սկիզբն է առնում հռովմայեցիներից, որոնք իրանց որդւոց յանձնում էին ստրուկներին, որ վերջինները կրթէին, վարժէին—սրանց կոչում էին պետագոգներ—մանուկ վարժողներ, մանկավարժներ, դաստիարակներ։ Օրէնքը կարելի է համեմատել մի այդտեսակ դաստիարակի հետ, որի (օրէնքի) լրումն սիրուն է պատկանում և որ ոչ թէ Մովսէսը, այլ Բարձրեալը կարող էր տալ։ Մովսէսի վերաբերմամբ խօսքով միայն յիշւում է. «Մարգարէ յեղբարց քոց իբրեւ զիս յարուսցէ քեզ տէր Աստուած քո, նմա լուիջիք». (V. Մովս. ժը. 15.)։ Մովսէսը նման է Նոյեան տապանին—որքան ջրհեղեղը մեծանում էր, այնքան նա երկնքին էր մօտենում։ Բայց երբ Նաբաւ լերան վրայ միայնակ մեռաւ, այն ժամանակ մեռաւ այնպէս, ինչպէս իւրաքանչիւր ոք մեռնում է, որն օրէնքով երջանիկ կամենում է լինել—խոստացեալ երկիրը հեռուից տեսաւ, բայց այնտեղ լինել չկարողացաւ. Նա զգաց, գուշակեց երջանկութիւնը, երանութիւնը, բայց վայելել չկարողացաւ։ Մովսէսի մահուանից յետոյ Յեսուի առաջնորդութեամբ ժողովուրդը մտաւ հեթանոս ազգերով շրջապատուած խոստացեալ երկիրը, որ միակ օթևանն էր, ուր երկնքի Աստուածը իբրև Հոգի էր պաշտւում։ Եգիպտոսի ստրուկ, գռեհիկ Իսրայէլացիների կրօնական զգացումն աստիճանաբար զարգացրեց Մովսէս. Նրա այս իմաստուն և բնական վարմունքը մեզ կատարելապէս զարմացնում է և բոլոր ժամանակների համար նոյնը կմնայ։ Որպէսզի ժողովուրդը չվարակուի հեթանոս հարևաններից,

Մովսէս պատուիրեց ժողովրդին երկրագործութեամբ պարապել և ոչ մի վաճառականական յարաբերութիւն չունենալ նրանց հետ—այսպիսով նա մի մի արգելքներ դրաւ նրանց առաջ հայրենի կրօնը փարակումից զերծ պահելու համար: Օտար երկիր ճանապարհորդելը նոյնպէս արգելուած էր. ով չէր յարգում այս օրէնքը, զրկւում էր հայրենի ժառանգութիւնից և փողը տոկոսով տալու իրաւունքից: Սրանից ետոյ Մովսէս մի կանոնադրութիւն մշակեց, որ յար և միշտ աներևոյթ Աստծու մեծամեծ գործերն էր յիշեցնում: Այս քաղաքացիական կանոնադրութիւնը (ծէսեր, օրէնքներ, կանոններ) աստուածային ներշնչումներ էին, դրա համար էլ քաղաքացիական օրէնքները կրօնականի տեղ էին ընդունւում: Կռապաշտութիւնը ոճրագործութիւն էր համարւում երկրի օրինաց դէմ: Երկրի ամենամեծ տէրը ինքը Եհովան էր: Նրա տեսանելի ծառաներն էին քահանաները՝ Ղեւիի ցեղից: Բայց որպէսզի այս քահանայութիւնը, ինչպէս ուրիշ երկիրներումն էր, ի վնաս ժողովրդի չզարգանայ, Մովսէս որոշեց, որ բացի ղևտացիներից՝ ուրիշ ցեղերի անհատները ևս, որոնք հրաւիրուած կլինեին այդ կոչման, կարող են Աստծու կամքը յայտարարել, յայտնել (սա մի հանգամանք է, որ պատճառ եղաւ մարգարէների ծագման): Մովսէս սահմանեց նաև, որ սրբազան յիշատակարանները իրանց սեպհականութիւն չհամարեն, այլ եօթը տարին մի անգամ բոլոր օրէնքները ժողովրդի առաջ պիտի կարդային, վերջացնէին և սրանով ժողովրդի փրկութիւնը իրան հասկանալի կացուցանէին: Բոլոր ժողովուրդը մի քահանայական ազգ պիտի դառնար: Վերջապէս պիտի մատնանիշ լինինք տօներին, որոց Մովսէս՝ մի այնպիսի ժամանակում, երբ ժողովուրդը գրել և կարդալ չգիտէր, այլապէս չէր կարող սահմանել՝ քան թէ սահմանել է: Օրինակի համար—յիշենք Պասեքի տօնը, որ յիշատակ էր Եգիպտոսից հեռանալուն: Երբ ամենքն էլ կազմ և պատրաստ պիտի լինէին և բաղարջ հաց ու զատկական գառը պիտի ուտէին: Սրանք այնպիսի յիշողութիւններ են, որոնք տօնի նշանակութիւնը ամենայետին հասկացողութեան տէր անձնին ևս պարզում էին և այսպէս աւանդութիւնը սերնդէ սերունդ էր անցնում: (Ի դէպ յիշենք այստեղ, որ մովսիսական ծիսակատարութիւնը մի ստուեր է՝ քրիստոնէական—հոգեկան աստուածպաշտութեան հետ համեմատելով—տ. Թ. ա. Եբր. Ժ. 1—13.):

Որպէսզի օրէնքը, որպէս դաստիարակ ի Քրիստոս Յիսուս, Իսրայէլացւոց ազգին հասկանալի լինէր, երկու պայմաններ էին կարեւոր—մի կողմից նրանց մէջ կախման զգացումն պիտի ծագէր դէպի Եհովան, իսկ միւս կողմից իրանց սեպհական անարժանութիւնը պիտի զգալի կացուցանուէր: Օրինաց այս ձևի բաշխման մտնում է աստուածային առաջնորդութեան մի բաւական երկար ժամանակամիջոց (օրինակներ անապատի կեանքից և դատաւորների ժամանակից), ուր գլխաւորապէս աստուածային երկու հաստատութիւններ են երևան գալիս, որոնք ժողովրդի զարգացման գործին նոր, կենսալիր, զօրութիւններ են ներշնչում—դրանք են թագաւորութեան և մարգարէութեան դարաշրջանները:



### 3. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Մովսիսի հիմնած Աստուածային իշխանութիւնը պարունակում էր իւր մէջ Իսրայէլացւոց ազգի թագաւորութիւնը (աստուածպետութիւնը՝ թէօկրատիան), որտեղից վերջերը Աստծու արքայութեան գաղափարը յառաջ եկաւ: Այս թագաւորութիւնը մի անծանօթ երևոյթ էր, որովհետև Մովսէսն ինքը Եհովային իւր ժողովրդի թագաւորութեան տէր, իշխան էր ընդունում: Եհովան առաջնորդում էր բանակները, պատերազմ և խաղաղութիւն էր յայտնում, յաղթութիւն կամ պարտութիւն էր պարգևում: Այս էր պատճառը, որ ոչ Մովսէսը և ոչ սրա յաջորդ Յեսուն իշխանական թագ ձեռք բերելու հետամուտ չեղան. Նոյն իսկ դատաւորները, որոնք տարօրինակ ժամանակների մէջ երևան եկան, ոչ թէ ժողովրդից, այլ Եհովայից ընտրեալ երևեցան և գործում էին Նրա (Եհովայի) ղեկավարութեամբ: Այս յարաբերութիւնը Սամուէլի օրօք միայն փոփոխութեան ենթարկուեց: Անընդհատ պատերազմները, որոնք տեղի էին ունենում երկրի բնիկների հետ, Իսրայէլի ժողովրդին այն գիտակցութեան բերին, որ Սամուէլն այն անձնաւորութիւնը չէ, որ կարողանայ ժողովրդի ցանկացած անկախութիւնը ձեռք բերել, ուստի այստեղից դժգոհութեան առիթներ ծագեցան, որոնք վերջն այսպիսի ձևակերպութիւն ստացան, թէ Սամուէլի տեղ մի թագաւոր պէտք է ունենալ, որ մեր պատերազմները վարէ և առաջովը գնայ (I. Թագ. Ը. 19. 20.): Դժգոհութեամբ կատարեց Սամուէլը ժողովրդի այս ցանկութիւնը և 1,110 թ. նախ քան զՔրիստոս, առաջին անգամ Սաւուղին թագաւոր ընտրեց, իսկ երբ սա անհնազանդ գտնուեց, Դաւթին յաջորդ որոշեց: Թէև Իսրայէլացիները այժմ մի տեսանելի թագաւոր ունէին հեթանոսների նման, բայց և այնպէս չպիտի մոռա-

նալ իսրայէլացւոց թագաւորութեան նշանակութիւնը հարևան ազգերի վերաբերմամբ: Իսրայէլի թագաւորը ոչ թէ միայն պատերազմներին առաջնորդող և ամենաբարձր դատաւորը, այլև իւր ժողովրդի ամենամեծ դաստիարակը պիտի լինէր, ուստի և նա ոչ թէ միայն թագաւոր էր ողորմութեամբն Աստուծոյ, այլև թագաւոր Աստծու թագաւորութեան համար: Որպէս Եհովայից ընտրեալ (Սղմ. ձը. 17. «Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո եւ ասացեր. եդից զօգնութիւն իմ ի վերայ հզօրին եւ բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ»): Իբրև երկրաւոր տեղապահ աներևոյթ իշխանի՝ պէտք է կառավարէր ժողովուրդն ըստ կամաց Նորա: (Կարդալ V. Մովս, ժէ. 14—20. «Եւ եթէ մտանիցես . . . . ի մէջ որդւոցն Իսրայէլի»): Թագաւորի և Աստծու կամքը մէկ պիտի լինէին: Հեզութեամբ և խոնարհութեամբ պիտի կատարէր Աստծու թագաւորութեան կանոնները (Եզեկիէլ ժէ. 14.). մեծ հաւատարմութեամբ պիտի անձնատուր լինէր Նրան (Սղմ. ի. 6. և 7.): Ոչ մի բան այնքան սուրբ չպիտի լինէր, որքան աստուածային պատուիրանների կատարումն (V. Մովս. ժէ. 19.), սիրել իրաւունք և արդարութիւն (Սղմ. խղ. 5 և 8.): Թագաւորի զարդը ոչ թէ պատերազմական յաղթութիւններն ու հարստութիւնը պիտի լինէր, այլ՝ հեզութիւնն ու հնազանդութիւնը: Ընտրեալների մէջ ամենամեծը պիտի լինէր նա: Այսպիսի բարեմասնութիւններով զարդարուած; իբրև օրինակ, պիտի կառավարէր իւր ժողովուրդը: Վսեմ գաղափար, բայց ափսոս որ Իսրայէլի թագաւորութիւնը լիովին չհամապատասխանեց սրան: Ամենից յաջող շրջանը՝ Դաւթի (վերջին կիսին) ժամանակն էր, որի օրօք էր, երբ իշխանութիւնը ամենաբարձր կէտին հասաւ: Եթէ յիշելու լինինք, թէ Դաւիթն ինչ սխալներ է արել, և ինչ յանցանք գործել (II. Թագ. ժբ. 7 . . .), առաջին ակնաթարթում մարդ չի կարողանում ըմբռնել, թէ ինչպէս կարելի է սրան «այր ըստ սրտի իւրում» (I. Թագ. ժգ. 14.) անուանել: Սակայն չպիտի մոռանանք և այն, որ Դաւիթ ոչ թէ միայն քաջ զինուոր էր հեթանոս թշնամիների դէմ մղած պատերազմներում, որով նա երկրի համար հանգիստ և խաղաղութիւն ձեռք բերաւ, այլև այն թագաւորներիցն էր, որ իւր ժողովրդի՝ ինչպէս ուրախութեան, նոյնպէս և վշտին ջերմ սիրով մասնակցել գիտէր: Դաւիթը յանցանքի մէջ ընկաւ, բայց շուտով կարողացաւ կանգնել: Զղջումը նրան դէպի Աստուած առաջնորդեց և այսպէս պատերազմելով՝ յաղթութիւն ձեռք բերաւ: Քանի-քանի իշխաններ են եղել և



կան, բայց ո՞րը Դաւթի նման իմաստուն Նաթանի պատժին է ենթարկել իրան: Եւ Դաւթի ապաշխարութիւնը կեղծ չէր: Այս բանն ապացուցանում են ոչ թէ միայն նրա ապաշխարանաց սաղմոսները, այլև նրա ի խորոց սրտէ երգած աստուածային երգերը՝ սաղմոսներն ընդհանրապէս, որոնք նա հեղինակել է իբրև թագաւոր, քահանայ—իբրև սահմանիչ ծիսակատարութեանց: Ո՜րքան գեղեցիկ են նրա այն սաղմոսները, ուր նա տիեզերքի արարչի մեծութիւնն է երգում: Ի՜նչքան զգայուն են այն կտորները, ուր նա զեղում է իւր ներքինը, երբ Բեթղեհէմի դաշտավայրում իւր հօր ոչխարներն էր արածացնում: Ամպի, որոտի, փոթորկի մռնչիւնի մէջ Եհովայի ձայնն է լսում, ամբողջ բնութիւնը երևում է նրան որպէս տուն Աստուծոյ (Սաղմ. ծգ.): Ի՜նչ ոգևորութեամբ, ի՜նչ խորին զգացմամբ երգում է նա՝ մանաւանդ Եհովայի սրբութիւնը: Հէնց այն խորին գիտակցութիւնը թէ ինքը յանցաւոր է—ցոյց են տալիս նրա կեանքի գլխաւոր գծերը (Սաղմ. ծիթ. 5. խը. 8. ծգ. 8—13....): Դրա համար նրա յոյսը մեծ է դէպի Աստծու շնորհը, ողորմութիւնը. նա համոզուած է, որ սխալ է ինքը, խոստովանում է իւր յանցանքները, դրա համար էլ անձկանօք սպասում է մի փրկչի՝ «Տեառն իւրոյ», որ թէ իրան և թէ բոլոր Իսրայէլին պիտի փրկէ, ազատէ սխալանքներից (Սաղմ. ծիթ. 5. 6.): Այսպէս նա մարգարէ է դառնում գալոց Մեսիայի համար, որի մասին իւր բազմաթիւ սաղմոսների մէջ (Սաղմ. ծթ. այլև Մտթ. իբ. 44.) մարգարէանալով երգում է, ինչպէս և իւր հրաժեշտի երգերում (II. Թագ. իգ. 1—5), որոց մէջ գուշակմամբ փառաբանում է նրան՝ որպէս իւր տունը յաւիտեան պաշտպանողի: Մեսիային Դաւիթ համարում է թագաւոր ազգաց, «քահանայ յաւիտենից» (Սաղմ. ծթ. 4), իշխան յաւիտենական խաղաղութեան, որ լուսաւորուած է երկնային արդարութեամբ և սիրով, և որի առաջ բոլոր ազգերի թագաւորները, նոյն իսկ հեթանոսները, ծունկ պիտի չոքեն (Սաղմ. բ. հա. ծթ.): Այսպիսի նախագուշակութիւններով և մարգարէութիւններով իւր ազգի մէջ այնպիսի ոգի ներշնչեց, որ երբէք մարել չէր կարող, նա այնպիսի սերմեր ցանեց, որոնք ժամանակի ընթացքում գեղեցիկ ծաղիկներ և համով պտուղներ տուին:

Ափսոս որ Դաւթի որդի Սողոմոնը չարդարացրեց այն յոյսերը, որ տածում էր հայրը և նրա հետ ամբողջ ժողովուրդը: Հնազանդութիւնը և իմաստուն ոգին, որ խնդրեց Աստուածանից իւր թագաւո-

րութեան սկզբին (III. Թագ. գ. և. 9. II. Մնաց. ա. 8. 12.) տաճարը կառուցանողը և իմաստուն առակների հեղինակը՝ իւր ամբողջ կեանքի ընթացքում չպահպանեց: Հակառակ թագաւորական օրինաց՝ շատ ոսկի և արծաթ հաւաքեց. մեծ հեծելազօր էր պահում. հեթանոս կանայք առաւ. չափազանց շռայլ կենցաղավարութեան պատճառով՝ ճնշում էր հպատակներին—ծանր հարկերով և մինչև անգամ իւր կեանքի վերջին տարիներում կռատուններ շինելու իրաւունք տուաւ Երուսաղէմում—տաճարից քիչ հեռի՝ այնտեղ, ուր ինքը աղօթել էր և խնդրել Աստծուց, որ եթէ հեթանոսներ եւ գան այստեղ աղօթելու, նրանց էլ լսէ: Ինքն էլ երբեմն, ի պատիւ իւր կանանց, նրանց աստուածպաշտութեան ներկայ էր լինում: Փառասիրութիւնն ու պճնասիրութիւնը հեռացրեցին նրան ճշմարիտ Աստծուց և դէպի օտար աստուածները դարձրին և ոչ միայն ինքը, այլև շատերին իւր հպատակներից: Նրա յաջորդ և որդի Ռ ո բ ո վ ա մ ի օրօք, որ ժողովրդին կարիճով էր կամենում պատժել, երկիրը երկուսի բաժանուեց—Յուդայի և Իսրայէլի տէրութեան՝ առաջինը երկու, իսկ վերջինը տասն ցեղ պարունակելով: Սկսուեց մի տխուր ժամանակամիջոց, երբ մի յանցանքը միւսին էր հետևում, ուստի և թշուառութիւնը թշուառութեան էր յաջորդում: Իսրայէլի թագաւորութեան տասն ցեղերը կռապաշտութեան մէջ խորասուզուեցան: 253 տարի շարունակ (975—722) Իսրայէլի թագաւորութիւնը իւր մահու պատերազմն էր մղում և տեղի տուաւ ընդհանուր պատմութեան ասպարիզից՝ գերի գնալով Ասորեստան: 136 տարի դրանից յետոյ՝ անկման հերթը Յուդայի թագաւորութեանը հասաւ (585): Վերջապէս Սեդեկիայի թոյլ կառավարութեան ներքոյ ամեն ինչ վերջացաւ: Նաբուգոդոնոսորը նուաճեց Երուսաղէմը, քանդեց տաճարը և ամենին էլ գերի տարաւ Բաբելաստան: Բաբելոնի գետերի ափերում երգում էին այն սրտառուչ տխուր երգերը, որոնցից մի կտոր միայն մեզ յիշատակ է մնացել: Սաղմոս ճլզ. անունով (կարդալ ամբողջովին):

Իսրայէլի թագաւորութեան երկրաւոր զօրութիւնը, այո, կործանուեց, բայց Աստուած դրա փոխարէն մի նոր զօրութիւն, ո գ ե կ ա ն զօրութիւն յարոյց, որով իսրայէլի ժողովուրդը իւր անցեալի անմոռանալի կոչումն էր յիշում և նրա յոյսը գալոց Մեսիայի վերաբերութեամբ միշտ և միշտ վ ա ռ. էր պահում: Այդ ոգեկան ոյժը, զօրութիւնը մարգարէութիւնն է:



### 4. ՄԱՐԳԱՐԷՆԵՐ

Հնումն մարգարէներին կանխաւ գուշակող էին ընդունում, որոնք վճարով ապագայի գաղտնիքն էին յայտնում: Գուցէ հ ն ո ւ մ ն այդ տեսակ բաներ պատահած լինին, բայց I, Թագ. թ. 9. գրած է. «զի զմարգարէ՝ յառաջ տեսանող կոչէր ժողովուրդն»: Ուրեմն մարգարէի կոչումը միայն նրա մէջ չէր կայանում, որ իւր ժամանակակիցների հետաքրքրութեան բաւականութիւն տալու համար՝ վարձատրութիւն էր ստանում և ապագայի վարագուրուած քողը բաց անում: Մարգարէից կոչումը շատ և շատ բ ա ր ձ ր էր: Նրանց կոչման նպատակը բ ա ր ո յ ա կ ա ն-կ ր օ ն ա կ ա ն էր: Աստուածային ճշմարտութեան լոյսը ծագում էր նրանց մէջ և սրբազան ոգևորութեան ձրգտումն ստիպում էր նրանց՝ որ պարզ, որոշ ճանաչածները և ջերմ սրտով զգացածները, որպէս աստուածային յայտնութիւններ, ժողովրդին հաղորդեն: Դրա համար էլ նրանց «ա յ ր Ա ս տ ու ծ ո յ» էին անուանում, այսինքն այն տեսակ մարդիկ, որոնք ոչ թէ իրանց սեպհական անձին կամ այլոց, այլ՝ Ա ս տ ծ ու ն են պատկանում, ուստի և Աստծու ծ ա ռ ա յ ու թ ե ա ն ներքոյ են՝ Աստծու հ ր ա մ ա ն ն ե ր ը կատարելու և մարդկութեան Աստծու գ ա ղ ա փ ա ր ն ե ր ը, մ տ ք ե ր ը յայտնելու: «Ես եղև բան տեառն առ իս» խօսքերի մէջ գտանւում է ամբողջ մարգարէութիւնը, այլև նրա մեծութիւնն ու զօրութիւնը*:

**Ա.** *Մարգարէները՝ թագաւորների հսկիչները—պահապաններն էին:* Օրինակ Նաթանն ու Գադը՝ Դաւթի պատմութեան մէջ. Աքիա Յերոբովամի ժամանակ. Եղիան՝ Աքաաբի օրօք....: Մարգարէի պարտաւորութիւնն էր թագաւորին խորհուրդ տալ, եթէ նա օրէնքից հեռանար, երբ իւր կոչումը մոռանար: Մարգարէն պէտք է նրան դէպի ուղիղ ճանապարհն առաջնորդէր. մարգարէն խորհրդատու էր, երբ թագաւորն անարդարութիւն էր գործում: Մարգարէները Եհովայի բարձրախօս ներքին ձայնն (խիղճն) էին, նրանք Աստծու

---

* Մարգարէութիւնը, ինչպէս և բանաստեղծութիւնը մի տեսակ շնորհ է. որ ամբողջ մարդկութեան սեպհականութիւնն է, ուստի և նրան միայն Պաղեստինի հողի վրայ չպիտի փնտռել: Այն, ինչով որ իսրայէլի մարգարէութիւնը անցեալի բոլոր նման երևոյթներից զանազանւում է, այդ նրա հանճարեղ ասացուածների պ ա ր ու ն ա կ ու թ ի ւ ն ն է նախ, և ապա՝ նրա յաւիտենական ճշմարտութիւնը:

և կրօնի անունով էին խօսում, երբ թագաւորները լռում էին կամ քահանաները ննջում։ Կոչման այս վարժութեան մէջ նրանք հզօր էին։ Մի՞թէ հնար է չզարմանալ Նաթանի ցնցող, զարհուրեցնող նըկատողութեան վրայ (II. Թագ. ժբ.)։ Յիշենք Եղիայի լափող հուրը (III. Թագ. ժէ.). Երեմիայի անվեհերութիւնը (Երեմիա ե. և լը.)։ Երբ մարդ թագաւորների պատմութիւնը կարդում է, գալիս է այն համոզման, որ մարգարէները ոչ թէ ստորադրեա՛լներ, այլ՝ տէր էին թագաւորների վրայ. Նրանք աստուածային ոգու զօրութեամբ այնպէս էին իշխում, որ շատ թագաւորներ սարսափահար էին լինում—թագաւորի բարկութիւնը երբեմն մահ էր սպառնում մարգարէին, բայց և այնպէս Նրա կամքը անընկճելի էր մնում։ Մարգարէները խողխողւում էին, բայց վերջին շնչի ժամանակն էլ չէին դադարում ճշմարտութիւնը քարոզելուց։ (Յիշել Միքիայի վիճակը III. Թագ. իբ. 24. 27. Երեմիայինը—Երեմիա ի. 2. լէ. 16. լը. 6—28. Իզաբէլի ժամանակուայ մարգարէները—III. Թագ. ժե. 4. Անանիաս II. Մնցդ. ժզ. 7—10. քահանայապետ և մարգարէ Զաքարիային II. Մնցդ. իդ. 20. 21)։

**Բ.** *Մարգարէները ապաշխարութիւն էին քարոզում յանցաւոր ժողովրդին բարուց ապականութեան եւ անկման ժամանակներում*։ Մարգարէների կոչումն էր ընտրեալ ազգին թէ անհատին և թէ ընդհանուրին Եհովայի հետ ունեցած ուխտը պահպանել տալ (Աստծու կողմից սէր, իսկ ժողովրդի կողմից՝ հնազանդութիւն) և ուր նրանք հեռանային նրանից, պէտք էր ի նորոյ Եհովային դարձնէին։ Որովհետև այսպիսի համոզումն ունէին իրանց կոչման կատարման վերաբերութեամբ, ուստի և չափազանց նախանձախնդիր էին ճշմարտութեան. վերին աստիճանի աներկիւղ. ոչնչից չէին ակնածում։ Ի՜նչ անվեհերութեամբ յարձակւում է Եղիան տատանուող ժողովրդի վրայ Կարմելոս լերան գագաթին (III. Թագ. ժը. 21.)։ Եսայի մարգարէի առաջին գլուխներն ապացոյց են, որ երկիւղն անծանօթ էր նրանց։ Նոքա ամենից խիստ բորբոքւում էին, երբ խնդիրը Եհովայի կրօնի և այլ կրօնի մասին էր։ Այդ պատերազմներում նրանց խօսքը սուր ու կայծակով է։ Ուրիշ հանգամանքներում եւս օտար չէր նրանց վարմանց եղանակը—մերթ խրոխտում էին, մերթ երկիւղ տալիս. երբեմն զգուշացնում էին, երբեմն յորդորում էին։ Ամուր քաղաքի, երկաթի սիւնի, անառիկ պարսպի նման կանգնում էին թագաւորների, իշխանների, քահանաների և



երկրի ժողովրդի առաջ (Երեմիա ա. 18.)։ Այս տեսակ վստահութիւն նոցա կողմից միայն կարող է լինել, որոնք յԱստուծոյ կոչեցեալ են, որոնք համոզուած են, որ իրանք ընտրեալ անօթներ են։ Ով այս գիտակցութիւնն իրօք ունի, երբէք մարդու ստրուկ չի լինիլ, որովհետև նա գիտէ, որ աւելի մեծ տիրոջ պատասխանատու է. Բարձրելոյ հովանաւորութեան ներքոյ է, որ մարդկային զօրութիւնը չնչին է երևեցնում իրանց աչքում։ Եսայիա մարգարէն այս գիտակցութեամբ՝ յանուն Աստուծոյ հետևեալ խօսքերն է ասում. «Մի՛ երկնչիր, զի ընդ քեզ եմ. մի՛ խաբիր, զի ես եմ Աստուած քո, որ զօրացուցի զքեզ եւ օգնեցի քեզ, եւ զգուշացայ քեզ աջով արդարութեան իմոյ» Եսայի խա. 10.)։ Մարգարէները պարտք էին համարում իրանց՝ բարուց ապականութեան ժամանակ ապաշխարութիւն քարոզելով երեւալ—և իրաւունք էլ ունէին։ Խաղաղութեան ժամանակներում քահանաների հետ միասին ժողովրդին քարոզիչ, ուսուցիչ էին. Նրանք համոզում էին, որ Եհովային հաճելի չեն նրանց երկար աղօթքները, բազմատեսակ պահեցողութիւնները, ճենճերեալ զոհերը և երկարօրեայ տօները, այլ նրան հաճելի և ընդունելի է սրտի բարեպաշտութիւնը և օրինաց հնազանդ լինելը։ Այսպէս ուրեմն մարգարէութիւնը ոչ թէ միայն լոյս էր, որ խաւարի մէջ ծագեց, այլև աղ, որ պահպանում էր Իսրայէլին ապականութիւնից։

**Գ.** *Մարգարէները մխիթարիչ էին խորը թշուառութեան ժամանակներում*։ «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած, խօսեցարո՛ւք քահանայք ի սիրտ Երուսաղէմի» (Եսայի խ. 1.)։ Այսպէս էին ձայնում Եհովայի հրամանը։ Եւ մարգարէները այս հրամանից յետոյ երևան են գալիս։ Մարգարէները խորը համոզուած էին, որ Աստուած իւր ժողովրդին՝ չնայելով նրա յանցանքներին, չի մոռանայ, այլ կյիշեցնէ նրան իւր պապերին տուած խօսքին, դրա համար էլ քարոզում էին, որ ամենայն մի ցաւ, վիշտ ապաշխարութեան է հրաւիրում իրանց—և սա Աստուծոյ գթասրտութեան նշանն է։ Ջերմ սիրով և խորին զգացմամբ մխիթարում էին խեղճ ժողովրդին, որպէսզի պատրաստեն նրան Աստծու խրատներին (պատիժներին՝ դաստիարակութեան) սիրով դիմաւորելու և Աստծու ապագայ սիրուն երախտագէտ լինելու։ Ուստի և մարգարէները նախ և առաջ մատնանիշ են լինում այն խոստման, որ Աստուած նրանց հայրերին արել է, այն հաւատարմութեան մասին, որ գրած է, «Զի ոչ եթէ իբրեւ զմարդ է ի զղջանալ». (I. Թագ. ժէ. 29.)։ «Եղեգն ջախ-

ջախեալ մի՛ փշրեսցէ եւ զպատրոյկն առ կայծեալ մի՛ շիջուսցէ: Ես եմ Տէր Աստուած ձեր եւ ոչ փոխիմ: Դարձարո՛ւք առ իս եւ ես դառնամ առ ձեզ» (Մաղաքիա գ. 6. 7.): «Սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն» (Երեմիա լա. 3.): Երբ ժողովուրդը թշուառութեան մէջ, վշտի օրերում զգում էր իւր սխալը, այն ժամանակ մարգարէները յայտնում էին, որ ներուել է իրանց յանցանքը, որովհետև «եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախարիթ, իբրեւ զձիւն սպիտակ արարից, եւ եթէ իցեն իբրեւ զորդան կարմիր՝ իբրև զասր սուրբ արարից». (Եսայի ա. 18.):

**Դ.** *Վերջապէս մարգարէները՝ գալոցը գուշակողներ էին:* Նրանց ազդը, ծանուցումը վերաբերում էր Աստծու Թագաւորութեան—նրանք յայտարարում էին, թէ գալու է Աստծու Թագաւորութիւնը. թէ պիտի գայ մի ժամանակ՝ երբ ոչ ղեւտական քահանայութիւն կլինի, ոչ մարգարէական դասակարգ, այլ իսրայէլի ամբողջ ժողովուրդը քահանայական ազգ կլինի («բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք . . . .» Եսայի կա. 6.) և մարգարէական ոգւով զինուած կլինի (Յովել. գ. 1 . . . .), այն ժամանակ ամենքն էլ՝ առանց բացառութեան, ծանօթ կլինին Եհովայի հետ և նրանից կուսանին, այնպէս որ էլ ոչ ոքի առաջնորդութեան կարեւորութիւն չի զգացուի: «Եւ մի՛ եւս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր, եւ իւրաքանչիւր զեղբայր իւր ասել՝ թէ ծանի՛ր զՏէր զի ամենեքեան ծանիցեն զիս ի փոքրկանց նոցա մինչեւ ի մեծամեծս, ասէ Տէր»—Երեմիա լա. 34: Օրէնքն այսուհետև պիտի գրուի ոչ թէ քարէ տախտակների վրայ, այլ՝ սրտի վրայ («տաց զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի սիրտ նոցա գրեցից զնոսա» Երեմիա լա 33.): Ուխտի տապանակի վրայ էլ չեն մտածի մարդիկ, որովհետև Աստծու գահն այլեւս տաճարի Սրբութիւն սրբոցում չի լինի, այլ իւր ժողովրդի սրտում (Երեմիա գ. 16.): Այդ այն երջանիկ ժամանակը կլինի, երբ Աստուած իւր ժողովրդի հետ նոր ուխտ, նոր դաշն կկռէ (Երեմիա լա. 31 . . . .). երկիրը Աստծուն ճանաչողներով կլցուի (Երեմիա լա. 34. Եսայի ժա. 9.): Այն ժամանակ կլռէ պատերազմը, ոչ մի ազգ սուր չի շարժի միւսի դէմ (Եսայի բ. 4.). բոլոր հեթանոսներն առ Աստուած կդառնան (Սոփոնիա գ. 9.), երկինքն ու երկիրը նոր կլինին (Եսայի կե. 17.)՝ Եհովան միակ Թագաւորը կլինի բոլոր ազգերի վրայ:

Այս երջանիկ ժամանակի գալստեան գուշակումն Աստծու արքայութեան մէջ մարգարէները յայտարարում էին ըստ մեծի մասին



եկող Մեսիայի անձնաւորութեան վերաբերութեամբ: Այստեղ երկու տեսակ բան ի նկատի պիտի առնել—առաջին՝ ամենայն մարգարէ Մեսիայի գալուստը մօտիկ ապագայի մէջն է մտածում և ընդունում: Ի՞նչպէս կմխիթարէր ժողովուրդն իրան՝ դարեր անցնելուց յետոյ՝ մինչև որ Փրկիչը կգար: Մարդկային բնաւորութեան յատուկ իրողութիւն է, որ ցաւոց, վշտի ովկիանում նաւող ժողովուրդը յուսոյ մէջն է փնտռում իւր ազատութեան լարը, պարանը: Եւ նա մի հանգոյցից միւսն է թռչում՝ մինչև որ հասնում է վերջինին: Այսպէս ուրեմն՝ շուտով, շուտով կգայ Մեսիան. ահա սա առաջինն է, ինչ որ յատուկ է մարգարէական գուշակութիւններին: Երկրորդը նրա մէջն է կայանում, որ մեսիական մարգարէութիւնները միշտ ժողովրդի գիտակցութեան շրջանիցն է ծագում, որոնք (մարգարէութիւն) մարգարէն իւր ապրած ժամանակի մէջ՝ իւր նկատողութեամբ անում է և դրա համար էլ մարգարէի գուշակութիւնը ժողովրդին միշտ յայտնի է եղել: Մարգարէական գուշակութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ներկայի գաղափարացումն: Դրա համար էլ մարգարէները իրանց գուշակութիւնները կապում են իրանց ժամանակի հանգամանքների հետ և զգայարանական շրջանից հեռուն երևակայելու անկարող ժողովրդին այնպիսի բան չեն յայտնում, որ նա իւր շրջակայքում, կամ հայրերի անցեալում տեսած և լսած չլինի: Ուրեմն և խորթ, տարօրինակ չպիտի թուայ մեզ, երբ մենք զանազան ժամանակներում զանազան ենք նկատում Մեսիայի պատկերը: Մարգարէների մեսիական գուշակութեան այս համառօտ նկատողութիւնից յետոյ անցնենք այս խնդրի ժամանակագրական կարգին:

Քանի որ ժողովրդի յիշողութեան մէջ դեռ ես կենդանի էր Դաւթի իշխանութեան երջանիկ ժամանակները, մարգարէները ժողովրդի ուշադրութիւնը դարձնում էին այդ անցեալ երջանիկ օրերի վրայ և ապագայ Մեսիային Դաւիթ Թագաւորի պատկերովն էին նկարագրում: Յովել մարգարէն այս առթիւ ոչինչ չի ասում, այլ զարմանալու չափ կենդանի կերպով խօսում է գալոց մօրեխի մասին և իսկական փրկութեան ժամանակամիջոցը՝ լրումը՝ սուրբ Հոգւոյ գալստեան մէջն է որոնում: Իսկ Ամոս մարգարէն, ընդհակառա՛կն սպասում է (790 ն. ք. զՔրիստոս) որ Եհովան Դաւթի ընկած տունը պիտի վերականգնէ և երջանիկ ժամանակը նորից վերադարձնէ: (Ամովս թ. 11. «Յաւուր յայնմիկ կանգնեցից զխորանն Դաւթի զանկեալն, եւ կանգնեցից զկործանեալս նորա եւ զկատակեալս

նորա վերստին կանգնեցից, եւ շինեցից զնա ըստ աւուրցն յաւիտենից»։) Թէ Դաւթի տանից ով պիտի յառնէ, Ամոսը ոչ որոշակի ոչինչ չի ասում։ Ովսիա մարգարէն՝ որի գրուածքները գեղուն են սիրով և բանաստեղծական զգացմամբ (750 առաջին անգամ տեսնում է, որ տասն ցեղերը ոչ թէ միայն իրանց տէր Աստուած Եհովային, այլ և իրանց թագաւոր Դաւթին որոնում են և Յուդայի տան հետ միացած վերադառնում են դաւթեան թագաւորներին հնազանդելու. Ովսէէ գ. 5. «Եւ յետ այնորիկ դարձցին որդիքն Իսրայէլի եւ խնդրեսցեն զտէր Աստուած իւրեանց, եւ զԴաւիթ արքայ իւրեանց, եւ զօրասցին ի տէր եւ ի բարութիւնս Նորա յաւուրս կատարածի»։) Մեսիայի գաղափարն աւելի պարզ ձևով երևում է խորամիտ Եսայեայի (728) և նորա կրտսեր՝ ժամանակակից Միքիայ մարգարէի գրուածքների մէջ։ Երկու մարգարէներն էլ Մեսիային երկրաւոր թագաւորի են նմանեցնում, որի անձնաւորութիւնը զարմանալի է և որովհետև նա միակն է, որ յարաբերութիւն ունի Աստծու հետ, դրա համար և նա բոլոր մարդկանցից բարձր է։ Եսայի մարգարէի թ. 6. 7. («Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղեւ ի վերայ ուսոց իւրոց. եւ անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած, հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին։ Եւ ես ածից զխաղաղութիւն ի վերայ իշխանաց նորա, եւ առողջութիւն նմա, մեծ է իշխանութիւն նորա, եւ խաղաղութեան նորա չիք սահման։ Յաթոռն Դաւթի նստցի՝ եւ զարքայութիւն նորա յաջողեսցի....») մէջ Եսային՝ Մեսիային նկարագրում է որպէս մի թագաւոր, որ իւր արտասովոր և մարդկային հայեցակէտից բարձր կարողութեամբը բոլորի համար ամեն ժամանակ ամենալաւ խորհուրդը գիտէ տալ. Նրա խորհրդատու գործունէութեան մէջ աստուածային իմն ինչ կայ։ Մեսիայի անձնաւորութեան և իշխանութեան մասին՝ Եզեկիայի օրօք ես աւելի որոշ նկարագրում է Եսային. Եսայի ժա. 1..... «Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ (Դաւթի հօր), եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի։ Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան եւ հանճարոյ, հոգի խորհրդոյ եւ զօրութեան, հոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան....»։ Մի այսպիսի մեսիական թագաւորութեան և իշխանութեան պատկեր էլ Միքիա մարգարէն է նկարագրում գլ. ե. 2...., ուր որոշակի ասած է. «Եւ դու Բեթղեհէմ, տուն Եփրաթայ (Դաւիթ թագաւորի ծննդեան տեղը) սակաւաւոր իցես լինել ի



հազարաւորս Յուդա. ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի, եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի»։ Եզեկիայի և Աքազի օրօք Մեսիայի անձնաւորութեան պատկերն այսպիսի փայլուն գոյներով են նկարագրում ժողովրդին, այն ինչ Յուդայի տան վերջին թագաւորների ժամանակ հետզհետէ աղօտ գոյներով է յիշատակւում նոյն պատկերը։ Այս երևոյթի հիմքը նրանով պիտի բացատրել, որ Իսրայէլի վերջին թագաւորներն այլևս առիթ չեն ներկայացնում, որ իրանց մէջ մարգարէները Մեսիայի անձնաւորութեան յատկութիւն որոնեն։ Աստուածպետութեան թագաւորութեան գաղափարը այն ժամանակուայ բարեպաշտների գիտակցութեան մէջ՝ թագաւորների մեղանչելովը (որոնք տէրութեան անկումը առաջ բերին) այն աստիճան իւր նշանակութիւնը Աստծու թագաւորութեան համար կորցրել էր, որ Իսրայէլը իւր փրկութիւնը ոչ մի տիրապետողի անձնաւորութեան հետ չէր կապում։ Դրա համար էլ քաղդէական շրջանի մի քանի մարգարէներ զորօրինակ Զաքարիա, Աբդիու. . . . ամենևին չեն խօսում մեսիական թագաւորութեան մասին։ Նոյն իսկ Երեմիան չարունակ նոր ուխտի մասին է խօսում (կարդալ—Երեմիա լա. 31—34. լբ. 37—42), միայն գլուխ լգ. 15—17 յոյս է տածում, որ Դաւթի տանից արդարութեան թագաւոր պիտի յառնէ։ Զաքարիան գլ. թ. 9. մարգարէանում է ասելով. «Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա, դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գայ առ քեզ, արդար և փրկիչ, նոյն հեզ՝ եւ հեծեալ ի վերայ իշոյ եւ յաւանակի նորոյ»)։ Երբ վերջապէս Սեդեկիա վերջին թագաւորի թուլութեան պատճառով թագաւորութիւնը կործանուեց, գերութեան մէջ ամենևին յուսաբեկ եղան, թէ մինը Դաւթի տանից պիտի յառնէ և իրանց ազատութիւն պարգևէ։ Երբ Աստծու իշխանութիւնը աւերակ դարձաւ, էլ ո՛չ թագաւորութիւնը, ո՛չ քահանայութիւնը, այլ մարգարէութիւնն էր, որ յոյս էր ներշնչում ապագայ Մեսիայի գալստեան վերաբերմամբ։ Այս ժամանակամիջոցի մէջ Մեսիան յիշատակւում է ծառայ Աստուծոյ անունով, որի համբերութիւնը տոկուն է, անվերջ է, իսկ յուսոյ, հաւատոյ ամրութեան չափը՝ հաստատ։ Արդէն ասորական տիրապետութեան ներքոյ Մեսիայի գալուստը ոչ թէ միայն հրէից, այլև հեթանոսաց համար էլ է—«Լուսաւորեաց, լուսաւորեաց, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, եւ փառք տեառն ի վերայ քո ծագեսցեն։ Զի ահա խաւար ծածկեսցէ զերկիր, եւ մառախուղ զհեթանոսս» (Եսայի կ. 1....)։

Բաւական զարմանալի է, որ առաջ ամենևին խօսք չկար հեթանոսների Աստծու արքայութիւն մտնելու մասին, այն ինչ այժմեանից սկսած Եսայեայ խ—կզ. գլուխների մէջ գրած գլուխները յաճախակի են խօսում այդ առթիւ: Նոյնպէս Սոփոնիան (բ. 11. գ. 9), Ամբակումը (բ. 14.) Զաքարիան (ժբ—ժդ) և այլք այն մտքի են, որ Աստծու թշնամիները՝ հեթանոսները իսրայէլի տիրապետութեանն են պատկանում—իսկ նրանից յետոյ պիտի մի մեծ թագաւոր գայ: Դանիէլի գրքում (է. 13.... «Տեսանէի ի տեսլեան գիշերոյ՝ եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր....» համեմատել Եզեկիա ա. 24) ապագայի գուշակութիւնը իւր գագաթնակէտին է հասնում—Մեսիան նմանեցնւում է մարդու որդու, որ միայն ամպերի վրայով գնալ պիտի՝ Եհովայի նման, որ երկնքից պիտի գայ՝ Աստուածանից ուղարկուած, որպէսզի չորս մեծ պետութիւնների (Ասորեստան, Բաբելաստան, Պարսկաստան և Մակեդոնիա) աւերակների վրայ հիմնէ Աստծու թագաւորութիւնը, որի զօրութիւնը, կարողութիւնը յաւիտեան, իսկ տևողութիւնը անվերջ կլինի: Զօրաբաբելի ժամանակ, երբ քահանայապետութեան նշանակութիւնը բարձրացաւ, Մեսիային անուանում էին մեսիական քահանայապետ, որին ընդունում էին իբրև օրինակ, իդէալ մաքրութեան, սրբութեան (Զաքարիա գ. 8. զ. 11. Մաղաքիա գ. 3....): Գերութեան այս ժամանակամիջոցում մեսիական մի նոր ակնկալութիւն է տեղի ունենում—թէ Եհովան անձամբ պիտի գայ, տաճար մտնէ և սկսէ իւր ժողովուրդը կառավարել (Անգէոս բ. 7...: Մաղաքիա գ. 1—5. 16....): Բայց երբ ժողովուրդը մարգարէների հետ գերի տարուեցաւ և այնտեղ ո՛չ թէ միայն հեթանոս թագաւորներից ճնշման ենթարկուեցան, այլև անհաւատներից նախատուեցան և ծաղրի ու ծանակի առարկայ դարձան, մեսիական պատկերը մի նոր գիծ ևս ունեցաւ: Մարգարէներն ասում էին, որ իրանք Եհովայի հաւատարիմներն են, Նրա դէմ չեն մեղանչել, այս պատիժը, որ իրանք իբրև անմեղներ կրում են, ժողովրդի համար է, իսրայէլի անհաւատարմութեան պատճառով է: Այստեղից սկիզբն է առնում այն միտքը, թէ մինը միւսի յանցանքը կրում է—մարգարէն որպէս հաւատարիմ ծառայ Աստուծոյ և կատարող իւր կոչման, օտարի յանցանքը տանում է անտրտունջ. այս բանը Աստուած ինքն է կարգադրել, սա Աստծու սահմանած ուղին է, որով մարգարէն պիտի փառաւորուի, սա միևնոյն ժամանակ մի առիթ է Մեսիային ճիշ-



ըմբռնելու, որ մենք Եսայեա մարգարէի ծգ. 4. 5. տան մէջ գտնում ենք, թէ «նա զմեղս մեր բառնայ, եւ վասն մեր չարչարի, եւ մեք համարեցաք զնա ի ցաւս եւ ի հարուածս եւ ի չարչարանս իբրեւ յԱստուծոյ: Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, եւ պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց, խրատ խաղաղութեան մերոյ ի նմա եւ նորա վիրօքն բժշկեցաք»: Այսպէս՝ Աստծու կամ բնական ճանապարհով, ժամանակի ընթացքում՝ հետզհետէ մի գիծը միւս գծին աւելանալով՝ կազմեցին Մեսիայի պատկերը և սրանից էլ մի ընդհանուր պատկեր յառաջացաւ, ուր Մեսիան ոչ թէ միայն մարգարէ է, այլև քահանայապետ, թագաւոր, որդի Աստուծոյ և որդի մարդոյ է պատկերացնւում, խոնարհութիւնից փառաւորութեան հասնելով՝ Աստծու նոր և կատարեալ թագաւորութիւնը պիտի հիմնէ, որ ամբողջ երկրագնտի վրայ պիտի տարածուի, որի տևողութիւնն անանցանելի է և որի փառքը յաւիտեան պիտի լինի*:

---

* Մեսիայի անձի և գործերի վերաբերութեամբ եղած գաղափարները ի մի ամփոփելով՝ համաձայն աւետարանիչների պատմութեան, կտանանք, որ նա 1. Դաւթի ցեղից պիտի ծագէր (Յովհ. է. 42. Մտթ. ժբ. 23. թ. 27. ի. 30:

2. Բեթղեհէմում պիտի ծնի (Մտթ. 1—5 Յովհ. է. 42):

3. Աստծուն ընծայուի և յայտնուի—(Ղուկ. ա. 16—17):

4. Մարգարէները պիտի յառաջընթաց լինին նրան (Մտթ. ժէ. 10. ժդ. 14. Մրկ. թ. 11. Յովհ. ա. 21):

5) Աստուծոյ օծեալն է (Ղուկ. բ. 26. Յովհ. ա. 42. է. 31):

6) Որ ինչպէս թագաւոր (Մտթ. բ. 2—4 Յովհ. ա. 50. զ. 15. Ղուկ. իգ. 2):

7. Մարգարէ (Յովհ. դ. 25. Մտթ. իա. 11):

8. Քահանայ (Ղուկ. ա. 16. համեմատել Յովհ. ա. 29):

9. Որդի Աստուծոյ (Յովհ. ժա. 27. ա. 50. Մտթ. իզ. 63. ժզ. 16. Մրկ. ժդ. 61. Մտթ. իէ. 40):

10. Աստուածային կեանք պիտի քարոզէ (Յովհ. ժբ. 34):

11. Փրկութեան վայր պիտի հիմնէ (Մտթ. է. 5. գործք առ. ա. 6 համեմատել—Ղուկ. իդ. 21. ա. 51. Մտթ. ի. 21)

12. Աբրահամի ժառանգների համար, այլև նոցա, որոնք իւր մօտ կգան (Ղուկ. իգ. 3. Յովհ. ժթ. 19. 21. Մտթ. ժե. 21. Ղուկ. բ. 31. 32)

13. Իւրերի աստուածային կարգաւորութիւնը. Աստուծոյ արքայութիւնը (Մտթ. գ. 2....)

14. Աստուծոյ իշխանութեան ներքոյ՝ Մեսիայի անձնաւորութեամբ (Մտթ. ի. 20. 21. ժբ. 1...)

15. Երկրիս վրայ պիտի իրականանայ (Ղուկ. ա. և բ. Զաքարիա Սիմէօն և Աննա Մտթ. ը. 29):

Ջերմ ոգևորութեամբ երևակայում էր ժողովուրդն այս պատկերը. հազարաւորներ իրանց խորտակուած յոյսը նրա վրայ էին դրել։ Այս բոլորն, ինչպէս որ մենք տեսանք, մարգարէական կանխագուշակութիւններ էին։

Ինչ որ մարգարէներն ասել էին ապագայ Մեսիայի մասին, արտաքին կերպով չկատարուեց։ Գերի գնացած տասն ցեղերն այլևս հայրենիք չդարձան՝ Յուդայի ցեղի փոքրագոյն մասը միայն վերադարձաւ։ Դաւթի տանից ոչ ոք գահ չբարձրացաւ Իսրայէլի մէջ, այլ ընդհակառակն ազգը կէս հազար տարու չափ օտարի լծի տակ հեծեց—նախ՝ ասորեստանցւոց և բաբելացւոց, յետոյ՝ պարսից, մինչև որ Երուսաղէմն աւերուեց և ժողովուրդը ցրուեց աշխարհիս բոլոր կողմերը։ Արդե՞օք սխալանք էր այն բոլորը, ինչ որ ժողովրդին քարոզեցին։ Ո՛չ և դարձեալ ո՛չ։ Այն մարգարէութիւնները, որոնցով ժողովուրդը ոգևորւում էր և հոգեպէս, բարոյապէս բարձրանում երկար տարիների և ծանր հանգամանքների ճնշման ներքոյ, արդարև արտաքին ձևով և մանրամասն չկատարուեց, բայց ներքին կերպով, հոգեպէս ընդունած՝ բոլորն էլ կատարուած են։ Ինչպէս որ ծաղիկը երևալու համար կոկոնը պատառւում է, այսպէս էլ գուշակութեանց, մարգարէութիւնների պատեանից դուրս եկաւ տեւականը, հաստատունը։ Դաւթի գահի վրայ իշխան չէ նստել, իսկ հոգեկան թագաւորը եկել է, որ Դաւթից մեծ է—մեծ է նաև բոլոր թագաւորներից։ Յուդայի և Իսրայէլի տան միաւորող հիմնադիրը չէ երևացել, այլ Աստուծոյ արքայութեան հիմնարկուն, որի սահմանները երկրագնդի սահմաններից դուրս է։ Ոչ թէ հրէական քահանայապետ է՝ որ Յուդայի և Իսրայէլի տան հետ նոր ուխտ հաստատեց, Սրբութիւն սրբոց մտնողը, այլ Աստուծու մօտ գնալու ճանապարհը հարթողը—Աստուծու և մարդոյ որդին, որ եկել է սիրոյ և ազատ՝ կամաւոր հպատակութեան դաշն կռելու միլիոնաւոր սրտերի հետ։ Յիսուս Քրիստոս՝ խաղաղութեան իշխանը, ճշմարտութեան թագաւորը, Աստուծու արքայութեան հիմնադիրը երևացել է՝ և այն ոչ թէ մարգարէից գուշակութիւններով (Յովէ. ե. 39. Ղուկ. իբ. 24.

16. Անվերջանալի երջանկութիւն պիտի լինի (Մատթ. ժթ. 16... Ղուկ. ժ. 25.... ժգ. 15. ժգ. 2. 8.... Մատթ. ը. 11. 12. Յովհ. ժթ. 34)։

Մեսիայի գիտակցութեան գլխաւոր վայրկեանները՝ ինչպէս որ կար, ինչպէս որ խօսւում էր ժողովրդի մէջ, գտնում ենք Զաքարէի (Ղուկ. ա. 68—79), Սիմէօնի (Ղուկ. բ. 31—32) և Յովհաննէս Մկրտչի խօսքերի մէջ (Յովհ. ա. 29)։



Մատթ. իզ. 54. Ղուկ. իբ. 37. Յովհ. ժ. 35.), այլև իւր գալստեամբը հաստատեց մարգարէից նախագուշակութիւնները։ (Կարդալ Յովհ. ժը. 36. 37.)։

## 5. ՀՐԷՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՅԻՍՈՒՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Մարգարէութիւնը իւր պաշտօնը կատարելուց յետոյ՝ լռեց մարգարէի բերանը։ Մօտաւորապէս 400 տարի Քրիստոսից առաջ Մաղաքիայի հետ վերջին մարգարէն գերեզման իջաւ։ Մարգարէութեան բարձման հետ սկսում է մի նոր շրջան փրկութեան, դաստիարակութեան համար։ Երբ ժողովուրդը վշտակրութեան դպրոցն աւարտեց և մասամբ հայրենիք վերադարձաւ, տիրող օրէնքը ոչ թէ միայն մեծ եռանդով ի նորոյ քարոզուեց, այլ՝ ինչ որ մարգարէները գուշակել էին և հարք գրել էին (Եզրասից սկսած) ի մի ժողովեցին։ Ոչ թէ միայն այն ժամանակուայ իսրայէլացիները, այլև նոցա որդիքը, որդւոց որդիքը Աստուծու մեծ գործերի հետ պիտի ծանօթանային։ Օրէնքը և մարգարէութիւնը քննելու և ուսանելու մի նոր, եռանդուն շրջան է սկսւում—ամենքը՝ սերնդէ սերունդ անցնելով՝ մեծ անհամբերութեամբ սպասում էին, թէ ե՞րբ պիտի գայ փրկարար ժամանակը։ Տիրող բոլոր օրէնքները կատարել—ահա թէ ինչ էր ամենի նշանաբանը։ Դրա համար էլ օրէնք քննելը ժամանակի տիրապետող բարոյականութիւնն էր—ժողովուրդը իւր փրկութիւնը որոնում էր եղած սովորութիւնների և ձևերի ճիշտ և հաւատարիմ կատարման մէջ։ Ի շնորհս այս ուղղութեան, ծիսական օրէնքներն անվերջ մանրամասնութեամբ ընդարձակուեցան։ Օրէնքին հետևելու եռանդն այն աստիճան մեծ էր, որ թէ փոքր և թէ փոքրագոյն օրէնքների նախապատրաստութեան մէջ եկող Մեսիային էին որոնում։ Այսպէս յառաջ ընթանալով օրինապահները, հետզհետէ խստութեան էին դիմում և վերջ ի վերջոյ յամառութեան հասնում, ուր այլևս սէր չկար, ամեն ինչ սառն, տառացի ըմբռնողութիւն էր։ Փոխանակ ներքին՝ բարոյական-կրօնական կեանքի, զօրացաւ արտաքին ձևապաշտութիւնը և դրա հետ էլ յամառ ինքնահաւանութիւնը։ Ծերունի Եղիազարն աւելի սիրով մահ ընդունեց՝ քան թէ համաձայնեց խոզի միս ուտելու։ Մի յամառ մայր գերադասեց եօթն որդու հետ մեռնելը՝ քան թէ օրէնքից անցնելը։ Մեծ արժանաւորութիւն էր համարւում օրէնքն ամենայն խստութեամբ կատարելը։ Զարմանալու էլ չէ, որ հաւատոյ իւրացուցման տեղ օրինականների (օրէնք մեկնող) իմաս-

տակ մեկնութիւնները բոնեցին, որոնք գրի, տառի խունից ընկնելով՝ մոռանում էին օրէնքի ոգին: Սա մի մեծ մոլորութիւն էր, որի մէջ ընկաւ Իսրայէլը: Օրէնքը ժողովրդին հասկացնելու, մեկնելու վերաբերմամբ Իսրայէլը երեք կուսակցութեան բաժանուեց—փարիսեցիք, սադուկեցիք և եսսենացիք:

### ՓԱՐԻՍԵՑԻՔ

Փարիսեցիները հրէութեան կրթուած, զարգացած և ազդեցութիւն ունեցող դասակարգն էին (օրթոդոքս՝ ուղղափառ, հին հրէաները): Դրանք սկիզբն են առնում 480 տարի Քրիստոսից առաջ: Ժողովուրդը Բաբելոնի գերութիւնից ետոյ հայրենիք էր վերադարձել և առաջնորդների կարեորութիւն ունէր: Նրանց գործունէութիւնն սկզբում խիստ գովելի էր, ամենայն եռանդով և ազնիւ սկզբունքներով աշխատում էին ընկճուած, վհատուած ժողովրդին վերականգնել, ազգային ոգւով դաստիարակել, իսկ կրօնական բարեպաշտութիւն քարոզելով և գործով օրինակը տալով՝ ժողովրդին գործնականութեան մէջ էին ուզում զօրացնել: Մակաբայեցւոց ժամանակ ևս նրանց ներգործութիւնը խիստ օգտաւէտ եղաւ: Ժողովուրդը նրանց եռանդին է պարտական, որ սելևկացւոց իշխանութիւնը մերժեց և ազատութեան դրօշակը նորից Սիօնի վրայ ծածանուեց: Նրանց գործունէութիւնը այն բարերար հետևանքն ունեցաւ, որ ժողովրդի մէջ մեծ հռչակ և համարում ունեցան և ի տրիտուր իրանց կատարած ծառայութեան «բարեպաշտ» պատուանունն ստացան: Այստեղից ուրիշ շրջան է առնում նրանց բնաւորութիւնը: Ամբոխի յարգանքը մեծամիտ դարձրեց նրանց—խիստ ուղղափառութիւնը անհանդուրժականութեան հասցրեց նրանց և նրանք հետզհետէ այն կէտին հասան, որ հեռացան, բաժանուեցան ժողովրդից (այս տեղից է սկիզբն առնում փարիսեցութիւնը, որ բառացի նշանակում է «բաժանուած», «զատուած») և ընկան ձևապաշտութեան, երեսպաշտութեան և կեղծաւորութեան ախտի մէջ: Խիստ էին դէպի օրէնքը, բայց իրանք ըստ այնմ չէին կեանք վարում (Մատթ. իգ. 2. 3.): Վերին աստիճանի հաստատ էին ծիսական օրինաց կատարման և կրօնի արտաքին պէտքերի վարժութեան (պահեցողութիւն և լուացումն, աղօթք և ողորմութիւն տալ, տասանորդ տալ և շաբաթի կատարումն....) հետևելով՝ մոռանում էին սրտի և կամքի բարոյական կողմը: Եւ հոգեկան մեծամտութեամբ, մեռած տառերին պաշտօն



մատուցանելով՝ կարծում էին թէ երկինքը պիտի նուաճեն, այն ինչ, ինչպէս Քրիստոս ասում է, օրէնքի ծանր մասը՝ սէրը բոլորովին մոռացութեան էին տուել: Նրանք սուրբ էին ցոյց տալիս իրանց, այն ինչ իրօք ամեն ինչ կեղծ էր նոցա մէջ: Փարիսեցիները մասամբ բարձրագոյն ատենի անդամներ էին, մասամբ օրէնքների ուսուցիչ (զորօրինակ Գամաղիէլ—Գործք առ. ե. 34), ոմանք դպիրներ, օրինականներ (աստուածաբանական—իրաւաբանական մեկնիչներ օրինաց), սակաւ բացառութեամբ ամենքն էլ իրանց փառքի և օգտի վրայ էին մտածում. Նրանց մտապատկերները Աստծու արքայութեան մասին և նրանց յոյսը Մեսիայի մասին հասնում է մինչև հռովմայեցւոց* ժամանակ, որոց տակով տառում էին: Սակայն այս յոյսը արտաքին էր միայն—եկող Մեսիային ոչ թէ աշխարհի փրկիչ էին համարում, այլ՝ Հռովմի ծանր լուծը թօթափող: Ժողովրդի հասարակ դասակարգին գրգռեցին հռովմայեցոց դէմ և խընդիրն այնտեղ հասցրին, որ Երուսաղէմը կործանուեց, իսկ ժողովուրդըն աշխարհիս ամեն կողմը ցրուեց: Եկող Փրկչին, որ աստուածային խօսքի զօրութեամբ աշխատում էր նրանց իշխանութիւնը կործանելու, ցմահ ատեցին և հանգիստ չառան՝ մինչև որ խաչի վըրայ չբարձրացրին:

---

* Հրէայք (մասամբ) գերութեան դարձից ետոյ գտնւում էին Պարսից (Կիւրոս) իշխանութեան ներքոյ: Պարսից տէրութիւնը նուաճեց Աղէքսանդր մեծը և այսպիսով հրէաներն ընկան Մակեդոնական իշխանութեան տակ: Աղէքսանդրի մահուանից ետոյ, երբ նրա երկիրը իւր զօրավարների մէջ բաժանուեց, Պաղէստինէն նախ՝ ենթարկւում էր Եգիպտոսի և ապա՝ Ասորիքի իշխանութեան: Ասորիքի թագաւոր Անտիոքոս Եպիփանեսը այն աստիճան ճնշում էր հրէաներին, որ առիթ եղաւ Մակկաբայեցւոց հերոսական վարմունք ցոյց տալուն իրանց նեղիչի դէմ: Ափսոս որ Մակկաբայեցիք ոյժ չունեցան երկար դիմադրելու և ստիպուեցան հռովմայեցիներին օգնութեան կանչելու փրկչական 63 թ., որոնք օգնութիւն խոստացան, բայց վերջը երկրից չհեռացան և փոխանակ օգնելու, նոյնպիսի նեղիչ հանդիսացան: Թշուառութիւնը նրանումն է կայանում, որ հռովմայեցիները ամեն մի կրօնական արտայայտութեան քաղաքական գոյն էին տալիս, իսկ հրէաները ընդհակառակն—ամեն մի քաղաքական երևոյթ կրօնի վերաբկուով էին ծածկում: Հռովմայեցիներն արդէն ունէին աշխարհային իշխանութիւն, իսկ հրէաները ցանկանում էին ունենալ: Այս ձևի ըմբռնողութիւնը պարփակւում էր հէնց հրէական աստուածպետական իշխանութեան ոգու մէջ: Եւ հէնց դրա համար էլ Երուսաղէմի կործանման պատերազմը պատկանում է այն տեսակներին, որի նմանը դեռ պատմութիւնը չէ տեսել:

### Ս Ա Դ Ո Ւ Կ Ե Ց Ի Ք

Եթէ փարիսեցիները հրէից ուղղափառներն էին, այն ժամա-
նակ սադուկեցիներին պիտի անուանել անհաւատ ազատամիտներ,
որոնք ուրանում էին բարձրագոյն ոգիների վարդապետութեան գոյ-
ութիւնը, այն է անմահութիւնը, յարութիւնն ու վերջին դատաս-
տանը. նրանք ուրանում էին առհասարակ աստուածային աշխարհա-
վարութեան ամենայն մի ներգործութիւն մարդոց գործերի վերա-
բերմամբ: Սադուկեցիները (բառացի նշանակում է «արդար») իրանց
անունն ստանում են ռաբբի Սադոկից (աշակերտ Անտիոքոս Սօխոյի.
200 տարի նախ քան զՔրիստոս (?): Ժողովրդի մէջ փոքր ազդեցու-
թիւն ունէին, որովհետև նրանց վարած կեանքը օրինակելի չէր (ըստ
մեծի մասին վայելչասէր մարդիկ էին): Միւս կողմից էլ հռովմայեց-
ւոց հետ լաւ յարաբերութեան մէջ էին, մանաւանդ Հերովդիանոսի
ընտանեաց հետ: Փարիսեցիների հետ գրեթէ միշտ թշնամի մնացին.
սոքա մերժում էին այն՝ ինչ որ նրանք ընդունում էին և ընդունում
էին այն ամենը՝ ինչ որ նրանք մերժում էին—ահա սա է, որ սադու-
կեցիութիւնը որպէս կուսակցութիւն բաժանում է իրանց հակառա-
կորդ փարիսեցիութիւնից. Մի խնդրում միայն երկու կուսակցու-
թիւններն էլ միանում էին—երկուսն էլ ատում էին Փրկչին, եր-
կուսն էլ պատերազմ էին մղում ճշմարտութեան դէմ. Եթէ այս խընդ-
րում փարիսեցիներին գովել կարելի է, այդ այն հանգամանքն է,
որ նրանք ուղղակի հակառակ էին Փրկչին, չէին ծածկում իրանց
ատելութիւնը, իսկ սադուկեցիների զէնքը փոքր ինչ տարբերւում
էր— նրանք ծ ա ղ ր ո ւ մ էին (Մատթ. իբ. 23.......): Նրանց ատելու-
թիւնն այն աստիճան մեծ էր դէպի Յիսուս, որ նրան կործանելու
համար միացան իրանց ոխերիմ փարիսեցիների հետ. (Մատթ. գ. 7.
և ժզ. 1.): Երուսաղէմի կործանման հետ՝ նրանց հետքն էլ անհետ
կորաւ:

### Ե Ս Ս Ե Ն Ա Ց Ի Ք

Ոչինչ կապակցութիւն չունէին փարիսեցիների և սադուկեցի-
ների հետ, բայց բարոյական տեսակէտից նայած՝ անհամեմատ բարձր
էին երկուսից էլ—սոքա կազմում էին երրորդ կուսակցութիւնը:
Սրանք անուանում էին իրանց ե ս ս ե ն ա ց ի ք, այսինքն փրկողներ, և
այդ ոչ թէ միայն նորա համար, որ հիւանդներ էին բժշկում, այլև



նրա համար, որ իրանց վարած կեանքի եղանակն ամբողջապէս մի
տեսակ փրկարար՝ առողջացուցիչ ազդեցութիւն պիտի ունենար ապա-
կանութեան գիրկն ընկնող աշխարհի համար: Նրանց թիւը Փրկչի օրօք
փոքր էր (4,000 հոգի): Սոքա կազմում էին մի նեղ, սահմանափակ
միաբանութիւն. միւս հրէաներից բաժանուած էին և ապրում էին Մե-
ռեալ ծովի ափին: Նրանցում ամեն ինչ հասարակաց էր՝ աշխատասէր
էին, պարզ կեանք էին վարում. երբեք չէին երդւում և մերժում էին
ամուսնութիւնը: Ով նրանց միաբանութեան մէջ ընդունւում էր, ստա-
նում էր մի տապար (նշանակ աշխատանքի), մի գոգնոց (մաքրու-
թեան նշան) և մի ձեռք սպիտակ հանդերձ (միաբանութեան սովո-
րական զգեստ). բաւականութիւնը յանցանք էր համարւում նրանց
մէջ, իսկ չուայլութիւնն արգելուած էր. Միաբանութեան կանոնների
համաձայն խորհրդապահութիւնը պարտաւորութիւն էր: Առաջ կար-
ծողներ կային, որ Յիսուս եսսենացւոց միաբանութեան անդամ եղած
պիտի լինէր: Այս հայեացքը բոլորովին սխալ է, վասնզի եսսենացիք
մերժում էին ամուսնութիւնը, այն ինչ Քրիստոս Աստուածանից հա-
նաչուած սուրբ օրէնք էր ընդունում նոյնը: Եսսենացւոց մօտ փըր-
կութեան գաղափարի ոչ մի հետք չի կարելի գտնել, այն ինչ Յիսուս
դրա կարևորութիւնը ակնյայտնի քարոզում էր: Եսսենացիք ընչից
հաւասարութիւն ունէին, իսկ Յիսուս դրա հակառակն էր: Եսսենա-
ցիք արհամարհում էին տաճար յաճախելը, իսկ Յիսուս գլխաւոր տօ-
ներին միշտ Երուսաղէմ էր գնում: Եսսենացիք չէին մասնակցում ու-
րախ տօներին, իսկ Յիսուս հարսանիք էլ էր գնում և մասնակցում
հրաւէրներին: Եսսենացիք շաբաթը խիստ էին պահում՝ համաձայն Մով-
սիսական օրինաց, իսկ Յիսուս զգալի կերպով մեղմեց այդ հայեաց-
քը: Եսսենացիք հեռի էին աշխարհային զուարճութիւններից, միայն
իրանց միաբանակցի և հրէի ուրախութեան կարող էին մասնակցել,
իսկ Յիսուս թէ խօսքով և թէ գործով սէր է ցոյց տուել ա մ ե ն ի ն:
Եսսենացիք բնակւում էին հարաւային Հրէաստանում, իսկ այնտեղ Յի-
սուս երբէք չէ գնացել: Ճշմարտութիւնն այն է, որ Քրիստոս երեք
կուսակցութիւններից ոչ մինին էլ չէ պատկանել—նա ո՛չ փարիսեցի,
ո՛չ սադուկեցի և ո՛չ եսսենացի է. ոչ ուղղափառ (օրթօդոքս) և ո՛չ բա-
նաւորական (րացիօնալիստ)—նա բոլոր կուսակցութիւններից էլ
բարձր էր: Ընդհակառակն՝ երևում է որ մի այլ անձն եսսենացւոց
շրջանից ծագած և հոգւով նրանց մօտիկ եղած լինի:

### 6. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ, ՅԻՍՈՒՍԻ ՅԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Յովհաննէսի կոչումն էր Տիրոջ երեւումը քարոզելու։ Նա հին ուխտի վերջին մարգարէն էր. կանգնած էր հին և նոր ժամանակի սահմանագծի վրայ և իւր երևմամբ յիշեցնում է Մովսէսին և Եղիային։ Յովհաննէսը շատ տեսակէտով արժանանում է մեր հաւանութեանը —ա. իւր աշխարհուրացութեամբ և պարզութեամբը։ Քաղաքի աղմկալից կեանքը, ուր նա շատ բաւականութիւններ կարող էր վայելել, ինքնակամ մերժեց. նա անապատն ընտրեց իւր բնակութեան համար, գետինը նրա անկողինն էր։ Շքեղ հանդերձներ և գեղեցիկ զգեստները չէին գրաւում նրան. ուղտի բրդից պատրաստած հասարակ կտորով ծածկում էր նա իւր մերկութիւնը։ Անուշ կերակուրների մէջ չէր որոնում իւր բաւականութիւնը—մարախ և վայրենի մեղրով էր անցկացնում իւր օրերը։ բ. իւր ճշմարիտ սիրովը և ազատ ոգւովը։ Նա շարժուն եղէգ չէր, որ օրուան փոփոխական հողմերի հետ փոխուէր (Մատթ. ժա. 7 . . .), այլ մի բարոյական բնաւորութիւն, որ աներկիւղ և բացարձակ քարոզում էր աշխարհին—«ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։ Ապաշխարեցէք, փոխեցէք ձեր մտածելու եղանակը—ահա թէ ինչ էր ասում անապատի մարգարէն։ Նա չէր խօսում զոհաբերութեան, տասանորդի, պահքի և աղօթքի մասին։ Որպէսզի օգնէ ամենին ապաշխարութեան դառնալու, առանց բացառութեան ամենի երեսին էլ ասում էր ճշմարտութիւնը (Ղուկ. գ. 7 . . .)։ Ժողովրդին ասում էր. «Ով երկու հանդերձ ունի. թող մինը չունեցողին բաշխէ. ով կերակուր (աւելորդ) ունի, թող նոյնպէս վարուէ»։ Մաքսաւորներին ասում էր. «Օրէնքով որոշածից աւելի մի՛ վերցնէք»։ Զինուորներին—«Ոչ ոքի մի՛ հարստահարէք»։ Փարիսեցիներին—«Իժի ծնունդնե՛ր, տապարը ծառի արմատին դրած է»։ Գահի առաջ անգամ չէր վախենում ճշմարտութիւն խօսելու։ «Իրաւացի չէ, որ դու քո եղբօր կինն առնում ես», ասաց նա Հերովդէսին։ Թէև այս խօսքերը իւր կեանքի չափ թանգ նստեցին ճշմարտութեան քարոզչին, բայց և այնպէս նա հաւատարիմ մնաց արդարութեան և մեռաւ առանց ետ առնելու իւր խօսքը։ Ճշմարիտ սիրուց և ազատ ոգուց աւելի բարձր է երևում մեզ՝ գ. իւր համեստութեամբը և հեզութեամբը։ Երբ ժողովուրդը, քահանաները և ղևտացիները մարդ ուղարկեցին հարցնելու. «Արդեօ՞ք դու ես Քրիստոսը, թէ



ուրիշին սպասենք»։ Մարդկային փառասիրութիւնը շատ մօտիկ էր, եթէ նա ասէր. «Ես այն եմ, որի փոխարէն դուք ինձ ընդունում էք—ես Քրիստոսն եմ»։ Բայց Յովհաննէսը ազնիւ մարդուն յատուկ վեհութեամբ խոստովանեց՝ ասելով. «Ես Քրիստոսը չեմ» և աւելացրեց հեզ և խոնարհ կերպով. «Ես ձայն բարբառոյ յանապատին եմ, Տիրոջ ճանապարհները պատրաստելու համար եմ երեւացել»։ Այն հեզութիւնը՞, որով նա խոստովանում է. «Ես մկրտում եմ ձեզ ջրով, բայց ձեր մէջ մինը կայ, որ կմկրտէ ձեզ Հոգւով սրբով և կրակով, ես արժան չեմ նրա կօշիկների թելերը բաց անելու»։ (Յովհաննէս. ա. 19 . . . . .) բարձրացնում է նրան դ. ազնուագոյն անձնուրացութեան, որ ի նկատի ունի միայն Փրկչի անձնաւորութիւնը—իւրը բացէ ի բաց մոռանում է։ Այս մեծահոգի անձնուրացութեամբ գոչում է նա. «Այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է, նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ» (Յովհ. գ. 29.30.)։

Ահա սա է Յովհաննէսը՝ հին ուխտի մեծագոյնը, որ մարգարէից աւելի էր (համեմատել Յիսուսի վճիռը սրա մասին Մատթ. ժա. 7—1I.)։ Սա տիրոջ յառաջընթացն էր, որ կոչուած էր փշերը քաղելու, տատասկներն արմատախիլ անելու, տիրոջ համար ճանապարհ պատրաստելու, որպէսզի պատւոյ թագաւորը պատրաստ ճանապարհի վրայով անցնէ։ Սա այն անձն է, որ աւելի մեծ հանդիսացաւ՝ քան թէ իւր նախորդները. սա նա է, որ պիտի պատահէր նրան, որի գալուստը խօսքով և գործով քարոզում էր։

Այսպէս էր պատրաստուած ամեն ինչ Իսրայէլի ժողովրդի մէջ։ Աշխարհս ճանաչեց, խոստովանեց, որ լոկ օրէնքով և զոհաբերութեամբ Աստծու հետ խաղաղութեամբ չէ կարելի ապրել։

Բայց նախ քան Փրկչի գալուստը՝ ծանօթանանք այն նախապատրաստութեան հետ, արտաքոյ Իսրայէլի, որ հեթանոսութեան մէջ տեղի ունեցաւ։

### 7. ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ, ՆՐԱ ՅՈՅՍԵՐԸ ԵՒ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ

Հեթանոսութիւնը նմանում էր անառակ որդուն, որի հայրը ոչ թէ նրա համար թոյլ չտուաւ իւր ճանապարհով գնալու և օտարութեան մէջ ապրելու (Գործք առ. ժդ. 15), որպէսզի այնտեղ իւր բաղդը գտնէ, այլ նրա համար, որպէսզի խրատուի, ճանաչէ չարն ու բարին և ապա կարօտով առ հայր վերադառնայ և նրա մօտ խաղաղութիւն գտնէ, խաղաղութիւն, որ աշխարհն անկարող էր

տալ: Հեթանոսութիւնը իւր սեպհական ճանապարհը անցել, գնա-
ցել էր. արուեստի և գիտութեան համար այնքան մեծ ծառայու-
թիւն էր արել, որ մի քանի բաներում մինչև այսօր էլ օրինակելի է
մեզ համար: Թէ մարդկային գիտութեան և արուեստի այս ծաղիկը
ինչ աստիճան ընդունակ էր մարդկային սրտին բաւականութիւն
տալու, այդ բանին վկայ են այն բազմաթիւ փառահեղ տաճարները,
որ հեթանոսութեան ձեռքով կանգնեցան աղօթող բազմութեանը գո-
հացում տալու, որոնց ժամանակի գիտութիւնն ու արուեստը բաւա-
կանութիւն չէր տուել: Ոչ թէ միայն հին Աթէնքի արէօպագը՝ ար-
դարութեան ատեանը, որի մասին Պօղոսը շատերի ներկայութեամբ
գոչեց. «Արք աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս տե-
սանեմ զձեզ» (Գործք առ. ժէ. 22.), այլև ի նորոյ՝ պեղեալ Պոմ-
պէյին և Ոլիմպոսի գանձերն ապացուցանում են, թէ ինչ փառահե-
ղութեամբ զարդարել գիտէր հեթանոսութիւնը իւր տաճարները:
Ամենքի սիրտն էլ լիքն էր անձկութեամբ՝ որոնելու անծանօթ Աս-
տըծուն—ամենքն էլ կարօտով փնտռում էին այդ Աստծուն: Մարդ-
կային սրտի անձկութիւնը, կարօտը բաւականութիւն չստացաւ, որով-
հետև հեթանոս իմաստասիրութիւնն անկարող եղաւ գտնելու ան-
ծանօթ Աստծուն: Թէև հին յունական և հռովմէական փիլիսոփայու-
թիւնը յայտարարեց, թէ ճշմարիտը, իրաւացին գտել է և ընդունակ
է թերին լրացնելու (Եպիկուրեանք, Ստոյիկեանք, Էկլէկտիկներ),
բայց փորձը շուտով ցոյց տուաւ, որ հեթանոսութեան ամբողջ փի-
լիսոփայութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անկեալ վարդապետական
համակարգութիւններ, որոնցից մինը միւսին մահացնում է և թա-
ղում: Ամեն մի վարդապետութեան վերաբերութեամբ յարմար է կըր-
կնել սուրբ գրքի խօսքը, որ Պետրոսն ասաց Սափիրային. «Ահա ոտքն
որ թաղեցին զայրն քո 'ի դրան, հանցեն եւ զքեզ» (Գործք առ. ե. 9):
Վերջապէս բոլոր իմաստասիրութիւնը գագաթնանում է հետևեալ
մեկնութեան մէջ. «Մարդս շատ բան պիտի իմանայ, որպէսզի իմա-
նայ թէ ոչինչ չգիտէ»: Այնպէս պատահեց, որ հին աշխարհը վեր-
ջապէս որոնելուց դադրեց և ընկաւ կասկածի և անհաւատութեան
մէջ: Ամենազարգացած հին ազգերը՝ յոյները և հռովմայեցիները սար-
սափով նկատեցին իրանց կրօնի դատարկ և անմխիթար լինելը:
Նրանք հասել էին իրանց զարգացման վերջին: Անհատներ միայն,
ինչպէս իմաստուն Սոկրատէսը (400 տարի Ն. Ք. զՔրիստոս) եկան
այն համոզման, «որ երբ մարդս կարևոր ճշմարտութիւնները բաւա-



կանաչափ հետախուզել չի կարող, պէտք է հանգիստ լինի և այն-
քան ժամանակ սպասէ՝ մինչև որ մինը գայ, որ աս-
տուածային ուսմամբ մարդկային աչքի աղօտը, մթու-
թիւնը հեռացնէ»: Թերի ճանաչման զգացումից աւելի վատ երո-
ղութիւն էր հեթանոսութեան կենաց բարոյական անկումը:
Պիտի երևակայել, թէ ինչ խաւար է պատում մարդուս սրտին, երբ
վերևից ոչ մի ճառագայթ չէ լուսաւորում: Նիւթականութիւն ձեռք
բերելու հոգն այնպէս տիրապետել էր մարդոց ներքինը, ինչպէս փուշ
և տատասկ. մառախուղն այնպէս էր վարագուրել մարդոց ոգին, որ
չէր թոյլ տալիս Աստծու և մարդկային սիրոյ ծաղիկը մարդոց ներ-
քինում բացուել, փթթել: Վսեմն ու ազնիւը անըմբռնելի էին մնում.
ոգևորութիւնը ծաղրի էր ենթարկւում. սիրոյ կապանքները լուծւում
էին և բարոյականութիւնը մահանում էր անհաւատութեան թոյնի
շնչում: Այսպէս էր հռովմայեցւոց ժողովրդի մէջ: Հին հայրենասիրա-
կան զգացմանց վաղուց արդէն յաջորդել էր ստրկահոգութիւնը, բա-
րոյական վսեմութեանն՝ անարժան շողոմութիւնը: Սեպհական շահը
և նիւթապաշտութիւնը կուռք էին դարձրել և նրանց պաշտօն մա-
տուցանւում: «Մոլի ազգերի վարքն ու բարքը», գանգատւում է Սե-
նեկա իմաստասէրը, «այն աստիճան տարածուել էր, որ ամենուրեք
մուտք էր գտել: Ամենուրեք սպանութիւն և մոլութիւն, աւելի անար-
դարութիւն էր գործւում, քան թէ իշխանութիւնն ոյժ ու հնար ու-
նէր բուժելու»: Ցոփութիւնը, վատ անուն ունենալը վէճի առարկայ
էին դառնում: Օր ըստ օրէ բազմանում էր ցանկութիւնը յանցանք
գործելու, րոպէ առ րոպէ վերանում էր ամօթը: Յարգանք դէպի
սրբութիւնը չքանում էր: Մոլութիւնը այլևս ծածուկ չէր կատար-
ւում....: Որպէսզի աստուածային ձայնը ներքինում մահացնուէր,
գանձեր հին դիզում, հարստութեան վրայ հարստութիւն աւելացնում,
մի բաւականութիւնից միւսին էին անցնում: Այս բոլոր երկրաւոր,
անցաւոր բաւականութեանց համար բաւական է յիշել Լուկուլլո-
սին, որի տուած մի ճաշը միայն 10,000 ռուբլի արժէր. Սուղղային,
որ Հռովմի բոլոր բնակիչներին համադամ կերակուրներով և ընտիր
գինիներով հիւրասիրեց. Մարկոս Սկաւրոսին, որ մի թատ-
րոն շինել տուաւ՝ ուր 80,000 մարդ էր տեղաւորւում և այդ ամենը
լոկ մի ամսուայ համար. Հերոդիուսին, որ թարմ ձուկ ունենալու
համար՝ ծովից դէպի Հռովմ մի ջրանցք շինել տուաւ, որ՚արժեցաւ
400,000 ռուբ.—այս չքեղութեանց և վայելքներին մի բան էր պա-

կասում, որից ոչ ոք չպիտի զուրկ լինի—ներքին խաղաղութիւն, սրտի հանգստութիւն—խաղաղութիւն ընդ Աստուծոյ: Կուռքերը ծաղրի առարկայ դառնալուց ետոյ՝ մարդոց գիտակցութիւնն ապաստան որոնեց շահասէր երազահանների և խաբեբայ վհուկների մօտ, և կամ արևելքից նոր աստուածներ էին բերել տալիս (նոյն իսկ եգիպտական կենդանապաշտութիւնը մուտք ունեցաւ յունաց և հռովմայեցւոց մէջ)—այս բոլորը նրա համար էր, որպէսզի սրտի ցանկութեանց բաւականութիւն տրուի, որ կուռքերը մինչև այժմ անկարող էին եղել տալու: Երբ հեթանոսական փիլիսոփայութիւնը հռովմայեցիներին ամօթով թողեց, սկսեցին իրանց ատելի հրէաներին խորհրդի դիմել և նրանցից փրկութիւն սպասել: Նոյն իսկ բազմաթիւ հռովմայեցիներ հրէայ էին դառնում (եկ՝ նորահաւատ): Զարմանք չէ, որ բարոյական և կրօնական այսպիսի անկման ժամանակ հրէական Մեսիայի գալստեան յոյսը, որ հրէաներն իրանց հետ աշխարհիս բոլոր կողմերն էլ տարել էին, յունաց և հռովմայեցւոց մէջ ևս պատրաստի սրտեր գտնէր և սիրով ընդունուէր: Մարդիկ սպասում էին սիբիլլական գրքի մէջ մարգարէացած ոսկէ ժամանակի նորոգման. հռովմէական բանաստեղծները (Վիրգիլիոս) ոգևորուած երգում էին «արևելքի հերոսին», որ աշխարհիս համար փրկութիւն պիտի բերէր: Այսպէս՝ ոչ թէ միայն հրէութեան մթնոլորտում, այլև հեթանոսութեան մէջ Փրկչի համար ճանապարհ էր պատրաստուած և Փրկչի գալստեան կարօտն այն ժամանակուայ ամբողջ աշխարհի մէջ վերին աստիճանի էր հասած:

Բայց հեթանոսութիւնը՝ բացի մինչև այժմ նկարագրածից, ուրիշ խնդիր ևս ունէր կատարելու—նա պիտի միջոց և ճանապարհ որոնէր, որի միջնորդութեամբ նոր կրօնը, որ հրէութեան գոգումն էր ծնունդ առել, որպէս համաշխարհային կրօն երկրիս բոլոր կողմերում տարածուէր: Հռովմէական անողոք, մանրող-փշրող իշխանութիւնը Աստծու ձեռքը որպէս գործիք պիտի ծառայէր՝ աւետարանի տարածման ուղին հարթելու: Ուստի հռովմէական ինքնակալութիւնը անխնայ կերպով պիտի ստիպէր փոքր պետութիւններին՝ մինը միւսի ետևից հռովմէական դաւազանի ներքոյ միանալու մի լեզու ընդունելու (յունական), որ թէ հիւսիսում և թէ հարաւում, արևմուտքում և թէ արևելքում հասկանալի լինէր, ամենին մի օրինաց (հռվմէական) ներքոյ ստորադրելու: Այս բոլորով քրիստոնէութեան համար դուռը պիտի բաց անէր, որ իբրև մի արշալոյս,



նոր ժամանակի համար ամբողջ երկրագնդի վրայ պիտի ճառագայթէր: Այսպէս ամեն ինչ պատրաստուած էր—թէ հեթանոսութեան, թէ հրէութեան, թէ Իսրայէլի և թէ Հռովմի մէջ:

### 8. «ԵՒ ԵՂԵՒ ԼՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ»

Այսինքն մարդու ժամանակի: Ամբողջ մարդկութեան սերունդը հասունացել էր դատուելու կամ ազատուելու՝ կամ այսպէս, կամ այնպէս: Յանցանքը վարը, շնորհը վերը: Ժամանակը լրացել էր, այսինքն Աստծու ժամանակը, Քրիստոսից հազարաւոր տարիներ առաջ Աստուած թոյլ էր տուել ազգերին իրանց սեպհական ճանապարհով գնալու և հէնց դրանով էլ դաստիարակել, մեծացրել էր ըմբռնելու փրկութիւնը՝ ի յաւիտենից հետէ վճռուած, ի սկզբանէ մարդուն յայտնած՝ Յիսուս Քրիստոսի մէջ յայտնուած փրկութիւնը: Աստուածային աշխարհադաստիարակութիւնը երկար ճանապարհով, շատ ընդարձակ շրջանով հասաւ իւր նպատակին և ամեն ուրեք Փրկչի կարօտը հետզհետէ զգալի եղաւ: Երբ Իսրայէլի ժողովուրդը Հռովմի անողոք լծի տակ ատելով ատում էր իւր նեղիչին և կատաղի վրէժխնդրութեամբ սպասում էր այն օրուան,[a] թէ երբ պիտի գայ Մեսիան և հեթնոսներին արտաքսէ մայր երկրից. երբ այս ոխակալութեան հանդէպ Հռոմի իշխանութիւնը բռնակալական նոր նախաբաններ էր մտադրւում գործադրել՝ չնայած հրէից ազգի յամառ բնաւորութեան՝ ոչ թէ միայն ընկճելու, այլև ընդ միշտ կործանելու. երբ երկու կողմից էլ ատելութիւնը և յանցանքն այն աստիճան զօրացել էր, որ սպառնում էր ամեն ինչ կործանել և մանրել. երբ աշխարհիս հին տէրութիւնները յանցանքի մէջ նեխել, փտել էին, կործանման երկիւղ էին ազդում և զէնքերի շառաչիւնով դէպի յաւիտենական խաւարն ուղևորւում—այն ժամանակ Բեթղեհէմի խաղաղ մսրի մէջ ծագեց աշխարհիս լոյսը: Յիսուս Քրիստոս երևեցաւ: Մի նոր ժամանակ է սկսւում: Ինչ որ մի անգամ Դանիէլը (բ. 44) մարգարէացաւ, այժմ կատարւում է—«Եւ յաւուրս թագաւորացն այնոցիկ յարուսցէ Աստուած երկնից թագաւորութիւն՝ որ յաւիտեանս ոչ եղծանիցի. եւ թագաւորութիւն նորա ազգի այլում ոչ մնասցէ, մանրեսցէ եւ հոսեսցէ զամենայն թագաւորութիւն եւ ինքն կացցէ յաւիտեանս»:

[a] Կարդալ Եսայիա կ. 1—5, և 20—22. «Լուսաւորեաց, լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս....»:

## Բ. ԼՐՈՒՄՆ

Երբ նախապատրաստութեան ժամանակը լրացաւ, Աստուած ուղարկեց իւր որդուն: Թէ նա երկրիս վրայ ինչ պիտի անէր, այդ նրա անունն է ցոյց տալիս: Յիսուս անունը տուեց նրան (Մտթ. ա. 21.) հրեշտակի բերանով: Եթէ այս անունը հրէից մէջ այն ժամանակ դեռ ևս սովորական չէր (Թ. ա. Կղս. դ. 11.), այնուամենայնիւ Փրկչի անձնաւորութիւնը շատ գեղեցիկ կերպով որոշւում է դրանով, որովհետև Յիսուս նշանակում է օգնող (օգնութիւն Աստուծոյ) ազատիչ, փրկիչ: Վերջին նշանակութիւնը բնորոշ է, որովհետև Յիսուսը՝ Փրկիչը փրկում, բժշկում էր ոչ թէ միայն մարմինը, մարմնականը, այլ՝ ամենից առաջ հոգեկան հիւանդութիւնները. մեղաց հիւանդութիւնը և յանցանքից բղխած հոգւոյ թշուառութիւնները: Նա Փրկիչ է բառիս բուն նշանակութեամբ: Դրա համար էլ սուրբ գիրքն ասում է. «Չիք այլով իւիք փրկութիւն» (այսինքն ուրիշ Մեսիա չի գայ, ուրիշ ոչ ոք չի կարող երջանիկ դարձնել) (Գործք առ. դ. 12.): Քրիստոս անունը տիրոջ կոչման բնորոշ գծագրութիւնն է և սպասելիք Մեսիայի՝ Օծեալի տիտղոսն է: Իբրև Քրիստոս յայտնի է Նա իւր աշակերտներին (Մտթ. ժզ. 13...), դատաւորների առաջ (Մտթ. իզ. 64.): Պաշտօնի գլուխ անցնելիս իսրայէլի մարգարէների և թագաւորների նման սուրբ իւղով չօծուեց՝ այլ Աստուծոյ հոգւով—Գործք առք. ժ. 38. «զՅիսուս, որ ի Նազարէթէ, զոր օծն Աստուած Հոգւով սրբով և զօրութեամբ»: Այս բանին վկայ է ամենից առաջ Նրա կեանքը:

### 1. ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ

Երբ մի անգամ Փիլիպպոսը Նաթանայէլին գտաւ և ուրախ-ուրախ յայտնեց նրան ասելով. «Գտաք զՅիսուս, զորդի Յովսէփայ ի Նազարեթէ» (Յովհ. ա. 45), այն ժամանակ Նաթանայէլը կասկածելով հարցրեց. «Ի Նազարեթէ մարթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել»: Փիլիպպոսը պատասխանեց. «Ե՛կ եւ տես»: Այս միևնոյնը այսօր մենք ևս ամենին կարող ենք ասել, որոնք կասկածում են Քրիստոսի մասին—Յիսուսի կեանքը կարող ենք այդպիսիներին ցոյց տալ և ասել. «Ահա, այստեղ է, արի՛ և տե՛ս»:

Ե՛կ և տե՛ս, ով խղճալի մարդ, որ հռովմայեցւոց Օգոստոս կայսեր իշխանութեան 30-դ տարում, հրէից Հերովդէս թագաւորի օրե-



րում խաղաղ անյայտութեան մէջ, հեռի օրուան աղմուկներից՝ Բեթղեհէմի մսուրում ծնաւ: Մութը գիշեր էր, երբ Յովսէփը և Մարիամը, երկուսն էլ Դաւիթ թագաւորի ցեղից, բարեպաշտութիւնով հարուստ, իսկ ունեցուածքով աղքատ, այս առաջին որդու ծննդեան պատճառով ուրախանում էին: Ինչպէս որ դուրսը խաւարը պատել էր երկիրը, այնպէս էլ նոյն խաւարը ընդգրկել էր բոլոր ազգերի միտքն ու հոգին: Ոչ ոք չգիտէր, թէ փրկիչ է երևացել. միայն Բեթղեհէմի աղքատ հովիւներին, որոնք գիշերով իրանց հօտերն էին արածացնում, աւետարանը քարոզուեց: Առաջին անգամ նրանց յայտնուեց Փրկչի աշխարհ գալը և նրանց ականջին հնչեց մխիթարական աւետիքը. «Մի՛ երկնչիք.... զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ տէր ի քաղաքի Դաւթի» (Ղուկ. բ. 10. 11.): Մրափող աշխարհի խաղաղ մարգագետինների վրայ հնչում է յաւիտեան գեղեցիկ օրօրոցի երգը՝ ծննդեան առաջին տօնին—«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. բ. 14.):

Ե՛կ և տե՛ս, թէ բարեպաշտ մայրական սէրն ինչպէս 40-րդ օրը մանկանը տաճար է տանում և Աստծուն նուիրում և թէ ծերունի Սիմէօնը և Աննան իրանց ուրախութիւնը ի՛նչպէս են յայտնում հետևեալ փառաբանական երգով. «Արդ՝ արձակեա զծառայս քո տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո» (Ղուկ. բ. 29....): Դեռ այն ժամանակ մօրն ասուեց, որ նրա սիրտը սուր պիտի անցնի և նորա որդին շատերի գլորման և կանգման պատճառ պիտի դառնայ (Ղուկ. բ. 34. 35), որ Յիսուս շատ վշտերի միջնորդութեամբ փառաւորութեան պիտի հասնի: Վիշտը շուտով եկաւ: Դեռ նրա մանկական հորիզոնի վրայ մռայլ ամպեր երևացին: Ոչ միայն կեանքի կարիքը, հոգսը, այլև մահուան վտանգը ճօճում էր նրա գլխին: Սակայն հայրը հսկում էր: Արևելքի մոգերի բերած ընծաներով (Մտթ, բ. 1—12) մանկան կարիքն ապահովուեց, իսկ Հերովդէսի մահալից սրից ազատուելու համար՝ Եգիպտոս փախաւ (Մտթ. բ. 13—15): Սուրբ ընտանիքն այնտեղ մնաց մինչև Հերովդէսի մահը, որից ետոյ միայն հայրենի Նազարէթ քաղաքը վերադարձաւ: Յիսուս այստեղ աճում և զօրանում էր: Նրա մանկութեան մասին շատ քիչ բան գիտենք: Այս խաւարի մէջ երկու ճառագայթ միայն լուսաւորում է: Նախ՝ տասներկու տարեկան բարեպաշտ մանկան տաճարում արտասանած խօսքերը, թէ «Ո՞չ գիտէիք, եթէ ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել» (Ղուկ. բ. 48) և երկրորդ՝

այն համառօտ տեղեկութիւնը նրա մանկութեան վերաբերութեամբ, թէ. «Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ, եւ շնորհօք յԱստուծոյ եւ ի մարդկանէ» (Ղուկ. բ. 52): «Հայր» առաջին խօսքըն է, որ մենք լսում ենք Նրա բերանից. «Հայր» վերջին խօսքն եղաւ, որ լսուեց Նրա բերանից (Ղուկ. իգ. 46):

Տասներկու տարեկան Յիսուս մանկան վրայ տուած տեղեկութիւնից յետոյ՝ աւետարանիչները յանկարծ լռում են: Դրա համար եւ մեզ անյայտ է, թէ 12—30 տարեկան հասակը ինչեր են պատահել: Գալիլիայի պարզ երկնքի տակ և բազմամարդ Նազարէթի մի փոքրիկ անկիւնում ապրում էր Նա: Ճանապարհորդների նկարագրելով, Նազարէթը գտանւում է մի ձորակի մէջ և աստիճանաբար տարածւում է լերան զառիվերում, որի գագաթից Նայողի աչքին պատկերանում են կանաչ մարգագետիններ. այս բարձրութեան ստորոտին միանում է Կարմելոս լերան շղթան, իսկ ետևից բարձրանում է Հերմոնի գլուխը, որ ծածկուած է յաւիտենական ձիւնով: Եթէ հայեացքդ դարձնես միւս կողմը, կտեսնես՝ Փիւնիկէն, որից դէնը Միջերկրական ծովի կապոյտ ջրերն են: Կենդանի բնութիւնը, գեղեցիկ լեռնային հովիտները, կանաչ դաշտերը, արգաւանդ արտերը, դպրոցական (սինագոգ) կեանքը աստուածային ձիրքերով զարդարուած մանկան հոգւոյ զարգացման վրայ պակաս տպաւորութիւն չէին գործի: Աղքատ ընտանեկան, սակայն պարզ յարաբերութիւնները, բարեպաշտ մօր սէրը և Մեսիայի գալստեան տենչով ոգևորուած ազգի որդի լինելը անշուշտ իրանց տպաւորութեան հետքը պիտի դրոշմէին Նրա մատաղ հոգու մէջ: Թէև այդ այդպէս է, բայց և այնպէս ստոյգ ոչինչ յայտնի չէ, այդ բոլոր ապացուցութիւնները և անմեկնելի բացատրութիւնները երևակայութեան պտուղներ են: Աւետարանիչների հաղորդածից մի բան միայն ճիշտ գիտենք, որ Յիսուս խաղաղ և լռելայն աճում և զօրանում էր ընտանեկան յարկի տակ, այնպէս որ Կանայացի (երեք ժամ հեռի Նազարէթից դէպի հիւսիս արևմուտք) Նաթանայէլը Նրա մասին ոչինչ չգիտէր և դրա համար էլ չճանաչեց Նրան (Յովհ. ա. 45. 46):

Երեսնամեայ հասակում Յիսուս առաջին անգամ յայտնուեց: Քարոզիչ Յովհաննէսի մօտ՝ Յորդանանի ափերում երևեցաւ Նա և խնդրեց, որ մկրտէ իրան՝ իւր ծանր պաշտօնի համար: Յովհաննէսն սկզբում մերժեց Նրան Յորդանանի սուրբ ալիքների մէջ մկրտելու, որի մասին Նա ասել էր—«Արժանի չեմ Նրա կօշիկների թելերը բա-



նալու»: Ազնիւ համեստութեամբ մերժեց Նրան Յովհաննէսն ասելով. «Ինձ պիտոյ է լքէն մկրտիլ եւ դու առ իս գաս» (Մատթ. գ. 14...): Բայց Յիսուս պատասխանեց. «Թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն», այսինքն մենք պիտի կատարենք այն ամենը՝ ինչ որ արդարացի է և ինչ որ կատարուելու է: Այնուհետև թոյլ տուաւ Նրան: Եւ երբ Յիսուս, որ կարիք չունէր մեղքեր լուանալու, աստուածային օծումն ստացաւ, շուտով ջրից դուրս եկաւ և գնաց (որպէս հօր սիրելի որդի, որին Նա հաւանել էր (Մատթ. գ. 17.) անապատ՝ հոգւով զօրանալու և յանձն առած ծանր պաշտօնը վարելու: Այնտեղ էր, որ առաջին անգամ փորձութեան մտքերը մօտեցան Նրան (Ղուկ. դ. 1....): Արտաքին (աշխարհային) բարիքներով, հրաշք գործելով (պատուասիրութիւն), երկրային մեսիական թագաւորութեամբ (իշխելու, տիրելու ցանկութիւն) փորձեց փորձիչը՝ աստուածացած սիրտը իւր նպատակից շեղելու: Բայց Յիսուս, որ վճռած ունէր աստուածային թագաւորութեան բարիքներ ձեռք բերել, մերժեց փորձչին, որ երեք անգամ դիմեց Նրան և երեք անգամ էլ նոյն պատասխանն ստացաւ, թէ «Գրեալ է», մինչև որ փորձիչը աստուածային խօսքի զօրութիւնից յաղթուեց և հեռացաւ: Յիսուս փորձութեան փորձից յաջող դուրս եկաւ, «եւ ահա հրեշտակք մատեան եւ պաշտէին զնա» (Մատթ. դ. 11.):

Պատերազմից յաղթող դուրս գալուց յետոյ գնաց իւր գործն սկսելու: Նա առաջին անգամ որպէս ուսուցիչ երևան եկաւ: Ի՜նչ հրաշալի էին Նրա արտասանած խօսքերը, ի՜նչ զօրաւոր էին, նոքա նման չէին դպիրների խօսքերին: «Դեռ ոչ ոք այդպէս չէ խօսել», ասում էին ժամանակակիցները: Պարզ և անպաճոյճ խօսքերով, խորիմաստ զրոյցներով, վսեմ քարոզներով և աննման առակներով յայտնում էր Նա ամենուրեք, ուր առիթ էր գտնում—այն՝ ինչ որ դեռ ոչ ոքի մտքին չէր եկել (օրինակներ): Ամենից առաջ քարոզեց հոգւով աղքատ ժողովրդին և ոչ մեծամիտ գիտնականներին, (Մատթ. ե. 3.): Իւր տասներկու առաքեալներին ժողովրդից ընտրեց, որոնք Նրա օգնականները պիտի լինէին և Նրա վարդապետութիւնը ընդ ծով և ընդ ցամաք պիտի տարածէին: Առաջ երկու զոյգ եղբայրներին ընտրեց—այն է 1. Պետրոսին և 2. Անդրէասին, 3, Յակովբոսին և 4. Յովհաննէսին. յետոյ՝ 5. Փիլիպպոսին, 6. Բարդուղիմէոսին, (Նաթանայէլ) 7. Թովմասին, 8. Մատթէոսին, 9. Յակովբոսին (Ալփեայ՝ որոշելու համար Զեբեթիայի որդի Յակովբոսից) 10. Յուդա (Ղէբէոս

կամ Թադէոս անուանեալ) 11. Սիմէօն (Նախանձայոյզ) 12. Յուդա իսկարիովտացի (Կարիովտ քաղաքից՝ տ. Մտթ. դ, 18 . . . ժ. 2—4.)։ Այս տասներկուսին Յիսուս ոչ թէ միայն սիրալիր ընդունելութիւն, այլև խորին բարոյական հաւաստիութեամբ՝ ցոյց է տալիս նրանց առանձնած պաշտօնի ծանրութիւնը. տալիս է նրանց վարմանց չափ և կանոն, այնպէս որ զարմանալ կարելի է, թէ ինչպէս ճանաչել գիտէ մարդկային սրտի խորքը։ (Մտթ. ժ. ամբողջովին կարդալ ուշադրութեամբ)։ Ինչին որ մարդիկ սովորաբար նշանակութիւն են տալիս, այն է հարստութիւն, բարձր դիրք, գիտութիւն . . ., Յիսուս այդ բաներին վրայ ուշք չէր դարձնում—իւր աշակերտներից պահանջում է մաքուր, սուրբ սիրտ և կատարեալ վճռականութիւն երկրիս վրայ Աստծու արքայութիւնը հիմնելու։ Թէ այն աղքատ և անուս առաքեալները համապատասխան էին իրանց կոչման՝ թէ ոչ, այդ ցոյց է տալիս մեզ Մատթէոս աւետարանչի հաղորդածը. թէ ‹նոցա թողեալ վաղվաղակի զնաւն եւ զհայր իւրեանց գնացին զհետ նորա› (Մտթ. դ. 22.)։

Այս տասներկուսի հետ շրջում է Յիսուս Քանանացւոց երկրում։ Իւր հայրենի Նազարէթ քաղաքում առաջին անգամ երևեցաւ որպէս աւետող Աստծու թագաւորութեան և այնտեղի դպրոցում քարոզեց Եսայի մարգարէի կա. 1 . . . . . (կարդալ—Ղուկ. դ. 16—30) մասին։ Շնորհալից խօսքեր էին, որ դուրս էին գալիս նրա բերանից։ ‹Եւ ամենեցուն, որ ժողովրդեանն էին անդ, ի նա հայէին› և զարմանում էին նրա ճարտարախօսութեան, նրա հոգու զօրութեան վրայ։ Բայց այն հարցը, թէ ‹Ո՞չ սա է հիւսանն որդի, ո՛չ մայր սորա կոչի Մարիամ› (Մտթ. ժգ. 55.) բերնէ բերան էր անցնում։ Երբ ճշմարտութիւնը, որ քչերն են սիրով ընդունում, իւր համաքաղաքացի Նազարէթցիների երեսին, ասաց, բարկութեամբ լցուեցան և քաղաքից դուրս արին։ Ինչ որ նա իւր քարոզի մէջ արդէն վաղօրօք ասել էր, կատարուեց—‹թէ մարգարէն իւր հայրենիքում պատիւ չունի›։ Այս ամենի հանդէպ Քրիստոս ոխ չունեցաւ սրտում։ Առանց իւր նախագիծը խանգարելու՝ հեռացաւ Նազարէթից և գնաց Գեննեսարեթայ ծովակի կողմը, որի ափին հիւրասէր Կափառնայումի շրջակայքը հարուստ էր բազմաթիւ քաղաքներով և գիւղերով—կատարեալ դրախտ—դրա համար ես չպիտի զարմանալ, որ Փրկիչն այդ քաղաքը որպէս կենդրոն ընտրեց Գալիլիական գործնէութեան համար։ Այստեղ կենում էին նաև շատ հեթանոսներ, քաղաքը վաճառականական կենդրոն էր (Մտթ. դ. 13. ժա. 23. 24.)։ Այստեղ հասարակ դասակարգի մէջ մեծ ընդունելութիւն գտաւ—ամենքն էլ ուշադրութեամբ և լարուած լսում էին նրա քարոզները՝ երբ նա իջնում էր խաղաղ, կապուտակ ծովի ափը կամ բարձրանում էր լերան կատարը և խօսում նրանց սրտի հետ համառօտ կերպով։ Սիրուն առակներով բացատրում էր իւր ունկնդիրներին Աստծու արքայութեան էութիւնը՝ նրանց սրտին և մտքին դիւրըմբռնելի ոճով։ Մեռեալ նախադասութիւնները չէին նիւթ նրա քարոզների. նա խօսում էր չարունակ կենդանի սրտի կրօնից, Աստծու յաւիտենական օրէնքներից, որոնք մարդուս խղճի մէջ են գրած—ահա այսպիսի հոգեկան կերակուրներ էր դնում նրանց առաջ։ Նրա քարոզները գարնան անձրևի նման ծարաւ երկրի մէջ էին ծծւում։ Փարիսեցիները երկար բարակ մտածում, մշակում էին իրանց խօսածները, այն ինչ Յիսուս ի խորոց սրտի խօսում էր այն, ինչ որ րոպէն պահանջում էր։ Հէնց այդ խորը կրօնական ոգին էր այն կենդանի ջրհորը, որի անհատ ակը երբէք չի չորանում։ Նրա քարոզներն այնքան խորն են, որ ինչքան էլ նայես, այնքան խորանում են, բայց միւս կողմից այնքան պարզ, որ ամենին էլ ըմբռնելի են։



Ինչպէս որ փրկիչը Կափառնայումը իւր գործունէութեան կենդրոնատեղին էր դարձրել, այսպէս և նոյն քաղաքը ճ ա ն ա պ ա ր հ ո ր դ ո ւ թ ե ա ն միջնատեղի էր ընտրել։ Յաճախ դառնում էր այս խաղաղ և կապուտակ ծովակին, ուր նա իւր սրտի մարդոց հետ՝ իւր սակաւամեայ երկրաւոր կեանքն է անցրել։ Իւր ճանապարհորդութեանց ժամանակ ոչ մի առիթ չէր փախցնում աւետարանը քարոզելու։ Թէ Երուսաղէմի տաճարում և թէ բնութեան մայր եկեղեցում, ծովի վրայ, թէ մասնաւոր տներում, ուր հրաւիրւում էր. հրապարակներում, թէ փողոցներում, հասարակաց ժողովներում, ինչպէս և սիրելեաց խօսակցութեան մէջ—ամենուրեք և ամեն ժամանակ ոգեւորուած քարոզում էր Աստծու արքայութիւնը։ Մարդկային ոչ մի գովասանք չէր սիրում (Յովհ. ե. 41.). այս աշխարհի փառք և պատուից հրաժարւում էր (Յովհ. զ. 15.)։ Ծանր րոպէների ժամանակ ևս չէր մոռանում, չէր հոգնում, մարդկային տկարութեան օգնելու։ Նրա բերանից չէ դուրս եկել, թէ յոգնած եմ. ուր էլ կարիք եղել է, օգնել է խեղճերին, աղքատներին և սիրով բացատրել է երկնից արքայութեան գաղտնիքները։ Նրա բերանից ոչ մի սխալ և սուտ խօսք չէ լսուել։ Մարդոց սխալ և կոպիտ վարմանց նա միշտ հեզ և քաղցր

պատասխաններ է տուել: Ներող և համբերող էր այն աստիճան, որ մեր զարմանքն է շարժում: Շատ գիտնականներ նեղանում են, երբ իրանց աշակերտները չեն հասկանում իրանց. հայրերը սրտնեղում են, երբ որդիքն իրանց չեն ըմբռնում—բայց ինչ համեմատութիւն փրկչի և մարդոց վարմանց միջև:

Աստծու արքայութեան աւետարանը քարոզեց Յիսուս մինչև իւր հայրենի երկրի սահմանները (Մտթ. ժե. 21.): Սահմանից դէնը ոտք չդրաւ: Այդ թողեց իւր աշակերտներին կատարելու, որոց Նա պարզ ասել էր. «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մտթ. իը. 19.):

Ուր էլ փրկիչը քարոզել է, ուր էլ եղել է, ամեն ուրեք կեանք է վարել ըստ իւր վարդապետութեան: Յովհաննէսի նման անմարդաբնակ անապատը չգնաց. նա չէր սպասում, որ ժողովուրդը իւր մօտ գայ, այլ ինքն էր գնում նոցա մօտ. որոնում էր տկարներին, վշտացեալներին և օգնում էր ամենին հանդիստ հոգւով, առանց ստիպմունքի: «Աղուէսուց որջք գոն, եւ թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր» (Մտթ. ը. 20.): Բայց չնայելով իւր աղքատութեան՝ ա մ ե ն ի ն էլ հարստացնում էր (II. Թ. առ Կրնթ. ը. 9.): Նա արհամարհուած էր: Այն աստիճան խոնարհ էր, որ ինքը իւր ոտով գնում էր ծառաների հասարակութեան մէջ: Բայց իւր խոնարհութիւնով ամենամեծն էր, որի նմանը դեռ երկրիս վրայ չէ եղել: Ոչինչ գեղեցիկ գովասանք չկայ՝ քան այն, որ սուրբ գիրքն է տալիս. «Որ շրջեցաւ բարի առնել՝ եւ բժշկել զամենայն» (Գործք առ. ժ. 38.): Այլք ևս շրջում են, բայց չեն բժշկում, կամ՝ թէև բարի առնում են, բայց իրանց սիրոյ ապացոյցը սահմանափակում են շատ նեղ շրջանակի մէջ: Սակայն որքան տարբեր է փրկչի վարմունքը: Նրա սիրոյ առաջ ոչնչանում են մարդոց դիրքը, աստիճանը, կրօնը, ազգը և հասակը: Մ ա ն ու կ ն ե ր ի ն գիրկն առաւ, գըրկեց և համբուրեց (Մրկ. ժ. 13...). Թէ ինչպէս սիրում էր հ ա ս ա կ ա ւ ո ր ն ե ր ի ն, դրա համար Նրա ամբողջ կեանքը վկայ կարելի է կոչել: Արտասուաթոր աչքերը ցամաքեցնել, վշտերը խաղաղել, բեկեալ սրտերը բժշկել—ահա թէ ինչ էր Նրա սրբազան կոչումը, Նրա երանական ուրախութիւնը: Իւրեան այսպիսի ուրախութիւն պատճառելուց՝ երբէք չյոգնեց: Առաւօտեան վաղ՝ արևի ծագման հետ զարթնում էր և գնում էր քաղաքները քարոզելու (Մրկ. ա. 35—38). Կէս օրուան շոգի ժամանակ Սամարացի կնոջ ի գիտութիւն ճշմար-



տութեան դարձրեց (Յովհ. դ. 6.), իսկ երեկոյեան մթանը՝ ուսանելու կարօտ Նիկոդիմոսի հետ էր խօսում (Յովհ. գ. 2.): Արտաքոյ կարգի և զարմացք պատճառող գործերը, որոնց մենք հրաշք անունն ենք տալիս, ոչ այլ ինչ են, բայց եթէ Նրա գթասրտութեան գործերը, Նրա սիրոյ լուսափայլ նշանները: Յիսուս այդ հրաշքները չէր գործադրում զարմացք պատճառելու և փառաւորուելու համար (Մտթ. ժբ. 38. Ղուկ. ժա. 29. 30. Յովհ. դ. 48.), այլ՝ մարդկային գթասրտութիւնից ստիպուած: Երբ մարմնաւոր հիւանդներին բժշկում էր (որոնց մասին ժողովուրդը համոզուած էր, թէ այդ հիւանդութիւնները Աստծու կողմից որպէս պատիժ տրուած է), միշտ ծանօթանում էր հիւանդի հոգեկան դրութեան հետ, Նրա մէջ հաւատ էր զարթեցնում դէպի Աստծու սէրը և ապա Աստծու անունով Նրա մեղքերին թողութիւն էր յայտնում: Սա մի գեղեցիկ օրինակ է Նրա համեստութեան, երբ նա հիւանդներին հետևեալ խօսքերով էր արձակում. «Ե՛րթ, հաւատք քո կեցուցին զքեզ» (Մրկ. ժ. 52.): Իւր սիրոյ զօրութիւնով բժշկում էր հիւանդներին՝ ըստ մեծի մասին հոգեպէս հիւանդներին (դիւահարներ). հիւանդի միտքն ու հոգին, երեւակայութիւնն ու կամքը դարձնում էր առ Աստուած և ամենուրեք գործում էր որպէս իսկական փ ր կ ի չ (Մտթ. դ. 24.): Կան մարդիկ, որոնք Յիսուսի գործած հրաշքներն, իբրև նշան Նրա վարդապետութեան ճշմարտութեան մի կողմն են դնում՝ ոչ թէ Նրա համար որ մեզ՝ Աստծուն հ ա ւ ա տ ա ց ո ղ ն ե ր ի ս այլ ևս անհրաժեշտ չէ, այլ Նրա համար, որովհետև Յիսուս ինքը իւր ժամանակակից հրաշքների հետ պատերազմում էր (Մտթ. ժբ. 38. Ղուկ. ժա. 29. 30. Յովհ. դ. 48.): Հրաշքների մասին ինչքան էլ տարբեր մտածելու լինին, այնուամենայնիւ մի կէտում ամենքն էլ համաձայն են—ամեն մի պատմութիւնից փրկչի սիրոյ և գթասրտութեան հոտն է բուրում և թէ Նրա ամբողջ կեանքը լի է սիրոյ հրաշալի գործերով: Ամենամեծ հրաշքն անշուշտ տէրն ինքն է, ինչպէս և Նրա վարդապետութեան տարածումն: Ուստի և իրաւամբ կարող էր նա Յովհաննիսի, որին Հերովդէս Անտիպասը բանտն էր ձգել, ուշադրութիւնը դարձնել իւր կատարած գթասրտութեան և սիրոյ վրայ՝ ասելով. «Կոյրք (մտաւոր) տեսանեն, կաղք գնան....» (Մտթ. ժա. 5. Ղուկ- է. 22.): Այս գթած, ողորմած, փրկող սէրն էր Նրա վարդապետութեան հիմքը, ինչպէս և Նրա կենաց: Ո՛չ մի գործ չէ կատարել, որ ծագած լինէր ինքնասիրութիւնից, շահասիրութիւնից և կամ այդ տեսակ անմաքուր

մտածողութիւնից—ամեն ժամանակ ևս սէրը նրա գործողութեանց շարժառիթն էր, մղիչն էր: Սիրուց դրդած նա բժշկում և օգնում էր. սիրուց շարժած համբերում և տանում էր վշտերը. սիրոյ համար էր ապրում և սիրոյ համար էլ մեռաւ: Նա Աստծու սէրն էր մարդկային կերպարանքով:

Չնայելով փրկչի այս անհուն սիրուն, այնուամենայնիւ աշխարհը իւր ատելութիւնը չմոռացաւ: Հրէաստանում այդ ժամանակ երեք խիստ սահմանափակ կուսակցութիւններ կային—փարիսեցիք, սադուկեցիք և եսսենացիք: Մենք առաջուց տեսանք, որ եսսենացիք փրկչին ոչ բարեկամ և ոչ թշնամի էին. իսկ փարիսեցիք և սադուկեցիք ոչ թէ միմեանց արիւնն էին խմում, այլ սրանք Տիրոջ դէմ մղած ատելութեան վերաբերմամբ մրցում էին իրար հետ: Դեռ շատ վաղ՝ այս երկու կուսակցութիւնները փրկչի ոխերիմներն էին: Նրանք նախանձով և ատելութեամբ լցուեցան նրա դէմ: Քահանաները երկիւղ էին կրում, որ զոհաբերութեան և այլ աստուածպաշտական ծիսակատարութեանց վերանալով՝ իրանց արդիւնքը կպակսի, գուցէ իրանց գոյութիւնը վտանգի էլ ենթարկուի: Դպիրները և օրինականները վիրաւորուած էին համարում իրանց, որովհետև փրկիչը նրանց արտաքին օրինակատարութեան և կեղծ սրբութեան դէմ՝ բարոյական զէնքի կատարելութեամբ էր պատերազմում և նրանցից ողորմած սէր էր պահանջում, որից բացէ ի բաց զուրկ էին օրէնքի մեկնիչները:

Առաջին վիճաբանութեան առիթը *շաբաթի* վերաբերութեամբ էր: Փարիսեցիներն այս օրէնքը տառացի էին կատարում, իսկ *էականը*՝ *ներքին* մասը մոռանում էին: Յիսուս նրանց հակառակն էր գործում այս հարցում: Նա շաբաթ օրում սիրոյ գործեր էր գործում և դրանով էլ շարժում էր տառերին կուրօրէն հաւատացող քահանաների ատելութիւնը (Մատթ. ժբ. 2—8): Դրան հետևեց *լուացման* օրէնքից անցնելը: Փարիսեցիները, որոնք իրանց սրտի ներքինը մաքուր չէին պահում, այս օրէնքի կատարմամբ կարծում էին, թէ հանդերձեալի երջանկութիւնը ձեռք բերած ունին: Յիսուս, որ ամենակարևորը՝ սրտի մաքրութիւնն էր համարում, այս կէտում ևս ախոյեան հանդիսացաւ նրանց տառականութեան դէմ (Մատթ. ժե. 1—20): Սրան աւելացաւ փրկչի *վարմունքը մաքսաւորների* և մեղաւորների հետ: Փարիսեցիները ատելով ատում էին այդ մարդոց (ինչու), այն ինչ Յիսուս ամեն տեսակ մեղաւորների ետևից



էր գնում, որպէսզի նրանց դէպի ապաշխարութիւն դարձնէ և փրկէ: Փարիսեցիները գաղափար չունէին փրկչի ողորմած սիրոյ և սուրբ զգացման մասին: Այնպէս էր պատահում երբեմն, որ Յիսուս մեկնութիւն էր տալիս մի բանի և սրանով մեծամիտ օրէնսգէտներին և մժղուկներ քամող փարիսեցիներին խորին ամօթի էր ենթարկում (Մատթ. թ. 10—19): Համեմատել փարիսեցու-մաքսաւորի (Ղուկ. ժը. 10—14) և անառակ որդու առակները (Ղուկ. ժե. 11—32):

Այս յարաբերութիւններից պարզ երևում է, որ փրկիչը փարիսեցիներին նախ՝ անյարմար, ատելի ոմն պիտի երևար: Սկզբում փորձ արին նրան իրանց կողմը ձգելու, իսկ երբ այս չյաջողեց, ըսկսեցին նրա վարկը վայր ձգել ժողովրդի առաջ և երբ այս միջոցով ևս իրանց նպատակին չհասան, որոշեցին ասպարիզից հեռացնել: Աւետարանիչները բաւական ապացոյցներ են տալիս մեզ այս բանի համար: Համաձայն նրանց պատմածին՝ փարիսեցիները Յիսուսին *իմաստակ և վիճաբանութիւն վերցնող* հարցեր են առաջարկում: Յիսուսի բժշկութեան (Ղուկ. ժդ.), հրաշագործութեանց (Մատթ. ժգ. 1—4) ժամանակ առիթ էին որոնում, *աշխատում էին* կործանել նրան: Բայց երբ իրանց խորամանկ միջոցները փրկչի աստուածային իմաստութեան առաջ խորտակուեցան, այնուհետև սկսեցին մեղադրել նրան, որպէս թէ *սատանայի* հետ դաշնակից է (Մատթ. ժբ. 24—30): Երբ Յիսուս յաջող հարուածներով ցոյց տուաւ իւր հակառակորդներին մեղադրանքների ունայն և անմիտ լինելը (համեմատել այլև Ղուկ. ժա. 39—54 և Մատթ. իգ.), այնուհետև նոր որոշում երևան հանեցին—Յիսուս պիտի մեռնի:

Նախագիծն արդէն կազմած էր: Փարիսեցիները յարմար առիթ էին սպասում իրանց զզուելի դիտաւորութիւնն ի կատար ածելու: Նրանք փնտրեցին այդ և գտան: Յիսուս գիտէր, թէ ինչ են ուզում իւր թշնամիները, բայց նա և այն գիտէր, որ ճշմարտութիւնը խորտակուել չի կարող և վերջ ի վերջոյ յաղթութիւնը Աստծու արքայութեան կողմը պիտի լինի: Դրա համար էլ, չնայելով հակառակորդների ատելութեան և կազմած նախագծին, առանց երկիւղ կրելու, առանց ուշանալու, Գալիլիայից Հրէաստան եկաւ և դիմեց ուղղակի դէպի իւր թշնամիների կենդրոնատեղին՝ Երուսաղէմ (Ղուկ. թ. 51. ժը. 31....): Արդարև փրկչի ներքինը լիքն էր տխուր մտածմունքներով, դրա համար էլ ճանապարհին զգուշացրեց իւր աշակերտներին, որ իրան ոչ միայն վիշտ և նեղութիւն է սպասում, այլև

մահ (Ղուկ. ժը. 31—33)։ Մահու մտածմունքները չէին կարող արգելք լինել Նրա քաջասրտութեան։ Երբ մօտենում էր Բեթփակէին և Բեթանիային, աշակերտներից երկուսին ուղարկեց կարևոր պատրաստութիւնը տեսնելու՝ Երուսաղէմ մտնելու համար (Մտթ. իա. 1....)։ Աշակերտները կատարեցին իրանց վարդապետի ցանկութիւնը և Նա շրջապատուած ժողովրդի խուռն բազմութեամբ՝ ովսաննաներով մըտաւ երկրի գլխաւոր քաղաքը՝ Թագաւորին վայել շուքով։ Ժողովուրդը արմաւենիների ճիւղերով ընդառաջեց Նրան, հանդերձները փըռում էր ճանապարհի վրայ և փառաբանում՝ ասելով. «Օրհնեա՜լ որ գայ յանուն տեառն» (Մտթ. իա. 9)։ Երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ և ժողովուրդը միաբերան ասում էր. «Սա է մարգարէն Յիսուս՝ որ ի Նազարէթէ Գալիլիացւոց» (Մտթ. իա. 11.)։ Փրկիչը, որ սովորութիւն չունէր ժողովրդի գովասանքներով յափըշտակուելու, ուղղակի տաճար գնաց։ Դեռ այնտեղից կարող էր ժողովրդի համար փրկութիւն գալ և Նա կամենում էր ազատել ինչ որ կարելի էր։ Աստծու տունը Նա գտաւ անարգ վիճակի մէջ։ Աղօթքի փոխարէն փրկիչը լսեց եզների բառաչը, ոչխարների բառաչիւնը և վաճառականների տուր և առի աղմուկն ու վէճը։ Սրբազան խաղաղութեան փոխարէն դրամների զրնկոցն էր լսւում։ Աստուածպաշտութիւնը դատարկ ծիսակատարութեան աստիճանի ստորացրած էր։ Փրկիչը լցուեց սրբազան բարկութիւնով։ Իւր ձեռքի և հոգու խարազանով արտաքսեց տաճարից բոլոր առևտուր անողներին, հատավաճառների և աղաւնեվաճառների սեղանները կործանեց՝ ասելով. «Գրեալ է՝ տունն իմ տուն աղօթից կոչեսցի, եւ դուք արարիք զդա այրս աւազակաց» (Մտթ. իա. 13.)։ Ժողովուրդն ապշել էր այսպիսի քաջասրտութեան համար, իսկ փարիսեցիներն ու դպիրները իրանց ատամներն էին կրճտացնում։ Յիսուս հեռացաւ նրանցից (Մտթ. իա. 17) և հետևեալ առաւօտ միայն դարձաւ տաճար։ Պատերազմն սկսուեց։ Յիսուս տաճարում ներկայանում էր որպէս ուսուցանող։ Այն ժամանակ քահանայապետները և ժողովրդի ծերերը տրտնջացին և ասացին. «Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ ետ քեզ իշխանութիւնդ զայդ» (Մտթ. իա. 23)։ Յիսուս փոխանակ պատասխան տալու, ինքը հարց առաջարկեց (Մտթ. իա. 24. 25)։ Այս կէտն առիթ եղաւ փրկչին իւր հակառակորդներին լաւ ճանապարհով առաջնորդելու՝ պատմելով Նրանց նախ՝ երկու որդկերանց (Մտթ. իա. 33—44), իսկ վերջը՝ Թագաւորազնի որդու հարսանիքի առակը (Մտթ.



իբ. 1—14)։ Փարիսեցիները գլխի ընկան, թէ ո՛վ է առակի մէջ եղած որդին, որ խօսքով և ոչ գործով պատուեց հօրը։ Նրանք հասկացան նոյնպէս թէ ո՛վքեր են մշակները, որոնք չքաշուեցին մինչև անգամ իրանց տիրոջ որդուն սպանելու։ Այն ևս հասկացան, որ հարսանիք հրաւիրուողներն ու հրաւէրը մերժողներն իրանք էին։ Նրանք այս բոլորը հասկացան, սակայն սրտները քարի նման ամուր մնաց։ Փոխանակ իրանց ուղղութեան վրայ մտածելու՝ խորհուրդ արին թէ ինչպէս Յիսուսին բանիւք որոգայթ դնեն՝ լինի դա բռնութեամբ, թէ խորամանկութեամբ, որպէսզի ասպարիզից հեռացնեն։

Փարիսեցիները միացան Յիսուսի ո խ ե ր ի մ թշնամի՝ սրտով հռովմայեցի Հերովդէսի հետ և չողոքորթական ձևով, քաղցր խօսքերով փրկչին դիմեցին՝ ներկայացնելով հռովմէական մի հատ հարկի դահեկան ու ասացին. «Հա՞րկ է տալ կայսեր հարկս՝ թէ՞ ոչ»։ Որոգայթը խելացի էր։ Եթէ Յիսուս ա յ ո՛ պատասխանէր, այն ժամանակ Նրան որպէս ժողովրդի ազատութեան թշնամի պիտի ներկայացնէին։ Եթէ ո՛ չ ասէր, կնշանակէ կայսեր թշնամի էր—ապստամբ։ Նրանց կարծիքով Յիսուս արդէն բռնուած էր։ Չնայելով որ դարանը խորամանկ ձևով էր լարուած, բայց փրկիչը փոխանակ ա յ ո կամ ո չ ի՝ մի այնպիսի պատասխան տուաւ, որ Նրանք կարմրելով՝ պիտի յետս կայէին (Մտթ. իբ- 16—22.)։ Եթէ փարիսեցիները եկեղեցու և տէրութեան մէջ եղած պայքարը հեռացնէին և փրկչի յորդորին հետևէին, թէ «տո՛ւք զկայսերն՝ կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ», այն ժամանակ հնարաւոր կլինէր խաղաղութիւնը։ Բայց Նրանք այդ չ է ի ն կ ա մ ե ն ո ւ մ։ Փարիսեցիներն առաջին յարձակումն արին և ամօթալից յետ մղուեցան։ Դրան հետևեց սադուկեցիների յարձակման փորձը։ Սրանք ծաղրական ձևով յարութեան խնդիրը մէջ բերին (Մտթ. իբ. 23—33.)։ Յիսուս այստեղ ևս իւր կտրուկ պատասխանով թշնամիներին կոր ի գլուխ թողեց, այնպէս որ նրանք ևս ստիպուած էին յաղթուած համարելու իրանց։ Մի ե ր ր ո ր դ փորձ ևս եղաւ։ Օրինականի մինը յառաջ եկաւ և սկսաւ ամենամեծ օրէնքի մասին վիճաբանել (Մտթ. իբ. 35 . . .)։ Փրկիչն այստեղ էլ ցոյց տուաւ իւր հոգւոյ խորին մտածողական կողմը, որի հանդէպ ոչինչ պատասխան չկար։ Եթէ Յիսուսի թշնամիները ճշմարտութիւնը սիրողներ լինէին, այժմ պիտի դարձ գային։ Բայց ի ցաւ սրտի, այս բանը տեղի չունեցաւ, որովհետև Նրանք ատում էին ճշմարտութիւնը։ Որքան իրանց հակառակորդ աստուածային ճշմարտախօսի արժանաւորութիւնները

ճանաչում էին, աւելի և աւելի էին կատաղում: Այս ատելութիւնը դէպի ճշմարտութիւնն էր, որ Յիսուս՝ հայհոյութիւնը ընդդէմ հոգւոյ է անուանում (Մատթ. ժբ. 31.), որ փրկչին առիթ տուաւ այլևս չպաշտպանուելու, այլ յարձակողական դիրք բռնելու և յայտնի վա՜յ, վա՜յ սըրտաշարժ ակնարկութիւններն անելու (կարդալ ու շ ա դ ր ու թ ե ա մ բ Մատթ. իգ. 1—39.):

Յիսուս վերջին խօսքն ասաց և թողեց տաճարը: Նա հեռացաւ քաղաքից և գնաց Բեթանիա իւր բարեկամների մօտ: Ձիթենեաց լերան կատարին հասնելով՝ կանգ առաւ. երեսը դէպի քաղաքը դարձրեց, որտեղից երևում էր հրաշակերտ տաճարը, սպիտակ տները և կանաչ պարտէզները, որոնք դիւթիչ ազդեցութիւն էին անում Նայողի վրայ: Քաղաքի և Նրա բնակիչների ճակատագիրը կենդանի կերպով կանգնած էին Նրա հոգու առաջ: Աննկատելի վշտով լիքն էր Նրա սիրտը: Յիսուս արտասուեց: Աչերն արտասուքով լի խօսեց Նա և ասաց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, քանիցս կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք, եւ ոչ կ ա մ ե ց ա ր ո ւ ք» (Ղուկ. ժգ. 34.): «Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո, բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց: Զի եկեսցեն աւուրք ի վերայ քո, եւ պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ, եւ պաշարեսցեն զքեզ, եւ նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց, եւ յատակեսցեն զքեզ, եւ զորդիս քո ի քեզ, եւ ոչ թողուցուն քար ի քարի վերայ յամենայնի՝ ի քեզ. փոխանակ զի ոչ ծաներ զժամանակ այցելութեան քո» (Ղուկ. ժթ. 42—44.):

Մինչև այժմ կատարուած գործերից փարիսեցիները պարզ նկատեցին: որ իրանց կազմած կեղծ և օրէնքի (և ոչ սիրոյ) կրօնը (ծիսակատարութիւն, զոհ, կանոններ շաբաթը պահելու, կերակրի և լուացման վերաբերեալ) ի հիմանէ տապալւում է, ևս աւելի ոյժ տուին կազմած նախագծին և պնդեցին, որ նա պիտի կատարուի – Յիսուս պէտք է մ ե ռ ն ի: Աննա քահանայապետի աներձագ Կայիափայի խօսքը, թէ «լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեան եւ մի՛ ամենայն ազգս կորիցէ» (Յովհ. ժա. 50.), Յիսուսի բոլոր թշնամիների սրտից բղխած խօսք էր: Վճռի առարկայ մնաց, թէ ո՞ւր և ե՞րբ սպանեն: Այն համակրութիւնը, որ Յիսուս վայելում էր ժողովրդի մէջ, կեղծիք համարեցին փարիսեցիները և առանց աղմուկ բարձրացնելու որոշեցին—«մի՛ ի տօնի աստ» (Մատթ. իզ. 5.): Բայց մի յաջող հանգամանք ստիպեց Նրանց Յիսուսի մահուան որոշումը վաղ ի



կատար ածել և Նրա նշանակութիւնը վայր ձգել ժողովրդի աչքում: Դա Յ ո ւ դ ա յ ի մ ա տ ն ո ւ թ ի ւ ն ն էր:

Զարմանալի իրողութիւն: Այն անձը որ փրկչի հետ տարիներով ապրել է, լսել է Նրա քարոզութիւնները, վայելել է Նրա սէրը . . . յանկարծ այնպիսի մի ապերախտութիւն է անում և այնպիսի ցաւ պատճառում փրկչին, որ Նրա ոխերիմ թշնամիները միայն ընդունակ էին այդ անելու: Թէև այդ այդպէս է, բայց ի ցաւ սրտի պիտի ասենք, որ դա իրողութիւն է, դառն ճշմարտութիւն է: Բայց ինչ էր արդեօք այն շարժառիթը, որ ստիպեց Յուդային այդպիսի մի մեծ յանցանք գործել, որի նմանը շատ քիչ է պատահել պատմութեան մէջ: —Այն բոլոր չարիքները, որոնք իրանց արմատը նիւթապաշտութեան մէջ են ունեցել, ոչ մինն այնպէս չէ լուսաբանել սուրբ գրքի խօսքը, թէ «արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն է» (I. Տիմթ. զ. 10.), ինչպէս ապերախտ աշակերտի վարմունքը: Յուդան գող էր և ծախուց արկղը Նրա մօտն էր (Յովհ. ժբ. 6.)—այս հանգամանքը փոքր պատճառ չեղաւ Նրա զզուելի արարքին: Այս խնդրին մի այլ հանգամանք ևս օժանդակ հանդիսացաւ—հրէից մէջ տարածուած կարծիքը, թէ Մեսիան պիտի գայ և Դաւթի թագաւորութիւնը վերականգնէ, ազատութեան դրօշակը նորից պիտի ծածանի Սիօնի բարձրութեան վրայ: Զնայելով որ Յիսուս երեք տարի շարունակ քարոզում էր, թէ ինքը սրտերի Մեսիա՝ թագաւոր է կամենում լինել և ոչ թէ լեռների և գետերի. չնայելով որ աշակերտները գրեթէ երեք տարի շարունակ լսել էին Նրան, բայց էլի չէին ըմբռնել Նրա ինչ տեսակ Մեսիա՝ թագաւոր լինելը—Նրանք ևս ժողովրդի նման մարմնաւորն էին հասկանում, սպասում էին որ Յիսուս հռովմայեցիներին կարտաքսէ Անտոնիոսի աշտարակից. իսրայէլի մարմնաւոր իշխանութիւնը կվերանորոգէ և իրանց էլ մեծամեծ պաշտօններ կտայ: Անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ, տարիներ, իսկ աշակերտները, ի մասնաւորի Յուդան, ոչինչ նշան չէ նկատում և ահա ապագայ պաշտօն ստանալու յոյսը, փառք, պատիւ, վայելք, հ ա ր ս տ ո ւ թ ի ւ ն ձեռք բերելու տենչանքը միւս կողմից, մղում են Նրան դէպի այդ միտքը—առիթ տալ փրկչին արտայայտելու, ցոյց տալու իւր աստուածային զօրութիւնը: Բայց որքան սխալ դուրս եկաւ Նրա հաշիւը:

Գործողութիւնն արդէն կատարուել էր, ետ առնելու հնար չըկար այլ ևս. արարքը իւր հետևանքն ունեցաւ, բայց ոչ այնպէս՝ ինչպէս մատնիչն էր սպասում: Մատնութեան համբոյրը տալիս ան-

գամ ինչ մտքեր ասես, որ չներկայացան Նրա հոգւոյ առաջ—
անձ հրաշքի հերոսը, նա խուսափելու միջոց չունի, անչուշտ ցոյց
կտայ իւր զօրութիւնը՝ հէնց որ Նրան ձեռք մխեն։ Երկնից լէգէօն-
ները Նրան օգնութեան կհասնեն. յաղթութեան չեփորի ձայնը Երու-
սաղէմի բնակիչներին գիշերուայ քնից կզարթեցնէ. խարայէլացի անուն
կրողները ցնծութեան ձայներով և ուրախութեան աղաղակներով կը
միանան Նրա հետ. փարիսեցիների բարձրագոյն ատեանը անհետ կը
կորչի. հռովմէական արծիւները կխոնարհին խարայէլի կորիճների
ոգեւորութեան առաջ և աստուածային յաղթողը կրազմի հայրենի
գահի վրայ՝ կհիմնէ իւր Թագաւորութիւնը և այս բոլոր երջանկու-
թեան առիթ տուողը ես՝ մատնիչս պիտի լինիմ։ Եւ իրօք, նա տես-
նում է զինուածների մի խումբ, բայց ոչ երևակայութեամբ, այլ՝
մարմնաւոր աչօք, իսկ Յիսուսին էլ դրանց մէջ՝ սակայն ոչ որպէս
յաղթական, այլ շղթայուած, գերի. ոչ որպէս Թագաւոր, որին ով-
սաննա է կոչում ազատուած ժողովուրդը, այլ՝ որպէս մի գառն,
որ դիմում է դէպի սպանդ։ Նրան տանում են դատելու—մահու ար-
ժանի են համարում։ «Ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա». Թող Նրա
արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի։ Ահա սոքա են այն ձայները,
որոնք գիշերուայ հեղեղի մռնչիւնի նման թափւում էին յուսախափ
մատնչի հոգու մէջ։ Խաւարի անդունդը իջնողի նման սարսուռ է
պատում Յուդային—զգում է իւր սխալը։ Նա չի կարողանում տա-
նել իւր վարմունքից ծագած եղեռնագործական ոճրագործութիւնը,
իւր խղճի կրծող խայթին դիմադրելու անկարող է։ Նա կամենում է
կանգնեցնել այս եղելութեան անիւը, որ ինքն էր շարժողութեան
մէջ ձգել. շտապում է փարիսեցիների մօտ—«մեղայ, զի մատնեցի
զարիւն արդար» (Մատթ. իէ. 4), բայց ինչ պատասխան է ստանում։
—Ծաղր. «Մեզ չէ փոյթ. դու գիտես» (Մատթ. իէ. 4.)։ Նոր է զգում
Յուդան, որ յանցանքով ծանրաբեռնուած երկիրը սուրբ է իւրեան և
իւր գործած յանցանքը կրելու—մատնիչը ինքնասպան է լինում։ Սա
Քրիստոսի մի աշակերտի տխուր և զարհուրելի պատմութիւնն է, որ
փորձութեան մի չնչով՝ յանկարծ կործանման անդունդն ընկաւ։ Սա
ամենիս համար մի գեղեցիկ և խ ր ա տ ա կ ա ն պատկեր պիտի լինի,
որ մենք երբէք յանցանքի հետ խաղ չանենք, միշտ զգոյշ լինինք և
երբէք մեր թուլութեամբ յանցանքին զոհ չդառնանք։ Մենք ամենքս
էլ կարիք ունինք այս առթիւ աղօթելու. «Եւ մի՛ տանիր զմեզ ի փոր-
ձութիւն»։



Այն րոպէին, երբ փարիսեցիները Յուդայի մատնութիւնով էին
ուրախանում (Նրանք վստահ կարող էին ժողովրդին յայտնել, որ իւր
աշակերտներն անգամ հաւատարիմ չմնային Նրան), երբ նրանք դի-
ւական զօրութեամբ իրանց վրէժխնդրութեան նախագիծն էին դարբ-
նում, ամրապնդում, Յիսուս վերջին անգամ իւր աշակերտների շըր-
ջանում ուրախանում էր։ Հաստատ համոզուած իւր մերձաւոր մա-
հուան մասին, բարեկամական խրատներ էր տալիս նրանց ապագայ
կոչման մասին—«Թագաւորք ա զ գ ա ց (երկրաւոր) տիրեն նոցա, եւ
որ իշխեն նոցա՝ բարերարք կոչին, այլ դուք ոչ այնպէս, այլ որ
մեծն է ի ձեզ, եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զսպա-
սաւորն» Ղուկ. իբ. 25.)։ Լուաց իւր աշակերտների ոտները՝ ի նշան
հեզութեան և ծառայական սիրոյ (Ղուկ. թ. 4 . . .)։ Նա յուզուած
էր. վերջին երեկոն էր, որ նա իւրայինների շրջանում անց էր կա-
ցնում։ Լցուած և վերացած այն մտքով, որ ճշմարտութեան համար
ամեն ինչ պիտի զոհէ և ս ի ր ո յ զօրութեամբ և եթ աշխարհին պի-
տի յաղթէ, ցոյց է տալիս մատնչին և ապա զատկական գառան սե-
ղանի վրայ (Մատթ. իզ. 26 . . . . Մրկ. ժդ. 22 . . . . Ղուկ. իբ. 19 . . .)
իւր աշակերտներին հաց և գինի բաշխելով, որպէս նշան իւր մարմ-
նոյ և արեան՝ հաստատում է հաղորդութեան սուրբ խորհուրդը—սի-
րոյ և խաղաղութեան սուրբ ընթրիքը։ «Քանիցս անգամ թէ ուտի-
ցէք զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմիցէք»
(I. Թ. ա. Կորնթ. ժա. 26)։ Այսպէս փրկիչը երկնային ճշմարտու-
թեամբ զեղուն խօսակցութիւնով իւր կեանքի վերջին ժամերն անց-
կացրեց իւրայինների շրջանում և վերջը բոլոր սատծները ամփոփեց
մի աղօթքի մէջ, որ ք ա հ ա ն ա յ ա պ ե տ ա կ ա ն է կոչում, որով-
հետև այդ աղօթքի մէջ նախ՝ իւր համար (Յովհ. ժէ. 1—8), ապա՝
իւր աշակերտների (Յովհ. ժէ. 9—19.) և վերջը՝ իւր ապագայ ժո-
ղովրդեան (հաւատացեալների) համար է աղօթում (Յովհ. ժէ. 20.
26.)։ Այս աղօթքն այնքան սրտեռանդն է, այնքան խորն զգացուած
և այնքան վսեմ, որ միտկը կարելի է համարել աւետարանական
պատմութեան մէջ։

Բայց դեռ ժամանակ կար ղեանն սպասող մահուանից ազա-
տուելու։ Սակայն, ինչպէս որ Յիսուս միշտ վկայել է ճշմարտութեան
համար, այսպէս էլ կամեցաւ մեռանել արդարութեան համար, վկայ-
ած ճշմարտութիւնը հաստատել, կնիքը դրոշմել։ Այս րոպէն փրկչի
էութեան ամենամեծն է—ցաւը և վիշտը գիտակցութեամբ տարաւ,

նա ազատ կամքով դէպի մահ դիմեց: Յիսուսի մահուամբ միայն կարողացանք հասկանալ, թէ ինչ բնաւորութեան տէր է եղել նա: «Զայս (քահանայապետական աղօթքը) իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրովնի, ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն եւ աշակերտքն իւր. (Յովհ. ժը. 1.): Զարհուրելի, քստմնելի ճանապարհ է այս վերջինը: Ըստ Մարկոսի ժդ. 27 . . . Յիսուս ճանապարհին ասաց իւր աշակերտներին. «Ամենեքին գայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի», իսկ Պետրոսին, մասնաւորապէս. «Ամէն ասեմ քեզ, թէ դու իսկ յայսմ գիշերի՝ մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս» (Մրկ. ժդ. 30.): Պետրոսը իւր սովորական կրակոտ բնաւորութեամբ պատասխանում է. «Եթէ մեռանիլ եւս հասանիցէ ընդ քեզ՝ զքեզ ո՛չ ուրացայց» (31): Այս և ուրիշ սրա նման խօսակցութեան ժամանակ փոքրիկ խումբը հասաւ Գեթսեմանի պարտէզը: Այստեղ Յիսուս վեր առաւ իւր հետ Պետրոսին, Յակովբոսին և Յովհաննէսին և սրանց հետ գնաց պարտիզի վերը և ասաց նրանց. «Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ, մնացէք աստ եւ արթուն կացէք» (34): Իսկ ինքը միայնակ հեռացաւ պարտիզի վերը—այնտեղ, ուր մի ժայռ էր, չոքեց և սկսաւ ջերմ կերպով աղօթել. «Աբբա Հա՛յր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցո՛ զբաժակս զայս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ՝ որպէս դու կամիս» (36): Երբ Յիսուս աղօթքից դարձաւ, աշակերտներին քնած գտաւ, ասաց Պետրոսին. «Ո՞չ կարացեր ժամ մի արթուն մնալ: Արթուն կացէք եւ աղօթս արարէք, զի մի մտջիք ի փորձութիւն: Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար» (38): Այսպէս նա երեք անգամ դարձաւ քարայրը և երեք անգամն էլ մանկական սրտով աղօթեց: Երբ աղօթքով զօրացաւ, եկաւ աշակերտների մօտ և ասաց. «Եկն ժամ, եւ ահա՛ մատնի որդի Մարդոյ ի ձեռս մեղաւորաց, ո՛ն արի՛ք գնասցուք աստի, զի ահաւասիկ մերձեցաւ, որ մատնելոց է զիս» (41):

Երկնային հերոսին յատուկ հանդստութեամբ դիմաւորեց Յիսուս թշնամեաց գնդին: Երբ հարց առաջարկեց. «Զո՞ խնդրէք» (Յովհ. ժը. 4.) և պատասխան ստացաւ. «զՅիսուս Նազովրեցի» (Յովհ. ժը. 5.): Յիսուս պատասխանեց. «Ես եմ» (5), որից յետոյ իսկոյն ամենքն էլ զարհուրեցան, ինչպէս հաղորդում են աւետարանիչները (6): Յուդան Յիսուսին սիրոյ նշանով՝ համբոյրով մատնեց (Մտթ. իզ. 48..): Երբ իշխանութեան ծառաները ձեռը մխեցին, Պետրոսը սրբազան բարկութեամբ բորբոքուեց և սուրը պատենից հանեց: Փրկիչն արգե-



լեց նրան և աստուածային հեզութեամբ դարձաւ իւր թշնամիներին այս խօսքերով. «Իբրեւ ի վերայ աւազակի՞ ելէք սուսերօք եւ բրօք՝ ունել զիս, հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի եւ ուսուցանէի, եւ ոչ կալայք զիս» (Մտթ. իզ. 55.): Երբ Յիսուսին բռնեցին՝ բոլոր աշակերտներն էլ թողին և փախան: Երկիւղից ամեն մինը մի կողմը ցրուեց: Իշխանութեան ծառաները Յիսուսին կապած՝ տարան Աննայի և ապա Կայիափայի մօտ: Այդ ժամանակամիջոցում բարձրագոյն ատենի անդամները ժողովուել էին քահանայապետի պալատում: Այստեղ Յիսուսին մեղադրեցին, որպէս թէ Աստծուն հայհոյում է և կեղծ վկաներն էլ հաստատեցին այդ: Որովհետև այդ մեղադրանքների դէմ Յիսուս իւր լռութեամբ միայն իրան անմեղ լինելը յայտնեց, ուստի դատը՝ հարց ու փորձը ընդմիջուեց: Քահանայապետի սրահում ցուրտ գիշերուան մէջ զինուորները նրա հետ կոպիտ վարուեցան: Պետրոսն էլ մի ձեւով ներս էր եկել այս սրահը, որպէսզի իւր վարդապետի վիճակի մասին տեղեկութիւններ իմանայ: Այստեղ նա՝ որ մի քանի ժամ առաջ մեծամեծ խոստումներ էր անում (եթէ ամենքը քեզ ու անան, ես չեմ ուրանայ—) երեք անգամ ուրացաւ. Երբ Պետրոս երրորդ ուրացութեան ժամանակ հայհոյեց և ուրացաւ «Ո՛չ գիտեմ զնա» (Ղուկ. իբ. 57.), իսկոյն հաւը խօսեց: Յիսուս յետ դարձաւ և նայեց Պետրոսին (Ղուկ. իբ. 54—62.): Այս թախծական և տխուր հայեացքի մէջ ինչ ասես որ չէր կարելի կարդալ: Փրկիչը նայում է դէս, Պետրոսը նայում է դէն: Սա մի համր խօսակցութիւն էր, բայց և այնպէս երկուսին էլ հասկանալի: Փրկչի հեզ հայեացքը կայծակի նման թափ անցաւ Պետրոսի սիրտը—նա դուրս գնաց և դառնապէս լաց եղաւ: Արդէն այգանում էր: Մի երկրորդ հարց ու փորձ՝ ըստ առաջնոյն առաւօտեան դէմ տեղի ունեցաւ (Ղուկ. իբ. 66.): Յիսուսին մեղադրում էին որպէս թէ նա ասել է, թէ տաճարը կքանդեմ և երեք օրում կշինեմ: Այս մեղադրանքին Յիսուս ոչինչ պատասխան չտուաւ: Եւ ինչ պիտի ասէր: Եթէ դատաւորները Յիսուսի խօսքերը բառացի հասկանային, մահու պատիժ կտային, իսկ եթէ փոխաբերական մտքով ընդունէին՝ ինչպէս և էր իրօք, այն ժամանակ ես գաղտնիք չէր, թէ ձեր կրօնը երեք օրում կոչնչացնեմ և նոր կրօն կտամ նրա փոխարէնը: Թէ այսպէս և թէ այնպէս, նրա մահը որոշուած խնդիր էր: Գլխաւոր մեղադրանքը նրանում էր, որ Յիսուս կեղծ կերպով մարգարէներից գուշակած Մեսիան է ներկայանում և իրան Աստծու որդի է անուանում: Նախա-

դահող քահանայապետը յաղթական ձևով հարց առաջարկեց Յիսուսին, թէ ճի՞շտ է արդեօք մեղադրանքը: Յիսուս, որի ինքնագիտակցութիւնը վկայում էր թէ ինքը նա է, որի համար ի՛րան մեղադրում են, որ նա եկել է Աստծու արքայութիւնը լրացնելու, որ հին ուխտի մարգարէները գուշակել էին, այս հանդիսաւոր րոպէին պարտաւորուած է համարում իրան քահանայապետի հարցին «Ես եմ»—ով (Մրկ. ժդ. 62) չպատասխանելու: Որովհետև Յիսուսի դատաւորները, ինչպէս և բոլոր հրէաները Մեսիայի կոչումն այլապէս էին հասկանում՝ քան թէ Յիսուս, ուստի և այս խոստովանութիւնը մահու արժանի յանցանք համարեցին: Քահանայապետը վրդոված աղաղակում է, որպէս թէ նա մի զարհուրելի աստուածահայհոյութիւն է լսել, պատառում է իւր հանդերձը, ցոյց տալով՝ թէ իւր սիրտն էլ այդպէս պատառւում է, ուստի ասում է. «Զի՞նչ ևս պիտոյ է մեզ վկայք ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն ի բերանոյ դորա, զի՞արդ թուի ձեզ» (Ղուկ. իբ. 71.): Սրահը լցուեց հանդիսականների միաձայն աղաղակով. «Թէ մահապարտ է» (Ղուկ. իբ. 64):

Վճիռն ամենին էլ դուր եկաւ: Բայց վճիռն իրագործելու համար հռովմայեցի դատաւորի հաճութիւնը պէտք էր առնել: Դրա համար Յիսուսին տարան Պոնտացի Պիղատոսի մօտ, որին խնդիրն այսպէս ներկայացրին, որպէս թէ Յիսուս քաղաքական յանցաւոր է և որպէս թէ միտք ունի կայսեր գահիցը գլորել: Պիղատոսն սկիզբում մեղադրանք համարեց այս բանը, որովհետև կասկածեց, որ հրէաները, որոնց ինքը լաւ ճանաչում էր, իրանք Հռովմի ոխերիմ թշնամիներ լինելով՝ իրանց հայրենակիցներից մինին իբրև կայսեր հակառակ անձն չէին ներկայացնի: Այս կասկածը հաստատւում է Քրիստոսի Պիղատոսին տուած պատասխանով. «Դո՞ւ ես թագաւորն հրէից» (Յովհ. ժը. 33....): Ճշմարտութեան մի թագաւոր, որի իշխանութիւնն այս աշխարհից չէ, Պիղատոսի կարծիքով Տիբերիոս կայսեր վտանգաւոր չէր կարող լինել: Դրա համար էլ յայտնեց հրէաներին. «Ես եւ ո՛չ մի ինչ պատճառ գտանեմ ի նմա» (38.): Յիսուսին փրկելու համար Պիղատոս մի այլ ելք որոնեց: Այդ հին ելքը Յիսուսին Հերովդէսի մօտ ուղարկելն էր և դա այն հետևանքն ունեցաւ, որ սրանով իրանց լարուած յարաբերութիւնը բարեկամականի փոխուեց (Ղուկ. իգ. 12): Այնպէս էլ այս նոր ելքը նոյնպիսի նպատակի հասցրեց, այն է Պիղատոսը հրէաներին առաջարկութիւն արաւ՝ (ըստ զատկական սովորութեան մի յանցաւոր էին արձակում), որով կամե-



նում էր մեղադրեալ թագաւորին արձակել տալ: Մինչև այժմ կատարուած իրողութիւնները վկայ էին արդէն, թէ ինչ աստիճանի կուրութեան էին հասել հրէաները. հեթանոս դատաւորի կարեկցութիւնը և՛ս աւելի գրգռեց նրանց կրկնապատկելու իրանց ատելութիւնը Փրկչի դէմ: Թէև հաւատալու չէ, բայց տարաբաղդաբար իրողութիւն է, որ հրէաները մի եղեռնագործ յանցաւորի՝ (Բարաբբա) մարդասպանի համար ազատութիւն՝ իսկ Յիսուսի համար մահ խնդրեցին: Փարիսեցիների գրգռուած ամբոխը այժմ աւելի ևս բարձրաձայն՝ քան երբ և իցէ, աղաղակում է՝ «ի խաչ հա՛ն զդա»: Այսպէս ամբողջ աշխարհս՝ թէ գռեհիկը և թէ զարգացածը փրկչի դէմ էր: Ափսո՜ս որ Պիղատոսն այսպիսի առաջարկութիւնով չդիմեց հրէաներին—թէ այս անձը անմեղ է, իսկ անմեղի արիւնը չպիտի թափուի: Պիղատոսն այդ չարաւ: Որպէսզի հարցը բոլորովին տանել չտայ, սկսեց ժողովրդի կարեկցութիւնը շարժել և հրամայեց Յիսուսին, որին նա անպարտ յայտարարեց, ծեծել, գան հարկանել: Երբ փրկչին արիւնաներկ, փշեայ պսակը գլխին, ծիրանին վրան ձգած կատաղի յանցաւորներին՝ «ահա այրդ ցձեզ» խօսքերով ներկայացրեց, Պիղատոսն ինքն ևս չհասկացաւ, թէ ինչ մեծ և ճշմարիտ խօսք է ասել: Դա այնպիսի մի վսեմ խօսք է, որ քրիստոնեայ ազգերն ամեն ժամանակ, ամենուրեք խօսել են «ահա այրդ ցձեզ»—այսինքն տեսէք այս չարչարուած, ծեծուած, կարեկցութեան կարօտ անձին, բայց և այնպէս որքա՛ն ազնիւ, մեծ, պարզ և մեծահոգի, զօրաւոր, հեզ և խոնարհ է: «Ահա այրդ ցձեզ»—այսպէս էին ձայն տալիս հնումը այլև նրանք, որոց նա բժշկել էր, որոց սխալանքները ներել էր: Այսպէս էր հասկացել և այն ժողովուրդը, որ երեք օր առաջ ովսաննաներով Երուսաղէմ տարաւ: Ո՜հ, այն ժամանակ ժողովուրդը իւր հանդերձն էր տարածում, իսկ այսօր նրա չորեքը հանեցին վրայից և ծիծաղի համար մի զինուորի վերարկու հագցրին: Երեք օր առաջ «ովսաննա՛» էին կանչում, իսկ այսօր՝ «ի խաչ հա՛ն զդա»: Նրա ձեռները, որ միայն օրհնութեան համար էր բարձրանում, այսօր կապած, մեխած է. նրա հեզ դէմքը գունատ է, լեզուն՝ լուռ: Իսկ մենք խորին զգացմամբ կանգնած ենք նրա փառահեղութեան առաջ և վստահանում ենք խօսել հետը.

«Երկնաւոր թագաւորիդ
«Ի ծունր իջեալ խաղ առնէին,
«Ծածկեալ զգլուխդ կափէին
«Եւ եղեգամբ հարկանէին»:

Ինչ որ Պիղատոսը կամենում էր, չկարողացաւ: Փարիսեցիների գրգռած ամբոխը հռովմայեցի դատաւորին անգամ սպառնում էր կայսեր բողոքելու: Եւ այս բանն ազդեցութիւն ունեցաւ նրա վրայ: Եթէ Պիղատոսը քաջութիւն էր ունեցել այն ժամանակուայ կայսր Տիբերիոսին գործի էութիւնը մանրամասնօրէն հաղորդելու, ի հարկէ ժողովրդի սպառնալիքի առաջ չէր ընկճուի: Բայց նա վախենում էր, թէ մի՛ գուցէ իրան փոխէ, մանաւանդ որ յարաբերութիւններն էլ լաւ չէին, ուստի անգոյն, բնաւորութիւնից զուրկ հռովմայեցին, հակառակ իւր համոզման, հաստատեց մահուան վճիռն՝ ասելով. «Առէք զդա ի ձեզ, եւ ձեզէն հանէք ի խաչ» (Յովհ. ժթ. 6.) և ապա աւելացրեց. «Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ» (Մատթ. իէ. 24): Տարօրինակ վարմունք—անարդարութիւն գործել և միևնոյն րոպէի մէջ գործածն ուրանալ: Իսկ ժողովուրդը կատաղած՝ խելագարի նման գոռում, գոչում էր. «Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց» (25):

Այսպէս մարդասպանները՝ արդարների արդարի դատապարտման վճիռը հաստատել տուին, որից յետոյ՝ ըստ հռովմէական սովորութեան՝, մահապարտին զինուորներին յանձնեցին, որ դան հարկանեն: Կոպիտ զինուորները խփում էին Յիսուսին բռունցքով, թքում էին երեսին, ծունկ էին չոքում առաջը և ծաղրելով ասում, «Ո՛ղջ լեր, թա՛գաւոր հրէից» (Մատթ. իէ. 30): Զաղկելուց յետոյ Գողգոթա տարան, այսինքն այնտեղ, ուր մահապարտներին խաչում էին և շատ հաւանական է, որ մահուանից յետոյ մեռածների գանգերը թափուած մնում էին այդտեղ, դրա համար տեղի անունը, այլ յորջորջումով, գագաթն է անուանւում: Յուդայից մատնուած, Պետրոսից ուրացուած, բարեկամներից բարձի թողի եղած, թշնամիներից չարչարուած, անարգուած, ամբոխից ծաղրու ծանակի ենթարկուած՝ տանում էր Յիսուս ծանր խաչը դէպի Գողգոթա: Ամբողջ 24 ժամ նա չէր հանգստացել, մանաւանդ խարազանուելուց և անարգուելուց յետոյ՝ նրա մարմնական ոյժերն այն աստիճան սպառուել էին, որ խաչի ծանրութեան տակ վայր ընկաւ: Դրա համար եւ այնտեղից անցնող օտարական Սիմէօն Կիւրենացուն բռնեցին, որի որդւոց մենք վերջը քրիստոնեայ հաւատացելոց մէջ ենք գտնում և խաչի փայտը նրա ուսին դրին, որ Գողգոթա հասցնէ: Այնտեղ Յիսուսին մերկացրին և զինուորները բաժանեցին շորերն իրանց մէջ (Սաղմ. իա. 18.): Յետոյ ձեռները պարզեցին, պարանով կապեցին, ոտներն իրար վրայ



դրին և մեխերով ամրացրին: Աշխարհիս յանցանքը՝, որ ամեն ինչ վայր է գլորում փոշու մէջ, նրան խաչի վրայ բարձրացրեց: Այնտեղ— վերևում երկինքը, ներքևում երկիրը—ամենից սուրբը կախ ընկած մնաց երկու աւազակների մէջտեղը: Խաչի վերը խաղաղութիւնն էր, խաչից կախուած էր սէրը, իսկ խաչի վարը՝ ատելութիւնըն էր բորբոքւում: Ապերախտ ամբոխը, որին Յիսուս այնքան սէր էր ցոյց տուել, համակրութեան ոչ մի նշան ցոյց չտուաւ: Նրանք շրջապատել էին խաչը և կատակ անելով ծիծաղում էին. «Վա՜հ, որ քակէիր զտաճարն, եւ զերիս աւուրս շինէիր զնա, ապրեցո՛ զքեզ, թէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ: Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել, եթէ թագաւոր է Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէդ եւ հաւատասցուք դմա» (Մատթ. իէ. 41. 42.): Նոյն իսկ խաչակից աւազակներից մինն էլ համաձայն էր նրանց հետ:

Անբացատրելի վշտով նայում էր փրկիչը խաչի բարձրութիւնից դէպի վարը՝ մեղաց ապականութեան մէջ ընկղմուած ամբոխին: Մինչև այժմ նա լուռ էր: Այժմ բաց է արել իւր գունատ շրթունքները խօսելու համար: Ամեն մեռնողի վերջին խօսքերն ուշադրութեան արժանի են, ո՛րքան ևս փրկչինը: Եւ ի՞նչ է նրա արտասանած խօսքերը: Գուցէ նա աղաղակում է վշտի ձեռից. գուցէ անիծում է իրան թշնամիներին. թերևս մի բողոք մարդկային բարբարոսութեան դէմ: —Ո՛չ, ո՛չ—ո՛չ մինը և ոչ միւսը: Եօթն համառօտ, բայց իմաստալից խօսքեր են, որ Տէրն արտասանեց և մի անգամ էլ ցոյց տուաւ դրանցով իւր կենաց գործնէութիւնը:

Առաջին խօսքը վերաբերում է անապաշխար յանցաւորներին, որոց նա ներում է. «Հա՛յր, թո՛ղ զոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն». Ղուկ. իգ. 34.): Արդարև ներողամիտ սիրոյ աննման խօսք, որով յանցաւորներին ոչ թէ ատում է, այլ սիրում, կարեկցում է: Երկրորդ խօսքը պարունակում է իւր մէջ կարեկից և խոստացեալ սէր դէպի իւր կողքին խաչուած չարագործը, որ ի սրտէ ապաշխարելով՝ մխիթարութիւն և օգնութիւն էր որոնում. «Ամէն ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. իգ. 43.): Սիրոյ արտայայտութեան գեղեցիկ նշան, որ չնայելով իւր խորին վշտին, ժամանակ է գտնում, զօրութիւն ունի մի ուրիշին մխիթարելու: Այո՛, սուրբ սրտի գեղեցիկ նշան, որ կորածին անգամ անպէտք չէ համարում Աստուծոյ արքայութիւն տանելու: Երրորդ խօսքը պարունակում է իւր մէջ հաստատ սէր իւր սիրելիների համար: Նա տես-

նում է մօրն անտէրունջ, որ խոցոտուած սրտով կանգնած է խաչի վարը. վշտահար հայեացքը դարձնում է դէպի այն աշակերտը, որ միշտ նրա կրծքին էր ընկած, որին շարունակ գրկել էր: «Կին դու, ահա որդի քո. ահա մայր քո» (Յովհ. ժթ. 26. 27.)—որպիսի մխիթարական խօսքեր: Ամենուրեք սէր սփռելուց հետոյ, մի րոպէ յաղթահարում է իրան մարմնական և հոգեկան վշտերը և այս երկիւղի մէջ երգում է 21. սաղմոսը, ուր նա կարեաց մէջ Աստծուն օգնութեան է կանչում: Սաղմոսն այս խօսքով է սկսւում. «Աստուած իմ, Աստուած իմ, նայեաց առ իս, ընդէ՞ր թողեր զիս». (Մտթ. իէ. 46.): Խաչի մահը դառն է, որովհետև երկար է տևում, երբեմն օրերով տանջւում է մահապարտը անասելի վշտերով: Խաչեցեալը ջերմ է ստանում, ուստի և Յիսուս ասում է. «Ծարաւի եմ» (Յովհ. ժթ. 28.): Առաջին անգամ տուին նրան մի տեսակ թմրեցուցիչ ըմպելի* բայց Յիսուս մերժեց, որովհետև ինչպէս որ գիտակցութեամբ ապրել էր, գիտակցութեամբ էլ կամենում էր մեռանել: Վեցերորդ խօսքով յայտնում է վերահաս մահը, ուստի հրաժեշտի ողջոյն է տալիս. «Ամենայն ինչ կատարեալ է» (Յովհ. ժթ. 30:) Յանցանքը իւր գործը կատարեց, Փրկիչն էլ իւր գործը լրացրեց: Ոչ թէ յանցանքը փրկչին, այլ վերջինս առաջինին յաղթեց: Ինչպէս որ նա յԱստուած ապրել է, նոյնպէս էլ մանկական հպատակութեամբ իրան Աստծու կամացն է յանձնում՝ ի յոյս կենացն յաւիտենից, ուր նա գնում է ողջունով. «Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղուկ. իգ. 46.): Սա նրա վերջին խօսքն էր—այնուհետև խոնարհեց իւր գլուխը և աւանդեց հոգին:

Այսպէս կրեց Յիսուս վշտերը և մեռաւ: Նա աւետարանեց մարդոց ճշմարտութեան և գթասրտութեան կրօնը. ներող և փրկող սէրը երկրիս վրայ նա սերմանեց: Երեք բան մեզ անհնար կարող է թուալ նախ՝ մեղաց սարսափելի զօրութիւնը, երկրորդ՝ Աստծու սիրոյ մեծութիւնը և երրորդ աշխարհիս փրկչի ամեն բանին յաղթող սէրը:

Յանցանքի զօրութիւնը սոսկալի է. նրա զարհուրելի լինելը ոչ մի տեղ այնպէս զգալի չէ, ինչպէս խաչի ներքոյ: Այստեղ կարելի է տեսնել, թէ ինչ քստմնելի գործի ընդունակ է նա: Այստեղ տեսնում ենք փարիսեցիների հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը,

*Մանրամասնութիւնը տես իմ «Դասագիրք կրօնի» Նոր-ուխտի հատոր II. երես 331:



անձնապաստանութիւնը, Պետրոսի թուլութիւնը, Պիղատոսի երկչոտութիւնը, ժողովրդի տատանմունքը, որոնք յուզում են մեզ ի ներքուստ և սոսկալ տալիս:

Յանցանքի զօրութեան զարհուրանքը, որ փրկչին ի խաչ հանեց, աւելի զգալի է լինում, երբ մենք յիշում ենք, թէ մենք ևս նրա զզուելի զօրութիւնը մեր սրտերում թաքուցած ունինք: Այն յանցանքները (անձնապաստանութիւն, շահասիրութիւն, մարդկային երկիւղ, տատանմունք, նախանձ և ինքնասիրութիւն), որոնք փրկչին ի խաչ հանեցին, այլև մեր յանցանքներն են. մենք ևս ազատ չենք նրանից. մենք ևս չգիտենք, թէ ուր կտանի մեզ, եթէ իրաւունք տանք նրան: Փրկչի խաչի ներքոյ պիտի որոշուի, թէ դու ո՞ւմն ես պատկանում—մեղա՞ց՝ թէ՞ Փրկչին: Եթէ այստեղ չորոշուի, էլ ուրիշ ո՞ւր կարելի է որոշել: Այս է այն տեղը, ուր յանցանքն ու առաքինութիւնը, կեանքն ու մահը որոշւում են: Այս է այն տեղը, ուր մարդըս մի ուշադիր հայեացք ձգելով իւր գործած մեղաւոր գործերի վրայ, կարող է հեռանալ նրանցից և հաշտուել Աստծու հետ: Այստեղ պիտի ճանաչէ մարդս, թէ աստուածուրացութիւնն ուր է տանում մարդուս և թէ խաղաղութիւնը միմիայն Աստծու մօտ հնարաւոր է:

Այսպիսի նախաբան ընդունելու համար ոյժ և զօրութիւն է ներշնչում մեզ Աստծու սէրը, որ իւր ամենասիրելի որդուն ի խաչ հանեց, որպէսզի մարդոց ազատէ յաւիտենական ապականութիւնից: Ինչպէս որ յանցանքը խաչի ներքոյ ամենամեծն էր, այսպէս էլ Աստծու սէրը ամենից մեծ էր: Պատմում են որ 1813 թ. մի ազատութեան պատերազմում հայրը իւր չորս որդւոցն էլ կռուի դաշտն է ուղարկում, որպէսզի իւրեանց մահուամբ ազատութիւն ձեռք բերեն միւս քաղաքացիների համար—այս հայրենասիրութիւնը մենք գովում ենք: Աստծու սէրն անհամեմատ մեծ է, որ իւր միակ որդուն զոհեց՝ ոչ թէ միայն մի երկրի քաղաքացիների համար, այլ՝ ամբողջ մարդկութեան հոգու փրկութեան համար: Ինչպէս մի հայր ուրիշներին փրկելու համար իւր սիրելի որդուն զոհ է բերում, այսպէս և նա (Աստուած), որոց համար Քրիստոս մեռաւ, այնպիսի սիրոյ ապացոյց տուաւ, որի նմանը մտածել չի կարելի: Հէնց դրա համար էլ ասում է սուրբ գիրքը. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհն, մինչև զորդին իւր միածին ետ» (Յովհ. գ. 16): Ուր մարդու համար այսպիսի մեծ սէր է գործադրուել, այնտեղ մարդկային

սիրտը, եթէ նա չէ քարացել, պիտի փափկի. այնտեղ երկիւղը Եհովայի առաջ պիտի անհետանայ, որ իւրայինների վրայ բարկանալ գիտէ. այնտեղ սէրն ի նորոյ մեր սիրտն այնպէս պիտի տրամադրէ, որ ամեն մի դարձ եկողի Աստուած գրկաբաց է ընդունում. այնտեղ հոգսը պիտի հեռանայ մեզնից, որ արգելում էր մեզ Աստծուն մերձենալու. այնտեղ ինքնասիրութիւնը պիտի տեղի տայ, որ գիտէ սիրտը կոշտացնել. այնտեղ բերանը պիտի խոստովանի, որ Աստծու սէրը յանցանքից մեծ է. Նրան պիտի սիրէ, Նրան պիտի ծառայէ, Նրան պիտի հպատակէ, Նրան պիտի յաւիտեան փառաբանէ:

Խաչի ներքոյ Քրիստոսի սէրը և՛ս ամենից պարզ է փայլում: Յիսուս իբրև չարագործ, ոճրագործ մեռաւ, առանց դրա հետքն անգամ ունենալու: Ամենքը կարիք ունին Աստծուց ներողութիւն խնդրելու, բայց փրկիչն այդ մասին երբէք չէ աղօթել, որովհետև նա յանցանք չունենալով՝ ներողութեան կարիք էլ չունէր: Այս ամենասուրբը՝ ճշմարտութիւնն այն աստիճան սիրում էր, որ սիրով յանձն առաւ խաչի վշտերը տանելու, քան թէ ճշմարտութիւնը յետս կոչելու, որ նա մարդկութեան փրկութեան համար աւետարանեց և ի փառս Աստծու յայտնեց: Նա այն աստիճան սիրում էր մարդկութիւնը, որ ամենայն վիշտ և անարգանք յանձն առաւ և տարաւ և իւր բարձր կոչման ստորացուցման մէջ չմոռացաւ ամենի համար օրինակ լինել՝ ոչ թէ միայն համբերութեան, այլև յանցանքից զերծ լինելու: Նա Աստծուն այնպէս էր սիրում, որ մի րոպէ անգամ չտատանուեց, այլ մանկական հնազանդութեամբ և կատարեալ ազատութեամբ ամենածանրը ևս տարաւ՝ ինչ որ իւր հայրական սէրը մարդոց փրկութեան համար կարևոր էր համարել: Ով այնպէս է սիրում, սիրոյ մէջն էլ մեռնում է, այնպիսին չարագործի մահուամբ չէ մեռնում, այլ Նրա մահը մի մեծ բարոյական գործ է, որով նա իւր կեանքի բոլոր գործունէութիւնը դրոշմում և լրացնում է: Յիսուս իւր մահուամբն ապացոյց տուաւ, որ մահը ոչինչ իշխանութիւն, զօրութիւն չունի իւր վրայ և թէ նա յաղթող է, և այնպիսի հերոս է, որի նմանը աշխարհն երկրորդ անգամ չէ տեսել: Ոչ թէ մարմնական ցաւի մէջն է կայանում Յիսուսի մահուան նշանակութիւնը, այլ այն ձևի և եղանակի մէջ, թէ նա ինչպէս տարաւ կեանքի ծանրութիւնը—հարցն այն հնազանդութեան մէջն է, որ նա ցոյց տուաւ (Թ. առ. Եբր. ե. 8), այդ սիրոյ և ճշմարտութեան հաւատարիմ մնալումն է: Սա մի զոհ էր, որ Աստծու և մար-



դու համար բերաւ կատարեալ հնազանդութեամբ, որպէսզի մարդկութիւնն ազատէ մեղաց կապանքներից և Աստծու հետ հաշտեցնէ:

Երբ մենք Յիսուսի մահը Նրա կեանքի ամենամեծ և բարոյական գործն ենք ընդունում, այն ժամանակ ոչ թէ միայն հիացմամբ կանգնում ենք Նրա մեծութեան առաջ, այլ ստիպուած ենք լինում յանցանքի փոխանակ սէրը՝ որ օրինաց լրումն է, մեր սիրտն ընդունել, այն ժամանակ հասկանալի է լինում Նրա մահուան տպաւորութիւնը՝ թէ թշնամիների և թէ բարեկամների վրայ: Այստեղ ոչ թէ միայն յանցանքի, այլև մահուան յաղթողն է զոհ եղել: Այս զօրաւոր տպաւորութեան ազդեցութեան ներքոյ հասկանալի պիտի լինի, որ ոչ թէ միայն իւր թշնամիները, այլև իւր բարեկամները՝ իմասնաւորի Նրա աշակերտները, չէին կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ այսպիսի ազնիւ, սուրբ անձն մահուան հետ ամեն ինչ վերջացրած լինի: Այս մտածողութիւնը, որ աշակերտների համար մի գեղեցիկ մխիթարութիւն և անբաւ յոյս էր, խաչեցեալի անուղղայ թշնամիներին զարհուրելի երկիւղով լցրեց: Դրա համար էլ բոլոր փարիսեցիները և քահանաները հետևեալ օրը՝ չնայած մեծ շաբաթին, (կիւրակէ) գնացին Պոնտացի Պիղատոսի մօտ և գերեզմանի համար պահապաններ պահանջեցին (Մատթ. իէ. 62....):

Ինչից որ թշնամիները երկիւղ ունէին, իսկ բարեկամները յոյս, կատարուեց—երեքօրեայ լռութիւնից և սուգից յետոյ՝ յանկարծ՝ հնչեց աւետեաց ձայնը, թէ տէրը ճշմարտապէս յարութիւն է առել, նա կենդանի է: Զարմացքը և երկիւղը բռնեց աշակերտներին առաջին անգամ, որովհետև սա անհաւատալի, չեղած բան թուաց նրանց: Բայց շուտով իրանց կասկածը փարատուեց և իրանց վարդապետին աչքի առաջ ման գալիս տեսան. լսեցին Նրա ձայնը, զգացին Նրա հոգւոյ ներկայութիւնը, բայց միևնոյն ժամանակ նկատեցին նաև, որ նա այլակերպուել է աստուածային մի տեսակ պայծառութեամբ: Այստեղ Նրանց երկիւղը յաղթական ուրախութեան փոխարկուեց, իրանց հոգւոյ առաջ ներկայացաւ փրկչի արքայութիւնը իւր ոգեկան փառահեղութեամբ. աշակերտներներն իրանց ժառանգն էին համարում Նրան, որ մահուան և գերեզմանի աշխարհի՝ ամենազօրաւորների վրայ յաղթութիւն էր ձեռք բերել: Մահ, ո՞ւր են քո սարսափները: «Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո» (I. Թ. առ. Կրնթ. ժե. 55): Նախկին երկչոտ աշակերտները ոգևորուած առաքեալներ դարձան: Նրանք յարուցեալի վկաները դարձան ընդ ծով և ընդ ցա-

մաք: Թագաւորների և իշխանների առաջ կանգնում էին և ոգևորուած քարոզում. անծանօթ աստուածների առաջ յայտարարում էին մեռելներից յարուցեալին (Գործք առք. ժէ. 23): Հեթանոս դատաւորների առաջ, թէ հրէից մէջ, բանտերում, թէ խարազանի հարուածների առաջ մ ի և ն ո յ ն էին խոստովանում. «Մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք՝ չխօսել» (Գործք առք. դ. 20): Այսպէս Յիսուս Քրիստոսի յարութիւնը ոյժ, զօրութիւն էր դարձել և աշակերտներին նոր ոգի ներշնչել. Նա անկեան քար էր դարձել, որի վրայ քրիստոնէութեան տաճարը հիմնուեց. Նա յաղթութիւն էր դարձել, որով աւետարանն աշխարհին յաղթահարում է. յարութիւնը անբաղդների համար ամուր ապաստան, բեկեալ սրտերի համար՝ բուժիչ դեղ, իսկ բոլոր հաւատացեալների համար՝ երանական յոյս էր դարձել: Ինչպէս Իսրայէլի մեծամեծները, որոնք երբեմն երեք մեխով յաւիտենական ճշմարտութիւնը կամենում էին ընդ միշտ մահացնել, պիտի զգային, իմանային, որ ի զուր ջանք է, այն՝ ինչ որ Աստծուց ծնած է, խաչի վրայ բևեռել և ծանր քարի տակ դնել: Այսպէս էլ այսօր թշնամու յարձակումը անհետեանք հանդիպում է սրբազան հաւատոյ աշտարակին, ուր յարուցեալ իշխանը իւր փրկարար ներգործութիւնն է տարածել: «Նա կենդանի է, որին ձգտում էիք մահացնել, Նա կենդանի կմնայ դարձեալ, երբ ձեր ոսկորները և գործերը հող և մոխիր դարձած կլինին», այսպէս է հնչում մարտիրոսների ձայնը, որոնք աստուածային ճշմարտութեան համար պատերազմ են մղում և պիտի հնչէ այս ձայնը յաւիտեանս յաւիտենից, դարէ դար, մի ազգից միւսին, մի աստղից միւսին. Նա պիտի հնչէ մինչև արևի վերջին նշոյլը, մինչև վերջին մարդու գերեզմանը: Նա կենդանի է, քանի որ Նրա վիշտը հաւատոյ մէջ կփայլի, ուր Նրա անունը երկիւղածութեամբ կյիշուի: Սրտերը գերեզմանի նման են բացուում. մանուկները, անչափահասները փառաբանում են Նրան, ուր իմաստունները լռում են. հաւատացեալների ժողով է կազմւում, ուր անապատ էր և կռոց պատկերներ էր դրած: Այսպէս էլ պիտի ընդ միշտ լինի, մինչև որ յարուցեալը կյայտնուի իւր աստուածային փառքով, որպէս փայլակն՝ դատելու կենդանիներին և մեռեալներին: Ուր երկու կամ երեքը հաւաքուած են Նրա անունով, Նա էլ նրանց մէջն է (Մատթ. ժթ. 20.) «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան (Թ. ա. Եբր. ժգ. 8):

Գրեթէ տասնևինն դար անցել է Քրիստոսի մահուանից ետոյ,



բայց դեռ այսօր ևս խաչը, որի վրայ համբերեց և որ Նրա թշնամիների կողմից անարգանաց նշան էր որոշուած, ամբողջ քրիստոնէական աշխարհի համար սիրոյ յաղթութեան ամենամեծ դրօշն է: Մեր եկեղեցւոյ սեղանների վրայ, զանգակատների կատարին դրած խաչը յիշեցնում է մեզ այն մեծ փրկչին, որ իւր կեանքով և իւր մահուամբ ճշմարտութեան յաղթանակը տարաւ: Եթէ Նա մահ ընդունած չլինէր, Նրա կրօնը և դրա հետ էլ սիրոյ յայտնութիւնը հրէութեան օրրանի մէջ խեղդուած կմնար: Այս սրբի մահը միայն աշխարհին զարթեցրեց իւր յանցանաց քնից: Նրա սէրը, որ յաւիտենական ճշմարտութեան մահուան մէջն էլ հաւատարիմ մնաց, կեանք դարձաւ և մարդկութիւնը կերպարանափոխեց: Յիսուսի սէրը, որ Նրան ստիպեց իւր կեանքը զոհելու ճշմարտութեան և մարդկութեան համար, ամենուրեք իբրև զօրութիւն է ճանաչուած, որ յաղթում է յանցանքին և աշխարհին յաղթահարում: Տիեզերքի պատմութեան հոսանքի մէջ Քրիստոսը որձաքարի ժայռ է, որի վրայ ժամանակի մռընչացող ալիքները միշտ խորտակուել են: Նրա անունն արուսեակ է, Նրա ոգին ամենուրեք օրհնութիւն է յարուցանում, որին (օրհնութեանը) յաւիտենական սէրը մարդկութեան բնաւորութեան մէջն է դրել: Միլիոնաւոր մարդիկ—այր և կին, ծեր և մանուկ հետևում են Նրա քայլերին և գտնում են իրանց խաղաղութիւնը, մխիթարութիւնը և երջանկութիւնը այն սիրոյ մէջ, որ խաչի վրայ համբերեց: Փրկիչը կ ե ն դ ա ն ի է, որովհետև Նրա փրկարար ոգին մուտք է գործել երկրիս մէջ և չնայելով շատ հալածանքների, այնուամենայնիւ միշտ և միշտ յառաջ է գնում: Ինչպէս որ մի լոյսից, մի մոմից հազարաւոր ուրիշները կարելի է վառել, առանց նուազեցնելու առաջնի լոյսը, այնպէս էլ Քրիստոսի սիրով հազարաւոր սրտեր՝ սիրոյ բոցով են վառուել և փայլում ու լուսաւորում են աշխարհիս մէջ շատ սառն ինքնասիրութիւններ և յանցանքներ: Այո, փրկիչը կ ե ն դ ա ն ի է—նա ոչ թէ միայն կեանք է նոցա համար, որոնք հանգստանում են և որոց գերեզմանի վրայ խաչը որպէս հաշտութեան նշան կանգնած է. Յիսուս ոչ թէ միայն կեանք է նոցա համար, որոց մարմինը գերեզմանատուն են տանում, որոց դագաղի վրայ կպցրած է խաչը որպէս սիրոյ նշան, որ (սէրը) ոչ ոքի չի մերժում և ամենքին էլ ընդունում է. Յիսուս կեանք է այլև նրանց համար, որոնք դեռ ևս այս աշխարհի վրայ որպէս ուխտաւորներ թափառում են յաւիտենական խաղաղութեան համար: Ամենուրեք նրա ոգին զօրացնում է տկարներին,

ովանաւորում է տատանուողներին, բարձրացնում է անկեալներին և փրկարար ներգործութիւն է անում նրանց վրայ, որոնք իրանց սրտի դռները բաց են անում Նրա առաջ։ Ամենամեծ օրհնութիւնը, որ Աստուած տուել է մեզ, այդ Յիսուսի կեանքն ու մահն է։

Մեզ վրայ սրբազան պարտք կայ երախտագիտական սրտով յիշելու փրկչի սէրը, որ իբրև ա մ ե ն ա մ ե ծ ը երկրիս վրայ շրջել է և որի կենդանի հոգին ա յ ս օ ր ևս իբրև օրհնութիւն բոլոր սերունդների համար ծառայում է։ Քանի-քանի մեծ, իմաստուն և ոգևորուած մարդիկ է տուել մեզ, որոնք աստուածութեան խորքից իրանց մտածողական ընդունակութեամբ յաւիտենական ճշմարտութիւն են ձեռք բերել, բայց ոչ մինը չի կարողացել աշխարհիս վրայ Նրա ոգու կնիքը դնելու։ Ոչ ոք չկարողացաւ մարդկութիւնը կերպարանափոխելու. շատերը մինչև անգամ նպատակ չդրին իրանց Թաղի անբարոյականութիւնը մաքրելու, ուղղելու։ Ո՜րքան մեծ է փրկչի կատարածը համեմատութեամբ այդ իմաստուն մարդոց, չնայելով որ փրկիչը հազիւ երեք տարի միայն կեանք ունեցաւ գործելու։ Այնուամենայնիւ այդ կարճ ժամանակուայ մէջ կարողացաւ կերպարանափոխ անելու բարքերը, սովորութիւնները, հայեցակէտերը, օրէնքները, մտածողութեան եղանակները՝ այնպէս որ մենք ապուշ կրթած կանգ ենք առնում այս ամենի առաջ։ Այո́, մեզ վրայ պարտք է մնում—մենք որ ցարդ նկատեցինք փրկչի կեանքը, Նրա հաւատարիմ սիրոյ հետեւանքը տեսանք. տեսանք թէ ինչպէս փոքր էր սկզբում, ինչպէս զօրացաւ յետոյ իւր շարունակութեան մէջ և ինչպէս անյաղթելի դարձաւ իւր վերջում։ Այո́, մեզ է մնում այն հարցի պատասխանը. «Զո՞ ոք ասեն զինէն մարդիկ, թէ իցէ որդի մարդոյ» (Մտթ ժզ. 13.)։

Այս հարցի պատասխանը հետևեալ հատորում։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм ССР им. А. М... Ա. ՄՑԱՍՆԻԿԱՆ

3284
3285

2 գրք
ԱՓ 0

Ստուգանված է 1957 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0030160

ՀՀ Ազգային գրադարան
NL0030159